



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ**

**ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2004

ԵՐԵՎԱՆ 2005

Բովանդակություն

Էջ

Բաժին 1. Վերահսկիչ պալատի հաշվետու տարվա գործունեության ընդհանուր նկարագիրը	5
Բաժին 2. Վերահսկիչ պալատի ուսումնասիրության արդյունքները.....	8
1. Օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի 2004թ. ընթացքում օգտագործման մասին	9
2. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Չարգացման Ընկերակցության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի իրականացման ընթացքի մասին.....	16
3. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Չարգացման Ընկերակցության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Համայնքային զարգացում» ծրագրի իրականացման ընթացքի մասին.....	42
4. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Չարգացման Ընկերակցության միջև կնքված նամակ-համաձայնագրի շրջանակներում «Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում» ծրագրի նախապատրաստման կանխավճարի իրականացման ընթացքի մասին.....	68
5. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Չարգացման Ընկերակցության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Անշարժ գույքի գրանցում» ծրագրի իրականացման ընթացքի մասին.....	80
6. Հայաստանի Հանրապետության կառավարության և Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Գյուղատնտեսական ծառայություններ» ծրագրի իրականացման մասին.....	93
7. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագրի իրականացման մասին.....	115
8. «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի իրականացման ընթացքի մասին.....	127

9. Արարատի մարզպետարանի կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքը և պետական պատվերի կատարման համար բյուջետային միջոցների օգտագործման մասին.....	144
10. Կոտայքի մարզպետարանի կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքը և պետական պատվերի կատարման համար բյուջետային միջոցների օգտագործման մասին.....	152
11. ՀՀ պետական բյուջեից 2003թ. ընթացքում կապիտալ շինարարությանը և նորոգումներին հատկացված միջոցների օգտագործման մասին.....	161
12. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ.....	172
13. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ.....	187
14. ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում իրականացված վերահսկողության վերաբերյալ.....	192
15. Պետական գույքի գնորդների կողմից ներդրումային պարտավորությունների կատարման ընթացքի մասին.....	206
16. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության համակարգում պետական մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման մասին.....	210
17. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգում պետական մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման մասին.....	217
18. Անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման գործընթացի մասին.....	226
19. Ռ-ազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների մասնավորեցման գործընթացի մասին.....	236
20. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունում իրականացված վերահսկողության վերաբերյալ.....	243
21. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեով տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով առողջապահական պետական նպատակային ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ.....	256
22. Կրթության բնագավառում համագործակցության մասին միջկառավարական համաձայնագրի շրջանակներում ստեղծված Ռ-ուս-Հայկական (Սլավոնական)	

համալսարանի (ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն)	
ֆինասատնտեսական գործունեության համատեղ ստուգման վերաբերյալ.....	269
23. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից սոցիալական ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ.....	285
24. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից առողջապահական պետական նպատակային ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ... ..	297
25. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանին 2002 և 2003 թվականներին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին.....	316
26. Ավան թաղային համայնքի բյուջեի ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման մասին.....	325
27. Երևանի Շենգավիթ թաղային համայնքի բյուջեի ձևավորման ՀՀ օրենքներին համապատասխանության և բյուջետային միջոցների օգտագործման մասին	332
28. Քանաքեռ-Զեյթունի թաղային համայնքի բյուջեի ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման մասին	340
29. Երևանի Նուբարաշեն թաղային համայնքի բյուջեի ձևավորման ՀՀ օրենքներին համապատասխանության և բյուջետային միջոցների օգտագործման մասին.....	348
30. Վայոց ձոր մարզի համայնքների 2003 թվականի բյուջեների ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ.....	354
31. Տավուշի մարզի համայնքների բյուջեների ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ... ..	363
32. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը 2002 և 2003 թվականներին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին.....	371
33. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեից համայնքներին հատկացված միջոցների` Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխանության մասին.	382
34. 2004 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների և սուբվենցիաների վերաբերյալ.....	393

ԲԱԺԻՆ 1

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ
ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հաշվետվությունը կազմված է՝ համապատասխան և ի կատարումն **Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների, և ընդգրկում է նույն օրենքով սահմանված՝ Վերահսկիչ պալատի խնդիրների ու Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Վերահսկիչ պալատի գործունեությունն իրականացվել է համապատասխան՝ **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ», «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի:

Ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում Վերահսկիչ պալատն առաջնորդվել է **Գերագույն վերահսկիչ ատյանների միջազգային կազմակերպության (ԳՎԱՄԿ/INTOSAI)** վերահսկողության սկզբունքներով:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատված 47 հաշվետվություններում և տեղեկանքներում:

Համաձայն Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 1, 2 և 3 կետերի՝ ստորև նշված եզրակացությունները ներկայացվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝

- ♦ «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության կառավարության հաշվետվության համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և դրանում կատարված փոփոխությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին,
- ♦ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2003 թվականի տարեկան հաշվետվության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներին,
- ♦ ՀՀ կառավարության պետական գույքի մասնավորեցման 2001-2003թթ. ծրագրի կատարման 2003թ. տարեկան հաշվետվության՝ «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման ծրագրի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 16-րդ հոդվածների, ինչպես նաև՝ ԱԺ վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 4-րդ կետի պահանջների՝ 2004 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով են ներկայացվել հետևյալ կիսամյակային տեղեկանքները՝

- ◆ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 2004 թվականի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ,
- ◆ Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման ծրագրի 2004 թվականի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ:
- ◆ Պետական գույքի մասնավորեցման ծրագրի 2004 թվականի կատարման ընթացքի մասին:

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման ընթացքի վերաբերյալ կիսամյակային տեղեկանքը չի ներկայացվել՝ ՀՀ կառավարության կողմից օրենքով նախատեսված տեղեկատվության չներկայացման պատճառով, դրանով իսկ չի կատարվել «ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջը:

ԱԺ վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 5, 10, 11 և 12-րդ կետերի պահանջների համաձայն՝ 2004 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով են ներկայացվել հույժ գաղտնի տեղեկատվություն պարունակող հետևյալ հաշվետվությունները՝

- Հայաստանի Հանրապետության Ռուսաստանի Դաշնության Դաշնային անվտանգության ծառայության Սահմանապահ վարչությանը 2003 թվականին և 2004 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին,
- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից «այլ ծրագրեր»-ով հատկացված միջոցների օգտագործման մասին,
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությանը 2002 և 2003 թվականներին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքման մասին,
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը 2003 թվականին և 2004 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցների օգտագործման մասին:

Ուսումնասիրությունների արդյունքներով Վերահսկիչ պալատը համապատասխան առաջարկություններ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Միջազգային կապերը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատը Գերագույն Վերահսկիչ Ատյանների Միջազգային կազմակերպության (INTOSAI), Գերագույն Վերահսկիչ Ատյանների Եվրոպական կազմակերպության (EUROSAI) և Անկախ Պետությունների Համագործակցության Ֆինանսական Վերահսկողության Գերագույն Մարմինների ղեկավարների խորհրդի անդամ է:

2004թ. փետրվարի 23-26-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակության Բելոռուսի Հանրապետություն այցի շրջանակներում Բելոռուսի Հանրապետության պետական վերահսկողական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի միջև ստորագրվել է համատեղ Համաձայնագիր:

Շարունակվում է համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության Հաշվիչ պալատի հետ: 2004 թվականի մարտ ամսին իրականացվել է համատեղ ուսումնասիրություն՝ Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի պատվիրակությունը 2004 թվականի սեպտեմբերին մասնակցել է Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում հրավիրված ԱՊՀ երկրների Ֆինանսական Վերահսկողության Գերագույն Մարմինների ղեկավարների խորհրդի V վեհաժողովին: Այնտեղ քննարկվել են գերագույն վերահսկող մարմինների գործունեության հրապարակայնության և իշխանության տարբեր ճյուղերի հետ համագործակցության հարցերը, որի վերաբերյալ ընդունվել է Հռչակագիր:

2004 թվականին Վերահսկիչ պալատը համագործակցել է «Հայաստան. օրենսդրի հզորացում» և «Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերություն» (ԳՏՀԸ/GTZ) ծրագրերի հետ:

2004 թվականի մայիս ամսին ԳՏՀԸ աջակցությամբ Գերմանիայի Հանրապետության Բավարիայի Դաշնության Հաշվիչ պալատ է գործուղվել Վերահսկիչ պալատի աշխատանքային խումբը, հունիսին Վերահսկիչ պալատի երեք մասնագետ ուսումնասիրել են Բավարիայի Դաշնության Հաշվիչ պալատի աշխատանքի փորձը:

INTOSAI IDI (գարգացման նախաձեռնություն) կազմակերպության դասընթացներին մասնակցել է Վերահսկիչ պալատի երեք մասնագետ, ստանալով համապատասխան որակավորում:

ԲԱԺԻՆ 2

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՏԵՂԵԿԱՆՔ

Օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի 2004թ. օգտագործման մասին

Ուսումնասիրության նպատակը՝


Տրամադրված վարկերի օգտագործումը տարվա ընթացքում:

Ուսումնասիրությանը արձանագրվել է՝

ՀՀ 2004թ. բյուջեով 24 ծրագրերի իրականացման համար օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից նախատեսվել է ներգրավել 77,466.5 հազ. ԱՄՆ դոլարի վարկային միջոցներ:

Ներգրավված վարկային միջոցների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է՝

Վարկային միջոցների կառուցվածքն ըստ վարկատուների



Փաստացի կատարողականն արտացոլված է աղյուսակ 1-ում:

Ծրագրերի 2004թ.-ի կատարողականը

հազ. ԱՄՆ դոլար

	Ծրագրի անվանումը (վարկատու)	2004թ. ՀՀ պետական բյուջեով նախատես- ված գումարները ¹	Տարվա ընթացքում կատարված աշխատանք- ները ²	Տարվա ընթացքում կատարված փաստացի վճարում- ները ²	Կատարված աշխատանքները նախատեսվածի նկատմամբ	Փաստացի վճարումները նախատես- վածի նկատմամբ
Ա	Բ	1	2	3	4=2/1	5=3/1
1	Պետական հատվածի բարեփոխումների ծրագիր (ՄՁԸ)	200.0	0.0	0.0	0.0%	0.0%
2	Դատաիրավական բարեփոխումների ծրագիր (ՄՁԸ)	4,209.4	3,740.6	3,361.0	88.9%	79.8%
3	Կրթության որակի և համապատասխա- նության ծրագիր (ՄՁԸ)	1,986.7	899.1	958.9	45.3%	48.3%
4	Առողջապահության օպտիմալացման ծրագիր (ՄՁԸ)	100.0	15.6	13.8	15.6%	13.8%
5	Ջերմամատակարար- ման և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների աջակցության ծրագիր (ՄՁԸ) (կանխավճարային ծրագիր)	510.4	276.3	305.4	54.1%	59.8%
6	Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարար- ման և կոյուղու համա- կարգերի վերականգ- նման ծրագիր - (Գ.Ջ.Վ.Բ)	7,690.5	3,127.8	2,718.0	40.7%	35.3%
7	Համայնքային գարգացման ծրագիր (ՄՁԸ)	4,273.1	4,496.1	4,882.9	105.2%	114.3%
8	Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծրագրի նախապատրաստման և կանխավճարի ծրագիր (ՄՁԸ)	1,340.4	545.6	595.8	40.7%	44.4%

¹ Նախատեսված գումարները վերցված են «ՀՀ 2004թ. պետական բյուջեի մասին» ՀՕ-48-Ն ՀՀ օրենքից:

² Կատարված աշխատանքները և փաստացի վճարումները վերցված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված տեղեկատվությունից:

Ա	Բ	1	2	3	4=2/1	5=3/1
9	Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (ՄՁԸ)	1,403.4	207.7	219.0	14.8%	15.6%
10	Անշարժ գույքի գրանցման ծրագիր (ՄՁԸ)	195.0	10.0	564.7	5.1%	289.6%
11	Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր (ՄՁԸ)	9,134.4	18,084.8	14,311.2	198.0%	156.7%
12	Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր (ՄՀՃԲ)	8,279.6	37.8	0.0	0.5%	0.0%
13	Էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր (ԳՁՎԲ)	3,588.5	0.0	0.0	0.0%	0.0%
14	Էներգետիկայի և անհապաղ օգնություն. Քանաքեռ հէկ-ի վերականգնման ծրագիր (ԳՁՎԲ)	907.5	0.0	1,429.7	0.0%	157.5%
15	Հրագրան ջէկ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցման ծրագիր (ՎՁԵԲ)	95.7	65.3	95.7	68.2%	100.0%
16	Ոռոգման համակարգի զարգացման ծրագիր (ՄՁԸ)	4,575.8	6,221.3	7,043.4	136.0%	153.9%
17	Պատվարների անվտանգության ծրագիր (ՄՁԸ)	2,771.2	921.8	1,137.3	33.3%	41.0%
18	Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիր (ՄՁԸ)	1,200.0	1,864.1	1,772.2	155.3%	147.7%
19	Գյուղատնտեսական ծառայությունների ծրագիր (ԳՁՄՀ)	4,590.4	6,554.2	5,903.8	142.8%	128.6%

Ա	Բ	1	2	3	4=2/1	5=3/1
20	Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր (ՄՁԸ)	1,626.3	965.0	931.7	59.3%	57.3%
21	Չեռնարկություններ ի ինկուբատոր ծրագիր (ՄՁԸ)	1,126.1	874.5	875.4	77.7%	77.7%
22	Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագիր (ՄՁԸ)	221.6	267.5	267.4	120.7%	120.6%
23	Տրանսպորտի ծրագիր (ՄՁԸ)	13,493.7	17,750.9	15,459.2	131.6%	114.6%
24	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագիր (ՄՁԸ)	3,946.8	4,997.9	5,072.7	126.6%	128.5%
ԸՆԴԱՄԵՆԸ		77,466.5	71,923.9	67,919.0	92.8%	87.7%

Բոլոր վարկերի գծով հանրագումարային կատարողականը կազմել է 92.8%, սակայն «Պետական հատվածի բարեփոխումներ», «Էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցում» և «Էներգետիկային անհասպաղ օգնություն. Բանաքեռ հեկ-ի վերականգնում» ծրագրերով նախատեսված 4,696.0 ԱՄՆ դոլարի դիմաց տարվա ընթացքում ընդհանրապես աշխատանքներ չեն կատարվել:

«Կրթության որակի և համապատասխանության» ծրագրով 2004թ. բյուջեով նախատեսված 1,986.7 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց վարկային միջոցներով իրականացված աշխատանքները կազմել են ընդամենը 899.1 հազ. ԱՄՆ դոլար կամ 45.3%:

«Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնում» ծրագրով նախատեսված 7,690.5 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց կատարողականը կազմել է 3,127.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 40.7%:

«Պատվարների անվտանգություն» ծրագրով նախատեսված 2,771.2 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց կատարողականը կազմել է 921.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 33.3%:

«Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում» ծրագրով նախատեսված 1,403.4 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց կատարվել են ընդամենը 207.7 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ կամ նախատեսվածի 14.8%-ը:

Եթե «Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնում» ծրագրով Համաշխարհային բանկի վարկի մասով կատարողականը կազմել է 198.0%, ապա Միջազգային Համագործակցության Ճապոնական բանկի վարկի մասով՝ ընդամենը 0.5%:

Բոլոր վարկերի հանրագումարային կատարողականի բարձր տոկոսը պայմանավորված է առանձին ծրագրերի գերակատարումով՝

- «Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնում» ծրագիր ՀԲ-ի վարկի մասով՝ 198.0%,
- «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագիր՝ 155.3%,
- «Գյուղատնտեսական ծառայություններ» ծրագիր՝ 142.8%,
- «Ոռոգման զարգացում» ծրագիր՝ 136.0%,
- «Տրանսպորտի» ծրագիր՝ 131.6%,
- «Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ» ծրագիր՝ 126.6%:

Անհրաժեշտություն կա բարելավել մի շարք վարկային ծրագրերի իրականացման տեմպերը (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

01.01.2005թ. դրությամբ ցածր տեմպերով իրականացվող վարկային ծրագրերի վերաբերյալ

Ծրագրի անվանումը	ԱՇ կողմից համաձայնագրի վավերացման ամսաթիվը	Ծրագրով նախատեսված գումարը		Ծրագրի սկզբից մինչև 01.01.2005թ. կատարված աշխատանքները		Ծրագրի ավարտի նախատեսված ժամկետը (ներառյալ՝ 01.01.2005թ. դրությամբ փոփոխությունները)		01.01.2005թ. դրությամբ կատարված աշխատանքները նախատեսվածի նկատմամբ	ԱՇ կողմից համաձայնագրի վավերացմանը հաջորդող ամսի 1-ից մինչև 01.01.2005թ. ամիսների թիվը	01.01.2005թ. դրությամբ ծախսված ժամանակահատվածը նախատեսվածի նկատմամբ
		Ընդամենը	Այդ թվում՝ վարկի հաշվին	Ընդամենը	Այդ թվում՝ վարկի հաշվին	Անստփյվ	Ամիս (սկսած ԱՇ կողմից համաձայնագրի վավերացմանը հաջորդող ամսի 1-ից)			
1	2	3	4	5	6	7	8	9=5/3	10	11=10/8
1 Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր (Գ.Զ.Վ.Բ) (հազ. եվրո)	21.12.1998թ.	14,100.0	12,700.0	4,577.9	3,958.2	31.12.2006թ.	96	32.5%	72	75.0%
2 Էլեկտրահաղորդման գրծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր (ՄՀ ճԲ) (հազ. ԱՄՆ դոլար)	25.08.1999թ.	51,561.1	51,561.0	1,407.2	1,407.2	20.10.2005թ.	74	2.7%	64	86.5%

	1	2	3	4	5	6	7	8	9=5/3	10	11=10/8
3	Պատվարների անվտանգության ծրագիր (ՀԲ) (հազ. ԱՄՆ դոլար)	22.03.2000թ.	30,299.6	26,600.0	17,369.8	15,602.1	31.03.2005թ.	60	57.3%	57	95.0%
4	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագիր (ՀԲ) (հազ. ԱՄՆ դոլար)	28.07.2000թ.	27,618.0	20,000.0	20,582.8	15,502.9	31.12.2005թ.	65	74.5%	53	81.5%
5	Դատաիրավական բարեփոխումների ծրագիր (ՀԲ) (հազ. ԱՄՆ դոլար)	07.03.2001թ.	13,615.2	12,742.2	6,666.5	6,176.0	31.06.2006թ.	63	49.0%	45	71.4%
6	Ոռոգման համակարգի զարգացման ծրագիր (ՀԲ) (հազ. ԱՄՆ դոլար)	24.10.2001թ.	30,820.0	24,860.0	12,670.5	10,640.9	31.03.2007թ.	64	41.1%	38	59.4%
7	Ձեռնարկությունների ինկուբատոր ծրագիր (ՀԲ) (հազ. ԱՄՆ դոլար)	20.03.2002թ.	5,450.0	5,000.0	1,684.4	1,662.1	30.06.2005թ.	39	30.9%	33	84.6%
8	Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագիր (ՀԲ) (հազ. ԱՄՆ դոլար)	26.06.2002թ.	1,455.4	1,155.4	709.8	510.2	31.12.2005թ.	42	48.8%	30	71.4%

Ինչպես երևում է աղյուսակից՝

- Միջազգային Համագործակցության ճապոնական բանկի ֆինանսավորմամբ «Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնում» ծրագրի իրականացման ժամկետի 86.5%-ը անցել է, իսկ աշխատանքները կատարվել են ընդամենը 2.7%-ով,

- Միջազգային Չարգացման Ընկերակցության «Ձեռնարկությունների ինկուբատոր» ծրագրի ժամկետի 84.6%-ը անցել է, աշխատանքները կատարվել են ընդամենը 30.9%-ով:

Վարկային ծրագրերի նախատեսված ժամանակացույցը խախտելու հետևանքով, 2004թ. ընթացքում ՀՀ կառավարությունը վարկատուներին վճարել է պարտավճար՝ 646.5 հազ. ԱՄՆ դոլարի չափով (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի գծով 2004թ. ընթացքում վճարված պարտավճարները

Վարկա-տու	Վարկը	Պարտավճար	
		ԱՄՆ դոլար	հազ. դրամ
1	2	3	4
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի գծով			
ՄՁԸ	Կառուցվածքային բարեփոխումների վարկ (V)	14,592.13	7,995.32
ՄՁԸ	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ (II)	42,415.64	22,367.55
ՄՁԸ	Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիր	872.74	476.74
ՄՁԸ	Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման ծրագիր	1,393.05	775.17
ՄՁԸ	Համայնքային զարգացման ծրագիր	29,081.98	15,153.26
ՄՁԸ	Անշարժ գույքի գրանցման ծրագիր	3,558.47	1,967.42
ՄՁԸ	Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգերի ծրագիր	59,690.31	31,402.96
ՄՁԸ	Պատվարների անվտանգության ծրագիր	53,658.32	28,207.91
ՄՁԸ	Տրանսպորտի ծրագիր	46,319.23	24,654.22
ՄՁԸ	Դատախիրավական բարեփոխումների ծրագիր	42,416.61	22,323.27
ՄՁԸ	Ոռոգման համակարգի զարգացման ծրագիր	104,385.95	54,859.99
ՄՁԸ	Ձեռնարկությունների ինկուբատոր ծրագիր	23,681.83	12,859.73
ՄՁԸ	Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր	46,058.65	24,260.56
ՄՁԸ	Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	4,249.12	2,310.21
ՄՁԸ	Կրթության որակի և համապատասխանության ծրագիր	51,720.18	25,003.60
Ընդամենը		524,094.21	274,617.91
Օտարերկրյա պետություններից ստացված վարկերի գծով			
Գ.ԶՎԲ	Էներգետիկայի անհապաղ օգնություն. Քանաբեռ հէկ-ի վերականգնման ծրագիր	1,325.71	697.61
Գ.ԶՎԲ	Էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր	15,301.66	7,787.94
Գ.ԶՎԲ	Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր I	1,041.26	559.80
Գ.ԶՎԲ	Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր II	104,740.28	50,887.02
Ընդամենը		122,408.91	59,932.37
ԸՆԴԱՄԵՆԸ		646,503.12	334,550.28

Նշված 646.5 հազ. ԱՄՆ դոլարի պարտավճարը պետական բյուջեից վարկատուներին չէր վճարվի, եթե ծրագրերն իրականացվեին նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 25.08.2004թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով
և ՀՀ կառավարություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Չարգացման Ընկերակցության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի իրականացման ընթացքի մասին

Վերահսկողության հիմքը - «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը,
ՀՀ Ազգային ժողովի 03.12.2003թ. Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի
2004 թվականի տարեկան ծրագիրը և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի 31.03.2004թ. թիվ 71
հրամանը:

Վերահսկողության նպատակը - «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն»
ծրագրի իրականացման ընթացքը:

Վերահսկողության օբյեկտները - «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն»
ծրագրի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ (այսուհետ՝ ԾԻԳ, տնօրեն՝ Լ.
Աղամյան):

Ուսումնասիրության ժամանակահատվածը - 01.01.2001-01.07.2004թթ. (մինչև 01.01.2001թ.
ժամանակահատվածը վերահսկվել է ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի կողմից 2001թ.-ին):

1. Ծրագրի նպատակները և վարկի պայմանները

«Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)
նպատակներն են.

- աջակցել մասնավոր ֆերմերային տնտեսությունների և ագրովերամշակող
ձեռնարկությունների զարգացմանը,
- բարելավել և ընդլայնել ֆերմերային տնտեսությունների վարկավորման համակարգը,
- բարձրացնել գիտահետազոտական, կրթական, տեղեկատվական և խորհրդատվական
ծառայությունների արդյունավետությունը գյուղատնտեսական ծառայությունների
ոլորտում:

Ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝
Փոխառու) և Միջազգային Չարգացման Ընկերակցության (այսուհետ՝ ՄՉԸ) միջև 1998թ. մարտի
12-ին ստորագրվել է 10.7 մլն SDR (14.5 մլն ԱՄՆ դոլար) գումարով վարկ տրամադրելու
վերաբերյալ համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), որը ՀՀ ԱԺ կողմից վավերացվել է
03.07.1998թ.:

Ըստ Համաձայնագրի, Փոխառուն պարտավոր է պարբերաբար մուծել պարտավճար՝ վարկի չառհանված հիմնագումարի դիմաց՝ ՄՁԸ-ի կողմից յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին սահմանվող, բայց ոչ ավելի, քան տարեկան 0.5 տոկոսադրույքով: Վարկի հիմնագումարի առհանումների և մնացորդային գումարների դիմաց Փոխառուն պարտավոր է պարբերաբար վճարել սպասարկման վարձ՝ տարեկան 0.75%-ի չափով: Պարտավճարը և սպասարկման վարձը պետք է կատարվեն կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա հունիսի և դեկտեմբերի 15-ին:

Փոխառուն վարկի հիմնագումարը պարտավոր է հետ վերադարձնել կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա հունիսի և դեկտեմբերի 15-ին՝ սկսած 2008թ.-ից մինչև 2032թ. դեկտեմբերի 15-ը: Սինչև 2017թ. դեկտեմբերի 15-ը կատարվելիք մուծումները պետք է կազմեն հիմնագումարի 1.25%-ը, իսկ դրանից հետո՝ 2.5%-ը:

Համաձայնագրով Ծրագրի ավարտը նախատեսվել է 2002թ. դեկտեմբերի 31-ը: Սակայն Համաձայնագրում 14.01.2003թ.-ին կատարված փոփոխությամբ Ծրագրի ավարտման ժամկետը երկարաձգվել է մինչև 2004թ. հունիսի 30-ը:

Ըստ Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) կողմից Ծրագրի գնահատման փաստաթղթի (SAR), Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 19,815,000.0 ԱՄՆ դոլար, որից ՄՁԸ-ի փոխառությունը կազմում է 14,500,000.0 ԱՄՆ դոլար, ՀՀ կառավարության համաֆինանսավորումը՝ 5,315,000.0 ԱՄՆ դոլար:

2. Ծրագրի կատեգորիաները

Համաձայնագրում 03.03.1999թ., 14.01.2003թ. և 28.07.2003թ. կատարվել են փոփոխություններ: Հավելված 1-ում արտացոլված են կատեգորիաների միջև վարկային միջոցների բաշխումն ըստ Համաձայնագրի և ըստ վերը նշված փոփոխությունների:

3. Ծրագրի կատարողականը

2001թ.

2001թ. ՀՀ պետական բյուջեով Ծրագրի իրականացման համար նախատեսվել է 2,643.6 հազ. ԱՄՆ դոլար, որի դիմաց կատարված աշխատանքները կազմել են 1,844.2 հազ. ԱՄՆ դոլար (69.8%) (հավելված 2):

Հիմնական թերակատարումը տեղի է ունեցել «ապրանքներ» կատեգորիայով՝ մրցույթների արդյունքում գոյացած տնտեսման հաշվին:

2002թ.

2002թ. ՀՀ պետական բյուջեով Ծրագրի իրականացման համար նախատեսվել է 2,788.7 հազ. ԱՄՆ դոլար, որի դիմաց կատարված աշխատանքները կազմել են ընդամենը 861.9 հազ. ԱՄՆ դոլար (30.9%) (հավելված 2): Հիմնականում թերակատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ տարվա բյուջեով 1,529.0 հազ. ԱՄՆ դոլար նախատեսվել է «չտեղաբաշխված գումարներ» կատեգորիայով, քանի որ Համաձայնագրով Ծրագրի ավարտը

նախատեսված էր 2002թ. դեկտեմբերի 31-ը, իսկ երկարաձգման վերաբերյալ Համաձայնագրի փոփոխությունը դեռևս գտնվում էր քննարկման փուլում:

2003թ.

2003թ. ՀՀ պետական բյուջեով Ծրագրի իրականացման համար նախատեսվել է 1,351.8 հազ. ԱՄՆ դոլար, որի դիմաց կատարված աշխատանքները կազմել են 1,711.1 հազ. ԱՄՆ դոլար կամ նախատեսվածի 126.6%-ը, այդ թվում՝ վարկի հաշվին՝ 1,671.7 հազ. ԱՄՆ դոլար կամ 139.9%, և ՀՀ բյուջեի հաշվին՝ 39.4 հազ. ԱՄՆ դոլար կամ 25.1% (հավելված 2): Վարկի հաշվին աշխատանքների գերակատարումը (39.9%-ով) պայմանավորված է այն հանգամանքով, որ 2003թ. ՀՀ պետական բյուջեով չի նախատեսվել պարարտանյութերի ձեռքբերում, սակայն նույն բաղադրիչի գծով ծախսերը տվյալ տարում (վարկի հաշվին) կազմել է 621.5 հազ. ԱՄՆ դոլար: Դրա հետ մեկտեղ, Համաձայնագրում 14.01.2003թ. կատարված փոփոխությամբ, Ծրագրի «Քեմատիկ աշխատանքներ» և «գործառնական ծախսեր» հոդվածներով ավելացել է վարկային միջոցների մասնաբաժինը, որի արդյունքում ավելացել են վարկային միջոցների հաշվին կատարվող ծախսերը:

2004թ. առաջին կիսամյակ

2004թ. ՀՀ պետական բյուջեով նույն թվականի առաջին կիսամյակի համար նախատեսվել է 1,275.0 հազ. ԱՄՆ դոլար, որի դիմաց կատարված աշխատանքները կազմել են 1,120.99 հազ. ԱՄՆ դոլար կամ նախատեսվածի 87.9%-ը (հավելված 2):

3.1. Ծրագրի կատարողականը Ծրագրի սկզբից մինչև 01.07.2004թ.

Համաձայնագրում կատարված փոփոխությունների արդյունքում Ծրագրի արժեքը կազմել է ընդամենը 19,815.0 հազ. ԱՄՆ դոլար, այդ թվում՝ վարկի հաշվին 14,500.0, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 4,875.0 և այլ աղբյուրների հաշվին՝ 440.0 հազ. ԱՄՆ դոլար:

Կատարված աշխատանքները 01.07.2004թ. դրությամբ կազմել են 15,662.2 հազ. ԱՄՆ դոլար կամ 80.8%-ը, այդ թվում՝ վարկի հաշվին՝ 14,403.3 հազ. ԱՄՆ դոլար կամ 99.3%-ը, ՀՀ բյուջեի հաշվին՝ 1,258.9 հազ. ԱՄՆ դոլար կամ 25.8%-ը (հավելված 2): ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով 3,616.1 հազ. ԱՄՆ դոլարի թերակատարումը, ԾԻԳ-ի մեկնաբանությամբ, կայանում է հետևյալում.

- Մինչև Ծրագիրը սկսելը և ԾԻԳ-ը կազմավորվելը, Եվրամիության «ՏԱՄԻՍ» (TACIS) ծրագրի շրջանակներում Հայգյուղփոխօգնության բանկին (այժմյան «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվ՝ ACBA բանկ) տրամադրված 2,000.0 հազ. ԱՄՆ դոլարը հետագայում դիտարկվել է որպես «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասնաբաժին, սակայն հաշվետվություններով արտացոլվում է որպես չկատարված ծախս:
- Մնացած 1,616.1 հազ. ԱՄՆ դոլարը չտեղաբաշխված գումար է, որը գոյացել է հիմնականում Համաձայնագրի փոփոխություններով կատեգորիաների միջև

կատարված վերաբաշխումների արդյունքում՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասնաբաժնի իջեցման հետևանքով (հավելված 1):

Հարկ է նշել, որ Ծրագրի իրականացման ընթացքում SDR/USD փոխարժեքային տատանումների հետևանքով ՀՀ կառավարությանը տրամադրված 14.5 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներն արժեզրկվել են 0.25 մլն ԱՄՆ դոլարով և կազմել են 14.25 մլն ԱՄՆ դոլար:

4. Ծրագրի բաղադրիչները

Ըստ Համաձայնագրի, Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

Մաս Ա - Ազրոբիզնեսի Զարգացման Կենտրոն

Հիմնադրել Ազրոբիզնեսի Զարգացման Կենտրոն (այսուհետ՝ ԱԶԿ), որը Փոխառուի համար կհանդիսանա կիսահինքնավար գործակալություն և պատասխանատու կլինի մեծ ֆերմերային տնտեսությունների և ագրովերամշակող ձեռնարկությունների ղեկավարներին խորհրդատվական ծառայություններ տրամադրելու, ինչպես նաև՝ այդ ղեկավարներին ֆինանսական կառավարման, մարքետինգի և ռազմավարական պլանավորման ոլորտներում ուսուցում կազմակերպելու համար:

ԱԶԿ-ի գործունեությունը որոշ առումներով կրկնում է Ծրագրի բաղադրիչներ հանդիսացող՝ «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների», «Ազրոգիտասփյուռ» դեպարտամենտի գործառույթները: Այսպես, ԱԶԿ գործունեության ուղղություններից հատկապես կարևորվում է գյուղացիական տնտեսություններին խորհրդատվական ծառայությունների մատուցումը, դասընթացների և սեմինարների կազմակերպումը, որոնք Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների գործունեության հիմնական ֆունկցիաներից են:

1999-2003թթ. ԱԶԿ-ի կողմից ագրոպարենային ոլորտի տնտեսավարող սուբյեկտների համար մշակվել են 137 բիզնես ծրագրեր, որոնցից, «Վարկավորում» բաղադրիչով ֆինանսական հաստատություններից միջին ժամկետի վարկավորման համար, կիրառություն են ստացել միայն 10-ը:

ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1931-Ն որոշմամբ ԱԶԿ-ն սեփականաշնորհվել է, սակայն լուծում չի տրվել Ծրագրի միջոցներից նրա մոտ առկա վարկային միջոցների հաշվին ձեռքբերված մոտ 23.7 հազ. ԱՄՆ դոլարի գույքի հարցին (համակարգչային տեխնիկա՝ 12,030.0 ԱՄՆ դոլար, լաբորատոր և այլ սարքավորումներ՝ 3,172.0 ԱՄՆ դոլար, կահույք՝ 8,540.0 ԱՄՆ դոլար):

Մաս Բ - Վարկավորում

ԾԻԳ-ի հետ համաձայնեցնելով, մասնակից ֆինանսական հաստատությունների միջոցով ենթավարկեր տրամադրել ֆերմերներին, ֆերմերային մեծ տնտեսություններին և ագրովերամշակման ձեռնարկություններին:

Ծրագրին մասնակից բանկերի հետ կնքվել են քառակողմ պայմանագրեր՝ ՀՀ գյուղատնտեսության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների և ԾԻԳ-ի միջև, ըստ որոնց բանկերն իրենց հատկացված վարկային միջոցների շրջանակներում պետք է տրամադրեին

կարճաժամկետ վարկեր՝ մինչև 2,000.0 ԱՄՆ դոլար գումարով՝ մեկ տարի ժամկետով, և միջնաժամկետ վարկեր՝ մինչև 50,000.0 ԱՄՆ դոլար գումարով՝ մինչև 5 տարի մարման ժամկետով, իսկ ենթավարկառուների կողմից վարկային գումարները վերադարձնելուց հետո, 45 օրվա ընթացքում, այդ գումարները պետք է հատկացվեին այլ ենթավարկառուներին:

Լրացուցիչ վարկային համաձայնագրերը հետագայում երկու անգամ ենթարկվել են փոփոխության, որոնցով կարճաժամկետ վարկերի ժամկետը մեկ տարուց երկարաձգվել է մինչև 18 ամիս, և թույլատրվել է շրջանառու ֆոնդի հաշվին 75 օրվա ընթացքում կատարել կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տեղաբաշխում:

Բանկերի միջև տեղաբաշխված գումարների, չափի և ձևի, ժամկետների, տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 1

«Վարկավորում» բաղադրիչ

ԱՄՆ դոլար

1	Մասնակից Ֆինանսական Հաստատություն	ԼՎՀ No ARSP-SL	Համաձայնագրի կնքման ամսաթիվը	Համաձայնագրի գործողության ժամկետը	Վարկի տեսակը ըստ ժամկետայնության	ԼՎՀ Տոկոսադրույք	ԼՎՀ նախատեսված գումար	Փաստացի տրամադրված գումար	Տարածքային տեղաբաշխում ըստ ԼՎՀ	Առաելիագույն ստիպուստույք
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Արդշին-բանկ	98/305	01.12.98	10 տարի	կարճա-ժամ-կետ	6.5	250,000.0	250,000.0	Կոտայք, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ	15.0
2	Հայագր-բանկ	98/307	01.12.98	10 տարի	միջին ժամկետ	6.5	500,000.0	314,707.0	ՀՀ բոլոր մարզեր	13.6
		98/302	01.12.98	10 տարի	կարճա-ժամկետ	6.5	500,000.0	338,035.0	Կոտայք, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ	16.0
		00/316	01.09.00	10 տարի	միջին ժամկետ	6.5	600,000.0	600,000.0	ՀՀ բոլոր մարզեր	12.5
3	Կրեդիտ Երևան բանկ	98/308	01.12.98	10 տարի	միջին ժամկետ	6.5	500,000.0	500,000.0	ՀՀ բոլոր մարզեր	11.0
		98/303	01.12.98	10 տարի	կարճա-ժամկետ	6.5	500,000.0	500,000.0	Կոտայք, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ	12.0

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Մասնակից ֆինանսական Հաստատություն	ԼՎՀ NoARSP-SL	Համաձայնագրի կնքման ամսաթիվը	Համաձայնագրի գործողության ժամկետը	Վարկի տեսակը ըստ ժամկետայնության	ԼՎՀ Տոկոսադրույք	ԼՎՀ նախատեսված գումար	Փաստացի տրամադրված գումար	Տարածքային տեղաբաշխում ըստ ԼՎՀ	Առավելագույն տոկոսադրույք	
4	Կրեդիտ Սերվիս րանկ	98/304	01.12.98	10 տարի	կարճա-ժամկետ	6.5	500,000.0	500,000.0	Կոտայք, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ	11,5-12,5
		00/310	05.06.00	10 տարի	միջին ժամկետ	LIBOR+1	450,000.0	450,000.0	ՀՀ բոլոր մարզեր	12.0
5	Հայգյուղ-փոխրանկ	97/301	17.11.97	15 տարի	կարճա-ժամկետ	LIBOR	650,000.0	650,000.0	Չի սահմանափակվում	23-24
		98/306	01.12.98	10 տարի	կարճա-ժամկետ	6.5	750,000.0	750,000.0	Արմավիր, Լոռի,	16-18
		00/309	05.06.00	10 տարի	կարճա-ժամկետ	LIBOR +1	450,000.0	450,000.0	Արարատ, Շիրակ, Արագածոտն, Վայոց Ձոր	16-18
6	Տրաստ-րանկ	00/314	01.09.00	10 տարի	միջին ժամկետ	6.5	400,000.0	327,746.0	ՀՀ բոլոր մարզեր	12
		00/311	01.09.00	10 տարի	կարճա-ժամկետ	6.5	200,000.0	200,000.0	Կոտայք, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ	12
7	Կոնվերս-րանկ	00/317	01.09.00	10 տարի	միջին ժամկետ	6.5	800,000.0	800,000.0	ՀՀ բոլոր մարզեր	12
		00/313	01.09.00	10 տարի	կարճա-ժամկետ	6.5	400,000.0	400,000.0	Կոտայք, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ	12
8	Չարգաց-ման Հայկական րանկ	00/315	01.09.00	10 տարի	միջին ժամկետ	6.5	200,000.0	200,000.0	ՀՀ բոլոր մարզեր	10
		00/312	01.09.00	10 տարի	կարճա-ժամկետ	6.5	200,000.0	200,000.0	Կոտայք, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ	10
ԸՆԴԱՄԵՆԸ							7,850,000.0	7,430,488.00		

Այսպիսով, ծրագրի շրջանակներում «Վարկավորում» բաղադրիչով բանկերին փաստացի տրամադրվել է 7,430,488.00 ԱՄՆ դոլար, որից 01.04.2004թ. դրությամբ միջնաժամկետ վարկերի գծով հաստատվել և ֆինանսավորվել են 51 ենթավարկային ծրագրեր՝ 3,971,043.0 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով (այդ թվում՝ 10 վարկառու 778,590.0 ԱՄՆ դոլար գումարով վարկավորվել են շրջանառու ֆոնդի հաշվին), իսկ կարճաժամկետ վարկեր տրամադրվել են 14787 վարկառուների՝ 13,214,580.0 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով (այդ թվում՝ թվով 9896 վարկը՝ 8,976,545.0 ԱՄՆ

դուրս գումարով՝ շրջանառու ֆոնդի հաշվին): Վարկային միջոցների տեղաբաշխումն ըստ մարզերի արտացոլված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ԱՄՆ դրոյար

	Միջնաժամկետ վարկեր			Կարճաժամկետ վարկեր			Ընդամենը վարկեր	%
	Ենթավարկառուների քանակը	Գումարը	%	Ենթավարկառուների քանակը	Գումարը	%		
Շիրակ	3	74,500.0	1.9	253	241,220.0	1.8	315,720.0	1.8
Լոռի	4	250,000.0	6.3	390	577,197.0	4.4	827,197.0	4.8
Տավուշ	3	154,500.0	3.9	518	244,447.0	1.9	398,947.0	2.3
Արագածոտն	3	54,300.0	1.4	448	424,524.0	3.2	478,824.0	2.8
Կոտայք	9	526,183.0	13.3	848	1,320,977.0	10.0	1,847,160.0	10.8
Գեղարքունիք	4	134,167.0	3.4	922	697,980.0	5.3	832,147.0	4.8
Արմավիր	4	1,077,746.0	27.1	5479	5,037,105.0	38.1	6,114,851.0	35.6
Արարատ	7	636,000.0	16.0	5427	4,060,772.0	30.7	4,696,772.0	27.4
Վայոց ձոր	1	20,000.0	0.5	128	51,580.0	0.4	71,580.0	0.4
Սյունիք	4	94,940.0	2.4	374	558,778.0	4.2	653,718.0	3.8
Երևան	9	948,707.0	23.8	-	-	-	948,707.0	5.5
Ընդամենը	51	3,971,043.0	100.0	14787	13,214,580.0	100.0	17,185,623.0	100.0

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ 2001թ.-ի մարդահամարի արդյունքները» ցուցանիշների տվյալների, ՀՀ-ում առկա են 953 գյուղական բնակավայրեր, որտեղ գործում են 251345 անհատական տնային տնտեսություններ: Ծրագրի «Վարկավորում» բաղադրիչի շրջանակներում ընդգրկվել է ընդամենը 472 գյուղ, կամ 49.5%-ը, իսկ կարճաժամկետ վարկեր ստացել են ընդամենը 13442 մարդ, ինչը գյուղական անհատական տնտեսությունների համեմատ կազմում է 5.3%: 1345 վարկ տրամադրվել է նույն անձանց կրկնակի և եռակի: Կարճաժամկետ վարկերի բաշխումը՝ ըստ մարզերի և գյուղերի ու անհատական գյուղական տնտեսությունների քանակի արտացոլված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 3

Մարզ	միլիոն մեկուսիս	միլիոն մեկուսիս	միլիոն մեկուսիս	ԳԲԱԾ «Վարկային» թաղադրիչով		միլիոն մեկուսիս	միլիոն մեկուսիս
				Ընդգրկված գյուղերի քանակը	միլիոն մեկուսիս		
1	2	3	4	5	6	7=5/2	8=6/3
Արագածոտն	118	24685	105394	28	447	23.7%	1.8%
Արարատ	94	41150	191937	62	5078	66.0%	12.3%
Արմավիր	95	37114	177902	95	5065	100.0%	13.6%
Գեղարքունիք	93	32312	158684	53	688	57.0%	2.1%

Լռոի	122	30799	116352	60	336	49.2%	1.1%
Կոտայք	62	25771	118433	62	778	100.0%	3.0%
Շիրակ	128	26427	109129	18	253	14.1%	1.0%
Սյունիք	128	11932	48537	51	303	39.8%	2.5%
Վայոց ձոր	52	8040	36392	9	127	17.3%	1.6%
Տավուշ	61	13115	50721	34	367	55.7%	2.8%
Ընդամենը	953	251345	1113481	472	13442	49.5%	5.3%

Ծրագրի «Վարկավորում» բաղադրիչի շրջանակներում 01.01.2004թ. դրությամբ գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկերն ըստ գործունեության տեսակների ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4
ԱՄՆ դոլար

Գործունեության տեսակը	Հոլդերներ	Այգեգործություն	Անասնաբուծություն	Թռչնաբուծություն	Ջրհեղուկաբուծություն	Մեղվաբուծություն	Գինեգործություն	Վերանշակում	Այլ	Ընդամենը	
1998	Քանակ	285	16	380	0	0	0	0	0	681	
	Գումար	275,645.0	8,850.0	365,505.0	0.00	0.00	0.00	0.00	0.00	650,000.0	
1999	Քանակ	1329	324	1017	3	1	15	2	1	26	
	Գումար	1,254,130.0	299,300.0	1,464,278.0	146,834.04	30,000.0	11,475.0	100,000.0	25,000.0	234,404.96	3,565,422.0
2000	Քանակ	1803	1733	580	0	0	0	0	5	59	
	Գումար	1,355,590.0	1,286,343.0	806,030.0	0.00	0.00	0.00	0.00	1,290,000.0	894,056.0	5,632,019.0
2001	Քանակ	1458	98	435	1	0	74	0	1	3	
	Գումար	1,117,774.0	148,984.0	353,136.0	35,000.0	0.00	144,186.0	0.00	64,423.0	65,000.0	1,928,503.0
2002	Քանակ	1798	276	649	0	0	0	2	0	0	
	Գումար	1,188,770.0	420,980.0	904,112.0	0.00	0.00	0.00	450,000.0	0.00	0.00	2,963,862.0
2003	Քանակ	1635	222	527	0	0	0	0	0	0	
	Գումար	1,283,925.0	415,600.0	675,447.0	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	2,374,972.0
Ընդամենը	Քանակ	8308	2669	3588	4	1	89	4	7	88	
	Տեսակարար կշիռը	56.29%	18.09%	24.30%	0.03%	0.01%	0.60%	0.03%	0.05%	0.60%	100.00%
	Գումար	6,475,834.0	2,580,057.0	4,568,508.0	181,834.04	30,000.0	155,661.0	550,000.0	1,379,423.0	1,193,460.96	17,114,778.0
	Տեսակարար կշիռը	37.84%	15.08%	26.69%	1.06%	0.18%	0.91%	3.21%	8.06%	6.97%	100.00%

Ծրագրի «Վարկավորում» բաղադրիչի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ծրագրի շրջանակներում մասնակից 8 բանկերից 5-ը գտնվում են անվճարունակության կամ

լուծարային գործընթացում, մեկ բանկ՝ «Զարգացման հայկական բանկը», 01.04.2004թ. դրությամբ դուրս է եկել Ծրագրից և գումարը վերադարձրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, իսկ «Ագրոբանկ» ԲԲԸ կարճաժամկետ վարկերի գծով 600,000.0 ԱՄՆ դոլարի չափով պարտավորությունները փոխանցել է «Արդշինիմվեստբանկ» ՓԲԸ-ին: Այսպիսով, 01.04.2004թ. դրությամբ ծրագրի շրջանակներում գործում է 3 բանկ.

«Արդշինիմվեստբանկ» - 600,000.0 ԱՄՆ դոլար,

«Հայգյուղփոխբանկ» - 1,850,000.0 ԱՄՆ դոլար,

«Կոնվերսբանկ» - 1,200,000.0 ԱՄՆ դոլար,

Ընդամենը - 3,650,000.0 ԱՄՆ դոլար կամ հատկացված գումարի 49%-ը:

Անվճարունակության գործընթացում գտնվող բանկերի կողմից Ծրագրի վարկային միջոցների վերադարձն ապահովելու նպատակով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մի շարք բանկերի հետ կնքել է պահանջի իրավունքի զիջման պայմանագրեր, որոնցով ենթավարկառուների պարտավորություններն անցել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը: Լուծարվող բանկերի պարտավորությունների և պահանջի իրավունքի զիջման պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 5
ԱՄՆ դոլար

Բանկի անվանումը	ԳԲԸ ծրագրի ստանդորտ մուդառն	Մինչև ցեսիայի պայմանագիրը ենթավարկառուների կողմից բանկին մարված գումարը	Ցեսիայի պայմանագրով զիջված գումարը				Բանկի պարտավորությունը	Ծանուցում
			Պայմանագրի կնքման ամսաթիվը	Վարկը	Տոկոս և տույժ	Ընդամենը		
1	2	3	4	5	6	7	8	9
«Հայագրոբանկ»	652,742.0	9,677.0 առ 01.04.2004թ.		-	-	-	652,742.0	Պարտավորությունների իրավունքի զիջման պայմանագիր 01.04.04թ. դրությամբ չի կնքվել
«Արդշինբանկ»	250,000.0	66,163.0	02.06.2003	183,837.0	91,584.0	275,421.0	-	
«Կրեդիտ-Երևան բանկ»	1,000,000.0	725,374.0	26.11.2003	274,626.0	103,791.0	378,417.0	621,583.0	01.04.04թ. դրությամբ ՀՀ ֆին. և էկոն. նախարարությունը որպես բանկի պարտատեր դեռ չի գրանցվել
«Կրեդիտ-Մերվիս բանկ»	950,000.0	496,614.0 առ 27.03.2003թ.		-	-	-	950,000.0	ՀՀ ֆին. և էկոն. նախարարությունը գրանցվել է որպես բանկի պարտատեր

«Տրաստ-բանկ»	527,746.0	130,000.0	30.11.2002	397,746.0	124,614.0	522,360.0	5,386.0	
Ընդամենը	3,380,488.0						2,229,714.0	

Այսպիսով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից լուծարված 5 բանկերից 2-ի հետ չի կնքվել ցեսիայի պայմանագիր՝ Հայազրոբանկի մասով՝ 652,442.0 ԱՄՆ դոլար, Կրեդիտ-Սերվիս բանկի մասով՝ 453,386.0 ԱՄՆ դոլար:

Լուծարվող 5 բանկերի պարտքը ՀՀ կառավարությանը 01.04.2004թ. դրությամբ կազմում է 2,229,714.0 ԱՄՆ դոլար, որի մարման հավանականությունը խիստ ցածր է:

Դրան ավելացնենք, որ վերոհիշյալ բանկերը վարկեր են ստացել նաև «Ձեռնարկությունների զարգացում» և «Լինսի» հիմնադրամի վարկային ծրագրերով:

«Ձեռնարկությունների զարգացում» վարկային ծրագրով՝

«Հայազրոբանկ» - 4,300.0 հազ. ԱՄՆ դոլար,

«Կրեդիտ-Երևան բանկ» - 1,424.4 հազ. ԱՄՆ դոլար,

«Տրաստբանկ» - 600.0 հազ. ԱՄՆ դոլար,

«Արդշինբանկ» - 500.0 հազ. ԱՄՆ դոլար:

«Լինսի» վարկային ծրագրով՝

«Հայազրոբանկ» - 357.5 մլն դրամ,

«Կրեդիտ-Երևան բանկ» - 1,846.07 մլն դրամ,

«Տրաստբանկ» - 1,105.0 մլն դրամ,

«Արդշինբանկ» - 3,007.6 մլն դրամ,

«Կրեդիտ-Սերվիս բանկ» - 369.0 մլն դրամ:

Ցածր է նաև ցեսիայի պայմանագրերով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն անցած վարկերի վերադարձվելիությունը (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6
ԱՄՆ դոլար

	Պահանջի իրավունքի զիջման պայմանագրով			01.04.2004թ. դրությամբ մարվել է ընդամենը	01.04.2004թ. դրությամբ մնացորդը				Վարկա-նունների թիվը
	Պայմանագրի կնքման օրը	Զիջված վարկի գումարը	Զիջված տոկոսագումարը		Վարկ	Ժամկետանց վարկ	Տոկոս և տույժ	Ընդամենը	
Կրեդիտ-Երևան բանկ	26.11.2003	274,627.0	103,792.0	21,400.0	21,952.0	236,138.0	120,069.0	378,159.0	122
Արդշինբանկ ¹	30.06.2003	183,837.0	-	5,283.0	-	183,822.0	91,585.0	275,407.0	105
Տրաստբանկ	20.11.2003	397,746.0	124,614.0	74,255.0	-	397,746.0	50,359.0	448,105.0	1

¹ «Արդշինբանկ» ԲԲԸ լուծարվող բանկի կողմից զիջվել է նաև տույժեր և տոկոսներ, որոնք իրավունքի զիջման պայմանագրում նշված չեն եղել, ՀՀ ֆին. և էկոն. նախարարության կողմից կատարվել է վերահաշվարկ:

Ընդամենը		856,210.0	228,406.0	100,938.0	21,952.0	817,706.0	262,013.0	1,101,671.0	228
-----------------	--	-----------	-----------	-----------	----------	-----------	-----------	-------------	-----

Այսպիսով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ցեսիայի պայմանագրերով թվով 228 ենթավարկառուներից 01.04.2004թ. դրությամբ չի գանձվել 817.7 հազ. ԱՄՆ դոլարի ժամկետանց վարկի մայր գումար և 262.0 հազ. ԱՄՆ դոլարի հաշվարկված տոկոս և տույժ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ չվերադարձված որոշ ենթավարկերի վարկային փաթեթներում ի սկզբանե առկա էին խնդրահարույց և պարզաբանման կարիք ունեցող տվյալներ: Այսպես.

1. «Արդշինբանկ» ԲԲԸ-ի կողմից 2001թ. օգոստոսի 21-ին «Նոյ 89» ՍՊԸ-ին տրամադրվել է 30.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով միջնաժամկետ վարկ՝ 15% տարեկան տոկոսադրույքով, 1.5 տարի ժամկետով՝ պանրի արտադրություն կազմակերպելու համար: Ըստ գործարար ծրագրի, 30.0 հազ. ԱՄՆ դոլար վարկային միջոցներով ընկերությունը պետք է ձեռքբերեր լիցքավորող և փաթեթավորող հոսքագիծ: Շրջանառու միջոցները պետք է ձեռքբերվեին սեփական միջոցների հաշվին՝ 11.2 հազ. ԱՄՆ դոլարի սահմաններում: Սակայն փաթեթում առկա է միայն վարկային միջոցների հաշվին ձեռքբերված սարքի հիմնավորող փաստաթղթերը, և ընկերության կողմից սեփական ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

«Նոյ 89» ՍՊԸ-ի նոր խմբագրությամբ կանոնադրությունը գրանցվել է 26.07.1999թ., ըստ որի ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 92,180.0 հազ. դրամ, և ամբողջ գումարը վճարված է: Սակայն, ըստ 2000թ. հաշվեկշռի, «Նոյ 89» ՍՊԸ կանոնադրական կապիտալ ընդհանրապես չունի:

Վարկային պայմանագրում նշվել է, որ ընկերությունը գրավ է դնում իր հիմնական միջոցները, որոնց արժեքը և ցանկը բացակայում են, իսկ հաշվեկշռի տվյալներով հիմնական միջոցների արժեքը կազմել է ընդամենը 6,210.0 հազ. դրամ կամ 11.2 հազ ԱՄՆ դոլար: Վերոհիշյալ վարկի հայտը հաստատվել է ՀԲ-ի կողմից:

Վարկը պահանջի իրավունքի զիջման պայմանագրով անցել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, և 2004թ. ապրիլի 1-ի դրությամբ ժամկետանց ընդհանուր պարտքը կազմել է 27,197.0 ԱՄՆ դոլար:

2. «Կրեդիտ-Սերվիս բանկ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2000թ. կնքված վարկային պայմանագրով «Տավուշի պահածոների գործարան» ԲԲԸ-ին տրամադրվել է 90,000.0 ԱՄՆ դոլար վարկ, երկու տարի ժամկետով, 12 տոկոսադրույքով, որով փոխհատուցվել է գործարանի կողմից կատարված մթերումների և շրջանառու միջոցների գնումները: Սակայն, ըստ ներկայացված 01.07.2000թ. հաշվեկշռի, գործարանն ունեցել է 56,960.0 հազ. դրամի վարկային պարտավորություն:

Ըստ ներկայացված փաստաթղթերի, պայմանագրերով և գնման ակտերով մեկ ֆիզիկական անձից գնվել է 71 տոննա մոշ, մյուսից՝ 65 տոննա հոն, երրորդից՝ 65 տոննա մասուր և այլն:

Բանկը հայցով դիմել է դատարան, որն իր վճռով հաստատել է գործարանի պարտավորությունը 109.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով: ԴԱՀԿ-ի կողմից գործարանն աճուրդով վաճառվելուց հետո ընկերության պարտքի մնացորդը բանկի նկատմամբ կազմել է 91,028.0 ԱՄՆ դոլար:

3. Նույն բանկը «Քարախաչ» ՍՊԸ-ին 50,000.0 ԱՄՆ դոլար վարկը տրամադրել է 01.12.2000թ.-ին, 4 տարի ժամկետով, 12 տոկոսադրույքով՝ պանրագործության համար: Վարկային միջոցների հաշվին պետք է գնվեր 50 գլուխ կով՝ 25,000.0 ԱՄՆ դոլարի սահմաններում, կատարվեր կաթի մթերում՝ մոտ 9,495.0 ԱՄՆ դոլարի, և ձեռքբերվեր անասնակեր՝ 15,505.0 ԱՄՆ դոլարի չափով: Սեփական միջոցների հաշվին ձեռնարկությունը մտադիր էր ձեռքբերել պանրի արտադրությանն անհրաժեշտ նյութերի մեկ տարվա պաշար և կատարել ընթացիկ ծախսումներ (աշխատավարձ, տրանսպորտ և այլն): Սակայն, ըստ 01.07.2000թ. ներկայացված հաշվեկշռի, ձեռնարկությունն արդեն իսկ ուներ 1,519.0 հազ. դրամի պարտավորություն՝ աշխատավարձի գծով և 514.0 հազ. դրամ պարտավորություն՝ սոցապահության գծով:

01.04.2004թ. դրությամբ ընկերության պարտքը բանկին կազմել է 51,135.0 ԱՄՆ դոլար և գործը գտնվում է տնտեսական դատարանի վարույթում:

4. «Կրեդիտ-Երևան բանկ» ԲԲԸ-ն «Նանա» ՍՊԸ-ի հետ վարկային պայմանագիրը կնքել է 14.10.1999թ.-ին, 50,000.0 ԱՄՆ դոլարի չափով, 11 տոկոսադրույքով, 5 տարի մարման ժամկետով: Ըստ ներկայացված գործարար ծրագրի, վարկային միջոցներով նախատեսվել էր ձեռքբերել 70 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և անասնակեր, նաև կատարել շինվերանորոգման աշխատանքներ, միաժամանակ սեփական միջոցներով հաշվին գնել շրջանառու միջոցներ՝ 5,000.0 ԱՄՆ դոլարի չափով: Մինչդեռ գործում առկա է միայն վարկային միջոցներով կատարված գնումները հիմնավորող փաստաթղթերը և պարզ չէ, թե ընկերությունը սեփական միջոցներից ներդրում կատարել է, թե՛ ոչ: Նշված ՍՊԸ-ի 70,893.0 ԱՄՆ դոլարի պարտքը (39,197.0 ԱՄՆ դոլար վարկի գումար և 31,696.0 ԱՄՆ դոլար որպես տոկոս) 18.11.2003թ. պահանջի իրավունքի զիջման պայմանագրով, անցել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:

Մաս Գ - Գյուղ. հաստատությունների ուժեղացումը

- 1. Գյուղատնտեսության Հետազոտության Խորհրդին ապահովել անհրաժեշտ սարքավորումներով,***
- 2. Գյուղատնտեսական բարձրագույն կրթությունն ուժեղացնել՝ ուսուցման համար անհրաժեշտ նյութերի ապահովմամբ, գրադարանի բարելավմամբ, համակարգչային ցանցի ստեղծմամբ, և մատչելի դարձնել միջազգային տեղեկատվության տեխնիկական միջոցներից օգտվելու հնարավորությունը,***
- 3. Գյուղատնտեսական ծառայություններն ուժեղացնել՝ Գյուղատնտեսական Աջակցության կենտրոնների ստեղծմամբ, ներառյալ տրանսպորտային և***

հաղորդակցության միջոցները, ինչպես նաև՝ դրանք ապահովել ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ նյութերով:

Ծրագրի կառավարման խորհրդի 1999-2000թթ. համապատասխան որոշումներով Ծրագրի շրջանակներում հաստատվել են թվով 42 գիտահետազոտական ծրագրեր, որոնք հիմնականում ավարտվել են 2002 թվականին: Դրանք, ըստ ագրարային գիտության ճյուղերի, տեղաբաշխվել են հետևյալ կերպ՝

1. Խաղողագործություն, պտղագործություն՝ 6 ծրագիր,
2. Երկրագործություն՝ 7,
3. Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսեր՝ 3,
4. Անասնաբուծություն, անասնաբուժություն և կերարտադրություն՝ 9,
5. Վերամշակում՝ 2,
6. Ագրարային տնտեսագիտություն՝ 5,
7. Բուսաբուծություն, սելեկցիա՝ 5,
8. Բույսերի պաշտպանություն՝ 2,
9. Մեքենայացում՝ 3 ծրագիր:

Իրականացված գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա 9 ծրագրի շրջանակներում գրանցվել է 29 հեղինակային իրավունք:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 05.11.2001թ. թիվ 261 հրամանով հաստատվել է գիտահետազոտական թեմաները գրախոսող անկախ փորձագետների կազմը, որը բաղկացած է 76 գիտնականներից, նրանցից 22-ը հանդիսանում են ծրագրերի գլխավոր հետազոտողներ: Ֆինանսավորված 42 գիտահետազոտական ծրագրերից 18-ը (42.9%) գնահատվել են բարձր տնտեսական արդյունավետությամբ, սակայն հետագայում գյուղատնտեսությունում դրանք լայն կիրառություն չեն ստացել:

Օրինակ, գիտահետազոտական ծրագրով ստեղծված «Նաիրի-68» աշնանացան ցորենի սորտը ներդրվել է հինգ ֆերմերային տնտեսությունում, որոնցում միջին բերքատվությունը հեկտարից կազմել է 35-45 ցենտներ, սակայն այն կիրառություն չի ստացել (մանրամասն արտացոլված է հավելված 3-ում):

«Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ» (այսուհետ՝ ԳԱՄԿ) ենթաբաղադրիչի նպատակն է՝ ագրոպարենային համակարգի սուբյեկտներին մատուցել մասնագիտական խորհրդատվություն, գիտական, տեղեկատվական, մարքետինգային ծառայություններ:

Ծրագրի շրջանակներում ստեղծվել են մարզային աջակցության տասը կենտրոններ:

ԳԱՄԿ-երի հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ ԳԱՄԿ-երն իրենց կատարած խորհրդատվություններում, սեմինարներում, փորձացուցադրական աշխատանքներում ոչ բոլոր դեպքերում են ընդգրկել Ծրագրով ֆինանսավորված գիտական թեմաների ներդրման և լուսաբանման գործը, մասնավորապես՝ հայեցակարգային և տեսական թեմաների ուղղությամբ:

2004թ.-ի հունվարի 1-ից ԳԱՄԿ-երը անցել են 10% ինքնաֆինանսավորման: Չնայած ԳԱՄԿ-երը սկսել են իրականացնել վճարովի ծառայություններ՝ ագրոպարենային համակարգի տնտեսավարող սուբյեկտների համար, այդ միջոցները բավարար չեն դրանց

լիարժեք գործունեության ապահովմանը, և դեռևս որոշված չեն դրանց հետագա ֆինանսավորման աղբյուրները:

Արձանագրվել են նաև միջոցների աննպատակ օգտագործման փաստեր: Այսպես.

- Բույսերի պաշտպանության կենտրոնի Ստեփանավանի կայանի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային աշխատանքների համար «Հայարդնախագիծ» ՓԲԸ-ին և ՀՀ նախագծերի փորձաքննություն ՊՓԲԸ-ին 2003թ. օգոստոսին վճարվել է համապատասխանաբար՝ 1,592.0 հազ. դրամ և 120.0 հազ. դրամ, սակայն 01.07.2004թ. դրությամբ այդ օբյեկտում որևէ շինարարական աշխատանք չի կատարվել: Բանջարաբուստանային տիպային շուկայի նախագծման համար «Հայարդնախագիծ» ՓԲԸ-ին 2003թ. օգոստոսին վճարվել է 600.0 հազ. դրամ, սակայն այդ օբյեկտի գծով ևս չինարարական աշխատանքներ չեն իրականացվել:
- «Ագրոգիտարտ» ՊՓԲԸ Ջարթոնքի մասնաճյուղի գիտափորձարարական, ուսումնարտադրական արտադրամասի շինարարության նախագծի կազմման համար «ՕԳԱ» ՍՊԸ-ին 03.01.2002թ. թիվ 07-01 պայմանագրով վճարվել է 1,800.0 ԱՄՆ դոլար, սակայն Ծրագրի կառավարման խորհրդի 2002թ-ի հուլիսի 15-ի թիվ 35 որոշման համապատասխան, նշված արտադրամասի շինարարությունը տեղափոխվել է բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի Դարակերտի տարածք, և 08.04.2002թ. (երեք ամիս անց) «ՕԳԱ» ՍՊԸ-ին նոր տարածքում նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար վճարվել է ևս 950.0 ԱՄՆ դոլար:

Մաս Գ - ԾԻԳ-ի խթանումը

ԾԻԳ-ի ֆինանսական կառավարումը և այլ հնարավորությունները խթանել խորհրդատվական ծառայությունների, սարքավորումների, մեքենաների և աշխատակազմի ուսուցման միջոցով, որը կօգնի Ծրագրի իրականացման ընթացքը վերանայելու հարցում:

01.07.2004թ. դրությամբ ԾԻԳ-ի ծախսերն ամբողջ Ծրագրով արտացոլված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 7
հազ. ԱՄՆ դոլար

	Ամբողջ Ծրագրով նախատեսված գումարները			Ծրագրի սկզբից կատարված աշխատանքները			Ծրագրի սկզբից կատարված փաստացի վճարումները		
	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
ԳԲԱԾԻԳ, ընդամենը, այդ թվում՝	766.95	766.95	0.00	859.63	859.63	0.00	859.51	859.51	0.00
Աշխատանքներ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Ապրանքներ	80.87	80.87	0.00	81.20	81.20	0.0	81.07	81.07	0.00

Խորհրդ. ծառ. և ուսուցում, այդ թվում՝	509.74	509.74	0.00	580.13	580.12	0.00	580.12	580.13	0.00
-ուսուցում և տեխ. աջակցություն	41.22	41.22	0.00	37.75	37.75	0.00	37.75	37.75	0.00
- աշխատավարձեր և հատկացումներ	468.52	468.52	0.00	542.38	542.38	0.00	542.38	542.38	0.00
Այլ գործառնական ծախսեր	176.34	176.34	0.00	198.30	198.31	0.00	198.32	198.32	0.00

Ինչպես երևում է աղյուսակից, նախատեսված 766.95 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց կատարված վճարումները 30.06.2004թ. դրությամբ կազմել են 859.51 հազ. ԱՄՆ դոլար (կամ նախատեսվածից 92.56 հազ. ԱՄՆ դոլարով ավելի): Գերաձախսն առաջացել է «աշխատավարձեր և այլ հատկացումներ» հոդվածով՝ 73.86 հազ. ԱՄՆ դոլարով, «այլ գործառնական ծախսեր»՝ 21.97 հազ. ԱՄՆ դոլարով:

Նշված գերաձախսերն առաջացել են այն պատճառով, որ Համաձայնագրում կատարված փոփոխությունների արդյունքում Ծրագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 30.06.2004թ., իսկ գումարներ չեն նախատեսվել:

5. Օրենսդրական նորմատիվ կանոնակարգման

խախտումների վերաբերյալ

- ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված 2003թ. Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությամբ նախատեսված գումարները չեն համընկնում ՀՀ 2003թ. պետական բյուջեով նախատեսված գումարներին (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8
հազ. ԱՄՆ դոլար

	ՀՀ 2003թ. պետ. բյուջեով նախատեսված գումարը	2003թ. նախատեսված գումարը ԾԻԳ-ի հաշվետվությամբ	Տարբերությունը
1	2	3	4=3-2
Վարկի հաշվին	1,194.80	1,801.90	607.10
ՀՀ բյուջեի հաշվին	157.04	157.04	0.0
Ընդամենը	1,351.84	1,958.94	607.10

Նշված տարբերությունը ԾԻԳ-ի կողմից բացատրվում է այն բանով, որ վերջինս հաշվետվության «նախատեսված ծախսեր» սյունակում ավելացրել է փաստացի ձեռքբերված պարարտանյութերի գումարը:

- ՀՀ կառավարության 13.05.2004թ. թիվ 745-Ա որոշմամբ ՀՀ 2004թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 345.0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ է տրամադրվել ՀՀ գյուղատնտեսության

նախարարությանը՝ նշված գումարը Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի իրականացման համար ՄՁԸ կողմից ՀՀ-ին տրամադրվելիք 1.2 մլն SDR լրացուցիչ վարկի միջոցներից ՀՀ պետական բյուջեում վերականգնելու պայմանով, մինչդեռ Համաձայնագրի փոփոխությունը՝ լրացուցիչ վարկ տրամադրելու վերաբերյալ, ՀՀ կառավարության և ՀԲ-ի կողմից ստորագրվել է 2004թ. հունիսի 14-ին կամ հիշյալ որոշումից մեկ ամիս անց, և 01.07.2004թ. դրությամբ վավերացված չէր օրենքով սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. 2001թ.-ին Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են 69.8%-ով, 2002թ-ին՝ 30.9%-ով, 2003թ-ին՝ 126.6%-ով, և 2004թ-ի առաջին կիսամյակում՝ 87.9%-ով: Ծրագրով նախատեսված 4,875.0 հազ. ԱՄՆ դոլարի ՀՀ կառավարության մասնաբաժնից 01.07.2004թ. դրությամբ Ծրագրի նպատակների համար ծախսվել է 1,258.9 հազ. ԱՄՆ դոլար, իսկ մինչև Ծրագրի սկսելը և ԾԻԳ-ի կազմավորվելը, «ՏԱՄԻՍ» (TACIS) ծրագրի շրջանակներում Հայգյուղփոխօգնության բանկին (այժմյան՝ ACBA բանկ) տրամադրված 2,000.0 հազ. ԱՄՆ դոլարը հետագայում դիտարկվել է որպես «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասնաբաժին, սակայն նշված գումարը հաշվետվություններով արտացոլված չէ: Մնացած 1,616.1 հազ. ԱՄՆ դոլարը չտեղաբաշխված գումար է, որը գոյացել է հիմնականում Համաձայնագրի փոփոխություններով կատեգորիաների միջև կատարված վերաբաշխումների արդյունքում՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասնաբաժնի իջեցման հետևանքով:
2. Ծրագրի շրջանակներում ստեղծվել է Ագրոբիզնեսի զարգացման կենտրոն, որը ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1931-Ն որոշմամբ սեփականաշնորհվել է, սակայն անորոշ է Ծրագրի միջոցներից նրա գործունեության համար ձեռքբերված գույքի ճակատագիրը (համակարգչային տեխնիկա՝ 12,030.0 ԱՄՆ դոլար, լաբորատոր և այլ սարքավորումներ՝ 3,172.0 ԱՄՆ դոլար, կահույք՝ 8,540.0 ԱՄՆ դոլար):
3. Ծրագրի շրջանակներում «Վարկավորում» բաղադրիչով բանկերին տրամադրվել է մոտ 7.5 մլն ԱՄՆ դոլար՝ ՀՀ մարզերում գյուղացիական վարկեր տրամադրելու նպատակով, սակայն վարկավորումն ըստ մարզերի համաչափորեն չի իրականացվել: Այսպես, եթե Արմավիրի մարզին տրամադրվել է վարկերի 35.6%-ը, ապա Վայոց ձորի մարզին՝ 0.4%-ը, Շիրակի մարզին՝ 1.8%-ը, Տավուշի մարզին՝ 2.3%-ը:
4. Կարճաժամկետ վարկեր են ստացել հանրապետության գյուղերի 49.5%-ի ներկայացուցիչները, ընդ որում, եթե Արմավիրի և Կոտայքի մարզերի գյուղերը 100%-ով ընդգրվել են վարկավորման գործընթացում, ապա Շիրակի, Վայոց ձորի և

Արագածոտնի մարզերի գյուղերը՝ համապատասխանաբար՝ 14.1, 17.3 և 23.7%-ով: Վարկեր են ստացել ընդամենը 13442 գյուղացի, կամ գյուղական անհատական տնտեսությունների 5.3%-ը, ընդ որում՝ թվով 1345 վարկ տրամադրվել է նույն մարդկանց՝ կրկնակի և եռակի:

5. Ծրագրի շրջանակներում մասնակից 8 բանկերից 5-ը գտնվում էին անվճարունակության կամ լուծարային գործընթացում, և 01.04.2004թ. դրությամբ ծրագրի շրջանակներում գործում էր 3 բանկ.

«Արդշինհիմնատրանկ» - 600,000.0 ԱՄՆ դոլար,

«Հայգյուղփոխբանկ» - 1,850,000.0 ԱՄՆ դոլար,

«Կոնվերսբանկ» - 1,200,000.0 ԱՄՆ դոլար,

Ընդամենը - 3,650,000.0 ԱՄՆ դոլար կամ հատկացված գումարի 49%-ը:

Լուծարվող 5 բանկերից 2-ի հետ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից չեն կնքվել ցեսիայի պայմանագրեր՝ Հայագրոբբանկի մասով՝ 652,442.0 ԱՄՆ դոլար, Կրեդիտ-Սերվիս բանկի մասով՝ 453,386.0 ԱՄՆ դոլար:

Լուծարվող 5 բանկերի պարտքը ՀՀ կառավարությանը 01.04.2004թ. դրությամբ կազմել է 2,229,714.0 ԱՄՆ դոլար, որի մարման հավանականությունը խիստ ցածր է:

Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ բանկերը վարկեր են ստացել նաև «Ձեռնարկությունների զարգացում» և «Լինսի» հիմնադրամի վարկային ծրագրերով՝ մոտ 19.0 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Ցածր է նաև ցեսիայի պայմանագրերով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն անցած վարկերի վերադարձվելիությունը:

01.04.2004թ. դրությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ցեսիայի պայմանագրերով թվով 228 ենթավարկառուներից չի գանձվել 817.7 հազ. ԱՄՆ դոլարի ժամկետանց վարկի մայր գումար և 262.0 հազ. ԱՄՆ դոլարի հաշվարկված տոկոս և տույժ:

Խնդրահարույց (չվերադարձված) որոշ ենթավարկերի վարկային փաթեթներում ի սկզբանե առկա էին պարզաբանման կարիք ունեցող տվյալներ:

6. «Գյուղ. հաստատությունների ուժեղացում» բաղադրիչով Ծրագրի շրջանակներում ֆինանսավորված 42 գիտահետազոտական ծրագրերից 18-ում (42.9%) գրանցվել է բարձր տնտեսական արդյունավետություն, սակայն հետագայում գյուղարտադրությունում լայն կիրառելիություն չեն ստացել:
7. Լիարժեք չի կատարվել գիտահետազոտական աշխատանքների և նոր տեխնոլոգիաների լուսաբանման, դրանք անմիջականորեն ֆերմերներին և վերամշակողներին մատչելի դարձնելու գործընթացը: Ագրարային գիտության և նոր տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվական փաստաթուղթը գրքի տեսքով ամփոփվել է միայն 2003թ. տարեվերջին և 01.07.2004թ. դրությամբ դեռևս չի տպագրվել այն դեպքում, երբ այդ թեմաների աշխատանքներն ավարտվել էին 2002թ-ին:
8. Մի շարք դեպքերում պատվիրվել և վճարվել են նախագծանախահաշվային աշխատանքներ, սակայն հետագայում շինարարական աշխատանքներ չեն

իրականացվել, այսինքն՝ գումարները ծախսվել են աննպատակ (Ստեփանավանի բույսերի պաշտպանության կենտրոնի շենք, տիպային շուկայի շենք, «Ագրոգիտարդ» ՊՓԲԸ-ի Ջարթոնքի մասնաճյուղի արտադրամասի շենք):

9. Ծրագրի սկզբից մինչև 01.07.2004թ. ԾԻԳ-ի «աշխատավարձ և այլ հատկացումներ» հոդվածով տեղ է գտել գերաժախս՝ 73.8 հազ. ԱՄՆ դոլարի չափով, իսկ «այլ գործառնական ծախսեր» հոդվածով՝ 21.9 հազ. ԱՄՆ դոլարի չափով: Նշված գերաժախսերն առաջացել են այն պատճառով, որ Համաձայնագրում կատարված փոփոխությունների արդյունքում Ծրագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 30.06.2004թ., իսկ գումարներ չեն նախատեսվել:

Վերահսկողության ընթացքում վերահսկող հանձնաժողովի կողմից, ԾԻԳ-ի ղեկավարության մասնակցությամբ կազմվել են թվով 15 արձանագրություն:

Սույն հաշվետվության նախագծին ԾԻԳ-ի ղեկավարը ծանոթացել է 23.08.2004թ., առարկություններ և դիտողություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը՝

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր վարկային ծրագրերով ՀՀ առևտրային բանկերի միջոցով տրամադրված վարկերի զգալի մասը չի վերադարձվել, ուստի օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ կնքվելիք վարկային կամ դրամաշնորհային պայմանագրերում ենթավարկերի տրամադրման բաղադրիչի առկայության դեպքում նշված բաղադրիչի իրականացումը, հսկողությունը և պատասխանատվությունը դնել ՀՀ կենտրոնական բանկի վրա:
2. Ձեռնարկել միջոցառումներ՝ Ծրագրով վարկային միջոցներ ստացած, սակայն լուծարային գործընթացում գտնվող «Հայագրոբանկ», «Կրեդիտ-Երևան բանկ» և «Կրեդիտ-սերվիս բանկ» ընկերություններից 2.2 մլն ԱՄՆ դոլարի գումարների, ինչպես նաև՝ ցեսիայի պայմանագրով առևտրային բանկերից պահանջի իրավունքը ստացած ավելի քան 1.0 մլն ԱՄՆ դոլարի՝ Ծրագրով տրամադրված վարկերի վերադարձվելիության ուղղությամբ:
3. Անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել Ծրագրի շրջանակներում դեռևս գործող թվով 3 առևտրային բանկերին տրամադրված 3.6 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցների օգտագործման նկատմամբ, միջոցներ ձեռնարկել հնարավոր չվերադարձվելիության ռիսկի բացառման ուղղությամբ:
4. «ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և վերահսկիչ պալատ ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

«Գյուղատնտեսական քարտեփոխումների աջակցություն» ծրագրի կառավարման խորհրդին.

1. Ձեռնարկել միջոցառումներ՝ Ծրագրի շրջանակներում ստեղծված կառույցների գործունեության արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսության ոլորտի հաջողված գիտահետազոտական ծրագրերի և նոր տեխնոլոգիաների լուսաբանման, տեղեկատվության և խորհրդատվության բարելավման, ծառայությունների մատուցման արդյունավետության ուղղությամբ:
2. Օրենքով սահմանված կարգով որոշել սեփականաշնորհված Ագրոբիզնեսի զարգացման կենտրոնի կողմից օգտագործվող վարկային միջոցների հաշվին ձեռքբերված գույքի ճակատագիրը:

Վարկային միջոցների բաշխումը կատեգորիաների միջև

SDR

12.03.1998թ. Համաձայնագրով			03.03.1999թ. փոփոխությունից հետո			14.01.2003թ. փոփոխությունից հետո			28.07.2003թ. փոփոխությունից հետո		
Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը
Աշխատանքներ	583,000.00	100% արտասահմանյան ծախսեր, 90% տեղական ծախսեր	Աշխատանքներ	583,000.00	100% արտասահմանյան ծախսեր, 90% տեղական ծախսեր	Աշխատանքներ	405,000.00	100% արտասահմանյան ծախսեր, 90% տեղական ծախսեր	Աշխատանքներ	430,000.00	100% արտասահմանյան ծախսեր, 90% տեղական ծախսեր
Ենթավարկեր	3,580,000.00	Մասնակից ֆինանսական Հաստատությունների կողմից բաշխված գումարների 100%	Ենթավարկեր	3,580,000.00	Մասնակից ֆինանսական Հաստատությունների կողմից բաշխված գումարների 100%	Ենթավարկեր	6,440,000.00	Մասնակից ֆինանսական Հաստատությունների կողմից բաշխված գումարների 100%	Ենթավարկեր	5,150,000.00	Մասնակից ֆինանսական Հաստատությունների կողմից բաշխված գումարների 100%
Ապրանքներ	1,358,000.00	100% արտասահմանյան ծախսեր, 100% տեղական ծախսեր (գինը գործարանից) և 90% տեղական ծախսեր՝ տեղական ապրանքների ձեռքբերման համար	Ապրանքներ	1,358,000.00	100% արտասահմանյան ծախսեր, 100% տեղական ծախսեր (գինը գործարանից) և 90% տեղական ծախսեր՝ տեղական ապրանքների ձեռքբերման համար	Ապրանքներ	1,410,000.00	100% արտասահմանյան ծախսեր, 100% տեղական ծախսեր (գինը գործարանից) և 90% տեղական ծախսեր՝ տեղական ապրանքների ձեռքբերման համար	Ապրանքներ	2,575,000.00	100% արտասահմանյան ծախսեր, 100% տեղական ծախսեր (գինը գործարանից) և 90% տեղական ծախսեր՝ տեղական ապրանքների ձեռքբերման համար

12.03.1998թ. Համաձայնագրով			03.03.1999թ. փոփոխությունից հետո			14.01.2003թ. փոփոխությունից հետո			28.07.2003թ. փոփոխությունից հետո		
Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում	1,535,000.00	100%	Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում (բացի ԳՀԽ-ի հետագոտական պայմանագրերից)	1,535,000.00	100%	Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում (բացի ԳՀԽ-ի հետագոտական պայմանագրերից)	1,000,000.00	100%	Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում (բացի ԳՀԽ-ի հետագոտական պայմանագրերից)	1,140,000.00	100%
			Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում ԳՀԽ-ի հետագոտական պայմանագրերի համար՝	590,000.00	<ul style="list-style-type: none"> ▪ 75%-ը՝ մինչև 1999թ-ի հունիսի 30, ▪ 60%-ը՝ մինչև 2000թ-ի հունիսի 30, ▪ 40%՝ մինչև 2001թ-ի հունիսի 30, ▪ 20%՝ դրանից հետո 	Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում ԳՀԽ-ի հետագոտական պայմանագրերի համար՝	360,000.00	<ul style="list-style-type: none"> ▪ 75%-ը՝ մինչև 1999թ-ի հունիսի 30, ▪ 60%-ը՝ մինչև 2000թ-ի հունիսի 30, ▪ 40%՝ դրանից հետո 	Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում ԳՀԽ-ի հետագոտական պայմանագրերի համար՝	375,000.00	<ul style="list-style-type: none"> ▪ 75%-ը՝ մինչև 1999թ-ի հունիսի 30, ▪ 60%-ը՝ մինչև 2000թ-ի հունիսի 30, ▪ 40%՝ դրանից հետո

12.03.1998թ. Համաձայնագրով			03.03.1999թ. փոփոխությունից հետո			14.01.2003թ. փոփոխությունից հետո			28.07.2003թ. փոփոխությունից հետո		
Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը
Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ընթացիկ ծախսերը	1,587,000.00	Ծրագրից առաջացած ծախսերի՝ <ul style="list-style-type: none"> 75%-ը՝ մինչև 1999թ-ի հունիսի 30, 60%-ը՝ մինչև 2000թ-ի հունիսի 30, 40%՝ մինչև 2001թ-ի հունիսի 30, 20%՝ դրանից հետո 	Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ընթացիկ ծախսերը	997,000.00	Ծրագրից առաջացած ծախսերի՝ <ul style="list-style-type: none"> 75%-ը՝ մինչև 1999թ-ի հունիսի 30, 60%-ը՝ մինչև 2000թ-ի հունիսի 30, 40%՝ մինչև 2001թ-ի հունիսի 30, 20%՝ դրանից հետո 	Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ընթացիկ ծախսերը	250,000.00	Ծրագրից առաջացած ծախսերի՝ <ul style="list-style-type: none"> 75%-ը՝ մինչև 1999թ-ի հունիսի 30, 60%-ը՝ մինչև 2000թ-ի հունիսի 30, 40%՝ դրանից հետո 	Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ընթացիկ ծախսերը	300,000.00	Ծրագրից առաջացած ծախսերի՝ <ul style="list-style-type: none"> 75%-ը՝ մինչև 1999թ-ի հունիսի 30, 60%-ը՝ մինչև 2000թ-ի հունիսի 30, 40%՝ դրանից հետո
ԾԻԳ-ի գործառնական ծախսերը	44,000.00	100%	ԾԻԳ-ի գործառնական ծախսերը	44,000.00	100%	ԾԻԳ-ի գործառնական ծախսերը	115,000.00	100%	ԾԻԳ-ի գործառնական ծախսերը	125,000.00	100%
Ծրագրի նախապատրաստման աշխատանքների համար նախատեսված կանխավճարի փոխհատուցում	1,101,000.00	Համաձայնագրի Բաժին 2.02 (գ)-ին համաձայն նշված գումարը	Ծրագրի նախապատրաստման աշխատանքների համար նախատեսված կանխավճարի փոխհատուցում	1,101,000.00	Համաձայնագրի Բաժին 2.02 (գ)-ին համաձայն նշված գումարը	Ծրագրի նախապատրաստման աշխատանքների համար նախատեսված կանխավճարի փոխհատուցում	583,000.00	Համաձայնագրի Բաժին 2.02 (գ)-ին համաձայն նշված գումարը	Ծրագրի նախապատրաստման աշխատանքների համար նախատեսված կանխավճարի փոխհատուցում	583,000.00	Համաձայնագրի Բաժին 2.02 (գ)-ին համաձայն նշված գումարը
12.03.1998թ. Համաձայնագրով			03.03.1999թ. փոփոխությունից հետո			14.01.2003թ. փոփոխությունից հետո			28.07.2003թ. փոփոխությունից հետո		

Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը	Կատեգորիաները	Վարկային միջոցներից տրամադրվող գումարը	Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսաչափը
Չտեղաբաշխված գումարներ (չնախատեսված ծախսերի համար)	912,000.00		Չտեղաբաշխված գումարներ (չնախատեսված ծախսերի համար)	912,000.00		Չտեղաբաշխված գումարներ (չնախատեսված ծախսերի համար)	137,000.00		Չտեղաբաշխված գումարներ (չնախատեսված ծախսերի համար)	22,000.00	
ԸՆԴԱՄԵՆԸ	10,700,000.00		ԸՆԴԱՄԵՆԸ	10,700,000.00		ԸՆԴԱՄԵՆԸ	10,700,000.00		ԸՆԴԱՄԵՆԸ	10,700,000.00	

Հավելված 2

Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ

հազ. ԱՄՆ դոլար

Կատեգորիաներ	Հաշվետու տարվա համար նախատեսված ծախսերը			Հաշվետու տարում կատարված աշխատանքները			Հաշվետու տարում կատարված փաստացի վճարումները			Կատարված աշխատանքները նախատեսված գումարների նկատմամբ			Փաստացի վճարումները նախատեսված գումարների նկատմամբ			Փաստացի վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ		
	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11=5/2	12=6/3	13=7/4	14=8/2	15=9/3	16=10/4	17=8/5	18=9/6	19=10/7
2001թ.																		
Ընդամենը ծրագրով, այդ թվում՝	#####	#####	296.0	#####	#####	326.3	#####	#####	160.6	69.8%	64.7%	#####	71.4%	73.6%	54.2%	#####	#####	49.2%
Աշխատանքներ	95.0	85.5	9.5	95.4	85.8	9.5	94.6	94.6	0.0	#####	#####	#####	99.6%	#####	0.0%	99.2%	#####	0.0%
Ապրանքներ	#####	#####	0.0	633.3	633.3	0.0	622.4	622.4	0.0	60.4%	60.4%	#####	59.3%	59.3%	#####	98.3%	98.3%	#####
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում (բացի ԳՀԽ-ի հետազոտական պայմանագրերից)	491.7	407.3	84.4	358.0	270.6	87.4	310.0	270.6	39.4	72.8%	66.4%	#####	63.0%	66.4%	46.7%	86.6%	#####	45.1%
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում ԳՀԽ-ի հետազոտական պայմանագրերի համար	267.0	153.4	113.6	257.1	126.4	130.7	179.0	90.1	88.9	96.3%	82.4%	#####	67.0%	58.7%	78.2%	69.6%	71.3%	68.0%

Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ծախսեր	140.0	51.5	88.5	147.9	49.3	98.7	144.3	112.0	32.3	#####	95.7%	#####	#####	#####	36.5%	97.5%	#####	32.7%	
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	43.0	43.0	0.0	36.4	36.4	0.0	38.0	38.0	0.0	84.6%	84.6%		88.3%	88.3%		#####	#####		
Ենթավարկեր	411.5	411.5	0.0	316.1	316.1	0.0	499.2	499.2	0.0	76.8%	76.8%		#####	#####		#####	#####		
Չտեղաբաշխված գումարներ	146.6	146.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0%	0.0%		0.0%	0.0%					
2002թ.																			
<i>Ընդամենը ծրագրով, այդ թվում՝</i>	#####	#####	323.0	861.9	546.0	315.9	#####	511.8	593.1	30.9%	22.1%	97.8%	39.6%	20.8%	#####	#####	93.7%	#####	
Աշխատանքներ	87.2	78.5	8.7	85.0	76.5	8.4	105.0	60.9	44.0	97.4%	97.5%	96.6%	#####	77.6%	#####	#####	79.6%	#####	
Ապրանքներ	307.9	307.9	0.0	44.6	44.6	0.0	84.6	84.6	0.0	14.5%	14.5%		27.5%	27.5%	#####	#####	#####	#####	
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում (բացի ԳՀԽ-ի հետազոտական պայմանագրերից)	471.7	379.2	92.5	391.1	301.5	89.6	474.7	301.5	173.2	82.9%	79.5%	96.9%	#####	79.5%	#####	#####	#####	#####	
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում ԳՀԽ-ի հետազոտական պայմանագրերի համար	185.0	101.0	84.0	143.4	59.4	84.0	245.2	78.5	166.7	77.5%	58.8%	#####	#####	77.7%	#####	#####	#####	#####	
Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ծախսեր	173.4	35.7	137.8	171.4	37.5	133.9	170.5	-38.6	209.1	98.8%	#####	97.2%	98.3%	#####	#####	99.5%	#####	#####	
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	34.4	34.4	0.0	26.5	26.5	0.0	24.9	24.9	0.0	77.1%	77.1%		72.4%	72.4%		94.0%	94.0%		
Ենթավարկեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0										
Չտեղաբաշխված գումարներ	#####	#####	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0%	0.0%		0.0%	0.0%					
2003թ.																			
<i>Ընդամենը ծրագրով, այդ թվում՝</i>	#####	#####	157.0	#####	#####	39.4	#####	#####	130.9	#####	#####	25.1%	#####	#####	83.4%	#####	94.8%	#####	
Աշխատանքներ	84.0	75.6	8.4	91.8	82.6	9.1	89.4	82.8	6.6	#####	#####	#####	#####	#####	78.5%	97.4%	#####	72.2%	
Ապրանքներ	418.0	414.8	3.2	976.5	972.5	4.0	969.3	965.3	4.0	#####	#####	#####	#####	#####	#####	99.3%	99.3%	#####	
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում (բացի ԳՀԽ-ի հետազոտական պայմանագրերից)	438.4	438.3	0.2	399.6	399.4	0.2	408.8	396.9	12.0	91.1%	91.1%	#####	93.2%	90.5%	#####	#####	99.4%	#####	
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում ԳՀԽ-ի հետազոտական պայմանագրերի համար	83.8	98.9	-15.1	62.6	81.3	-18.7	75.7	70.1	5.6	74.7%	82.2%	#####	90.3%	70.9%	-37.1%	#####	86.2%	-30.0%	
Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ծախսեր	181.2	120.6	60.6	154.2	109.5	44.7	146.6	43.9	102.7	85.1%	90.8%	73.7%	80.9%	36.4%	#####	95.1%	40.1%	#####	
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	32.3	32.3	0.0	26.4	26.4	0.0	26.4	26.4	0.0	81.8%	81.8%	#####	81.8%	81.8%		#####	#####		
Ենթավարկեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0										
Չտեղաբաշխված գումարներ	114.1	14.3	99.8	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%				
2004թ. առաջին կիսամյակ																			
<i>Ընդամենը ծրագրով, այդ թվում՝</i>	#####	#####	75.0	#####	#####	54.0	#####	#####	60.6	87.9%	88.9%	71.9%	85.2%	85.5%	80.8%	96.9%	96.2%	#####	
Աշխատանքներ	72.0	64.8	7.2	0.7	0.6	0.1	3.3	0.6	2.7	1.0%	0.9%	2.0%	4.5%	0.9%	37.5%	#####	94.8%	#####	
Ապրանքներ	771.6	769.9	1.7	801.1	798.9	2.2	768.3	766.2	2.2	#####	#####	#####	99.6%	99.5%	#####	95.9%	95.9%	#####	

Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում (բացի Գ-ՀԽ-ի հետազոտական պայմանագրերից)	199.8	199.8	0.0	193.9	193.9	0.0	188.5	188.5	0.0	97.1%	97.1%		94.4%	94.4%		97.2%	97.2%	
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում Գ-ՀԽ-ի հետազոտական պայմանագրերի համար	32.0	22.4	9.6	29.6	21.6	8.0	28.8	16.7	12.1	92.5%	96.2%	83.8%	90.1%	74.6%	#####	97.4%	77.5%	#####
Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ծախսեր	92.6	40.1	52.5	76.9	33.3	43.6	79.0	35.4	43.6	83.0%	83.1%	83.0%	85.4%	88.4%	83.0%	#####	#####	#####
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	21.7	21.7	0.0	18.7	18.7	0.0	18.8	18.8	0.0	86.6%	86.6%		86.6%	86.6%		#####	#####	
Ենթավարկեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0									
Չտեղաբաշխված գումարներ	85.4	81.4	4.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%			

Ծրագրի սկզբից մինչև 01.07.2004թ.

Կատեգորիաներ	Ամբողջ ծրագրով նախատեսված ծախսերը			Ամբողջ ծրագրով կատարված աշխատանքները			Ամբողջ ծրագրով կատարված փաստացի վճարումները			Կատարված աշխատանքները նախատեսված գումարների նկատմամբ			Փաստացի վճարումները նախատեսված գումարների նկատմամբ			Փաստացի վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ		
	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
Ընդամենը ծրագրով, այդ թվում՝	#####	#####	#####	#####	#####	#####	#####	#####	#####	80.8%	99.3%	25.8%	80.8%	99.3%	25.8%	#####	#####	99.9%
Աշխատանքներ	635.7	571.7	63.9	643.2	578.4	64.7	638.6	574.3	64.3	#####	#####	#####	#####	#####	#####	99.3%	99.3%	99.3%
Ապրանքներ	#####	#####	2.2	#####	#####	6.2	#####	#####	6.2	97.1%	97.0%	#####	97.1%	97.0%	#####	#####	#####	#####
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում (բացի Գ-ՀԽ-ի հետազոտական պայմանագրերից)	#####	#####	363.8	#####	#####	364.0	#####	#####	364.0	#####	#####	#####	#####	#####	#####	99.6%	99.6%	#####
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում Գ-ՀԽ-ի հետազոտական պայմանագրերի համար	863.9	487.1	376.8	908.3	535.4	372.9	914.7	542.0	372.7	#####	#####	99.0%	#####	#####	98.9%	#####	#####	#####
Ծրագրի ներքո հաստատությունների գործառնական ծախսեր	737.0	346.5	390.6	845.9	394.8	451.0	851.7	400.7	451.0	#####	#####	#####	#####	#####	#####	#####	#####	#####
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	183.3	183.3	0.0	205.3	205.3	0.0	205.3	205.3	0.0	#####	#####		#####	#####		#####	#####	
Ենթավարկեր	#####	#####	#####	#####	#####	0.0	#####	#####	0.0	78.8%	#####	0.0%	78.8%	#####	0.0%	#####	#####	
Չտեղաբաշխված գումարներ	#####	280.1	#####	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%			

1. Գիտական թեմաներ

99-101 ծրագրի շրջանակներում ստեղծված «Նաիրի-68» աշնանացան ցորենի սորտը ներդրվել է հինգ ֆերմերային տնտեսություններում, որոնցում միջին բերքատվությունը կազմել է 35-45 ցենտներ՝ հեկտարից, սակայն լայնածավալ կիրառություն չի ստացել:

99-255 ծրագրի շրջանակներում կիրառվող փորձարկումն իրականացվել է մեկ հողատարածքում 1 հեկտարի վրա, «Հուլիս» պոլիմերահանքային միացության կիրառմամբ և արձանագրվել է դրական արդյունք, սակայն հետագա կիրառություն չի ստացել:

99-408 ծրագրի շրջանակներում ցանքաշրջանառության գծով Լոռու մարզի Սպիտակ, Ստեփանավան, Կոտայքի մարզի Գեղաղիբ և Սյունիքի մարզի Մխիթանի հողատարածքներում կատարված փորձարկումները տվել են բարձր տնտեսական արդյունք, սակայն հետագայում կիրառություն չի ստացել:

99-613 ծրագրով ստեղծվել են նոր փոքրաչափ 12 մեքենա-սարքավորումներ՝ գյուղատնտեսական արտադրության տարբեր տեխնոլոգիաների համար, որոնց կիրառումը, ըստ հետազոտողի եզրակացության, կբերի աշխատանքի արտադրողականության 30-40% աճի: Սակայն միջև օրս այդ մեքենաները թե՛ ֆերմերային տնտեսություններում և թե՛ վերամշակող արդյունաբերությունում կիրառություն չեն ստացել:

00-500 ծրագրով, ըստ հետազոտողների հաշվետվության, դաշտային շտամից ԱՕ (Արմենիա-98) վակցինայի ստացումը կնպաստի տարեկան շուրջ 200.0 մլն դրամի տնտեսմանը: Սակայն հանրապետությունում դեռևս լայն կիրառություն չի ստացել:

99-677 ծրագրով հետազոտողի կողմից ստեղծվել են 3 տեսակի սարքավորումների փորձանմուշներ՝ բուսական յուղերի արտադրության համար և հետազոտողի հաշվարկներով նման սարքավորումներով արտադրամասի ստեղծումը երկրորդ տարվանից սկսած կարող է ապահովել տարեկան 112.0 հազ. ԱՄՆ դոլարի եկամուտ: Սակայն այդ սարքավորումների մեծաքանակ արտադրության համար որևէ մեկի կողմից ներդրումներ չեն իրականացվել:

2. Ռազմավարական գիտական թեմաներ

99-606 ծրագիր՝ «Անասնաբուծության վարման և արոտավայրերի համակարգված օգտագործման տեխնոլոգիաների մշակում և ներդրում»,

99-418 ծրագիր՝ «Արարատյան Հարթավայրի աղոտ-ալկալի հողերի մելիորացման նոր տեխնոլոգիայի» մասին,

99-625 ծրագիր՝ «Արմավիրի և Արագածոտնի մարզերի վարելահողերի մելիորատիվ վիճակի բարելավման և գոլորշիացման թուլացման ագրոֆիզիկական միջոցառումների մշակում»,

99-617 ծրագիր՝ «Գյուղացիական միավորումների կազմակերպման հիմունքների մշակում և ներդրում Արարատի և Արմավիրի մարզերում»,

99-767 տնտեսագիտական աշխատություն՝ «ՀՀ գյուղատնտեսության վարման համակարգի մշակումը»,

99-226 աշխատություն՝ «Հայաստանի Հանրապետությունում խաղողագործության և պտղաբուծության վերականգնման և զարգացման հայեցակարգի մշակում»:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Չարգացման Ընկերակցության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Համայնքային գարգացում» ծրագրի իրականացման ընթացքի մասին

Վերահսկողության հիմքը - «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը,
ՀՀ Ազգային ժողովի 03.12.2003թ. Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի
2004 թվականի տարեկան ծրագիրը և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի 04.05.2004թ. թիվ
83 հրամանը:

Վերահսկողության նպատակը - «Համայնքային գարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)
իրականացման ընթացքը:

Վերահսկողության օբյեկտը - «Համայնքային գարգացման ծրագրի ղեկավարման
գրասենյակ» պետական հիմնարկ (տնօրեն՝ Վ. Ավոյան):

Ուսումնասիրության ժամանակահատվածը - 01.01.2001-01.07.2004թթ (1998-1999թթ.
ժամանակահատվածը ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի կողմից ուսումնասիրվել է 1999թ.-ին, 2000թ.
ուսումնասիրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության վերահսկողության
վարչության կողմից, որի արդյունքներով հարուցվել է քրեական գործ, իսկ հետագայում կարճվել
է՝ հանցակազմի բացակայության պատճառով):

1. Ծրագրի նպատակները և վարկի պայմանները

Ծրագրի նպատակներն են՝

- բարելավել Երևանի ջրամատակարարման համակարգը,
- կատարելագործել Երևանի ջրմուղ-կոյուղու ծառայությունների արդյունավետությունը,
կառավարումը, աշխատանքները և մատակարարումը,
- փոխառուի տարածքում ստեղծել ջրմուղ-կոյուղու ծառայությունների ընդհանուր
կառավարման մեջ մասնավոր սեկտորի կայուն ներգրավման հիմնական համակարգ,
- զարգացնել պետական բնակարանային շինարարության քաղաքականությունը՝
կենտրոնանալով բնակարանային շինարարության բնագավառի ընթացիկ
բարեփոխումների հետ կապված ճգնաժամային տնտեսական հարցերի վրա,
- զարգացնել բնակարանային շինարարության ռազմավարություն՝ երկրաշարժից
տուժած գոտու համար:

Ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Փոխառու) և Միջազգային Զարգացման Ընկերակցության (այսուհետ՝ ՄՁԸ) միջև 1998թ. հունիսի 19-ին ստորագրվել է 22.3 մլն SDR (30.0 մլն ԱՄՆ դոլար) գումարով վարկ տրամադրելու վերաբերյալ համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), որը ՀՀ ԱԺ կողմից վավերացվել է 06.07.1998թ.-ին:

Ըստ Համաձայնագրի, Փոխառուն պարտավոր է պարբերաբար մուծել պարտավճար՝ վարկի չառահանված հիմնագումարի դիմաց՝ ՄՁԸ-ի կողմից յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին սահմանվող, բայց ոչ ավելի, քան տարեկան 0.5% տոկոսադրույքով: Վարկի հիմնագումարի առհանումների և չհատուցված պարտքերի դիմաց Փոխառուն պարտավոր է պարբերաբար վճարել սպասարկման վարձ՝ տարեկան 0.75%-ի չափով: Մուծումները պետք է կատարվեն յուրաքանչյուր կիսամյակում՝ հունիսի և դեկտեմբերի 15-ին:

2008 թվականի հունիսի 15-ից փոխառուն պարտավոր է վարկի հիմնագումարը հետ վերադարձնել կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա հունիսի և դեկտեմբերի 15-ին և այն ավարտել 2032թ. դեկտեմբերի 15-ին: Մինչև 2017թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ կատարվելիք մուծումները պետք է կազմեն հիմնագումարի 1.25%-ը, իսկ դրանից հետո՝ 2.5%-ը:

Համաձայնագրով Ծրագրի ավարտը սահմանվել է 2003թ. դեկտեմբերի 31-ը: Սակայն Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) և ՀՀ կառավարության կողմից 28.04.2003թ. կատարված փոփոխությամբ Ծրագրի նոր ավարտ է սահմանվել 2005թ. ապրիլի 30-ը:

Համաձայնագրի իրագործման նպատակով ստեղծվել է «Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ՝ ԾՂԳ), որը ներկայացնում է Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԵՁԿ ՓԲԸ) շահերը և միաժամանակ իրականացնում Օպերատորի նկատմամբ վերահսկողություն:

2. Ծրագրի բաղադրիչները

Ծրագիրն, ըստ Համաձայնագրի, բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Մաս Ա. Անհապաղ ներդրման ծրագիր

Երևանի ընտրված տարածքներում՝

- ցածր և բարձր ճնշման նոր խողովակների տեղադրում, պոմպակայանի վերականգնում, չափիչների տեղադրում,
- բարձր ճնշման բաշխման համակարգի վերականգնում, ցածր ճնշման ցանցի վերակառուցում, բաշխման խողովակների և միացումների վերանորոգում և ջրի պահպանման գործընթացի նախաձեռնում,

Հրագրան գետի երկայնքով ջրի վարարումից պահպանող ամբարտակների կառուցում, ջրարկղերի և քլորացման միջոցների վերակառուցում:

Մաս Բ. Կառավարման պայմանագիր

Բարձրացնել ջրամատակարարման բաշխման համակարգերի և սարքավորումների, ցուցմունքների, վճարումների և եկամուտների հավաքման, ջրմուղ-կոյուղու համակարգի աշխատանքների, բաժանորդների սպասարկման արդյունավետությունը, պահպանել մակերեսային ջրի աղբյուրների ամբողջականությունը, կատարելագործել օգտագործված ջրի համակարգի աշխատանքները, ուժեղացնել ջրմուղ-կոյուղու համակարգերի կառավարումն ու վարչական վերահսկումը:

Մաս Գ. Ընթացիկ ներդրումների ֆոնդ

Ֆոնդը նպատակաուղղել էրևանի ջրամատակարարման և կոյուղու համակարգի վերակառուցմանը:

Խողովակային, պոմպային, չափման (մագիստրալ և փոքր ծավալների) և վերահսկման համակարգերի վերակառուցման նպատակով նյութերի, մասերի, ինչպես նաև՝ այլ բաղադրիչների գնումն ու տեղադրում:

Խմելու ջրի՝ Փոխառուի կողմից ընդունված որակական չափանիշներն ապահովելու համար անհրաժեշտ աշխատանքային գործիքների գնում:

Մաս Դ. Հիմնական ներդրումներ

Երևանի ջրմուղ-կոյուղու համակարգի վերակառուցման և վերականգնման նախագծում, իրագործում և վերահսկում:

Մաս Ե. Բնակարանային շինարարություն

Աջակցություն երկրաշարժից տուժած գոտու բնակարանային շինարարության ռազմավարության զարգացմանը:

Մաս Զ. Տեխնիկական օժանդակություն

Ծրագրի իրականացման ընթացքում ԾՂԳ-ին օժանդակության ապահովում և փորձի տարածում այլ բնագավառներում:

Ծրագրի տեխնիկական և ֆինանսական աուդիտի իրականացում:

ԾՂԳ-ի և ԵՁԿ ՓԲԸ-ի համար պատշաճ ֆինանսական կառավարմանն ու հաշվապահական համակարգի ստեղծմանը, ինչպես նաև՝ տարեկան ֆինանսական հաշիվների ստուգմանն օժանդակելու նպատակով խորհրդատվական ծառայությունների ապահովում:

Ջրային սեկտորի բնագավառում կարգավորող նորմատիվային համակարգի մշակման նպատակով հետազոտությունների իրականացում:

Ջրի մատակարարման հետագա ծրագրերի պատրաստման աջակցություն Փոխառուին:

3. Ծրագրի կատեգորիաները

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են Համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների բաշխումն ըստ կատեգորիաների, ինչպես նաև՝ ՀԲ կողմից 31.10.2001թ., 28.04.2003թ. և 23.01.2004թ. հաստատված վերաբաշխումները:

Կատեգորիա	Վարկային միջոցների բաշխումն ըստ 19.06.1998թ. կնքված Համաձայնագրի	Համաձայնագրում կատարված փոփոխությունները			Ծախսերի տոկոսը, որը պետք է ֆինանսավորվի վարկային միջոցների հաշվին
		Վարկային միջոցների բաշխումը 31.10.2001թ. փոփոխությունից հետո	Վարկային միջոցների բաշխումը 28.04.2003թ. փոփոխությունից հետո	Վարկային միջոցների բաշխումը 23.01.2004թ. փոփոխությունից հետո	
1	2	3	4	5	6
1. Շինարարական աշխատանքներ					
ա) Ըստ Ծրագրի Ա Մասի	900,000.0	1,000,000.0	1,001,000.0	1,001,000.0	80%
բ) Ըստ Ծրագրի Գ և Դ մասերի	2,800,000.0	3,240,000.0	3,239,000.0	3,428,509.0	
2. Ապրանքներ և սարքավորումներ					
ա) Ըստ Ծրագրի Ա Մասի	2,700,000.0	2,700,000.0	1,590,000.0	1,590,000.0	100% արտասահման-ան ծախսեր, 100% տեղական ծախսեր (արտագործարանային գնով)
բ) Ըստ Ծրագրի Գ և Դ Մասերի	6,700,000.0	7,730,000.0	7,730,000.0	9,023,838.0	և 80% տեղական ծախսեր՝ այլ հողվածքների հայթայթման համար
3. Կառավարման պայմանագրի					
ա) Հաստատագրված վճարները	3,700,000.0	2,230,000.0	2,230,000.0	2,230,000.0	100%
բ) Խրախուսիչ պարգևատրման գումարներ	-	-	1,110,000.0	1,095,539.0	100%
4. Խորհրդատվական ծառայություններ, հետազոտություններ և ուսուցում	1,600,000.0	2,000,000.0	2,000,000.0	2,095,135.0	100%
5. Ընթացիկ աճող ծախսեր	900,000.0	900,000.0	900,000.0	900,000.0	100%
6. Ծրագրի նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում	1,500,000.0	1,500,000.0	1,500,000.0	935,979.0	Համաձայնագրի 2.02(զ) մասի համաձայն նախատեսված գումարներ
7. Չբաշխված գումարներ	1,500,000.0	1,000,000.0	1,000,000.0		
Ընդամենը	22,300,000.0	22,300,000.0	22,300,000.0	22,300,000.0	

4. Ծրագրի կատարողականը

Ծրագրի կատարողականն ըստ տարիների արտացոլված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2
(հազ. ԱՄՆ դոլար)

1	2	3	4	5	6=5/4	7	8=7/4	9=7/5
	Կատեգորիաներ	Տարիներ	Տարվա համար նախատեսված ծախսերը	Տարվա համար կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքների նախատեսված ծախսերի	Տարվա համար կատարված փաստացի վճարումները	Վճարումները նախատեսված ծախսերի	Վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
1	Շինար. աշխատանքներ	2001	841.4	433.9	51.60%	546.3	64.90%	125.90%
		2002	1,149.0	196.3	17.10%	305.1	26.60%	155.40%
		2003	1,890.7	1,696.1	89.70%	1,890.2	100.00%	111.40%
2	Ապրանքներ և սարքավորումներ	2001	2,699.4	2,050.5	76.00%	2,035.9	75.40%	99.30%
		2002	3,597.0	2,628.7	73.10%	2,646.7	73.60%	100.70%
		2003	6,737.0	5,616.5	83.40%	5,052.4	75.00%	90.00%
3	Կառավարման Պայմանագրի հաստ. ծախսեր	2001	585.0	585.0	100.00%	585.0	100.00%	100.00%
		2002	585.0	585.0	100.00%	536.3	91.70%	91.70%
		2003	585.0	585.0	100.00%	633.8	108.30%	108.30%
3ա	Կառավարման Պայմանագրի խրախուսիչ գումարներ	2001	0.0	0.0	-	0.0	-	-
		2002	0.0	0.0	-	0.0	-	-
		2003	784.0	993.4	126.70%	993.4	126.70%	100.00%
4	Խորհրդատվ. ծառ., նախագծում, վերահսկում	2001	437.7	314.3	71.80%	314.3	71.80%	100.00%
		2002	821.8	322.1	39.20%	322.1	39.20%	100.00%
		2003	768.3	350.6	45.60%	350.6	45.60%	100.00%
5	Գործառնական ծախսեր	2001	100.6	104.8	104.20%	104.8	104.20%	100.00%
		2002	182.8	184.6	101.40%	184.6	101.40%	100.00%
		2003	250.9	256.4	102.20%	256.4	102.20%	100.00%
Ընդամենը	2001	4,664.1	3,488.5	74.80%	3,586.3	76.90%	102.80%	
	2002	6,334.6	3,916.7	61.80%	3,994.8	63.10%	102.00%	
	2003	11,015.9	9,498.0	86.20%	9,176.8	83.30%	96.60%	

«Շինարարական աշխատանքներ» կատեգորիայով՝

2001 թ. թերակատարումը հիմնականում պայմանավորված է այն բանով, որ Օպերատորի կողմից Երևան քաղաքի ջրի բաշխման ցանցի հիդրավիլի մոդելավորման և գոտիավորման սխեմաները դեռևս մշակված չլինելու պայմաններում նախատեսվել է 397.4 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքների իրականացում՝ «Ընթացիկ ներդրումներ» ծրագրով, որը, բնականաբար, չի կատարվել, այսինքն՝ պլանավորումը եղել է անիրատեսական:

2002թ. թերակատարումը պայմանավորված է կապալառուների թերացումներով և Օպերատորի կողմից մրցույթների ձգձգումներով: Այսպես՝

1. «Կումայրի» ՍՊԸ-ի հետ 2002թ-ի հուլիսի 8-ին կնքվել է պայմանագիր՝ 155,251.3 հազ. դրամ (270.0 հազ. ԱՄՆ դոլար) արժեքով: «Պայմանագրի տվյալներին» 7-րդ կետի

համաձայն, աշխատանքների ակնկալվող ավարտ է սահմանվել 2002թ-ի դեկտեմբերը: Պայմանագրի համաձայն, կապալառուն պետք է իրականացնե՛ր 4050 հատ ջրաչափերի տեղադրման աշխատանքներ (ամսական ոչ պակաս 670 հատ): 2002թ. դեկտեմբերի սկզբին կապալառուի կողմից պետք է տեղադրված լինեին առնվազն 3338 հատ ջրաչափ, սակայն տեղադրվել էր 712-ը կամ պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների 17.6%-ը: «Կումայրի» ՍՊԸ-ն պայմանագրով ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետում չի կատարել, և պայմանագիրը դադարել է ժամկետը լրանալու հիմքով:

2. «Ընթացիկ ներդրումներ» ծրագրով պոմպերի վերանորոգման և պահպանման համար նախատեսված 200.0 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքների մրցույթը պետք է կայանար 2002թ. սեպտեմբերին, սակայն Օպերատորի կողմից հետաձգվել է՝ մինչև 2003թ. հունիսը:

Արարատյան 3,4 պոմպակայանների վերակառուցման աշխատանքների համար նախատեսված 130.0 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքների մրցույթը չի իրականացվել՝ Օպերատորի կողմից առաջադրանքն ուշ ներկայացնելու պատճառով:

2003թ. թերակատարումը հիմնականում պայմանավորված է Օպերատորի կողմից կապալառուներին ոչ լիարժեք տեխպայմանների, ոչ ճշգրիտ սխեմաների և քարտեզների տրամադրմամբ, որի հետևանքով կապալառուի աշխատանքների ընթացքում առաջանում են խոչընդոտներ, ձգձգումներ, չնախատեսված ծավալներ և այլն: Այսպես,

«Կենտրոնի գոտիավորման» աշխատանքների իրականացման համար հայտարարված ազգային մրցույթում հաղթող ճանաչված «Հունան և եղբայրներ» ՍՊԸ-ի հետ 2003թ. օգոստոսի 5-ին կնքվել է շինարարական կապալի պայմանագիր՝ 261,328.0 հազ. դրամ արժեքով (ավարտի ժամկետը՝ 01.04.2004թ.): Պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2004թ.-ի դեկտեմբերի 20-ը, ինչը պայմանավորված է կապալառուին Օպերատորի կողմից ոչ լիարժեք տեխնիկական պայմանների տրամադրմամբ և արտերկրից ներկրվելիք սարքերի ուշ մատակարարմամբ:

Կապալառուի կողմից 2004թ. հուլիս 1-ի դրությամբ իրականացվել են 90,200.0 հազ. դրամի շինարարական աշխատանքներ կամ պայմանագրով նախատեսվածի 34.5%-ը:

«Ապրանքներ» կատեգորիայով՝

2001թ. թերակատարումը նույնպես ոչ ճիշտ պլանավորման հետևանք է: Այսպես, առանց համապատասխան ուսումնասիրության, «Կապիտալ ներդրումներ» ծրագրով Գառնի-Երևան ջրատարի համակարգի ինքնահոսի անցման նպատակով պլանավորվել էր 375.2 հազ. ԱՄՆ դոլարի խողովակների և այլ մասերի ձեռքբերում, և, բնականաբար, չի իրականացվել, և ԾԿԽ-ի 2002թ. հունվարի 11-ի նիստով (արձանագրություն 2/1) որոշվել է այն դադարեցնել, իսկ 2002թ. մարտի 6-ի նիստով՝ սառեցնել (կոնսերվացնել)՝ վարկային միջոցներն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով:

2003թ. թերակատարման հիմնական պատճառն այն է, որ ԾԿԽ-ի հունվարի 23-ի նիստով որոշվել է դադարեցնել Արարատյան 3,4 պոմպակայանների վերակառուցման գործընթացը և

նշված օբյեկտի համար 923.7 հազ. ԱՄՆ դոլարի, ինչպես նաև Արգնի-Երևան ջրամատակարարման համակարգի համար 600.0 հազ. ԱՄՆ դոլար ապրանքների ձեռքբերումը: Սակայն ոչ կիսամյակային և ոչ էլ ինն ամսվա կտրվածքով բյուջեում փոփոխություն չի կատարվել:

«Խորհրդատվություն և նախագծում» կատեգորիայով՝

2002թ. թերակատարումը հիմնականում պայմանավորված է շինարարական աշխատանքների թերակատարմամբ, իսկ 2003 թ. թերակատարման պատճառներն են՝

- ԾԿԽ 2003թ. մայիսի 29-ի նիստում որոշվել է Երևան քաղաքի գոտիավորման աշխատանքների վերահսկումն իրականացնել ԵԶԿ ՓԲԸ-ի միջոցով:
- Արաբկիրի շրջանի գոտիավորման նախագծման պայմանագրի համաձայն, ԵԶԿ ՓԲԸ-ն «Հայգյուղշիննախագիծ» ընկերությանը պետք է տրամադրեր նախագծման համար անհրաժեշտ տեղեկատվություն, որում ընդգրկված պետք է լինեին առկա ջրագծերի սխեմատիկ հատակագծերը՝ հիմնված գոյություն ունեցող քարտեզների և գծագրերի վրա, սակայն տրամադրված տվյալների բազան բավարար չի եղել գոտիավորման նախագծման աշխատանքներն ավարտելու համար:

2004թ.-ի առաջին կիսամյակ

2004թ. առաջին կիսամյակի համար նախատեսված 1,509.7 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց կատարվել են աշխատանքներ 1,890.3 հազ. ԱՄՆ դոլարի կամ կատարված աշխատանքների ծավալը կազմել է նախատեսվածի 125.2%-ը, իսկ փաստացի վճարումները կազմել են 2,108.1 հազ. ԱՄՆ դոլար, կամ կատարված աշխատանքների 111.5%-ը (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

2004թ. առաջին կիսամյակում Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ (հազ. ԱՄՆ դոլար)

1	2	3	4	5=4/3	6	7=6/3	8=6/4
Կատեգորիաներ	2004թ. առաջին կիսամյակի նախատեսված ծախսերը	2004թ. առաջին կիսամյակի կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքները նախատեսված ծախսերի նկատմամբ	2004թ. առաջին կիսամյակի կատարված փաստացի վճարումները	Վճարումները նախատեսված ծախսերի նկատմամբ	Վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ	
1	656.5	1.280.9	195.1%	1.032.2	157.2%	80.5%	
2	497.0	126.6	25.5%	690.6	139.0%	545.5%	
3	195.0	195.0	100.0%	97.5	50.0%	50.0%	
3ա	0.0	0.0	-	0.0	-	-	
	Կառավարման Պայմանագրի հաստ. ծախսեր						
	Կառավարման Պայմանագրի խրախուսիչ գումարներ						

4	Խորհրդատվ. ծառ., նախագծում, վերահսկում	42.7	140.9	330.1%	140.9	330.0%	100.0%
5	Գործառնական ծախսեր	118.5	146.9	123.9%	146.9	124.0%	100.0%
	Ընդամենը	1.509.7	1.890.3	125.2%	2.108.1	139.6%	111.5%

Գերակատարման պատճառն այն է, որ «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության թիվ 216-Ն որոշմամբ եռամսյակային բաշխումը տրվել է 10%, 25%, 30%, 35% համամասնությամբ, հետևաբար, առաջին կիսամյակի համար նախատեսված ծախսերը հաշվարկվել է 1,509.7 հազ. ԱՄՆ դոլար:

Ծրագրի կատարողականը` Ծրագրի սկզբից մինչև 2004թ. հուլիսի 1-ը

Ծրագրի սկզբից մինչև 2004թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարվել են 26,421.7 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ կամ ընդամենը Ծրագրով նախատեսվածի 83.7%-ը: Փաստացի վճարումները Ծրագրի սկզբից կատարված աշխատանքների նկատմամբ կազմել են 26,308.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 99.6% (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ
01.07.2004թ. դրությամբ

(հազ. ԱՄՆ դոլար)

1	2	3	4	5=4/3	6	7=6/4
	Կատեգորիաներ	Ամբողջ ծրագրով նախատեսված ծախսերը	Ծրագրի սկզբից կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքների նախատեսված ծախսերի նկատմամբ	Ծրագրի սկզբից կատարված փաստացի վճարումները	Վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
1	Շինարարական աշխատանքներ	7,285.9	5.170.2	71.0%	5.160.2	99.8%
2	Ապրանքներ և սարքավորումներ	14,501.7	12,498.6	86.2%	12,498.6	100.0%
3	Կառավարման Պայմանագրի հաստատագրված վճարներ	3,000.0	2,876.3	95.9%	2,778.8	96.6%
3ա	Կառավարման Պայմանագրի խրախուսիչ գումարներ	1,473.8	993.4	67.4%	993.4	100.0%
4	Խորհրդատվ. ծառ., նախագծում, վերահսկում	2,818.6	2,609.3	92.6%	2,603.9	99.8%
5	Գործառնական ծախսեր	1,210.8	979.6	80.9%	979.6	100.0%

6	Վարկի կանխավճար	1,259.2	1,294.3	102.8%	1,294.3	100.0%
	Ընդամենը	31,550.0	26.421.7	83.7%	26.308.8	99.6%

«Շինարարական աշխատանքներ» կատեգորիայի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է՝ ըստ տարիների այդ կատեգորիայով տեղ գտած թերակատարումներով (2001թ.՝ 51.6%, 2002թ.՝ 17.1%):

5. Կառավարման պայմանագիր

Երևանի քաղաքապետարանի և միջազգային մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված իտալական «Էյ Յուֆիլիթի» (Օպերատոր) միջև 2000թ. փետրվարի 14-ին կնքված քառամյա «Կառավարման պայմանագրի» (այսուհետ՝ ԿՊ) համաձայն, ԵՋԿ ՓԲԸ-ի սպասարկման տարածքում պետք է իրականացվեն ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման աշխատանքներ:

ԿՊ-ն ուժի մեջ է մտել 2000թ. մայիսի 1-ին և պետք է ավարտվեր 2004թ. մայիսի 1-ին: Սակայն Օպերատորի ղեկավարությամբ սկսված՝ Երևան քաղաքի ջրամատակարարման ցանցի գոտիավորման և շուրջօրյա ջրամատակարարման ապահովմանը նպաստող առաջնահերթ աշխատանքների իրականացումն ավարտին հասցնելու, ինչպես նաև՝ «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման 2-րդ վարկային ծրագրի» շրջանակներում ներգրավվող նոր մասնավոր Օպերատորին ԵՋԿ ՓԲԸ-ի կառավարման սահուն փոխանցումն ապահովելու նպատակով, ՀՀ կառավարության և ՀԲ-ի միջև փոխհամաձայնություն է ձեռքբերվել ԿՊ-ը երկարաձգել մեկ տարով՝ 2004թ. մայիսի 1-ից մինչև 2005թ. ապրիլի 30-ը:

ԿՊ-ի «Ընդհանուր պայմանների» 6.3.2 կետի համաձայն՝ Օպերատորի կատարողականությունը ստուգելու, պայմանագրային տվյալ տարվա խրախուսիչ պարգևատրման չափը հաշվարկելու համար մրցութային կարգով ներգրավվել են համապատասխան անկախ աուդիտորական ընկերություններ:

ԿՊ-ի «Խրախուսիչ պարգևատրման մասին» հավելվածի 2-րդ հոդվածի 2.1 կետի 4-րդ ենթակետի համաձայն, «Եթե Օպերատորի աշխատանքը որևէ «պայմանագրային տարվա» ընթացքում չարժանանա «պարգևատրման չափորոշիչների աղյուսակով» նախատեսված «զերազանց» գնահատականին, ապա Օպերատորը պարտադիր պետք է լրացնի բացթողումները հաջորդ տարվա ընթացքում, ինչպես նաև ապահովի տվյալ «պայմանագրային տարվա» համար սահմանված աշխատանքային պլանի կատարումը»: Նույն հոդվածի 2.3 կետի համաձայն, «Եթե որևէ պայմանագրային տարվա ընթացքում Օպերատորը ցուցանիչներից որևէ մեկի գծով ստանում է «վատից» ցածր գնահատական, ապա այդ տարի նա զրկվում է խրախուսիչ պարգևատրման գծով վարձատրություն ստանալու հնարավորությունից»:

Ելակետային տարվա (ԿՊ-ի մեկնարկին նախորդող տարին) և Պայմանագրային 1-ին տարվա տեխնիկական և ֆինանսական աուդիտն իրականացվել է միջազգային մրցույթի արդյունքում ընտրված «Քեյ Փի Էմ Ջի» աուդիտորական ընկերության կողմից, որն արձանագրել է, որ առաջին տարվա համար նախատեսված թվով 30 հաշվետվություններից Օպերատորի կողմից թվով 2-ը չի ներկայացվել, իսկ 17-ը ներկայացվել են ուշացումներով, թվով 15 պարտադիր կատարման ենթակա աշխատանքներ չեն կատարվել, գնահատման ցուցանիշներից երկուսով («ջրաչափերի տեղադրում» և «տարեկան վարձավճարների հավաքագրման բարելավում») Օպերատորը ստացել է «վատից» ցածր գնահատական, ուստի վերջինս գրկվել էր առաջին տարվա պարզակազմարից:

Արդյունքում՝ ԿՊ-ի իրականացման առաջին տարվա արդյունքները և ՀՀ կառավարության, և ՀԲ-ի կողմից գնահատվել են անբավարար: Նշելով, որ անկախ բոլոր հանգամանքներից, Օպերատորին չի հաջողվել պայմանագրային առաջին տարում Հայաստանում և մասնավորապես ԵՋԿ ՓԲԸ-ում փաստացի իրավիճակին համարժեք կարողություններով թիմ և գործողությունների ծրագիր ստեղծել, միաժամանակ, պետական տարբեր մարմինների գործողությունների թերացումների պատճառով նա կարող էր ձևական կամ իրավական առումով իր անհաջողությունները պայմանավորել հենց այդ թերացումներով: Մասնավորապես՝

- Օպերատորին ուշացումներով են տրամադրվել ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի սխեմաները (կապված գաղտնիության հետ),
- բաժանորդների ջրաչափերի բացակայության պայմաններում հաշվարկային հասույթը ձևավորվել էր արհեստական 1.3 մլն բնակչության հաշվով (բացակայում էին մարդահամարի տվյալները),
- 1999-2000թթ. ընթացքում հազարավոր ապօրինի միացումներ են կատարվել ցանցին, որը որևէ կերպ չէր արձանագրվել,
- պետական բյուջեից Ծրագրի համաֆինանսավորումն էապես թերակատարվել էր,
- բյուջետային կազմակերպությունները և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն գերազանցել էին բյուջեով ջրի համար նախատեսված նորմատիվները և դա այն դեպքում, երբ նույնիսկ նախատեսված գումարներն էին թերֆինանսավորվել,
- անկառավարելի իրավիճակ էր ստեղծվել համայնքային բյուջեներով ֆինանսավորվող կազմակերպությունների վճարումների գործում,
- օրենսդրական դաշտը որևէ գործնական իրավունք չէր վերապահում չվճարող բաժանորդների հետ առևտրային հարաբերություններ ստեղծելու հարցում:

Այս բոլոր մեղադրանքներով Օպերատորը դիմել էր նաև ՀԲ-ին և փորձել ամբողջ մեղքը բարդել ՀՀ կառավարության վրա:

ՀԲ-ն իրավիճակով անհանգստացած (հատկապես հաշվի առնելով, որ նման Ծրագիրը ջրի ոլորտում Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների համար առաջինն էր և այն հաջողության դեպքում պետք է ավելի տարածվեր) 2001թ. նոյեմբերին հատուկ և համարժեք կարգավիճակով

պատվիրակություն էր ուղարկել՝ կողմերի հետ տեղում քննարկումներ կատարելու և իրողությունը գնահատելու համար:

ՀՀ կառավարությունը կանգնել էր հետևյալ ռիսկի առջև՝

- դատական կարգով հաջողություն ունենալը գրեթե անիրատեսական էր ,
- մեկուկես տարվա համար Օպերատորին տրված հաստատագրված վճարն արդեն կազմել էր 1.125 հազ. ԱՄՆ դոլար,
- պայմանագիրը խզելու դեպքում ՀԲ կդադարեցներ Ծրագրի ֆինանսավորումը կամ ընդհանրապես, կամ մինչև նոր Օպերատորի ներգրավումը (որն առնվազն մեկ տարի կտևեր):

Այս իրավիճակում ՀՀ կառավարությանը հաջողվել է փոխզիջումների գնալ ինչպես Օպերատորի, այնպես էլ ՀԲ-ի հետ՝ վերջինիս առաջարկելով շենքերի ներքին ցանցերի վերականգնման, անապահով ընտանիքների ջրաչափերի տեղադրման և համատիրություններին աջակցելու նպատակով Ընկերությանը տրամադրել 3 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ, որն իրականացնելու շնորհիվ փաստացի ստորագրվել և գործում է 1.975 մլն ԱՄՆ դոլարի համաձայնագիրը:

Արդյունքում 2001թ. նոյեմբերի 20-ին ՀՀ իշխանությունների, ի դեմս՝ Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանի, ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Գ. Մարտիրոսյանի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ Մ. Միքայելյանի և ԾՂԳ-ի տնօրեն Վ. Ավոյանի մի կողմից, և «Էյ Սի Ի Էյ Էնդ Քամփրնի Արմինիլն Յուբիլիթի Սքարլ» ընկերությունն, ի դեմս՝ ընկերության նախագահ Ա. Մանգանոյի, և նույն ընկերության լիազոր ներկայացուցիչ Ռ. Ռուբլինգի միջև, մյուս կողմից, ստորագրվել է «Փոխհամաձայնությունների հուշագիր»: Նշված հուշագրով վերանայվել է խրախուսիչ պարգևավճարի տրամադրման կարգը: Այսպես, «խրախուսիչ պարգևատրման մասին» հավելվածի նոր տարբերակով նախատեսվել է՝ «Եթե Օպերատորը չարժանանա հաջորդ տարիներում չընդգրկված որևէ կատարողական ցուցանիշի «վատ» գնահատականի, ապա Օպերատորը պարտավոր է այդ բացթողումը լրացնել և հասցնել պայմանագրային 1-ին և 2-րդ տարիների համար առնվազն «վատ», իսկ 3-րդ և 4-րդ տարիների համար՝ «լավ» գնահատականի» (2-րդ հոդված, 2.1 կետ, 4-րդ ենթակետ), իսկ նույն կետի 5-րդ ենթակետով նախատեսվել է՝ «Եթե որևէ պայմանագրային տարվա ընթացքում Օպերատորը չարժանանա տարեկան առավելագույն խրախուսիչ պարգևատրման, բացթողումը կմնա Օպերատորի համար հաջորդ տարում և յուրաքանչյուր պայմանագրային տարվա համար համապատասխանաբար կավելացվի առավելագույնը 375.0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումար»:

Միջազգային մրցույթի արդյունքներով Պայմանագրային 2-րդ, 3-րդ և 4-րդ տարիների տեխնիկական աուդիտի իրականացման համար ընտրվել է դանիական «Ռամբոլ» աուդիտորական ընկերությունը, որը Օպերատորի 2-րդ տարվա աշխատանքի խրախուսիչ պարգևատրման գումարը հաշվարկել է 341,250.0 ԱՄՆ դոլար՝ առավելագույն 375,000.0 ԱՄՆ դոլարի դիմաց, իսկ 3-րդ տարվա գումարը՝ 262,147.0 ԱՄՆ դոլար՝ գումարած 1-ին տարվա

375,000.0 ԱՄՆ դոլարը և 2-րդ տարվա 15,000.0 ԱՄՆ դոլարը, ընդամենը՝ 652,147.0 ԱՄՆ դոլար (262,147.0+375,000.0+15,000.0):

2004թ. հուլիսի 1-ի դրությամբ պայմանագրային երեք տարիների համար Օպերատորին, որպես խրախուսիչ պարգևավճար, վճարվել է 993.4 հազ. ԱՄՆ դոլար, իսկ պայմանագրային 4-րդ տարվա համար խրախուսիչ պարգևավճարի չափը կորոշվի նույն տարվա ավարտից հետո:

Անհրաժեշտ է նշել, որ Ելակետային տարվա համեմատ աճել է վթարների քանակը.

- Պոմպերի վթարների թիվը Ելակետային տարում գրանցված 346-ից հասել է 620-ի:
- Բաշխիչ ցանցերի վթարների թիվը ելակետային տարում գրանցված 1141-ից ավելացել է մինչև 5158: Վթարների արձագանքման տևողությունը (վթարի հայտնաբերումից մինչև վերացումը) աուդիտորի գնահատմամբ 2.66 օրից կրճատվել է 1.11 օր, սակայն եթե Ելակետային տարում վթարների վերացմանը ծախսվել է 3035 պայմանական օր (1141x2.66 օր), ապա այժմ՝ 5725 պայմանական օր (5158x1.11 օր), կամ մոտ՝ կրկնակի:

ԿՊ-ի տեխնիկական աուդիտն իրականացնող «Ռ-ամբոլ» ընկերության հաշվետվությունում նշված է, որ ջրամատակարարման տևողության ավելացման՝ ընդհուպ մինչև շուրջօրյա ջրամատակարարման ապահովման ռազմավարության ընտրության պայմաններում վթարների նվազեցման ապահովումն իրատեսական չէ: Չի կարելի ակնկալել, որ վթարների հաճախականությունը կարող է կրճատվել նման մաշված ցանցում, երբ, միևնույն ժամանակ, ավելի բարձրորակ սպասարկման և ճնշման մեծացման պահանջ կա: Մաշված և գրեթե շարքից դուրս եկած ցանցում վթարների հաճախականությունը նվազեցնելու նպատակով խողովակները փոխարինելու համար կպահանջվեն մեծ ներդրումներ (որոնք ներկայումս առկա չեն) և երկար ժամանակ, իսկ ցանցում ճնշման բարձրացմանը զուգընթաց վթարված հատվածներն ու հոսակորուստներն անմիջապես հայտնաբերվում և ԵՁԿ ՓԲԸ-ի ուժերով վերացվում են:

Միաժամանակ, հարկ է նշել, որ վթարների արդյունքում, որպես կանոն, տեղի է ունենում ջրի կորուստ, իսկ վթարների վերացման ընթացքում՝ ջրամատակարարման ժամանակավոր դադարեցում: Վթարների թվի ավելացմանը հաջորդում է նաև ջրի որակի վատթարացումը, աղտոտումը և համաճարակների հավանականության մեծացումը:

Օպերատորի գործունեության գնահատման չափորոշիչներից «վարձավճարների գանձման» տեմպերի ավելացմանը նպաստել է նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002թ. նոյեմբերի 6-ին «Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Նույնը վերաբերում է նաև բաժանորդների մոտ «առևտրային ջրաչափերի տեղադրում» կատարողականի ցուցանիշին:

Ընդհանուր Ծրագրի տեմպերի վրա էական ազդեցություն են ունեցել Օպերատորի կողմից աշխատանքների ուշացումները, մրցույթների ձգձգումները, գնումների ժամանակացույցների ժամկետների խախտումները:

6. Օրենսդրական և նորմատիվ կանոնակարգման վերաբերյալ

1. Ծրագրի շրջանակներում նախատեսված են մի շարք գնումներ՝ ուղղված համատիրությունների զարգացմանը և աջակցմանը, այդ թվում՝ 2002թ.-ին իրականացված երեք խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթները՝ ուսուցում և տեղեկատվական դաշտի ընդլայնում (համատիրությունների վերաբերյալ հեռուստածրագրերի ու գովազդային հոլովակների պատրաստում և հեռարձակում): Խորհրդատուների ընտրությունը կատարվել է՝ «ընտրություն ըստ որակավորման» եղանակով, որն իրականացվում է հետևյալ կարգով.

ա) հետաքրքրություն ցուցաբերած կազմակերպություններից կազմվում է կարճ ցուցակ,

բ) կարճ ցուցակում ընդգրկված լավագույն որակավորում ունեցող խորհրդատվական կազմակերպությունից ստացվում է միասնական տեխնիկա-ֆինանսական առաջարկ:

Նշված երեք մրցույթների համար կարճ ցուցակում ընդգրկվել են լավագույն որակավորում ունեցող ընկերությունները: ԾԿԽ-ի առաջարկությամբ կարճ ցուցակում ընդգրկված ընկերություններից մեկի փոխարեն, բոլորից են ստացվել միասնական տեխնիկա-ֆինանսական առաջարկներ, ինչը չի համապատասխանում ՀԲ-ի «Խորհրդատուների ընտրությունն ու վարձումը ՀԲ-ի վարկառուների կողմից» ուղեցույցի 3.7 կետի պահանջին: 2003թ. ապրիլի 3-ի ԾԿԽ-ի նիստում (արձանագրություն 2/7) որոշում է ընդունվել մրցութային հանձնաժողովի կանոնակարգում խորհրդատուների ընտրության և վարձման ընթացակարգերը հստակեցնելու և ՀԲ-ի ուղեցույցի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ:

2. Ծրագրի 2003թ. գնումների պլանի թիվ 11 և 13 լրացումներով իրականացվել են Երևան քաղաքի համայնքների ջրամատակարարման ցանցի սեկտորի զարգացման աշխատանքները՝ ազգային մրցույթների միջոցով ընտրված թվով 6 կազմակերպությունների կողմից: Աշխատանքների նպատակն է՝ Երևան քաղաքում շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը: ՀԲ-ի ընթացակարգի համաձայն, համապատասխանող շինարարական կազմակերպություն ճանաչվելու համար յուրաքանչյուր մրցույթի դեպքում, սահմանվում են որակավորման չափանիշներ՝ դյուրիրացնելի միջոցների չափ և վերջին երեք տարիներից որևէ մեկում տարեկան շրջանառության ծավալ՝ առաջարկվող աշխատանքների տարեկան ծավալից 2.5 անգամ ավելի: Նշված մրցույթների համար Օպերատորի կողմից հաշվարկված չափանիշները չեն համապատասխանում ՀԲ-ի կողմից սահմանված պահանջներին: Մասնավորապես.

ա) դյուրիրացնելի միջոցների չափը ՀԲ-ի կողմից սահմանվել է 35.0 հազ. ԱՄՆ դոլար, իսկ Օպերատորի կողմից՝ 20.0 հազ. ԱՄՆ դոլար,

բ) կատարված աշխատանքների տարեկան ծավալը ՀԲ-ի կողմից սահմանվել է 130.0 մլն դրամ, իսկ Օպերատորի կողմից՝ 100.0 մլն դրամ:

3. Երևան քաղաքի Մաշտոցի շրջանի գոտիավորման ազգային մրցույթում հաղթող է ճանաչվել «Կռունկ» ՍՊԸ-ն, որի հետ 2003թ. օգոստոսի 26-ին կնքվել է պայմանագիր՝ 51,919.8 հազ. դրամ արժեքով: Մրցութային փաթեթի պահանջների համաձայն, հայտատուն պետք է ներկայացներ 20.0 հազ. ԱՄՆ դոլարի դյուրիրացնելի միջոցների և անցած երեք տարիների ընթացքում

կատարված շինարարական աշխատանքների 100.0 մլն դրամի ծավալի վերաբերյալ տեղեկատվություն: Սակայն անցած երեք տարիների ընթացքում հայտատուի կողմից ներկայացվել է 78,927.0 հազ. դրամ արժեքով կատարված աշխատանքների ծավալ, որը պահանջվածից 21,073.0 հազ. դրամով պակաս է: Դյուրիրացնելի միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը արտացոլված է ընկերության հաշվապահական հաշվեկշռում, որը տարածքային հարկային տեսչության կողմից հաստատված չէ: Հաշվեկշռում նշված գումարը չի բավարարում պահանջվող չափին: Միջուկային փաթեթի մեկ այլ պահանջով հայտային երաշխիքի վավերականության ժամկետ է սահմանվել 2003թ. հոկտեմբերի 19-ը, իսկ հայտատուի կողմից ներկայացված հայտային երաշխիքի ժամկետը 2003թ. սեպտեմբերի 7-ն է: Նման բացթողումների առկայության պայմաններում Օպերատորի կողմից պայմանագրի շնորհման առաջարկի համաձայն, հաղթող է ճանաչվել «Կռունկ» ՍՊԸ-ն, որն ամրագրվել է ԾԿԽ-ի կողմից:

4. ՀՀ 2001, 2002 և 2003թթ. պետական բյուջեներում ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով վերաբաշխումներ կատարելուց հետո Ծրագրի 2001, 2002 և 2003թթ. փոփոխված բյուջեները սահմանված կարգով չեն ներկայացվել Ծրագրի կառավարման խորհրդի հաստատմանը, սակայն ներառվել են Ծրագրի իրականացման ընթացքի մասին ՀՀ կառավարություն ներկայացվող հաշվետվություններում:

7. Զրաչափերի (15 և 20մմ տրամաչափի) ձեռքբերման վերաբերյալ

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ ԵՋԿ ՓԲԸ կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն, 2000թ. հունվարի 1-ի դրությամբ Կենտրոնական պահեստում առկա էր 767 հատ ռուսական արտադրության ջրաչափ: 2000թ.-ից մինչև 2004թ. ապրիլի 1-ը ժամանակահատվածում ԵՋԿ ՓԲԸ-ի և վարկային միջոցներով ձեռք են բերվել 309425 հատ 15 և 20 մմ տրամագծի ջրաչափեր, այդ թվում՝ ԵՋԿ ՓԲԸ-ի միջոցներով՝ 182000, իսկ վարկային միջոցներով՝ 127425:

ԵՋԿ ՓԲԸ գլխավոր տնօրենի կողմից 21.07.2004թ. տրված տեղեկանքի համաձայն, Կենտրոնական պահեստից մինչև 2004թ.-ի. ապրիլի 1-ը բաց են թողնվել 219014 հատ ջրաչափ, այդ թվում՝ ԵՋԿ ՓԲԸ-ի մասնաճյուղերին և կառուցվածքային ստորաբաժանումներին՝ 197900, այլ կազմակերպություններին՝ 21114 հատ ջրաչափ («Հայջրնուդկոյոլի» ՓԲԸ-ին՝ 18500, ԼՂՀ ջրամատակարար կազմակերպությանը՝ 2300 և այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց՝ 314):

Հարկ է նշել, որ այլ կազմակերպություններին վաճառված ջրաչափերի արժեքն ընդամենը կազմել է 178,485.6 հազ. դրամ, որի դիմաց 2004թ. ապրիլի 1-ի դրությամբ ԵՋԿ ՓԲԸ-ին վճարվել է 25,853.2 հազ. դրամ, կամ դեռևս ենթակա է վճարման 152,632.4 հազ. դրամ: 2004թ. ապրիլի 1-ի դրությամբ ԵՋԿ ՓԲԸ-ի կրեդիտորական պարտքը, ըստ ներկայացված հաշվեկշռի, կազմել է 13,048,459.0 հազ. դրամ:

Ըստ ներկայացված տեղեկանքի, 2004 թվականի ապրիլի 1-ի դրությամբ Կենտրոնական պահեստում եղել է 91178 հատ ջրաչափ:

Կենտրոնական պահեստից բացթողնված 219014 հատ ջրաչափերից 197900 հատը (219014-18500-2300-314) պետք է վաճառվեր ԵՋԿ ՓԲԸ բաժանորդներին: Համաձայն ԵՋԿ ՓԲԸ մասնաճյուղերի կողմից ներկայացված տեղեկանքների, 2004թ. ապրիլի 1-ի դրությամբ մասնաճյուղերում ջրաչափերի մնացորդը կազմել է 8745 հատ, այսինքն՝ մասնաճյուղերի կողմից բաժանորդներին վաճառված ջրաչափերի քանակը կազմել է 189155 հատ (197900-8745):

ԵՋԿ ՓԲԸ կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն, 2004թ. ապրիլի 1-ի դրությամբ ջրաչափ ունեցող բաժանորդների թիվը կազմել է 254745, որոնց մոտ տեղադրվել է 347915 հատ ջրաչափ, այդ թվում՝

- բնակչության՝ ջրաչափի կարիք ունեցող բաժանորդների թիվը կազմել է 246282, սակայն տեղադրվել է 338075 հատ: Այսինքն՝ մեկ բաժանորդին՝ 1.37 հատ (338075 : 246282) ջրաչափ:

2004թ. ապրիլի 1-ի դրությամբ ԵՋԿ ՓԲԸ բնակիչ-բաժանորդների թիվը կազմել է 306228: Նշված բոլոր բաժանորդներին ապահովելու համար անհրաժեշտ է 419532 (306228 x 1.37) հատ ջրաչափ: Պահանջարկի և փաստացի տեղադրվածի տարբերությունը՝ 81457 հատ (419532 – 338075) ջրաչափ անհրաժեշտ է տեղադրել:

- իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բաժանորդների թիվը կազմում է 8463, տեղադրված է 9840 հատ ջրաչափ: Այսինքն՝ մեկ բաժանորդին՝ 1.16 հատ (9840 : 8463) ջրաչափ: 2004թ. ապրիլի 1-ի դրությամբ ԵՋԿ ՓԲԸ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բաժանորդների թիվը կազմել է 10508: Նշված բոլոր բաժանորդներին ջրաչափեր տեղադրելու համար անհրաժեշտ է 12189 (10508 x 1.16) հատ: Պահանջարկի և փաստացի տեղադրվածի տարբերությունը՝ 2349 հատ (12189 – 9840) ջրաչափեր դեռևս ենթակա են տեղադրման:

Արդյունքում՝ բոլոր բաժանորդներին ապահովելու համար անհրաժեշտ է 83806 հատ (81457 + 2349) ջրաչափ:

2004թ. ապրիլի 1-ի դրությամբ, ԵՋԿ ՓԲԸ-ի Կենտրոնական պահեստի 91178 հատ ջրաչափերի մնացորդը և մասնաճյուղերի պահեստներում առկա ջրաչափերի մնացորդների հանրագումարը կազմում է 99923 հատ (91178 + 8745) և, համեմատելով այն դեռևս տեղադրման ենթակա (83806 հատ) ջրաչափերի քանակի հետ, ակնհայտ է, որ նույնիսկ բոլոր բաժանորդների կողմից ԵՋԿ ՓԲԸ-ից ջրաչափեր ձեռքբերելու և տեղադրելու դեպքում, պահեստներում դեռևս կմնա 16117 հատ (99923 - 83806) ջրաչափ: Հարկ է նշել, որ պահեստներում առկա չինական արտադրության ջրաչափերը վարկային միջոցների հաշվին հանրապետություն են ներկրվել 2003թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ համապատասխանաբար՝ 24850 և 75975 հատ խմբաքանակով:

Ջրաչափերի մատակարարման պայմանագրերով ամրագրվել է, որ արտադրողի կողմից ջրաչափերի շահագործման երաշխիքային ժամկետը սահմանվել է երկու տարի՝ սկսած ջրաչափը շահագործման ընդունելու օրվանից:

Վարկային միջոցներով ձեռքբերված ջրաչափերի պահանջարկը ձևավորվել է Օպերատորի կողմից մշակված «Ներդրումների հիմնադրամի» տարեկան ծրագրերի հիմքով, որը կազմվել և ներառվել է գնումների տարեկան պլաններում և սահմանված կարգով հաստատվել ԾԿԽ-ի կողմից: ԵՁԿ ՓԲԸ միջոցներով ջրաչափերի ձեռքբերումը իրականացվել է ԾԿԽ-ի համապատասխան հանձնարարականների հիման վրա:

Հարկ է նշել, որ դեռևս 2003թ. սկզբին ԵՁԿ ՓԲԸ-ին հայտնի էր, որ «Ներդրումների հիմնադրամով» նախատեսված էր 15 և 20 մմ տրամաչափի ջրաչափերի ձեռքբերման փաստը, սակայն սեփական միջոցների հաշվին կատարվել են ջրաչափերի գնումներ, որի արդյունքում 2004թ. ապրիլի 1-ի դրությամբ ԵՁԿ ՓԲԸ-ի պահեստներում առկա են պահանջարկից ավելի գնված 16117 հատ ջրաչափեր՝ 56,409.5 հազ. դրամ արժեքով (99,857 հազ. ԱՄՆ դոլար¹):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. 2001թ. Ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել են 74.8%-ով, ընդ որում, «շինարարական աշխատանքներ» կատեգորիայով՝ ընդամենը 51.6%-ով, իսկ 2002թ.՝ 61.8 և 17.1%-ով:
2. ԿՊ-ի մրցութային գործընթացը կես տարով երկարաձգվել է ՀՀ կառավարության կողմից ստեղծված «Կառավարման պայմանագրի առաջարկները գնահատող միջգերատեսչական հատուկ հանձնաժողովի» կողմից՝ Հայաստանի համար ոչ ստանդարտ պայմանագրի պայմաններն ու դրանց հիմնավորումներն առավել հանգամանորեն քննարկելու և մրցույթի գնահատման արդյունքների վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով: Այս հանգամանքը, ինչպես նաև Օպերատորի կողմից աշխատանքների ուղացումները, մրցույթների ձգձգումները, գնումների ժամանակացույցների ժամկետների խախտումներն էական ազդեցություն են ունեցել ընդհանուր Ծրագրի տեմպերի և, որպես արդյունք, Ծրագրի իրականացման ժամկետի երկարաձգման վրա:
3. Ելակետային տարվա համեմատ աճել է վթարների քանակը՝ պոմպերի վթարների թիվը նույն ժամանակամիջոցում գրանցված 346-ից հասել է 620-ի, իսկ բաշխիչ ցանցերի վթարների թիվը՝ 1141-ից՝ 5158-ի: Վթարների արձագանքման տևողությունը (վթարի հայտնաբերումից մինչև վերացումը) առողիտորի գնահատմամբ 2.66 օրից կրճատվել է 1.11 օր, սակայն եթե Ելակետային տարում վթարների վերացմանը ծախսվել է 3035 պայմանական օր (1141x2.66 օր), ապա այժմ՝ 5725 պայմանական օր (5158x1.11 օր), կամ մոտ՝ կրկնակի:

¹ Հաշվարկը կատարվել է ՀՀ ԿԲ-ի 2003թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների միջին փոխարժեքով՝ 1ԱՄՆ դոլարը- 564.9 դրամ:

ԿՊ-ի տեխնիկական ստույգիտն իրականացնող «Ռամբոլ» ընկերության հաշվետվությունում նշված է, որ ջրամատակարարման տևողության ավելացման՝ ընդհուպ մինչև շուրջօրյա ջրամատակարարման ապահովման ռազմավարության ընտրության պայմաններում վթարների նվազեցման ապահովումն իրատեսական չէ: Մաշված և մի շարք տեղերում գրեթե շարքից դուրս եկած ջրամատակարարման ցանցում վթարների հաճախականությունը նվազեցնելու նպատակով խողովակները փոխարինելու համար կպահանջվեն մեծ ներդրումներ, որոնք ներկայումս առկա չեն, իսկ ցանցում ճնշման բարձրացմանը զուգընթաց վթարվող հատվածներն ու հոսակորուստները հիմնականում անմիջապես հայտնաբերվում և ԵԶԿ ՓԲԸ-ի ուժերով վերացվում են:

Միաժամանակ, հարկ է նշել, որ վթարների արդյունքում, որպես կանոն, տեղի է ունենում ջրի կորուստ, իսկ վթարների վերացման ընթացքում՝ ջրամատակարարման ժամանակավոր դադարեցում: Վթարների թվի ավելացմանը հաջորդում է նաև ջրի որակի վատթարացումը, աղտոտումը և համաճարակների հավանականության մեծացումը:

4. 2004թ. հուլիսի 1-ի դրությամբ պայմանագրային երեք տարիների համար Օպերատորին, որպես խրախուսիչ պարգևավճար, վճարվել է 993.4 հազ. ԱՄՆ դոլար, իսկ պայմանագրային 4-րդ տարվա համար դրա չափը կորոշվի 4-րդ տարվա ավարտից հետո:
5. Խախտելով ՀԲ-ի գնումների ընթացակարգի պահանջները, Երևանի համայնքների ջրամատակարարման ցանցի սեկտորիզացիայի աշխատանքների մրցույթների մասնակիցների չափորոշիչները Օպերատորի կողմից մեղմվել են:
6. Անճշտություններ և անհամապատասխանություններ են արձանագրվել նաև մրցույթներում հաղթող ճանաչված կապալառուների մրցութային փաթեթով նարկայացված տվյալներում, որոնք անտեսվել են Օպերատորի կողմից:
7. Տեսական հաշվարկով Երևան քաղաքի բոլոր բաժանորդներին ջրաչափով ապահովելու դեպքում, պահեստներում դեռևս կմնա 16117 հատ (99923-83806) ջրաչափ՝ մոտ 100.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով: Հարկ է նշել, որ պահեստում առկա չինական արտադրության ջրաչափերը վարկային միջոցների հաշվին հանրապետություն են ներկրվել 2003թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ համապատասխանաբար՝ 24850 հատ և 75975 հատ խմբաքանակով:

Վերահսկողության ընթացքում վերահսկող հանձնաժողովի կողմից, ԾՂԳ-ի ղեկավարության մասնակցությամբ կազմվել է թվով 5 արձանագրություն:

Սույն հաշվետվության նախագծին ԾՂԳ-ի ղեկավարը ծանոթացել է 08.09.2004թ., առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի կառավարման խորհրդին և ԾՂԳ-ի ղեկավարությանը.

1. Ձեռնարկել միջոցառումներ՝ Ծրագրի իրականացման տեմպերի բարելավման, աշխատանքների որակի բարձրացման և Ծրագրով նախատեսված նպատակակետերի լիարժեք կատարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:
2. Գործունեության ընթացքում բացառել թե ՀԲ-ի ընթացակարգերի, և թե ՀՀ օրենսդրական, նորմատիվ ակտերի պայմանների շեղումները:
3. Ուժեղացնել Ծրագրի իրականացման ընթացքի վերահսկման գործընթացը վարկային միջոցներն առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու նպատակով:
4. Կատարել ջրաչափերի անհրաժեշտ քանակի հաշվարկ, իսկ առկա ավելցուկ ջրաչափերն իրացնել և գումարներն ուղղել Ծրագրի այլ նպատակներին:
5. «ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկ ամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և վերահսկիչ պալատ ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ:

1. Կայուն ջրամատակարարման բարելավում

ԿՊ-ի համաձայն՝ ջրամատակարարման կայունությունն ամսական ընդհանուր ժամերի այն տոկոսն է, որը սպառողները կարող են ստանալ համակարգից՝ համաձայն կայուն ջրամատակարարման հաշվարկման: Մատակարարման կայունությունը պետք է որոշվի որպես այն ժամանակի միջին տոկոս, որի ընթացքում սպառողների 100%-ը ջուր է ստացել «պիկ» սեզոնի ընթացքում (ապրիլից մինչև սեպտեմբեր): Քանի որ ԿՊ-ն մեկնարկել է 2000թ. մայիսի 1-ից, իսկ համակարգի շահագործման հանձնումը սկսվել է հունիսի 6-ից, և նկատի ունենալով, որ պայմանագրային բոլոր 4 տարիներին ցուցանիշի կատարման համար հատկացված ժամանակը միշտ կես տարով կրճատված կլիներ, ԾՂԳ-ի, Օպերատորի ու Աուդիտորի փոխհամաձայնությամբ «պիկ» սեզոնը տեղաշարժվել է հոկտեմբեր-մարտ ամիսներ: Աուդիտորի հաշվարկները երկու սեզոնի համար էլ կատարվել են և արդյունքները ստացվել են շատ մոտ (1-ին տարի՝ ամառ-7.99 ժամ, ձմեռ-8.01 ժամ, 2-րդ տարի՝ ամառ-8.55 ժամ, ձմեռ-8.63 ժամ, 3-րդ տարի՝ ամառ-8.65 ժամ, ձմեռ-9.27 ժամ): Հաշվարկները կատարվել են ջրամբարների մակարդակների երկժամյա չափումների հիման վրա: Ի դեպ, այդ երկու սեզոնների ընթացքում ջրի ծախսն առանձնապես չի տարբերվում (եթե ապրիլից՝ սեպտեմբեր ջրի ծախսը մեծանում է՝ կապված ապօրինի օգտագործման, ոռոգման հետ, ապա հոկտեմբերից՝ մարտ այն ավելանում է՝ կապված ջեռուցման, տաք ջրի օգտագործման լրացուցիչ ջրաքանակների հետ):

Այս ցուցանիշն Օպերատորի կողմից Ելակետային տարվա համար հաշվարկվել էր 7.15 ժամ կամ օրվա տևողության մոտ 30%-ը: Առաջին տարում «Զեյ Փի Էմ Ջի» աուդիտորական ընկերության կողմից մատակարարման ընդհանուր ժամաքանակը գնահատվել է 33.9% կամ 8.14 ժամ (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 20%-ի և նվազագույն 15%-ի դիմաց), իսկ երկրորդ տարում «Ռ-ամբոլ» աուդիտորական ընկերության կողմից՝ 36% կամ 8.64 ժամ (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 40%-ի և նվազագույն 20%-ի դիմաց) և պայմանագրային երրորդ տարվա համար կրկին «Ռ-ամբոլի» կողմից՝ 54.5% կամ 13.08 ժամ (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 60%-ի և նվազագույն 40%-ի դիմաց), այսինքն՝ 3 տարիների ընթացքում էլ նպատակակետերն ապահովվել են: Պայմանագրային չորրորդ տարվա համար աուդիտորական ընկերության նախնական հաշվարկների համաձայն՝ այն կազմել է 64.52% կամ 15.5 ժամ՝ ԿՊ-ով նախատեսված նվազագույն 55%-ի և առավելագույն 75%-ի դիմաց:

2. Էներգիայի սպառում

Այս ցուցանիշի նպատակակետը պետք է չափվի որպես Ելակետային տարվա տվյալի համեմատ կվտ.ժամ էներգիայի սպառման կրճատման տոկոս՝ պայմանագրային 1-ին տարում արտադրված մեկ մլն մ³-ի համար, իսկ հաջորդ տարիներում՝ սպառված մեկ մլն մ³-ի համար:

Այս նպատակով Օպերատորի կողմից ներկայացվել են «Էներգիայի կառավարման ծրագիր» (ԿՊ-ով նախատեսվել էր Մեկնարկային ամսաթվից 150 օրից ոչ ուշ՝ մինչև 2000թ. սեպտեմբերի 30-ը, ներկայացվել է սեպտեմբերի 27-ին, դիտողություններից հետո վերջնական

տարբերակը՝ 2000թ. նոյեմբերին), ինչպես նաև՝ «Էներգիայի խնայողության ծրագրի անհապաղ գործողություններ» (2001թ. նոյեմբերի 20-ի Փոխհամաձայնությունների հուշագրի համաձայն՝ պետք է ներկայացվեր մինչև 2002թ. փետրվար ամիսը, ներկայացվել է՝ 2002թ. մարտին):

Օպերատորի կողմից ներկայացված Ելակետային տարվա տվյալների հաշվետվությունում, ինչպես նաև՝ «Էներգիայի կառավարման ծրագրում», ԵԶԿ ՓԲԸ-ի կողմից էներգիայի սպառումը հիմնականում կապվում է երեք տիպի օբյեկտների շահագործման հետ.

- հիմնական պոմպակայաններ աղբյուրներում (Ելակետային տարում՝ ընդհանուր էներգիայի սպառման 92%-ը),
- բաշխիչ ցանցում բազմահարկ բնակելի շենքերի բակային պոմպեր (ընդհանուր էներգիայի սպառման 7%-ը),
- «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայան (ընդհանուր էներգիայի սպառման 1%-ը):

Էներգիայի սպառման նվազեցման նպատակով Օպերատորն իրականացրել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ պոմպերով մղման նվազեցում (շնորհիվ ապօրինի միացումների, հոսակորուստների, աննպատակ օգտագործման նվազեցման), հնարավորության դեպքում պոմպերով մղման համակարգից անցում ինքնահոսի, անարդյունավետ գործող պոմպերի և օժանդակ մասերի փոխարինում կամ վերանորոգում:

Պայմանագրային 1-ին տարում «Քեյ Փի Էմ Ջի» աուդիտորական ընկերության կողմից սպառումը գնահատվել է 223.5 մլն կվտ.ժամ կամ կրճատումը Ելակետային տարվա համեմատ կազմել է 3.1% (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 5%-ի և նվազագույն 1%-ի դիմաց), ապահովելով նպատակակետը «Լավ» գնահատականով: Հաջորդ տարիներին «Ռամբոլ» ընկերության կողմից կատարված աուդիտի արդյունքում պարզվել է, որ նպատակետերը զգալիորեն գերազանցվել են: 2-րդ տարում սպառումը գնահատվել է 211.5 մլն կվտ.ժամ կամ 1 մլն մ³ սպառված ջրի համար էներգիայի տեսակարար ծախսը կրճատվել է 24%-ով (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 15%-ի և նվազագույն 5%-ի դիմաց), իսկ 3-րդ տարում՝ 197.9 մլն կվտ.ժամ կամ 37.6% կրճատում (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 20%-ի և նվազագույն 15%-ի դիմաց):

Պայմանագրային 4-րդ տարվա համար Աուդիտորի նախնական հաշվարկի համաձայն՝ էլեկտրաէներգիայի սպառման կրճատումը Ելակետային տարվա համեմատ կազմել է 29.7%՝ գերազանցելով ԿՊ-ի առավելագույն 25% և նվազագույն 20% նպատակակետը:

3. Ջրաչափերի տեղադրում աղբյուրներում

Այս ցուցանիշի ապահովումը 100%-ով նախատեսված էր պայմանագրային 1-ին տարում, որի իրականացման նպատակով Օպերատորի կողմից ներկայացվել է «Ջրարտադրության չափումների ծրագիրը» (ԿՊ-ով նախատեսված էր մինչև 2000թ. հոկտեմբերի 31-ը, ներկայացվել է 2000թ. նոյեմբերի 15-ին), որով նախատեսել է բոլոր ջրաղբյուրներում հիմնական ջրատարների վրա հոսքաչափերի տեղադրում: Օպերատորի կողմից այս հոսքաչափերի գնման մրցույթն «Ընթացիկ ներդրումների» պլանով նախատեսվել էր սկսել 2000թ. հոկտեմբերին: Այնուհետև

2000թ. հոկտեմբերի 31-ին կնքվել է մատակարարման պայմանագիր: 2001թ. ապրիլին դրանք ներմուծվել են հանրապետություն, սակայն ժամանակին չեն տեղադրվել, քանի որ, չնայած ստանդարտացման ծառայությունը տվել էր ջրաչափերի ներմուծման թույլտվություն, սակայն նախքան տեղադրումը՝ անհրաժեշտ էր կատարել սերտիֆիկացում: Հարկ է նշել, որ Ռուսաստանում և Բելառուսում այդ հոսքաչափերին տրված սերտիֆիկատներն ուժի մեջ են մաս ԱՊՀ այլ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Ժամանակին չտեղադրման պատճառ է հանդիսացել մաս ջրաչափերի տեղադրման շինարարական աշխատանքների համար ՀՀ կառավարության կողմից ձգձգվող համաֆինանսավորումը: Այդ աշխատանքներն ավարտվել են պայմանագրային 2-րդ տարվա ընթացքում:

4. Առևտրային ջրաչափերի տեղադրում

Այս ցուցանիշի համար 1-ին պայմանագրային տարում նպատակակետ սահմանված չէ: Պայմանագրային 2-րդ տարում տեղադրվել է 6137 հատ ջրաչափ, (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 5000-ի և նվազագույն 3000-ի դիմաց): Պայմանագրային 3-րդ տարվա նպատակակետը ևս զգալի գերազանցվել է՝ շնորհիվ 1999թ. մարտի 14-ի ՀՀ կառավարության թիվ 149 և 2002թ. ՀՀ կառավարության հունվարի 24-ի թիվ 55 որոշումների, ինչպես նաև՝ 2002թ. նոյեմբերի 6-ի «Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի և դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1950-ն որոշման կիրարկման: ԿՊ-ով նախատեսված առավելագույն 7000-ի և նվազագույն 5000-ի դիմաց տեղադրված ջրաչափերի ընդհանուր թիվը կազմել է 48720 հատ:

Աուդիտորի նախնական հաշվարկներով պայմանագրային 4-րդ տարում տեղադրվել է 271387 հատ ջրաչափ:

5. Ցանցի հետազոտություն՝ հոսակորուստները վերացնելու նպատակով

ԿՊ-ով նախատեսվել է 1500 կմ ընդհանուր երկարությամբ ջրագծերի հետազոտություն՝ հոսակորուստների հայտնաբերման և վերացման նպատակով: Այս աշխատանքին ուղղակիորեն առնչվում է Օպերատորի կողմից ներկայացված «Ապօրինի միացումների ծրագիրը» (ներկայացումը ԿՊ-ով նախատեսվել էր Սեկնարկային ամսաթվից հետո 90 օրից ոչ ուշ՝ մինչև 2000թ. հուլիսի 31-ը, ներկայացվել է 2000թ. օգոստոսին):

- Ծրագիրն իրականացվել է բաշխիչ ցանցում մասնաճյուղերի ուսուցանված խմբերի կողմից հետևյալ ընթացակարգով՝ ջրագծերի հետազոտում՝ դիտահորերի և փականների հոսքերը հայտնաբերելու նպատակով, այնուհետև լրացուցիչ հետազոտություն՝ հոսակորուստների որոնման սարքի կիրառմամբ:

Պայմանագրային 1-ին տարում կատարվել է 510 կմ ջրագծի հետազոտություն (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 500 կմ և նվազագույն 300 կմ-ի դիմաց)՝ «դիտահորերի հետազոտման» մեթոդով: Ուսումնասիրվել է 3260 հոր, հայտնաբերվել է 252 դեպք: 2-րդ տարում

755 կմ-ի վրա (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 750 կմ և նվազագույն 600 կմ-ի դիմաց) հետազոտվել է 1301 դիտահոր, հայտնաբերվել՝ 220 դեպք: Սակայն պայմանագրային 2-րդ տարվա Առդիտը չի ընդունել այս մեթոդը, որը համարվել է անարդյունավետ, քանի որ մեծ երկարությունների դեպքում հոսակորուստներ ունեցող հատվածների բացահայտումը պրակտիկորեն անհնարին է: Ցուցանիշը գնահատվել է «0»: Առդիտորն առաջարկել է նոր մեթոդ, որն իրենից ներկայացնում էր 24-ժամյա ջրամատակարարման դեպքում գիշերվա կոնկրետ ժամանակահատվածում ջրամբարներից հոսքի չափում: Սակայն ԾՂԳ-ի, Օպերատորի և ԵԶԿ ՓԲԸ-ի մասնագետների քննարկումների արդյունքում պարզվել է, որ այս մեթոդը հստակ արդյունք չի կարող տալ մի քանի տեխնիկական պատճառներով՝ գրաֆիկով ջուր ստացողների մոտ ծորակները կարող են բաց թողնված լինել, ցանցում առկա են չաշխատող փականներ, և գիշերվա ընթացքում ջրամբարում փականը բաց թողնելու արդյունքում ջրի քանակի նվազման պատճառը հնարավոր չի լինի պարզել՝ իրոք հոսակորուստ է բաշխիչ ցանցից, շենքերի ներքին ցանցից, թե՛ անարդյունավետ օգտագործում:

Հետագայում, ԾԿԽ-ի կողմից Ծրագրի նպատակակետերին հասնելու ռազմավարությունում կատարվել են որոշ փոփոխություններ, առավել հրատապ և կարևոր են համարվել ջրամատակարարման տևողության ավելացման, բաշխիչ ցանցի գոտիավորման և ջրի ամբողջական հաշվառման համակարգի ստեղծման խնդիրները, որոնք ուղղակիորեն կհանգեցնեն հոսակորուստների հայտնաբերմանը: Այսպես, Պայմանագրային 3-րդ տարվա համար, համաձայն 2003թ. հունիսի սկզբին հաստատված ԿՊ-ի «Լրացում թիվ 5-ի», «Հոսակորուստների հայտնաբերման նպատակով ցանցի հետազոտություն» կատարողական ցուցանիշը փոխարինվել է հետևյալներով՝ «Մայր ջրատարներում հոսակորուստների հայտնաբերում՝ 250 կմ երկարությամբ ջրագծի վրա» և «Ամբողջական ջրաչափական համակարգի ստեղծում՝ ջրաղբյուրից մինչև սպառող»: Պայմանագրային 3-րդ տարվա ընթացքում դիտարկվել է 253.7 կմ, հայտնաբերվել և վերացվել է 77 հոսակորուստ, վերացվել կամ օրինականացվել է 40 ապօրինի միացում:

Ըստ Առդիտորի նախնական գնահատման՝ ԿՊ-ի 4-րդ տարվա ընթացքում հոսակորուստի որոնման սարքի միջոցով հոսակորուստների հայտնաբերում չի իրականացվել, և Օպերատորի կողմից նպատակակետը չի նվաճվել (ըստ ԿՊ-ի՝ նվազագույն նպատակակետն էր 150 կմ և առավելագույնը՝ 250 կմ) և ցուցանիշը գնահատվել է «0»:

6. Ամբողջական ջրաչափական համակարգի ստեղծում

Այս ցուցանիշով ԿՊ-ի 4-րդ տարվա համար սահմանված է առավելագույն 59400 և նվազագույն 40000 ջրաչափերի տեղադրում: Առդիտորի նախնական գնահատմամբ տեղադրվել է 50005 հատ ջրաչափ (առևտրային բաժանորդներ, բյուջետային հիմնարկներ, սեփական տներ, բազմաբնակարան շենքերի մուտքագծեր), որն արժանացել է «բավարար» գնահատականի:

7. Համակարգի քարտեզագրում

ԿՊ-ի 1-ին տարում նախատեսված է 100% նպատակակետ «Ջրատարների ու կոյուղու մայրուղիների և ՕԿՁ-ի քարտեզագրման» և «Ջրի բաշխման և կոյուղաջրերի հավաքման համակարգերի քարտեզագրման համապարփակ պլանի» նախապատրաստման համար:

Պայմանագրային 1-ին տարում ԵՋԿ ՓԲԸ-ի Օպերատորի կողմից կատարվել է ջրաղբյուրների և ՕԿՁ-ների նախնական քարտեզագրում, պատրաստվել են համակարգչային քարտեզների ուրվագծերը, իրականացվել են գրանցման, օբյեկտների տվյալների բազայի ստեղծման և վերջինիս նորացման աշխատանքները: Սակայն ցուցանիշը նպատակակետին չի հասել՝ ԵՋԿ ՓԲԸ-ում առկա քարտեզների գաղտնագերծման ձգձգման և դրանց տրամադրման ուշացման պատճառով (տրամադրվել են 2001թ. փետրվարի 23-ին՝ գաղտնիության պահպանման պայմանով): Երևան քաղաքի բաշխիչ ցանցի քարտեզագրման համապարփակ պլանի ներկայացումն Առողիտորի կողմից համարվել է աննպատակահարմար: Չնայած բաշխման համակարգի քարտեզագրում պայմանագրով չէր պահանջվում, սակայն Օպերատորի կողմից կազմվել են որոշ սխեմատիկ պլաններ, որոնք անհրաժեշտ էին ցանցի կառավարման, մոդելավորման, գոտիավորման համար և որոնք անընդհատ լրացվում են մասնաճյուղերից ստացվող ճշտված տվյալների հիման վրա: Չնայած դրանք մանրամասն և ճշգրիտ չեն, սակայն, այլընտրանք չունենալով, ներկայումս օգտագործվում են:

Քանի որ բաշխիչ ցանցի քարտեզագրման մանրամասն աշխատանքները ժամանակատար և թանկ են (մասնագետների գնահատմամբ դրանց արժեքը կկազմի մոտ 3 մլն ԱՄՆ դոլար), Առողիտորի կարծիքով գումարներն ավելի նպատակահարմար է ծախսել ջրմուղ-կոյուղու համակարգերի իրական բարելավման վրա: Ավելի արդյունավետ լուծում է համարվում Երևանի քաղաքապետարանի ղեկավարությամբ քաղաքի թվային քարտեզագրումը և աշխարհագրական-տեղեկատվական համակարգի ստեղծումը, որը կընդգրկի տարբեր կոմունալ ծառայություններ՝ ջրմուղ-կոյուղու, էլեկտրաէներգիայի, գազի և այլն:

Ներկայումս «Հայջրնախագիծ» և «Կոմուննախագիծ» ինստիտուտների կողմից ավարտվել են համապատասխանաբար «Մայր ջրատարների» և «ԵՋԿ ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 23 գյուղերի ներքին ջրամատակարարման ցանցերի» քարտեզագրման աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան 2-րդ վարկային ծրագրի շրջանակներում դրանց վերակառուցման և գոտիավորման աշխատանքների կազմակերպման համար:

8. Ջրի վարձավճարների հավաքման մակարդակի քարտեզավում

ԿՊ-ով, որպես հավաքման ցուցանիշ, սահմանվել է տվյալ ժամանակահատվածի համար հավաքված գումարի և հաշվարկված հասույթի հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով:

Օպերատորի կողմից ներկայացվել են այս ցուցանիշի իրականացման հետ կապված հետևյալ ծրագրերը՝ «Աբոնեմտների սպասարկման, հաշիվների կազմման և հավաքագրման ծրագիր» (ԿՊ-ով նախատեսված էր 2000թ. հուլիսի 31-ին, ներկայացվել է օգոստոսի 21-ին), «Հաշիվների կազմման և հաշիվների ցուցակավորման ընթացակարգ», «Ջրարտադրության

չափումների ծրագիր», «Սպառման գնահատման պլան» (այս երեք ծրագրերի ներկայացումը ԿՊ-ով նախատեսված էր մեկնարկային ամսաթվից 6 ամսից ոչ ուշ՝ մինչև 2000թ. հոկտեմբերի 31-ը, ներկայացվել են 2000թ. նոյեմբերի 15-ին), «Հավաքագրումը մինչև 95% բարելավելու ծրագիր» (ԿՊ-ով նախատեսված էր մինչև 2001թ. մայիսի 1-ը, ներկայացվել է 2001թ. ապրիլի 30-ին), մշակվել է «Հավաքագրման խրախուսիչ մեխանիզմների ժամանակավոր կարգ» (ԿՊ-ով նախատեսված էր մեկնարկային ամսաթվից հետո 6 ամսից ոչ ուշ՝ մինչև 2000թ. հոկտեմբերի 31-ը, ներկայացվել է 2000թ. դեկտեմբերի 28-ին):

Ջրի վարձավճարների ցուցանիշի հաշվարկը կատարվում է՝ ԿՊ-ի խրախուսիչ պարզևատրման մասին «Հավելված N 9»-ով սահմանված մեթոդի և ՀՀ իշխանությունների ու «Էյ. Յուբիլիթի»-ի միջև 2001թ. նոյեմբերի 20-ին ստորագրված Փոխհամաձայնությունների Հուշագրով ձեռքբերված պայմանավորվածությունների համաձայն:

ԿՊ-ի 1-ին տարում ջրի վարձավճարների հավաքումը կազմել էր 19.5% («Վատ»-ից ցածր)՝ նախատեսված առավելագույն 55%-ի և նվազագույն 35%-ի դիմաց: Գնահատումը կատարվել է մինչև 20.11.2001թ. «Փոխհամաձայնության Հուշագիրը» ստորագրելը: Նշված Հուշագրով կողմերի միջև ձեռք են բերվել հետևյալ փոխհամաձայնությունները.

- Մինչև Օպերատորի կողմից շենքային ջրաչափերի տեղադրումը ջրի վարձավճարների հավաքումը կազմակերպել ՀՀ գործող օրենսդրության համաձայն: Սակայն Օպերատորի հավաքման կատարողական ցուցանիշը 2002թ. հաշվարկել՝ հիմք ընդունելով մարդահամարի արդյունքներով ճշտված փաստացի թվաքանակը, համարելով 2001թ. հոկտեմբեր ամսվա մարդահամարի բնակչության թվի և ԿՊ-ի մրցույթի ժամանակ առկա տվյալների (1.3 մլն բնակիչ) միջև տարբերության տոկոսը՝ որպես 100% հավաքած, և ավելացնելով այն բնակչության մասով հավաքված տոկոսին: Հաշվի առնելով, որ անհրաժեշտ օրենսդրական դաշտը կստեղծվի մինչև պայմանագրային 2-րդ տարվա վերջը, իսկ համաֆինանսավորման խնդիրը պայմանագրային 2-րդ տարվա անցած ժամանակաշրջանում դեռևս լուծված չէ, ընդունելի է համարվել Օպերատորի առաջարկությունը՝ պայմանագրային 2-րդ տարում 15%-ով ավելացնել ընդհանուր հավաքման ցուցանիշը:
- 2003-2004թթ. ջրաչափ չունեցող բնակչության համար կատարողական ցուցանիշի հաշվարկման մեթոդը պետք է լինի նույնը, ինչ որ կիրառվում է պայմանագրային 2-րդ տարում և այն ուժի մեջ կլինի մինչև ոլորտի իրավական բարեփոխումների լիովին իրականացումը:
- Օպերատորի հավաքման կատարողական ցուցանիշները հաշվարկելիս՝ «Հայջրնուդկոյուդի» ՓԲԸ-ի, բյուջետային կազմակերպությունների և ջեռուցման պետական ընկերությունների կողմից՝ ԵՋԿ ՓԲԸ-ի հաշվարկված հասույթի (մատակարարված ջրաքանակի արժեքի) մեծությունները պայմանականորեն ընդունել որպես ԵՋԿ ՓԲԸ-ին վճարված գումարներ և դրանք հաշվարկել ջրի վարձավճարների հավաքման գումարներում:

Միաժամանակ, «Փոխհամաձայնությունների Հուշագրով» կողմերը ստանձնել են պայմանագրային ցուցանիշների կատարումն ապահովող պարտավորություններ:

Ջրի վարձավճարների հավաքման ցուցանիշը պայմանագրային 2-րդ տարում հասցվել է 31%-ի, իսկ վերոհիշյալ Հուշագրով ընդունված շտկիչ գործոնների կիրառմամբ այն կազմել է 67% (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 65%-ի և նվազագույն 50%-ի դիմաց):

Պայմանագրային 3-րդ տարում ջրի վարձավճարների հավաքման ցուցանիշը կազմել է 54.5%, իսկ շտկիչ գործոնների կիրառման դեպքում՝ 62.9% (ԿՊ-ով նախատեսված առավելագույն 75%-ի և նվազագույն 60%-ի դիմաց), այսինքն՝ 2-րդ տարվա (31%-ի) համեմատությամբ ցուցանիշի կատարումը նկատելիորեն բարելավվել է:

Աուդիտորի նախնական հաշվարկներով՝ պայմանագրային 4-րդ տարում ջրի վարձավճարների հավաքումը գերազանցել է ԿՊ-ով նախատեսված նվազագույն 65%-ն ու առավելագույն 85%-ը և կազմել է 115.9%:

9. «Շահագործման նորմատիվների» և «Շահագործման ու պահպանման ձեռնարկների» մշակում

Այս ցուցանիշների իրականացումը ԿՊ-ով նախատեսված էր պայմանագրային 1-ին տարում՝ 100%-ով, իսկ ներկայացնելը՝ Պայմանագրի մեկնարկային ամսաթվից հետո 1 տարուց ոչ ուշ, այսինքն՝ մինչև 2001թ.-ի մայիսի 1-ը: Ներկայացվել են 2001թ.-ի ապրիլի 30-ին: Սակայն դրանք ԾՂԳ-ի կողմից բավարար չեն համարվել և չեն հաստատվել: Վերանայված տարբերակները ներկայացվել են միայն 2002թ. ապրիլին, որի հետևանքով 1-ին տարում այս ցուցանիշները գնահատվել են «0»:

10. Էլեկտրատներգիայի պլան

Այս ծրագրի ներկայացումը նախատեսված էր Պայմանագրի մեկնարկային ամսաթվից հետո 150 օրից ոչ ուշ, այն է՝ մինչև 2000թ. սեպտեմբերի 30-ը: Ծրագիրը ներկայացվել է 2000թ. սեպտեմբերի 27-ին: Վերանայված տարբերակը ներկայացվել է 2000թ. նոյեմբերի 17-ին: Ցուցանիշը գնահատվել է «վատ»:

11. Կադրերի ուսուցման ծրագիր

Ցուցանիշի իրականացումը նախատեսված է 1-ին տարում 100%-ով: Այս ծրագրի ներկայացումը նախատեսված էր Պայմանագրի մեկնարկային օրից հետո 6 ամսից ոչ ուշ, այն է՝ մինչև 2000թ. հոկտեմբերի 31-ը: Ներկայացվել է 2000թ. նոյեմբերի 1-ին: Ցուցանիշը գնահատվել է «գերազանց»:

12. Ավտոմատ հաշվապահական համակարգի մշակում

Ցուցանիշի իրականացումը նախատեսված էր պայմանագրային 1-ին տարում 100%-ով: Այս համակարգը պետք է մշակվեր և ներդրվեր Պայմանագրի մեկնարկային ամսաթվից հետո 1 տարուց ոչ ուշ՝ 2000թ. մայիսի 1-ը: Այն ներդրվել է ժամանակին և գնահատվել է «գերազանց»:

13. Հավաքագրման 95% նպատակակալետը բավարարելու ծրագիր

Ֆուցանիշի իրականացումը նախատեսված էր պայմանագրային 1-ին տարում 100%-ով: Այս ծրագրի ներկայացումը նախատեսված էր նախքան պայմանագրային առաջին տարվա ավարտը, այն է՝ մինչև 2001թ. մայիսի 1-ը: Ներկայացվել է 2001թ. ապրիլի 30-ին: Ֆուցանիշը գնահատվել է «զերազանց»:

14. Օբյեկտների վերաբերյալ տվյալների համակարգչային բազա

Այս ցուցանիշի իրականացումը նախատեսված էր պայմանագրային 1-ին տարում 50%-ով, 2-րդ տարում՝ 100%-ով: Բազայի նախապատրաստումը նախատեսված էր Պայմանագրի մեկնարկային ամսաթվից հետո 2 տարուց ոչ ուշ, այն է՝ մինչև 2002թ. մայիսի 1-ը: Այն կատարվել է ժամանակին և գնահատվել է «զերազանց»:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Չարգացման
Ընկերակցության միջև կնքված նամակ-համաձայնագրի շրջանակներում «Համայնքային
ջրամատակարարում և ջրահեռացում» ծրագրի նախապատրաստման կանխավճարի
իրականացման ընթացքի մասին

Վերահսկողության հիմքը - «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ
Ազգային ժողովի 03.12.2003թ. Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2004
թվականի տարեկան ծրագիրը և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի 15.03.2004թ. թիվ 64
հրամանը:

Վերահսկողության նպատակը - «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման
ծրագրի» նախապատրաստման կանխավճարի (այսուհետ՝ Կանխավճարային ծրագիր)
իրականացման ընթացքը:

Վերահսկողության օբյեկտները - «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների
ԾԻԳ» պետական հիմնարկ (այսուհետ՝ ԾԻԳ, տնօրեն՝ Ա. Դևազարյան):

1. Կանխավճարային ծրագրի նպատակները և տրամադրման պայմանները

Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության (այսուհետ՝
ՄՉԸ) միջև «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի» կանխավճարի N
Q287-AM նամակ-համաձայնագիրը կնքվել է 18.09.2001թ., որը ՀՀ Ազգային ժողովի կողմից
վավերացվել է 06.11.2001թ.-ին:

Կանխավճարի նպատակն է՝ Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման
ծառայությունների զարգացման ծրագրի նախապատրաստման աշխատանքների ապահովումը,
մասնավորապես՝

- Մասնավոր օպերատոր վարձելու նպատակով ֆինանսական, տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի հետազոտությունների, ինչպես նաև՝ մրցութային փաստաթղթեր պատրաստելու համար խորհրդատվական ծառայությունների տրամադրում,
- Օգտագործվող ջրի ծավալը գրանցելու նպատակով հաշվառման փորձնական ծրագրերի կազմում, ջրաչափերի տեղադրում և դրանց հետ կապված շինարարական աշխատանքների կազմակերպում,

- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար տրանսպորտային միջոցների և սարքավորումների ձեռքբերում:

Նամակ-համաձայնագրով Կանխավճարի ծրագրի ավարտը սահմանվել է 2003թ. հունվարի 31-ը:

Կանխավճարից մասհանված և հետ չվճարված գումարների դիմաց Հայաստանի Հանրապետությունը պետք է վճարի ծառայության վճար՝ տարեկան 0.75%-ի չափով:

2. Կանխավճարային ծրագրի կատեգորիաները

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են նամակ-համաձայնագրով նախատեսված միջոցների բաշխումն ըստ կատեգորիաների:

Աղյուսակ 1
Կանխավճարի գումարի բաշխումն ըստ կատեգորիաների
(ԱՄՆ դոլար)

<i>Կատեգորիաներ</i>	<i>Գումարը</i>	<i>Ծախսերի տոկոսը, որը պետք է ֆինանսավորվի</i>
Խորհրդատվական ծառայություններ	480,000.0	100%
Ապրանքներ	560,000.0	Մինչև 2001թ. դեկտեմբերի 31-ը արտասահմանյան և տեղական ծախսերի 100%, իսկ դրանից հետո՝ 80%-ը
Շինարարական աշխատանքներ	90,000.0	Մինչև 2001թ. դեկտեմբերի 31-ը 100%, դրանից հետո՝ 80%-ը
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	65,000.0	Մինչև 2001թ. դեկտեմբերի 31-ը 100%, դրանից հետո՝ 80%-ը
Ընդամենը	1,195.000.0	

2002թ. հունիսի 24-ից՝ հուլիսի 5-ը Հայաստանի Հանրապետություն Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) առաքելության այցի ընթացքում կազմված հուշագրի համաձայն, պայմանավորվածություն է ձեռք բերվել Կանխավճարային ծրագրի համար անհրաժեշտ ջրաչափերի ձեռքբերումն իրականացնել USAID-ի կողմից՝ դրամաշնորհի հաշվին: USAID-ի կողմից ջրաչափերի գնումը պետք է սկսվեր 2002թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, իսկ դրանց մատակարարումը՝ 2003թ.-ի սկզբին: Նշված հուշագրի առաջին հավելվածով, հաշվի առնելով ջրաչափերի ձեռքբերման աղբյուրի փոփոխությունը, կազմվել է Կանխավճարային ծրագրի կատեգորիաների ծախսերի վերաբաշխման նախնական տարբերակ: ՀԲ-ի 14.11.2002թ.-ի գրությամբ Կանխավճարային ծրագրի վերջնաձևով է սահմանվել 2004թ. փետրվարի 29-ը, իսկ կից հավելվածով ներկայացվել է կատեգորիաների վերաբաշխման վերջնական տարբերակը: Վերը նշված գրությունը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատվել է 30.12.2002թ.-ին (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Կանխավճարի գումարի վերաբաշխումն ըստ կատեգորիաների

(ԱՄՆ դոլար)

Կատեգորիաներ	Համաձայնագրով նախատեսված գումարը	ՀՔ-ի առաքելության առաջարկված վերաբաշխումը	ՀՔ-ի և ՀՀ կառավարության հաստատած վերաբաշխումը	Վերաբաշխումից հետո ծախսերի ֆինանսավորման տոկոսը
Խորհրդատվական ծառայություններ	480,000.0	625,000.0	696,000.0	100%
Ապրանքներ	560,000.0	50,000.0	50,000.0	Մինչև 2001թ. դեկտեմբերի 31-ը արտասահմանյան և տեղական ծախսերի 100%, դրանից հետո՝ 80%-ը
Շինարարական աշխատանքներ	90,000.0	420,000.0	349,000.0	Մինչև 2001թ. դեկտեմբերի 31-ը՝ 100%, դրանից հետո՝ 80%-ը
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	65,000.0	100,000.0	100,000.0	Մինչև 2001թ. դեկտեմբերի 31-ը՝ 100%, դրանից հետո՝ 80%-ը
Ընդամենը	1,195.000	1,195.000	1,195.000	

3. Կանխավճարային ծրագրի կատարողականը

2001թ. – Կանխավճարային ծրագիրը փաստացի իրականացվել է 2001թ. դեկտեմբերի 1-ից, և մինչև 2002թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարվել են 12.37 հազ. ԱՄՆ դոլարի վճարումներ, որոնք ուղղվել են Կանխավճարային ծրագրի նախապատրաստման խմբի աշխատավարձի վճարմանը:

ՀՀ 2001թ. պետական բյուջեով Կանխավճարային ծրագրով գումարներ չեն նախատեսվել: ԾԻԳ-ի կողմից չի կազմվել 2001թ. «Աշխատանքային ծրագիր»:

2002թ. - Կանխավճարային ծրագրի իրականացման համար ՀՀ 2002թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է ընդամենը 1,355.0 հազ. ԱՄՆ դոլար, որից ՀՔ-ի միջոցների հաշվին՝ 1,195.0 հազ. ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ բյուջեի հաշվին՝ 160.0 հազ. ԱՄՆ դոլար: Այնուհետև, ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1480-Ն որոշմամբ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման մասնաբաժինը նվազեցվել է 139.8 հազ. ԱՄՆ դոլարով և կազմել 20.2 հազ. ԱՄՆ դոլար:

Արդյունքում, ՀՀ 2002թ. պետական բյուջեով Կանխավճարային ծրագրի իրականացման համար նախատեսվել է 1,215.2 հազ. ԱՄՆ դոլար, որից ՀՔ-ի հաշվին՝ 1,195.0 հազ. ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ բյուջեի հաշվին՝ 20.2 հազ. ԱՄՆ դոլար: Տարվա ընթացքում կատարվել են 400.3 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ (32.9%), իսկ փաստացի վճարումները կազմել են 293.3 հազ. ԱՄՆ դոլար (24.1%) (Աղյուսակ 3):

Կանխավճարային ծրագրի կատարողականը
2002թ.

(հազ. ԱՄՆ դոլար)

Կատեգորիաներ	2002թ. նախատեսված գումարները	2002թ նախատեսված գումարները՝ ներառյալ փոփոխությունը	Կատարված աշխատանքներ	Կատարված վճարումներ	Աշխատանքները նախատեսված գումարների նկատմամբ	Վճարումները նախատեսված գումարների նկատմամբ
1	2	3	4	5	6=4/3	7=5/3
ԸՆԴԱՍԵՆԸ, այդ թվում՝	1,355.0	1,215.2	400.3	293.2	32.9%	24.1%
Շինարարական աշխատանքներ	110.0	90.0	0.0	0.0	0.0%	0.0%
Ապրանքներ	700.0	571.6	54.5	54.5	9.5%	9.5%
Խորհրդատվական ծառայություններ	480.0	480.0	302.9	195.8	63.1%	40.8%
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	65.0	73.6	42.9	42.9	58.3%	58.3%

Կանխավճարի ծրագրի բյուջեի թերակատարման պատճառն այն է, որ 9 ամսվա կտրվածքով չէ պետական բյուջեում չի կատարվել փոփոխություն, և չեն նվազեցվել վարկի հաշվին նախատեսված ծախսերը, չնայած այն հանգամանքին, որ դեռևս հունիս-հուլիս ամիսներին ՀԲ-ի առաքելության այցի ընթացքում պարզ էր, որ գումարի վերաբաշխում է կատարվելու կատեգորիաների միջև, և փոփոխվելու է աշխատանքների պլան-գրաֆիկը, ինչպես նաև՝ Կանխավճարի ծրագրի իրականացման ժամկետը:

2003թ. - Կանխավճարային ծրագրի իրականացման համար չէ 2003թ. պետական բյուջեով նախատեսվել է 909.7 հազ. ԱՄՆ դոլար, որի դիմաց կատարվել են աշխատանքներ՝ 563.9 հազ. ԱՄՆ դոլարի (62%), և վճարումներ՝ 600.9 հազ. ԱՄՆ դոլարի (66.1%) (Աղյուսակ 4):

Կանխավճարային ծրագրի կատարողականը
2003թ.

(հազ. ԱՄՆ դոլար)

Կատեգորիաներ	2003թ. նախատեսված գումարները	Կատարված աշխատանքներ	Կատարված վճարումներ	Աշխատանքները նախատեսված գումարների նկատմամբ	Վճարումները նախատեսված գումարների նկատմամբ
1	2	3	4	5=3/2	6=4/2
ԸՆԴԱՍԵՆԸ	909.7	563.9	600.9	62.0%	66.1%
Շինարարական աշխատանքներ	525.0	149.2	177.2	28.4%	33.7%
Ապրանքներ	8.0	0.0	0.0	0.0%	0.0%
Խորհրդատվական ծառայություններ	297.6	361.4	370.4	121.4%	124.4%
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	79.1	53.3	53.3	67.4%	67.4%

«Շինարարական աշխատանքներ» կատեգորիայով նախատեսված 525.0 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց կատարվել են 149.2 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ (28.4%), և իրականացվել 177.2 հազ. ԱՄՆ դոլարի վճարումներ (33.7%): Թերակատարումը պայմանավորված է այն բանով, որ ջրաչափերի և մոնտաժման ձևավոր մասերի մատակարարումը USAID-ի կողմից չի իրականացվել, և կառավարման խորհուրդը որոշում է կայացրել շինարարական աշխատանքների գծով հայտարարել տեխնիկական ընդմիջում՝ մինչև 2004թ. մարտ ամիսը (կառավարման խորհրդի 25.12.2003թ. թիվ 1/19 արձանագրություն): Անհրաժեշտ է նշել, որ USAID-ի կողմից նշված ապրանքատեսակները մատակարարված չէին մաև 01.04.2004թ. դրությամբ:

«Ապրանքներ» կատեգորիայով նախորդ տարվա մրցույթների արդյունքում գոյացած 8.0 հազ. ԱՄՆ դոլար տնտեսումը պլանավորվել է օգտագործել 2003թ.-ին, սակայն չի օգտագործվել:

«Խորհրդատվական ծառայություններ» կատեգորիայով նախատեսված 297.6 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց իրականացվել են 361.4 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ (121.4%), և կատարվել 370.4 հազ. ԱՄՆ դոլարի վճարումներ (124.4%): Գերավճարը պայմանավորված է նշված կատեգորիայի աշխատանքների ոչ իրատեսական պլանավորմամբ: Այսպես,

- ««Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար մասնավոր օպերատորի պայմանագրի պատրաստում» աշխատանքի համար պլանավորվել է 220.0 հազ. ԱՄՆ դոլար, մինչդեռ այդ աշխատանքի կատարման համար 17.05.2002թ.-ին կնքվել է պայմանագիր՝ 445.0 հազ. ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով՝ ֆրանսիական ICEA կազմակերպության հետ, և պայմանագրի ավարտման ժամկետը նախատեսվել է 20.12.2003թ.-ին: 2002թ.-ի ընթացքում նշված կազմակերպությանը վճարվել է ընդամենը 89.0 հազ. ԱՄՆ դոլար:
- «Ջրաչափման հանգույցների նախագծում» աշխատանքի համար գումար չի պլանավորվել, մինչդեռ 2002թ.-ի հոկտեմբերի 10-ին «Ջինջ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր՝ 84.7 հազ. ԱՄՆ դոլար արժեքով՝ նախագծային աշխատանքներ իրականացնելու համար, որի դիմաց 33.9 հազ. ԱՄՆ դոլար վճարվել է 2002թ. ընթացքում, իսկ 50.8 հազ. ԱՄՆ դոլարը՝ 2003թ. ընթացքում:

2004թ. (առաջին եռամսյակ) – ՀՀ 2004թ. պետական բյուջեով Կանխավճարային ծրագրի իրականացման համար 2004թ. առաջին եռամսյակին նախատեսվել է ընդամենը 89,010.6 հազ. դրամ կամ 151.04 հազ. ԱՄՆ դոլար, որի դիմաց կատարվել են 14.44 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ (9.6%) և իրականացվել 16.0 հազ. ԱՄՆ դոլարի վճարումներ (10.6%) (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5
Կանխավճարային ծրագրի կատարողականը 2004թ. առաջին եռամսյակում
(հազ. ԱՄՆ դոլար)

ՀՀ 2004թ. պետ. բյուջեով առաջին եռամսյակի համար նախատեսված գումարը	Կատարված աշխատանքներ	Կատարված վճարումներ	Աշխատանքները նախատեսված գումարների նկատմամբ	Վճարումները նախատեսված գումարների նկատմամբ
1	2	3	4=2/1	5=3/1
151.04	14.44	16.00	9.6%	10.6%

Թերակատարումը պայմանավորված է USAID-ի կողմից ջրաչափերի չմատակարարմամբ:

Կանխավճարային ծրագրի կատարողականը 01.04.2004թ. դրությամբ - Կանխավճարային ծրագրի սկզբից մինչև 01.04.2004թ.-ը կատարվել են 991.1 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ (75.1%) և իրականացվել 922.5 հազ. ԱՄՆ դոլարի վճարումներ (69.9%) (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Կանխավճարային ծրագրի կատարողականը 01.04.2004թ. դրությամբ

(հազ. ԱՄՆ դոլար)

Կատեգորիաներ	Ծրագրով նախատեսված գումարները	Կատարված աշխատանքներ	Կատարված վճարումներ	Աշխատանքները նախատեսված գումարների նկատմամբ	Վճարումները նախատեսված գումարների նկատմամբ
1	2	3	4	5=3/2	6=4/2
ԸՆԴԱՄԵՆԸ	1,319.7	991.1	922.5	75.1%	69.9%
Շինարարական աշխատանքներ	436.2	151.3	180.9	34.7%	41.8%
Ապրանքներ	62.5	54.5	54.5	87.2%	87.2%
Խորհրդատվական ծառայություններ	696.0	664.3	566.2	95.4%	81.3%
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	125.0	121.0	120.9	96.8%	96.7%

2004թ. ապրիլի 1-ի դրությամբ Կանխավճարային ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները հիմնականում իրականացվել են, բացի շինարարական աշխատանքներից, քանի որ ջրաչափերը և ձևավոր մասերը USAID-ի կողմից չեն տրամադրվել շինարարությունն իրականացնող կազմակերպություններին: ՀԲ-ը, հաշվի առնելով իրավիճակը, Կանխավճարային ծրագրի վերջնաժամկետը երկարաձգել է մինչև 04.12.2004թ.-ը:

Ելնելով Կանխավճարային ծրագրի արդյունքներից, ՀԲ-ի պատվիրակությունը սկսել է բանակցային գործընթացը ՀՀ կառավարության հետ՝ «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման» հիմնական վարկային ծրագրի իրականացման շուրջ:

4. Օրենսդրական և նորմատիվ կանոնակարգման

խախտումների վերաբերյալ

- ՀՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշմամբ հաստատված «Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող և իրականացվող ծրագրերի կառավարման խորհուրդների օրինակելի կանոնադրության» 20-րդ կետի պահանջը չի կատարվել՝ կառավարման խորհրդի հաստատմանը չեն ներկայացվել ԾԻԳ-ի կողմից կազմված մրցույթի հայտահրավերները:
- Չի կատարվել նաև նույն կանոնադրության 10-րդ կետի պահանջները՝ 2001թ.-ի դեկտեմբերի 1-ից մինչև 2004թ.-ի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում «Ջրային

տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կառավարման խորհրդի կողմից հրավիրված 27 նիստերից միայն 15-ում են քննարկվել «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման» ծրագրի ընթացքի վերաբերյալ հարցեր, ամենամսյա քննարկումների փոխարեն:

5. Կապալի մրցույթների վերաբերյալ

Շինարարական աշխատանքների իրականացման նպատակով անցկացված տեղական մրցութային սակարկությունների առաջարկների գնահատումն իրականացնող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել մի շարք բացթողումներ և թերություններ: Այսպես,

- Մրցութային սակարկություններին մասնակցած կազմակերպություններից «Գորիսի ջրատարչին» ՍՊԸ և «Հիդրոշինարար-5» ՓԲԸ կազմակերպությունների կողմից մրցութային առաջարկների փաթեթներում ներկայացված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների իսկությունը ոչ տարածքային հարկային մարմինների և ոչ էլ անկախ աուդիտորական կազմակերպության կողմից հաստատված չէ:
- «Ջրաչափական հանգույցների կառուցում Արագածոտնի և Արմավիրի մարզերում» DW/CW-03/004 և «Լոռու ու Շիրակի մարզերում» DW/CW-03/003 ծրագրերով հաղթող է ճանաչվել «Մ. Սիսակյան» ՍՊԸ-ն: Սակայն մրցութային առաջարկի փաթեթում ներկայացվել է պետական բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, համաձայն որի 2003թ. ապրիլի 1-ի դրությամբ ընկերության պարտավորությունը կազմել է 1,128.9 հազ. դրամ: Նշված կազմակերպության կողմից մրցութային առաջարկի փաթեթում չի ներկայացվել նաև «Պարտավորագիր»՝ ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի թիվ 2125-Ն որոշմամբ հաստատված պարտադիր հավաստման ենթակա շինարարական արտադրանքի ցանկի վերաբերյալ: Ֆինանսական արդյունքների մասին 2000, 2001 և 2002թթ. տարեկան Ձև 2 հաշվետվությունները չեն ներկայացվել, և նշված փաստերը մրցութային հանձնաժողովի կողմից համարվել են ոչ էական թերություններ:
- «Ջրաչափական հանգույցների կառուցում Արարատի մարզում» DW/CW-03/005 ծրագրի համար անցկացված մրցույթում հաղթող է ճանաչվել «Բաղրամյանշին» ԲԲԸ և «Արևշատ Ա» ՍՊԸ կոնսորցիումը: Մրցութային տվյալների 4.5(ա)-ի համաձայն, կազմակերպության յուրաքանչյուր տարվա շինարարական աշխատանքների ծավալը պետք է կազմի 375.0 հազ. ԱՄՆ դոլար: Սակայն 2001թ.-ին կոնսորցիումի կողմից իրականացված շինարարական աշխատանքների ծավալը կազմել է ընդամենը 304.2 հազ. ԱՄՆ դոլար (168,869.0 հազ. դրամ / 555.08), որը մրցութային հանձնաժողովի կողմից դիտվել է որպես ոչ էական թերություն:

6. Հաշվետվությունների վերաբերյալ

2001թ. - ԾԻԳ-ի կողմից չի կազմվել և ՀՀ կառավարություն չի ներկայացվել 2001թ. Կանխավճարային ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն:

2002թ. - ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1480-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել «ՀՀ 2002թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2002թ. թիվ 172 որոշման մեջ, համաձայն որի ՀԲ-ի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող Կանխավճարային ծրագրին ՀՀ կառավարության մասնակցությունը տարեկան կտրվածքով նվազել է 78,680.4 հազ. դրամով: Սակայն ԾԻԳ-ի կողմից «Աշխատանքային ծրագրում» համապատասխան փոփոխություններ չեն կատարվել: Կանխավճարային ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում նշված փոփոխությունները չեն արտացոլվել (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

2002թ. հաշվետվությունների անճշտությունները

(հազ. ԱՄՆ դոլար)

	<i>Համաձայնագրով նախատեսված գումարը</i>	<i>ՀՀ կառավարության 2002թ. թիվ 1480-Ն որոշման փոփոխությամբ</i>	<i>ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններով նախատեսված գումարը</i>	<i>Տարբերությունը</i>
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5=3-4</i>
ԸՆԴԱՄԵՆԸ՝ այդ թվում	1,373.7	1,215.2	1,355.0	-139.8
Վարկի միջոցների հաշվին	1,195.0	1195.0	1,195.0	0.0
ՀՀ բյուջեի հաշվին	178.7	20.2	160.0	-139.8

2003թ. - «ՀՀ 2003թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 06.02.2003թ. թիվ 184 որոշմամբ Կանխավճարային ծրագրով նախատեսվել է ընդամենը 533,454.0 հազ. դրամ կամ 909.7 հազ. ԱՄՆ դոլար:

Սակայն ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված 2003թ. Կանխավճարային ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններում, սկսած մայիս ամսից, հաշվետու տարում նախատեսված գումարը ցույց է տրվել ընդամենը 974.6 հազ. ԱՄՆ դոլար, այդ թվում՝ վարկի հաշվին՝ 869.9 հազ. ԱՄՆ դոլար, ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման հաշվին՝ 104.7 հազ. ԱՄՆ դոլար:

ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվությամբ և ՀՀ կառավարության թիվ 184 որոշմամբ նախատեսված գումարների միջև տարբերությունն արտացոլված է Աղյուսակ 8-ում:

2003թ. հաշվետվությունների անճշտությունները

(հազ. ԱՄՆ դոլար)

	ՀՀ 2003թ. պետական բյուջեով նախատեսված գումարը	ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվությանը նախատեսված գումարը (2003թ. համար)	Տարբերությունը
1	2	3	4=3-2
Ընդամենը	909.7	974.6	64.9
Վարկի հաշվին	787.3	869.9	82.6
ՀՀ բյուջեի հաշվին	122.4	104.7	-17.7

2004թ. – ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացվող 2004թ. հաշվետվությունների ձև 3-ով ցույց է տրվել հաշվետու տարվա ծրագրով նախատեսված ծախսեր՝ 1,510.5 հազ. ԱՄՆ դոլար, մինչդեռ ամբողջ Կանխավճարային ծրագրով նախատեսված ծախսը կազմել է ընդամենը 1,319.7 հազ. ԱՄՆ դոլար, և 01.01.2004թ. դրությամբ արդեն իսկ կատարվել են 906.6 հազ. ԱՄՆ դոլարի վճարումներ, ուստի 2004թ. համար նախատեսված գումարը պետք է կազմեր 413.1 հազ. ԱՄՆ դոլար (1,319.7-906.6): Նշված շեղումը (1,510.5-413.1) պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված ծախսերում պլանավորվել է նաև հիմնական (ոչ կանխավճարային) վարկի գումարի ծախս, չնայած որ հիմնական վարկի համաձայնագիրը ՀՀ կառավարության և ՀԲ-ի միջև դեռևս ստորագված չէ:

Հարկ է նշել նաև, որ նույն գումարը (1,510.5 հազ. ԱՄՆ դոլար) ՀՀ կառավարությունը նույնպես նախատեսել է ՀՀ 2004թ. պետական բյուջեում՝ համաձայնագրի բացակայության պայմաններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունն ընդգրկել է վերահսկողության ընթացքում ԾԻԳ-ի պաշտոնատար անձանց մասնակցությամբ կազմված թվով 4 (չորս) նախնական/միջանկյալ արձանագրություններում արտացոլված վերահսկողության արդյունքները:

Վերահսկողության վերջնական արդյունքներին ԾԻԳ-ի ղեկավար Ա. Ղազարյանը ծանոթացել է 19.04.2004թ., առարկություններ և դիտողություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Ծրագրի իրականացման ընթացքում թույլ են տրվել թերություններ և որոշ նորմատիվ կանոնակարգման խախտումներ:

1. 2002թ. ծրագրի բյուջեն կատարվել է ընդամենը 24.1%-ով այն պատճառով, որ 9 ամսվա կտրվածքով ՀՀ պետական բյուջեում չի կատարվել փոփոխություն, և չեն նվազեցվել վարկի հաշվին նախատեսված ծախսերը, չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2002թ.

- հունիս-հուլիս ամիսներին ՀԲ-ի առաքելության այցի ընթացքում պարզվել է, որ գումարի վերաբաշխում է կատարվելու կատեգորիաների միջև, և փոփոխվելու է աշխատանքների պլան-գրաֆիկը, ինչպես նաև՝ Կանխավճարի ծրագրի իրականացման ժամկետը:
2. 2003թ. ծրագրի բյուջեն կատարվել է ընդամենը 66.1%-ով, ընդ որում՝ «Շինարարական աշխատանքներ» կատեգորիայով՝ 33.7%-ով: Թերակատարումը պայմանավորված է այն բանով, որ ջրաչափերի և մոնտաժման ձևավոր մասերի մատակարարումը USAID-ի կողմից չի իրականացվել, և Կանխավճարային ծրագրի կառավարման խորհուրդը որոշում է կայացրել շինարարական աշխատանքների գծով հայտարարել տեխնիկական ընդմիջում՝ մինչև 2004թ. մարտ ամիսը: Անհրաժեշտ է նշել, որ USAID-ի կողմից նշված ապրանքատեսակները մատակարարված չէին նաև 01.04.2004թ. դրությամբ:
 3. Աշխատանքների պլանավորումը երբեմն եղել է ոչ իրատեսական: Այսպես,
 - ««Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար մասնավոր օպերատորի պայմանագրի պատրաստում» աշխատանքի համար 2003թ.-ին պլանավորվել է 220.0 հազ. ԱՄՆ դոլար, մինչդեռ այդ աշխատանքի կատարման համար 17.05.2002թ.-ին կնքվել է պայմանագիր՝ 445.0 հազ. ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով (նույն տարվա հոկտեմբերին ավելացվել է 45.2 հազ. ԱՄՆ դոլարով)՝ ֆրանսիական ICEA կազմակերպության հետ, և պայմանագրի ավարտման ժամկետը նախատեսվել է 20.12.2003թ.-ին: 2002թ.-ի ընթացքում նշված կազմակերպությանը վճարվել է ընդամենը 89.0 հազ. ԱՄՆ դոլար:
 - «Ջրաչափման հանգույցների նախագծում» աշխատանքի համար 2003թ.-ին գումար չի պլանավորվել, մինչդեռ 2002թ.-ի հոկտեմբերի 10-ին «Ջինջ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր՝ 84.7 հազ. ԱՄՆ դոլար արժեքով՝ նախագծային աշխատանքներ իրականացնելու համար, որի դիմաց 33.9 հազ. ԱՄՆ դոլարը վճարվել է 2002թ., իսկ 50.8 հազ. ԱՄՆ դոլարը՝ 2003թ. ընթացքում:
 4. ՀՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշմամբ հաստատված՝ «Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող և իրականացվող ծրագրերի կառավարման խորհուրդների օրինակելի կանոնադրության» 20-րդ կետի պահանջը չի կատարվել՝ կառավարման խորհրդի հաստատմանը չեն ներկայացվել ԾԻԳ-ի կողմից կազմված մրցույթի հայտահրավերները:
 5. Չի կատարվել նաև նույն կանոնադրության 10-րդ կետի պահանջները՝ 2001թ.-ի դեկտեմբերի 1-ից մինչև 2004թ.-ի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կառավարման խորհրդի կողմից հրավիրված 27 նիստերից միայն 15-ում են քննարկվել «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման» ծրագրի ընթացքի վերաբերյալ հարցեր՝ ամենամսյա քննարկումների փոխարեն:

6. ՀՀ կառավարություն ներկայացվող ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվություններում տեղ են գտել անճշտություններ: Այսպես,
- 2002թ. համար ՀՀ բյուջեի հաշվին նախատեսված ծախսերը հաշվետվությամբ ցույց է տրվել 160.0 հազ. ԱՄՆ դոլար, մինչդեռ իրականում ՀՀ կառավարության 2002թ. թիվ 1480-Ն որոշմամբ այն կազմել է 20.2 հազ. ԱՄՆ դոլար:
 - ՀՀ 2003թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել է 909.7 հազ. ԱՄՆ դոլարի ծախս, իսկ նույն տվյալը հաշվետվությամբ ցույց է տրվել 974.6 հազ. ԱՄՆ դոլար:
 - ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացվող 2004թ. հաշվետվությունների ձև 3-ով ցույց է տրվել հաշվետու տարվա ծրագրով նախատեսված ծախսեր՝ 1,510.5 հազ. ԱՄՆ դոլար, մինչդեռ ամբողջ Կանխավճարային ծրագրով նախատեսված ծախսը կազմել է ընդամենը 1,319.7 հազ. ԱՄՆ դոլար, և 01.01.2004թ. դրությամբ արդեն իսկ կատարվել են 906.6 հազ. ԱՄՆ դոլարի վճարումներ, ուստի 2004թ. համար նախատեսված գումարը պետք է կազմեր 413.1 հազ. ԱՄՆ դոլար (1,319.7-906.6): Նշված շեղումը (1,510.5-413.1) պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված ծախսերում պլանավորվել է նաև հիմնական (ոչ կանխավճարային) վարկի գումարի ծախս, չնայած որ հիմնական վարկի համաձայնագիրը ՀՀ կառավարության և ՀԲ-ի միջև դեռևս ստորագված չէ:
 - Հարկ է նշել նաև, որ նույն գումարը (1,510.5 հազ. ԱՄՆ դոլար) ՀՀ կառավարությունը նույնպես նախատեսել է ՀՀ 2004թ. պետական բյուջեում՝ համաձայնագրի բացակայության պայմաններում:
7. 2004թ. ապրիլի 1-ի դրությամբ Կանխավճարային ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները հիմնականում իրականացվել են, բացի շինարարական աշխատանքներից, քանի որ ջրաչափերը և ձևավոր մասերը USAID-ի կողմից չեն տրամադրվել շինարարությունն իրականացնող կազմակերպություններին: ՀԲ-ը, հաշվի առնելով իրավիճակը, Կանխավճարային ծրագրի վերջնաժամկետը երկարաձգել է մինչև 04.12.2004թ.-ը:

Ելնելով Կանխավճարային ծրագրի արդյունքներից, ՀԲ-ի պատվիրակությունը սկսել է բանակցային գործընթացը ՀՀ կառավարության հետ՝ «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման» հիմնական վարկային ծրագրի իրականացման շուրջ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կառավարման խորհրդին և ԾԻԳ-ի ղեկավարությանը

1. Ուշադրություն դարձնել տարեկան բյուջեների, դրանց հետագա փոփոխման և ճշտված բյուջեների պլանավորման գործընթացին:
2. Բացառել օրենսդրական և նորմատիվ կանոնակարգման խախտումները:

3. Հետևել ներկայացվող հաշվետվությունների տվյալների իսկությանը, բացառել անճշտությունները:

ՀՀ կառավարությանը

1. Ուշադրություն դարձնել ԾԻԳ-երի կողմից ՀՀ կառավարություն ներկայացվող հաշվետվություններում արտացոլված տվյալների իսկությանը:
2. ՀՀ ԱԺ հաստատմանը ներկայացնելիս, պետական բյուջեով նախատեսել վարկային ծրագրերով այն գումարները, որոնց մասով արդեն իսկ կան կնքված և ՀՀ ԱԺ կողմից վավերացված պայմանագրեր:

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 08.09.2004թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ կառավարություն և ՀՀ կառավարությանն
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Չարգացման Ընկերակցության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Անշարժ գույքի գրանցում» ծրագրի իրականացման ընթացքի մասին

Վերահսկողության հիմքը- «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի 03.12.2003թ. Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2004 թվականի տարեկան ծրագիրը և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի 30.07.2004թ. թիվ 98 հրամանը:

Վերահսկողության նպատակը - «Անշարժ գույքի գրանցում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման ընթացքը:

Վերահսկողության օբյեկտը - «Անշարժ գույքի գրանցման ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (այսուհետ՝ ԾԻԳ, տնօրեն՝ Ա. Աղայանց):

Ուսումնասիրության ժամանակահատվածը - 01.01.2002-01.07.2004թթ. (մինչև 01.01.2002թ. գործունեությունն ուսումնասիրվել է ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի կողմից՝ 2001թ-ին):

1. Ծրագրի նպատակները և տրամադրման պայմանները

Ծրագրի նպատակն է՝ նպաստել մասնավոր հատվածի զարգացմանը՝ ներդնելով քափանցիկ, փաթեթային մոտեցմամբ, հասանելի և հուսալի գրանցման համակարգ՝ հողի և անշարժ գույքի այլ տեսակների համար:

Ծրագրի խնդիրներն են՝

- զարգացնել հողի և այլ անշարժ գույքի նշանակությունը և արտադրողականությունը՝ ապահովելով գույքի նկատմամբ իրավունքների պաշտպանությունը, և նպաստել գյուղական մասնատված հողային սեփականատիրության համախմբմանը,
- զարգացնել տեղեկատվության հասանելիությունը, որը կնվազեցնի գործարքի ծախսերը՝ օտարման և հիպոթեթային ֆինանսավորման ոլորտում:

Ծրագիրը բաղկացած է երեք մասից (բաղադրիչից)։

1. **Մաս Ա** - Տեղեկատվական և գրանցման կենտրոնի ցանցի հիմնում,
2. **Մաս Բ** - Օժանդակություն հանույթային աշխատանքներին և կադաստրային քարտեզագրմանը,
3. **Մաս Գ** - ԾԻԳ-ի ամրապնդում:

Ծրագրի իրականացման նպատակով Միջազգային Չարգացման Ընկերակցության (այսուհետ՝ ՄՉԸ) և Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Փոխառու) միջև 1998թ. դեկտեմբերի 23-ին կնքվել է 6.0 մլն SDR (կամ 8.0 մլն ԱՄՆ դոլար) գումարով վարկային համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 17.03.1999թ.-ին:

Ըստ Համաձայնագրի, Փոխառուն պարտավոր է պարբերաբար մուծել պարտավճար՝ վարկի չառհանված հիմնագումարի դիմաց՝ ՄՉԸ-ի կողմից յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին սահմանվող, բայց ոչ ավելի, քան տարեկան 0.5 տոկոսադրույքով: Վարկի հիմնագումարի առհանումների և չհատուցված պարտքերի դիմաց Փոխառուն պարտավոր է պարբերաբար վճարել սպասարկման վարձ՝ տարեկան 0.75%-ի չափով: Պարտավճարը և սպասարկման վարձը պետք է կատարվեն կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին:

Փոխառուն վարկի հիմնագումարը պարտավոր է հետ վերադարձնել կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին՝ սկսած 2009թ.-ի փետրվարի 1-ից մինչև 2033թ. օգոստոսի 1-ը: Մինչև 2018թ. օգոստոսի 1-ը կատարված և մինչև այդ օրը կատարվելիք մուծումները պետք է կազմեն հիմնագումարի 1.25%-ը, իսկ դրանից հետո՝ 2.5%-ը:

Ծրագրի ավարտը Համաձայնագրով նախատեսվել է 2002թ. դեկտեմբերի 31-ը: Հետագայում Համաձայնագրում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. 2002թ.-ի հոկտեմբերի 4-ին Համաձայնագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2003թ.-ի դեկտեմբերի 31-ը, և փոփոխվել է Համաձայնագրի 1-ին հավելվածը՝ ավելացել է «աշխատանքներ» կատեգորիան, փոփոխվել է 4-րդ կատեգորիայով նախատեսված տարածքային ստորաբաժանումների գործառնական ծախսերի համար նախատեսված վարկի ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը (40%՝ նախկինում հաստատված 20%-ի փոխարեն), ավելացել են «ապրանքներ», «ԾԻԳ-ի գործառնական ծախսեր» կատեգորիաներով սահմանված գումարները՝ ի հաշիվ չբաշխված միջոցների:
2. 2003թ.-ի դեկտեմբերի 3-ին կատարվել են վերաբաշխումներ՝ Համաձայնագրի 1-ին հավելվածով նախատեսված կատեգորիաների միջև:
3. 2003թ.-ի դեկտեմբերի 23-ին Համաձայնագրում կատարվել է փոփոխություն, և «տեխնիկական ծառայություններ» կատեգորիայով նախատեսված արբանյակային հանութագրման աշխատանքների համար ավարտման ժամկետ է սահմանվել 2004թ.-ի սեպտեմբերի 30-ը, իսկ մյուս բոլոր կատեգորիաների համար՝ 2003թ.-ի դեկտեմբերի 31-ը:

2. Ծրագրի կատեգորիաները

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են Համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների բաշխումն ըստ կատեգորիաների, ինչպես նաև՝ ՀԲ-ի կողմից 04.10.2002թ. և 03.12.2003թ. հաստատված վերաբաշխումները:

Աղյուսակ 1

Ծրագրի կատեգորիաները

(SDR)

Կատեգորիաները	<i>Ըստ Համաձայնագրի</i>		<i>04.10.2002թ. փոփոխությունից հետո</i>		<i>03.12.2003թ. փոփոխությունից հետո</i>	
	<i>Վարկային միջոցների բաշխումը</i>	<i>Ֆինանսավորման տոկոսաչափը</i>	<i>Վարկային միջոցների բաշխումը</i>	<i>Ֆինանսավորման տոկոսաչափը</i>	<i>Վարկային միջոցների բաշխումը</i>	<i>Ֆինանսավորման տոկոսաչափը</i>
1	2	3	4	5	6	7
Տեխնիկական ծառայություններ	3,988,000.0	100% արտասահման-յան ծախսերը , 90% տեղական ծախսերը	3,988,000.0	100% արտասահմանյան ծախսերը 90% տեղական ծախսերը	4,316,000.0	100% արտասահմանյան ծախսերը 90% տեղական ծախսերը
Ապրանքներ	399,000.0	100% արտասահման-յան ծախսերը, տեղական ծախսերի 100% (գործարանային արժեքը) և տեղում գնված այլ ապրանքների 90%	720,000.0	100% արտասահմանյան ծախսերը, տեղական ծախսերի 100% (գործարանային արժեքը) և տեղում գնված այլ ապրանքների 90%	793,000.0	100% արտասահմանյան ծախսերը, տեղական ծախսերի 100% (գործարանային արժեքը) և տեղում գնված այլ ապրանքների 90%
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում	592,000.0	100%	592,000.0	100%	524,000.0	100%
Տարածքային ստորաբաժանումների գործառնական ծախսեր	444,000.0	Մինչև 2000թ-ի հունվարի 1-ը ծախսերի 75%-ը, մինչև 2001թ-ի հունվարի 1-ը ծախսերի 60%-ը, մինչև 2002թ-ի հունվարի 1-ը ծախսերի 40%-ը և դրանից հետո կատարված ծախսերի 20%	445,000.0	Մինչև 2000թ-ի հունվարի 1-ը ծախսերի 75%-ը, մինչև 2001թ-ի հունվարի 1-ը ծախսերի 60%-ը, մինչև 2003թ-ի հունվարի 1-ը ծախսերի 40%-ը և դրանից հետո կատարված ծախսերի 20%	173,000.0	Մինչև 2000թ-ի հունվարի 1-ը ծախսերի 75%-ը, մինչև 2001թ-ի հունվարի 1-ը ծախսերի 60%-ը, մինչև 2003թ-ի հունվարի 1-ը ծախսերի 40%-ը և դրանից հետո կատարված ծախսերի 20%
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	51,000.0	100%	75,000.0	100%	113,000.0	100%
Աշխատանքներ	0.0		90,000.0	90%	81,000.0	90%
Չբաշխված միջոցներ	526,000.0		90,000.0		0.0	
Ընդամենը	6,000,000.0		6,000,000.0		6,000,000.0	

3. Ծրագրի կատարողականը

2002թ.

Ծրագրի իրականացման համար 2002թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 2,729.8 հազ. ԱՄՆ դոլար, որի դիմաց տարվա ընթացքում կատարվել են 2,583.0 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ կամ 94.6%-ը, իսկ փաստացի վճարումները կազմել են 2,920.0 հազ. ԱՄՆ դոլար (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2
հազ. ԱՄՆ դոլար

Կատեգորիաները	2002թ-ի բյուջեով նախատեսված գումարները	2002թ-ի ընթացքում կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքները նախատեսվածի նկատմամբ	2002թ-ի ընթացքում կատարված փաստացի վճարումները	Փաստացի վճարումները կատարվածի նկատմամբ
1	2	3	4	5	6
Ընդամենը	2,729.8	2,583.0	94.6%	2,920.0	113.0%
1. Տեխնիկական ծառայություններ	1,759.8	2,008.8	114.1%	2,159.8	107.5%
2. Չեռքբերումներ	160.0	91.9	57.4%	254.0	276.4%
3. Խորհրդատվական ծառայություն	285.2	142.2	49.9%	158.4	111.4%
4. ՏՄ-ների գործառնական ծախսեր	488.6	305.2	62.5%	312.5	102.4%
5. ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	36.2	34.9	96.5%	35.3	101.2%
6. Աշխատանքներ	0.0	0.0	-	0.0	-

«Տեխնիկական ծառայություններ» կատեգորիայով նախատեսվածի նկատմամբ կատարողականների գերակատարման պատճառն այն է, որ 2002թ.-ին իրականացվել են 1999-2001թթ.-ից փոխանցված աշխատանքներ, մասնավորապես՝ տպագրական ծառայության (2001թ.)՝ 301.0 հազ. ԱՄՆ դոլար, քարտեզագրման (1999-2001թթ.)՝ 687.4 հազ. ԱՄՆ դոլար:

«Չեռքբերումներ» կատեգորիայի թերակատարման պատճառն այն է, որ 2002թ.-ին նախատեսված 160.0 հազ. ԱՄՆ դոլար ֆոտոգրամետրիկ կայանի ձեռքբերումը չի իրականացվել, քանի որ տեխնիկական առաջադրանքների և սպեցիֆիկացիաների համաձայնեցումը ՀԲ-ի հետ ձգձգվել է, և աշխատանքները տեղափոխվել են 2003 թվական:

«Խորհրդատվական ծառայություն» կատեգորիայի թերակատարման պատճառն այն է, որ այս կատեգորիայով նախատեսված ծախսերի վերականգնման ռազմավարական աշխատանքների իրականացման համար 2002թ.-ին հաղթող ճանաչված խորհրդատուի հետ գնառաջարկի իջեցման բանակցությունները ձգձգվել են, և հնարավոր է դարձել պայմանագիրը կնքել միայն 2003թ.-ին:

«Տարածքային ստորաբաժանումների գործառնական ծախսեր» կատեգորիայի թերակատարման պատճառն այն է, որ տարածքային ստորաբաժանումների կողմից

իրականացված փաստացի ծախսերը նախատեսվածից ցածր են եղել, կամ կատարվել է տնտեսում:

2003թ.

Ծրագրի իրականացման համար 2003թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 2,159.8 հազ. ԱՄՆ դոլար, որի դիմաց կատարված աշխատանքները կազմել են 2,228.6 ԱՄՆ հազ. դոլար կամ 103.2%-ը, իսկ փաստացի վճարումները կազմել են 1,694.2 հազ. ԱՄՆ դոլար (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3
հազ. ԱՄՆ դոլար

Կատեգորիաները	2003թ-ի բյուջեով նախատեսված գումարները	2003թ-ի ընթացքում կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքները նախատեսվածի նկատմամբ	2003թ-ի ընթացքում կատարված փաստացի վճարումները	Փաստացի վճարումները կատարվածի նկատմամբ
1	2	3	4	5	6
Ընդամենը	2,159.8	2,228.6	103.2%	1,694.2	76.0%
1. Տեխնիկական ծառայություններ	1,134.4	1,279.1	112.8%	1,011.3	79.1%
2. Չեռքբերումներ	255.0	252.3	98.9%	66.0	26.2%
3. Խորհրդատվական ծառայություն	210.5	218.6	103.8%	175.4	80.2%
4. ՏՄ-ների գործառնական ծախսեր	392.6	320.9	81.7%	332.4	103.6%
5. ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	52.3	42.8	82.0%	36.6	85.5%
6. Աշխատանքներ	115.0	114.9	99.9%	72.5	63.1%

«Տեխնիկական ծառայություններ» և «Չեռքբերումներ» կատեգորիաներով կատարված աշխատանքների դիմաց վճարումների ցածր մակարդակը պայմանավորված է այն բանով, որ աշխատանքների մեծ մասն ավարտվել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, սակայն ԾԻԳ-ը դրամական միջոցներ չունենալու պատճառով կատարողականների մի մասի վճարումն իրականացրել է 2004թ.-ին:

2004թ. առաջին կիսամյակ

Ծրագրի իրականացման համար 2004թ-ի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 195.0 հազ. ԱՄՆ դոլար, որից 185.0 հազ. ԱՄՆ դոլարը՝ տեխնիկական ծառայություններ կատեգորիայով՝ նախատեսված արբանյակային հանութագրման աշխատանքների համար, իսկ 10.0 հազ. ԱՄՆ դոլարը՝ ԾԻԳ-ի գործառնական ծախսեր կատեգորիայով՝ 2003թ.-ի աուդիտորական աշխատանքների համար (Աղյուսակ 4):

հազ. ԱՄՆ դոլար

<i>Կատեգորիաները</i>	<i>2004թ-ի առաջին կիսամյակի բյուջեով նախատեսված գումարները</i>	<i>2004թ-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները</i>	<i>2004թ-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարված փաստացի վճարումները</i>
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>
Ընդամենը	195.0	10.0	578.6
1. Տեխնիկական ծառայություններ	185.0	0	290.2
2. Ձեռքբերումներ	0	0	186.3
3. Խորհրդատվական ծառայություն	0	0	43.1
4. ՏՄ-ների գործառնական ծախսեր	0	0	2.3
5. ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	10.0	10.0	15.7
6. Աշխատանքներ	0	0	40.9

Արբանյակային հանութագրման աշխատանքների ավարտման համար 2004թ-ի բյուջեով նախատեսվել է 185.0 հազ. ԱՄՆ դոլար: Սակայն եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով նշված աշխատանքները 01.07.2004թ. դրությամբ ավարտված չէին:

2004թ.-ի առաջին կիսամյակում կատարվել են միայն աուդիտորական աշխատանքները՝ 10.0 հազ ԱՄՆ դոլարի չափով:

2004թ.-ի առաջին կիսամյակում իրականացվել են 578.6 հազ. ԱՄՆ դոլարի վճարումներ՝ նախորդ տարիների կրեդիտորական պարտքերի մարման ուղղությամբ, որից՝ 564.7 հազ. ԱՄՆ դոլարը վճարվել է վարկի, իսկ 13.9 հազ. ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին:

Ծրագրի սկզբից մինչև 01.07.2004թ. կատարողականն արտացոլված է հավելված 1-ում:

ՀՀ-ի և ՄՁԸ-ի միջև կնքված Համաձայնագրով նախատեսվում էր 1999-2003թթ. համար 10,581.0 հազ. ԱՄՆ դոլար, որից 8,000.0 հազ. ԱՄՆ դոլարը՝ ՀԲ-ի, 1,412.4 հազ. ԱՄՆ դոլարը՝ ՀՀ պետական բյուջեի, և 1,168.6 հազ. ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ ԱԳԿՊԿ) բաժնեմասն է: Համաձայնագրով սահմանված 6,000.0 հազ. SDR-ը 1999թ.-ի փոխարժեքով կազմում էր 8,000.0 հազ. ԱՄՆ դոլար, սակայն պայմանավորված SDR-ի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումներով, 2003թ.-ին 6,000.0 հազ SDR-ը 2003թ.-ի հոկտեմբերին ՀԲ-ի առաքելության այցի ժամանակ արդեն կազմում էր 7,884.0 հազ. ԱՄՆ դոլար:

«Տեխնիկական ծառայություններ» կատեգորիայով քարտեզագրման աշխատանքների իրականացման համար հայտարարված ազգային մրցույթների արդյունքում կնքվել են 306

պայմանագիր, որից 1999թ.-ին՝ 26, 2000թ.-ին՝ 61, 2001թ.-ին՝ 102, 2002թ.-ին՝ 80, և 2003թ.-ին՝ 37 պայմանագիր:

Կատարվել են Երևան քաղաքի 230.24 կմ², ՀՀ այլ քաղաքների 463.03 կմ² և 237 գյուղական համայնքների քարտեզագրման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև Արարատի և Արմավիրի մարզերի 194 համայնքներում սահմանների ուսումնասիրման, ճշգրտման, նկարագրման աշխատանքներ, ինչպես նաև Արագածոտնի, Կոտայքի, Արմավիրի և Արարատի մարզերի 375 համայնքներում ջրովի հողերի գույքագրման աշխատանքներ, դրանց համար կնքվել է 23 պայմանագիր: Այդ աշխատանքներն իրականացվել են տնտեսված միջոցների հաշվին:

Ծրագիրն ընդգրկում է Երևան քաղաքը և ՀՀ 10 մարզերը, որը կազմում է 294 համայնք, այդ թվում՝ 12-ը՝ Երևանի թաղային, 45-ը՝ ՀՀ այլ քաղաքների, 237-ը՝ գյուղական համայնքներ: Աշխատանքներն իրականացվել են 46 տարածքային ստորաբաժանումներում, այդ թվում՝ 7-ը՝ Երևանի տարածքում, 39-ը՝ ՀՀ մարզերում:

Ծրագրի շրջանակներում նախատեսված 830.0 հազ. միավորի փոխարեն քարտեզագրվել է 994.5 հազ. միավոր, ուսումնասիրվել՝ 738 հազ. միավոր, կազմվել են կադաստրային գործեր 570 հազ. միավորի նկատմամբ, և առաջին պետական գրանցման շրջանակներում գրանցվել և անվճար սեփականատերերին են տրամադրվել մոտ 407 հազար սեփականության իրավունքի գրանցման վկայականներ: Ընդունված օրենքները, ինչպես նաև՝ այլ նորմատիվ իրավական ակտերն ավելի են պարզեցրել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացը:

Արբանյակային հանութագրման աշխատանքների իրականացման համար 2003թ.-ին հայտարարվել և անց է կացվել միջազգային մրցույթ, որի արդյունքում պայմանագիր է կնքվել գերմանական GAF AG կազմակերպության հետ՝ 305.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով: Կնքված պայմանագրի շրջանակներում պետք է իրականացվեր ՀՀ տարածքի 2400 կմ² արբանյակային հանութագրման աշխատանք, ինչպես նաև ուսուցում՝ արբանյակային պատկերներից քարտեզների ստեղծման ուղղությամբ:

Արբանյակային հանութագրման աշխատանքների ուղղությամբ 2003թ.-ին ներկայացվել է 120.0 հազ. ԱՄՆ դոլարի կատարողական, իսկ 185.0 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ նախատեսվել են Ծրագրի 2004թ.-ի բյուջեում:

Տպագրական ծառայության աշխատանքները Ծրագրի սկզբում նախատեսված չեն եղել, և ԱԳԿՊԿ-ի ու ՀԲ-ի կողմից կարևորվել ու նախատեսվել են 2001թ.-ին՝ ՀԲ-ի առաքելության այցի ժամանակ: 2001թ.-ին կնքված պայմանագրի շրջանակներում տարածքային ստորաբաժանումները ապահովվել են ավելի քան 1 միլիոն կադաստրային գործերի կազմման համար անհրաժեշտ նյութերով (թղթապանակներ, ձևաթղթեր, գրանցման մատյաններ), իսկ 2002թ.-ին կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք են բերվել և տարածքային ստորաբաժանումներին են տրամադրվել մոտ 800 հազար սեփականության իրավունքի գրանցման վկայականներ: 2003թ.-ին այդ ուղղությամբ ձեռք են բերվել 100 հազար սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականներ ավտոմատացված գրանցման համար, գրավի վկայականներ, վարձակալության վկայականներ և տարբեր ձևաթղթեր:

«Չեղբրերումներ» կատեգորիայով նախատեսված 11-ի փոխարեն Ծրագրի շրջանակներում ԱԳԿՊԿ-ի թվով 30 տարածքային ստորաբաժանումների և տեղեկատվական կենտրոնի համար ձեռք են բերվել գրասենյակային, արխիվային կահավորանք, ծրագրեր և անհրաժեշտ սարքավորումներ, արբանյակային հանութագրման աշխատանքների համար անհրաժեշտ ֆոտոգրամետրիկ կայան:

«Ճտրիդրատվական ծառայություններ» կատեգորիայով Ծրագրի շրջանակներում իրականացվող ուսուցման հիմնական նպատակն է՝ անշարժ գույքի առաջին պետական գրանցման ավտոմատացված համակարգի ներդրման համար մասնագետների պատրաստումը՝ ALR, ARPAK ծրագրերով: Այդ նպատակով տեղական մասնագետների միջոցով վերապատրաստվել են կադաստրի տարբեր ոլորտի մասնագետներ, իրականացվել է համակարգի ցանցային ադմինիստրատորների ուսուցում:

«Տարածքային ստորաբաժանումների և տեղեկատվական կենտրոնի գործառնական ծախսեր» կատեգորիայով նախատեսվել է 1,951.5 հազ. ԱՄՆ դոլար, որից՝ 226.0 հազ. ԱՄՆ դոլարը կազմում է վարկի բաժնեմասը, 659.5 հազ. ԱՄՆ դոլարը՝ պետբյուջեի բաժնեմասը, իսկ 1,066.0 հազ. ԱՄՆ դոլարը՝ ԱԳԿՊԿ-ի բաժնեմասը: Այդ ծախսային հոդվածի հիմնական նպատակն է՝ ապահովել տարածքային ստորաբաժանումների և տեղեկատվական կենտրոնի ընթացիկ ծախսերը (կոմունալ ծախսեր, գրասենյակային ապրանքներ, վառելիք և այլն): 01.01.2004թ. դրությամբ այդ կատեգորիայով կատարված աշխատանքները կազմում են 1,558.0 հազ. ԱՄՆ դոլար, որից՝ 223.3 հազ. ԱՄՆ դոլարը վարկի, 205.9 հազ. ԱՄՆ դոլարը՝ պետբյուջեի և 1,128.9 հազ. ԱՄՆ դոլարը՝ ԱԳԿՊԿ-ի բաժնեմասն է:

ԱԳԿՊԿ-ի մասնակցությունը Ծրագրին իրականացվել է միայն այդ կատեգորիայով՝ տարածքային ստորաբաժանումների և տեղեկատվական կենտրոնի աշխատակիցների աշխատավարձի վճարման ուղղությամբ:

Այդ կատեգորիայով պետբյուջեի համաֆինանսավորման մասը ամենամեծն է և, ըստ Համաձայնագրի, պետբյուջեի համաֆինանսավորման տոկոսային հարաբերությունը աճել է ըստ տարիների, մասնավորապես, 1999թ.՝ ՀԲ-ի հաշվին ծախսերի 75% ֆինանսավորում, բյուջեի հաշվին՝ 25% ֆինանսավորում, 2000թ.՝ ՀԲ-ի հաշվին՝ 60 %, բյուջեի հաշվին՝ 40%, 2001թ.՝ ՀԲ-ի հաշվին՝ 40 %, բյուջեի հաշվին՝ 60%, 2002թ.-ին նախատեսվում էր ՀԲ-ի հաշվին 20%, բյուջեի հաշվին 80% հարաբերությունը: Սակայն Համաձայնագրում 04.10.2002թ. կատարված փոփոխությամբ 2002թ-ի համար հաստատվել է ՀԲ-ի հաշվին 40%, բյուջեի հաշվին՝ 60% հարաբերությունը, իսկ 03.12.2003թ. կատարված փոփոխությամբ՝ 2003թ.-ի համար նախատեսվել է ՀԲ-ի հաշվին 20%, բյուջեի հաշվին՝ 80% հարաբերությունը: Նշված փոփոխությունների արդյունքում, ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման բաժնեմասերի տոկոսային իջեցման հետևանքով է առաջացել ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման բաժնեմասի տնտեսումը (հավելված 1):

Ծրագրի իրագործման ավարտի մասին 05.05.2004թ. ՀԲ-ի զեկույցում Ծրագրի արդյունքը գնահատվել է «խիստ գոհացուցիչ»:

4. ԾԻԳ-ի գործառնական ծախսեր

2002թ.-ին ԾԻԳ-ի ծախսերի բոլոր հոդվածների հանրագումարով կատարվել է տնտեսում՝ 825.0 ԱՄՆ դոլար, սակայն, ըստ հոդվածների, թույլ է տրվել գերաժախս՝ հեռախոսային կապի ծառայությունների գծով՝ 1,142.0 ԱՄՆ դոլար, ինտերնետի, տելեքսի և էլեկտրոնային փոստի ծառայությունների գծով՝ 765.0 ԱՄՆ դոլար, էլ. էներգիայի գծով՝ 550.0 ԱՄՆ դոլար, այլ կոմունալ ծախսերի գծով՝ 413.0 ԱՄՆ դոլար:

2003թ.-ին նույն հոդվածներով թույլ է տրվել գերաժախս՝ ընդամենը 1,447.0 ԱՄՆ դոլար (համապատասխանաբար՝ 436.0, 359.0, 300.0, 73.0 և բանկային ծախսերի գծով՝ 279.0 ԱՄՆ դոլար), սակայն բոլոր հոդվածների հանրագումարով կատարվել է տնտեսում՝ 14,722.0 ԱՄՆ դոլարի:

2004թ. ԾԻԳ-ի գործառնական ծախսերն իրականացվել են ԱԳԿՊԿ-ի միջոցներից:

01.07.2004թ. դրությամբ ԾԻԳ-ի կրեդիտորական պարտքերը կազմել են 8,340.0 հազ. դրամ՝ բյուջեի համաֆինանսավորման բաժնեմասով և 90.0 հազ. ԱՄՆ դոլար՝ վարկի բաժնեմասով: Վարկի բաժնեմասով ԾԻԳ-ի պարտքը կազմում է արբանյակային հանութագրման ուղղությամբ՝ ներկայացվել է 120.0 հազ. ԱՄՆ դոլարի կատարողական, որից կատարվել է 30.0 հազ. ԱՄՆ դոլարի կանխավճարի մարում:

Գերիտորական պարտքերը նույն օրվա դրությամբ կազմել են քարտեզագրման գծով՝ 6,058.7 ԱՄՆ դոլար, որից «Շիրակ Էսթեյթ» ՍՊԸ՝ 929.04 ԱՄՆ դոլար, «Տազես» ՍՊԸ՝ 4,649.7 ԱՄՆ դոլար, և «Ստրելկա» ՍՊԸ՝ 480.0 ԱՄՆ դոլար: ԾԻԳ-ը նշված գումարների վերականգնման համար դիմել է դատարան, մասնավորապես, «Շիրակ Էսթեյթ» ՍՊԸ-ի նկատմամբ դատարանը կայացրել է ԾԻԳ-ի օգտին վճիռ, «Տազես» ՍՊԸ-ի նկատմամբ դատարանը նույնպես կայացրել է ԾԻԳ-ի օգտին վճիռ, սակայն կազմակերպությունը դատարանի վճռով սնանկ է ճանաչվել, իսկ «Ստրելկա» ՍՊԸ-ի կողմից գումարների վերականգնման համար ԾԻԳ-ի հայտը դատարանում 2 անգամ մերժվել է:

«Կրեդիտ-Երևան բանկ» ՍՊԸ-ի սնանկության հետևանքով ԾԻԳ-ի այդ բանկում առկա հաշիվների գումարները սառեցվել են 2001թ. հոկտեմբեր ամսից (դրամային հաշիվ՝ 30.1 մլն դրամ, արժույթային հաշիվ՝ 8.3 հազ. ԱՄՆ դոլար): Նշված հաշիվներից կապալառուներին հասանելիք գումարներն անհնարին էր վճարել, ուստի այդ պարտքը վճարվել է ԱԳԿՊԿ-ի կողմից, իսկ ԾԻԳ-ը հաշվառվել է որպես «Կրեդիտ-Երևան» բանկի հերթական պարտատեր: 2001թ. նոյեմբեր ամսից ԾԻԳ-ը հաշիվներ է բացել «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվում («ACBA» բանկ):

5. Հաշվետվությունների վերաբերյալ

Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվություններում առկա են անճշտություններ:

ՀՀ կառավարության 19.09.2002թ. թիվ 1480-Ն որոշմամբ ՀՀ բյուջեի համաֆինանսավորման գումարը նվազեցվել է 73,190.0 հազ. դրամով (130.0 հազ. ԱՄՆ դոլար) և կազմել 146,377.8 հազ.

դրամ: Սակայն ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված 2002թ. Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններում արտացոլված չէ վերոհիշյալ փոփոխությունը (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5					
	ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարները (դրամ)	ՀՀ պետական բյուջեում տարեկան ճշտված գումարները (դրամ)	ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարները՝ դոլարային արտահայտությամբ (հազ. դոլար*)	ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված տարեկան հաշվետվությամբ (հազ. դոլար)	Տարբերությունը
1	2	3	4	5	6=5-4
ԸՆԴԱՄԵՆԸ	1,459,352.4	1,386,163.4	2,462.1	2,592.1	130.0
Վարկի հաշվի	1,239,784.6	1,239,785.6	2,202.1	2,262.1	60.0
ՀՀ բյուջեի հաշվին	219,567.8	146,377.8	260.0	330.0	70.0

* 1 ԱՄՆ դոլարը-563 ՀՀ դրամ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Եթե 2002թ. Ծրագրով նախատեսված աշխատանքների կատարողականն ընդհանուր առմամբ բարձր է (94.6%), ապա «ապրանքներ» և «խորհրդատվական ծառայություն» կատեգորիաներով կատարված աշխատանքները թերակատարվել են, իսկ «տեխնիկական ծառայություններ» կատեգորիայով՝ գերակատարվել:
2. Եթե 2003թ. Ծրագրով նախատեսված աշխատանքների կատարողականը թե ընդհանուր, և թե ըստ կատեգորիաների բարձր է, ապա կատարված վճարումների մակարդակը ցածր է այն պատճառով, որ աշխատանքների մեծ մասն ավարտվել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, և վճարումները կատարվել են հաջորդ տարում:
3. ՀՀ կառավարության որոշմամբ 2002թ. տարեկան բյուջեի փոփոխությունը հաշվի չի առնվել ՀՀ կառավարություն ներկայացվող հաշվետվություններում:
4. Եթե ԾԻԳ-ի գործառնական ծախսերում ընդհանուր առմամբ կատարվել է սնտեսում, ապա, ըստ առանձին հոդվածների, արձանագրվել է գերաժախս, մասնավորապես՝ հեռախոսային, փոստային և էլեկտրոնային կապի ծառայությունների, ինչպես նաև՝ էլ. էներգիայի և կոմունալ ծախսերի գծով:
5. «Կրեդիտ-Երևան բանկ» ՍՊԸ-ում ԾԻԳ-ի կողմից բացված հաշիվներում կան սառեցված միջոցներ՝
 - դրամային հաշվում՝ 30,138,000.0 դրամ,
 - արտարժույթային հաշվում՝ 8,300.0 ԱՄՆ դոլար:

Նշված հաշիվների սառեցման պատճառով կապալառուներին հասանելիք գումարները վճարվել են ԱԳԿՊԿ-ի կողմից, իսկ ԾԻԳ-ը հաշվառվել է որպես «Կրեդիտ-Երևան բանկ» ՍՊԸ-ի հերթական պարտատեր: Հետագա գործունեությունն իրականացնելու համար 02.11.2001թ.-ից հաշիվներ են բացվել «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվում («ACBA» բանկ):

6. Ծրագրի շրջանակներում նախատեսված 830.0 հազ. միավորի փոխարեն քարտեզագրվել է 994.5 հազ. միավոր, ուսումնասիրվել է 738 հազ. միավոր, կազմվել են կադաստրային գործեր 570 հազ. միավորի նկատմամբ, և առաջին պետական գրանցման շրջանակներում գրանցվել և անվճար սեփականատերերին են տրամադրվել մոտ 407 հազ. սեփականության իրավունքի գրանցման վկայականներ: Տարածքային ստորաբաժանումներն ապահովվել են ավելի քան մեկ միլիոն կադաստրային գործերի կազմման համար անհրաժեշտ նյութերով, ձեռք են բերվել և տարածքային ստորաբաժանումներին են տրամադրվել մոտ 800.0 հազ. սեփականության իրավունքի գրանցման վկայականներ, 100.0 հազ. սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականներ ավտոմատացված գրանցման համար, գրավի վկայականներ, վարձակալության վկայականներ և տարբեր ձևաթղթեր: ԱԳԿՊԿ-ի տարածքային ստորաբաժանումների և տեղեկատվական կենտրոնի համար ձեռք են բերվել գրասենյակային, արխիվային կահավորանք, ծրագրեր և անհրաժեշտ սարքավորումներ, արբանյակային հանութագրման աշխատանքների համար անհրաժեշտ ֆոտոգրամետրիկ կայան, վերապատրաստվել են կադաստրի տարբեր ոլորտի մասնագետներ, իրականացվել է համակարգի ցանցային ադմինիստրատորների ուսուցում: Ծրագիրն, ըստ էության, ավարտված է, և ՀԲ-ի ավարտական գեկույցով գնահատվել է «խիստ գոհացուցիչ»:

7. 01.07.2004թ. դրությամբ ԾԻԳ-ի կրեդիտորական պարտքը կազմում է մոտ 98.4 հազ. ԱՄՆ դոլար, որից՝ 90.0 հազ. ԱՄՆ դոլարը՝ արբանյակային հանութագրման ուղղությամբ, իսկ դեբիտորական պարտքը՝ մոտ 6.1 հազ. ԱՄՆ դոլար:

Վերահսկողության ընթացքում վերահսկող հանձնաժողովի կողմից, ԾԻԳ-ի ղեկավարության մասնակցությամբ կազմվել է 2 արձանագրություն:

Սույն հաշվետվության նախագծին ԾԻԳ-ի տնօրենը ծանոթացել է 27.08.2004թ., դիտողություններ և առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը.

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծրագիրն, ըստ էության, ավարտված է, օրենքով սահմանված կարգով դադարեցնել «Անշարժ գույքի գրանցման ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը:

2. Հանձնարարել ԱԳԿՊԿ-ին՝ ստեղծել լուծարային հանձնաժողով և իրականացնել ԾԻԳ-ի գործունեության դադարեցումը:

Ծրագրի կառավարման խորհրդին և ԾԻԳ-ին.

1. Ձեռնարկել միջոցառումներ՝ ԾԻԳ-ի պարտավորությունների մարման կամ իրավունքների զիջման ուղղությամբ:
2. «ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և վերահսկիչ պալատ ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ 01.07.2004թ. դրությամբ

հազ. ԱՄՆ դոլար

Կատեգորիաներ	Ամբողջ ծրագրով նախատեսված ծախսերը				Ծրագրի սկզբից կատարված աշխատանքները				Կատարված աշխատանքները նախատեսված գումարների նկատմամբ	Ծրագրի սկզբից կատարված փաստացի վճարումները				Փաստացի վճարումները նախատեսված գումարների նկատմամբ	Փաստացի վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Անշարժ գույքի կադաստրի համակարգի հաշվին	Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Անշարժ գույքի կադաստրի համակարգի հաշվին		Ընդամենը, այդ թվում՝	Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Անշարժ գույքի կադաստրի համակարգի հաշվին		
1	2	3	4	5	6	7	8	9	10=6/2	10	11	12	13	14=10/6	15=10/6
Տեխնիկական ծառայություններ	6,266.33	5,675.89	590.44	0.00	6,026.02	5,537.39	488.63	0.00	96.2%	5,897.12	5,428.16	468.95	0.00	94.1%	97.9%
Ձեռքբերումներ	1,070.16	1,042.11	28.05	0.00	1,039.42	1,038.90	0.52	0.00	97.1%	1,038.91	1,038.39	0.52	0.00	97.1%	100.0%
Խորհրդատվական ծառայություններ	688.00	688.00	0.00	0.00	665.79	665.79	0.00	0.00	96.8%	665.83	665.83	0.00	0.00	96.8%	100.0%
SU-ների գործառնական ծախսեր	1,951.47	226.00	659.47	1,065.99	1,558.04	223.32	205.86	1,128.86	79.8%	1,549.02	223.21	196.95	1,128.86	79.4%	99.4%
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	147.00	147.00	0.00	0.00	145.52	145.52	0.00	0.00	99.0%	145.44	145.44	0.00	0.00	98.9%	99.9%
Աշխատանքներ	116.50	105.00	11.50	0.00	114.89	103.40	11.49	0.00	98.6%	113.40	103.18	10.23	0.00	97.3%	98.7%
Չբաշխված գումարներ	225.54	0.00	122.97	102.57	0.00	0.00	0.00	0.00	-	0.00	0.00	0.00	0.00	-	-
Ընդամենը	10,465.00	7,884.00	1,412.44	1,168.56	9,549.67	7,714.31	706.49	1,128.86	91.3%	9,409.71	7,604.20	676.65	1,128.86	89.9%	98.5%

Հաշվետվությունը, հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 09.02.2005թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով և
ՀՀ կառավարություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Գյուղատնտեսության Զարգացման
Միջազգային Հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում
«Գյուղատնտեսական ծառայություններ» ծրագրի իրականացման մասին

Վերահսկողության հիմքը - «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ
Ազգային ժողովի 03.12.2003թ. Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2004
թվականի տարեկան ծրագիրը և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի 30.09.2004թ. թիվ 108 և
29.11.2004թ. թիվ 128 հրամանները:

Վերահսկողության նպատակը - «Գյուղատնտեսական ծառայություններ» ծրագրի
(այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համապատասխանությունը վարկային համաձայնագրի
պայմաններին և ՀՀ օրենսդրությանը:

Վերահսկողության օբյեկտները

- «Գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի կորդինացման գրասենյակ» պետական
հիմնարկ (այսուհետ՝ ԾԿԳ, տնօրեն՝ Գ. Մաթևոսյան),
- «Հայաստանի գյուղացիական փոխօգնության բանկ» կոոպերատիվ բանկ (տնօրեն՝ Ս.
Գիշյան),
- «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամ (տնօրեն՝
Հ. Սինապան):

Ուսումնասիրության ժամանակահատվածը – Ծրագրի սկզբից մինչև 01.01.2005թ.

1. Ծրագրի նպատակները և վարկի տրամադրման պայմանները

Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության (այսուհետ՝ Փոխառու) և
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի (այսուհետ՝ Գ-ԶՄՀ) միջև 2001թ.
ապրիլի 30-ին ստորագրվել է 12.35 մլն SDR գումարով համաձայնագիր (այսուհետ՝
Համաձայնագիր), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2001թ. հունիսի 29-ին:

Ըստ Համաձայնագրի, Փոխառուն պարտավոր է Գ-ԶՄՀ-ին պարբերաբար մուծել
ծառայավճար՝ տարեկան վարկի օգտագործված գումարի 0.75%-ի չափով: Վճարումները պետք է
կատարվեն կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 15-ին և հոկտեմբերի
15-ին:

Փոխառուն վարկի հիմնագումարը պարտավոր է հետ վերադարձնել 205,834.0 SDR 59
հավասար կիսամյակային մասնաբաժիններով, յուրաքանչյուր տարվա ապրիլի 15-ին և

հոկտեմբերի 15-ին՝ սկսած 2011թ.-ի հոկտեմբերի 15-ից և ավարտելով 2040թ. հոկտեմբերի 15-ին (նաև մեկ վերջնական վճարում՝ 205,794.0 SDR՝ 2041թ. ապրիլի 15-ին)՝ փոխառության արտարժույթով (ԱՄՆ դոլարով):

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Մաս Ա - Ոռոգման զարգացման բաղադրիչ

- I. «Ջրօգտագործողների կամավոր միավորումների կազմավորում» ենթաբաղադրիչ
- II. «Երրորդային ենթակառուցվածքներ» ենթաբաղադրիչ
- III. «Կառուցվածքային աջակցություն» ենթաբաղադրիչ

Մաս Բ - Գյուղատնտեսական ֆինանսավորման բաղադրիչ

- I. «Գյուղացիական վարկավորում» ենթաբաղադրիչ
- II. «Փոքր ձեռնարկատիրության զարգացում» ենթաբաղադրիչ

Մաս Գ - Համայնքային ենթակառուցվածքների բաղադրիչ

- I. «Փոքր համայնքային ենթակառուցվածքներ» ենթաբաղադրիչ
- II. «Փոքր ճանապարհների վերականգնման» ենթաբաղադրիչ

Մաս Դ - Գյուղատնտեսության զարգացման բաղադրիչ

Մաս Ե- Ծրագրի կորորդինացման բաղադրիչ

2. Ծրագրի կատեգորիաները

Ստորև աղյուսակում ներկայացված է վարկային միջոցների բաշխումը Ծրագրի կատեգորիաների միջև՝ ներառյալ 18.09.2003թ. և 28.07.2004թ. Համաձայնագրում կատարված փոփոխությունները (վարկային միջոցների բաշխումն ըստ Համաձայնագրի և ըստ կատարված փոփոխությունների մանրամասն ներկայացված է հավելված 1-ում):

Աղյուսակ 1

Վարկային միջոցների բաշխումը Ծրագրի կատեգորիաների միջև

SDR

<i>Կատեգորիաները</i>		<i>Գումարը</i>	<i>Ֆինանսավորման տոկոսաչափը</i>
1	Շինարարական աշխատանքներ ա) Ծրագրի Ա մասի III կետի համար բ) Ծրագրի Գ մասի I կետի համար գ) Ծրագրի Գ մասի II կետի համար	5,930,000.0 500,000.0 620,000.0	100% 45% Գ.ԶՄՀ-ի մասով 100%
2	Սարքավորումներ, մեքենաներ և ապրանքներ	550,000.0	100%
3	Տեխնիկական աջակցություն, ուսումնասիրություններ և ուսուցում	320,000.0	100%
4	Վարկ	3,200,000.0	100%
5	Պարբերական ծախսեր	1,170,000.0	100%
6	Չբաշխված	60,000.0	
Ընդամենը		12,350,000.0	

3. Ծրագրի կատարողականը

Համաձայնագրով Ծրագրի ավարտը սահմանվել է 2005թ. սեպտեմբերի 30-ը, սակայն 01.01.2005թ. դրությամբ Ծրագիրն, ըստ էության, ավարտվել է (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ծրագրի կատարողականը 01.01.2005թ. դրությամբ

հազ. ԱՄՆ դոլար

Կատեգորիաները	Ամբողջ ծրագրով նախատեսված ծախսերը			Ամբողջ ծրագրով կատարված աշխատանքները			Ներդրված աշխատանքների նախատեսված ծախսերի նկատմամբ կատարված աշխատանքների նկատմամբ	Ամբողջ ծրագրով փաստացի վճարումները			Փաստացի վճարումները նախատեսված ծախսերի նկատմամբ	Փաստացի վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
	Ընդամենը	Այդ թվում		Ընդամենը	Այդ թվում			Ընդամենը	Այդ թվում			
		Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին			Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		
1	2	3	4	5	6	7	8=5/2	9	10	11	12=9/2	13=9/5
Շինարարական աշխատանքներ	10,138.4	10,020.6	117.8	10,221.1	10,107.0	114.1	100.8%	9,894.0	9,779.9	114.1	97.6%	96.8%
Սարքավորումներ, մեքենաներ և ապրանքներ	787.5	787.5	0.0	781.4	781.4	0.0	99.2%	781.4	781.4	0.0	99.2%	100.0%
Տեխնիկական աջակցություն, ուսումնասիրություններ և ուսուցում	430.0	430.0	0.0	417.8	417.8	0.0	97.2%	417.8	417.8	0.0	97.2%	100.0%
Վարկ	4,367.9	4,367.9	0.0	4,368.0	4,368.0	0.0	100.0%	4,368.0	4,368.0	0.0	100.0%	100.0%
Պարբերական ծախսեր	1,594.0	1,594.0	0.0	1,592.2	1,592.2	0.0	99.9%	1,585.3	1,585.3	0.0	99.5%	99.6%
Ընդամենը	17,317.8	17,200.0	117.8	17,380.5	17,266.4	114.1	100.4%	17,046.5	16,932.4	114.1	98.4%	98.1%

Ըստ տարիների Ծրագիրն իրականացվել է առաջընթացով (գերակատարումով)

(հավելված 2):

4. Ոռոգման զարգացման բաղադրիչ

4.1. «Ջրօգտագործողների կամավոր միավորումների կազմավորում» ենթաբաղադրիչ

ԾԿԳ-ի և «Ջրօգտագործողների միավորումներին աջակցության կենտրոն» ՊՀ-ի (այսուհետ՝ «ՋՄԱԿ» ՊՀ) միջև 2001թ. դեկտեմբերի 6-ին կնքվել է Իրականացման համաձայնագիր:

Թվով 12 ջրօգտագործող ընկերություններին (այսուհետ՝ ՋՕԸ) են հանձնվել էքսկավատորներ՝ կոմպլեկտավորված եռակցման սարքերով և բետոնախառնիչով, 14 ՋՕԸ-ներ ապահովվել են անհրաժեշտ գրասենյակային կահույքով, 20-ը՝ «Նիվա» մակնիշի ավտոմեքենաներով, 21-ը՝ համակարգչային տեխնիկայով: Ստեղծված բոլոր 23 ՋՕԸ-ներին տրամադրվել են շարժական ջրաչափեր՝ ընդհանուր թվով 400 հատ, ֆինանսական օժանդակություն, առաջին տարվա գործունեությունը սկսելու համար անհրաժեշտ քանակությամբ ջրօգտագործման պայմանագրեր, ոռոգման ջրի հաշվառման մատյաններ և վարձի անդորրագրեր: Մշակվել, տպագրվել և ՋՕԸ-ներին է տրամադրվել 3 ձեռնարկ՝ ՋՕԸ-ների ստեղծման կանոնակարգի, ոռոգման համակարգի շահագործման և պահպանման և ՋՕԸ-ներում հաշվապահական հաշվառման վերաբերյալ:

2004թ. ոռոգվել է կադաստրային տարածքի ընդամենը 50.4%-ը, ջրօգտագործողներից գանձվել է արժեքի 60.0%-ը, իսկ «Ոռոգում ջրառ» ՓԲԸ-ին վճարվել է հասանելիք գումարի 66.1%-ը: 2004թ. ջրի կորուստի մակարդակը կազմել է 44.7%, իսկ մեկ հեկտարի հաշվարկով՝ 1.7 հազ. մ³/հա (մանրամասն տվյալները, ըստ ՋՕԸ-ների, արտացոլված է հավելված 3-ում):

4.2. «Երրորդային ենթակառուցվածքներ» ենթաբաղադրիչ

Ըստ Համաձայնագրի, ենթաբաղադրիչով նախատեսվել է՝ ջրաբաշխումը բարելավելու նպատակով իրականացնել երկրորդային և երրորդային ջրանցքների և համակարգի վերականգնում, ջրաբաշխման ներտնտեսային համակարգի կառուցում:

2001թ. դեկտեմբերի 6-ին ԾԿԳ-ի և «Ջրշին» ՊՓԲԸ-ի միջև կնքվել է Իրականացման համաձայնագիր:

01.01.2005թ. դրությամբ «Ջրշին» ՊՓԲԸ-ի և կապալառու կազմակերպությունների միջև կնքվել են շինարարական աշխատանքների իրականացման 71 պայմանագրեր, որոնց պայմանագրային արժեքը կազմել է ընդամենը 8,961,740.0 ԱՄՆ դոլար: Ընթացքում մեկ պայմանագիր դադարեցվել է հետևյալ պատճառով.

«Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնում» պայմանագրով պետք է իրականացվեին 149,382.0 ԱՄՆ դոլարի աշխատանքներ, որից կատարվել է 27,959.0 ԱՄՆ դոլարի: Սակայն Ներքին Գետաշենի ավագանու 25.07.2003թ. թիվ 9 նիստով որոշվել է չթույլատրել կառուցել Վերին Գետաշեն

համայնքի ոռոգման ջրագիծը, քանի որ այն հակասում է Ներքին Գետաշեն համայնքի շահերին, և նույն արձանագրությամբ չեղյալ է համարվել նախկին գյուղապետի տված թույլտվությունը: ՀՀ Գեղարքունիքի մարզպետը 29.01.2004թ. թիվ Մ-1-43 նամակով դիմել է ՀՀ տարածքային և արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախարար Հ. Աբրահամյանին՝ Վերին և Ներքին Գետաշեն համայնքների ոռոգման ջրի շինարարության հետ կապված խնդիրներին վերջնական լուծում տալու համար: Գեղարքունիքի մարզպետարանի և վերոհիշյալ երկու համայնքների համայնքապետերի մասնակցությամբ բազմիցս իրականացվել են մասնագիտական վերազննություն և քննարկումներ, արդյունքում՝ 26.03.2004թ. արձանագրության համաձայն, ընտրվել է շինարարության նոր տարբերակ, որի իրականացումը ծրագրից կպահանջեր շուրջ 300,000.0 ԱՄՆ դոլարի ներդրում, մինչդեռ ծրագրի ֆինանսական միջոցներն արդեն բաշխված էին, ուստի որոշվեց դադարեցնել շինարարությունը (10.06.2004 արձանագրություն):

Մնացած 70 պայմանագրերից թվով 58-ում ընթացքում կատարվել է պայմանագրային արժեքների նվազեցում՝ ընդհանուր գումարով 123,351.0 ԱՄՆ դոլար, և թվով 4 պայմանագրերով՝ արժեքի ավելացում՝ ընդհանուր գումարով 99,109.0 ԱՄՆ դոլար: Պայմանագրային արժեքների ավելացման պատճառներն արտացոլված են ստորև աղյուսակում (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3
ԱՄՆ դոլար

Պայմանագիրը	Պայմանագրի արժեքը	Պայմանագրի արժեքը ավելացումից հետո	Ծանոթություն
1	2	3	4
1. «Տավուշի մարզի Այգեձորի մայր ջրանցքի վերականգնում» ASP/LCB/CW-2002/019Can	278,800.0	315,217.0	2003թ. ապրիլի 5-8-ը Առինչա գետի վարարման հետևանքով վնասվել է Այգեձորի մայր ջրանցքի գլխամասային կառույցը, և անհրաժեշտություն է առաջացել իրականացնել լրացուցիչ շինարարական աշխատանքներ, որը համաձայնեցվել է ՄԱԿ ԳԾԾ-ի հետ:
2. «Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի հողերի ոռոգման մեխանիկական եղանակի փոխարինում ինքնահոսի» ASP/LCB/CW-2003/15-1Can	493,739.0	546,491.0	Շինարարության ընթացքում Ջերմուկի կիրճում տեղի են ունեցել քարաթափումներ: Հետագա մեծածավալ վտանգավոր փլուզումներից խուսափելու նպատակով կատարվել են նախագծային փոփոխություններ շինարարության տեխնոլոգիայի մեջ: Մանավորապես, անհրաժեշտ է եղել իրականացնել արհեստական որոշակի քարաթափումներ և հողային աշխատանքներում հրաժարվել պայթեցման աշխատանքներից՝ այն փոխարինելով ավելի թանկարժեք տեխնոլոգիաներով: Նշված փոփոխությունը համաձայնեցվել է ՄԱԿ ԳԾԾ-ի հետ:

3. «Տավուշի մարզի Ոսկևան-Բարեկամական միջգյուղային ավտոխճուղու վերականգնում» ASP/LCB/CW-2003/016-1Can	333,135.0	338,468.0	Նախագծման ընթացքում լիարժեք հաշվի չի առնվել համայնքների տարածքում անձրևաջրերի հեռացման խնդիրները, որի հետևանքով կարող էր տեղի ունենալ անձրևաջրերի հոսք՝ բնակիչների տարածքներ, որի վերաբերյալ համայնքների կողմից բարձրացվել է հարց՝ իրականացնելու լրացուցիչ աշխատանքներ:
4. «Տավուշի մարզի Ոսկևան-Բարեկամական միջգյուղային ավտոխճուղու վերականգնում» ASP/LCB/CW-2003/016-2Can	330,301.0	334,636.0	

01.01.2005թ. դրությամբ շինարարական աշխատանքների կատարողականն արտացոլված է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Շինարարական աշխատանքների կատարողականը

ԱՄՆ դոլար

Անվանում	Պայմանագրերի արժեքը	Պայմանագրերի արժեքը նկատմամբ իրականացված փոփոխություններին հետո	01.01.2005թ. դրությամբ կատարված աշխատանքները	01.01.2005թ. դրությամբ փաստացի վճարումները	Կատարված աշխատանքները պայմանագրերի արժեքի նկատմամբ	Փաստացի վճարումները պայմանագրերի արժեքի նկատմամբ	Փաստացի վճարումները պատարված աշխատանքների նկատմամբ
1	2	3	4	5	6=4/3	7=5/3	8=5/4
Շինարարական աշխատանքները	8,961,740.0	8,816,075.0	8,731,328.0	8,411,857.0	99.0%	95.4%	96.3%
Այդ թվում՝ «Երրորդային ենթակառուցվածքներ» ենթաբաղադրիչով	7,976,085.0	7,821,307.0	7,736,560.0	7,476,316.0	98.9%	95.6%	96.6%
«Փոքր ճանապարհների վերականգնում» ենթաբաղադրիչով	985,655.0	994,768.0	994,768.0	935,541.0	100.0%	94.0%	94.0%

68 պայմանագրերով նախատեսված աշխատանքները 01.01.2005թ. դրությամբ ավարտվել են, իսկ 2-ով՝ ավարտման փուլում են:

Երեք պայմանագրով շինարարական աշխատանքները չեն ավարտվել պայմանագրով նախատեսված ժամկետներում (Աղյուսակ 5):

<i>Պայմանագիրը</i>	<i>Ավարտման ժամկետն ըստ պայմանագրի</i>	<i>Փաստացի ավարտ</i>	<i>Ուշացումը</i>	<i>Ուշացման պատճառները</i>
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5</i>
«Լոռու մարզի Գսեղ համայնքի մեխ. ռոռզման փոխարինում ինքնահոսի»	28.10.2002- 28.12.2003	28.10.2004	10 ամիս	Շինարարությունն իրականացնող կազմակերպության ղեկավարը 2003թ. նոյեմբեր ամսին մահացել է, և հնարավոր է եղել միայն աշխատանքները շարունակել նոր տնօրենի նշանակումից հետո: Նոր տնօրենը 18.02.2004թ. թիվ 1 մամակով դիմել է ԾԿԳ-ի տնօրենությանը՝ շինարարության ընթացքը երկարաձգելու խնդրանքով: Հարցը քննարկվել է 01.03.2004թ. թիվ 183-04 հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից, և թիվ 1 արձանագրությամբ որոշվել է երկարաձգել պայմանագրի ավարտի ժամկետը մինչև 01.11.2004թ.:
«Սյունիքի մարզի Գորիս, Վերիշեն, Ակներ և Քարահունջ համայնքների ռոռզման ցանցի վերականգնում»	25.11.2002- 25.11.2003	10.08.2004	8.5 ամիս	Սյունիքի մարզպետի 02.05.2003թ., Գորիսի համայնքների միության 28.05.2003թ., Ազգային ժողովի պատգամավորի 22.06.2003թ. և Խոտ համայնքի ավագանու 05.07.2003թ. գրությունների հիման վրա ծրագրում ընդգրկվել է ևս մեկ համայնք, իրականացվել է նախագծահաշվալի փաստաթղթերի փոփոխություն, և իրականացվել են լրացուցիչ շինարարական աշխատանքներ:
«Տավուշի մարզի Այգեձորի մայր ջրանցքի վերականգնում»	15.01.2003- 15.09.2004	15.11.2004	2 ամիս	2003թ. ապրիլի 5-8 ընկած ժամանակահատվածում Առինչա գետի վարարման հետևանքով Այգեձորի մայր ջրանցքի գլխամասային կառույցը վնասվել է և անհրաժեշտություն է առաջացել՝ իրականացնել լրացուցիչ շինարարական աշխատանքներ:

5. Գյուղատնտեսական ֆինանսավորման բաղադրիչ

5.1. «Գյուղացիական վարկավորում» ենթաբաղադրիչ

Ըստ Համաձայնագրի, Ծրագրի գյուղատնտեսական ֆինանսավորման բաղադրիչի «Գյուղացիական վարկավորման» ենթաբաղադրիչը պետք է իրականացվի «Հայաստանի գյուղացիական փոխօգնության բանկ» կոոպերատիվ բանկի կողմից (այսուհետ՝ ՀԳՓԲ):

ՀՀ կառավարության և ՀԳՓԲ-ի միջև 2002թ. հունվարի 11-ին կնքվել է Սուբսիդավորման համաձայնագիր, ըստ որի ՀՀ կառավարությունը ԳԶՄՀ-ի տրամադրած վարկային գումարներից ՀԳՓԲ-ին է տրամադրել 3,503,000.0 ԱՄՆ դոլար:

Սուբսիդավորման վարկը տրամադրվել է հետևյալ պայմաններով. ՀԳՓԲ-ն կիսամյակային մուծումներով պետք է պարբերաբար (յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 15-ին և ապրիլի 15-ին) Փոխառուին վճարի տոկոսավճար 5.99% տոկոսադրույքով՝ Սուբսիդավորման վարկից դուրսգրված և Փոխառուին դեռևս չվերադարձված գումարների գծով:

ՀԳՓԲ-ն Սուբսիդավորման վարկի հիմնական գումարը պետք է հետ վերադարձնի 59 հավասար կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 15-ին և հոկտեմբերի 15-ին՝ սկսած 2011թ. հոկտեմբերի 15-ից և ավարտելով 2041թ. ապրիլի 15-ին:

Ծրագրի շրջանակներում 01.01.2005թ. դրությամբ ՀԳՓԲ-ի կողմից 30696 ենթավարկեր են տրամադրվել հանրապետության 8 մարզերի 457 համայնքներում բնակվող 12074 անձանց՝ ընդհանուր գումարով 22,193,342.3 ԱՄՆ դոլար (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6
ՀԳՓԲ-ի կողմից տրամադրված ենթավարկերը՝ ըստ ՀՀ մարզերի
ԱՄՆ դոլար

	Մարզը	Վարկավորված համայնքների թիվը	Տրամադրված ենթավարկերի թիվը	Ենթավարկեր ստացած անձանց թիվը	Տրամադրված ենթավարկերի	
					Գումարը	Տեսակարար կշիռը
1	Վայոց ձոր	32	1567	657	835,354.8	3.7%
2	Արագածոտն	95	9876	2878	6,386,898.7	28.8%
3	Լոռի	100	7334	2586	6,012,358.9	27.1%
4	Շիրակ	54	4201	1850	3,355,382.6	15.1%
5	Սյունիք	43	1337	707	569,210.6	2.6%
6	Գեղարքունիք	42	1334	985	1,046,456.5	4.7%
7	Տավուշ	40	1910	916	1,480,314.8	6.7%
8	Կոտայք	51	3137	1495	2,507,365.4	11.3%
	Ընդամենը	457	30696	12074	22,193,342.3	100.0%

Մանրամասն վերլուծականն արտացոլված է հավելված 4-ում:

ՀԳՓԲ-ի կողմից տրամադրված ենթավարկերի մարված գումարները 01.01.2005թ. դրությամբ կազմել են 16,326,845.3 ԱՄՆ դոլար կամ տրամադրվածի 73.6%-ը: Ժամկետանց չմարված գումարները 01.01.2005թ. դրությամբ կազմել են տրամադրվածի 0.04%-ը (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7
ՀԳՓԲ-ի կողմից տրամադրված ենթավարկերի գծով մարումները՝ ըստ ՀՀ մարզերի
ԱՄՆ դոլար

	Մարզը	Տրամադրված ենթավարկերի գումարը	01.01.2005թ. դրությամբ			
			Մարված գումար	Չմարված գումար		
				Ժամկետային	Ժամկետանց	6=5/2
1	2	3	4	5	6=5/2	
1	Վայոց ձոր	835,354.8	542,928.8	291,386.9	1,039.0	0,12%

2	Արագածոտն	6,386,898.7	4,878,264.6	1,508,158.1	476.0	0,01%
3	Լոռի	6,012,358.9	4,385,750.0	1,623,608.9	3,000.0	0,05%
4	Շիրակ	3,355,382.6	2,902,242.7	453,140.0	0.0	0,00%
5	Սյունիք	569,210.6	569,210.6	533,432.8	0.0	0,00%
6	Գեղարքունիք	1,046,456.5	411,002.8	635,453.7	0.0	0,00%
7	Տավուշ	1,480,314.8	960,377.5	519,937.3	0.0	0,00%
8	Կոտայք	2,507,365.4	1,677,068.3	826,335.1	3,962.0	0,16%
	Ընդամենը	22,193,342.3	16,326,845.3	6,391,452.8	8,477.0	0,04%

5.2. «Փոքր ձեռնարկատիրության զարգացում» ենթաբաղադրիչ

ՀՀ կառավարության և «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջև 2002թ. հունվարի 11-ին կնքվել է Սուբսիդավորման համաձայնագիր, որով Հիմնադրամին, որպես փոխառություն, տրամադրվել է 1,000,000.0 ԱՄՆ դոլար:

01.11.2004թ. դրությամբ Հիմնադրամի կողմից ֆինանսավորվել են ընդամենը 137 ծրագրեր (ընդ որում՝ 37 ծրագրեր ամբողջությամբ ֆինանսավորվել են շրջանառու ֆոնդի հաշվին), որոնցից 8-ն ավարտվել են, 119-ը ընթացքում են, իսկ 10 ծրագրերի գործերը տրվել են ՀՀ տնտեսական դատարան: Հիմնադրամի կողմից տրամադրված ենթավարկերն ըստ մարզերի արտացոլված են Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

01.11.2004թ. դրությամբ Հիմնադրամի կողմից տրամադրված ենթավարկերն ըստ մարզերի

ԱՄՆ դոլար

Մարզը	Տրամադրված ենթավարկեր											Ժամկետանց ծրագրեր		
	Ընդամենը		Այդ թվում՝											
			Ընթացիկ ծրագրեր			Ավարտված ծրագրեր			Դատարան տրված ծրագրեր					
Քանակ	Գումար	Քանակ	Գումար	%	Քանակ	Գումար	%	Քանակ	Գումար	%	Քանակ	Գումար	%	
1	2=4+7+10	3=5+8+10	4	5	6=5/3	7	8	9=8/3	10	11	12=11/3	13	14	15=14/3
Արագածոտն	29	381,500.0	21	278,500.0	73.0	4	51,000.0	13.4	4	52,000.0	13.6	5	6,750.0	1.8
Լոռի	16	240,359.0	12	187,359.0	77.9	2	30,000.0	12.5	2	23,000.0	9.6	4	9,230.0	3.8
Շիրակ	25	251,700.0	22	223,800.0	88.9	1	14,200.0	5.6	2	13,700.0	5.4	7	11,870.0	4.7
Տավուշ	30	240,400.0	28	226,900.0	94.4	1	5,500.0	2.3	1	8,000.0	3.3	6	6,670.0	2.8
Վայոց ձոր	10	130,000.0	9	122,500.0	94.2			0.0	1	7,500.0	5.8	2	3,220.0	2.5
Սյունիք	27	266,310.0	27	266,310.0	100.0			0.0			0.0	3	6,420.0	2.4
Ընդամենը	137	1,510,269.0	119	1,305,369.0	86.4	8	100,700.0	6.7	10	104,200.0	6.9	27	44,160.0	2.9

01.11.2004թ. դրությամբ Հիմնադրամի կողմից տրամադրված ենթավարկերի ընդհանուր գումարը կազմել է 1,510,269.0 ԱՄՆ դոլար (այդ թվում՝ 510,269.0 ԱՄՆ դոլարը՝ շրջանառու ֆոնդի հաշվին), որի 2.9%-ը կազմել են ժամկետանց ծրագրերը:

01.11.2004թ. դրությամբ մարումը կազմել է 506,822.0 ԱՄՆ դոլար, իսկ մայր գումարի ժամկետանց մնացորդը՝ 129,806.0 ԱՄՆ դոլար, կամ տրամադրվածի 8.6%ը (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Հիմնադրամի կողմից տրամադրված ենթավարկերի գծով մարումը և ժամկետանց մայր գումարի մնացորդը

Տրամադրված ենթավարկերի գումարը		01.11.2004թ. դրությամբ մարված գումարը	ԱՄՆ դոլար		Մայր գումարի մնացորդ ժամկետանց տրամադրվածի նկատմամբ
			Մայր գումարի մնացորդ	Մայր գումարի մնացորդ	
Սուբսիդավորման համաձայնագրով նախատեսված գումարի հաշվին	1,000,000.0	404,699.0	469,359.0	125,942.0	12,6%
Շրջանառու ֆոնդի հաշվին	510,269.0	102,123.0	404,282.0	3,864.0	0,8%
Ընդամենը	1,510,269.0	506,822.0	873,641.0	129,806.0	8,6%

ՀՀ տնտեսական դատարան տրված ծրագրերով ենթավարկերի գումարը կազմել է 104,200.0 ԱՄՆ դոլար, որոնց գծով ժամկետանց մայր գումարի մնացորդը 01.11.2004թ. դրությամբ կազմել է 85,478.0 ԱՄՆ դոլար կամ տրամադրվածի 82.0%-ը: Ընդ որում, «Հովսեփյան-Սարգսյան» ՍՊԸ և «Արամ Լենդ» ՍՊԸ ենթավարկառուների կողմից 01.11.2004թ. դրությամբ մարում ընդհանրապես չի կատարվել (Աղյուսակ 10):

Աղյուսակ 10

ՀՀ տնտեսական դատարան տրված ծրագրերը

Ենթավարկառուները		Կնքած պայմանագրի ամսաթիվը	Կնքած պայմանագրի համարը	Տրամադրված ենթավարկի գումարը	01.11.2004թ. դրությամբ մարած գումարը	Մայր գումարի ժամկետանց մնացորդը	%
1	«Շնող» ՍՊԸ	25.03.2002	048/04	15,000.0	2,000.0	13,000.0	86,7%
2	«Լավաշ» ՍՊԸ	30.04.2002	052/08	5,000.0	2,641.0	2,359.0	47,2%
3	«Գոռ Գալոյան» ԱԶ	30.04.2002	055/11	13,000.0	9,241.0	3,759.0	28,9%
4	«Տիգրան և եղբայրներ» ՍՊԸ	29.10.2002	056/12	10,000.0	1,753.0	8,247.0	82,5%
5	«Գայանե Նազարյան» ՍՊԸ	31.05.2002	064/20	9,000.0	56	8,944.0	99,4%
6	«Հովսեփյան-Սարգսյան» ՍՊԸ	23.06.2002	069/25	8,000.0	0	8,000.0	100,0%
7	«Բագե» ՍՊԸ	08.06.2002	070/26	8,000.0	500	7,500.0	93,8%
8	«Տաթև ԿՔՏ» ՍՊԸ	08.06.2002	078/34	20,000.0	1,389.0	18,611.0	93,1%

9	«Մոզ» ՍՊԸ	09.10.2002	081/37	7,500.0	1,142.0	6,358.0	84,8%
10	«Արամ Լենդ» ՍՊԸ	01.10.2002	086/42	8,700.0	0	8,700.0	100,0%
Ընդամենը				104,200.0	18,722.0	85,478.0	82,0%

Նշված բոլոր 10 ծրագրերով առկա են ՀՀ տնտեսական դատարանի վճիռները, ԳԱՀԿ ծառայության որոշումները (կատարողական վարույթի մասին), մի մասի գծով անցկացվել են գրավի իրացման մի շարք աճուրդներ, որոնց արդյունքում գրավի առարկայի արժեքները նվազել են: Այսպես.

- «Հովսեփյան և Սարգսյան ընկերներ» ՍՊԸ ենթավարկառուի կողմից գրավադրված գրավի ընդհանուր արժեքը՝ 9,580,000.0 դրամ, վերջին աճուրդի տվյալներով կազմել է 5,091,205.0 դրամ:
- «Արամ Լենդ» ՍՊԸ ենթավարկառուի կողմից գրավադրված գրավի ընդհանուր արժեքը՝ 13,400.0 ԱՄՆ դոլար, վերջին աճուրդի տվյալներով կազմել է 1,623,845.0 դրամ:
- «Գայանե Նազարյան» ՍՊԸ ենթավարկառուի կողմից գրավադրված գրավի արժեքը՝ 11,000.0 ԱՄՆ դոլար, վերջին աճուրդի տվյալներով կազմել է 3,772.6 ԱՄՆ դոլար:

ԳԱՀԿ ծառայության աշխատանքից դժգոհելու վերաբերյալ բազմաթիվ նամակներ են հղվել Հիմնադրամի կողմից թե՛ ԳԱՀԿ ծառայություն, թե՛ այլ ատյաններ: Վիճակը որոշ չափով փրկելու նպատակով, Հիմնադրամը գրավի մի շարք առարկաներ ԳԱՀԿ ծառայությունից վերցրել է որպես սեփականություն՝ գույքի հանձնման մասին համապատասխան պայմանագրերով:

Հիմնադրամի «Փոխառությունների տրամադրման քաղաքականության» 4.2 կետի համաձայն, փոխառությունները տրամադրվում են այն փոխառուներին, որոնք փոխառության տրամադրման պահին չունեն պարտքեր և ընդգրկված չեն այլ վարկային ծրագրերում, սակայն «Լիպո» ԲԲԸ-ին 25.04.2003թ. թիվ 133/83 պայմանագրով տրամադրվել է 10,000.0 ԱՄՆ դոլարի վարկ, մինչդեռ վերջինիս կողմից ներկայացված հաշվեկշռով ընկերությունը 01.01.2003թ. դրությամբ ունեցել է ավելի քան 23.0 մլն դրամի չմարված վարկի գումար:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված փոխառուներից պահանջվող փաստաթղթերի ցանկի համաձայն, փաթեթում պետք է ներառվի հաշվեկշռային հաշվետվություն (անցած երեք հաշվետու ժամանակաշրջանի համար)՝ հաստատված հարկային տեսչության կողմից, սակայն հաշվեկշռային հաշվետվություն է պահանջվել միայն վերջին հաշվետու տարվա համար, իսկ որոշ դեպքերում ընդհանրապես չի պահանջվել (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11

<i>Ենթավարկառու</i>	<i>Պետական ռեզիստորում գրանցում</i>	<i>Ենթավարկի տրամադրումը</i>	<i>Հաշվեկշռային հաշվետվություն ներկայացնելը</i>
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>
«Գայանե Նազարյան» ՍՊԸ	1999թ.	2002թ.	Չի ներկայացրել
«Հովսեփյան և Սարգսյան ընկերներ» ՍՊԸ	1998թ.	2002թ.	Չի ներկայացրել

«Տիգրան և եղբայրներ» ՍՊԸ	1999թ.	2002թ.	Չի ներկայացրել
«Բազե» ՍՊԸ	1997թ.	2002թ.	Ներկայացրել է 1999թ. հաշվեկշռային հաշվետվություն, որը հաստատված չէ ոչ հարկային տեսչության, ոչ էլ անկախ աուդիտորի կողմից 2001թ. (վերջին հաշվետու տարվա համար) չի ներկայացրել
«Լավաշ» ՍՊԸ	1997թ.	2002թ.	Ներկայացրել է 2001թ. հաշվետու տարվա համար, որը հաստատված չէ ոչ հարկային տեսչության, ոչ էլ անկախ աուդիտորի կողմից
«Լիպո» ԲԲԸ	1995թ.	2003թ.	Ներկայացրել է 2002թ. հաշվետու տարվա համար, որը հաստատված չէ ոչ հարկային տեսչության, ոչ էլ անկախ աուդիտորի կողմից

«Փոխառությունների տրամադրման քաղաքականության» 6.3.11 կետի համաձայն, առանց գրավի համապատասխան ձևակերպման և գրավի իրավունքի պետական գրանցման, արգելվում է ծրագրի ֆինանսավորումը, սակայն մի շարք ծրագրերի ֆինանսավորման առաջին տրանշը տրամադրվել է՝ նախքան գրավի իրավունքի գրանցման վկայանի ձևակերպումը (Աղյուսակ 12):

Աղյուսակ 12

<i>Ենթավարկառու</i>	<i>Ֆինանսավորման առաջին տրանշի ամսաթիվը</i>	<i>Գրավի իրավունքի գրանցման վկայականի ամսաթիվը</i>
«Լավաշ» ՍՊԸ	14.05.2002թ.	20.05.2002թ.
«Մոզ» ՍՊԸ	16.10.2002թ.	21.10.2002թ.
«Բազե» ՍՊԸ	13.06.2002թ.	22.07.2003թ.
«Տիգրան և եղբայրներ» ՍՊԸ	06.05.2002թ.	21.05.2002թ.
«Արամ-Լենդ» ՍՊԸ	07.10.2002թ.	29.10.2002թ.
«Գայանե Նազարյան» ՍՊԸ	05.06.2002թ.	12.06.2002թ.

6. Համայնքային ենթակառուցվածքների բաղադրիչ

Ըստ Համաձայնագրի, «Համայնքային ենթակառուցվածքներ» բաղադրիչը պետք է իրականացվի Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի (ՀՄՆՀ) կողմից:

2002թ.-ի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել ՀՄՆՀ-ի և ԾԿԳ-ի միջև կնքված Իրականացման Համաֆինանսավորման հանաձայնագիրը, ըստ որի ՀՄՆՀ-ին դրամական տեսքով տրամադրվել է դրամաշնորհ՝ 710.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով՝ համայնքային ենթակառուցվածքներ բաղադրիչի իրականացման համար:

Նշված համաձայնագրի 1-ին հավելվածի «Բ» և «Գ» կետերի համաձայն, Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Արարատի

մարզերում մինչև 2005թ. հոկտեմբերի 1-ը պետք է իրականացվի շուրջ 55 միկրոծրագրեր, 1,577.8 հազ. ԱՄՆ դոլար արժեքով՝ ՀՄՆՀ-ի և ԳԶՄՀ-ի հավասարաչափ մասնակցությամբ, ի հավելումն համայնքի ներդրմանը, որը պետք է կազմի ծրագրի արժեքի առնվազն 10%-ը: Հետագայում (24.06.2002թ., 23.09.2002թ. լրացումներ), նույն գումարի սահմաններում հաստատվել և պայմանագրեր են կնքվել միայն թվով 25 ծրագրերի իրականացման համար, որտեղ Կոտայքի, Սյունիքի, Գեղարքունիքի և Արարատի մարզերը չեն ընդգրկվել:

01.01.2005թ. դրությամբ նշված 25 ծրագրերից 19-ը ավարտվել են, 3-ը դեռևս ընթացքի մեջ են, իսկ 3-ի պայմանագրերը խզվել են: Խզված պայմանագրերի արժեքը կազմել է 329.3 հազ. ԱՄՆ դոլար, չիրականացված աշխատանքների մնացորդային արժեքը՝ 233.8 հազ. ԱՄՆ դոլար:

2003թ. սեպտեմբերին ՄԱԿ ԳԾԾ վերահսկման պատվիրակության հուշագրի 14-րդ և 15-րդ կետերի համաձայն, ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ «Փոքր ճանապարհների վերականգնում» ենթաբաղադրիչի նախագծման աշխատանքները կիրականացնի «ՋՄԱԿ» ՊՀ-ն, իսկ շինարարական աշխատանքները՝ «Ջրշին» ՊՓԲԸ-ը:

7. Գյուղատնտեսության զարգացման բաղադրիչ

- Հիմնադրվել են Տավուշի և Սյունիքի «Այգեգործների միություն» և «Պտղաբույծների միություն» ՀԿ-ները,
- ֆերմերների հողատարածքներում հիմնվել է 214 հա դեղձի այգի Տավուշում՝ ներգրավելով 403 ֆերմերի, և 47 հա Սյունիքի մարզում՝ ներգրավելով 26 ֆերմերի,
- ընտրված հողատարածքներում կատարվել են հողային աշխատանքներ (խորվար, հարթեցում),
- իրականացվել է տնկանյութի, թունաքիմիկատների և պարարտանյութերի ձեռքբերում և բաշխում ֆերմերներին,
- կատարվել են վճարումներ՝ ոռոգման ջրի դիմաց,
- գնվել և ՀԿ-ներին է հանձնվել համապատասխան գյուղմեխանիզմներ (տրակտորներ, արևկիչներ և այլն),
- մասնագետների կողմից իրականացվել է մասնագիտական խորհրդատվություն և ուսուցում, կազմակերպվել են սեմինարներ:

Բաղադրիչով կատարված աշխատանքի արդյունքում հիմնված այգիներից 2005թ. բերքատու կլինեն 104 հա, իսկ սպասվելիք բերքը կկազմի շուրջ 1000 տոննա, 2006թ.՝ ևս 60 հա, սպասվելիք բերքը՝ շուրջ 2200 տոննա, 2007թ.՝ ևս 40 հա, սպասվելիք բերքը՝ շուրջ 2900 տոննա, 2008թ.-ին Ծրագրով հիմնված այգիներն ամբողջովին բերքատու կլինեն, և կանխատեսվում է շուրջ 4100 տոննա բերք:

8. Հաշվետվությունների վերաբերյալ

ԾԿԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված 2001թ. Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունում բացակայում է «Ձև 2» հաշվետվությունը, իսկ 2002թ. և 2003թ. տարեկան հաշվետվություններով չի արտացոլվել ՀՀ կառավարության համաֆինանսավորումը: Ենթադրյալ կատարվել է միայն 2004թ. մայիս ամսվա հաշվետվությամբ:

2004թ. տարեկան հաշվետվության «Ձև 2-ում», 01.01.2005թ. դրությամբ վարկի հաշվին ամբողջ ծրագրով կատարված աշխատանքները կազմել են 17,266,394.60 ԱՄՆ դոլար, սակայն 2001թ., 2002թ., 2003թ. և 2004թ. տարեկան կտրվածքով կատարված աշխատանքների հանրագումարը կազմել է 17,278,478.45 ԱՄՆ դոլար կամ 12,083.85 ԱՄՆ դոլարով ավելի (Աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Ծրագրով կատարված աշխատանքները

ԱՄՆ դոլար

Կատեգորիաները	2001թ. տարեկան հաշվետվությամբ	2002թ. տարեկան հաշվետվությամբ	2003թ. տարեկան հաշվետվությամբ	2004թ. տարեկան հաշվետվությամբ	Հանրագումարը	01.01.2005թ. դրությամբ հաշվետվությամբ	Տարբերությունը
	1	2	3	4	5=1+2+3+4	6	7=5-6
Շինարարական աշխատանքներ	30,981.50	1,502,940.50	3,928,408.62	4,639,941.70	10,102,272.32	10,107,013.60	-4,741.28
Սարքավորումներ, մեքենաներ և ապրանքներ	20,071.32	252,278.00	102,088.77	409,489.90	783,927.99	781,428.00	2,499.99
Տեխնիկական աջակցություն, ուսումնասիրություններ և ուսուցում	19,882.66	99,339.20	148,760.46	150,351.00	418,333.32	417,839.40	493.92
Վարկ	0,00	1,662,855.00	1,584,391.00	1,152,700.00	4,399,946.00	4,367,946.00	32,000.00
Պարբերական ծախսեր	90,523.66	479,732.80	543,135.26	460,607.10	1,573,998.82	1,592,167.60	-18,168.78
Ընդամենը	161,459.14	3,997,145,50	6,306,784,11	6,813,089.70	17,278,478.45	17,266,394.60	12,083.85

ԾԿԳ-ի հաշվետվություններում նախատեսված գումարները, աշխատանքները և վճարումները ներկայացված են ոչ թե ըստ ծրագրի բաղադրիչների և ենթաբաղադրիչների, այլ՝ ըստ իրականացնողների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ էության, Ծրագիրն իրականացվել է ժամկետից շուտ, սակայն իրականացման ընթացքում տեղ են գտել թերություններ և վարկային միջոցների ոչ արդյունավետ օգտագործման փաստեր:

- Ծրագրի շրջանակներում ստեղծված թվով 23 ԶՕԸ-ների գործունեությունն ապահովելու համար ծախսվել է ավելի քան 400.0 հազ. ԱՄՆ դոլար, սակայն վերջիններիս գործունեության արդյունավետությունը բարելավման կարիք ունի: Այսպես՝ 2004թ. ռոռզվել է կադաստրային տարածքի ընդամենը 50.4%-ը, ջրօգտագործողներից գանձվել է արժեքի 60.0%-ը, իսկ «Ռոռզում ջրառ» ՓԲԸ-ին վճարվել է հասանելիք գումարի 66.1%-ը: 2004թ. ջրի կորուստի մակարդակը կազմել է 44.7%, իսկ մեկ հեկտարի հաշվարկով՝ 1.7 հազ. մ³/հա:
- Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի ներտնտեսային ռոռզման ցանցի վերականգնման աշխատանքների դադարեցման հետևանքով կատարվել է 27,959.0 ԱՄՆ դոլարի անարդյունավետ ծախս:
- Ծանապարհների վերականգնման նախագծման ընթացքում չի կարևորվել համայնքների տարածքում անձրևաջրերի հեռացման խնդիրը, որի հետևանքով կատարվել են մոտ 10.0 հազ. ԱՄՆ դոլարի լրացուցիչ աշխատանքներ:
- «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամի միջոցով տրամադրված փոխառություններից 01.11.2004թ. դրությամբ առկա են 129,806.0 ԱՄՆ դոլարի մայր գումարի ժամկետանց պարտքեր, որից 85,478.0 ԱՄՆ դոլարի մասով թվով 10 ենթավարկառուների նկատմամբ հայցով դիմել են դատարան, մի մասի գծով անցկացվել են գրավի իրացման մի շարք աճուրդներ, որոնց արդյունքում գրավի առարկայի արժեքները նվազել են: Այսպես.
 - «Հովսեփյան և Սարգսյան ընկերներ» ՍՊԸ ենթավարկառուի կողմից գրավադրված գրավի ընդհանուր արժեքը՝ 9,580,000.0 դրամ, վերջին աճուրդի տվյալներով կազմել է 5,091,205.0 դրամ:
 - «Արամ Լենդ» ՍՊԸ ենթավարկառուի կողմից գրավադրված գրավի ընդհանուր արժեքը՝ 13,400.0 ԱՄՆ դոլար, վերջին աճուրդի տվյալներով կազմել է 1,623,845.0 դրամ:
 - «Գայանե Նազարյան» ՍՊԸ ենթավարկառուի կողմից գրավադրված գրավի արժեքը՝ 11,000.0 ԱՄՆ դոլար, վերջին աճուրդի տվյալներով կազմել է 3,772.6 ԱՄՆ դոլար:
- Խախտելով «Փոխառությունների տրամադրման քաղաքականության» 4.2 կետի պահանջները, «Անիվ» հիմնադրամի կողմից «Լիպո» ԲԲԸ-ին 25.04.2003թ. թիվ 133/83 պայմանագրով տրամադրվել է 10,000.0 ԱՄՆ դոլարի վարկ, մինչդեռ վերջինիս մոտ, ըստ

ներկայացրած հաշվեկշռի, առկա էր ավելի քան 23.0 մլն դրամի չմարված վարկի գումար:

- Խախտելով «Փոխառությունների տրամադրման քաղաքականության» 6.3.11 կետի պահանջները, «Անիվ» հիմնադրամի կողմից մի շարք ծրագրերի ֆինանսավորման առաջին տրանշը տրամադրվել է՝ նախքան գրավի իրավունքի գրանցման վկայանի ձևակերպումը:
- Խախտելով հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված փոխառություններից պահանջվող փաստաթղթերի ցանկի պահանջները, «Անիվ» հիմնադրամը հաշվեկշռային հաշվետվություն է պահանջել միայն վերջին հաշվետու տարվա համար, իսկ որոշ դեպքերում՝ ընդհանրապես չի պահանջել:
- ՀՀ կառավարություն ներկայացված Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններում տեղ են գտել անճշտություններ:

Վերահսկողության ընթացքում վերահսկվող օբյեկտների ղեկավարների մասնակցությամբ կազմվել է թվով 4 արձանագրություն:

Սույն հաշվետվության նախագծին ԾԿԳ-ի ղեկավարը ծանոթացել է 2005թ. հունվարի 26-ին, առարկություններ և դիտողություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը՝

1. Ձեռնարկել միջոցառումներ՝
 - Ծրագրի շրջանակներում ստեղծված ՋՕԸ-ների գործունեության արդյունավետության բարձրացման,
 - Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման աշխատանքների դադարեցման հետևանքով աննպատակ ծախսված 27,959.0 ԱՄՆ դոլարի վարկային միջոցների վերականգնման,
 - վարկային միջոցների հաշվին տրամադրված ենթավարկերի և փոխառությունների չվերադարձվելիության ռիսկերի նվազեցման ուղղությամբ:
2. «ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և Վերահսկիչ պալատ ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

«Գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի կոորդինացման գրասենյակ» ՊՀ-ին.

1. ՀՀ կառավարություն ներկայացվող հաշվետվություններում բացառել անճշտությունները, ձեռնարկել միջոցառումներ՝ ավարտման փուլում գտնվող աշխատանքների ավարտման և վերջնավճարների իրականացման ուղղությամբ:

«Անիվ» հիմնադրամին.

1. Ձեռնարկել միջոցառումներ՝ ենթավարկառուներից ժամկետանց պարտավորությունների գանձման ուղղությամբ:

2. Փոխառությունները տրամադրել՝ «Փոխառությունների տրամադրման քաղաքականության» և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված՝ «Փոխառուներից պահանջվող փաստաթղթերի ցանկի» դրույթների կիրառմամբ:

Ծրագրի վարկային միջոցների բաշխումն ըստ կատեգորիաների

2001թ. ապրիլի 30-ին ստորագրված վարկային համաձայնագրով			18.09.2003թ. վարկային համաձայնագրում կատարված փոփոխությունից հետո			28.07.2004թ. վարկային համաձայնագրում կատարված փոփոխությունից հետո					
Կատեգորիաները	Գումարը SDR-ով	Ֆինանսավորման տոկոսը	Կատեգորիաները	Գումարը SDR-ով	Ֆինանսավորման տոկոսը	Կատեգորիաները	Գումարը SDR-ով	Ֆինանսավորման տոկոսը			
1	<p>Շինարարական աշխատանքներ ա. Ծրագրի Ա մասի III կետի համար</p> <p>բ. Ծրագրի Գ մասի համար</p>	<p>4,374,000.0</p> <p>486,000.0</p>	<p>100%</p> <p>50%</p>	<p>1</p> <p>Շինարարական աշխատանքներ ա. Ծրագրի Ա մասի III կետի համար</p> <p>բ. Ծրագրի Գ մասի համար</p>	<p>5,275,000.0</p> <p>565,000.0</p>	<p>100%</p> <p>45% Գ-ՋՄՀ-ի մասով</p>	<p>1</p> <p>Շինարարական աշխատանքներ ա. Ծրագրի Ա մասի III կետի համար</p> <p>բ. Ծրագրի Գ մասի I կետի համար</p> <p>բ. Ծրագրի Գ մասի II կետի համար</p>	<p>5,930,000.0</p> <p>500,000.0</p> <p>620,000.0</p>	<p>100%</p> <p>45% Գ-ՋՄՀ-ի մասով</p> <p>100%</p>		
2	Բ մասի III կետում չնկարագրված սարքավորումներ և մեքենաներ	660,000.0	100%	2	Սարքավորումներ, մեքենաներ և սպրանքներ	500,000.0	100% առանց հարկերի գումարի	2	Սարքավորումներ, մեքենաներ և սպրանքներ	550,000.0	100%
3	Բ մասի III կետում չնկարագրված տեխնիկական աջակցություն, ուսումնասիրություններ և ուսուցում	950,000.0	100%	3	Տեխնիկական աջակցություն, ուսումնասիրություններ և ուսուցում	750,000.0	100%	3	Տեխնիկական աջակցություն, ուսումնասիրություններ և ուսուցում	320,000.0	100%
4	Վարկ	3,690,000.0	ՀԳՓԲ-ի, ՀԿ-ի և «Արեգակ» հիմնադրամի կատարած ծախսերի 100%-ը	4	Վարկ	3,325,000.0	100%	4	Վարկ	3,200,000.0	100%
5	Պարբերական ծախսեր ա. Բ մասի III կետում չնկարագրված աշխատավարձեր և հատկացումներ բ. Բ մասի II և III կետում չնկարագրված շահագործման ծախսեր գ. Շահագործման ծախսեր Բ մասի II կետի համար	<p>900,000.0</p> <p>390,000.0</p> <p>230,000.0</p>	<p>100%</p> <p>100%</p> <p>100% Ծրագրի առաջին 3 տարիների համար</p>	5	Պարբերական ծախսեր	1,350,000.0	100%	5	Պարբերական ծախսեր	1,170,000.0	100%
6	Չբաշխված	670,000.0		6	Չբաշխված	585,000.0		6	Չբաշխված	60,000.0	
Ընդամենը				Ընդամենը				Ընդամենը			
12,350,000.0				12,350,000.0				12,350,000.0			

Ծրագրի իրականացման ընթացքն ըստ տարիների

հազ. ԱՄՆ դոլար

1	Տարվա բյուջեով նախատեսված ծախսերը			Տարվա ընթացքում կատարված աշխատանքները			Կատարված աշխատանքները նախատեսված ծախսերի նկատմամբ	Տարվա ընթացքում փաստացի վճարումները			Փաստացի վճարումները նախատեսված ծախսերի նկատմամբ	Փաստացի վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
	Ընդամենը	Այդ թվում		Ընդամենը	Այդ թվում			Ընդամենը	Այդ թվում			
		Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին			Վարկի հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		
2	3	4	5	6	7	8=5/2	9	10	11	12=9/2	13=9/5	
Շինարարական աշխատանքներ												
2001թ.	0.0	0.0	0.0	31.0	31.0	0.0	-	32.5	32.5	0.0	-	105%
2002թ.	1,416.0	1,416.0	0.0	1,502.9	1,502.9	0.0	106%	2,110.1	2,110.1	0.0	149%	140%
2003թ.	3,095.0	3,095.0	0.0	3,933.2	3,933.2	0.0	127%	3,903.1	3,903.1	0.0	126%	99%
2004թ.	2,812.0	2,812.0	0.0	4,754.0	4,639.9	114.1	169%	3,848.3	3,734.2	114.1	137%	81%
Սարքավորումներ, մեքենաներ և ավտոմեքենաներ												
2001թ.	0.0	0.0	0.0	20.1	20.1	0.0	-	20.1	20.1	0.0	-	100%
2002թ.	586.1	586.1	0.0	252.3	252.3	0.0	43%	249.8	249.8	0.0	43%	99%
2003թ.	235.0	235.0	0.0	99.6	99.6	0.0	42%	102.1	102.1	0.0	43%	103%
2004թ.	127.0	127.0	0.0	409.5	409.5	0.0	322%	409.5	409.5	0.0	322%	100%
Տեխնիկական աջակցություն, ուսումնասիրություններ և ուսուցում												
2001թ.	0.0	0.0	0.0	19.9	19.9	0.0	-	19.9	19.9	0.0	-	100%
2002թ.	104.2	104.2	0.0	99.3	99.3	0.0	95%	99.3	99.3	0.0	95%	100%
2003թ.	160.3	160.3	0.0	148.3	148.3	0.0	93%	148.7	148.7	0.0	93%	100%
2004թ.	174.0	174.0	0.0	150.4	150.4	0.0	86%	150.4	150.4	0.0	86%	100%
Վարկ												
2001թ.	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	-	0.0	0.0	0.0	-	-
2002թ.	844.1	844.1	0.0	1,662.9	1,662.9	0.0	197%	1,543.3	1,543.3	0.0	183%	93%
2003թ.	1,537.5	1,537.5	0.0	1,552.4	1,552.4	0.0	101%	1,671.9	1,671.9	0.0	109%	108%
2004թ.	1,000.0	1,000.0	0.0	1,152.7	1,152.7	0.0	115%	1,152.7	1,152.7	0.0	115%	100%
Պարբերական ծախսեր												
2001թ.	0.0	0.0	0.0	90.5	90.5	0.0	-	93.9	93.9	0.0	-	104%
2002թ.	496.3	496.3	0.0	485.1	485.1	0.0	98%	488.8	488.8	0.0	98%	101%
2003թ.	551.8	551.8	0.0	555.9	555.9	0.0	101%	545.1	545.1	0.0	99%	98%
2004թ.	477.4	477.4	0.0	460.6	460.6	0.0	96%	457.0	457.0	0.0	96%	99%
Ընդամենը												
2001թ.	0.0	0.0	0.0	161.5	161.5	0.0	-	166.4	166.4	0.0	-	103%
2002թ.	3,446.7	3,446.7	0.0	4,002.5	4,002.5	0.0	116%	4,491.3	4,491.3	0.0	130%	112%
2003թ.	5,579.6	5,579.6	0.0	6,289.4	6,289.4	0.0	113%	6,370.9	6,370.9	0.0	114%	101%
2004թ.	4,590.4	4,590.4	0.0	6,927.2	6,813.1	114.1	151%	6,017.9	5,903.8	114.1	131%	87%

ՋՕԸ-ների վերաբերյալ

ՋՕԸ-ի անվանումը	Պայմանագիր կնքած ջրօգտագործողների թիվը (նաբր)	Ոռոգելի կարաստրային բանակը (հա)	2004թ. փաստացի ոռոգված տարածքը		1 մ3 ոռոգման ջրի վարձը	Վճարումները «Ոռոգում Ջրառ» ՓԲԸ-ին (հազ. դրամ)		Փաստացի վճարումները վճարման ենթակա գումարի նկատմամբ	Վճարումներ ՋՕԸ-ներին (հազ. դրամ)		Գ-ամճումը հաստիքի նկատմամբ	Անդամավճարների հավաքում (հազ. դրամ)		Փաստացի անդամավճարները նախատեսվածի նկատմամբ	2004թ. փաստացի ոռոգված տարածքը (հա)	Ջրի ծավալը (հազ. մ3)			Ջրատարը դաշտում (հազ. մ3)	Կորուստը (հազ. մ3)	Կորուստ (%)	Մատակարարված ջրերը 1 հա-ի հաշվով (հազ. մ3/հա)	Ջրատարը 1 հա-ի հաշվով (հազ. մ3/հա)	Կորուստը 1 հա-ի հաշվով (հազ. մ3/հա)
			(հա)	տոկոսը		Վճարման ենթակամ	Փաստացի վճարում		Հատույթ	Գ-ամճում		Նախատեսված	Փաստացի			«Ոռոգում Ջրառ» ՓԲԸ-ից	Տեղական աղբյուրներից	Ընդամենը						
1	2	3	4	5 = 4/3	6	7	8	9= 8/7	10	11	12= 11/10	13	14	15= 14/13	16	17	18	19= 17+18	20	21= 19-20	22= 21/19	23= 19/16	24= 20/16	25= 21/16
1 «Հրազդան Ջուր»	4075	4722	645	13.7	7	6,047.0	2,000.0	33.1	19,609.1	9,500.0	48.4	2,257.5	0.0	0.0	645	6645	0	6645	2801	3843	57.8	10.3	4.3	6
2 «Գավառ»	2575	2575	600	23.3	7	130.0	0.0	0.0	11,350.5	9,052.0	79.7	3,000.0	2,947.2	98.2	600	16	2248	2263	1622	642	28.3	3.8	2.7	1.1
3 «Մարտունի»	4480	4480	1531	34.2	7	0.0	0.0		33,145.0	19,800.0	59.7	5,358.5	200.0	3.7	1531	0	8005	8005	4735	3270	40.8	5.2	3.1	2.1
4 «Վարդգես Վանյան»	3000	3000	1180	39.3	7	0.0	0.0		13,523.4	7,687.0	56.8	4,130.0	957.0	23.2	1180	0	2759	2759	1932	827	30.0	2.3	1.6	0.7
5 «Արագած Ոռոգում»	3280	3280	570	17.4	7	1,515.0	115.0	7.6	8,512.0	6,000.0	70.5	1,995.0	1,100.0	55.1	570	1918	0	1918	1216	702	36.6	3.4	2.1	1.2
6 «Շիր-Ոռոգում»	2122	2122	3728	175.7	5.5	10,112.0	0.0	0.0	37,950.0	15,000.0	39.5	13,048.0	4,500.0	34.5	3728	12800	0	12800	6900	5900	46.1	3.4	1.9	1.6
7 «Աջափնյա Ոռոգում»	1340	1340	1450	108.2	5.5	3,081.0	3,000.0	97.4	9,460.0	7,600.0	80.3	5,075.0	0.0	0.0	1450	3900	0	3900	1720	2180	55.9	2.7	1.2	1.5
8 «Այգաբաց Ոռոգում»	2119	2119	2922	137.9	7	7,146.0	3,300.0	46.2	31,132.5	27,500.0	88.3	10,227.0	1,500.0	14.7	2922	9045	0	9045	4448	4598	50.8	3.1	1.5	1.6
9 «Նոյեմբերյան»	963	963	1163	120.8	7	83,033.0	60,000.0	72.3	18,792.2	12,750.0	67.8	4,070.5	0.0	0.0	1163	4367	0	4367	2685	1682	38.5	3.8	2.3	1.4
10 «Իջևան»	216	216	155	71.8	7	0.0	0.0		816.2	795.1	97.4	542.5	0.0	0.0	155	0	168	168	117	52	30.6	1.1	0.8	0.3
11 «Հախում»	545	545	250	45.9	7	596.0	0.0	0.0	2,251.1	740.0	32.9	875.0	160.0	18.3	250	289	170	459	322	138	29.9	1.8	1.3	0.5
12 «Բերդ»	1400	1400	230	16.4	7	840.0	260.0	31.0	2,919.0	1,450.0	49.7	805.0	550.0	68.3	230	408	276	684	417	267	39.0	3.0	1.8	1.2
13 «Խնձորուտ»	700	700	277.5	39.6	7	0.0	0.0		2,435.9	1,800.0	73.9	971.3	282.0	29.0	278	0	497	497	348	149	30.0	1.8	1.3	0.5

1	2	3	4	5= 4/3	6	7	8	9= 8/7	10	11	12= 11/10	13	14	15= 14/13	16	17	18	19= 17+18	20	21= 19-20	22= 21/19	23= 19/16	24= 20/16	25= 21/16	
14	«Լոռու Ջրանցք»	556	556	724	130.2	7	0.0	0.0		1,096.9	700.0	63.8	2,534.0	400.0	15.8	724	0	340	340	157	183	53.9	0.5	0.2	0.3
15	«Քարա- հունցի Ջրամ- բար»	1890	1890	292	15.4	7	0.0	0.0		1,344.0	1,027.0	76.4	1,022.0	0.0	0.0	292	0	192	192	192	0	0.0	0.7	0.7	0.0
16	«Վայք»	1450	1450	570	39.3	6	42,855.0	34,000.0	79.3	11,177.4	8,900.0	79.6	1,995.0	150.0	7.5	570	1091	1362	2453	1863	590	24.1	4.3	3.3	1.0
17	«Զորեր»	465	465	240	51.6	7	0.0	0.0		4,900.0	1,200.0	24.5	840.0	0.0	0.0	240	0	700	700	700	0	0.0	2.9	2.9	0.0
18	«Մեղրի»	961	961	384	40.0	7	0.0	0.0		13,020.0	11,000.0	84.5	1,344.0	1,000.0	74.4	384	0	3000	3000	1860	1140	38.0	7.8	4.8	3.0
19	«Տոլորս»	462	462	67.8	14.7	6	0.0	0.0		2,377.8	1,500.7	63.1	237.3	0.0	0.0	68	0	402	402	396	5	1.4	5.9	5.8	0.1
20	«Որոտան»	1430	1430	462	32.3	7	0.0	0.0		14,795.2	2,000.0	13.5	1,617.0	0.0	0.0	462	0	6536	6536	2114	4422	67.7	14.1	4.6	9.6
21	«Սպան- դարյան»	369	369	302	81.8	7	0.0	0.0		2,450.0	1,600.0	65.3	1,057.0	0.0	0.0	302	0	350	350	350	0	0.0	1.2	1.2	0.0
22	«Գլափան»	420	420	27	6.4	7	0.0	0.0		2,268.0	2,102.4	92.7	94.5	29.6	31.3	27	0	464	464	324	140	30.2	17.2	12	5.2
23	«Բռնա- կոր»	370	370	296	80.0	7	0.0	0.0		5,523.0	920.0	16.7	1,036.0	0.0	0.0	296	0	789	789	789	0	0.0	2.7	2.7	0.0
Ընդամենը		35188	35835	18066	50.4		155,355.0	102,675.0	66.1	250,849.2	150,624.2	60.0	64,132.1	13,775.8	21.5	18067	40479	28258	68737	38005	30732	44.7	3.8	2.1	1.7

Ծրագրի շրջանակներում ՀԳՓԲ-ի կողմից տրամադրված ենթավարկերի վերաբերյալ
01.01.2005թ. դրությամբ

ՀՀ Մարզերը	ՀՀ մարզերի համայնքների թիվը ¹	ՀԳՓԲ-ի կողմից վարկավորված համայնքների		Մարզի անհատական տնային տնտեսությունների ²		ՀԳՓԲ-ի կողմից տրամադրված ենթավարկեր			Ենթավարկ ստացած անձանց թիվը տնտեսությունների թվի նկատմամբ
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Անդամների թիվը	Գումարը (ԱՄՆ դոլար)	Տրամադրված ենթավարկերի թիվը	Ենթավարկ ստացած անձանց թիվը	
1	2	3	4=3/2	5	6	7	8	9	10=9/5
1 Լոռի	113	100	88.5%	30799	116352	6,012,358.9	7334	2586	8.4%
2 Արագածոտն	115	95	82.6%	24701	105437	6,386,898.7	9876	2878	11.7%
3 Վայոց ձոր	43	32	74.4%	8040	36392	835,354.8	1567	657	8.2%
4 Գեղարքունիք	92	42	45.7%	32312	158684	1,046,456.5	1334	985	3.0%
5 Սյունիք	113	43	38.1%	11930	48525	569,210.6	1337	707	5.9%
6 Տավուշ	62	40	64.5%	20453	83651	1,480,314.8	1910	916	4.5%
7 Կոտայք	67	51	76.1%	25711	118433	2,507,365.4	3137	1495	5.8%
8 Ծիրակ	119	54	45.4%	26427	109129	3,355,382.6	4201	1850	7.0%
Ընդամենը	724	457	63.1%	180373	776603	22,193,342.3	30696	12074	6.7%

¹ Ըստ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի

² Անհատական տնային տնտեսությունների մեջ մտնում են մարզի գյուղական անհատական տնտեսությունները, ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագրի իրականացման մասին

Վերահսկողության հիմքը- «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի 03.12.2003թ. Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2004 թվականի տարեկան ծրագիրը և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի 24.11.2004թ. թիվ 125 հրամանը:

Վերահսկողության նպատակը - Հայաստանի սոցիալական ներդրումների երկրորդ ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համապատասխանությունը վարկային համաձայնագրի պայմաններին և ՀՀ օրենսդրությանը:

Վերահսկողության օբյեկտը - Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ (այսուհետ՝ ՀՄՀ, տնօրեն՝ Ա. Կիրակոսյան):

Ուսումնասիրության ժամանակահատվածը – Ծրագրի սկզբից մինչև 01.01.2005թ.:

1. Ծրագրի նպատակները և տրամադրման պայմանները

- Բարելավել բնակչության ցածր եկամուտ ունեցող խմբերի կենսամակարդակը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքի բարելավման, կարճաժամկետ աշխատատեղերի ստեղծման, համայնքների ներգրավման և տեղական իշխանություններին աջակցման միջոցով,
- օժանդակել կառավարության ապակենտրոնացման նախաձեռնություններին՝ միասնական կառուցվածքային մոտեցման միջոցով տեղական իշխանությունների և համայնքների լիազորություններն ընդլայնելու համար:

Ծրագրի իրականացման նպատակով Միջազգային Չարգացման Ընկերակցության (այսուհետ՝ ՄՉԸ) և Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Փոխառու) միջև 2000թ. մայիսի 19-ին կնքվել է 14.9 մլն SDR գումարով վարկային համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), որը ՀՀ ԱԺ կողմից վավերացվել է 2000թ. հուլիսի 27-ին:

Ըստ Համաձայնագրի, նախատեսվել է Նորվեգիայի կառավարությունից ստանալ 0.58 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամաշնորհային ֆինանսավորում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից՝ 0.6 մլն ԱՄՆ դոլարին համարժեք, իսկ Միացյալ Թագավորության Միջազգային Չարգացման Վարչությունից՝ 2.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ֆինանսավորում՝ որպես համաֆինանսավորողներ:

Ըստ Համաձայնագրի, Փոխառուն պարտավոր է վարկի չառհանված հիմնագումարի դիմաց մուծել պարտավճար՝ ՄՁԸ-ի կողմից յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին սահմանվող, բայց ոչ ավելի, քան տարեկան 0.5% տոկոսադրույքով: Վարկի հիմնագումարի առհանումների և մնացորդային գումարների դիմաց Փոխառուն պարտավոր է պարբերաբար վճարել սպասարկման վարձ՝ տարեկան 0.75%-ի չափով: Պարտավճարը և սպասարկման վարձը պետք է կատարվեն կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ին և դեկտեմբերի 1-ին:

Փոխառուն վարկի հիմնագումարը պարտավոր է հետ վերադարձնել կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ին և դեկտեմբերի 1-ին՝ սկսած 2010թ.-ի հունվարի 1-ից մինչև 2034թ. դեկտեմբերի 1-ը: Մինչև 2019թ. դեկտեմբերի 1-ը կատարվելիք մուծումները պետք է կազմեն հիմնագումարի 1.25%-ը, իսկ դրանից հետո՝ 2.5%-ը:

Ծրագրի ավարտը նախատեսվել է 2005թ. դեկտեմբերի 31-ը:

2. Ծրագրի կատեգորիաները

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են Համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների բաշխումն ըստ կատեգորիաների, ներառյալ 28.01.2003թ. կատարված փոփոխությունը:

Աղյուսակ 1

Ծրագրի կատեգորիաները

(SDR)

Կատեգորիաները	Վարկային միջոցների բաշխումն ըստ Համաձայնագրի	Վարկային միջոցների բաշխումն ըստ 28.01.2003թ. կատարված փոփոխության	Ֆինանսավորման տոկոսաչափը
1. Աշխատանքներ (ա) Ծրագրի Մաս Ա.1 և Ա.2-ին վերաբերող Միկրոծրագրեր (բացառությամբ համաֆինանսավորվող միկրոծրագրերի) (բ) Ծրագրի Մաս Ա.1 և Ա.2-ին վերաբերող համաֆինանսավորվող միկրոծրագրեր	6,724,000.0 2,015,000.0	7,193,350.0 2,015,000.0	90% 45%
2. Ապրանքներ (ա) Ծրագրի Մաս ա.3-ին վերաբերող միկրոծրագրեր (բ) Այլ	1,117,000.0 220,000.0	1,117,000.0 220,000.0	Արտասահմանյան ծախսերի 100%-ը, տեղական ծախսերի 100%-ը (գործարանային ինքնարժեքով ձեռքբերման դեպքում) և տեղական ծախսերի 80%-ը (տեղում ձեռքբերման այլ դեպքերում)
3. Խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և ուսուցողական շրջագալություններ	1,414,000.0	1,414,000.0	100%

4. ՀՄՆՀ II-ի գործունեության ընթացիկ ծախսեր	1,550,000.0	1,550,000.0	100%
5. Ծրագրի նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում	370,000.0	62,920.0	Գումարներն ըստ Համաձայնագրի Բաժին 2.02 (գ)-ի
6. Չբաշխված	1,490,000.0	1,327,730.0	
ԸՆԴԱՄԵՆԸ	14,900,000.0	14,900,000.0	

3. Ծրագրի բաղադրիչները

Մաս Ա. Սոցիալական և տնտեսական փոքրամասշտաբ ենթակառուցվածքի վերականգնում

1. Դպրոցների, առողջապահական կլինիկաների, ջրամատակարարման, ոռոգման, կոյուղագծերի համակարգի և այլ ենթակառուցվածքների վերականգնման և վերակառուցման միկրոծրագրերի իրականացում,
2. Դպրոցների ջեռուցման համակարգի վերականգնման միկրոծրագրերի իրականացում,
3. Դպրոցական կահույքի ապահովում,
4. Իրականացնող գործակալություններին (այսուհետ՝ ԻԳ)՝ միկրոծրագրերի նախապատրաստման, նախագծման, իրականացման և պահպանման ոլորտներում, ինչպես նաև՝ տեղական կապալառուներին՝ մրցութային հայտի ներկայացման գործընթացների և տեխնիկական ստանդարտների ապահովման համար տեխնիկական օժանդակության ցուցաբերում,
5. Միկրոծրագրերի նախագծման և վերահսկման աշխատանքների իրականացում:

Մաս Բ. Տեղական իշխանությունների և համայնքի վրա հիմնված կազմակերպությունների կառուցվածքային հզորացում

1. Ֆինանսական կառավարման, բյուջետավորման և ունեցվածքի կառավարման բնագավառում տեղական իշխանություններին տեխնիկական օժանդակության և ուսուցման ապահովում,
2. Համայնքում գործող կազմակերպություններին (Ջրօգտագործման Ընկերակցություններ, Դպրոցական Խորհուրդներ, Համատիրություններ և այլն)՝ համապատասխան միկրոծրագրերում վերջիններիս ընդգրկման ընթացքում տեխնիկական օժանդակության և ուսուցման ապահովում:

Մաս Գ. Կառուցվածքային աջակցություն Ծրագրին

1. Տեխնիկական օժանդակության ապահովում, ներառյալ՝ ծրագրի ամփոփումները և Ծրագրի աշխատակազմի ու տնօրենության վերապատրաստումը,
2. Ծրագրի տարբեր վարչություններին փոխադրամիջոցներով և սարքավորումներով ապահովում,
3. Համայնքի զարգացմանն առնչվող ուսումնասիրությունների, գնահատումների և մեկնաբանությունների իրականացում,
4. Վարչարարական օժանդակություն Ծրագրին:

4. Ծրագրի կատարողականը

Ծրագրի սկզբից մինչև 2005թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածը կատարվել են 20,579.6 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ կամ ամբողջ ծրագրով նախատեսվածի 74.5%-ը, իսկ փաստացի վճարումները կազմել են 20,699.2 հազ. ԱՄՆ դոլար կամ ամբողջ ծրագրով նախատեսվածի 74.9%-ը (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ (սկզբից մինչև 01.01.2005թ.)

(հազ. ԱՄՆ դոլար)

	Կատեգորիաները	Ամբողջ ծրագրով նախատեսված ծախսերը	Ամբողջ ծրագրով կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքները նախատեսված ծախսերի նկատմամբ	Ամբողջ ծրագրով կատարված փաստացի վճարումները	Փաստացի վճարումները նախատեսված գումարների նկատմամբ	Փաստացի վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
1	2	3	4	5=4/3	6	7=6/3	8=6/4
1	Շինարարական աշխատանքներ	17,980.2	15,315.2	85.2%	15,458.1	86.0%	100.9%
2	Ապրանքների ձեռքբերում	1,794.6	1,693.3	94.4%	1,691.2	94.2%	99.9%
3	Ուսուցում և մասն. օժանդակություն	3,896.0	1,753.9	45.0%	1,732.8	44.5%	98.8%
4	Ընթացիկ ծախսեր	2,080.5	1,737.4	83.5%	1,737.4	83.5%	100.0%
5	Չբաշխված	1,786.9	0.0	0.0%	0.0	0.0%	
6	Կանխավճար	79.8	79.8	100.0%	79.8	100.0%	100.0%
	ԸՆԴԱՄԵՆԸ	27,618.0	20,579.6	74.5%	20,699.2	74.9%	100.6%

Ըստ տարիների ծրագրի կատարողականն արտացոլված է աղյուսակ 3-ում:

Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ (ըստ տարիների)

(հազ. ԱՄՆ դոլար)

	Հատեգոր- րիաները	Հաշվետու տարվա բյուջեով նախատես- ված ծախսերը	Հաշվետու տարվա սկզբից կատարված աշխատանք- ները	Կատարված աշխատանք- ները նախատես- ված ծախսերի նկատմամբ	Հաշվետու տարվա սկզբից կատարված փաստացի վճարում- ները	Փաստացի վճարում- ները նախատես- ված գումարների նկատմամբ	Փաստացի վճարում- ները կատարված աշխա- տանքների նկատմամբ
	1	2	3	4=3/2	5	6=5/2	7=5/3
1	Շինարարական աշխատանքներ						
	2000թ. ¹	-	-	-	-	-	-
	2001թ.	2,560.4	1,975.6	77.2%	2169.1	84.7%	109.8%
	2002թ.	3,440.0	4,187.6	121.7%	4140.1	120.4%	98.9%
	2003թ.	4,000.0	4,316.6	107.9%	4227.6	105.7%	97.9%
	2004թ.	3,891.0	4,835.4	124.3%	4921.3	126.5%	101.8%
2	Ապրանքների ձեռքբերում						
	2000թ. ¹	-	-	-	-	-	-
	2001թ.	393.4	261.7	66.5%	261.7	66.5%	100.0%
	2002թ.	470.0	567.1	120.6%	562.8	119.8%	99.3%
	2003թ.	575.5	555.5	96.5%	550.7	95.7%	99.1%
	2004թ.	300.0	309.0	103.0%	315.9	105.3%	102.2%
3	Ուսուցում և մասնագիտական օժանդակություն						
	2000թ. ¹	-	0.3	-	0.3	-	100.0%
	2001թ.	250.0	162.3	64.9%	161.4	64.6%	99.5%
	2002թ.	483.2	558.8	115.6%	549.4	113.7%	98.3%
	2003թ.	515.0	487.3	94.6%	479.9	93.2%	98.5%
	2004թ.	391.0	545.2	139.4%	541.7	138.5%	99.3%
4	Ընթացիկ ծախսեր						
	2000թ. ¹	-	136.0	-	136.0	-	100.0%
	2001թ.	366.2	366.0	99.9%	366.0	99.9%	100.0%
	2002թ.	395.5	394.1	99.7%	394.1	99.7%	100.0%
	2003թ.	410.0	407.0	99.3%	407.0	99.3%	100.0%
	2004թ.	515.4	514.0	99.7%	514.0	99.7%	100.0%
ԸՆԴԱՄԵՆԸ							
	2000թ. ¹	-	136.3	-	136.3	-	100.0%
	2001թ.	3,570.0	2,765.5	77.5%	2,958.2	82.9%	107.0%
	2002թ.	4,788.7	5,707.6	119.2%	5,646.5	117.9%	98.9%
	2003թ.	5,500.5	5,766.4	104.8%	5,665.3	103.0%	98.2%
	2004թ.	5,097.4	6,203.7	121.7%	6,292.8	123.5%	101.4%

¹ «ՀՀ 2000թ. պետական բյուջեի մասին» ՀՕ-37 ՀՀ օրենքով Ծրագրի համար գումարներ չեն նախատեսվել, սակայն տարվա ընթացքում կատարվել են 136.3 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ և վճարումներ՝ առանց ՀՀ պետական բյուջեում փոփոխություններ կատարելու:

Թերակատարում արձանագրվել է միայն 2001թ.-ին՝ հետևյալ պատճառներով.

«Ապրանքների ձեռքբերում»

Ծրագրով նախատեսված և 2001թ. ապրիլի 30-ին հայտարարված ավտոմեքենաների գնման միջազգային մրցույթը հայտեր չլինելու պատճառով չի կայացել: Այնուհետև, 2001թ. օգոստոսի 9-ի նամակով ՀՄՆՀ-ն դիմել է ՀԲ-ին՝ միջազգային մրցույթը գնահարցումով փոխարինելու համար համաձայնության խնդրանքով, որը ստացվել է միայն 2001թ. նոյեմբերի 28-ին, հետևաբար, գնումն իրականացվել է 2002թ.-ին:

«Ուսուցում և մասնագիտական օժանդակություն»

Տեղական ինքնակառավարման մարմինների ուսուցման պայմանագիր կնքելու վերաբերյալ ՀՄՆՀ-ն 2001թ. հուլիսի 12-ին դիմել է ՀԲ-ին, որի հաստատումը ստացվել է միայն 2001թ. հոկտեմբերի 17-ին, և կատարողի հետ պայմանագիրը կնքվել է 2001թ. հոկտեմբերի 18-ին: Արդյունքում, նշված աշխատանքները Շիրակի և Արագածոտնի մարզերում 2001թ.-ի ընթացքում ամբողջ ծավալով չեն իրականացվել:

5. ՀՄՆՀ-ի և Գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի կորոզիցիաների գրասենյակի միջև կնքված համաձայնագրի իրականացման ընթացքի մասին

2002թ.-ի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել ՀՄՆՀ-ի և «Գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի կորոզիցիաների գրասենյակ» պետական հիմնարկի միջև կնքված Իրականացման Համաֆինանսավորման համաձայնագիրը, ըստ որի ՀՄՆՀ-ին դրամական տեսքով (համաձայն 30.04.2001թ.-ին Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամի (այսուհետ՝ ԳԶՄՀ) և ՀՀ կառավարության միջև կնքված թիվ 561AM համաձայնագրի) տրամադրվել է դրամաշնորհ՝ 710.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով՝ «Համայնքային ենթակառուցվածքներ» բաղադրիչի իրականացման համար:

Համաձայնագրի 1-ին հավելվածի «Բ» և «Գ» կետերի համաձայն, Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, և Արարատի մարզերում, մինչև 2005թ. հոկտեմբերի 1-ը պետք է իրականացվի շուրջ 55 միկրոծրագիր, 1,577.8 հազ. ԱՄՆ դոլար արժեքով՝ ՀՄՆՀ-ի և ԳԶՄՀ-ի հավասարաչափ մասնակցությամբ, ի հավելումն համայնքի ներդրմանը, որը պետք է կազմի ծրագրի արժեքի առնվազն 10%-ը: Հետագայում (24.06.2002թ., 23.09.2002թ. լրացումներ), նույն գումարի սահմաններում հաստատվել և պայմանագրեր են կնքվել միայն թվով 25 ծրագրի իրականացման համար, որտեղ Կոտայքի, Սյունիքի, Գեղարքունիքի և Արարատի մարզերը չեն ընդգրկվել:

01.01.2005թ. դրությամբ նշված 25 ծրագրերից 19-ը ավարտվել են, 3-ը դեռևս ընթացքի մեջ են, իսկ 3-ի պայմանագրերը խզվել են: Խզված պայմանագրերի արժեքը կազմել է 329.3 հազ. ԱՄՆ դոլար, չիրականացված աշխատանքների մնացորդային արժեքը՝ 233.8 հազ. ԱՄՆ դոլար:

6. Նորմատիվ կանոնակարգման խախտումների վերաբերյալ

Մինչև ԻԳ-ների և կապալառու կազմակերպությունների միջև շինարարական կապալի պայմանագրերի կնքումը, ՀՄՆՀ-ի և ԻԳ-ների միջև կնքվում է համաձայնագիր, որով սահմանվում է, որ ՀՄՆՀ-ն պարտավոր է իրականացնել ծրագրի ընդհանուր վերահսկումը և աշխատանքների տեխնիկական ղեկավարումը:

Պայմանագրի Պայմանների ուսումնասիրությամբ պարզվել է, որ`

- Կապալառուն ճշտված պլան-գրաֆիկը ծրագրի ղեկավարի հաստատմանը պետք է ներկայացնի պայմանագրի տվյալներում հաստատված ժամկետից ոչ ուշ: Եթե Կապալառուն նշված ժամկետում դա չի արել, ծրագրի ղեկավարը կարող է «Պայմանագրի Պայմաններում» նշված գումարի չափով պահումներ կատարել հաջորդ վճարման վկայագրից և շարունակել այդ գումարի պահումը` մինչև ուշացած պլան-գրաֆիկի ներկայացման օրվանից հետո հաջորդ վճարումը (կետ 27.3): Ծրագրի սկզբից մինչև 2005թ. հունվարի 1-ը կնքվել են շինարարական կապալի 314 պայմանագրեր, որոնցից 281-ի (կամ 89.5%-ը) ժամկետները երկարաձգվել են, սակայն երկարաձգման համար «Պայմանագրի Պայմաններով» սահմանված նոր պլան-գրաֆիկներ` մնացորդային աշխատանքային ծավալների համար, կապալառուների կողմից Ծրագրի ղեկավարի հաստատմանը չեն ներկայացվել, իսկ ՀՄՆՀ-ի պատասխանատուների կողմից դրանք չեն պահանջվել:
- Մրցույթով ընտրված Կապալառուն կանխավճարը ստանալուց հետո պետք է ապացուցի, որ կանխավճարն օգտագործվել է պայմանագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների, նյութերի և հավաքագրման ծախսերի համար` Ծրագրի ղեկավարին հանձնելով հաշիվների պատճենները կամ այլ փաստաթղթեր (կետ 48.2): Վերը նշված եղանակով ընտրված թվով 200 շինարարական կապալի պայմանագրերի իրականացման ընթացքում կապալառուների կողմից անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ձեռքբերման հաշիվների պատճենները կամ այլ փաստաթղթեր չեն ներկայացվել, իսկ ՀՄՆՀ-ի պատասխանատուների կողմից դրանք չեն պահանջվել:
- Աշխատանքների կատարման երաշխիքը պետք է Պատվիրատուին տրամադրվի ընդունման նամակում նշված ժամկետից ոչ ուշ և պետք է ներկայացվի Պատվիրատուին բանկի կողմից` ընդունելի գումարով և ձևով: Գյումրի քաղաքի Արվեստի դպրոցի շինարարությունն իրականացնող «Կասմա» ՍՊԸ-ին տրամադրվել է 16.0 հազ. ԱՄՆ դոլարի կանխավճար` «Երաշխիք» ապահովագրական ընկերության կողմից տրամադրված կանխավճարի երաշխիքի հիման վրա, որով խախտվել է «Պայմանագրի Պայմանների» 49.1 կետի պահանջը:

7. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ

Ծրագրի Խորհրդի 2004թ. մարտի 23-ի նիստում (Արձանագրություն թիվ 10) ՀՄՆՀ գործադիր տնօրենի կողմից հարց է բարձրացվել շինանյութերի գների թռիչքաձև, անկանխատեսելի բարձրացման վերաբերյալ, որն անդրադառնում է աշխատանքների տեմպերի և որակի վրա: Ինչպես նաև առաջարկվել է, որ Խորհուրդն այդ կապակցությամբ որոշում կայացնի և թույլատրի վերանայել գները և համապատասխանեցնել շուկայականին: Նշված հարցի կապակցությամբ Խորհրդի կողմից որոշվել է, որ 2002թ. մայիսից մինչև 2004թ. մարտի 23-ը կնքված պայմանագրերով շինարարական փուլում գտնվող կապալառուների նկատմամբ, որոնք գների թռիչքաձև բարձրացման հետևանքով կիրառվեն պայմանագրի կատարումից, տուգանային սանկցիաներ չկիրառել: Եթե մինչև այդ որոշման ընդունումը խզվել է թվով 9 պայմանագիր, որոնցից 7-ի նկատմամբ հաշվարկվել է տույժ, իսկ 2-ի նկատմամբ Խորհուրդը տույժը զիջել է, ապա որոշման ընդունումից հետո թվով 15 կապալառուների կողմից նամակներ են հղվել ՀՄՆՀ գործադիր տնօրենին՝ կնքված պայմանագրերը խզելու և տույժեր չկիրառելու խնդրանքով: Արդյունքում, խզվել են շինարարական կապալի թվով 15 պայմանագրեր, որոնց նկատմամբ հաշվարկված տույժը կկազմեր 42.7 հազ. ԱՄՆ դոլար (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Տույժի չենթարկված կապալառուների ցանկը

հազ. ԱՄՆ դոլար

	Կապալառուի անվանումը և պայմանագրի կողմը	Պայմանագրով սահմանված		Պայմանագրի արժեքը	Պայմանագրի խզման պահին կատարված աշխատանքների արժեքը	Պայմանագրի արժեքի մնացորդը	Հաշվարկված տույժ, (%) ¹	Կապալառուի կողմից ՀՄՆՀ-ին ներկայացված դիմումի ամսաթիվը
		Սկիզբ	Ավարտ					
	1	2	3	4	5	6=4-5	7=6x5	8
1	«Շինարար Վահագն» ՍՊԸ (103)	27.05.2002	25.11.2003	118.8	44.5	74.3	3.7	20.04.2004
2	«Արտաշատչին» ՍՊԸ (240)	27.01.2003	25.08.2004	117.4	30.0	87.4	4.4	31.05.2004
3	«Սանդղակ» ՍՊԸ (248)	16.09.2002	25.08.2004	78.3	42.7	35.6	1.8	10.08.2004
4	«Տոնական» ԱԿ (359)	13.06.2002	01.08.2004	79.4	37.6	41.8	2.1	25.10.2004
5	«Հայր և որդի Դադաշյան» ՍՊԸ (435)	10.09.2003	20.10.2004	105.8	24.4	81.4	4.1	25.06.2004

¹ Տույժը հաշվարկվել է՝ Պայմանագրի տվյալների կետ 31-ի համաձայն.

Տոկոսը, որը պետք է կիրառվի չավարտված աշխատանքների ծավալի համար, ներկայացնելով Պատվիրատուի լրացուցիչ ծախսը՝ Աշխատանքների ավարտման համար, կազմում է չավարտված աշխատանքների 5%-ը:

6	«Կարեն 77» ՍՊԸ (466)	08.09.2003	30.10.2004	142.0	53.6	88.4	4.4	14.09.2004
7	«Դիլիջանշին» ՍՊԸ (504)	13.04.2004	10.01.2005	138.5	67.5	71.0	3.6	17.08.2004
8	«ԻՇԿ» ՍՊԸ (531)	23.02.2004	20.08.2004	118.5	50.9	67.6	3.4	21.07.2004
9	«Սանդղակ» ՍՊԸ (598)	11.02.2004	20.07.2004	80.5	24.5	56.0	2.8	23.08.2004
10	«Վեդիշին» ՓԲԸ (652)	26.01.2004	28.07.2004	64.9	1.1	63.8	3.2	06.07.2004
11	«Կարին» ՍՊԸ (681)	02.07.2004	22.11.2004	64.3	16.3	48.0	2.4	10.09.2004
12	«Արտաշատշին» ՍՊԸ (708)	05.02.2004	28.07.2004	64.1	9.1	55.0	2.8	08.09.2004
13	«Արտաշատշին» ՍՊԸ (800)	01.09.2003	24.03.2004	79.5	18.9	60.6	3.0	12.08.2004
14	«Արմեն-Արան» ԱԿ (802)	17.11.2003	14.04.2004	31.8	26.1	5.7	0.3	26.11.2004
15	«Տոնական» ԱԿ (812)	03.05.2004	24.08.2004	40.5	26.6	13.9	0.7	14.09.2004
ԸՆԴԱՄԵՆԸ						850.5	42.7	

15 Միկրոձրագրերի ընթացքի դադարեցումից հետո, աշխատանքների մնացորդային ծավալների հիման վրա կազմվել են նախահաշիվներ: 2005թ. հունվարի 1-ի դրությամբ վերը նշված Միկրոձրագրերից 10-ի մասով հայտարարվել են մրցույթներ և արդյունքում կնքվել շինարարական կապալի պայմանագրեր՝ մրցութային գործընթացում հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ, իսկ 5-ի մասով պայմանագրեր չեն կնքվել (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5
հազ. ԱՄՆ դոլար

	Շինարարական կապալի պայմանագրի կողմը	Առաջին կապալառուի հետ կնքված պայմանագրային արժեքը	Պայմանագրի խզման պահին առաջին կապալառուի կողմից կատարված աշխատանքների արժեքը	Երկրորդ կապալառուի հետ կնքված պայմանագրի արժեքը	Ծրագրի իրականացման համար ծախսման ենթակա գումարը	Տարբերությունը	Երկրորդ պայմանագրի արժեքի աճը՝ առաջինի նկատմամբ
	1	2	3	4	5=3+4	6=5-2	7=6/2x100%
1	103	118,8	44.5	98.1	142.6	23,8	20.0%
2	240	117.4	30.0	115.9	145.9	28.5	24.3%
3	248	78.3	42.7	59.3	102.0	23.7	30.3%
4	359	79.4	37.6	60.9	98.5	19.1	24.1%
5	504	138.5	67.5	105.2	172.7	34.2	24.7%
6	531	118.5	50.9	102.0	152.9	34.4	29.0%
7	598	80.5	24.5	78.8	103.3	22.8	28.3%
8	652	64.9	1.1	90.8	91.9	27.0	41.6%
9	708	64.1	9.1	79.9	89.0	24.9	38.8%
10	800	79.5	18.9	91.9	110.8	31.3	39.4%
Ընդամենը 10 միկրոձրագրերը		939.9	326.8	882.8	1,209.6	269.7	28.7%
11	435	105.8	24.4	Մրցույթ չի հայտարարվել			-
12	466	142.0	53.6	Մրցույթ չի հայտարարվել			-
13	681	64.3	16.3	Մրցույթ չի հայտարարվել			-
14	802	31.8	26.1	Մրցույթ չի հայտարարվել			-

15	812	40.5	26.6	Մրցույթը չեղյալ է հայտարարվել			-
Ընդամենը 5 միկրոծրագրերով		384,4	147.0	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		1,324.3	473.8	-	-	-	-

Աղյուսակում արտացոլված թվով 10 Միկրոծրագրերի իրականացման համար, առաջին կապալառուների հետ կնքվել էին պայմանագրեր՝ շուրջ 939.9 հազ. ԱՄՆ դոլար արժեքով: Նշված 10 Միկրոծրագրերն իրականացնող կապալառուների հետ շինարարական կապալի պայմանագրերի խզումից հետո, մնացած աշխատանքներն իրականացնելու համար կնքված պայմանագրերի արժեքը աճել է 269.7 հազ. ԱՄՆ դոլարով, կամ 28.7%-ով:

8. Հաշվետվությունների վերաբերյալ

Ծրագրի 2001թ.-ի իրականացման ընթացքի վերաբերյալ ՀՄՆՀ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվություններում ՀԲ-ի վարկի հաշվին նախատեսված գումարը 189.6 հազ. ԱՄՆ դոլարով ավելի է 2001թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվածից (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

	<i>ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարները (դրամ)</i>	<i>ՀՀ պետական բյուջեում կատարված փոփոխություն (դրամ)</i>	<i>ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարները (հազ. ԱՄՆ դոլար)</i>	<i>ՀՄՆՀ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված տարեկան հաշվետվությամբ (հազ. ԱՄՆ դոլար)</i>	<i>Տարբերությունը (հազ. ԱՄՆ դոլար)</i>
1	2	3	4	5	6=5-4
ԸՆԴԱՄԵՆԸ	1,542,750.0	1,498,750.0	2,725.0	2,914.6	189.6
ՀԲ-ի վարկի հաշվին	1,454,750.0	1,410,750.0	2,565.0	2,754.6	189.6
ՀՀ բյուջեի հաշվին	88,000.0	88,000.0	160.0	160.0	0

Դիշտ չէ ներկայացված նաև ամբողջ ծրագրով նախատեսված գումարը. ՀԲ-ի վարկի մասով ընդամենը 20,000.0 հազ. ԱՄՆ դոլարի փոխարեն արտացոլված է 18,650.9 հազ. ԱՄՆ դոլար:

2002թ.-ի հաշվետվություններում ՀԲ-ի վարկի հաշվին նախատեսված գումարը 60.0 հազ. ԱՄՆ դոլարով ավելի է 2002թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվածից (Աղյուսակ 7):

	ՀՀ պետական բյուջեով նախատես- ված գումարները (դրամ)	ՀՀ պետական բյուջեում կատարված փոփոխու- թյուն (դրամ)	ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարները (հազ. ԱՄՆ դոլար)	ՀՄՆ-ի կողմից ՀՀ կառավա- րություն ներկայացված տարեկան հաշվետվու- թյանը (հազ. ԱՄՆ դոլար)	Տարբերու- թյունը (հազ. ԱՄՆ դոլար)
1	2	3	4	5	6=5-4
ԸՆԴԱՄԵՆԸ	2,103,086. 5	2,069,305. 5	3,675. 5	3,735. 5	60.0
ՀԲ-ի վարկի հաշվին	2,013,003.5	2,013,003.5	3,575.5	3,635.5	60.0
ՀՀ բյուջեի հաշվին	90,080.0	56,300.0	100.0	100.0	0.0

Համաձայնագրի կատեգորիաներում կատարված փոփոխությունները չեն արտացոլվել 2003 և 2004թթ. Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվություններում:

9. ՄՁԸ-ին վճարված պարտավճարների վերաբերյալ

ՄՁԸ-ի և ՀՀ Կառավարության միջև կնքված Համաձայնագրի 2.04 (ա) կետի համաձայն, Հայաստանի Հանրապետությունը վարկի չառհանված գումարի դիմաց 2004թ.-ի ընթացքում վճարել է 42.4 հազ. ԱՄՆ դոլարի պարտավճար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի իրականացման ընթացքում տեղ են գտել թերություններ և նորմատիվ կանոնակարգման խախտումների փաստեր:

- ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվությունների պլանային տվյալներում տեղ են գտել անճշտություններ:
- Ծրագրի 2001թ.-ի տարեկան բյուջեն կատարվել է ընդամենը 77.5%-ով, որը հետևանք է «ապրանքների ձեռքբերում», «ուսուցում և մասնագիտական օժանդակություն» կատեգորիաների թերակատարման:
- «Գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի կորոդինացման գրասենյակ» պետական հիմնարկի և ՀՄՆ-ի միջև կնքված համաֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում հաստատված 25 ծրագրերից 19-ը ավարտվել են, 3-ը դեռևս ընթացքի մեջ են, իսկ 3-ի պայմանագրերը խզվել են: Խզված պայմանագրերի արժեքը կազմել է 329.3 հազ. ԱՄՆ դոլար, չիրականացված աշխատանքների մնացորդային արժեքը՝ 233.8 հազ. ԱՄՆ դոլար:

- Խախտվել են շինարարական կապալի պայմանագրերի պայմանների 27.3, 48.2 և 49.1 կետերը:
- Ծրագրի Խորհրդի 2004թ. մարտի 23-ի նիստում որոշվել է, որ 2002թ. մայիսից մինչև 2004թ. մարտի 23-ը կնքված պայմանագրերով շինարարական փուլում գտնվող կապալառուների նկատմամբ, որոնք գների թռիչքաձև բարձրացման հետևանքով կիրառվեն պայմանագրի կատարումից, տուգանային սանկցիաներ չկիրառել: Եթե մինչև այդ որոշման ընդունումը խզվել է թվով 9 պայմանագիր, որոնցից 7-ի նկատմամբ հաշվարկվել է տույժ, իսկ 2-ի նկատմամբ Խորհուրդը տույժը զիջել է, ապա որոշման ընդունումից հետո թվով 15 կապալառուների կողմից նամակներ են հղվել ՀՄՆՀ գործադիր տնօրենին՝ կնքված պայմանագրերը լուծելու և տույժեր չկիրառելու խնդրանքով: Արդյունքում, լուծվել են շինարարական կապալի թվով 15 պայմանագրեր՝ առանց 42.7 հազ. ԱՄՆ դոլարի չափով տույժեր կիրառելու: Դադարեցված Միկրոծրագրերի պայմանագրային մնացորդային արժեքների հիման վրա կազմվել են նախահաշիվներ, 01.01.2005թ. դրությամբ 10-ով հայտարարվել են մրցույթներ և կնքվել շինարարական կապալի պայմանագրեր, որոնց արժեքը նախորդ պայմանագրերի նկատմամբ աճել է 269.7 հազ. ԱՄՆ դոլարով կամ 28.7%-ով, իսկ հինգի մասով պայմանագրեր չեն կնքվել:
- ՄՁԸ-ի և ՀՀ Կառավարության միջև կնքված Համաձայնագրի 2.04 (ա) կետի համաձայն, Հայաստանի Հանրապետությունը վարկի չառհանված գումարի դիմաց 2004թ.-ի ընթացքում վճարել է 42.4 հազ. ԱՄՆ դոլարի պարտավճար:

Վերահսկողության ընթացքում վերահսկող հանձնաժողովի կողմից, ՀՄՆՀ-ի ղեկավարության մասնակցությամբ կազմվել է 7 արձանագրություն:

Սույն հաշվետվության նախագծին ՀՄՆՀ-ի գործադիր տնօրենը ծանոթացել է 31.01.2005թ.-ին, առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի Խորհրդին և ՀՄՆՀ-ի ղեկավարությանը.

1. Ձեռնարկել միջոցներ՝ Ծրագրի իրականացման ընթացքում տեղ գտած թերությունների և անճշտությունների շտկման ուղղությամբ, և «ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և Վերահսկիչ պալատ ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 24.12.2004թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ կառավարություն և «Էներգահինվեստ ԾԻԳ» ՊՀ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի իրականացման ընթացքի մասին

Վերահսկողության հիմքը - «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի 03.12.2003թ. Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2004 թվականի տարեկան ծրագիրը և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի 27.09.2004թ. թիվ 107 հրամանը:

Վերահսկողության նպատակը - «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման ընթացքը:

Վերահսկողության օբյեկտը - «Էներգահինվեստ - Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգերի վարկային ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (այսուհետ՝ ԾԻԳ, տնօրեն՝ Տ. Դավթյան):

Ուսումնասիրության ժամանակահատվածը - Ծրագրի սկզբից մինչև 01.10.2004թ.:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային Զարգացման Ընկերակցության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի իրականացման ընթացքի մասին

Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության (այսուհետ՝ Փոխառու) և Միջազգային Զարգացման Ընկերակցության (այսուհետ՝ ՄՁԸ) միջև 30.03.1999թ.-ին կնքվել է 15.0 մլն SDR գումարով Վարկային համաձայնագիր, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 25.08.1999թ.-ին:

1.1. Ծրագրի նպատակները և վարկի տրամադրման պայմանները

Ծրագրի նպատակներն են՝

- բարելավել էլեկտրաէներգիայի և եկամուտների հոսքերի չափումը և հաշվառումը արտադրող, հաղորդող և բաշխող ընկերությունների միջև Երևանի էլեկտրացանցում (այսուհետ՝ ԵԷՑ),
- նվազեցնել տեխնիկական կորուստները էլեկտրահաղորդման ցանցում և ԵԷՑ-ում, բարելավելով համակարգի օգտակարությունը,
- բարելավել Հայէներգոյի, ԲԷՑ-ի և ԵԷՑ-ի առևտրային գործունեությունը և ֆինանսական իրավիճակը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս Ա - Համակարգի չափիչ սարքեր և համակարգիչներ

Հաշվիչների, ստուգիչ սարքերի, համակարգիչների և համակարգչային ծրագրերի մատակարարում՝ առևտրային գործարքներին օժանդակելու և էլեկտրատեղեկալի ու եկամտի հոսքերի ներքին վերահսկումն ապահովելու նպատակով:

Մաս Բ - Էլեկտրահաղորդման համակարգի վերականգնում

220 կվ և 110 կվ անջատիչների և տրանսֆորմատորների փոխարինում Շահումյան-2, Եղեգնաձորի, Ջովունու և Մարաշի էլեկտրահաղորդման ենթակայաններում, Շահումյան-2 ենթակայանի ցածր լարման բաշխիչ սարքերի վերակառուցում և արդիականացում:

Մաս Գ - Էլեկտրատեղեկալի բաշխիչ համակարգի վերականգնում

Անջատիչների, տրանսֆորմատորների և մալուխների փոխարինում՝ Երևանում էլեկտրատեղեկալի բաշխիչ ցանցերի մի մասը վերականգնելու նպատակով:

Մաս Դ - Տեխնիկական ծառայություններ

1. Խորհրդատվական ծառայությունների մատուցում և ուսուցում՝ ԾԻԳ-ին հետևյալ հարցերում աջակցելու նպատակով.
 - մատակարարում և Ծրագրի իրականացում,
 - Հայէներգոյի, ԲԷՑ-ի և ԵԷՑ-ի ֆինանսական աուդիտ:
2. Խորհրդատվական ծառայությունների մատուցում Հայէներգոյին՝ իր կառավարչական կարողությունն ուժեղացնելու նպատակով:

Ըստ Վարկային համաձայնագրի, Փոխառուն պարտավոր է պարբերաբար մուծել պարտավճար՝ վարկի չառհանված հիմնագումարի դիմաց՝ ՄՁԸ-ի կողմից յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին սահմանվող, բայց ոչ ավելի, քան տարեկան 0.5 տոկոսադրույքով: Վարկի ժամանակ առ ժամանակ դուրս գրվող և մնացորդ հիմնական գումարների դիմաց Փոխառուն պարտավոր է պարբերաբար վճարել սպասարկման վարձ՝ տարեկան 0.75%-ի չափով: Պարտավճարը և սպասարկման վարձը պետք է կատարվեն կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 15-ին և հունիսի 15-ին:

Փոխառուն վարկի հիմնագումարը պարտավոր է հետ վերադարձնել կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 15-ին և հունիսի 15-ին՝ սկսած 2009թ.-ի հունիսի 15-ից մինչև 2033թ.-ի դեկտեմբերի 15-ը: Մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը կատարվելիք մուծումները պետք է կազմեն հիմնագումարի 1.25%-ը, իսկ դրանից հետո՝ 2.5%-ը:

Ծրագրի ավարտը սահմանվել է 2001թ. դեկտեմբերի 31-ը: Հետագայում Վարկային համաձայնագրում կատարված փոփոխությունների արդյունքում Ծրագրի ավարտման ժամկետ է սահմանվել 2004թ. դեկտեմբերի 31-ը:

1.2. Ծրագրի կատեգորիաները

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են Վարկային համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների բաշխումն ըստ կատեգորիաների, ինչպես նաև՝ ՀԲ-ի կողմից հաստատված վերաբաշխումները:

Ծրագրի կատեգորիաները

(SDR)

Կատեգորիաները	Վարկային միջոցների բաշխումը				Ֆինանսավորման տոկոսաչափը
	Ըստ Համաձայնագրի	31.10.2002թ. փոփոխությունից հետո	29.05.2003թ. փոփոխությունից հետո	12.08.2003թ. փոփոխությունից հետո	
1	2	3	4	5	6
Ապրանքներ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ	10,700,000.0	11,193,000.0	12,000,000.0	12,752,000.0	Արտասահմանյան ծախսերի 100%, ծախսերի (գործարանային արժեք) 100% և տեղում մատակարարված այլ հողվածների տեղական ծախսերի 85%
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում	1,100,000.0	1,009,000.0	950,000.0	950,000.0	100%
ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	300,000.0	750,000.0	750,000.0	750,000.0	100%
Ծրագրի նախապատրաստման կանխավճարի վերաֆինանսավորում	1,400,000.0	457,000.0	457,000.0	457,000.0	Համաձայնագրի Բաժին 2.02 (զ)-ի համաձայն վճարվող գումարները
Աշխատանքներ	-	91,000.0	91,000.0	91,000.0	90%
Չտեղաբաշխված	1,500,000.0	1,500,000.0	752,000.0	0.0	
Ընդամենը	15,000,000.0	15,000,000.0	15,000,000.0	15,000,000.0	

2. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի Անդրծովյան Տնտեսական Համագործակցության Հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի իրականացման ընթացքի մասին

Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության և Ճապոնիայի Անդրծովյան Տնտեսական Համագործակցության Հիմնադրամի միջև 18.02.1999թ.-ին կնքվել է 5,399.0 մլն իեն (45.37 մլն ԱՄՆ դոլար) գումարով Փոխառության համաձայնագիր, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 25.08.1999թ.-ին:

1999թ. հոկտեմբերի 1-ին Ճապոնիայի Անդրծովյան Տնտեսական Համագործակցության Հիմնադրամի և Ճապոնիայի Արտահանման-Ներմուծման Բանկի միացումից ստեղծվել է Միջազգային Համագործակցության Ճապոնական Բանկը (այսուհետ՝ ՄՀՃԲ):

2.1. Ծրագրի նպատակները և վարկի տրամադրման պայմանները

Ծրագրի նպատակն է՝

- նվազեցնել տեխնիկական և առևտրային կորուստները,
- ավելացնել համակարգի մատչելիությունը և նվազեցնել շահագործման ծախսերը,
- մեծացնել փոխառու ձեռնարկությունների առևտրային կենսունակությունը:

Փոխառուն պետք է շահութատու կուս վճարի ՄՀՃԲ-ին կիսամյակային մուծումներով՝ կատեգորիաներ ա, բ, և դ-ին համապատասխան դուրսգրված և չմարված գումարից 1.8% տարեկան տոկոսադրույքով, կատեգորիա գ-ին համապատասխան դուրսգրված և չմարված հիմնական գումարից՝ 0.75% տարեկան տոկոսադրույքով:

Եթե հիմնական գումարի տոկոսի մարումը կամ էլ Փոխառության համաձայնագրի շրջանակներում պահանջվող որևէ այլ վճարի մուծում ուշացվի, ապա վարկի 1.8%-ին կավելանա ևս 2% և կկազմի 3.8%:

Վարկի հիմնական գումարների մարումը, ըստ Փոխառության համաձայնագրի, պետք է իրականացվի հետևյալ կերպ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

մլն իեն

Կատեգորիա	Վճարման ամսաթիվ	Գումարը
ա, բ, դ	20 փետրվարի 2009թ.	123.80
ա, բ, դ	Յուրաքանչյուր փետրվարի 20-ին և օգոստոսի 20-ին՝ 2009թ. օգոստոսի 20-ին և մինչև 2029թ. փետրվարի 20-ը	123.78
գ	20 փետրվարի 2009թ.	5.34
գ	Յուրաքանչյուր փետրվարի 20-ին և օգոստոսի 20-ին՝ 2009թ. օգոստոսի 20-ին և մինչև 2039թ. փետրվարի 20-ը	5.31

2.2. Ծրագրի կատեգորիաները

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են Փոխառության համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների բաշխումն ըստ կատեգորիաների (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

	Կատեգորիա	Վարկային միջոցների բաշխումը (մլն իեն)	Ֆինանսավորման տոկոսաչափը
ա	Էլեկտրահաղորդման համակարգի վերականգնում	2,035.0	100%
բ	Բաշխիչ համակարգի վերականգնում	2,486.0	100%
գ	Խորհրդատվական ծառայություններ	324.0	100%
դ	Չնախատեսված միջոցներ	554.0	
	Ընդամենը	5,399.0	

3. Ծրագրի կատարողականը

ՀՔ-ի և ՄՀՃՔ-ի մասնագետների մասնակցությամբ 1997թ. ընթացքում ուսումնասիրվել է Հայաստանի էներգահամակարգը և ներդրումների նպատակահարմարությունը տվյալ բնագավառում: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, ՀՀ էներգետիկայի նախարարությունների համապատասխան մասնագետների մասնակցությամբ քննարկվել և համաձայնեցվել են Ծրագրի ծավալները: Վարկի ընդհանուր ծավալը պետք է կազմեր 94.0 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ ՀՔ-ից՝ 48.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՄՀՃՔ-ից՝ 45.3 մլն ԱՄՆ դոլար:

1997թ. օգոստոսի 29-ին Ծրագրի պատրաստման համար Q0630-AM համաձայնագրով ՀՔ-ն տրամադրել է 2.0 մլն ԱՄՆ դոլարի չափով կանխավճար:

Նախատեսվել էր մինչև 1997թ.-ի վերջը ավարտել բանակցությունները և 1998թ. հունվարին կնքել Վարկային և Փոխառության համաձայնագրերը: Բանակցությունների արդյունքում ARM-P1 Փոխառության համաձայնագիրը ՀՀ կառավարության և ՄՀՃՔ-ի միջև ստորագրվել է 1999թ. փետրվարի 18-ին՝ 5,399.0 մլն ճապոնական իեն կամ 45.3 մլն ԱՄՆ դոլար գումարով, իսկ 3175-AM Վարկային համաձայնագիրը ՀՀ կառավարության և ՀՔ-ի միջև՝ 1999թ. մարտի 30-ին՝ 15.0 մլն SDR կամ 21.7 մլն ԱՄՆ դոլար գումարով: ՄՀՃՔ-ի հետ կնքած Փոխառության համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999թ. հոկտեմբերի 20-ին, իսկ ՀՔ-ի հետ կնքած Վարկային համաձայնագիրը՝ 2000թ. մայիսի 30-ին:

ՀՔ-ի վարկի մասով Ծրագրի սկզբից մինչև 2004թ.-ի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարվել են 16,544.4 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ, կամ ընդամենը Ծրագրով նախատեսվածի 76%-ը, իսկ փաստացի վճարումները կազմել են 14,452.2 հազ. ԱՄՆ դոլար կամ կատարված աշխատանքների 87%-ը (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ծրագրի իրականացման ընթացքը սկզբից մինչև 01.10.2004թ.

(ԱՄՆ դոլար)

1	Կատեգորիաներ	Ծրագրով նախատեսված գումարը	Ծրագրի սկզբից կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքները նախատեսվածի նկատմամբ	Ծրագրի սկզբից կատարված վճարումները	Փաստացի վճարումները նախատեսվածի նկատմամբ	Փաստացի վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
1	2	3	4	5=4/3	6	7=6/3	8=6/4
	ԸՆԴԱՄԵՆԸ	21 719 739	16 544 402	76%	14 452 231	67%	87%
1	Ապրանքներ և սարքավորումներ	18 600 419	14 476 041	78%	12 449 402	67%	86%
2	Խորհրդատվական ծառայություններ	1 332 174	740 829	56%	696 372	52%	94%

	Խորհրդրասովական ծառայություններ և ուսուցում	849 393	344 509	41%	300 052	35%	87%
	ԾԻԳ-ի հիմնական աշխատողների աշխատավարձ	482 781	396 320	82%	396 321	82%	100%
3	Գործառնական ծախսեր	1 049 416	624 761	60%	602 312	57%	96%
	Աուդիտ	770 671	418 536	54%	396 036	51%	95%
	Գործառնական ծախսեր	278 745	206 225	74%	206 277	74%	100%
4	Ծրագրի նախապատրաստման կանխավճար (փակված է)	603 323	581 533	96%	603 176	100%	104%
5	Շինարարական աշխատանքներ	134 407	121 237	90%	100 968	75%	83%
6	Չբաշխված միջոցներ	-	-	-	-	-	-

Կատարողականի ցածր մակարդակը պայմանավորված է 1999-2003թթ. Ծրագրի իրականացման թերակատարմամբ:

«ՀՀ 1999թ. պետական բյուջեի մասին» ՀՕ-268 (30.12.1998թ.) ՀՀ օրենքով ՀԲ-ի և ՄՀՃԲ-ի միջոցներով իրականացվող Ծրագրի համար նախատեսվել է 11.0 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ ՀԲ-ի և ՄՀՃԲ-ի հետ Վարկային և Փոխառության համաձայնագրերը ստորագրված չէին:

1999թ. ընթացքում ՀԲ-ի և ՄՀՃԲ-ի կողմից տրամադրված վարկային միջոցներից գումարներ չեն ծախսվել:

Ըստ տարիների կատարողականներն արտացոլված են ՀԲ-ի մասով հավելված 1-ում, ՄՀՃԲ-ի մասով՝ հավելված 2-ում:

ՀԲ-ի վարկի մասով 2000, 2001, 2002 և 2003թթ. կատարողականները կազմել են համապատասխանաբար՝ 20.8%, 10.7%, 10.8% և 20.5% հետևյալ պատճառով՝

1999թ. դեկտեմբերին ՀՀ էներգետիկայի նախարարի կողմից հաստատվել էին ծրագրի նոր ծավալները, որում ընդգրկված էին 220 կվ 9 ենթակայան՝ նախկին 4-ի փոխարեն: 2000թ. մայիսին ՀԲ հանձնախմբի այցելության ընթացքում ուսումնասիրվել է փոփոխված ծրագիրը, և արդյունքում առաջարկվել է փոփոխություն կատարել Վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածներում: Հանձնախմբի տեխնիկական գծով մասնագետը նպատակահարմար է գտել ապրանքների և սարքավորումների ձեռքբերման մրցույթներն իրականացնել որպես մեկ մրցույթ՝ 9 ենթակայանների համար: 2000թ. նոյեմբերի 24-ին ԾԻԳ-ի կողմից ՀԲ-ի հաստատմանն է ուղարկվել Վարկային համաձայնագրում փոփոխությունների իրականացման փաթեթը, որը չի հաստատվել, և միայն 2001թ. դեկտեմբերին՝ ՀԲ-ի հանձնախմբի այցի ժամանակ, առաջարկվել է վերանայել մրցութային փաստաթղթերը՝ ծրագրի սկզբնական ծավալների տեսանկյունից, և ներկայացնել ՀԲ-ի հաստատմանը մինչև 2002թ. մարտի 15-ը:

ԾԻԳ-ի կողմից 2002թ. մարտի 3-ին 220 կվ 4 ենթակայանների վերանայված մրցութային փաթեթը ներկայացվել է ՀԲ՝ հավանության, որը ստացվել է միայն օգոստոսի 9-ին: Փաթեթի

տեխնիկական մասը ուշացումով է հաստատվել ՀՀ էներգետիկայի նախարարության կողմից (ներկայացվել է ապրիլի 15-ին, հաստատվել է հուլիսի 7-ին): ԾԻԳ-ի կողմից մրցույթի հայտարարությունը հրապարակվել է 2002թ. օգոստոսի 20-ին: Մրցույթի արդյունքները ՀԲ-ի և Ծրագրի կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հավանությանն է ներկայացվել 2002թ. դեկտեմբերի 29-ին, որը հաստատվել է համապատասխանաբար՝ 2003թ. փետրվարի 14-ին և մարտի 11-ին: Արդյունքում՝ մրցույթում հաղթող ճանաչված ABB Utilities GmbH (այսուհետ՝ ABB) ընկերության հետ պայմանագիրը ստորագրվել է միայն 2003թ. ապրիլի 30-ին:

Ծրագրի 2003թ. բյուջեի «Ապրանքներ և սարքավորումներ» կատեգորիայով ABB ընկերության մասով նախատեսվել է 1,100.0 հազ. ԱՄՆ դոլար: Համաձայն ընկերության հետ կնքված պայմանագրի ժամանակացույցի, 2003թ. ընթացքում պետք է իրականացվեին բոլոր առաքումները: Սակայն ընկերության կողմից իրականացվել է մեկ առաքում՝ նոյեմբերին՝ 33.9 հազ. ԱՄՆ դոլար արժեքով (կամ նախատեսվածի 3.1%-ը):

2003թ.-ի մարտի 4-ին հայտարարվել է 220 կվ և 4 ենթակայանների (Շինուհայր, Աշնակ, Լիճք և Արարատ-2) վերականգնման միջազգային մրցույթ, որի արդյունքում 2003թ.-ի օգոստոսի 18-ին պայմանագիր է կնքվել հաղթող ճանաչված SIEMENS AG (այսուհետ՝ SIEMENS) ընկերության հետ:

ՀԲ-ի և ՀՀ կառավարության միջև կնքված Վարկային համաձայնագրի 2.04 (ա) կետի համաձայն, Հայաստանի Հանրապետությունը պետք է վճարի ՄՁԸ-ին վարկի դուրս չգրված գումարի պարտավճար՝ ՄՁԸ կողմից յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ի դրությամբ հաստատված դրույքով, որը չպետք է գերազանցի տարեկան 0.5 տոկոսադրույքը: 2004թ. հունիսի 15-ին վճարվել է 40.2 հազ. ԱՄՆ դոլար պարտավճար (2003թ. դեկտեմբերի 15-ից մինչև 2004թ. հունիսի 15-ը ժամանակաշրջանի համար):

ՄՀՃԲ-ի վարկի մասով կատարողականն ըստ տարիների կազմել է՝ 2000թ.՝ 0, 2001թ.՝ 66.7%, 2002թ.՝ 6.7%, 2003թ.՝ 0.8%, և 2004թ. 9 ամիս՝ 0.5%: Թերակատարումը հետևանք է այն բանի, որ իրականացվել են միայն «խորհրդատվական ծառայություններ» կատեգորիայով աշխատանքներ, որոնք նույնպես թերակատարվել են:

1999թ. դեկտեմբերի 16-ի՝ ՀՀ էներգետիկայի նախարարի կողմից հաստատված ծրագրի ծավալների փոփոխությունը ՄՀՃԲ-ի մասով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է միայն 2000թ. դեկտեմբերի 5-ի թիվ 803 որոշմամբ: Նշվածի արդյունքում խորհրդատուի ընտրության գործընթացը սկսվել է 2000թ. դեկտեմբերի 1-ին, պայմանագիրը կնքվել է 2001թ. մարտի 13-ին:

Բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման գործընթացի (1998թ-ի հունիսից մինչև 2002թ.-ի հոկտեմբերի 31-ը) արդյունքում «Հայաստանի Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի սեփականատեր է ճանաչվել MIDLAND RESOURCES HOLDING ընկերությունը: Փոխառության համաձայնագրով նախատեսվել էր ենթավարկառու ընկերության հետ «Օժանդակ վարկի» համաձայնագրի կնքում, որի համար անհրաժեշտ էր Փոխառության համաձայնագրում կատարել փոփոխություն՝ «Հայէլցանցեր» ՓԲԸ ճանաչելով ենթավարկառու: Հաշվի առնելով ցանցերի նոր սեփականատիրոջ հանգամանքը, ՄՀՃԲ-ի պահանջով իր հաստատմանն է ներկայացվել նաև ԾԻԳ-ի և «Հայէլցանցեր» ՓԲԸ-ի միջև կնքվելիք «Սպասարկման և իրականացման»

համաձայնագիրը: Նշված փոփոխությունների փաթեթը նախապատրաստվել է ԾԻԳ-ի կողմից և 2003թ. մարտի 14-ին ներկայացվել ՄՀՃԲ-ի հաստատմանը, որը վերջինիս կողմից հաստատվել է 1,5 տարի անց՝ 2004թ.-ի սեպտեմբերի 28-ին: Ապրանքների և սարքավորումների մրցույթների հայտահրավերները ԾԻԳ-ի կողմից չեն հրապարակվել՝ Փոխառության համաձայնագրի փոփոխության հաստատումը ձգձգելու պատճառով, և, արդյունքում, 2003թ. ընթացքում նշված կատեգորիայով ապրանքներ և սարքավորումներ ձեռք չեն բերվել:

ՄՀՃԲ-ն 2004թ. մայիսի 13-ին տվել է «Օժանդակ վարկի» և «Սպասարկման և իրականացման» համաձայնագրերի վերաբերյալ իր դիտողությունները, որոնք քննարկվել են «Հայէլցանցեր» ՓԲԸ-ի, ՀՀ էներգետիկայի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների հետ: Չնայած այն հանգամանքին, որ «Հայէլցանցեր» ՓԲԸ-ն 2004թ. հուլիսի 1-ին տվել է գրավոր համաձայնությունը՝ ՄՀՃԲ-ի կողմից կատարված դիտողությունների և համաձայնագրերի վերջնական տարբերակի վերաբերյալ, «Օժանդակ վարկի» համաձայնագիրը ստորագրել է 2004թ. հուլիսի 12-ին, իսկ «Սպասարկման և իրականացման» համաձայնագիրը՝ հուլիսի 28-ին:

2004թ.-ի հուլիսի 27-ին կայացած ԿԽ-ի նիստի ժամանակ որոշում է կայացվել հայտարարել մրցույթներ՝ 110 կվ ենթակայանների և սպառողական հաշվիչների մասով: Քանի որ «Հայէլցանցեր» ՓԲԸ-ն հանդիսանում է այդ երկու մրցույթների մասով ՄՀՃԲ փոխառության ենթավարկառու, ապա իր համաձայնությունն այդ մրցույթների անցկացման համար պարտադիր էր: Սակայն «Հայէլցանցեր» ՓԲԸ-ն չի տվել իր համաձայնությունն այդ մրցույթների հայտարարման համար, պատճառաբանելով, որ մրցույթներ հայտարարելը հնարավոր է համարում միայն Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի հետ ՄՀՃԲ փոխառության սակագնային մարժայով փոխհատուցման սկզբունքները պարզաբանելուց հետո: «Հայէլցանցեր» ՓԲԸ-ի կողմից ԿԽ-ի որոշման համաձայնությունը տրվել է միայն 2004թ. հոկտեմբերի 15-ին: Սպառողական հաշվիչների ձեռքբերման մրցույթը հայտարարվել է 2004թ. հոկտեմբերի 19-ին, իսկ 110 կվ ենթակայանների վերականգնման մրցույթը՝ 2004թ. հոկտեմբերի 25-ին:

ՀԲ-ի մասով վարկային ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2004թ. դեկտեմբերի 31-ը: Հաշվի առնելով, որ սահմանված ժամկետում Ծրագրի ավարտը իրատեսական չէ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը 2004թ. հուլիսի 8-ի թիվ 12/5-145-8277 նամակով դիմել է ՀԲ-ի Տարածաշրջանային տնօրենին՝ Վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու և Ծրագրի վերջնաժամկետը մինչև 2005թ. դեկտեմբերի 31-ը երկարաձգելու խնդրանքով: 2004թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀԲ-ի համաձայնությունը դեռևս չէր ստացվել:

ՄՀՃԲ-ի Փոխառության մասով Ծրագրի սկզբից մինչև 2004թ-ի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածը կատարվել են 1,389.5 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ, կամ ընդամենը Ծրագրով նախատեսվածի 2.8%-ը, իսկ փաստացի վճարումները կազմել են 1,448.5 հազ. ԱՄՆ դոլար կամ կատարված աշխատանքների 104.2%-ը (Աղյուսակ 5):

	Կատեգորիաներ	Անբողջ ծրագրով նախատեսված ծախսերը	Ծրագրի սկզբից կատարված օրինառն ձևերը	Կատարված աշխատանքների անհատական մեկատմանը	Ծրագրի սկզբից կատարված վճարումները	Վճարումները նախատեսված ծախսերի մեկատմանը	Վճարումները կատարված աշխատանքների մեկատմանը
	1	2	3	4=3/2	5	6=5/2	7=5/3
	ԸՆԴԱՄԵՆԸ	48,817.021	1,389.473	2.8%	1,448.513	3.0%	104.2%
1	Ապրանքներ և սարքավորումներ	43,796.205	-	-	-	-	-
2	Խորհրդատվական ծառայություններ	2,534.767	1,389.473	54.8%	1,448.513	57.1%	104.2%
3	Չբաշխված միջոցներ	2,486.049	-	-	-	-	-

ՄՀՃԲ-ի Փոխառության համաձայնագրով սահմանված Ծրագրի վերջնաժամկետը՝ 2005թ.-ի հոկտեմբերի 20-ը, իրատեսական չէ: 2004թ. մարտի 25-ին ՄՀՃԲ-ն թիվ DA(4)/2003-294 մամակով տվել է իր համաձայնությունը՝ առանց արժեքի փոփոխության խորհրդատուի պայմանագրի վերջնաժամկետի երկարաձգման վերաբերյալ, պայմանով, որ Փոխառության համաձայնագրի վերջնաժամկետից հետո ՄՀՃԲ-ի կողմից որևէ վճարում այլևս չի կատարվելու, բացառությամբ այն դեպքի, եթե Ճապոնիայի կառավարության և ՄՀՃԲ-ի կողմից հավանություն տրվի վերջնաժամկետի երկարաձգմանը: Պայմանագրով հետագա ցանկացած վճարում պետք է կատարվի ՀՀ կառավարության կողմից՝ համաձայն վերոհիշյալ Փոխառության համաձայնագրի:

4. Նորմատիվ կանոնակարգման խախտումների վերաբերյալ

Խախտվել է ՀՀ կառավարության 22.12.1999թ. թիվ 765 որոշմամբ հաստատված ծրագրերի կառավարման խորհուրդների օրինակելի կանոնադրության 10-րդ կետի պահանջը՝ 01.10.2004թ. դրությամբ Ծրագրի իրականացման ընթացքում կառավարման խորհուրդը կայացրել է թվով 30 նիստ՝ առնվազն 56-ի փոխարեն:

Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվություններում առկա են անճշտություններ: Այսպես.

- 2000թ. ՀՀ պետական բյուջեով ՀԲ-ի վարկի մասով նախատեսված 3,000.0 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց տվյալ տարվա տարեկան հաշվետվությամբ ներկայացվել է 3,006.8 հազ. ԱՄՆ դոլար, որից 6.8 հազ. ԱՄՆ դոլարը գանձվել է ՀԲ-ի կողմից՝ որպես Ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծախս՝ վերջինիս ավարտման փաստով, որը չի նախատեսվել տվյալ տարվա բյուջեով, սակայն ցույց է տրվել որպես նախատեսված գումար:

- «Վարկային ծրագրի իրականացման գրասենյակների կողմից վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների կարգի մասին» ՀՀ կառավարության 1998թ. հուլիսի 9-ի թիվ 429 որոշման համաձայն, ֆինանսավորման աղբյուրները նշվում են առանձին, սակայն ԾԻԳ-ի կողմից 2001թ. ներկայացված հաշվետվություններում (Ձև-2) նախատեսված ծախսերի «ընդամենը ամբողջ ծրագրով տողում» ՀԲ-ի և ՍՀՃԲ-ի վարկային միջոցներին գումարվել են նաև տեղական համաֆինանսավորման գումարները (800.0 հազ. ԱՄՆ դոլար):

5. Շինարարական աշխատանքների ընթացքի վերաբերյալ

1. Ծրագրի շրջանակներում կատարվում է հանրապետության էներգահամակարգի 220 կվ ութ գործող ենթակայանների հիմնական սարքավորումների փոխարինում: Աշխատանքներն իրականացվում են միջազգային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ABB և SIEMENS ընկերությունների կողմից:

ABB ընկերության հետ ապրանքների և սարքավորումների ձեռքբերման և տեղադրման պայմանագիրը կնքվել է 2003թ. ապրիլի 30-ին՝ 9,189.3 հազ. եվրո արժեքով: Պայմանագրի գործողության ժամկետը 20 ամիս է, որով նախատեսվել է Շահումյան-2, Ջովունի, Մարաշ և Եղեգնաձոր ենթակայաններում 220 և 110 կվ սարքավորումների, ինչպես նաև՝ 220 կվ չորս օղային գծերի ռելեական պաշտպանության փոխարինում:

SIEMENS ընկերության հետ ապրանքների և սարքավորումների ձեռքբերման և տեղադրման պայմանագիրը կնքվել է 2003թ. օգոստոսի 18-ին՝ 5,481.9 հազ. եվրո արժեքով: Պայմանագրի գործողության ժամկետը 16 ամիս է, որով նախատեսվել է Շինուհայր, Արարատ-2, Լիճք և Աշնակ ենթակայաններում 220 և 110 կվ սարքավորումների, ինչպես նաև՝ 220 կվ վեց օղային գծերի ռելեական պաշտպանության փոխարինում:

Նշված ութ ենթակայաններում շինարարական աշխատանքները (գոյություն ունեցող սարքավորումների հին հիմքերի ապամոնտաժում, նոր հիմքերի պատրաստում և տեղադրում) իրականացվում են ազգային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված տեղական ընկերությունների կողմից: Շինարարական աշխատանքների ֆինանսավորումը Վարկային համաձայնագրում նախատեսված կարգով իրականացվում է «ԲԷՅ» ՓԲԸ-ի միջոցներից՝ որպես տեղական համաֆինանսավորում:

ABB ընկերության հետ կնքած պայմանագրին կից աշխատանքների իրականացման ժամանակացույցի համաձայն, շինարարական աշխատանքները պետք է սկսվեին 2003թ. սեպտեմբերի կեսին, իսկ SIEMENS-ի հետ կնքված պայմանագրով՝ 2004թ. մարտի 1-ից:

ԾԻԳ-ի կողմից նախարարությանը 2003թ. հուլիսի 31-ին ներկայացրած հրամանի նախագծից շուրջ 4 ամիս հետո, 2003թ. նոյեմբերի 19-ին ՀՀ էներգետիկայի նախարարի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ որոշվել է իրականացնել 2 մրցույթ՝ հիմքերի արտադրության ու տեղափոխման, և հին սարքավորումների ապամոնտաժման ու նոր հիմքերի տեղադրման շինարարական աշխատանքների համար: Արդյունքում հիմքերի արտադրության և

առաքման գծով կապալառուի հետ պայմանագիրը ստորագրվել է 2003թ. դեկտեմբերի 29-ին, իսկ սարքավորումների ապամոնտաժման և հիմքերի տեղադրման կապալառուի հետ՝ 2004թ. մարտի 23-ին: Նշված պայմանագրերի ստորագրման ուշացումը, ինչպես նաև՝ ABB ընկերության կողմից մատակարարման ուշացումն անդրադարձել է ABB և SIEMENS ընկերությունների կողմից սահմանված ժամկետում աշխատանքները սկսելու վրա: Հետևաբար, վերանայվել են ժամանակացույցները՝ աշխատանքների սկիզբը տեղափոխելով ABB-ի մասով 2004թ-ի ապրիլի 1-ը, իսկ SIEMENS-ի մասով՝ 2004թ. մայիսի 1-ը, որն ամրագրվել է ընկերությունների հետ հաստատված նոր ժամանակացույցներով:

Աշխատանքների կատարման ընթացքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ABB ընկերության մասով իրականացման ժամանակացույցից առկա են շեղումներ, որոնց հիմնական պատճառներն են՝

- առաջին փուլի աշխատանքների իրականացման համար ոչ բոլոր անհրաժեշտ նյութերն ու սարքավորումներն են (միջանկյալ ղեկավարման վահանակներ, ստուգիչ մալուխներ, մետաղական հենարաններ) ժամանակին ներկրվել հանրապետություն,
- «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից փոխանջատումները չեն իրականացվել ՀՀ էներգետիկայի նախարարության, ԾԻԳ-ի, «ԲԷՑ» ՓԲԸ-ի և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից 2003թ. դեկտեմբերի 12-ին հաստատված ժամանակացույցի համաձայն,
- ընկերության կողմից ներկրված մետաղական կոնստրուկցիաների մեծ մասը չի համապատասխանել DIN/ISO ստանդարտներին: Այսպես, որոշ պրոֆիլներ մշակված էին հասարակ փոշարարով (ցինկագույն), իսկ որոշ եռակցման կարանների վերջում գավառապատումը պատշաճ կերպով կատարված չէր: Խոտանված կոնստրուկցիաները ակտավորելուց հետո սկսվել է դրանց նորերով փոխարինելու գործընթացը:

SIEMENS և ABB ընկերությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն, վերը նշված ութ ենթակայաններում աշխատանքները նախատեսվում է ավարտել 2004թ.-ի դեկտեմբերի 31-ին: Սակայն տեղական կապալառուների կողմից ներկայացված կատարողական ակտերի և դրանց հիման վրա «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող ֆինանսավորման ուսումնասիրությունից պարզվել է, որ 2004թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին արձանագրվել են ֆինանսավորման ուշացման փաստեր: Շարունակական ուշացումները կարող են անդրադառնալ շինարարական աշխատանքների իրականացման հետագա ընթացքին:

2. 220 կվ 8 գործող ենթակայաններում սարքավորումների ապամոնտաժման և հիմքերի տեղադրման համար շինարարական աշխատանքների մրցույթը «Հայաստանի Հանրապետություն» թերթում տպագրվել է 2004թ. հունվարի 13-ին, համաձայն որի առաջարկների ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել փետրվարի 19-ը: Ազգային մրցույթը հայտարարվել էր երկու լոտով և իրականացվել է ՀԲ-ի ընթացակարգով, սակայն ՀԲ-ի հաստատմանը չի ներկայացվել, քանի որ համաձայն Վարկային համաձայնագրի, ֆինանսավորումը պետք է իրականացվի տեղական համաֆինանսավորման միջոցներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի իրականացման ընթացքում տեղ են գտել թերություններ և նորմատիվ կանոնակարգման խախտումների փաստեր:

1. ՀԲ-ի և ՄՀՃԲ-ի հետ Վարկային և Փոխառության համաձայնագրերը ստորագրված չլինելու պայմաններում, «ՀՀ 1999թ. պետական բյուջեի մասին» ՀՕ-268 (30.12.1998թ.) ՀՀ օրենքով ՀԲ-ի և ՄՀՃԲ-ի միջոցներով իրականացվող Ծրագրի համար նախատեսվել է 11.0 մլն ԱՄՆ դոլար:
2. ՀԲ-ի վարկի մասով Ծրագրի սկզբից մինչև 2004թ.-ի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է ընդամենը Ծրագրով նախատեսված աշխատանքների 76%-ը, իսկ փաստացի վճարումները կազմել են կատարված աշխատանքների 87%-ը: Ծրագրի 2000, 2001, 2002 և 2003թթ. տարեկան բյուջեները կատարվել են համապատասխանաբար՝ 20.8%, 10.7%, 10.8% և 20.5%-ով:
3. ՄՀՃԲ-ի Փոխառության մասով Ծրագրի սկզբից մինչև 2004թ.-ի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարվել են ընդամենը Ծրագրով նախատեսված աշխատանքների 2.8%-ը, իսկ փաստացի վճարումները կազմել են կատարված աշխատանքների 104.2%-ը: Ծրագրի 2000, 2001, 2002 և 2003թթ. տարեկան և 2004թ. 9 ամսվա բյուջեները ՄՀՃԲ-ի մասով կատարվել են համապատասխանաբար՝ 0.0%, 66.7%, 6.7%, 0.8% և 0.5%-ով, քանզի իրականացվել են միայն «խորհրդատվական ծառայություններ» կատեգորիայով աշխատանքներ, այն էլ՝ նույնպես թերակատարումներով, բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման գործընթացի հետ կապված: Հաշվի առնելով ցանցերի նոր սեփականատիրոջ հանգամանքը, ՄՀՃԲ-ի պահանջով իր հաստատմանն է ներկայացվել մաս ԾԻԳ-ի և «Հայէլցանցեր» ՓԲԸ-ի միջև կնքվելիք «Սպասարկման և իրականացման» համաձայնագիրը: Նշված փոփոխությունների փաթեթը նախապատրաստվել է ԾԻԳ-ի կողմից և 2003թ. մարտի 14-ին ներկայացվել ՄՀՃԲ-ի հաստատմանը, որը վերջինիս կողմից հաստատվել է միայն 1,5 տարի անց՝ 2004թ.-ի սեպտեմբերի 28-ին:
4. Ծրագրի 2003թ. բյուջեի «Ապրանքներ և սարքավորումներ» կատեգորիայով ABB ընկերության մասով նախատեսվել է 1,100.0 հազ. ԱՄՆ դոլար: Համաձայն ընկերության հետ կնքված պայմանագրի ժամանակացույցի, 2003թ. ընթացքում պետք է իրականացվեին բոլոր առաքումները: Սակայն ընկերության կողմից իրականացվել է մեկ առաքում՝ նոյեմբերին՝ 33.9 հազ. ԱՄՆ դոլար արժեքով (կամ նախատեսվածի 3.1%-ը):
5. ABB ընկերության հետ կնքված պայմանագրին կից աշխատանքների իրականացման ժամանակացույցից առկա են շեղումներ, որոնց հիմնական պատճառներն են.
 - առաջին փուլի աշխատանքների իրականացման համար ոչ բոլոր անհրաժեշտ նյութերն ու սարքավորումներն են (միջանկյալ ղեկավարման վահանակներ,

ստուգիչ մալուխներ, մետաղական հենարաններ) ժամանակին ներկրվել հանրապետություն,

- «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից փոխանջատումները չեն իրականացվել ՀՀ էներգետիկայի նախարարության, ԾԻԳ-ի, «ԲԷՑ» ՓԲԸ-ի և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից 2003թ. դեկտեմբերի 12-ին հաստատված ժամանակացույցի համաձայն,
 - ընկերության կողմից ներկրված մետաղական կոնստրուկցիաների մեծ մասը չի համապատասխանել DIN/ISO ստանդարտներին: Այսպես. որոշ պրոֆիլներ մշակված էին հասարակ փոշարարով (ցինկագույն), իսկ որոշ եռակցման կարանների վերջում գալվանապատումը պատշաճ կերպով կատարված չէր: Խոտանված կոնստրուկցիաները ակտավորելուց հետո սկսվել է դրանց նորերով փոխարինելու գործընթացը:
6. ՀԲ-ի և ՀՀ կառավարության միջև կնքված Վարկային համաձայնագրի 2.04 (ա) կետի համաձայն, Հայաստանի Հանրապետությունը պետք է վճարի ՄՁԸ-ին վարկի դուրս չգրված գումարի պարտավճար՝ ՄՁԸ կողմից յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ի դրությամբ հաստատված դրույքով, որը չպետք է գերազանցի տարեկան 0.5 տոկոսադրույքը: 2004թ. հունիսի 15-ին վճարվել է 40.2 հազ. ԱՄՆ դոլար պարտավճար (2003թ. դեկտեմբերի 15-ից մինչև 2004թ. հունիսի 15-ը ժամանակաշրջանի համար):
7. 01.10.2004թ. դրությամբ Ծրագրի իրականացման ընթացքում կառավարման խորհուրդը կայացրել է թվով 30 նիստ՝ առնվազն 56-ի փոխարեն: Խախտվել է ՀՀ կառավարության թիվ 765 որոշմամբ հաստատված ծրագրերի կառավարման խորհուրդների օրինակելի կանոնադրության 10-րդ կետի պահանջը:
8. Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվություններում առկա են անճշտություններ:
9. 2004թ.-ի օգոստոս և սեպտեմբեր ամիսներին «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից արձանագրվել են ֆինանսավորման ուշացման փաստեր:

Վերահսկողության ընթացքում վերահսկող հանձնաժողովի կողմից, ԾԻԳ-ի ղեկավարության մասնակցությամբ կազմվել է 4 արձանագրություն:

Սույն հաշվետվության նախագծին ԾԻԳ-ի տնօրենը ծանոթացել է 26.11.2004թ., առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կառավարման խորհրդին և ԾԻԳ-ի ղեկավարությանը.

1. Ձեռնարկել միջոցառումներ՝ Ծրագրի իրականացման տեմպերի բարելավման և նախատեսված նպատակակետերի լիարժեք կատարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2. Ուշադրություն դարձնել տարեկան բյուջեների, դրանց հետագա փոփոխման և ճշտման գործընթացին:
3. Հետևել ներկայացվող հաշվետվությունների տվյալների իսկությանը, բացառել անճշտությունները:
4. Թույլ չտալ օրենսդրական և նորմատիվ կանոնակարգման խախտումները:
5. «ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և Վերահսկիչ պալատ ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Ծրագրի իրականացման ընթացքը ՀԲ-ի վարկի հաշվին

(ԱՄՆ դոլար)

Կատեգորիաներ	Տարվա բյջեթի նախատեսված ծրագրի օրինաչափություն	Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքները նախատեսվածի նկատմամբ	Հաշվետու ժամանակահատվածում կատարված վճարումները	Վճարումները նախատեսված ծախսերի նկատմամբ	Վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
1	2	3	4=3/2	5	6=5/2	7=5/3
1 Ապրանքներ և սարքավորումներ						
2000թ.	2,336,600	-	-	-	-	-
2001թ.	1,900,000	3,884	0.2%	3,884	0.2%	100%
2002թ.	1,966,500	-	-	-	-	-
2003թ.	1,710,701	79,236	4.6%	1,773,559	103.7%	2,238.3 %
2004թ. 9 ամիս	6,395,631	14,392,921	225.0%	10,671,959	166.9%	74.1%
2 Խորհրդատվական ծառայություններ						
2000թ.	233,933	164,471	70.3%	164,471	70.3%	100%
2001թ.	422,520	145,640	34.5%	143,680	34.0%	98.7%
2002թ.	229,293	132,488	57.8%	119,146	52.0%	89.9%
2003թ.	303,125	150,311	49.6%	165,613	54.6%	110.2%
2004թ. 9 ամիս	160,723	147,919	92.0%	103,462	64.4%	69.9%
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում						
2000թ.	178,100	113,206	63.6%	113,206	63.6%	100%
2001թ.	335,000	63,742	19.0%	61,782	18.4%	96.9%
2002թ.	124,613	43,530	34.9%	30,187	24.2%	69.3%
2003թ.	200,259	54,920	27.4%	70,222	35.1%	127.9%
2004թ. 9 ամիս	64,063	69,112	107.9%	24,655	38.5%	35.7%
ԾԻՂ-ի հիմնական աշխատողների աշխատավարձ						
2000թ.	55,833	51,265	91.8%	51,265	91.8%	100%
2001թ.	87,520	81,898	93.6%	81,898	93.6%	100%
2002թ.	104,680	88,958	85.0%	88,959	85.0%	100%
2003թ.	102,866	95,391	92.7%	95,391	92.7%	100%
2004թ. 9 ամիս	96,660	78,807	81.5%	78,807	81.5%	100%
3 Գործառնական ծախսեր						
2000թ.	172,645	172,863	100.1%	150,374	87.1%	87.0%
2001թ.	98,480	110,174	111.9%	110,171	111.9%	100%
2002թ.	103,207	115,012	111.4%	115,019	111.4%	100%
2003թ.	137,375	108,445	78.9%	108,456	78.9%	100%
2004թ. 9 ամիս	126,935	118,268	93.2%	118,292	93.2%	100%
Աուդիտ						
2000թ.	127,500	150,000	117.6%	127,500	100%	85%
2001թ.	31,025	71,900	231.7%	71,900	231.7%	100%
2002թ.	24,500	67,476	275.4%	67,476	275.4%	100%
2003թ.	79,741	62,296	78.1%	62,296	78.1%	100%
2004թ. 9 ամիս	65,000	66,864	102.9%	66,864	102.9%	100%
Գործառնական ծախսեր						
2000թ.	45,145	22,863	50.6%	22,874	50.7%	100%
2001թ.	67,455	38,274	56.7%	38,271	56.7%	100%
2002թ.	78,707	47,536	60.4%	47,543	60.4%	100%
2003թ.	57,635	46,149	80.1%	46,160	80.1%	100%
2004թ. 9 ամիս	61,935	51,404	83.0%	51,428	83.0%	100%

1	2	3	4=3/2	5	6=5/2	7=5/3
4 Ծրագրի նախապատրաստման կանխավճար (փակված է)						
2000թ.	256,822	287,024	111.8%	263,668	102.7%	91.9%
2001թ.	-	-		-	-	
2002թ.	-	-		-	-	
2003թ.	-	-		-	-	
2004թ. 9 ամիս	-	-		-	-	
5 Չբաշխված միջոցներ						
2000թ.	-	-		-	-	
2001թ.	-	-		-	-	
2002թ.	-	-		-	-	
2003թ.	-	-		-	-	
2004թ. 9 ամիս	-	-		-	-	
6 Շինարարական աշխատանքներ						
2000թ.	-	-		-	-	
2001թ.	-	-		-	-	
2002թ.	-	-		-	-	
2003թ.	90,000	121,237	134.7%	100,968	112.2%	83.3%
2004թ. 9 ամիս	-	-		-	-	
ԸՆԴԱՄԵՆԸ						
2000թ.	3,000,000	624,358	20.8%	578,513	19.3%	92.7%
2001թ.	2,421,000	259,698	10.7%	257,735	10.6%	99.2%
2002թ.	2,299,000	247,500	10.8%	234,165	10.2%	94.6%
2003թ.	2,241,202	459,229	20.5%	2,148,596	95.9%	467.9%
2004թ. 9 ամիս	6,683,289	14,659,107	219.3%	10,893,713	163.0%	74.3%

Ծրագրի իրականացման ընթացքը ՄՀՃԲ-ի փոխառության հաշվին

(ԱՄՆ դոլար)

Կատեգորիաներ	Տարվա բյուջեով նախատեսված ծախսերը	Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները	Կատարված աշխատանքները նախատեսվածի նկատմամբ	Հաշվետու ժամանակաշրջանում կատարված վճարումները	Վճարումները նախատեսված ծախսերի նկատմամբ	Վճարումները կատարված աշխատանքների նկատմամբ
1	2	3	4=3/2	5	6=5/2	7=5/3
1 Ապրանքներ և սարքավորումներ						
2000թ.	-	-	-	-	-	-
2001թ.	-	-	-	-	-	-
2002թ.	7,727,000	-	-	-	-	-
2003թ.	9,157,200	-	-	-	-	-
2004թ. 9 ամիս	3,558,790	-	-	-	-	-
2 Խորհրդատվական ծառայություններ						
2000թ.	870,000	-	-	-	-	-
2001թ.	1,100,000	733,559	66.7%	1,098,643	149.8%	99.9%
2002թ.	650,000	558,489	85.9%	349,870	62.6%	53.8%
2003թ.	500,000	77,301	15.5%	-	-	-
2004թ. 9 ամիս	158,137	20,123	12.7%	-	-	-
3 Չբաշխված միջոցներ						
2000թ.	-	-	-	-	-	-
2001թ.	-	-	-	-	-	-
2002թ.	-	-	-	-	-	-
2003թ.	-	-	-	-	-	-
2004թ. 9 ամիս	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄՆՆԸ						
2000թ.	870,000	-	-	-	-	-
2001թ.	1,100,000	733,559	66.7%	1,098,643	149.8%	99.9%
2002թ.	8,377,000	558,489	6.7%	349,870	62.6%	4.2%
2003թ.	9,657,200	77,301	0.8%	-	-	-
2004թ. 9 ամիս	3,716,927	20,123	0.5%	-	-	-

Հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի
խորհրդի 26.11.2004թ. նիստում և ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն
և Արարատի մարզպետարան:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արարատի մարզպետարանի կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքը և պետական պատվերի կատարման համար բյուջետային միջոցների օգտագործման մասին

Վերահսկողության հիմքը – ՀՀ Ազգային ժողովի 2003թ. դեկտեմբերի 3-ի Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 20-րդ կետը, Վերահսկիչ պալատի նախագահի 06.10.04թ. թիվ 115 հրամանը:

Վերահսկողության նպատակը - Իրականացնել վերահսկողություն՝ 2003 թվականին Արարատի մարզպետարանի կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքի և պետական պատվերի կատարման համար բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտը – Արարատի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներ:

Մարզպետարանին հատկացված բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ

2003 թվականին հաստատված նախահաշվով Արարատի մարզպետարանի ապարատի պահպանման համար նախատեսվել է 91,692.7 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 91,692.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 90,352.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 94,634.3 հազ. դրամ: Խախտելով ՀՀ կառավարության 06.02.2003թ. թիվ 184-Ն որոշման 3.5 կետի պահանջները, հաստատված նախահաշվի առանձին հոդվածների նկատմամբ թույլ է տրվել գերաձախս՝ 3,554.9 հազ. դրամի չափով, մասնավորապես.

- «Կապի ծառայությունների վճար» հոդվածով նախատեսվել է 2,977.9 հազ. դրամ, ֆինանսավորվել է 2,977.9 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 4,509.9 հազ. դրամ, գերաձախսը՝ 1,532.0 հազ. դրամ, որի դիմաց այլ աղբյուրներից վճարվել է 960.4 հազ. դրամ:
- «Էլեկտրաէներգիայի ծախսեր» հոդվածով նախատեսվել է 7,180.5 հազ. դրամ, ֆինանսավորվել է 7,180.5 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 9,775.0 հազ. դրամ, գերաձախսը՝ 2,594.5 հազ. դրամ, որի դիմաց այլ աղբյուրներից վճարվել է 1,070.0 հազ. դրամ:

«Գրասենյակային ապրանքներ և նյութեր» հոդվածով նախատեսված 1,510.3 հազ. դրամ գումարից կատարվել է ոչ նպատակային ծախս. ՆԳ բաժնի պահակային ծառայությանը վճարվել է 360.0 հազ. դրամ մատուցված ծառայությունների դիմաց՝ մարզպետարանին այդ գործառույթի համար գումար չնախատեսելու պարագայում:

Մարզպետարանը ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերը կնքել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ և 611-րդ հոդվածների պահանջների խախտմամբ: Պայմանագրերը չեն ստացել նոտարական վավերացում, իսկ դրանցից ծագող իրավունքները՝ պետական գրանցում:

Նախորդ տարիների բյուջետային պարտքերի մարման գործընթացի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2003 թվականին մարզպետարանի կողմից ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մարզին հատկացրել էր 20,195.0 հազ. դրամ, մարումը կազմել է 19,612.1 հազ. դրամ: Մարզպետարանում համապատասխան հիմնավորող փաստաթղթերի բացակայության պատճառով 582.9 հազ. դրամի պարտավորությունների մարում չի իրականացվել և գումարը հետ է վերադարձվել պետական բյուջե:

Նախորդ տարիների բյուջետային պարտքերի մարման գործընթացում մարզպետարանը հատկացված միջոցների հաշվին կատարել է ոչ նպատակային ծախս, վճարելով այնպիսի ծառայությունների դիմաց, որի համար գումարի հատկացում պետական բյուջեից չի կատարվել. «Գրասենյակային ապրանքներ և նյութեր» հոդվածով հատկացված 3,529.0 հազ. դրամ գումարից ուստիկանության Արարատի ՆԳ բաժնին կից պահպանության ծառայությանը վճարվել է 2,641.4 հազ. դրամ՝ նախկինում մատուցած ծառայությունների՝ վարչական շենքի պահպանության համար:

«Շենքերի, շինությունների և բնակարանների վարձակալության ծախսեր» հոդվածով հատկացված 1,654.4 հազ. դրամ գումարը վճարվել է վարձակալած տարածքների՝ նախորդ տարիներին ձևավորված պարտքի դիմաց: Այդ պայմանագրերը համապատասխան նոտարական վավերացում և պետական գրանցում չեն ստացել:

**Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում
պետական բաժնեմասից ստացվող շահութաբաժինների վճարման գործընթացը
Արարատի մարզպետարանում**

Արարատի մարզպետարանի ենթակայության 50%-ից ավելի պետական բաժնեմաս ունեցող 60 առևտրային կազմակերպություններից ներկայացված ամփոփ տեղեկանքի համաձայն, 2003 թվականի ֆինանսական արդյունքներով վնասով աշխատող ընկերությունների թիվը կազմում է 8 կամ 13.3%, մինչև 3 մլն դրամ գուտ շահույթ ստացած ընկերությունների թիվը՝ 42 կամ 70%, իսկ 3 մլն դրամից ավելի ստացածների թիվը՝ 2 կամ 3.3%: Տարեկան արդյունքներով շահույթ կամ վնաս չստացած ընկերությունների թիվը կազմել է 8 կամ 13.3%: 2 ընկերություններ, որոնք

տարեկան արդյունքներով ստացել են 3 մլն դրամից ավելի գուտ շահույթ, շահութաբաժին են հաշվարկել 3,875.0 հազ. դրամ գումար:

Մարզպետարանի ենթակայության 50%-ից ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից պետական բյուջե շահութաբաժինների վճարման գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է, որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն արտացոլում ընկերությունների իրական ֆինանսական վիճակը, ինչպես նաև դրանց ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքը: Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ շատ ընկերություններ չեն կատարել ակտիվների և պարտավորությունների գույքագրում՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով ներգրավված աուդիտորի եզրակացության արդյունքները ընկերությունների կողմից հաշվի չի առնվել և չի կատարվել համապատասխան ճշգրտումներ՝ հաշվապահական հաշվեկշիռներում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում: Ի դեպ, ընկերության աուդիտն իրականացնող անձը չի հաստատվել ժողովի կողմից, պայմանագիրը չի կնքվել խորհրդի նախագահի կողմից, իսկ աուդիտ իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարների չափը սահմանվել է առանց խորհրդի որոշման, կամայականորեն (300.0 հազ. դրամ, 1,500.0 հազ. դրամ և 1,900.0 հազ. դրամ):

Ֆինանսական վիճակի վերաբերյալ ներկայացված ամփոփ տեղեկանքի համաձայն, որոշ ընկերություններ ոչ միայն զրկված են սեփական կապիտալից, այլև դրանց ակտիվները բավարար չեն՝ ունեցած պարտավորությունները մարելու համար: Նման վիճակում հայտնված ընկերություններից ոչ մեկը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չեն հայտարարել և սահմանված կարգով չեն գրանցել իրենց կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կամ ընդունել որոշում՝ լուծարման մասին:

Մարզի առողջապահական ընկերություններին ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալության ունեցած պարտքը 2002 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 314,091.6 հազ. դրամ, որից մարվել է 188,349.8 հազ. դրամ և 01.01.03 թվականի դրությամբ մնացորդը կազմել է 125,741.8 հազ. դրամ: Ընկերությունների կողմից կազմված՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կատարված աշխատանքների դիմաց նախորդ տարիների պարտքերի ընդունման մասին» արձանագրություններով, առանց բարձրագույն մարմնի որոշման, պետական պատվերի գծով պարտքերի մնացորդները, անհիմն, անհատույց զիջման միջոցով զրոյացվել է:

Ընկերություններում չեն կազմակերպվել համալիր և մասնակի ստուգումներ, չի կատարվել տարեկան ծախսերի մանրակրկիտ վերլուծություն, չեն վերլուծվել վերջին տարիներին սխտեմատիկ բնույթ կրող ընկերությունների՝ գուտ ակտիվների և սեփական կապիտալի անհիմն նվազման պատճառները, պատշաճ հսկողություն չի իրականացվել պետական միջոցների

արդյունավետ օգտագործման նկատմամբ: Ֆինանսատնտեսական գործունեությունը վերահսկելու համար ընկերություններում չի ստեղծվել վերստուգող հանձնաժողով (վերստուգող):

Բավարար հսկողություն չի իրականացվել ֆինանսատնտեսական պլանավորման՝ բուժհիմնարկների և առողջապահական գործակալության մարզային կենտրոնի միջև կնքված պայմանագրերից բխող փոխադարձ պարտավորությունների նկատմամբ, չի վերահսկվել ընկերությունների կողմից պետական շահութաբաժինների հաշվառման և պետական բյուջե վճարման գործընթացը:

Արարատի մարզպետարանը, որպես լիազոր մարմին, խախտելով ՀՀ կառավարության 05.12.2001թ. թիվ 1194 որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջները, չի ապահովել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների տարեկան հաշվապահական հաշվեկշիռներում, որպես կրեդիտորական պարտքեր, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պետական շահութաբաժինների գծով պարտավորությունների արտացոլումը:

Մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող, պետական պահուստային ֆոնդի հողերի վարձակալության և օգտագործման վերաբերյալ

Արարատի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող, պետական սեփականություն հանդիսացող պահուստային հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 27477 հեկտար, որոնք ՀՀ կառավարության 22.01.1998թ. թիվ 28 որոշմամբ վարձակալության պետք է հանձնի մարզպետարանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կնքված պայմանագրերի համաձայն, 2003թ., ըստ մարզպետարանի կողմից ներկայացված տվյալների, վարձակալության է հանձնվել 16,607 հա հողատարածք կամ ընդհանուր մակերեսի 60.4%-ը՝ 2002թ-ի՝ 56.2%-ի դիմաց:

ՀՀ 2002 և 2003թթ. պետական բյուջեներով «պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման վարձավճարներ» հողվածով նախատեսվել են մուտքեր՝ 11,941.0 և 8,500.0 հազ. դրամ:

Մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի կողմից համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև.

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2001թ.	2002թ.	2003թ.
1	Հողատարածքների չափը	հեկտար	27,477	27,477	27,477
2	Կնքած պայմանագրերի թիվը	հատ	70	76	79
3	Տարածքն ըստ պայմանագրերի	հեկտար	14,950	15,429	16,607
4	Հաշվարկված վարձավճար	հազ. դրամ	1,0340.0	11,007.0	11,282.0
5	Գանձված վարձավճար	հազ. դրամ	7,492.0	9,556.0	7,778.0
6	Ապառք	հազ. դրամ	2,848.0	1,451.0	3,504.0
7	Բաժնի աշխատողների թվաքանակը	մարդ	3	3	3

Համաձայն մարզպետարանի կողմից ներկայացված տեղեկանքի, 2002թ. կնքված 76 պայմանագրերով հաշվարկվել է 11,007.0 հազ. դրամ վարձավճար, որի դիմաց տարվա ընթացքում գանձումը կազմել է 9,556.0 հազ. դրամ կամ 86,6%, ապառքը՝ 1,451.0 հազ. դրամ: 2003թ. կնքված 79 պայմանագրերով հաշվարկվել է 11,282.0 հազ. դրամ վարձավճար, որի դիմաց գանձվել է 7,778.0 հազ. դրամ կամ 68,9%, ապառքը՝ 3,504.0 հազ. դրամ:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական գանձապետարանի տվյալներով Արարատի մարզի հողերի վարձակալության դիմաց 2002 թվականի ընթացքում մուտքագրվել է 4,347.0 հազ. դրամ, կամ պայմանագրային գումարի 39,5%-ը: 2003 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 8,979.8 հազ. դրամ կամ պայմանագրային գումարի 78,8%-ը: Մարզպետարանի կողմից ներկայացված տեղեկանքում արձանագրված՝ հավաքված վարձավճարները չեն համապատասխանում իրականությանը:

2003թ. գործող 79 պայմանագրերով տարեկան վարձավճարը կազմել է 11,387.0 հազ. դրամ՝ ներկայացված 11,282.0 հազ. դրամի փոխարեն:

Մարզպետարանի կողմից պատշաճ հաշվառում չի իրականացվել՝ հողի վարձակալության դիմաց պետական բյուջե վճարման ենթակա գումարների նկատմամբ:

Փաստացի ապառքը 2002թ. կազմել է 6,659.6 հազ. դրամ՝ ներկայացված 1,451.0 հազ. դրամի փոխարեն, իսկ 2003թ.՝ 2,302.2 հազ. դրամ՝ ներկայացված 3,504.0 հազ. դրամի փոխարեն:

Հաշվի առնելով 2001թ.-ին գոյացած ապառքը, որը կազմել է 2,848.0 հազ. դրամ, 01.01.04թ. դրությամբ ընդհանուր պարտքը կազմել է 11,809.0 հազ. դրամ՝ ներկայացված 7,803.0 հազ. դրամի փոխարեն:

2002թ. մարզպետարանը, ունենալով գործող, կնքած և սահմանված կարգով գրանցված 76 պայմանագիր, որի վարձավճարը կազմել է 11,007.0 հազ. դրամ, ոչ ճիշտ տեղեկատվություն ներկայացնելու արդյունքում 2003թ. պետական բյուջեի հայտի ձևավորման ժամանակ պահուստային հողերի վարձակալության և օգտագործման հողվածով մարզի համար նախատեսել է 8,500.0 հազ. դրամ վարձավճարների հավաքում:

Մարզպետարանի կողմից միջոցներ չի ձեռնարկվել վարձավճարների գծով առաջացած ապառք գումարների, ինչպես նաև պայմանագրերում նախատեսված ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տույժերի գանձման ուղղությամբ:

Կատարված ուսումնասիրությունը բավարար հիմք է տալիս կարծիք հայտնել, որ մարզպետարանի համապատասխան բաժնի կողմից գործընթացների նկատմամբ ցուցաբերվել է անհետևողական մոտեցում, որի արդյունքում չի ապահովվել պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների լիարժեք կատարումը:

Մարզին ՀՀ պետական բյուջեի գումարների հաշվին հատկացված օգնությունը

2002-2003թթ. ձմռան ցրտահարությունների և այլ բնական աղետների հետևանքները մեղմելու նպատակով Արարատի մարզին Համաշխարհային բանկի կողմից հատկացվել է 1004տ միլիարդ, որը մարզպետարանի միջոցով բաշխվել է մարզի համայնքներին Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ միլիարդի բաշխումը որոշ համայնքներում (Մխչյան՝ ստացել է 12,680 կգ, փաստացի բաշխել է 12,000 կգ, Վեդի՝ ստացել է 23,400 կգ, բաշխել է 23,050 կգ, Նոր ուղի՝ ստացել է 5,430 կգ, բաշխել է 5,080 կգ) իրականացվել է ոչ լրիվ: Մնացորդների վերաբերյալ չկա տեղեկատվություն: Մարզպետարանի կողմից չի իրականացվել պատշաճ վերահսկողություն՝ այդ գործընթացի նկատմամբ:

Օգնության կարգով Արարատի մարզին հատկացվել է 212.8 տ աշնանացան ցորենի սերմացու: Ցրտահարություններից և այլ բնական աղետներից տուժած մարզի 82 համայնքներից ցորենի բաշխումն իրականացվել է 75-ում: Շահառուների ցուցակից դուրս են մնացել առավել տուժած համայնքները (Ավշար՝ 195.2 հա՝ 100% վնասվածություն, Նոյակերտ՝ 75.5 հա՝ 100% վնասվածություն), փոխարենն ընդգրկվել են նվազագույն վնասներ կրած համայնքներ (Լանջառ՝ 7 հա, Դարակերտ՝ 18 հա):

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ջրաշեն համայնքում օգնությունը բաշխվել է կրկնակի (2,100 կգ- 16,000 կգ), այն դեպքում, երբ դրա կարիքը զգացող համայնքներում (Ավշար, Նոյակերտ, Երասխ) բաշխում ընդհանրապես չի իրականացվել:

Մարզի Արևաբույր և Ջրաշեն համայնքներում աշնանացան ցորենի բաշխման գործընթացը կազմակերպվել է ՀՀ կառավարության 23.03.2003թ. թիվ 349-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստի արձանագրության 3-րդ կետի պահանջի խախտումով՝ բաշխման ընթացքում մի շարք դեպքերում թույլ է տրվել յուրաքանչյուր շահառուին 150 կգ սահմանված չափից ավելի հատկացումներ՝ մինչև 250 կգ: Մարզային հանձնաժողովի կողմից աշնանացան ցորենը բաշխելիս հաշվի չի առնվել միջգերատեսչական հանձնաժողովի նիստի արձանագրության 4-րդ կետով սահմանված պահանջը՝ օգնությունը բաշխել առավել տուժած գյուղացիական տնտեսություններին: Օգնություն են ստացել ավելի քիչ ցրտահարված ցանքատարածություններ ունեցող համայնքներ այն դեպքում, երբ շատ ավելի մեծ վնասներ ունեցող համայնքներ և տնտեսություններ չեն ընդգրկվել ցուցակում:

Այսպիսով, մարզային հանձնաժողովը չի վարել հստակ հաշվառում՝ ցրտահարված տարածքների վերաբերյալ, չի ցուցաբերել բավարար հետևողականություն, չի նպաստել հատկացված օգնության նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

Մարզպետարանի ղեկավարությունը ս/թ նոյեմբերի 26-ին ծանոթացել է վերահսկողության արդյունքներին և առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ Արարատի մարզպետարանի՝ ապարատի պահպանման համար կատարված ծախսերի գծով նախահաշվի առանձին հոդվածներով թույլ է տրվել գերաձախս՝ գումարով 3,554.9 հազ. դրամ, խախտելով ՀՀ կառավարության թիվ 184-Ն որոշման 3.5 կետի պահանջները, որը չի արտացոլվել ֆինանսական հաշվետվություններում:
- Պատշաճ հսկողություն չի իրականացվել մարզպետարանի ենթակայության 50 % և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների հաշվապահական հաշվառման վարման և շահութաբաժինների հաշվարկման ու պետական բյուջե վճարման նկատմամբ:
- Մարզպետարանի ենթակայության ընկերությունները, խախտելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, առանց ժողովի հաստատման, ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով ներգրավել են աուդիտն իրականացնող անձի՝ շրջանցելով խորհրդի նախագահին, և նրա հետ կնքել պայմանագիր, իսկ աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշել ինքնուրույն՝ առանց խորհրդի համապատասխան որոշման:
- Մարզպետարանը, որպես լիազոր մարմին, չի ապահովել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների տարեկան հաշվապահական հաշվեկշիռներում, որպես կրեդիտորական պարտքեր, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ շահութաբաժինների գծով պարտավորությունների արտացոլումը՝ խախտելով ՀՀ կառավարության 05.12.2001թ. թիվ 1194 որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջները:
- Մարզպետարանի կողմից անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական պահուստային ֆոնդի հողերի օգտագործման նպատակով վարձակալության պայմանագրերի հիման վրա վարձավճարների գանձման և պետական բյուջե մուտքագրման ուղղությամբ:
- 2002-2003 թթ. ձմռան ցրտահարություններից և բնական այլ աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին օժանդակելու նպատակով մարզպետարանին հատկացված աշնանացան ցորենի և պարարտանյութի բաշխումը կատարվել է հաստատված կարգի պահանջների խախտմամբ:
- Մարզային հանձնաժողովը 2002-2003 թթ. ձմռան ցրտահարություններից և բնական այլ աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին օժանդակելու գործընթացի նկատմամբ չի ցուցաբերել բավարար հետևողականություն, չի նպաստել հատկացված օգնության նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատի մարզպետարանին (մարզպետ՝ Ա. Սարգսյան) ձեռնարկել միջոցներ.

- «ՀՀ պետական բյուջեի», «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներից բխող արձանագրված թերությունները վերացնելու, մարզի տարածքում գործող 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից հաշվապահական հաշվառումը սահմանված կարգով վարելու ուղղությամբ:
- Կանոնակարգել համակարգի առջև դրված խնդիրներն ու գործառույթները, ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպումը և դրան կատմամբ հսկողության իրականացումը:
- Խիստ հսկողություն սահմանել վերոհիշյալ ընկերություններում ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման կատմամբ:
- Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 26.11.2004թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ կառավարություն և Կոտայքի մարզպետարան:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզպետարանի կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքը և պետական պատվերի կատարման համար բյուջետային միջոցների օգտագործման մասին

Վերահսկողության հիմքը – ՀՀ Ազգային ժողովի 2003թ. դեկտեմբերի 3-ի Ն-062-3 որոշմամբ հաստատված ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 20-րդ կետը, Վերահսկիչ պալատի նախագահի 29.07.04թ. թիվ 97 հրամանը:

Վերահսկողության նպատակը - Իրականացնել վերահսկողություն 2003 թվականին Կոտայքի մարզպետարանի կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքի և պետական պատվերի կատարման համար բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտը – Կոտայքի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներ:

Մարզպետարանին հատկացված բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ

2003 թվականին հաստատված նախահաշվով Կոտայքի մարզպետարանի ապարատի պահպանման համար նախատեսվել է 88,819.2 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 88,819.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 88,788.8 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 91,255.4 հազ. դրամ: Խախտելով ՀՀ կառավարության 06.02.2003թ. թիվ 184-Ն որոշման 3.5 կետի պահանջները, հաստատված նախահաշվի առանձին հոդվածների նկատմամբ թույլ է տրվել գերաձախս 2,788.0 հազ. դրամի չափով, մասնավորապես.

- «Կապի ծառայությունների վճար» հոդվածով նախատեսվել է 2,766.4 հազ. դրամ, ֆինանսավորվել է 2,766.4 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 3,794.9 հազ. դրամ, գերաձախսը՝ 1,028.5 հազ. դրամ:
- «Էլեկտրաէներգիայի ծախսեր» հոդվածով նախատեսվել է 4,085.7 հազ. դրամ, ֆինանսավորվել է 4,085.7 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 5,845.2 հազ. դրամ, գերաձախսը՝ 1,759.5 հազ. դրամ:
- «Մեփական տրանսպորտի պահպանման ծախսեր» հոդվածով նախատեսվել և ֆինանսավորվել է 3,764.5 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 4,171.9 հազ. դրամ: Մեքենաների ուղեգրերի ոչ բոլոր վավերացումներն են լրացված, բեռնափոխակի հաշվառում չի տարվում ըստ փաստացի կատարված վազքի, ուղեգրերը լրացվում են ձևականորեն:

Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին հատկացվել է բենզին այն դեպքում, երբ նրանք չունեն ամրագրված մեքենաներ, շահագործել են իրենց անձնական օգտագործման ավտոմեքենաները, որոնց համար չեն կազմվել համապատասխան պայմանագրեր:

Մարզպետարանի կողմից ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերը կնքվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ և 611-րդ հոդվածների պահանջների խախտմամբ: Պայմանագրերը չեն ստացել նոտարական վավերացում, իսկ դրանցից ծագող իրավունքները՝ պետական գրանցում:

Մարզպետարանի կողմից նախորդ տարիների բյուջետային պարտքերի մարման գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2003 թվականին ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մարզին հատկացրել է 47,074.8 հազ. դրամ: Նախորդ տարիների պարտավորությունների մարումը կազմել է 44,700.9 հազ. դրամ: Մարզպետարանում համապատասխան հիմնավորող փաստաթղթերի բացակայության պատճառով 2,373.9 հազ. դրամի պարտավորությունների մարում չի իրականացվել և գումարը հետ է վերադարձվել պետական բյուջե:

Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում պետական բաժնեմասից ստացվող շահութաբաժինների վճարման գործընթացը Կոտայքի մարզպետարանում

Կոտայքի մարզպետարանի ենթակայության 50%-ից ավելի պետական բաժնեմաս ունեցող 25 առևտրային կազմակերպություններից ներկայացված ամփոփ տեղեկանքի համաձայն, 2003 թվականի ֆինանսական արդյունքներով վնասով աշխատող ընկերությունների թիվը կազմում է 5 կամ 20%, մինչև 3 մլն դրամ զուտ շահույթ ստացած ընկերությունների թիվը՝ 13 կամ 52%, իսկ 3 մլն դրամից ավելի ստացածների թիվը՝ 7 կամ 28%: Չնայած այն հանգամանքին, որ 7 ընկերություններ տարեկան արդյունքներով ստացել են 3 մլն դրամից ավելի զուտ շահույթ, պետական բյուջե շահութաբաժիններ չեն վճարել՝ զուտ ակտիվների արժեքը կանոնադրական կապիտալից պակաս լինելու պատճառով:

Մարզպետարանի ենթակայության 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից պետական բյուջե շահութաբաժինների վճարման գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է՝

- Ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն արտացոլում ընկերությունների իրական ֆինանսական վիճակը, ինչպես նաև դրանց ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքը:
- Հաշվետվությունները կազմելուց առաջ շատ ընկերություններ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն չեն կատարել ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

- Ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով ներգրավված աուդիտորի եզրակացության արդյունքներն ընկերությունների կողմից հաշվի չի առնվել և չի կատարվել համապատասխան ճշգրտումներ՝ հաշվապահական հաշվեկշիռներում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում:
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, երբ զուտ ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալից, ընկերությունները սահմանված կարգով չեն գրանցել կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կամ չեն ընդունել լուծարման մասին որոշում:
- Որոշ ընկերությունների սեփական կապիտալի նվազման պատճառ է հանդիսացել հաշվեկշիռներում հաշվառվող շենքերի արժեքը չբաշխված շահույթի հաշվին դուրս գրելը և անհատույց կարգով հանձնելը այլ կազմակերպության՝ առանց կառավարության համապատասխան որոշման և ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրության՝ խախտելով 25.09.01թ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի պահանջները:
- Ընկերություններում չեն կազմակերպվել համալիր և մասնակի ստուգումներ, չի իրականացվել տարեկան ծախսերի մանրակրկիտ վերլուծություն, չեն վերլուծվել վերջին տարիներին սխտեմատիկ բնույթ կրող զուտ ակտիվների և սեփական կապիտալի անհիմն նվազման պատճառները, պատշաճ հսկողություն չի իրականացվել պետական միջոցների արդյունավետ օգտագործման նկատմամբ: Ֆինանսատնտեսական գործունեությունը վերահսկելու համար ընկերություններում չի ստեղծվել վերստուգող հանձնաժողով:
- Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը, որն իր կանոնադրությամբ կոչված է կանոնակարգել համակարգի առջև դրված խնդիրներն ու գործառույթները, բավարար հսկողություն չի իրականացրել ֆինանսատնտեսական պլանավորման՝ բուժիմնարկների և առողջապահական գործակալության մարզային կենտրոնի միջև կնքված պայմանագրերից բխող փոխադարձ պարտավորությունների նկատմամբ, չի վերահսկվել ընկերությունների կողմից պետական շահութաբաժինների հաշվառման և պետական բյուջե վճարման գործընթացը:
- Չի ապահովվել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների տարեկան հաշվապահական հաշվեկշիռներում, որպես կրեդիտորական պարտքեր, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պետական շահութաբաժինների գծով պարտավորությունների արտացոլումը, խախտելով ՀՀ կառավարության 05.12.2001թ. թիվ 1194 որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջները:

Մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող, պետական պահուստային ֆոնդի հողերի վարձակալության և օգտագործման վերաբերյալ

Մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական պահուստային հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 24041 հեկտար, որից խոտհարքը՝ 1141, արոտը՝ 22900 հեկտար: Կնքված պայմանագրերի համաձայն, 2003թ., ըստ մարզպետարանի կողմից ներկայացված տվյալների, վարձակալության է հանձնվել 9783 հա հողատարածք կամ ընդհանուր մակերեսի 42.7%-ը՝ 2002թ.-ի 31.7%-ի դիմաց:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2002թ. փաստացի կնքվել է 6,411.3 հա հողատարածքի վարձակալության 63 պայմանագիր, ներկայացված 63 պայմանագրով վարձակալությամբ տրված 7,256.0 հա հողատարածքի փոխարեն: 2001 թվականից շարունակվող 6 պայմանագրերով վարձակալված տարածքները կազմում են 1567 հա: 2003 թվականին կնքվել է 5 պայմանագիր՝ 327.68 հա հողատարածքի համար:

Ընդհանուր առմամբ, մարզպետարանի կողմից կնքված 74 պայմանագրերով փաստացի վարձակալության է հանձնվել 8,305.98 հա հողատարածք կամ ընդհանուր հողատարածքի 36.3% - ը, որի վարձավճարը կազմում է 7,783.5 հազ. դրամ: Ըստ մարզպետարանի ներկայացրած տեղեկանքի, 2003թ. ընդհանուր վարձակալված տարածքները կազմել են 9,783.0 հա, իսկ հաշվարկված վարձավճարները՝ 7,783.5 հազ. դրամ, ապառք գումարը՝ 1,798.1 հազ. դրամ:

Մարզպետարանի կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել վարձավճարների գծով 2003 թվականին առաջացած ապառք գումարների, ինչպես նաև պայմանագրերով նախատեսված ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տույժերի գանձման ուղղությամբ:

2002 թ. մարզպետարանը, ունենալով գործող, կնքված և սահմանված կարգով գրանցված 63 պայմանագիր, որի վարձավճարը կազմում է 7,206.8 հազ. դրամ, ոչ ճիշտ տեղեկատվություն ներկայացնելու արդյունքում բյուջետային հայտի ձևավորման ժամանակ 2003թ. պետական բյուջեի պահուստային հողերի վարձակալության և օգտագործման հողվածով մարզի համար նախատեսվել է 3,300.0 հազ. դրամ վարձավճարների հավաքում՝ 2002 թվականին նախատեսված 6,312.0 հազ. դրամի փոխարեն:

ՀՀ կառավարության 07.11.2001թ.՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում հակաստղանքային առաջնահերթ միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1074 որոշման ընթացքի ուսումնասիրություն

ՀՀ կառավարության 07.11.01թ՝ «ՀՀ տարածքում հակաստղանքային առաջնահերթ միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1074 որոշման համաձայն, Կոտայքի մարզպետարանին, Ողջաբերդ գյուղի բնակիչների վերաբնակեցման համար 2003թ. պետական բյուջեով հատկացվել է 140.0 մլն դրամ:

25.07.02թ. ՀՀ կառավարության թիվ 1088-Ա որոշման համաձայն, Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի սողանքային խնդիրները լուծելու համար պետական բյուջեից հատկացվել է 115.0 մլն դրամ, որից 3.5 մլն դրամը ուղղվել է բնակելի տների տեխնիկական վիճակի նոր ուսումնասիրությունների կատարմանը: Նույն որոշմամբ սահմանվել է, որ Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի բնակիչների վերաբնակեցումն իրականացվում է անհատույց՝ պետական ֆինանսական աջակցության տրամադրմամբ, շուկայից պատրաստի բնակելի տուն (բնակարան) ձեռքբերելու միջոցով: ՀՀ կառավարության 13.12.02թ. նիստի թիվ 52 արձանագրությամբ հավանություն է տրվել Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված Ողջաբերդ գյուղի առաջնահերթ պետական աջակցություն ստացող 70 բնակիչների ցուցակին, որի ընդհանուր արժեքը կազմում է 287,200.0 հազ. դրամ:

01.01.04թ. դրությամբ ՀՀ կառավարության 13.12.02թ. նիստի թիվ 52 արձանագրությամբ հաստատված ցուցակում ընդգրկված 70 վթարային տների սեփականատերերից 16-ը դեռևս հայտեր չեն ներկայացրել: Հայտեր չներկայացրած բնակիչների թվում շատ են նրանք, ովքեր բնակվում են Ողջաբերդ գյուղի առավել վտանգավոր սողանքային գոտում (ժայռի տակ): ՀՀ կառավարություն ներկայացված առաջնահերթ պետական ֆինանսական աջակցություն ստացող անձանց տները կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառված և գնահատված չեն, ցուցակում նշված գումարները հիմնավորված չեն:

Ընդհանուր առմամբ, Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի վթարային տների բնակիչների վերաբնակեցման համար պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին փոխհատուցում է տրվել 54 սեփականատերերի: 1997թ. ՀՀ կառավարության թիվ 84 որոշման համաձայն փոխհատուցում է տրվել նաև 80 սեփականատերերի:

01.09.04թ. դրությամբ Ողջաբերդ գյուղի պետական աջակցություն ստացած 134 վթարային տների սեփականատերերից բնակարանները ազատել են 46-ը, որից 38-ը՝ նախկին ստացածներից, 8-ը՝ ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 13-ի թիվ 52 արձանագրությամբ հաստատված ցուցակից: Մարզպետարանի կողմից անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկվել՝ իրենց իսկ կողմից կնքված պայմանագրերի պահանջների կատարման ուղղությամբ. գնված բնակարանի դիմաց մեկամսյա ժամկետում չեն ազատել վթարային տները և կարճ ժամանակամիջոցում չեն քանդել: Ֆինանսական աջակցություն ստացած բնակիչները դուրս չեն եկել հաշվառումից և բնակվում են իրենց վթարային տներում: Ընդամենը 10 սեփականատերերի նկատմամբ է հայցադիմում ներկայացվել դատարան՝ նրանց վթարային բնակելի տներից վտարելու պահանջով: Արդյունքում, չի ապահովվել ծրագրի իրականացումից ակնկալվող՝ ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը:

Մարզի հանրակրթական դպրոցների հիմնանորոգում և բարեկարգում

ՀՀ պետական բյուջեի 2003թ. ծրագրով Կոտայքի մարզի 8 դպրոցների հիմնանորոգման համար հատկացվել է 49,500.0 հազ. դրամ: 21.07.03թ. պետական գնումների գործակալության և

մրցույթների արդյունքում ընտրված կապալառու կազմակերպությունների միջև կնքվել են աշխատանքների գնման պայմանագրեր՝ Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 4 (4,930.0 հազ. դրամ), Գառնիի թիվ 2 (9,810.0 հազ. դրամ), Բյուրեղավանի թիվ 1 (6,939.5 հազ. դրամ), Քասախի թիվ 1 (5,429.8 հազ. դրամ), Հրազդանի թիվ 12 (6,950.0 հազ. դրամ), Լեռնանիստի (4,442.2 հազ. դրամ), Սուլակի (5,409.8 հազ. դրամ), Արգելի (5,400.0 հազ. դրամ) միջնակարգ դպրոցների վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար: Աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանվել 2003թ. սեպտեմբերի 30-ը:

Վերահսկողության արդյունքում պարզվել է, որ որպես պատվիրատու հանդիսացող Կոտայքի մարզպետարանը 2003թ. կատարվելիք աշխատանքների համար չի կազմել համապատասխան թերությունների ակտեր, չի ճշտել դպրոցներում վերանորոգման ենթակա աշխատանքների իրական ծավալը: Աշխատանքային նախագծեր է կազմվել միայն 3 դպրոցի համար՝ «Էպալ» ՍՊԸ-ի կողմից, վերջինիս վճարվել է 180.0 հազ. դրամ: Մարզպետարանը, իր իսկ կողմից կազմված և հաստատված աշխատանքների նախագծերը և նախահաշիվները չի ներկայացրել անկախ փորձաքննության, որով և խախտվել է ՀՀ կառավարության 02.02.2002թ.՝ «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին» թիվ 196 որոշման պահանջները: Արդյունքում՝ Քասախի թիվ 1 դպրոցի նախահաշիվը մեխանիկական սխալի պատճառով ավելի է կազմվել 282.1 հազ. դրամի չափով:

Դպրոցների վերանորոգման աշխատանքներն իրականացվել են թերություններով: Քասախի թիվ 1 միջնակարգ դպրոցի տանիքածածկը (կապալառու՝ «Վերածնունդ» ՍՊԸ), առանց համապատասխան համադրման ծավալաթերթի, հարթ ցինկապատ թիթեղի փոխարեն կառուցվել է ալիքավոր թիթեղով, որի արդյունքում միայն օգտագործված նյութերի գնային տարբերությունը, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության գնագոյացման հաշվարկային ինֆորմացիոն կենտրոնի հրատարակած 2003թ. թիվ 5 տեղեկագրի, կազմել է 548.6 հազ. դրամ, իսկ կատարողական ակտով ավելի է հաշվարկվել 857.5 հազ. դրամ: Սուլակի դպրոցի տանիքածածկի կառուցումը ալիքավոր թիթեղով փոխարինելու հետևանքով («Վարդանավանք» ՍՊԸ) օգտագործված նյութերի գնային տարբերությունը կազմել է 636.24 հազ. դրամ, իսկ կատարողական ակտով ավելի է հաշվարկվել 978.1 հազ. դրամ:

Համաձայն մարզպետարանի աշխատակիցների կողմից կազմված 28.06.04թ. արձանագրության, «ուժեղ քամու» պատճառով 26.06.04թ. հիմնովին քանդվել և ընկել է Քասախի թիվ 1 դպրոցի սպորտդահլիճի 600 մ² մակերեսով նորակառուց տանիքը: 27.08.04թ. դրությամբ, այդ փաստի վերաբերյալ չի կազմվել համապատասխան մասնագիտական եզրակացություն:

Դպրոցների վերանորոգման աշխատանքների կատարման համար հատկացված միջոցներն անբավարար լինելու պատճառով հնարավոր չի եղել վերանորոգման աշխատանքներն իրականացնել ամբողջությամբ: Շատ դեպքերում կատարվել է նախատեսվածի միայն մի մասը: Արդյունքում, հիմնականում արդյունավետ չեն օգտագործվում տրամադրված միջոցները:

Մարզին ՀՀ պետական բյուջեի գումարների հաշվին հատկացված օգնությունը

Կոտայքի մարզին 2003թ. ՀՀ պետական բյուջեի գումարների հաշվին մկնամման կրծողների դեմ համայնքների միջոցով պայքարի իրականացման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հատկացվել է 450 կգ թունանյութ:

Պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին ձեռքբերված էթիլֆենացինը մարզպետարանի միջոցով տրամադրվել է հողի սեփականատերերին և հողօգտագործողներին, վերջիններիս կողմից պայքարի աշխատանքները կատարելու նպատակով: Թունանյութի բաշխման ցուցակում ընդգրկվել են մարզի 64 համայնքներից՝ 29-ը:

2002-2003թթ. ձմռան ցրտահարություններից և բնական այլ աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին օժանդակելու նպատակով ձեռքբերված աշնանացան ցորենի սերմացուից մարզպետարանին հատկացվել է 100 տոննա:

Կոտայքի մարզպետի 14.05.03թ. թիվ 4-09-690 գրությամբ կատարված հետազոտման արդյունքում ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացրած՝ 2002-2003թթ. ձմռան ցրտահարությունների և գարնան գերխոնավության հետևանքով խիստ տուժած գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների աշնանացան ցորենի և գարու ցանքատարածությունների վերաբերյալ տեղեկանքում ընդգրկված 17 համայնքներից, մարզային հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ աշնանացան ցորենի բաշխման ցուցակում չեն ընդգրկվել 10 համայնքներ, փոխարենը ավելացվել են 6 նոր համայնքներ, որոնց վերաբերյալ նախկինում ոչ մի տեղեկատվության չի եղել և, ընդհանուր առմամբ, դրանց բաշխվել է 26.2 հազ. կգ աշնանացան ցորեն:

Մարզային հանձնաժողովի կողմից աշնանացան ցորենը բաշխելիս հաշվի չի առնվել միջգերատեսչական հանձնաժողովի նիստի արձանագրության 4-րդ կետով սահմանված պահանջը՝ օգնությունը բաշխել առավել տուժած գյուղացիական տնտեսություններին: Օգնություն են ստացել ավելի քիչ ցրտահարված ցանքատարածություններ ունեցող համայնքներ (Մարմարիկ՝ 10 հա, Ջրառատ՝ 36 հա, Նոր գյուղ՝ 5 հա) այն դեպքում, երբ շատ ավելի մեծ վնասներ ունեցող համայնքներ և տնտեսություններ չեն ընդգրկվել ցուցակում (Ջորավան՝ 300 հա, Կապուտան՝ 250 հա, Չովաշեն՝ 300 հա, Չառ՝ 300 հա):

Մարզային հանձնաժողովը, ցորենի բաշխումը և առավել տուժած գյուղացիական տնտեսություններին՝ իր վրա դրված ընտրության իրավունքը վերապահել է համայնքների ավագանիներին՝ շրջանցելով ՀՀ կառավարության 23.03.2003թ. թիվ 349 ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստի արձանագրությամբ հաստատված պահանջները, որոնք էլ իրենց հերթին ավագանու որոշումների հիման վրա կատարել են բաշխումը:

Համայնքների ավագանու որոշումների հիման վրա ցորենի բաշխման պրոցեսում մի շարք դեպքերում թույլ են տրվել յուրաքանչյուր շահառուին 150 կգ սահմանված չափից ավելի հատկացումներ՝ մինչև 500 կգ (Ալափարս՝ 300-500 կգ, Հրագրան՝ 150-450 կգ):

Աշնանացան ցորենի բաշխումը մարզպետարանի կողմից կատարվել է ՀՀ կառավարության՝ 23.03.03թ. թիվ 349-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստի արձանագրությամբ հաստատված պահանջների «3», «4» և 5-րդ կետի «Բ» ենթակետի պահանջների և չափորոշիչների շեղումներով: Գործընթացի վերաբերյալ մարզային հանձնաժողովը բավարար հետևողականություն չի ցուցաբերել, չի նպաստել հատկացված օգնության նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

Մարզպետարանի ղեկավարությունը ս/թ նոյեմբերի 12-ին ծանոթացել է վերահսկողության արդյունքներին և առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Կոտայքի մարզպետարանի ապարատի պահպանման համար կատարված ծախսերի գծով նախահաշվի առանձին հողվածներով թույլ է տրվել գերածախս, խախտելով ՀՀ կառավարության թիվ 184-Ն որոշման 3.5 կետի պահանջները, որը չի արտացոլվել ֆինանսական հաշվետվություններում:
- Պատշաճ հսկողություն չի իրականացվել մարզպետարանի ենթակայության 50 % և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների հաշվապահական հաշվառման վարման, շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման նկատմամբ:
- Մարզպետարանի կողմից անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական պահուստային ֆոնդի հողերի օգտագործման նպատակով վարձակալության պայմանագրերի հիման վրա վարձավճարների գանձման և պետական բյուջե մուտքագրման համար:
- Ողջաբերդ գյուղի 70 տնտեսությունների ցուցակում ընդգրկված տները կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառված և գնահատված չեն, ցուցակում ներառված փոխհատուցման գումարները հիմնավորված չեն:
- Ֆինանսական աջակցություն ստացած Ողջաբերդ գյուղի բնակիչների զգալի մասը մինչև օրս շարունակում է բնակվել իրենց վթարային տներում, խախտելով պայմանագրով նախատեսված պահանջները:
- Կոտայքի մարզպետարանի և Ողջաբերդի գյուղապետարանի համապատասխան ծառայությունների ոչ բավարար հսկողության պատճառով պետության կողմից հատկացված գումարների նպատակային ծախսման արդյունավետություն չի ապահովվել:
- Մարզպետարանին հատկացված բյուջետային միջոցների հաշվին շինարարություն իրականացնելու համար մրցույթներն անց են կացվել առանց փորձաքննության ենթարկված նախագծանախահաշվային փաստաթղթերի, խախտելով ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 196 որոշման պահանջները:

- 2002-2003 թթ. ձմռան ցրտահարություններից և բնական այլ աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին օժանդակելու նպատակով հատկացված 100 տոննա աշնանացան ցորենի բաշխումը մարզպետարանի կողմից կատարվել է հաստատված կարգի պահանջների խախտմամբ: Գործընթացի վերաբերյալ մարզային հանձնաժողովը բավարար հետևողականություն չի ցուցաբերել, չի նպաստել հատկացված օգնության նպատակային օգտագործմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոտայքի մարզպետարանին (մարզպետ՝ Կ.Շահապոյան) ձեռնարկել միջոցառումներ.

- «ՀՀ պետական բյուջեի», «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներից բխող արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:
- Շինարարական աշխատանքներում տեղ գտած թերությունները և խախտումները վերացնելու, ինչպես նաև պետությանը հասցված՝ 2,117.7 հազ. դրամ վնասի վերականգնման ուղղությամբ:
- Ողջաբերող գյուղի ֆինանսական աջակցություն ստացած վթարային տների բնակիչներին պայմանագրով նախատեսված կարգով վթարային տներից տարհանելու ուղղությամբ:
- Մարզի տարածքում գործող 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից հաշվապահական հաշվառումը սահմանված կարգով վարելու, հաշվապահական հաշվեկշիռներում տեղ գտած անարժանահավատ տվյալների ուղղելու և պակաս ցույց տրված շահույթից հասանելիք շահութաբաժինները պետական բյուջե վճարելու ուղղությամբ:

Կանոնակարգել համակարգի առջև դրված խնդիրներն ու գործառույթները, ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպումը և դրա նկատմամբ հսկողության իրականացումը:

Հսկողություն իրականացնել ֆինանսատնտեսական պլանավորման, բուժիմնարկների և առողջապահական գործակալության մարզային կենտրոնի միջև կնքված պայմանագրերից բխող փոխադարձ պարտավորությունների նկատմամբ, վերահսկել ընկերությունների կողմից պետական շահութաբաժինների հաշվառման և պետական բյուջե վճարման գործընթացը:

- Մեկամսյա ժամկետում վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական բյուջեից 2003թ. ընթացքում կապիտալ շինարարությանը և նորոգումներին հատկացված միջոցների օգտագործման մասին

Ուսումնասիրության հիմքը – Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2003թ. դեկտեմբերի 3-ի թիվ Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004թ. գործունեության տարեկան ծրագրի 9-րդ կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 02.04.2004թ. թիվ 74, 30.07.2004թ. թիվ 99, 06.10.2004թ. թիվ 113 հրամանները:

Ուսումնասիրության նպատակը – Հայաստանի Հանրապետության 2003թ. պետական բյուջեից կապիտալ շինարարության և նորոգումների նպատակով հատկացված միջոցների օգտագործման մասին:

Ուսումնասիրության օբյեկտը – ՀՀ քաղաքաշինության նախարարություն, Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի մարզպետարաններ:

Ուսումնասիրվել են ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության 2003թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվությունը, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության և Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի մարզպետարանների կողմից ներկայացված փաստաթղթերը.

1. Նախագծանախահաշվային փաստաթղթեր,
2. Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացություններ,
3. Շինարարական աշխատանքների կապալի, տեխնիկական և հեղինակային հսկողության պայմանագրեր,
4. Կատարողական ակտեր,
5. Շինարարության ավարտական ակտեր,
6. Շինարարական աշխատանքներին առնչվող այլ փաստաթղթեր:

Ընտրանքային կարգով շինարարական օբյեկտներում իրականացվել են դիտողական զննում և հսկիչ չափագրումներ:

Համաձայն «ՀՀ 2003թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, 2003թ. ընթացքում կապիտալ ծախսերի գծով ՀՀ քաղաքաշինության նախարարությանը, Շիրակի, Լոռու, Տավուշի և Արագածոտնի մարզպետարաններին ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր հատկացնել 6,191,553.0 հազ. դրամ (առանց նպատակային վարկերի, նախորդ տարիների պարտքերի, սեփականաշնորհումից առաջացած և «Լինսի» հիմնադրամի միջոցների հաշվին իրականացվող

ծրագրերի), տարեկան ճշտված պլանը կազմել է 5,917,671.1 հազ. դրամ, փաստացի կատարողականը՝ 5,862,364.0 հազ. դրամ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ քաղաքաշինության նախարարությանը, Շիրակի, Լոռու, Տավուշի և Արագածոտնի մարզպետարաններին կապիտալ ծախսերի նպատակով հատկացված միջոցները

					հազ. դրամ	
Հ/Հ	Ծախսատեսակ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի ըստ կառավար. հաշվետվութ.	Փաստացի ըստ ուսումնասիր. արդյունքների	
1	Կապիտալ շինարարություն, այդ թվում.	4 875 573.0	5 295 471.0	5 247 771.3	5 235 751.2	
	Քաղաքաշին. նախարարություն	2 544 573.0	2 358 116.0	2 354 679.5	2 354 679.5	
	Շիրակի մարզպետարան	1 606 000.0	1 939 275.0	1 896 221.5	1 895 291.5	
	Լոռու մարզպետարան	525 000.0	796 000.0	794 817.9	783 727.8	
	Տավուշի մարզպետարան	160 000.0	164 000.0	163 985.8	163 985.8	
	Արագածոտնի մարզպետարան	40 000.0	38 080.0	38 066.6	38 066.6	
2	Կապիտալ նորոգումներ, այդ թվում.	238 000.0	389 466.2	386 974.2	385 464.3	
	Քաղաքաշին. նախարարություն	35 000.0	145 149.2	144 485.1	144 485.1	
	Շիրակի մարզպետարան	15 000.0	64 000.0	62 430.4	62 250.4	
	Լոռու մարզպետարան	88 000.0	81 000.0	80 801.5	79 471.6	
	Տավուշի մարզպետարան	40 000.0	40 000.0	39 949.3	39 949.3	
	Արագածոտնի մարզպետարան	60 000.0	59 317.0	59 307.9	59 307.9	
3	Նախագծահետազոտական, երկրաբանահետախուզական և գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ, այդ թվում.	164 180.0	158 510.0	153 639.3	167 169.3	
	Քաղաքաշին. նախարարություն	104 660.0	96 950.0	94 449.3	94 449.3	
	Շիրակի մարզպետարան	30 000.0	30 000.0	29 920.0	31 030.0	
	Լոռու մարզպետարան	3 000.0	3 000.0	3 000.0	15 420.0	
	Տավուշի մարզպետարան	5 820.0	5 820.0	5 820.0	5 820.0	
	Արագածոտնի մարզպետարան	20 700.0	22 740.0	20 450.0	20 450.0	
4	Այլ կապիտալ ծախսեր, այդ թվում.	913 800.0	74 223.9	73 979.2	73 979.2	
	Քաղաքաշին. նախարարություն	0.0	5 423.9	5 423.4	5 423.4	
	Շիրակի մարզպետարան	583 000.0	0.0	0.0	0.0	
	Լոռու մարզպետարան	270 800.0	8 800.0	8 607.0	8 607.0	
	Տավուշի մարզպետարան	0.0	0.0	0.0	0.0	
	Արագածոտնի մարզպետարան	60 000.0	60 000.0	59 948.8	59 948.8	
	ԸՆԴԱՍԵՆԸ	6 191 553.0	5 917 671.1	5 862 364.0	5 862 364.0	

Հակահեղեղային և հակասողանքային միջոցառումների իրականացման նպատակով Տավուշի մարզպետարանին պահուստային ֆոնդից կառավարության 10.07.2003թ. թիվ 857 որոշմամբ հատկացվել էր ևս 17,000.0 հազ. դրամ:

Կապիտալ ծախսերի նպատակով Շիրակի և Լոռու մարզպետարաններին հատկացված՝ պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից առաջացած միջոցների 2002թ. ընթացքում չիրացված մնացորդը՝ ըստ «ՀՀ 2003թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» հաշվետվության, ճշտված պլանով կազմել է 214,099.9 հազ. դրամ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

հազ. դրամ				
Հ/Հ	Ծախսատեսակ	Տարեկան ճշտված պլան	Փաստացի ըստ կառավար. հաշվետվութ.	Փաստացի ըստ ուսումնասիր. արդյունքների
1	Կապիտալ շինարարություն	193,260.9	162,352.1	177,909.6
2	Կապիտալ նորոգումներ	12,000.0	11,918.1	11,918.1
3	Նախագծահետազոտական, երկրաբանահետախուզական և գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ	8,839.0	0.0	0.0
4	Այլ կապիտալ ծախսեր	0.0	0.0	0.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	214,099.9	174,270.2	189,827.7

«Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից առաջացած միջոցների 2002թ. ընթացքում չիրացված մնացորդի» վերաբերյալ հաշվետվության և ուսումնասիրության արդյունքում արձանագրված գումարների միջև առկա 15,557.5 հազ. դրամի տարբերությունը պայմանավորված է 2002թ. ընթացքում կապալառուին տրամադրված կանխավճարի և կատարողական ակտերի հիման վրա փաստացի վճարված գումարների տարբերությամբ: Վերոհիշյալ գումարների հաշվին պետք է իրականացվեին «Ադետի գոտու ԾԻԳ» ՊՀ «Լինսի» հիմնադրամի կողմից Գյումրիում կառուցվող բնակելի շենքերի ինժեներական ցանցի և բարեկարգման աշխատանքները, սակայն շենքերը հիմնադրամի կողմից ժամանակին շահագործման չհանձնելու պատճառով կանխավճարը մարվել է 2003թ. հունվարին: Բնակարանային շինարարությանը, վթարային շենքերի քանդմանը և նախագծային աշխատանքներին հատկացված գումարները կնքված պայմանագրերի հիման վրա իրացվել են 2004թ. III եռամսյակի ընթացքում:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունում, Շիրակի, Լոռու, Տավուշի և Արագածոտնի մարզպետարաններում (այսուհետ՝ գերատեսչություններ) կատարված փաստաթղթային ուսումնասիրությամբ պարզվել է, որ կապիտալ շինարարության և նորոգումների աշխատանքներ իրականացվել են թվով 109 օբյեկտներում՝ «ՀՀ 2003թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով

նախատեսված 84-ի փոխարեն (ներառյալ՝ սեփականաշնորհման միջոցների չիրացված մնացորդի հաշվին իրականացվող աշխատանքները): Թվով 25 օբյեկտներ կապիտալ շինարարության ծրագրերում ներառվել են կառավարության համապատասխան որոշումներով:

Շինարարական աշխատանքների կապալի պայմանագրերի գերակշիռ մասը կնքվել է Պետական գնումների գործակալության կողմից՝ բաց մրցույթի եղանակով, միաժամանակ պատվիրատուի որոշակի իրավունքներ և պարտականություններ վերապահելով համապատասխան գերատեսչությանը (մասնավորապես՝ լիազորել այլ անձի՝ իրականացնել տեխնիկական հսկողություն շինարարական աշխատանքների նկատմամբ, պայմանագրով նախատեսված ժամկետում համապատասխան կարգով գննել և ընդունել կատարված աշխատանքները և այլն): Գերատեսչությունների կողմից կապալառու կազմակերպությունների հետ շինարարական կապալի պայմանագրերը կնքվել են հիմնականում «Գնում մեկ աղբյուրից» եղանակով:

Շիրակի և Լոռու մարզերում թվով 5 փոխանցիկ օբյեկտների շինարարական աշխատանքները շարունակելու կամ կիսակառույցների կոնսերվացման և պահպանման նպատակով 2004թ. ընթացքում գումարներ չեն հատկացվել, որը հետագայում կհանգեցնի լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտության և գումարների ոչ արդյունավետ ծախսման (Գյումրիի մանկավարժական ինստիտուտ, Մայիսյանի մշակույթի տուն, Ստեփանավանի վարչական շենք, Կաթնաջրի համայնքային կենտրոն, Լեռնապատի դպրոց, 2003թ. ընթացքում ֆինանսավորված ընդհանուր գումարը՝ 136,100.0 հազ. դրամ):

Մրցութային հայտերի բացակայության պատճառով չի իրացվել պետական բյուջեից Գյումրիի Հանեսողյան 5 բ/2 շինարարությանը հատկացված 15.0 մլն դրամը (օբյեկտի նախահաշվային արժեքը կազմում է 297,487.82 հազ. դրամ): Արագածոտնի մարզպետարանին բնակավայրերի գլխավոր հատակագծերի մշակման նպատակով հատկացված 20,000.0 հազ. դրամով իրականացվել են Աշտարակ քաղաքի, Օհանավան, Ուշի, Կարբի, Բազմաղբյուր և Փարպի գյուղերի գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքները: 2003թ. պետական բյուջեով հատակագծերի փորձաքննության համար գումար չի նախատեսվել, այդ պատճառով դրանք մինչև օրս փորձաքննության չեն ենթարկվել, վերջնական քննարկում չեն անցել և չեն հաստատվել, մինչդեռ «ՀՀ 2004թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով մարզպետարանին նախագծային աշխատանքների նպատակով հատկացված և չիրացված 2,040.0 հազ. դրամը համապատասխան ծրագրային և միջհոդվածային փոփոխություն կատարելուց հետո հնարավոր էր ուղղել հատակագծերի փորձաքննությանը, որը չի արվել:

Ֆինանսավորման ուշացմամբ և 2003թ. պետական բյուջեի եռամսյակային համամասնությունների ոչ օպտիմալ բաշխմամբ պայմանավորված, Լոռու մարզպետարանի որոշ օբյեկտներում արձանագրվել են նախագծանախահաշվային և շինարարական աշխատանքների ընդունման ժամկետների խախտումներ: Օրինակ՝ Սպիտակի գեղարվեստի դպրոցի նախագծանախահաշվային փաստաթղթերն ընդունվել են 11.08.2003թ., մինչդեռ, ըստ

արձանագրության, դրանք իրականացվել են մինչև 15.05.2003թ.: Վանաձորի սպորտդպրոցի հիմնանորոգման աշխատանքների վերջին՝ թիվ 3 կատարողական ակտի եզրակացությունը ստորագրվել է 28.07.2003թ., հանձնման-ընդունման արձանագրությամբ աշխատանքներն ընդունվել և վճարումը կատարվել է 10.10.2003թ. և այլն:

Պարզվել է, որ նախագծանախահաշվային աշխատանքների գնման գործընթացները մի շարք դեպքերում սկսվել են 2002թ., այսինքն՝ մինչև «ՀՀ 2003թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Մասնավորապես, Վանաձորի թիվ 25 դպրոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների գնման պայմանագիրը կնքվել է 10.12.2002թ.: Վանաձորի դրամատիկական թատրոնի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների գնման պայմանագիրը կնքվել է 08.10.2002թ., իսկ հիվանդանոցի սրտաբանական բաժանմունքի շինարարությանը՝ 17.12.2002թ.:

Արագածոտնի մարզում հիմնանորոգման ծրագրում ընդգրկված 11 դպրոցներից 10 –ի դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերի փոխարեն կազմվել են ընդամենը թերությունների ակտեր՝ մարզպետարանի քաղաքաշինության վարչության և դպրոցների ներկայացուցիչների համատեղ հանձնաժողովի կողմից: Վերոհիշյալ ակտերի հիման վրա որոշվել են օբյեկտների նախահաշվային արժեքները և կազմվել ծավալաթերթեր, որոնք էլ, առանց համապատասխան փորձաքննության, ներկայացվել են Պետական գնումների գործակալություն:

Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով կնքված պայմանագրերի ընդհանուր գումարը ցածր է 1985թ. հաստատված «Կապալառու կազմակերպությունների կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի ընդունման» հրահանգով սահմանված՝ պետական բյուջեից կապիտալ շինարարության և նորոգումների ծրագրերին՝ ըստ ճշտված պլանի հատկացված գումարի համապատասխանաբար՝ 0.2% -ից և 0.49%-ից, այն դեպքում, երբ վարկային միջոցների հաշվին իրականացվող շինարարության ժամանակ տեխնիկական հսկիչներին վճարվող գումարը հասնում է 2%-ի:

Քաղաքաշինության նախարարության կողմից իրականացվող շինարարական և հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով նախարարությունը համապատասխան պայմանագրեր չի կնքել: Տեխնիկական հսկիչների հետ պայմանագրերը կնքել են կապալառուները: Տեխնիկական հսկողության համար նախատեսված գումարները ներառվել են համապատասխան կապալի պայմանագրերի ծավալաթերթերում և վճարվել կապալառուների կողմից ներկայացված կատարողական ակտերին համամասնորեն:

Արագածոտնի մարզում Ապարանի թիվ 3, Գազարավանի և կրթական օբյեկտների հիմնանորոգման ծրագրում ընդգրկված մյուս դպրոցների շինարարության, Ապարանի վթարային շենքի քանդման աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով համապատասխան պայմանագրեր չեն կնքվել և գումարներ չեն վճարվել: Տեխնիկական

հսկողության իրականացումը մարզպետի 22.08.2003թ. թիվ 76 կարգադրությամբ հանձնարարվել է վարչության աշխատակիցներին:

Քաղաքաշինության նախարարությունում, Լոռու մարզպետարանում հեղինակային և տեխնիկական հսկողության բոլոր պայմանագրերում նշվել են հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնելու կոնկրետ ժամկետներ, սակայն շինարարության և հիմնանորոգման աշխատանքների ժամկետների փոփոխությունից հետո վերոհիշյալ պայմանագրերում համապատասխան փոփոխություններ չեն կատարվել:

Որոշ դեպքերում շինարարության թույլտվությունները տրվել են զգալի ուշացումներով, որի արդյունքում վտանգվել է պայմանագրային պարտավորությունների կատարումը, շինարարական աշխատանքների իրականացումն ու ավարտը նախանշված ժամկետներում: Մասնավորապես, Շիրակի մարզում Գյումրիի թիվ 5 գիշերօթիկ դպրոցի շինարարության թույլտվությունը տրվել է կապալի պայմանագրով աշխատանքների սկսման ժամկետից 34 օր ուշացումով, Երևանյան խճուղի 32բ/շ թույլտվությունը՝ 33 օր ուշացումով, Լոռու մարզում «Ինժեներական ենթակառուցվածքներ և բարեկարգում Վանաձորում» աշխատանքների թույլտվությունը Վանաձորի քաղաքապետի կողմից տրվել է 54 օր ուշացումով, Տավուշի մարզում՝ Իջևանի քաղաքապետի կողմից պատկերասրահի շինարարության թույլտվությունը տրվել է 52 օր ուշացումով և այլն:

Շիրակի մարզում Հառիջ և Նոր Մանթաշ գյուղերի դպրոցների հիմնանորոգման պատվիրատու է հանդիսացել մարզպետարանի Կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը: Պատվիրատուի մոտ բացակայում էին նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման պայմանագիրը, նախագծի փորձաքննության եզրակացությունը, տեխնիկական և հեղինակային հսկողության պայմանագրերը, շինարարության ավարտական ակտերը և այլն: Փաստաթղթային ուսումնասիրությամբ պարզվել է, որ օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության դիմաց գումարներ չեն վճարվել: Վերոհիշյալ փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ աշխատանքների կատարման ժամանակ վարչության կողմից դրանց ծավալների և որակի նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվել:

Արագածոտնի մարզում հիմնանորոգման ծրագրում ընդգրկված դպրոցներից Ղազարավանի դպրոցին հատկացվել է 26,500.0 հազ. դրամ, իսկ մյուս 10 դպրոցներին՝ 500.0 հազ. դրամից մինչև 8,930.0 հազ. դրամ: Գումարի մասն մասնատումը հանգեցրել է հատկացված միջոցների փոշիացման: Հատկացված գումարների չափը հնարավորություն չի տվել դպրոցներում իրականացնել լիարժեք հիմնանորոգում, կատարվել են ընդամենը առաջնահերթ աշխատանքներ: Ծրագրում ընդգրկված Օհանավանի, Բերքառատի և Յամաքասարի դպրոցները 2004թ. կրկին ներառվել են դպրոցների հիմնանորոգման ծրագիր: Ուսումնասիրության ընթացքում վերոհիշյալ դպրոցներում շինարարական աշխատանքները շարունակվում էին:

Արագածոտնի մարզում Ապարանի թիվ 3 դպրոցի շինարարության (մշակույթի տան վերափոխում դպրոցի) նպատակով կնքված պայմանագրի N 1 փոփոխությամբ նախատեսվել էր աշխատանքներն ավարտել 30.05.2004թ.: Միաժամանակ կապալառուին կանխավճարի ձևով

հատկացվել էր 2003թ. ընթացքում չիրացվաց՝ մնացորդային 20,662.103 հազ. դրամը: 2003թ. ընթացքում կապալառուի կողմից կազմվել էր ընդամենը 2 կատարողական ակտ՝ 8,961.85 հազ. դրամ ընդհանուր գումարով, 2004թ. ընթացքում՝ ընդամենը 1 կատարողական ակտ՝ 4,571.571 հազ. դրամ գումարով՝ 30.07.2004թ., պայմանագրով նախատեսված և փաստացի վճարված 33,080.0 հազ. դրամի դիմաց: 19,546.58 հազ. դրամի դիմաց կատարողական ակտերը բացակայում էին, օբյեկտի դիտողական գննությանը և չափագրումներով պարզվել է, որ շինարարական աշխատանքները մնացել են անավարտ և չեն շարունակվում: Մարզպետարանը իր իրավասությունների շրջանակներում կապալառուի նկատմամբ ժամանակին չի կիրառել համապատասխան սանկցիաներ և պատժամիջոցներ, և միայն 09.07.2004թ. է մարզպետը համապատասխան գրությամբ դիմել Պետական գնումների գործակալություն՝ խնդրելով լուծարել կապալառուի հետ կնքած պայմանագիրը:

Ղազարավան և Փարսի գյուղերի դպրոցների հիմնանորոգման նպատակով պայմանագիր է կնքվել «Դիզակ»Ա/Կ–ի հետ, պայմանագրի գինը կազմել է 27,000.0 հազ. դրամ: Կապալառուի կողմից ներկայացվել է ընդամենը 2 կատարողական ակտ՝ 7,024.2 հազ. դրամ ընդհանուր գումարով: 22.12.2003թ. վերջինիս հետ կնքված պայմանագիրը խզելուց հետո Ղազարավանի դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն ավարտելու նպատակով «ՎԷՌ-Լ» Ա/Կ –ի հետ մնացորդային 19,975.0 հազ. դրամ գումարի չափով «Գնում մեկ աղբյուրից» եղանակով կնքվել է նոր պայմանագիր, գումարը տրամադրվել է կանխավճարի ձևով: Սակայն ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինիս, պայմանագրով նախատեսվածի փոխարեն, փաստացի վճարվել է ընդամենը 15,481.0 հազ. դրամ, քանի որ «Դիզակ» Ա/Կ –ն պետական բյուջե չի վերադարձրել ստացած կանխավճարի մնացորդային 4,494.0 հազ. դրամը (փաստի առթիվ ՀՀ դատախազության կողմից կատարվում է քննություն): Նոր կապալառուի կողմից գումարների թերստացումն ուղղակիորեն ազդել է շինարարական աշխատանքների ընթացքին: Ուսումնասիրության ընթացքում օբյեկտը գտնվում էր անավարտ վիճակում, մինչդեռ «ՎԷՌ-Լ» Ա/Կ –ի հետ կնքած պայմանագրի թիվ 1 փոփոխությամբ նախատեսվում էր աշխատանքներն ավարտել 30.05.2004թ.:

Քաղաքաշինության նախարարության կողմից իրականացվող ծրագրերով մի շարք դեպքերում խախտվել են պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես չեն պահպանվել շինարարական աշխատանքների իրականացման ժամկետները, ավարտական ակտերով օբյեկտներն ընդունվել են պայմանագրով նախատեսված ժամկետներից էական ուշացումներով (մասնավորապես՝ Ադինի դպրոցը՝ 60 օր, Գյումրիի Նորվեգական 1 թաղամասի ինժեներական ենթակառուցվածքների և բարեկարգման աշխատանքներ՝ 58 օր, Արարատի թիվ 37 բնակելի շենքը՝ 121 օր, Թովուզի մշակույթի տունը՝ 120 օր, Բերդի մարզադպրոցը՝ 120 օր և այլն): Ուսումնասիրության պահին Գյումրիի Նորվեգական 2 թաղամասի ինժեներական ենթակառուցվածքների և բարեկարգման աշխատանքները դեռևս ավարտված չէին, քանի որ տեղական իշխանությունների կողմից չէր ապահովվել տնակներում բնակվող բնակիչների տարհանումը և տարածքի ազատումը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ առանձին դեպքերում շինարարական և հիմնանորոգման աշխատանքները չեն իրականացվել պայմանագրով նախատեսված ամբողջ ծավալով: Մասնավորապես, Շիրակի մարզում Գյումրիի թիվ 29 դպրոցի մարզադահլիճի և հանդիսությունների սրահի շինարարական աշխատանքների փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 65,510.06 հազ. դրամ՝ պայմանագրով նախատեսված 84,490.0 հազ. դրամի դիմաց, կամ պակաս են իրականացվել 18,979.94 հազ. դրամի աշխատանքներ, պայմանավորված՝ համաֆինանսավորումն իրականացնող բարերարի կողմից կատարված նախագծային փոփոխություններով: Վթարային շենքերի քանդում, վնասագերծում ծրագրով նախատեսված քանդման աշխատանքների փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 20,906.73 հազ. դրամ՝ պայմանագրով նախատեսված 29,800.0 հազ. դրամի դիմաց: Տարբերությունը՝ 8,893.27 հազ. դրամ, որը չի իրացվել՝ Գյումրիի Սովխոզ 17-ի ԴՕՍ-1, ԴՕՍ-6 և ԴՕՍ-7 վթարային շենքերի բնակիչների տարհանումը չապահովելու պատճառով: Լոռու մարզում Կաթնաջրի համայնքային կենտրոնի 2003թ. ընթացքում կատարված շինարարական աշխատանքների ծավալը նախատեսված 25,000.0 հազ. դրամի դիմաց կազմել է 23,940.0 հազ. դրամ, քանի որ նշված գումարից վճարվել են նախագծանախահաշվային, փորձաքննության, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները: Նույն կերպ Լեռնապատի դպրոցի շինարարության 2003թ. ընթացքում կատարված աշխատանքների ծավալը կազմել է 3,980.0 հազ. դրամ՝ պայմանագրով նախատեսված 7,100.0 հազ. դրամի դիմաց և այլն:

Բոլոր գերատեսչություններում շինարարական և հիմնանորոգման աշխատանքների կատարման ընթացքում մի շարք դեպքերում առաջացել է ծավալաբերթով առկա աշխատանքային ծավալների փոփոխման անհրաժեշտություն՝ հիմնականում պայմանավորված նախագծային թրություններով: Առկա էին պատվիրատուի կողմից տրված համաձայնությունները՝ կատարելու վերոհիշյալ փոփոխությունները, որոնց արդյունքում պայմանագրային գնի փոփոխություն չի արձանագրվել: Բացի այդ, Տավուշի մարզի մի քանի օբյեկտներում շինարարական աշխատանքներն ավարտելու համար առաջացել է լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտություն: Այսպես, Իջևանի պատկերասրահի շինարարության դեպքում լրացուցիչ աշխատանքների ծավալը, համաձայն կազմված նոր նախահաշվի, կազմել է 690.48 հազ. դրամ: Դրանց իրականացման համար մարզպետարանի կողմից կնքվել է լրացուցիչ պայմանագիր՝ 600.0 հազ. դրամ գումարով: Դիլիջանի Մոլորակական 24 բնակելի շենքի շինարարության լրացուցիչ գումարը կազմել է 201.852 հազ. դրամ, կնքված նոր պայմանագրի գինը՝ 173.9 հազ. դրամ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում տեղ գտած թրությունների վերաբերյալ համապատասխան արձանագրություններ չեն կազմվել, դրանց վերացման վերաբերյալ համաձայնությունը կապալառուների հետ կայացել է բանավոր: Նախագծային և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների, տեխնիկական հսկիչների, շինարարական աշխատանքների կապալառուների նկատմամբ համապատասխան պայմանագրերով նախատեսված սանկցիաներ չեն կիրառվել, տույժեր և տուգանքներ չեն գանձվել: Քանդման

ընթացքում համապատասխան նախագծերով և ծավալաթերթերով մուտքագրվող պիտանի շինանյութեր չեն նախատեսվել և փաստացի չեն մուտքագրվել:

Ծավալաթերթերով նախատեսված, համապատասխան կատարողական ակտերում արտացոլված և փաստացի կատարված աշխատանքների համապատասխանությունը ստուգելու նպատակով հանձնաժողովի կողմից ընտրանքային եղանակով կատարվել են դիտողական զննում և հսկիչ չափագրումներ: Չննություններին և չափագրումներին մասնակցել են վերահսկվող օբյեկտի, կապալառու կազմակերպությունների և շահագործման հանձնված օբյեկտների ներկայացուցիչները, միջանկյալ/նախնական վերահսկողության վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Վերահսկվող օբյեկտների ներկայացուցիչները ծանոթացել են վերահսկողության արդյունքներին և առարկություններ չեն ունեցել, որի վերաբերյալ կազմվել են ծանոթացման արձանագրություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Պատվիրատուների կողմից չեն պահպանվել ՀՀ մի շարք օրենսդրական, ենթաօրենսդրական և նորմատիվ-իրավական ակտերի առանձին հոդվածների և կետերի պահանջները (մասնավորապես՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» ՀՀ օրենք, «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» և այլն):

- 1985թ.-ին հաստատված՝ «Կապալառու կազմակերպությունների կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի ընդունման» հրահանգով սահմանված և ներկայումս կիրառվող տեխնիկական ու հեղինակային հսկողության նպատակով հատկացվող միջոցների հաշվարկման նորմատիվները չեն նպաստում հսկողության աշխատանքները համապատասխան որակով իրականացնելուն:
- Արագածոտնի մարզում հիմնանորոգման ծրագրում ընդգրկված դպրոցներին հատկացված գումարների մասնատումը հանգեցրել է հատկացված միջոցների փոշիացման: Հատկացված գումարների չափը հնարավորություն չի տվել դպրոցներում իրականացնել լիարժեք հիմնանորոգում՝ հետագայում հանգեցնելով լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտության: Ծրագրում ընդգրկված դպրոցներից Օհանավանի, Բերքառատի և Յամաքասարի դպրոցները 2004թ. կրկին ներառվել են դպրոցների հիմնանորոգման ծրագրում:
- Շիրակի և Լոռու մարզերում թվով 5 փոխանցիկ օբյեկտների շինարարական աշխատանքները շարունակելու կամ կիսակառույցների կոնսերվացման և պահպանման նպատակով 2004թ. ընթացքում գումարներ չեն հատկացվել, որը հետագայում կրեթի լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտություն և գումարների ոչ արդյունավետ ծախսում (Գյումրիի մանկավարժական ինստիտուտ, Մայիսյանի մշակույթի

տուն, Ստեփանավանի վարչական շենք, Կաթնաջրի համայնքային կենտրոն, Լեռնապատի դպրոց, 2003թ. ընթացքում ֆինանսավորված ընդհանուր գումարը՝ 136,100.0 հազ. դրամ):

- Տեղական ինքնակառավարման մարմինների անհետևողականության պատճառով շինարարության թույլտվությունները տրվել են ուշացումով:
- Արագածոտնի մարզում Ապարանի թիվ 3 դպրոցի շինարարության (մշակույթի տան վերափոխում դպրոցի) նպատակով կապալառուին վճարված 19,546.58 հազ. դրամի դիմաց կատարողական ակտերը բացակայում էին, շինարարական աշխատանքները մնացել են անավարտ և չեն շարունակվում:
- Գազարավանի դպրոցի հիմնանորոգման նպատակով «ՎԷՌ-Լ» Ա/Կ –ին, պայմանագրով նախատեսված 19,975.0 հազ. դրամի փոխարեն, փաստացի վճարվել է ընդամենը 15,481.0 հազ. դրամ, քանի որ նախորդ կապալառուն՝ «Դիզակ» Ա/Կ –ն, պետական բյուջե չի վերադարձրել ստացած կանխավճարի մնացորդային 4,494.0 հազ. դրամը (փաստի առթիվ ՀՀ դատախազության կողմից կատարվում է քննություն):
- Արագածոտնի մարզպետարանը չի օգտագործել իր իրավասությունները, այն է՝ պայմանագրային պարտավորությունները խախտած կապալառուների նկատմամբ ժամանակին չի կիրառել համապատասխան սանկցիաներ և պատժամիջոցներ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը՝

- Տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով առաջնահերթ կարգով գումարներ նախատեսել փոխանցիկ օբյեկտների շինարարությունն ավարտելու կամ դրանք կոնսերվացնելու համար:
- Կապիտալ շինարարության և նորոգումների ծրագրերում առանձին տողով նախատեսել տեխնիկական և հեղինակային հսկողության գումարներ:
- ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝
- Կապիտալ շինարարությանը հատկացվող ֆինանսական միջոցների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակել և ներդնել տեխնիկական ու հեղինակային հսկողությանը հատկացվող գումարների հաշվարկման նոր նորմատիվային համակարգ:
- Շինարարական աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին վերապահել տեխնիկական հսկիչների նշանակումը՝ համաձայնեցնելով դրանց թեկնածությունը պատվիրատու գերատեսչության հետ:

ՀՀ քաղաքաշինության նախարարությանը և մարզպետարաններին՝

- Հետագայում բացառել ՀՀ օրենսդրական և իրավական ակտերի պահանջների խախտումները:

- Նախօրոք ապահովել կապիտալ շինարարության և նորոգումների ծրագրում ընդգրկված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությունը, և պետական բյուջեում շինարարության նպատակով գումար նախատեսելիս՝ հաշվի առնել նախագծի փորձաքննությամբ հաստատված նախահաշվային արժեքը:
- Շինարարության ժամանակ ի հայտ եկող պայմանագրային գնի փոփոխության հանգեցնող թերությունները բացառելու նպատակով նախագծային և նախագծերի փորձաքննությունն իրականացնող կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերում նախատեսել համապատասխան պատժամիջոցներ:
- Ապահովել կապիտալ շինարարության և հիմնանորոգումների ծրագրերում ընդգրկված օբյեկտներում նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալով իրականացումը:
- Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

Հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի
խորհրդի 14.07.2004թ. նիստում և ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն,
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ

Վերահսկողության հիմքը – ՀՀ Ազգային ժողովի 2003թ. դեկտեմբերի 3-ի Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004թ. գործունեության ծրագրի 7-րդ կետը, Վերահսկիչ պալատի նախագահի 01.04.2004թ. թիվ 73 հրամանը:

Վերահսկողության նպատակը – 2003թ.-ի ընթացքում պետական պատվերի և ծրագրերի կատարման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև՝ առանձին հողվածներով նախատեսված և փաստացի կատարման միջև համապատասխանությունը:

Վերահսկողության ժամանակահատվածը - 2003 թվական:

Վերահսկողության օբյեկտը - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կենտրոնական ապարատի պահպանության համար հատկացված միջոցների օգտագործումը

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ապարատի պահպանման համար 2003 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 123,079.4 հազ. դրամ: Տարեկան ճշտված նախահաշվով հատկացվել և ֆինանսավորվել է 154,897.6 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 158,837.9 հազ. դրամ: Նախահաշվով նախատեսված ընդհանուր գումարի նկատմամբ թույլ է տրվել գերաժախս 3,940.3 հազ. դրամի չափով: Մասնավորապես.

- «Էլեկտրաէներգիայի ծախսեր» հողվածով նախատեսվել է 3,706.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 3,706.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 5,837.2 հազ. դրամ, գերաժախսը՝ 2,131.2 հազ. դրամ: 2003թ. տարեսկզբին ունենալով 3,057.5 հազ. դրամ դեբիտորական պարտք, էլեկտրաէներգիայի գծով պետական բյուջեից հատկացված 3,706.0 հազ. դրամն ամբողջությամբ վճարվել է էլեկտրացանցին, մարելով գերաժախսը և տարելերջին առաջացնելով 926.3 հազ. դրամ նոր դեբիտորական պարտք: Տարվա ընթացքում վճարվել է 888.9 հազ. դրամ՝ «Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» ՊՓԲ ընկերությանը 2003թ. մայիսի 15-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կողմից վարձակալված 137.4 մ

տարածքով 6 աշխատասենյակում ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց, առանց տեղադրման ենթակա համապատասխան հաշվիչի ցուցմունքի:

Վճարվել է նաև այլ նախարարություններին և կազմակերպություններին՝ զբաղեցրած տարածքներում ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց 1,221.4 հազ. դրամ, որոնց համար նույնպես չկա հաշվիչի համապատասխան ցուցմունք:

- «Տրանսպորտային ծառայությունների վճար» հոդվածով նախատեսվել և ֆինանսավորվել է 5,312.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 6,069.9 հազ. դրամ, գերաժախսը՝ 757.9 հազ. դրամ, որն արդյունք է տարեսկզբին առկա նյութական ռեսուրսների օգտագործման:
- «Հեռախոսային կապի ծառայությունների վճար» հոդվածով քաղաքային հեռախոսների արճնենտային վճարի ծախս նախատեսվել և ֆինանսավորվել է 570.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,229.6 հազ. դրամ, գերաժախսը՝ 659.6 հազ. դրամ, որը փոխհատուցվել է տարեսկզբին առկա դեբիտորական պարտքից:

Միջքաղաքային խոսակցությունների վճարի ծախսերի համար նախատեսվել և ֆինանսավորվել է 4,772.7 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 4,153.1 հազ. դրամ: Ֆինանսավորման ամբողջ գումարը վճարվել է սպասարկող կազմակերպյանը՝ տարեվերջին առաջացնելով դեբիտորական պարտք՝ 619.6 հազ. դրամ:

- «Կապի այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր» հոդվածով նախատեսվել և ֆինանսավորվել է 609.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,247.4 հազ. դրամ, գերաժախսը՝ 638.4 հազ. դրամ:
- «Գույք, գրասենյակային ապրանքներ և նյութեր» հոդվածով նախատեսվել է 2,898.2 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 2,897.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,959.5 հազ. դրամ, գերաժախսը՝ 61.9 հազ. դրամ:
- «Այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր» հոդվածով նախատեսված գումարներից 1,500.0 հազ. դրամ արժեքով կահույքի ձեռքբերման համար լիազոր մարմնի թույլտվությամբ մեկ աղբյուրից գնումներ կատարելու ձևով «Երևան կահույք» ԲԸ ընկերության հետ կնքվել է պայմանագիր 25.07.03թ.-ին: Պահանջվող ապրանքները պետք է ձեռքբերվեին գնումներ կատարելու պահանջի ծագման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, սակայն ապրանքները ստացվել են՝ 15.09.03թ. 807.0 հազ. դրամ և 01.10.03թ.՝ 630.0 հազ. դրամ:

Այսպիսով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կենտրոնական ապարատի պահպանման համար 2003թ. հատկացված միջոցների օգտագործման արդյունքում առաջացել է նոր կրեդիտորական պարտք՝ 700.3 հազ. դրամ գումարով, այդ թվում՝ կապի հոդվածով՝ 638.4 հազ. դրամ, ապրանքներ և նյութեր հոդվածով՝ 61.9 հազ. դրամ:

2003թ. ընթացքում գյուղատնտեսության նախարարության համակարգի նախորդ տարիների պարտքի մարման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 18,236.6 հազ. դրամ, որից աշխատակազմին՝ 7,252.0 հազ. դրամ:

Բույսերի պաշտպանություն

ՀՀ 2003թ. պետական բյուջեով նախատեսվել է 252,271.0 հազ. դրամ, ճշտված բյուջեով՝ 267,914.0 հազ. դրամ, կնքված պայմանագրերի գումարը կազմել է 267,891.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 267,889.0 հազ. դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է:

«Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի միջոցով իրականացվող պետական պատվեր

ՀՀ 2003թ. պետական բյուջեի «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի միջոցով իրականացվող պետական պատվեր» ծրագրով նախատեսված ծախսերի հաշվին իրականացվող ծառայությունների համար հատկացվել է 42,714.0 հազ. դրամ, ընդ որում, պետք է իրականացվեր դաշտային հետազոտությունների, դիտարկումների, վերլուծությունների (մոնիթորինգ) հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների մատուցում 162.3 հազ. հա հողատարածության վրա՝ գումարով 35,814.0 հազ. դրամ և լաբորատոր փորձաքննությունների հիման վրա ախտորոշում՝ 1500 հատ՝ գումարով 6,900.0 հազ. դրամ:

Հաստիքային թվակազմը, դրույքաչափերը և տրանսպորտային միջոցներով ապահովվածությունը, մեր կարծիքով, չեն կարող երաշխավորել ՀՀ կառավարության 21.11.2001թ. թիվ 1916-Ն որոշմամբ հաստատված «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված բույսերի պաշտպանության բնագավառում պետական ծրագրի իրականացման գործառնությունների լիարժեք ապահովումը: Մասնավորապես Վայոց ձորի մարզում ՊՈԱԿ-ը, ունենալով մեկ աշխատող, 27.03.2003թ. «Բույսերի պաշտպանության ծառայությունների» թիվ ՀՀԳԾ-Ծ2Բ-02 գնման պայմանագրի կնքման օրվանից մինչև տարեվերջ մկնանման կրծողների վարակվածության և դաշտային հետազոտությունների վերլուծություն է իրականացրել 15570 հա հողատարածքի վրա, միաժամանակ վերահսկողություն է իրականացրել մարզի տարածքում այլ կազմակերպության կողմից իրականացվող մկների և մորեխների դեմ 900 հա հողատարածքի վրա կատարվող աշխատանքներին: Միջին հաշվով մեկ աշխատանքային օրվա ընթացքում մեկ աշխատողի կողմից, առանց հատկացված տրանսպորտային միջոցի, կատարվել է 63 հա հետազոտություն և վերլուծություն, ինչպես նաև 3.6 հա աշխատանքների վերահսկողություն: Նման պատկերը բնորոշ է մնացած բոլոր մարզերին:

Բույսերի պաշտպանության միջոցառումներ

ՀՀ 2003 թվականի ճշտված պետական բյուջեով բույսերի պաշտպանության միջոցառումների համար նախատեսվել է հատկացնել 195,200.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 195,175.0 հազ. դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

ՀՀ կառավարության 2001 թ. նոյեմբերի 28-ի թիվ 1166 որոշմամբ հաստատված բույսերի պաշտպանության միջոցառումների 2002-2004թթ. նպատակային ծրագրով 2003թ. համար նախատեսվել է հանրապետության մարզերում իրականացնել 52380 հա հողատարածության վրա պայքարի աշխատանքներ, որից կոլորադյան բզեզի դեմ՝ 6500 հա, պտղատու այգիներում առանձնապես վնասակար օրգանիզմների հիվանդությունների դեմ՝ 4380 հա, մկնանման կրծողների դեմ՝ 35000 հա: 2003թ. նպատակային ծրագրով նախատեսված միջոցառումներից մկնանման կրծողների դեմ 35000 հա հողատարածքի վրա պայքարի փոխարեն պետական բյուջեում ընդգրկված ծրագրով սահմանվել է 25500 հա, մորեխների և ծղրիղների դեմ՝ 6500 հա-ի փոխարեն՝ 6000 հա, իսկ պտղատու այգիներում առանձնապես վնասակար օրգանիզմների հիվանդությունների դեմ 4380 հա հողատարածության վրա աշխատանքներ չի կատարվել՝ ֆինանսավորման բացակայության պատճառով:

2003թ. հանրապետության մարզերում ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին 25500 հա հողատարածության վրա մկնանման կրծողների դեմ տրակտորային ցրիչներով առավել վարակված հողատարածքներում իրականացվելիք ծառայությունների դիմաց փաստացի կատարվել է 24230 հա՝ 1270 հեկտարով պակաս, կամ նախատեսվածի 95%-ը: Մորեխների և ծղրիղների դեմ տրակտորային սրակիչներով նախատեսված պայքարը 6000 հա հողատարածքի փոխարեն փաստացի կազմել է 5500 հա, նախատեսվածից 500 հեկտարով պակաս, կամ 91,6%:

Կատարողական ակտերի ուսումնասիրություններից պարզվել է, որ կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարման համար հիմք է հանդիսացել «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մարզային աշխատակցի համապատասխան մակագրությամբ վավերացումն ու տվյալ համայնքի ղեկավարի ստորագրությունը, կնիքը: Կատարողական ակտերում ընդհանրապես չի նշվում փաստացի մատուցված ծառայության վայրը (հողատեսքը, դրա անվանումը, տեղաբաշխվածությունը համայնքում և պատկանելիությունը):

Բույսերի պաշտպանության 2002-2004թթ. նախատեսված պետական ծրագիրն ընդգրկել է հանրապետության առավել վարակված տարածքները: Մնացած տարածքների վրա պայքար պետք է իրականացվեր հողի սեփականատերերի և հողօգտագործողների կողմից՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: 2003թ. երկրորդ կիսամյակում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ընտրվել է բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման նոր մոտեցում՝ պետական բյուջեից նպատակային ծրագրի կատարման համար հատկացված միջոցների հաշվին ձեռք է բերվել 3571 կգ էթիլֆենացին, որը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 15.10.2003թ. թիվ 177 հրամանի համաձայն մարզպետարանների միջոցով տրամադրվել է հողի սեփականատերերին ու հողօգտագործողներին, վերջիններիս կողմից պայքարի աշխատանքները կատարելու նպատակով: Տրամադրված թունանյութի հաշվին նախատեսվել է պայքար կազմակերպել կրծողների դեմ շուրջ 23800 հա հողատարածքի վրա: Այդ աշխատանքները արդյունավետ կազմակերպելու և ակնկալվող արդյունքներ ստանալու համար, ՀՀ գյուղատնտեսության

նախարարությունը, որպես լիազոր մարմին և ծրագիրն իրականացնող, պետք է կատարելազորժեր գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին ծրագրով նախատեսված մասնագիտական խորհրդատվության մատուցումը՝ գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների տարածման կանխարգելման, պայքարի եղանակների և ժամկետների վերաբերյալ:

Ընդհանուր հաշվով, մկնանման կրծողների դեմ 2003 թվականին պայքար է իրականացվել հանրապետության 10 մարզերի 166 համայնքներում (շուրջ 17.5%) 48030 հա տարածության վրա, ծրագրով նախատեսված 35000 հեկտարի դիմաց, որը 1.4 անգամ ավելի է նախատեսվածից և կազմում է հանրապետության ընդհանուր հողատարածքի 3.5% -ը:

Ըստ «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված մոնիթորինգային տվյալների, որոնք ընդգրկել են 160.0 հազ. հա կամ հանրապետության ընդհանուր հողատեսքերի շուրջ 11.5%-ը, 2003թ.-ին հետազոտված 66.1 հազ. հեկտար հողատարածքից մկնանման կրծողներով զարնանը վարակված է եղել 52.1 հազ. հեկտար կամ 78.8%-ը, գործող մկնաբների թիվը մեկ հեկտարի վրա եղել է 159, աշնանը 68.9 հազ. հա-ից վարակված է եղել 56.9 հազ. հա-ն կամ 82.6%-ը, և մեկ հա-ի վրա եղել է 431 գործող մկնաբուն, որը շուրջ 3 անգամ ավելի է տարեսկզբի նկատմամբ և գրեթե 8 անգամ գերազանցում է սահմանային վարակվածության շեմը: Պետք է նշել, որ կոնկրետ չափորոշիչների բացակայության պատճառով դժվար է ամբողջությամբ և հստակ գնահատել կատարված միջոցառումների արդյունավետությունը:

ՀՀ կառավարության 21.08.03թ. թիվ 1027-Ա որոշման համաձայն Արագածոտնի մարզի Ափնայի, Շենավանի գյուղհամայնքների 1000 հա տարածքում իտալական մորեխի դեմ ակտիվ պայքար ծավալելու նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 4,600.0 հազ. դրամ: Հատկացված գումարներից պայմանագրի համաձայն 1,600.0 հազ. դրամ վճարվել է «Հայկական Ավիաուղիներ» ՓԲԸ-ին, իսկ 3,000.0 հազ. դրամ՝ Կոտայքի «Բերրիություն» ԲԲԸ-ին՝ 300 կգ «Շերպա» թունանյութ ձեռքբերելու համար:

Ավիացիայի միջոցով իտալական մորեխի դեմ պայքարի աշխատանքներն, ըստ կազմված կատարողականների, իրականացվել են նախատեսված 1000 հա հողատարածքի փոխարեն 2000 հա հողատարածության վրա, որի համար որպես լրացուցիչ ֆինանսական միջոցներ օգտագործվել են «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի պահպանման համար նախատեսված գումարներից 1,600 հազ. դրամ և բույսերի պաշտպանության միջոցների համար նախատեսված գումարից՝ 2,699.3 հազ. դրամ:

**«Բույսերի կարանտինի ծառայություն» ՊՈԱԿ-ի միջոցով
իրականացվող պետական պատվեր**

2003թ. բույսերի կարանտինի ծառայությունների գնման թիվ ՀՀԳՆ – Ծ2Բ - 03 պայմանագրով 27.03.2003թ. «Բույսերի կարանտինի ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ կնքվել է

պայմանագիր՝ բյուջեով նախատեսված 30,000.0 հազ. դրամ միջոցների հաշվին հանրապետություն ներմուծվող, հանրապետությունից արտահանվող բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների բուսասանիտարական փորձաքննություն- ծառայությունների կատարման համար:

Բյուջեից հատկացված միջոցների հաշվին 12.0 հազ. հա-ի վրա դաշտային հետազոտությունների միջոցով պետք է իրականացվեր հանրապետությունում գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում և նոր օջախների հայտնաբերում, 8000 հատ փորձանմուշների լաբորատոր փորձաքննություն և 80 պահեստային տարածքների հետազոտություններ: Պայմանագրով նախատեսված ծառայությունները կատարվել են ամբողջությամբ:

«ՀՀ 2003թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 184-Ն որոշման համաձայն «Բույսերի կարանտինի պետական տեսչության» ծառայությունների դիմաց նախատեսվել է պետական տուրքի գանձում 44,400.0 հազ. դրամ: Փաստացի գանձումը կազմել է 45,687.0 հազ. դրամ կամ նախատեսվածի 102.9% -ը:

Անասնաբուժություն և հսկահամաճարակային միջոցառումներ

ՀՀ 2003թ. պետական բյուջեով անասնաբուժության և հսկահամաճարակային միջոցառումների նպատակով հատկացվել է 1,018,546.0 հազ. դրամ, ճշտված բյուջեով այն կազմել է 971,582.8 հազ. դրամ, վիստացի ծախսը կազմել է 967,292.4 հազ. դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է:

«Հանրապետական հսկահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» Պետական ոչ առևտրային կազմակերպություն

Անասնաբուժական սահմանային հսկիչ կետերի և հանրապետական անասնաբուժական լաբորատորիայի պահպանման համար 2003թ. պետական բյուջեով նախատեսվել է հատկացնել 32,280.0 հազ. դրամ: Հիմնարկությունը 27.03.2003թ. վերակազմավորվել է պետական ոչ առևտրային կազմակերպության և բյուջեում կատարվել է ճշտում: Ծրագրի իրականացման համար նախատեսված ծախսերը պակասեցվել են և հաստատվել է 5,316.8 հազ. դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է:

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 495 որոշման համաձայն, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հսկահամաճարակային, ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 56,763.2 հազ. դրամ, որից «Հանրապետական հսկահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ին սուբսիդավորման՝ 41,763.2 հազ. դրամ և լաբորատոր սարքի ձեռքբերման համար՝ 15,000.0 հազ. դրամ: Փաստացի կատարված ծախսերը կազմել են 56,663.2

հազ. դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է: 18.12.2003թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն «Բիո ֆայն» ՍՊԸ –ից ձեռք է բերվել շինակաբանական հետազոտություն իրականացնող սարք՝ 14,900.0 հազ. դրամ արժեքով:

«Հանրապետական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2003թ.–ի ընթացքում կատարվել է միայն լաբորատոր հետազոտություններ այլ կազմակերպությունների և անհատների պատվերով: Պետական բյուջեից հատկացված սուբսիդիան ստացվել է կենդանիների վարակվածության ֆոնը գնահատելու՝ ծառայությունների փաստաթղթերով չհիմնավորված տվյալների հիման վրա կազմված կատարողականներով: Ստացված սուբսիդիան ՊՈԱԿ –ի կողմից ուղղվել է կազմակերպության հաստիքացուցակում ընդգրկված տարբեր մասնագետների աշխատավարձի վճարմանը՝ 20,433.6 հազ. դրամ, այլ ծախսերի փոխհատուցմանը՝ 7,756.1 հազ. դրամ, ինչպես նաև ՊՈԱԿ –ին օգտագործման իրավունքով հատկացված թիվ 1 մասնաշենքի վերանորոգմանը՝ 19,700.0 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 30.10.2003թ. թիվ 1357-Ա որոշման, ՊՈԱԿ-ի շենքի վերանորոգման համար հատկացվել է ևս 15,000.0 հազ. դրամ: Նկատի ունենալով աշխատանքների հրատապությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը գնումն իրականացրել է մեկ աղբյուրից, որի արդյունքում 03.12.2003թ. կնքվել է թիվ ՀՀ ԳՆ ԱՇՁԲ-04 պայմանագիրը գյուղատնտեսության նախարարության և «Ազատ և Մանիկ» ՍՊԸ –ի միջև՝ «ՊՈԱԿ –ի շենքի տանիքի վերանորոգման, 2 սենյակի և 2 սանհանգույցի հիմնական վերանորոգման» վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. նոյեմբերի 21 –ի թիվ 1925-Ն որոշման համաձայն, կազմակերպությանը վերակազմավորման արդյունքում անհատույց օգտագործման իրավունքով ամրացվել են շենքեր և շինություններ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հանրապետական անասնաբուժական լաբորատորիա» պետական հիմնարկը Երևան քաղաքի Էրեբունի 12 հասցեում գտնվող N2 երկհարկանի մասնաշենքը՝ 1200մ² ընդհանուր մակերեսով, այդ թվում նկուղը՝ 400մ², շենքին հարող տարածքը՝ 350մ², պարիսպը՝ 30մ երկարությամբ և 1.5մ բարձրությամբ, 26.11.1997թ. ուղղակի կազմված պայմանագրով՝ սահմանված 50.0 հազ. դրամ եռամսյակային վարձավճարով տասը տարի ժամանակահատվածով վարձակալության է հանձնել «Արաքս-95» լիակատար տնտեսական ընկերակցությանը: Գույքի և տարածքի վարձակալման կարգը հաստատվելուց հետո «Հանրապետական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ –ի կողմից ոչ մի միջոց չի ձեռնարկվել նշված որոշման 3-րդ կետով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարձակալական պայմանագրով նախատեսված վարձավճարները վերահաշվարկելու:

«Հանրապետական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ –ին հանձնված Քանաքեռի Ծարավաղբյուրի փողոցի թիվ 100 հասցեում գտնվող 3–րդ մասնաշենքը՝ ըստ ՊՈԱԿ–ի կողմից տրված տեղեկանքի, վարձակալության է հանձնվել դեռևս 1997թ.–ին «Մանես» ՍՊԸ–ին, սակայն մինչ օրս վարձակալված շենքի դիմաց վարձավճարներ չի վճարվել,

ավելին, ՊՈԱԿ –ի տնօրինության հավաստմամբ, 3-րդ մասնաշենքը վարձակալի կողմից քանդվել է և տեղում կառուցվել առանձնատուն:

**Պատվաստումների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար
անհրաժեշտ պարագաների ձեռքբերում**

ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 21-ի թիվ 1150 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում կենդանիների կարանտինային և հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վերացման միջոցառումների 2002-2004թթ. նպատակային ծրագրով 2003թ. համար նախատեսվել է հանրապետությունում իրականացնել 15,800.9 հազ. անասնազվաքանակի վարակիչ հիվանդությունների ախտորոշման և կանխարգելման միջոցառումներ: Ըստ կենդանատեսակների, հակահամաճարակային միջոցառումներ ծրագրով հաստատված կենդանիների կարանտինային և հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և ախտորոշման համար, նախատեսված է խոշոր եղջերավոր անասունների համար՝ 10, մանր եղջերավոր անասունների՝ 6, խոզերի՝ 4, ձիերի՝ 2, թռչունների համար՝ մեկ տեսակի պայքարի միջոցառումներ: Միջոցառումների իրականացման անհրաժեշտ ծախսերի համար ՀՀ պետական բյուջեով հատկացված գումարների սահմաններում, հանրապետությունում առաջացած կենդանիների վարակիչ հիվանդությունների հակահամաճարակային վիճակից ելնելով, անասնաբուժական տեսչությանն իրավունք է վերապահվել ծրագրի 4-րդ հավելվածում նշված ցանկում կատարել լրացումներ և փոփոխություններ: 2003թ. տեսչության կողմից նախատեսվել է ընդգրկել 7 անուն հիվանդություններ՝ 11,353,847 պայմանական գլուխ անասունների հակահամաճարակային միջոցառումներ: Փաստացի կատարվել է 11,152,809 պայմանական գլուխ, կամ նախատեսվածի 98.2 տոկոսը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների և միջոցառումներում ընդգրկված փաստացի անասնազվաքանակի միջև առկա են լուրջ անհամապատասխանություններ:

Հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, կնքված պայմանագրերի հիման վրա ձեռք է բերվել կենսապատվաստուկներ և ախտորոշիչ միջոցներ՝ «Բիոպրեպարատ» Հայ-Ռուսական ՀՉ ՍՊԸ-ից, գումարով 530.386.6 հազ. դրամ, «Հայ Ռուս Ագրո Կենս Արդ» ՀՉ ՍՊԸ-ից՝ գումարով՝ 146.806.6 հազ. դրամ: 2003թ. միջազգային էպիզոտիկ բյուրոյի կողմից օգնության կարգով Ռ-Գ-ից ստացվել է 297.650 դրոգա դաքադի եռավալենտ վակցինա, որը մուտքագրվել և բախշվել է ամբողջությամբ:

Համաձայն ՀՀ կենդանիների կարանտինային և հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վերացման միջոցառումների 2002-2004թթ. նպատակային ծրագրի, 2003թ. իրականացված միջոցառումների արդյունքում նախատեսվել է հանրապետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն

հակահամաճարակային վիճակի ստեղծում, անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովման և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանություն: Չնայած տուբերկուլյոզ և բրուցելյոզ հիվանդությունների կատարված ախտորոշիչ միջոցառումներին, կանոնակարգված չէ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված վարակակիր կենդանիների հարկադիր սպանդի և վարակված մսամթերքի վերամշակման գործընթացը:

Նկատի ունենալով անասնաբուժական-հակահամաճարակային միջոցառումների կարևորությունը, նախարարությունը 2003 թվականին Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ ներդրել է անասնաբուժա-հակահամաճարակային միջոցառումների համակարգչային ծրագիրը, որը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ կերպով հաշվառման ենթարկել կենսապատվաստուկների շարժը, ինչպես նաև արդյունավետ վերահսկողություն իրականացնել միջոցառումների կատարման ընթացքի նկատմամբ:

Պետական անասնաբուժական հսկողության հետ կապված ծառայությունների համար, «Անասնաբուժական պետական տեսչության» և անասնաբուժական ՊՓԲԸ-ների կողմից ՀՀ կառավարության 2003թ. փետրվարի 6-ի՝ «ՀՀ 2003թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 184-Ն որոշմամբ հաստատված 21.100.0 հազ. դրամ պետական տուրքի դիմաց փաստացի գանձվել է և վճարվել պետական բյուջե 21.608.0 հազ. դրամ, կամ նախատեսվածի 102.4 %-ը:

Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և նորոգում

2003թ. ՀՀ պետական բյուջեով «Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և պահպանում» ծրագրի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 350.0 մլն դրամ, որը պետք է ուղղվեր հետևյալ աշխատանքների գնմանը.

- 279,600.0 հազ. դրամ՝ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և վերանորոգում,
- 9,400.0 հազ. դրամ՝ նախագծային աշխատանքներ և փորձաքննություն,
- 2,500.0 հազ. դրամ՝ տեխնիկական հսկողություն,
- 58,500.0 հազ. դրամ՝ կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման ծախսեր:

2003թ. նախատեսվել էր մաքրել և վերանորոգել հանրապետությունում գոյություն ունեցող 1,104.8 կմ երկարությամբ բաց ցանցից 366.5 կմ կամ 33.2% -ը:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից կատարվել են բյուջետային հատկացումների փոփոխություններ, ըստ որի ծրագրից կրճատվել է 25,000.0 հազ. դրամ: Փաստացի կնքվել է 324,170.8 հազ. դրամի պայմանագրեր, որի դիմաց կատարված աշխատանքների կատարողականը և ֆինանսավորումը կազմել է 322,936.4 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 483-Ա որոշման, «Արմավիրի մարզի Փշատավան գյուղի տարածքում անհետաձգելի հակահեղեղային միջոցառումներ

իրականացնելու համար» պահուստային ֆոնդից տրամադրվել է ևս 2,000.0 հազ. դրամ, որը ֆինանսավորվել և իրացվել է ամբողջությամբ:

Հակահեղեղային միջոցառումներ - ՀՀ կառավարության 03.04.2003թ. թիվ 338-Ա որոշման համաձայն հանձնարարվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը «2003թ. գետերի զարմանային վարարումներից առափնյա հողատեսքերը ջրածածկումից, ջրակալումից, ողողումներից զերծ պահելու համար միջոցառումներն իրականացնել 2003թ. պետական բյուջեով նախատեսված «Հողերի բարելավման աշխատանքներ» ծրագրի իրականացման ծախսերի հաշվին՝ 56,000.0 հազ. դրամ ընդհանուր գումարով»: Աշխատանքների հրատապությամբ պայմանավորված, աշխատանքների ձեռքբերումը կատարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մեկ աղբյուրից գնումներ կատարելու ձևով: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 14.04.2003թ. թիվ 77-Ա հրամանով հաստատվել է պայմանագրեր կնքելու համար հրավիրվող կազմակերպությունների ցանկը, գնման և վճարման ժամանակացույցը: Թվով 8 կազմակերպությունների հետ կնքվել է «Հակահեղեղային միջոցառումների իրականացման» աշխատանքների ձեռքբերման պայմանագրեր՝ 54,709.128 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Հանրապետության 5 մարզերում կատարված հակահեղեղային միջոցառումներին ուղղված աշխատանքների փաստացի կատարողականը կազմել է 53,814.1 հազ. դրամ:

Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում - Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում ենթածրագրով 2003թ. թվով 13 օբյեկտների մաքրման և նորոգման աշխատանքների համար Պետական գնումների գործակալության իրականացրած մրցույթի արդյունքում հաղթած 9 կազմակերպությունների հետ կնքվել է աշխատանքների գնման պայմանագրեր՝ 187,475.649 հազ. դրամ գումարով: Փաստացի կատարողականը կազմել է 187,046.301 հազ. դրամ: Հանրապետության 3 մարզերի 40 բնակավայրերում կատարվել են 246.8 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցերի և 51 կառուցվածքների՝ 575.3 հազ մ³ ծավալի մաքրման, 178.7 հազ մ³ հարթեցման աշխատանքներ:

Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրումն էականորեն ազդում է շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի և մալարիայի տարածման վրա: 2003թ. արձանագրվել է մալարիայի դեպքերի նվազում: Նախորդ տարվա 52 –ի փոխարեն այն կազմել է 29 դեպք կամ 55.8%:

Կոլեկտորադրենաժային ցանցերի շահագործում - Կոլեկտորադրենաժային ցանցերի շահագործման, պահպանման և հսկողության համար մեկ աղբյուրից գնումներ կատարելու ձևով 24.03.2003թ. կնքվել է թիվ ՀՀԳՆ-ԱՇՁԲ-01 պայմանագիր «Մելիորացիա» ՊՓԲԸ և գյուղատնտեսության նախարարության միջև 66,015.235 հազ. դրամ գումարով, որից 63,515.235 հազ. դրամը նախատեսվել է համակարգի պահպանման և շահագործման, իսկ 2,500.0 հազ. դրամը՝ ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության համար: Փաստացի կատարողականը կազմել է համապատասխանաբար՝ 63,498.455 հազ. դրամ և 2,153.25 հազ. դրամ: Կազմակերպության կողմից իրականացվել է գործող 1,104.8 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի շահագործում, մաքրվել և վերանորոգվել է 46.6 կմ երկարությամբ դրենաժներ՝ 128.1 հազ. մ³ ծավալով, վերացվել են փոքր և միջին վթարները:

«Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում» ծրագրով նախատեսված և փաստացի իրացված գումարներն ըստ աշխատանքների տեսակների բերված են Աղյուսակ 1 -ում:

Աղյուսակ 1
հազ. դրամ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Ճշտված ծրագիր	Փաստացի կատարողական	Տարբերություն
1	Շահագործում	63,515.24	63,498.46	16.78
2	Տեխնիկական հսկողություն	2,500.00	2,153.25	346.75
3	Նախագծում	18,800.00	17,975.00	825.00
4	Հակահեղեղային միջոցառումներ	52,709.13	51,814.11	895.02
5	Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և նորոգում	187,475.65	187,046.30	429.35
6	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	2,000.00	2,000.00	0.00

Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում

«Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում» ծրագրով «Մելիորացիա» ՊՓԲԸ –ի միջոցով պետական պատվեր է նախատեսվել 18,000.0 հազ. դրամ գումարով: 04.04.2003թ. կնքվել է թիվ ԱՇՁԲ-02 պայմանագիրը «Մելիորացիա» ՊՓԲԸ–ի և գյուղատնտեսության նախարարության միջև, համաձայն որի պետք է իրականացվեր Արարատյան հարթավայրի շուրջ 400 դիտման հորատանցքերի գրունտային ջրերի մակարդակի ստացիոնար 10–օրյա միաժամանակյա դիտումներ և դրանց կամերալ մշակումներ, հորատանցքերից վերցրած ջրերի 645 քիմիական անալիզ, 480 գծմ ֆիլտրերի տեղադրման աշխատանքներ և այլն:

Ծրագրով նախատեսված գրունտային ջրերի մակարդակի և որակի հսկումը, դրա քիմիական անալիզի աշխատանքները՝ 2,128.0 հազ. դրամ ընդհանուր գումարով չեն իրականացվել Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Աշխատանքային այդ ծավալներն իրականացվել են Արարատի և Արմավիրի մարզերում:

Ըստ ծրագրային բաղադրիչների փաստացի կատարված աշխատանքները բերված են Աղյուսակ 2 -ում:

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Նախատեսված		Փաստացի		Շեղում
		Քանակ	Գումար	Քանակ	Գումար	
1	2	3	4	5	6	7=6-4
1	Գրունտային ջրերի մակարդակների որոշում	4800 հատ	7,128.0	4192 հատ	6,225.12	-902.88
2	Գրունտային ջրերի մակարդակների կամերալ մշակում	-	1,995.8	-	1,817.109	-178.691
3	ՀՀ տարածքում գրունտային և ոռոգման ջրերի քիմիական անալիզ	945 հատ	1,898.000	830 հատ	1,666.226	-231.774
4	Լաբորատոր աշխատանքների կամերալ մշակում	-	413.5	-	338.468	-75.032
5	Գիտման հորատանցքերի շնիկով հորատում 3 -րդ կարգ	200 գծմ	171.6	444.2 գծմ	408.847	237.247
	Նույնը 4 -րդ կարգ	280 գծմ	263.2	-	-	-
6	Գիտման հորատանցքերի ամրակապում, ֆիլտրի տեղադրում	48 գծմ	1,026.7	39 գծմ	568.425	-458.275
7	Ֆիլտրի պատրաստում	72 գծմ	285.1	259.7 գծմ	503.24	218.14
8	Հորատանցքի փականի պատրաստում	48 հատ	37.0	97 հատ	97.0	60.0
9	Ներքին տրանսպորտային ծախսեր	-	1,030.7	-	1,008.015	-22.685
10	Արտաքին տրանսպորտային ծախսեր	-	173.1	-	169.346	-3.754
11	Այլ ծախսեր	-	577.2	-	2,197.312	1,620.112
12	ԱԱՀ	-	3,000.0	-	2,999.8	0.2
	ԸՆԴԱՄԵՆԸ	-	18,000.0	-	17,999.0	1.0

Բնապահպանական, բնօգտագործման վճարներ, պետական տուրք և ոչ հարկային եկամուտներ

ՀՀ կառավարության 2003թ. փետրվարի 6-ի «ՀՀ 2003թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 184-Ն որոշման հավելվածով նախարարության համակարգի համար սահմանված բնապահպանական և բնօգտագործման վճարների, պետական տուրքերի, ոչ հարկային եկամուտների գծով զանձումները բնութագրվում են Աղյուսակ 3 -ում բերված ցուցանիշներով:

Աղյուսակ 3

հազ.դրամ

Հ/Հ	Եկամտատեսակը	2003թ.		Շեղումը	%
		Պլան	Փաստացի		
1	Բնօգտագործման և բնապահպանական վճարներ -ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող և ՀՀ -ում գրանցված մեխանիզմներից վնասակար նյութերի արտանետումից	10,842.0	10,153.7	-688.3	93.65%
2	Ոչ հարկային եկամուտներ պետական տուրքերի գծով, այդ թվում.	77,497.0	76,983.0	-514.0	99.34%
	- տեխնիկայի պետական տեսչության ծառայությունների դիմաց	11,997.0	9,688.0	-2,309.0	80.75%
	- բույսերի կարանտինի պետական տեսչության ծառայությունների դիմաց	44,400.0	45,687.0	1,287.0	102.90%
	- պետական անասնաբուժական հսկողության հետ կապված ծառայությունների դիմաց	21,100.0	21,608.0	508.0	102.41%
3	Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար - գյուղատնտեսության բնագավառ (բարդ ընթացակարգ)	120.0	35.0	-85.0	29.17%
4	Կապիտալի գործունեությունից եկամուտ (շահաբաժին)	5,400.0	5,860.0	460.0	108.52%
	ԸՆԴԱՄԵՆԸ	93,859.0	93,031.7	-827.3	99.12%

2003թ. պետական տուրքերի գծով նախատեսված 77497.0 հազ. դրամ գումարի դիմաց փաստացի գանձվել է 76983.0 հազ. դրամ կամ նախատեսվածի 99.3% -ը: Թերակատարվել է գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության ծառայությունների դիմաց նախատեսված առաջադրանքը 2309.0 հազ. դրամ: Տեսչության կողմից տարեկան տեխնիկական զննության է ենթարկվել հանրապետությունում հաշվառված 15466 միավոր ինքնագնաց գյուղատնտեսական տեխնիկայից միայն 3980 միավորը, կամ 25.7% -ը:

Կապիտալի գործունեությունից եկամուտ (շահաբաժին) է նախատեսվել 5400.0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 5860.0 հազ. դրամ կամ 108.5%:

Նախարարության 50% -ից ավելի պետական բաժնեմաս ունեցող 121 առևտրային կազմակերպություններից 2003թ. ընթացքում շահաբաժին վճարող են հանդիսացել երկու կազմակերպություն, վնասով աշխատող կազմակերպությունների թիվը կազմել է 49 կամ 40.5%: Ընտրանքային կարգով ուսումնասիրված համակարգի 6 ընկերություններում պարզվել է, որ հաշվապահական հաշվառումը սահմանված կարգի խախտումով վարելու, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի պահանջները չկատարելու, հաշվապահական հաշվեկշիռներում տարեկան եկամուտները թաքցնելու, տարեկան շահույթը պակաս հաշվարկելու հետևանքով շահաբաժին չի հաշվարկվել: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 05.12.2001թ. թիվ 1194 որոշման երկրորդ կետի ա) ենթակետի պահանջների համաձայն, պետական բյուջե պակաս շահաբաժին է վճարվել 4,060.1 հազ. դրամ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կողմից խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և կառավարության թիվ 184-Ն որոշման 3.5 կետի պահանջները՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանման համար փաստացի ծախսերի գծով նախահաշվի առանձին հոդվածների ուղղությամբ թույլ է տրվել գերաձախ:
- Խախտվել են ՀՀ կառավարության թիվ 184-Ն որոշման 3.2 կետի պահանջները՝ պետական բյուջե չեն փոխանցվել բյուջետային տարում չօգտագործված միջոցները, այլ դրանք ուղղվել են սպասարկող կազմակերպություններ՝ առաջացնելով դեբիտորական պարտքեր:
- Կանոնակարգված չէ դաշտային հետազոտությունների, դիտարկումների, վերլուծությունների (մոնիթորինգ) արդյունքների գնահատման գործընթացը:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից տարեկան տեխնիկական զննության է ենթարկվել հանրապետությունում հաշվառված գյուղատնտեսական տեխնիկայի 25.7% -ը, որի հետևանքով չի գանձվել համապատասխան պետական տուրք:
- Պատշաճ կերպով չի իրականացվել ներքին հսկողություն՝ համակարգում գործող 50% և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների շահույթների և շահաբաժինների հաշվառման նկատմամբ: Ստացված եկամուտներն ամբողջությամբ չեն արտացոլվել ընկերությունների հաշվապահական հաշվեկշիռներում:
- Կանոնակարգված չէ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքի 108, 109 և 110-րդ հոդվածներով սահմանված տուգանքների չափերի կիրառման գործընթացը:
- ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, որպես լիազոր մարմին, վերահսկողություն չի իրականացրել կազմակերպություններին ամրացված պետական գույքի վարձակալության

ուղղությամբ, որի արդյունքում կազմակերպությունները, շրջանցելով ՀՀ կառավարության 09.11.2001թ. թիվ 731 որոշման պահանջները, ինքնուրույն վարձակալության են հանձնել շենքերը և տարածքները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել միջոցառումներ՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներից բխող արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության պահպանման համար նախատեսված գումարները կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:
- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, պետական ծրագրի իրականացման գործառնությունները լիարժեք կատարելու համար վերանայել ՊՈԱԿ-ների հաստիքային թվակազմը, դրույքաչափերը և տրանսպորտային միջոցներով նրանց ապահովվածությունը:
- Կանոնակարգել բույսերի պաշտպանության միջոցառումների մոնիթորինգի աշխատանքների անցկացման և գնահատման գործընթացը, ինչպես նաև հստակեցնել բույսերի պաշտպանության միջոցառումների համար կազմված կատարողական ակտերը (նշելով հողատեսքի տեղաբաշխվածությունը համայնքում և նրա պատկանելիությունը):
- Վերանայել ՀՀ կառավարության 09.11.2001թ. թիվ 731 և 22.02.2001թ. թիվ 125 որոշման պահանջների շրջանցմամբ կնքված վարձակալական պայմանագրերը:
- Բարելավել ներքին հսկողությունը՝ համակարգում գործող պետական մասնակցությամբ ընկերությունների շահույթի և շահաբաժինների հաշվառման ուղղությամբ:
- Կանոնակարգել «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված վարակակիր կենդանիների հարկադիր սպանդի և վարակված մսամթերքի վերամշակման գործընթացը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ

Ուսումնասիրության հիմքը – ՀՀ Ազգային ժողովի 2003թ. դեկտեմբերի 3-ի Ն-062.3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 13-րդ կետը, Վերահսկիչ պալատի նախագահի թիվ 56 հրամանը:

Ուսումնասիրության նպատակը – ՀՀ Ազգային ժողովին հատկացված միջոցների օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և կառավարության որոշումներին:

Ուսումնասիրության օբյեկտը - ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ:

Ուսումնասիրության ժամանակահատվածը - 2002-2003թթ.

Համաձայն «2002թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, Ազգային ժողովի պահպանման համար տարեկան նախահաշվով նախատեսվել էր 1,323,429.4 հազ. դրամ, որը ֆինանսավորվել էր ամբողջությամբ: Փաստացի ծախսը, համաձայն կատարված ուսումնասիրության, կազմել է 1,349,484.0 հազ. դրամ կամ նախատեսվածի 101.9%: Գերաձախսը նախահաշվով նախատեսված ընդհանուր գումարի նկատմամբ կազմել է 26,384.0 հազ. դրամ:

Ծախսային հոդվածների ուսումնասիրության արդյունքում որոշ հոդվածների ուղղությամբ արձանագրվել է գերաձախս: Խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 25.02.2002թ. թիվ 172 որոշման 18.5 կետի պահանջները: Այսպես.

- «Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ» հոդվածով, նախատեսվել և ֆինանսավորվել է 514,043.4 հազ. դրամ: Սակայն ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ փաստացի աշխատավարձի ծախսը կազմել է 513,433.1 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 509,865.4 հազ. դրամ: Տարեվերջի փաստացի մնացորդն այդ հոդվածով կազմել է 4,178.0 հազ. դրամ, որն ուղղվել է մյուս հոդվածներով կատարված գերաձախսի մարմանը, առաջացնելով նոր կրեդիտորական պարտքեր եկամտահարկի գծով՝ 2,635.8 հազ. դրամ և սոցիալական հատկացումների 3%-ի գծով՝ 260.0 հազ. դրամ: Աշխատավարձի հոդվածով կատարվել են կապիտալ նորոգումների ծախս՝ 1,909.9 հազ. դրամ, տնտեսական ծախս՝ 356.0 հազ. դրամ, տրանսպորտային ծախս՝ 174.0 հազ. դրամ:
- «Գրասենյակային ապրանքներ և նյութեր» հոդվածով, նախատեսվել և ֆինանսավորվել է 80,633.3 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 70,253.1 հազ. դրամ կամ 87.1%: Գրամարկղի շարժի հաշվետվության համաձայն, դրամարկղային ծախսերը այս հոդվածով տարեվերջին առաջացրել են 1,583.7 հազ. դրամի գերաձախս: Եթե հաշվի

առնենք, որ գործուղման գումարներից 590.0 հազ. դրամը ևս ծախսվել է այս նպատակով, ապա գերաձախսը կկազմի 2,173.7 հազ. դրամ: Բացի այդ, տարվա ընթացքում վերոհիշյալ հոդվածով կատարվել է 10,365.5 հազ. դրամի ներկայացուցչական, 1,594.1 հազ. դրամ գույքի, սարքավորումների ձեռքբերման, 129.9 հազ. դրամի տրանսպորտային ծախս:

- «Գործուղում և ծառայողական ուղևորություններ» հոդվածով, նախատեսվել և ֆինանսավորվել է 175,289.1 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 175,560.6 հազ. դրամ կամ 100.2%, գերաձախսը՝ 271.4 հազ. դրամ:
- «Սեփական տրանսպորտի ֆինանսավորման ծախսեր» հոդվածով նախատեսվել և ֆինանսավորվել է 105,204.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 107,245.6 հազ. դրամ կամ 101.9%, գերաձախսը՝ 2,041.6 հազ. դրամ:
- «Կապի ծառայությունների վճար» հոդվածով նախատեսվել և ֆինանսավորվել է 60,700.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 83,641.0 հազ. դրամ կամ 137.8%, գերաձախսը՝ 22,941.0 հազ. դրամ: Այս հոդվածով տարեսկզբին կուտակված 56,886.9 հազ. դրամ կրեդիտորական պարտքերը ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ «նախորդ տարիների պարտքեր» հոդվածով, մարվել են ամբողջությամբ: Սակայն վերոհիշյալ գերաձախսը տարեվերջին առաջացրել է նոր կրեդիտորական պարտք՝ 21,721.4 հազ. դրամի չափով:
- «Կոմունալ ծառայության վճար» հոդվածով նախատեսվել և ֆինանսավորվել է 62,178.5 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 53,838.1 հազ. դրամ կամ 86.6%: Այս հոդվածով նախատեսված գումարներից ծախսվել են նաև այլ նպատակների համար: Այսպես, «Ջրնուղ-կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսեր» ենթահոդվածով նախատեսվել է 3,838.5 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,918.9 հազ. դրամ: Բանկից ելքագրված 2,838.5 հազ. դրամ գումարը դրամարկղ է մուտքագրվել այլ հոդվածով: Էլեկտրաէներգիայի ծախսեր հոդվածով տարեսկզբին առկա 12,260.4 հազ. դրամ կրեդիտորական պարտքը մարվել է ՀՀ կառավարության կողմից՝ հաշվանցման միջոցով:
- «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նստաշրջանի ծախսեր» հոդվածով, նախատեսվել և ֆինանսավորվել է 36,300.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 19,471.0 հազ. դրամ: Այս հոդվածով նախատեսված գումարներից կատարվել են նաև 11,236.7 հազ. դրամի ներկայացուցչական, 898.9 հազ. դրամի՝ գործուղման, 197.0 հազ. դրամի՝ տնտեսական ծախսեր:
- «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով դրամարկղային շարժի տարեվերջի գերաձախսը կազմել է 668.9 հազ. դրամ:
- «Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր» հոդվածով նախատեսվել, ֆինանսավորվել և դրամարկղային ծախս է կատարվել 77,710.8 հազ. դրամ գումարի չափով, որը հաշվետվությունում չի արտացոլվել որպես ծախս:

Նախահաշվով նախատեսված գումարն ամբողջությամբ ուղղվել է նախորդ տարիներին ձեռքբերված BMW մակնիշի ավտոմեքենայի արժեքի մարմանը:

Համաձայն «2003թ. ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, Ազգային ժողովի պահպանման համար տարեկան նախահաշվով նախատեսվել է 1,178,445.2 հազ. դրամ: Տարեկան ճշտված նախահաշվով այն կազմել է 1,339,665.4 հազ. դրամ, որը ֆինանսավորվել է ամբողջությամբ: Փաստացի ծախսը, համաձայն Ազգային ժողովի կողմից ներկայացված հաշվետվության, կազմել է 1,383,701.8 հազ. դրամ կամ 103.3%: Թույլ է տրվել է գերաժախս 44,036.4 հազ. դրամի չափով:

Ծախսային հոդվածների ուսումնասիրության արդյունքում որոշ հոդվածներով արձանագրվել է գերաժախս: Խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և ՀՀ կառավարության 06.02.2003թ. թիվ 184-Ն որոշման 3.5 կետերի պահանջները: Այսպես.

- «Աշխատավարձ և նրան հավասարեցված այլ վճարներ» հոդվածով, նախատեսվել և ֆինանսավորվել է 653,929.5 հազ. դրամ: Բացի այդ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից այս հոդվածով հատկացվել է ևս 23,200.0 հազ. դրամ: Աշխատավարձի համար ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 677,129.5 հազ. դրամ: Սակայն ուսումնասիրությամբ պատգամավորների և աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի փաստացի հաշարկը կազմել է 661,559.6 հազ. դրամ: Հոդվածով նախատեսված և ֆինանսավորված գումարներից 15,569.9 հազ. դրամն ուղղվել է այլ հոդվածներով կատարված գերաժախսի մարմանը: Մասնավորապես, աշխատավարձի հոդվածով կատարվել են տնտեսական ծախսեր` 4,294.8 հազ. դրամ, կապիտալ շինարարական ծախսեր` 784.7 հազ. դրամ և գույք, սարքավորումներ ձեռքբերման ծախսեր` 190.2 հազ. դրամ, ձեռք են բերվել գրասենյակային ապրանքներ և կատարվել է տրանսպորտի պահպանման ծախսեր:
- «Գրասենյակային ապրանքներ և նյութեր» հոդվածով նախատեսվել և ֆինանսավորվել է 73,499.9 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 69,712.3 հազ. դրամ կամ 94.8%: Սակայն, համաձայն դրամարկղի շարժի հաշվետվության, այդ հոդվածով դրամարկղային մնացորդը տարեվերջին գրանցվել է 10,382.0 հազ. դրամ գերաժախսով:

Բացի այդ, տարվա ընթացքում այդ հոդվածով կատարվել է 3,196.5 հազ. դրամի ներկայացուցչական ծախսեր:

Տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից «Նախորդ տարիների պարտքերի մարում» գործընթացով վճարվել է այդ հոդվածի տարեսկզբի կրեդիտորական պարտքը` 4,023.8 հազ. դրամ գումարի չափով: Սակայն տարեվերջին նորից առաջացել է կրեդիտորական պարտք` 1,487.7 հազ. դրամի չափով:

- «Գործուղում և ծառայողական ուղևորություններ» հոդվածով նախատեսվել, ֆինանսավորվել և դրամարկղային ծախս է կատարվել 140,000.0 հազ. դրամի: Փաստացի ծախսը կազմել է 144,779.7 հազ. դրամ կամ 103.4%: Գերաժախսը կազմել է

4,779.7 հազ. դրամ: Տարեսկզբի կրեդիտորական պարտքը՝ 35,205.3 հազ. դրամի չափով մարվել է ՀՀ կառավարության կողմից «Նախորդ տարիների պարտքի մարում» հոդվածով, սակայն տարեվերջին գոյացել է նոր պարտք՝ 4,779.7 հազ. դրամ գումարի չափով:

- «Սեփական տրանսպորտի պահպանման ծախսեր» հոդվածով նախատեսվել, ֆինանսավորվել և դրամարկղային ծախս է կատարվել 105,204.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 111,340.0 հազ. դրամ կամ 107.7%, գերաժախսը՝ 6,136.0 հազ. դրամ: Տարեվերջին առաջացել է նոր կրեդիտորական պարտք՝ 7,692.2 հազ. դրամի չափով:
- «Կապի ծառայության վճար» հոդվածով նախատեսվել, ֆինանսավորվել և դրամարկղային ծախս է կատարվել 60,700.0 հազ. դրամի: Փաստացի ծախսը կազմել է 83,982.4 հազ. դրամ կամ 138.4%, գերաժախսը՝ 23,282.4 հազ. դրամ: Այդ հոդվածով տարեսկզբին կուտակված կրեդիտորական պարտքը, ՀՀ կառավարության որոշմամբ, որպես «Նախորդ տարիների պարտք» մարվել է 16,779.2 հազ. դրամ գումարի չափով: 2004թ. ներդրված նոր կարգով գերաժախս չի առաջացել:
- «Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման, ջրմուղ-կոյուղու և այլ կոմունալ ծախսեր» հոդվածով, տարեկան ճշտված նախահաշվով, նախատեսվել, ֆինանսավորվել և դրամարկղային ծախս է կատարվել 62,177.5 հազ. դրամի չափով: Փաստացի ծախսը կազմել է 59,753.9 հազ. դրամ, և նախատեսված՝ ֆինանսավորված և չծախսված գումարները վճարվել են սպասարկող կազմակերպություններին, ավելացնելով նախորդ տարիներից ունեցած դեբիտորական պարտքը և այն հասցնելով 7,049.9 հազ. դրամի:
- «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նստաշրջանի ծախսեր» հոդվածով, տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել, ֆինանսավորվել և դրամարկղային ծախս է կատարվել 38,808.0 հազ. դրամի չափով: Փաստացի ծախսը կազմել է 18,399.3 հազ. դրամ: Այդ հոդվածով նախատեսված գումարներից կատարվել են 4,037.5 հազ. դրամի ներկայացուցչական, 6,380.4 հազ. դրամի տնտեսական, 7,493.2 հազ. դրամի գույք, սարքավորումներ ձեռքբերելու ծախսեր:
- «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածի տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել, ֆինանսավորվել և դրամարկղային ծախս է կատարվել 75,000.0 հազ. դրամի, փաստացի ծախսը կազմել է 82,234.0 հազ. դրամ կամ 109.6%: Գերաժախսը կազմել է 7,234.0 հազ. դրամ: Տարեսկզբի կրեդիտորական պարտքը, համաձայն ՀՀ կառավարության որոշման, որպես «Նախորդ տարիների պարտք» մարվել է 3,686.4 հազ. դրամի չափով:

Առանձին դեպքերում թույլ է տրվել «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքների պահանջների խախտումներ, մասնավորապես.

- 2002-2003թթ. ընթացքում աշխատակիցներին վճարված օգնությունների և պարգևատրումների գումարները որոշ դեպքերում չեն միացվել նրանց ընդհանուր վաստակին և սահմանված կարգով չեն հարկվել եկամտահարկով:
- Վարձու աշխատանք կատարած ֆիզիկական անձանց վճարված եկամուտներից սոցիալական վճարներ չեն հաշվարկվել և վճարվել լիազոր մարմին:
- «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված կարգով ֆիզիկական անձանց վճարված եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի վերաբերյալ հարկային տեսչություն ներկայացրած հաշվարկներում առկա են ոչ հավաստի տվյալներ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին

Ձեռնարկել միջոցառումներ.

- ՀՀ պետական բյուջեի, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներից բխող արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:
- Բացառել բյուջետային միջոցների տնտեսագիտական դասակարգման հոդվածների վերաբաշխման սահմանված չափի գերազանցումը:
- Բարձրացնել բյուջետային միջոցների և ֆինանսական հոսքերի ու ծախսերի նկատմամբ հսկողությունը, կատարողական կարգապահությունը:
- Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվություն:

Հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի
25.03.2005թ. խորհրդի նիստում: Ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն
և ՀՀ կառավարությանն առընթեր ջրային
տնտեսության պետական կոմիտե:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում իրականացված վերահսկողության վերաբերյալ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ Ազգային ժողովի 2003թ. դեկտեմբերի 3-ի ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004թ. գործունեության ծրագրի 7-րդ և 8-րդ կետերը, Վերահսկիչ պալատի նախագահի 2004թ. նոյեմբերի 27-ի թիվ 126 հրամանը:

Վերահսկողության նպատակը՝ Իրականացնել վերահսկողություն՝ 2003թ. ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքի և պետական պատվերի կատարման համար բյուջետային միջոցների օգտագործման, պետական մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե և համակարգի ընկերություններ:

Ուսումնասիրություններն իրականացվել են՝ ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի և համակարգի ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին ապարատի պահպանման համար հատկացված բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ

2003 թվականին հաստատված ճշտված նախահաշվով ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ ջրտնտեսություն) ապարատի պահպանման համար նախատեսվել է 47,798.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 47,796.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 47,224.8 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 48,173.1 հազ. դրամ:

Հաստատված նախահաշվի նկատմամբ թույլ է տրվել գերաձախս, շրջանցելով ՀՀ կառավարության 06.02.2003թ. թիվ 184-Ն որոշման 3.5 կետի պահանջները, մասնավորապես.

- «Կապի ծառայությունների վճար» հոդվածով նախատեսվել է 5,074.1 հազ. դրամ, ֆինանսավորվել է 5,074.1 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 6,007.3 հազ. դրամ, գերաձախսը՝ 933.2 հազ. դրամ:

«Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր» հողվածով հատկացված 3,440.0 հազ. դրամ գումարն ամբողջությամբ վճարվել է Հայաստանի «Էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը, փաստացի օգտագործած 3,251.9 հազ. դրամ էլեկտրաէներգիայի արժեքի և նախորդ տարվա կուտակված 83.1 հազ. դրամ պարտքը մարելու համար, առաջացնելով 105.0 հազ. դրամ դեբիտորական պարտք, հաշվի չառնելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության թիվ 184-Ն որոշման 3.2 կետի պահանջները:

Նախորդ տարիների բյուջետային պարտքերի մարման գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2003թ. ջրտնտեսական կողմից ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ջրտնտեսական հատկացրել է 23,195.3 հազ. դրամ, որից՝ 8,488.5 հազ. դրամի վճարում չի կատարվել և այն վերադարձվել է պետական բյուջե:

ՀՀ 2003թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ջրտնտեսական հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, չնախատեսված ծախսերի համար ջրտնտեսական հատկացվել է 240,744.8 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 240,725.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 240,688.1 հազ. դրամ:

2003 թվականին գարնանային հեղեղումներին դիմակայելու նպատակով ՀՀ կառավարության 03.04.03թ. թիվ 338-Ա որոշման հիման վրա պահուստային ֆոնդից ՀՀ ջրտնտեսական հատկացվել է 25.0 մլն դրամ՝ Շիրակի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում համապատասխան հակահեղեղային միջոցառումներ իրականացնելու համար: Ջրտնտեսական լիազոր մարմնի համաձայնությամբ մեկ աղբյուրից գնման ձևով գնումներ կատարելու նպատակով, 29.04.03թ. պայմանագիր է կնքել «Ոռոգում-Ջրառ» և «Շիրակ-ռոռոգում» ՓԲ ընկերությունների հետ, համապատասխանաբար՝ 7,238.5 հազ. դրամ և 17,653.0 հազ. դրամ արժեքով: Կատարված աշխատանքների համար 2003թ. մայիսի 15-ին կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություններ:

Վայոց ձորի մարզի Արփի գյուղի տարածքում հեղեղումների հետևանքների վերացման կանխարգելման լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 483-Ա որոշման համաձայն, կառավարության պահուստային ֆոնդից ջրտնտեսական հատկացվել է 6,000.0 հազ. դրամ: Աշխատանքները կատարվել են մեկ աղբյուրից գնման ձևով: 10.06.2003թ. գնման պայմանագրեր են կնքվել «Ոռոգում-Ջրառ» և «Եղեգնաձոր-ռոռոգում» ՓԲ ընկերությունների հետ, համապատասխանաբար՝ 3,391.3 հազ. դրամ և 2,608.3 հազ. դրամ արժեքով: Կատարված աշխատանքների համար 2003թ. հունիսի 20-ին կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություններ:

Վայոց ձորի մարզի Արփա գետի տարածքում և Շիրակի մարզի Վարդաքար, Նոր Կյանք, Անուշավան, Արևշատ, Մեծ Մանթաշ, Բայանդուր-Երազգավորս տարածքներում հեղեղումների վերացման և կանխարգելման լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար կուտակված

պարտքերը մարելու նպատակով, ՀՀ կառավարության 11.12.2003թ. թիվ 1710-Ն որոշման համաձայն, ջրտնտեսությունին ՀՀ 2003թ. պետական բյուջեով նախատեսված կառավարության պահուստային ֆոնդի հաշվին համապատասխանաբար հատկացվել է Վայոց ձորի մարզին՝ 6000.0 հազ. դրամ, Շիրակի մարզին՝ 18,700.0 հազ. դրամ:

Կատարված լրացուցիչ աշխատանքների գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է, որ ջրտնտեսությունը, շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի «բ» ենթակետի և 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, խուսափելով լրացուցիչ աշխատանքների և ծառայությունների գնման համար նոր ընթացակարգից, արհեստականորեն ավելացրել է գործող պայմանագրերով գնվող աշխատանքների և ծառայությունների քանակն ու արժեքը՝ գերազանցելով սկզբնական պայմանագրի գնի 20%-ը, որը չէր կարող ապահովել հատկացված միջոցների տնտեսապես շահավետ պայմաններով գնումները:

Այսպես՝ 2003թ. հունիսի 11-ին լրացուցիչ համաձայնագրեր է կնքել «Շիրակ - ոռոգում» և «Եղեգնաձոր-ոռոգում» ՓԲ ընկերությունների հետ, որով փոփոխություններ է կատարել նախկինում մեկ աղբյուրից գնման ձևով կնքված պայմանագրերում: «Շիրակ - ոռոգում» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագրի արժեքը՝ 17,653.5 հազ. դրամը ավելացվել է 18,700.0 հազ. դրամով և դառել 36,353.5 հազ. դրամ, իսկ «Եղեգնաձոր-ոռոգում» ՓԲ ընկերության պայմանագրային արժեքը՝ 2,608.3 հազ. դրամը ավելացվել է 6000.0 հազ. դրամով և դառել 8,608.3 հազ. դրամ:

Ջրտնտեսությունի կողմից պայմանագրերում 11.06.03թ. լրացուցիչ համաձայնագրերով ավելացված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 2003թ. հունիսի 30-ը, սակայն, ըստ կազմված և հաստատված աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, այն նշվել է մինչև 2003թ. մայիսի 15-ը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ ջրտնտեսությունի կողմից լրացուցիչ համաձայնագրերով ավելացված աշխատանքների գծով ձևավորված պարտքերի հաշվառում չի տարվել, դրանց բացակայության պատճառով այն չի արտացոլվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն 2003թ. II և III եռամսյակներին ներկայացված «Հիմնարկների դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների» հաշվետվության մեջ:

ՀՀ 2003 թվականի պետական բյուջեով նախատեսված կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ջրտնտեսությունին 2003թ. II եռամսյակում ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 484-Ա որոշմամբ հատկացվել է 128 մլն դրամ՝ «Ռ-անսաթ Արմենիա» ՓԲ ընկերությունից Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությանը՝ հեղուկ քլոր գնելու համար:

Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությունը հեղուկ քլորի գնման համար ստացված գումարը՝ 19.06.2003թ. և 20.06.2003թ. փոխանցել է «Ռ-անսաթ Արմենիա» ՓԲ ընկերության իրավահաջորդ՝ «Նաիրիտ գործարան» ՓԲ ընկերությանը, սակայն հեղուկ քլոր չի ստացել: Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությունում վերահսկողություն իրականացնող հանձնաժողովին գործարքին վերաբերող փաստաթղթեր չտրամադրվեց, պատճառաբանելով, որ

գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերի բնօրինակները ՀՀ Գլխավոր դատախազության կողմից առգրավված է: Պաշտոնական գրությամբ ՀՀ Գլխավոր դատախազությունից ստացվել է գործարքին վերաբերող «Նաիրիտ գործարան» և Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությունների տնօրենների միջև կնքված համաձայնագրի պատճենը:

«Նաիրիտ գործարան» և Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությունների միջև համաձայնագիր է կնքվել 08.05.2003թ. (ՀՀ կառավարության թիվ 484-Ա որոշման ընդունման օրը), որով Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությունն ընդունել է «Նաիրիտ գործարան» ՓԲ ընկերության կողմից 2003թ. հունվար-փետրվար ամիսներին ձեռնարկության չաշխատելու պարագայում, բացառապես գնորդի համար արտադրված 28.5 տոննա հեղուկ քլորի շուրջ 2.5 ամսվա պահպանման ընթացքում առաջացած էներգետիկ ծախսերը, ինչպես նաև ձեռնարկության երկարատև պարապուրդից հետո, ոչ պլանային վերագործարկումից առաջացած վնասները, որը կազմել է 128 մլն դրամ և պարտավորվել փոխհատուցել այն ՀՀ կառավարության թիվ 484-Ա որոշմամբ հաստատված՝ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությանը հեղուկ քլոր գնելու համար հատկացված գումարներից:

Գործառույթի ուսումնասիրությունից պարզվել է, որ համաձայնագրում նշված փաստերը չեն համապատասխանում իրականությանը: Հունվար - մարտ ամիսներին Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությունը «Նաիրիտ գործարան» ՓԲ ընկերությունից ստացել է համապատասխանաբար՝ 19250 կգ, 17000 կգ, և 11550 կգ հեղուկ քլոր, որի դիմաց կատարել է համապատասխան վճարում: Փետրվար և մարտ ամիսներին մեկ կգ հեղուկ քլորի գնման գինը 2002թ. IV եռամսյակի և 2003թ. հունվար ամսվա համեմատ աճել է 1.5 անգամ՝ 466 դրամից՝ 700 դրամ (առանց ԱԱՀ): 2003թ. I եռամսյակի յուրաքանչյուր ամսվա ընթացքում Երևանի «Ջրմուղ-կոյուղու» կողմից գնված հեղուկ քլորը տեղափոխվել է սեփական պահեստ և այն «Նաիրիտ գործարանում» 2.5 ամիս պահպանելու խնդիր չի առաջացել:

«Նաիրիտ գործարան» ՓԲ ընկերությունը բացառապես Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերության համար չի վերագործարկվել և հեղուկ քլոր արտադրել: Նույն ժամանակահատվածում հեղուկ քլոր է արտադրվել և առաքվել այլ կազմակերպություններ, մեկ կիլոգրամը՝ 466 դրամ և ավելի էժան գներով:

Ջրտնտեսվածքումը դիմել է ՀՀ կառավարություն՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությանը 2003թ. II եռամսյակում հեղուկ քլոր ձեռք բերելու համար գումար հատկացնել այն դեպքում, երբ ընկերությունը 2003թ. I եռամսյակի վերջում ունեցել է հեղուկ քլորի բավարար մնացորդ և պայմանագիր՝ Ռուսաստանի Գաշնության Վոլգոգրադ քաղաքից, կիլոգրամը՝ 260 դրամ հեղուկ քլոր ներկրելու վերաբերյալ: Ի դեպ, ՀՀ ներմուծված հեղուկ քլորի համար չկա համապատասխան եզրակացություններ՝ կատարված լաբորատոր փորձաքննությունների՝ արտադրողի և որակի մասին տեղեկատվության վերաբերյալ, որն իր մեջ պարունակում է մեծ ռիսկ:

ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները՝ հեղուկ քլոր գնելու համար, ըստ էության, չեն օգտագործվել նպատակային, որը ենթակա է վերականգնման և պետական բյուջե վերադարձման:

Ջրամատակարարման և ջրահեռացման շինարարական աշխատանքների իրականացումը դեկավարելու ու պատվիրատուի գործառույթներն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության 08.05.2001թ. թիվ 395 որոշմամբ ստեղծվել է ջրտնտեսական ենթակայության «Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծրագրերի իրականացում» պետական հիմնարկը (այսուհետ՝ «ՋՋՀԾԻ» ՊՀ): Նույն որոշմամբ նախատեսվել է հիմնարկի պահպանման ծախսերը կատարել տարեկան ծրագրով նախատեսվող օբյեկտների շինարարական աշխատանքների արժեքի 4 տոկոսի չափով մասհանման հաշվին և սահմանվել է, որ՝ «Պետական հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշիվը հաստատում է ջրտնտեսական համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ»:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ «ՋՋՀԾԻ» ՊՀ կողմից 2003թ. գործունեություն չի իրականացվել, չի հաստատվել տարեկան նախահաշիվը և հաստիքացուցակը:

Ըստ «Հիմնարկների դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների» առ 01.01.2003թ. հաշվետվության՝ «ՋՋՀԾԻ» ՊՀ դեբիտորական պարտքերը կազմել են 428.0 հազ. դրամ, կրեդիտորական պարտքերը՝ 1,361.4 հազ. դրամ (այդ թվում՝ աշխատավարձ՝ 60.2 հազ. դրամ, գործուղման ծախս՝ 379.1 հազ. դրամ): Ի դեպ, կրեդիտորական պարտքերն առաջացել են այն պարագայում, երբ հիմնարկը, ունենալով համապատասխան միջոցներ, չի մարել այն, այլ ձեռք է բերել մեծ քանակությամբ վառելիք և պահեստավորել: Պահեստավորված բեռնակներ ծախսվել է 2002թ. ընթացքում, որի համար նույնպես չի ունեցել տարեկան հաստատված նախահաշիվ և հաստիքացուցակ, ինչպես նաև ոչ մի գործառույթ չի իրականացրել:

Ջրտնտեսական, որպես լիազոր մարմին, վերահսկողություն չի իրականացրել հիմնարկի գործունեության նկատմամբ, չի քննարկել հաշվետվությունները և կասեցրել հիմնարկի տնօրենի հրամանները, ցուցումները և հրահանգները, որոնք հանգեցրել են տարեկան գերաժախսի: Ավելին, տարվա արդյունքներով առաջացած գերաժախսն ընդգրկվել է նախորդ բյուջետային տարիների արդյունքներով առաջացած բյուջետային պարտքերի մեջ և մարվել բյուջետային միջոցների հաշվին:

ՀՀ կառավարության 31.07.03թ. թիվ 964-Ա որոշմամբ «ՋՋՀԾԻ» ՊՀ գործունեությունը դադարեցվել է: Որոշման 2-րդ կետով ջրտնտեսական նախագահին հանձնարարվել է օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հիմնարկի գործունեությունը դադարեցնելու գործընթացը: Որոշման 3-րդ կետով հանձնարարվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին և ջրտնտեսական նախագահին՝ 10-օրյա ժամկետում ճշտել «ՋՋՀԾԻ» ՊՀ պարտքերը և ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ նշված պետական հիմնարկի լուծարումից հետո մնացած պարտքերի մարումը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին իրականացնելու համար:

Ջրտնտայետկոմի նախագահի կողմից 01.10.2003թ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել գրություն (50 օր ուշացումով) «ՋՋՀԾԻ» ՊՀ լուծարումից հետո պարտքերի վերաբերյալ, ընդհանուր գումարով՝ 53,677.5 հազ. դրամ (այդ թվում՝ աշխատավարձ 44,671.5 հազ. դրամ, որտեղ ներառվել է նաև 50 օր ուշացնելու համար հաշվարկված աշխատավարձը, պարտադիր սոց. վճար՝ 5,383.4 հազ. դրամ, գործուղման ծախսեր՝ 47.3 հազ. դրամ), որոնք իբրև առաջացել են 2002 և 2003թթ. ընթացքում:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության վարչությունը 22.10.2003թ. պետական հիմնարկի լուծարումից հետո մնացած պարտքերի արժանահավատության ստուգման արդյունքում այն մվագեցրել է և դարձրել է 52,508.8 հազ. դրամ: ՀՀ կառավարության ներկայացրած առաջարկության հիման վրա «ՋՋՀԾԻ» ՊՀ լուծարումից հետո մնացած պարտքերը մարելու համար ջրտնտայետկոմին ՀՀ կառավարության 11.12.2003թ. թիվ 1692-Ա որոշման հիման վրա կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 52,508.8 հազ. դրամ:

Ջրտնտայետկոմը, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ «ՋՋՀԾԻ» ՊՀ 2002 և 2003թթ. ընթացքում չի իրականացրել ՀՀ կառավարության 08.05.2001թ. թիվ 395 որոշման 3-րդ կետով սահմանված և իր կանոնադրությամբ ամրագրված ոչ մի գործառույթ, որի արդյունքում կատարված աշխատանքների արժեքի 4%-ի չափով մասհանման հաշվին պետք է ձևավորվեր հիմնարկի պահպանման ծախսերը և պետական հիմնարկի համար 2002 և 2003թթ. տարեկան հաստատված ծախսերի նախահաշիվների՝ համապատասխան դրույքաչափերով հաստիքացուցակների բացակայությունը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացրած «Հիմնարկի կատարած բյուջետային պարտքերի մասին» հաշվետվությունները, որտեղ նման պարտքեր արտացոլված չեն, հաշվարկել է աշխատավարձ 2002թ.՝ 16,792.5 հազ. դրամ (16 մարդ), 2003թ. տասնմեկ ամիսների համար՝ 27,879.1 հազ. դրամ (15 մարդ): Ի դեպ, ՀՀ պետական բյուջեով ջրտնտայետկոմի ապարատի պահպանման ծախսերի մեջ 2002թ. աշխատավարձը կազմել է 19,710.0 հազ. դրամ (52 մարդ), 2003թ.՝ 30,663.0 հազ. դրամ (52 մարդ):

«ՋՋՀԾԻ» ՊՀ-ի տնօրենը, չունենալով հաստատված ծախսերի նախահաշիվ և հաստիքացուցակ, գործունեություն չիրականացնելու պարագայում 2002 և 2003թթ. ընթացքում իր հերթին աշխատանքից ազատել և ընդունել է աշխատակիցներ, կատարել է որոշ աշխատակիցների աշխատավարձի բարձրացում՝ մինչև 100 տոկոս: Հիմնարկի կողմից կատարված վերջնահաշվարկներում ընդգրկվել են անուններ, որոնք բացակայում են աշխատավարձի ցուցակներից:

2003թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ջրտնտայետկոմին «ՋՋՀԾԻ» ՊՀ լուծարումից հետո առաջացած պարտքերի մարման համար հատկացված 52,508.8 հազ. դրամի ծախսը հիմնավորված չէ:

**Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և «Ոռոգման համակարգի» ՓԲ
ընկերությունների ֆինանսական առողջացման գործընթացը և ֆինանսական հոսքերի
կառավարումը**

ՀՀ պետական բյուջեից ջրտնտեսական միջոցով ընկերություններին հատկացված սուբսիդիայի հասանելիք գումարների կանխատեսումները իրականացվել են ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 17-ի՝ «ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության ընկերությունների գործունեության և կառավարման բարելավման ծրագրի, 2001-2005թթ. ֆինանսական հոսքերի և դրանց իրականացման միջոցառումների մասին» թիվ 440 և 2003թ. նոյեմբերի 6-ի՝ «Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և «Ոռոգման համակարգ» ՓԲ ընկերությունների 2003-2007թթ. ֆինանսական կանխատեսումների մասին» թիվ 1693-Ն որոշումներով: Հաշվի առնելով ջրային տնտեսության համակարգի ռազմավարական նշանակությունը և ընկերությունների լիակատար առողջացմանն ուղղված ծրագրերի հետևողական իրականացման անհրաժեշտությունը՝ 2003-2006թթ. ֆինանսական հոսքերի կանխատեսումների հաշվարկներում նախատեսվում է ՀՀ պետական բյուջեից սուբսիդիաների տրամադրում ընկերություններին՝ թերզանձումների և ինքնարժեքից ցածր սակագնի սահմանման արդյունքում առաջացող ընթացիկ ֆինանսական ճեղքվածքը փակելու համար: ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 17-ի թիվ 440 որոշման 2-րդ կետի «գ» ենթակետի համաձայն, ջրտնտեսական համակարգի ջրային տնտեսության ընկերությունների կողմից սպառվող էլեկտրաէներգիայի արժեքը վճարելու համար ՀՀ պետական բյուջեից հատկացվող ամենամսյա սուբսիդիայի կառավարման իրավունքը վերապահվել է ջրտնտեսական միջոցով էլեկտրաէներգիայի ծախսին համապատասխան ամենամսյա վճարումներ իրականացնելու համար:

ՀՀ կառավարության 06.11.2003թ. թիվ 1693-Ն որոշման հիման վրա ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 17-ի թիվ 440 որոշման 2-րդ հավելվածը, որից հետո կազմվել է 2003թ. «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության ֆինանսական կանխատեսումների նոր նախահաշիվ, որով նախատեսվել է ցանցին տրվող ջրաքանակը՝ 238.0 մլն խ/մ (204.8 մլն խ/մ խմելու ջուր, 33.2 մլն խ/մ ոռոգման ջուր), ջրօգտագործողներին տրվող ջրաքանակը՝ 80.0 մլն խ/մ (63.5 մլն խ/մ խմելու ջուր, 16.5 մլն խ/մ ոռոգման ջուր): Կորուստը (առավելագույն) նախատեսվել է 66.4% (խմելու ջրի համար՝ 69%, ոռոգման ջրի համար՝ 50.3%): Մատակարարված ջրի հաշվարկային արժեքը (հատույթը) նախատեսվել է 3,239.0 մլն դրամ (խմելու ջուր՝ 2,672.0 մլն դրամ, ջրահեռացումից՝ 495.0 մլն դրամ, ոռոգման ջուր՝ 72.0):

«Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության ներկայացրած եկամուտների և ծախսերի նախահաշվի փաստացի կատարողականի համաձայն՝ 2003թ. ցանցին տրված ջրի քանակը կազմել է 186.8 մլն խ/մ, որից խմելու ջուր՝ 169.7 մլն խ/մ, ոռոգման ջուր՝ 17.1 մլն խ/մ, ջրօգտագործողներին տրված ջրի քանակը՝ 72.0 մլն խ/մ, որից՝ խմելու ջուր՝ 62.1 մլն խ/մ, ոռոգման ջուր՝ 9.9 մլն խ/մ: Փաստացի կորուստը կազմել է 61.5% (նախատեսված՝ 66.4%), որից

խմելու ջրի համար՝ 63.4% (նախատեսված՝ 69%), ոռոգման ջրի համար՝ 42.1% (նախատեսված՝ 50.3%):

Աղյուսակ 1

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման 2000-2003թթ. հիմնական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.
1.	Ջրառ (մլն խ/մ)	149	160	144	169.7
2.	Սպառողներին տրված ջրի քանակ (մլն խ/մ)	83	79	63	62.1
3.	Կորուստներ (%)	44.3	51.0	54.3	63.4
4.	Հավաքում (%)	30.6	37.9	45.7	69.0

Մատակարարված ջրի հաշվարկային արժեքը կազմել է 3,045.6 մլն դրամ՝ նախատեսված 3,239.0 մլն դրամի դիմաց, որից՝ խմելու ջրինը՝ 2,599.4 մլն դրամ, ջրահեռացմանը՝ 412.7 մլն դրամ, ոռոգման ջրինը՝ 33.5 մլն դրամ: Խմելու ջրի և ջրահեռացման համար գանձումը կազմել է 2,076.2 մլն դրամ, ոռոգման ջրի համար՝ 25.2 մլն դրամ: Ապահովվել է հավաքման 69 % մակարդակ:

Ըստ ՀՀ կառավարության 06.11.2003թ. թիվ 1693-Ն որոշմամբ հաստատված ծրագրի, ֆինանսական վիճակի բարելավմանն ուղղված դրույթներով կանխատեսվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում բյուջետային հիմնարկների և իրավաբանական անձանց գծով հավաքման մակարդակը 100 %: Փաստացի հավաքումը բյուջետային հիմնարկներից կազմել է 85.2 %, իսկ իրավաբանական անձանցից՝ 90.5 %:

Ձրաչափ տեղադրած բաժանորդների թիվը 01.01.2004թ. դրությամբ կազմել է 82821, որից՝ բնակիչ-բաժանորդների թիվը՝ 79555 կամ ընդհանուր բաժանորդների 32.3%-ը, ծրագրով նախատեսված 13 %-ի դիմաց:

2003 թվականի համար ծախսերը նախատեսվել է 3,729.0 մլն դրամ, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի գծով 1,305.0 մլն դրամ, աշխատավարձի գծով՝ 716.8 մլն դրամ: Ֆինանսական ճեղքվածք է նախատեսվել 1,500.0 մլն դրամ: Փաստացի ծախսը կազմել է 4,019.6 մլն դրամ, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի ծախս՝ 1210.8 մլն դրամ, աշխատավարձ՝ 995.3 մլն դրամ:

Ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով ջրտնտեսական կողմից ընկերությանը հատկացվել է 810.0 մլն դրամ, որն ամբողջությամբ ուղղվել է ընկերության օգտագործած էլեկտրաէներգիայի գծով առաջացած պարտավորությունների մարմանը: Բացի նշված սուբսիդիայի գումարից «Ռոռգում-Ջրառ» ՓԲ ընկերությունը 10.0 մլն դրամի չափով մարել է «Հայէներգո» ՓԲ ընկերության հանդեպ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ունեցած էլեկտրաէներգիայի պարտքը: Ջրտնտեսական կողմից պետական բյուջեից ստացված սուբսիդիայի միջոցներից ընկերությանը հատկացվել է նաև 22.5 մլն դրամ, որն օգտագործվել է ոռոգման համակարգի նախապատրաստական աշխատանքների համար:

Բացի վերոգրյալ բյուջետային հատկացումներից, ՀՀ կառավարության 06.11.2003թ. թիվ 1693-Ն որոշմամբ նախատեսվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կանոնադրական կապիտալի

ավելացման նպատակով հատկացնել 4,609.0 մլն դրամ և հանձնարարվել է կանոնադրական կապիտալի համալրման համար տրամադրված գումարից 2,152.0 մլն դրամն ուղղել էլեկտրաէներգիայի սպառման դիմաց «Հայգազարդ» ՓԲԸ, իսկ 2,457.0 մլն դրամը՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի նկատմամբ գնովի ջրի դիմաց կուտակված պարտավորությունների վճարմանը: Նույն որոշման 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, ընկերությանը զիջվել է գործունեության արդյունքում նախկինում տրամադրված բյուջետային վարկի 3,174.6 մլն դրամ մնացորդը, ինչպես նաև վարկի ամբողջ գումարի համար հաշվարկված տղաճը, տոկոսավճարներն ու տույժերը՝ 569.8 մլն դրամ գումարով: Ազատվել է Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերության նկատմամբ գնովի ջրի գծով 2003թ. հունվարի 1-ի դրությամբ կուտակված պարտավորությունների մնացորդի վճարումից՝ 175.4 մլն դրամ գումարով:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման համար ջրտնտեսական միջոցների ֆինանսավորման համար 2003թ. պետական բյուջեով հատկացվել է 341.0 մլն դրամ:

02.09.2003թ. «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրով կատարվել է 83 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ՝ 271.4 մլն դրամ գումարով:

05.02.2003թ. ջրտնտեսական մեկ աղբյուրից գնման ձևով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ կնքել է պետական կարիքների համար կապալային աշխատանքների գնման պայմանագիր, որով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն կատարել է համակարգի 113 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ՝ 49.0 մլն դրամ գումարով, իսկ 28.11.2003թ. կնքված պայմանագրի հիման վրա ևս՝ 10.6 մլն դրամի չնախատեսված վթարների վերացման աշխատանքներ:

Վերը նշված երեք պայմանագրերով 2003թ. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցով իրականացվել է «Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում» ծրագրով նախատեսված 331.0 մլն դրամի աշխատանքներ:

Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերության 2002-2005թթ. ֆինանսական հոսքերի կանխատեսումների համաձայն, 2003 թվականի նախագծով նախատեսվել էր ցանցին տրվող ջուրը՝ 275.0 մլն խ/մ, ջրօգտագործողներին տրվող ջուրը՝ 111.0 մլն խ/մ, կորուստ է նախատեսվել 59.6 %: Մատակարարված ջրի հաշվարկային արժեք է նախատեսվել 5,945.0 մլն դրամ, հավաքում՝ 3,724.0 մլն դրամ կամ 62.6 %:

2003թ. իրականացրած գործունեության արդյունքում ցանցին տրված ջուրը փաստացի կազմել է 403.0 մլն խ/մ, սպառողներին տրված ջրի քանակը՝ 97.4 մլն խ/մ: Կորուստը կազմել է 75.8%: Մատակարարված ջրի և ջրահեռացման հաշվարկային արժեքը կազմել է 5,078.3 մլն դրամ (ջրամատակարարում՝ 4,284.1 մլն դրամ, ջրահեռացում՝ 794.2 մլն դրամ):

Մատուցած ծառայությունների դիմաց ընկերության կողմից գանձվել է 5,087.6 մլն դրամ, որտեղ ներառվել են «Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում գանձված գումարները: Հավաքած գումարների տարանջատում ընկերության կողմից չի

կատարվել, որի հետևանքով անհնարին է ճշտել 2003թ. ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց փաստացի կատարման մակարդակը: Ընկերության գործունեության բարելավման 2002-2005թթ. միջոցառումների ծրագրի և ֆինանսական հոսքերի կանխատեսումների համաձայն, մինչև 2005թ. նախատեսվել է խմելու ջրի կորուստների ծավալը 2001թ. 71.7 %-ի դիմաց նվազեցնել մինչև 55 %, որով կտնտեսվեր 165.0 մլն խ/մ ջուր՝ փաստացի կորուստը 2001թ. համեմատությամբ (ջրառից վերցրած ջուր՝ 407.0 մլն խ/մ, կորուստ՝ 292.0 մլն խ/մ, կամ 71.8%), 2003թ. ավելացել է ևս 13.0 մլն խ/մ (ջրառից վերցրած ջուր՝ 403.2 մլն խ/մ, կորուստ՝ 305.0 մլն խ/մ, կամ 75.8%), իսկ հավաքման մակարդակը դեռևս ցածր է ծրագրով նախատեսված աճի տեմպերից:

Աղյուսակ 2

Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերության ջրամատակարարման 2000-2003թթ. հիմնական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշ անվանումը	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.
1.	Ջրառ (մլն խ/մ)	431	407	394.8	403.2
2.	Սպառողներին տրված ջրի քանակ (մլն խ/մ)	118.7	115	112.4	97.4
3.	Կորուստներ (%)	72.5	71.8	71.5	75.8
4.	Հավաքագրում (%)	20.0	26.7	45.1	-

Բյուջետային հիմնարկներից և իրավաբանական անձանցից վճարումների հավաքման մակարդակը 2003թ. կազմել է համապատասխանաբար՝ 92.3% և 66.2%, նախատեսված 100%-ի փոխարեն:

Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերության գանձումների հաշվառման և վերլուծության բաժնի ներկայացրած տեղեկանքի համաձայն, ջրաչափ տեղադրած բաժանորդների թիվը կազմում է 236166 կամ ընդհանուր բնակիչ-բաժանորդների 79.1%-ը:

Ընթացիկ գործունեության ապահովման, ֆինանսական ճեղքվածքի փակման համար, նպատակային ֆինանսավորման կարգով «ՀՀ 2003թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ընկերությանը 2003թ. ընթացքում հատկացվող չափ է սահմանվել 1,935.0 մլն դրամ:

ՀՀ կառավարության 06.11.2003թ. թիվ 1693-Ն որոշման հիման վրա ֆինանսական առողջացման, լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի պետական բաժնեմասի ձեռքբերման և կանոնադրական կապիտալի համալրման նպատակով ընկերությանը հատկացվել է 10,312.0 մլն դրամ, որից՝ 7,084.0 մլն դրամն ուղղվել է նախորդ տարիներից առաջացած էլեկտրաէներգիայի մարմանը, 1,169.0 մլն դրամը՝ բնապահպանությանը և 2,059 մլն դրամը՝ բյուջետային վարկի դիմաց կուտակված պարտավորությունների վճարմանը: Նույն որոշմամբ ընկերությանը զիջվել է 4,898.2 մլն դրամ բյուջետային վարկ և 1,640.2 մլն դրամ՝ հաշվարկված տոկոսավճարներ և սղաճ:

«Ոռոգում - ջրառ» ՓԲ ընկերության եկամուտների և ծախսերի նախահաշվի փաստացի կատարողականի համաձայն, 2003 թվականին ջրաղբյուրներից վերցրած ջրի քանակը կազմել է

1,025.5 մլն խ/մ (նախատեսված 1,027.5 մլն խ/մ), ոռոգման համակարգերի գլխամասերում և ջրթափ գետերում ջրօգտագործողներին մատակարարվող ջրի ծավալը կազմել է 970.6 մլն խ/մ (նախատեսված 102.2 մլն խ/մ), կորուստը՝ 5.4% (կորուստ չի նախատեսվել):

Աղյուսակ 3

2000-2003թթ. ջրառը, սպառողներին տրված ջրի քանակը և էլեկտրաէներգիայի սպառումը ոռոգման ոլորտում

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	2000թ.	2001թ.	2002թ.	Ոռոգում - ջրառ	
					2002թ.	2003թ.
1.	Ջրառ (մլն խ/մ)	1195	1066.5	1200.2	1200.2	1025.5
2.	Սպառողներին տրված ջրի քանակ (մլն խ/մ)	832.4	742.5	742.8	1075.8	970.6
3.	Կորուստներ (%)	52.8	30.4	38.1	10.4	5.4
4.	Հավաքագրում (%)	30.3	52.9	50.4	64.3	58.9
5.	Էլեկտրաէներգիայի սպառում (մլն կվժ)	288	283.5	232	142.3	90.6

Ջրտուրքի կետերում մատակարարված ջրի հաշվարկային հասույթը կազմել է 757.5 մլն դրամ (նախատեսված՝ 838.1 մլն դրամ), հավաքումը՝ 446.1 հազ. դրամ: Ապահովվել է հավաքման 58.9 % (նախատեսված՝ 100%) մակարդակ:

Աղյուսակ 4

2000-2003թթ. ոռոգման ոլորտի ֆինանսական հիմնական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշների անվանումները	2000թ.	2001թ.	2002թ.	Ոռոգում - ջրառ	
					2002թ.	2003թ.
1.	Մատակարարված ջրի արժեք (մլն դրամ)	2805	2866	3523	906.6	757.5
2.	Հավաքագրված գումարներ (մլն դրամ)	1060	1516	1775	583.3	446.1
3.	Ընթացիկ ծախսեր (մլն դրամ)	7785	7006	6942	3758.4	2858.3
4.	Ինքնարժեք (ընթացիկ, դրամ/խ/մ)	9.4	9.4	9.3	3.49	2.94
5.	Սակագին (դրամ, խ/մ)	3.37	3.86	4.2	0.843	0.78

Տարեկան նախահաշվով ընկերության ֆինանսական ճեղքվածք է նախատեսվել 2,264.7 մլն դրամ: Չնայած այն հանգամանքին, որ ընկերության նախահաշվով էլեկտրաէներգիայի ծախս է նախատեսվել 1,930.0 մլն դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,548.5 մլն դրամ: Ջրտնտայետկումը ՀՀ 2003թ. պետական բյուջեով ոռոգման համակարգի համար նախատեսված սուբսիդիայից ընկերությանը հատկացրել է 2,282.3 մլն դրամ, իսկ Ծրագրերի իրականացման գրասենյակից (ԾԻԳ)՝ 154.8 մլն դրամ: Ընկերությունը ստացած սուբսիդիայից 1,510.5 մլն դրամը վճարել է 2003թ. ընթացքում սպառած էլեկտրաէներգիայի դիմաց, 135.5 մլն դրամը՝ ջրտնտայետկումի հանձնարարությամբ մարվել է ոռոգման համակարգերը շահագործող ՓԲԸ-ներում սպառված

Էլեկտրաէներգիայի պարտքերը, 123.1 մլն դրամը մարել է բյուջետային վարկը, 200.0 մլն դրամն ուղղել է կարճաժամկետ բանկային վարկի մարմանը, 62.4 մլն դրամը վճարել է ՀՀ կենսաթոշակային հիմնադրամին, 200.9 մլն դրամը վճարել է հաշվարկված աշխատավարձի դիմաց, 11.0 մլն դրամը՝ Սևանա լճից ոռոգման նպատակով բաց թողնված ջրի դիմաց և հարկային պարտավորությունների դիմաց՝ 97.0 մլն դրամ: Գարնան նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությանը՝ ջրտնտեսկոմի հրամանի համապատասխան վճարել է 34.7 մլն դրամ, իսկ «Գետիկ» ՋՕԸ-ին՝ 4.0 մլն դրամ, ի պահ հանձնված ջրային օբյեկտի վերանորոգման համար: ՀՀ կառավարության 23.01.2003թ. թիվ 144-Ա որոշմամբ Արմավիր քաղաքի 500 հա հողերի մեխանիկական ոռոգման կառույցի շինարարությանը հատկացվել է 30.0 մլն դրամ:

«Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության 13.12.2002թ. թիվ 1950-Ն որոշման համաձայն, ընկերությունների կողմից բնակիչ-բաժանորդների մասով առաջացած պարտքերի՝ գումարով 19,285.0 մլն դրամի դուրս գրումը և ծախսերի կազմում ընդգրկելը հանգեցրել է ընկերությունների ֆինանսական ճեղքվածքի և տարեկան վնասների մեծացմանը և ֆինանսական վիճակի վատթարացմանը:

Ընդհանուր առմամբ, 2003թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից համակարգին հատկացվել է 7,230.0 մլն դրամ սուբսիդիա, ՀՀ կառավարության 06.12.2003թ. որոշման հիման վրա ընկերությունների կանոնադրական կապիտալի համալրման համար տրամադրված գումարների հաշվին՝ գործունեության արդյունքում առաջացած պարտքերի վճարման համար հատկացվել է 11,866.0 մլն դրամ, ինչպես նաև համակարգի ընկերություններին նախկինում տրամադրված բյուջետային վարկը, հաշվարկված սղաճը և տույժերը՝ գումարով 11,744.9 մլն դրամ, զիջվել է:

Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում պետական բաժնեմասից ստացվող շահութաբաժինների վճարման գործընթացը ջրտնտեսկոմում

Ջրտնտեսկոմի ենթակայության 50%-ից ավելի պետական բաժնեմաս ունեցող 16 առևտրային կազմակերպություններից ներկայացված ամփոփ տեղեկանքի համաձայն 2003թ. ֆինանսական արդյունքներով վնասով են աշխատել համակարգի բոլոր ընկերությունները: Պատկերը բնորոշ է նաև 2002թ., բացառությամբ «Թալին-ոռոգում» ՓԲԸ, որը տարեկան արդյունքներով ունեցել է 8,897.0 հազ. դրամ զուտ շահույթ և զուտ շահույթից՝ շահութաբաժինը, գումարով 1,779.4 հազ. դրամ, մինչև օրս պետական բյուջե չի վճարվել:

ՀՀ կառավարության 11.12.2003թ. թիվ 1775-Ն որոշմամբ «Արարատյան-ոռոգում», «Կոտայք-ոռոգում», «Նոյեմբերյան-ոռոգում» և «Սպիտակի-ոռոգում» ՓԲԸ-երի միաձուլմամբ ստեղծվել է «Ոռոգում» ՓԲԸ, իսկ 10.06.2004թ. ՀՀ կառավարության թիվ 938-Ա որոշմամբ

վերակազմավորման միջոցով «Ոռոգում» ՓԲԸ-ին են հանձնվել նաև «Արմավիր-ոռոգում», «Էջմիածին-ոռոգում», «Արգնի-Շամիրամ-ոռոգում» ՓԲԸ, «Եղեգնաձոր-ոռոգում», «Թալին-ոռոգում», «Շիրակ-ոռոգում», «Վայք-ոռոգում», «Երևան-ոռոգում» և «Մարտունի-ոռոգում» ՓԲԸ-երը: Սակայն, մինչև օրս, միաձուլման գործընթացն ավարտին չի հասել: Այդ ընկերություններից մինչև 30.12.2004թ. դրությամբ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հանձնում-ընդունում չի կատարվել, որի պատճառով հնարավոր չէր իրականացնել ուսումնասիրություններ՝ ընկերությունների ֆինանսական հոսքերի, կատարված ծախսերի, առկա ռեսուրսների օգտագործումից ֆինանսական ճեղքվածքների և պետական աջակցության վերաբերյալ:

Իրականացրած վերահսկողության արդյունքներին ծանոթանալու վերաբերյալ կազմվել է չորս արձանագրություն, որոնք ստորագրվել են և առարկություններ չեն եղել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Ապարատի պահպանման համար կատարված ծախսերի գծով նախահաշվի առանձին հոդվածներով թույլ է տրվել գերաձախս, շրջանցելով ՀՀ կառավարության 06.02.2003թ. թիվ 184-Ն որոշման 3-րդ և 5-րդ կետերի պահանջները:
- Նախորդ տարիներին առաջացած բյուջետային պարտքերի մարման ընթացքում թույլ է տրվել ոչ նպատակային ծախս՝ հատկացված միջոցների հաշվին վճարվել է «ՋԶՀԾԻ» Պետական Հիմնարկի առաջացրած գերաձախսը գումարով 1,361.4 հազ. դրամ:
- Խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի «բ» ենթակետը և 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները լրացուցիչ քանակի աշխատանքների և ծառայությունների գնման համար նոր ընթացակարգից խուսափելով, արհեստականորեն ավելացվել է նախկինում մեկ աղբյուրից գնման ձևով կնքված պայմանագրերի քանակը և արժեքը՝ գումարով 24,700.0 հազ. դրամ:
- Ջրտնտեսական ենթակայության «ՋԶՀԾԻ» ՊՀ լուծարման ժամանակ հաշվարկված պարտքերը գուրկ են հիմքերից և ՀՀ կառավարություն ներկայացրած առաջարկության հիման վրա պահուստային ֆոնդից ստացված 52,508.8 հազ. դրամը ծախսվել է առանց հիմնավորող փաստաթղթերի:
- Իրականացված կառուցվածքային բարեփոխումների և հաշվառման համակարգի ներդրումների պայմաններում դեռևս ցածր է վարձավճարների հավաքման մակարդակը:
- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ջրտնտեսական հեղուկ քլորի գնման համար հատկացված 128.0 մլն դրամը օգտագործվել է ոչ նպատակային և ոչ արդյունավետ, արդյունքում՝ հեղուկ քլոր ձեռք չի բերվել: Գումարը ենթակա է վերականգնման:
- ՀՀ ներկրված հեղուկ քլորը չի ենթարկվում համապատասխան լաբորատոր հետազոտման:

- Համակարգի ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեությունը վերահսկելու համար «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի համաձայն, չի ստեղծվել վերստուգող հանձնաժողով (վերստուգող):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ ձեռնարկել միջոցառումներ.

1. մատակարարված ծառայությունների գույքագրման և հավաքագրման մակարդակը բարձրացնելու,
2. «ՀՀ պետական բյուջեի», «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներից բխող արձանագրված թերությունները վերացնելու,
3. համակարգի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների եկամուտների գնահատման, հավաքագրված ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման, համակարգի նվազագույն ծախսերի ապահովման նկատմամբ վերահսկողությունը բարձրացնելու,
4. պետությանը հասցված վնասը վերականգնելու ուղղությամբ,
 - Ծրագրերի և պետական պատվերի համար նախատեսված գնումները կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:
 - Բարձրացնել բյուջետային միջոցների, ֆինանսական հոսքերի և ծախսերի նկատմամբ հսկողությունը, կատարողական կարգապահությունը:
 - Պետական բյուջե վճարել 2002-2003թթ. գործունեության արդյունքներով առաջացած 1,779.4 հազ. դրամ շահութաբաժինը:
 - Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Պետական գույքի գնորդների կողմից ներդրումային պարտավորությունների կատարման ընթացքի մասին

Ուսումնասիրության նապատակը՝

Ներդրումային պարտավորությունների կատարման ընթացքի վերլուծությունը 01.07.2002-01.07.2004թթ. ժամանակահատվածում:

Ուսումնասիրությանը արձանագրվել է՝

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից ներկայացված տվյալներով 01.07.2002 – 01.07.2004թթ. ժամանակաշրջանում (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան) ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պարտավորություններ են ստանձնել մասնավորեցված (պայմանագրեր կնքած) 188 ընկերությունների և պետական գույքի գնորդներ: Այդ գնորդներից հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային պարտավորություններ ունեն 72-ը, իսկ 116-ի պարտավորությունների կատարման ժամկետները սահմանված է հաշվետու ժամանակաշրջանից հետո: Միաժամանակ, հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պարտավորություններ են ստանձնել նաև նախկինում (մինչև 01.07.2002թ.) մասնավորեցված 70 ընկերությունների և պետական գույքի գնորդներ: Արդյունքում, ըստ ներկայացված տվյալների 01.07.2004թ. դրությամբ ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պարտավորություններ են ստանձնել 258 (188+70) ընկերությունների և պետական գույքի գնորդներ:

Պետական գույքի գնորդներից հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա պարտավորություններ են ստանձնել 142-ը (70+72), դրանց կողմից կատարվելիք ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 2,408.5 մլն դրամ և 16.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով պետք է ապահովվեր մոտ 10770 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարման ենթակա ներդրումային պարտավորություններ ունեցող 142 ընկերությունների և պետական գույքի գնորդներից պարտավորությունները կատարել են 121-ը, իսկ սոցիալական երաշխիքների մասով պարտավորություն ստանձնած 88 գնորդներից՝ 75-ը կամ հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա պարտավորություններ ստանձնած գնորդների 85.2%-ը: Ըստ ներկայացված տվյալների, պարտավորությունները կատարած գնորդների կողմից ստանձնած ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 1,491.7 մլն դրամ (ընդհանուրի 61.9%-ը) և 12.6 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուրի 74%-ը), ինչպես նաև պետք է ապահովվեր մոտ 7220 աշխատատեղ (ընդհանուրի մոտ 67%-ը), դրանց կողմից փաստացի կատարվել է 2,449.8 մլն դրամի և 14.6 մլն

ԱՄՆ դոլարի ներդրումներ և ապահովվել մոտ 8020 աշխատատեղ: Այսինքն՝ հաշվետու ժամանակաշրջանի համար պարտավորությունները կատարած գնորդները գերակատարել են ներդրումների (ընդհանուրի մոտ 124%) և աշխատատեղերի ապահովման մասով (ընդհանուրի մոտ 111%) իրենց ստանձնած պարտավորությունները: Մյուս կողմից, հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային պարտավորությունները չեն կատարել 21 (14,8%-ը) ընկերությունների և պետական գույքի գնորդներ, դրանց կատարելիք ներդրումների գումարը կազմում է 916.7 մլն դրամ (ընդհանուրի 38.1%) և 4.3 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուրի 25.5%-ը), ինչպես նաև պետք է ապահովվեր մոտ 3530 աշխատատեղ (ընդհանուրի 32.8%-ը):

Հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա պարտավորություններ ունեցող ընկերություններից և պետական գույքից 80-ը (56,3%) մասնավորեցվել (օտարվել) են մրցույթով, իսկ 62-ը (43,7%)՝ ուղղակի վաճառքի ձևով:

Մրցույթով մասնավորեցված ընկերությունների և պետական գույքի գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների գումարը կազմել է 1,545.5 մլն դրամ (ընդհանուրի 64.2%-ը) և 8.2 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուրի 48.5%-ը), իսկ սոցիալական երաշխիքների մասով պետք է ապահովվեր մոտ 3800 աշխատատեղ (ընդհանուրի մոտ 35%-ը): Այդ ընկերությունների գնորդներից վերոհիշյալ պարտավորությունները կատարել են 72-ը (90%-ը), որոնց հաշվետու ժամանակաշրջանի համար ստանձնած ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 848.5 մլն դրամ և 6.5 մլն ԱՄՆ դոլար, ինչպես նաև պետք է ապահովվեր մոտ 2700 աշխատատեղ: Վարչության կողմից ներկայացված տվյալներով, մրցույթով մասնավորեցված պարտավորությունները կատարած ընկերությունների գնորդների ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 1,225.6 մլն դրամ և 7.1 մլն ԱՄՆ դոլար ու ապահովված է մոտ 3530 աշխատատեղ կամ հաշվետու ժամանակաշրջանի համար պարտավորությունները գերակատարվել են, և ներդրումների մասով կատարումը կազմել է մոտ 115%, իսկ աշխատատեղերի ապահովման մասով՝ 130.7%: Մյուս կողմից, մրցույթով մասնավորեցված 8 ընկերությունների գնորդներ չեն կատարել հաշվետու ժամանակաշրջանի համար ստանձնած պարտավորությունները՝ 697.0 մլն դրամ և 1.7 մլն ԱՄՆ դոլար կամ հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների մոտ 27%-ը, ինչպես նաև չի ապահովվել մոտ 1100 աշխատատեղ (մոտ 29%):

Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված ընկերությունների և պետական գույքի գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 863 մլն դրամ (ընդհանուրի 35.8%-ը) և 8.7 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուրի 51.5%-ը), իսկ սոցիալական երաշխիքների մասով պետք է ապահովվեր մոտ 6970 աշխատատեղ (ընդհանուրի 64.7%-ը): Այդ ընկերությունների գնորդներից պարտավորությունները կատարել են 49-ը (79%-ը), որոնց հաշվետու ժամանակաշրջանի համար ստանձնած ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 643.3 մլն դրամ և 6.1 մլն ԱՄՆ դոլար, ինչպես նաև պետք է ապահովվեր մոտ 4520 աշխատատեղ:

Ըստ Վարչության տվյալների, պայմանագրային պարտավորությունները կատարած պետական գույքի գնորդների կատարած ներդրումների գումարը կազմել է 1,224.3 մլն դրամ և 7.4 մլն ԱՄՆ դոլար ու ապահովվել է մոտ 4490 աշխատատեղ: Այսինքն՝ վերոհիշյալ 49 ընկերությունների գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանի համար ստանձնած պարտավորությունները ներդրումների մասով գերակատարվել է մոտ՝ 133%-ով, իսկ աշխատատեղերի ապահովման մասով՝ թերակատարվել, որը հետևանք է «Շողակն» ՓԲԸ աշխատատեղերի մասով պարտավորությունների թերակատարման (1330 աշխատատեղի փոխարեն ապահովվել է 978 աշխատատեղ), սակայն Վարչության կողմից պայմանագրային պարտավորությունները համարվել են կատարված:

Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային պարտավորությունները չեն կատարել ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված 13 ընկերությունների և պետական գույքի գնորդներ, որոնց ստանձնած ներդրումների ընդամուր գումարը կազմել է 219.7 մլն դրամ և 2.6 մլն ԱՄՆ դոլար, կամ հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների մոտ 29%-ը, ինչպես նաև չի ապահովվել մոտ 2430 աշխատատեղ (մոտ 34.9%):

Այսպիսով, հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պարտավորությունները չկատարած 21 ընկերությունների և պետական գույքի գնորդների կողմից չեն կատարվել 916.7 մլն դրամի և 4.3 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ, ինչպես նաև չի ստեղծվել մոտ 3550 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերությունների և պետական գույքի գնորդների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման վերաբերյալ քանակային և գումարային ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1 և 2-ում:

Աղյուսակ 1

Կատարված պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ

Մասնավորեցման ձևը	Պայմանագրերի քանակը	Մտանձնած պարտավորություններ					
		Մյն դրամ		Մյն ԱՄՆ դոլար		Աշխատատեղ	
		Ընդամենը	Կատարված	Ընդամենը	Կատարված	Ընդամենը	Ապահովված
Մրցույթ	72	848,5	1225,6	6,5	7,1	2700	3530
Ուղղակի վաճառք	49	643,3	1224,3	6,1	7,4	4520	4490
Ընդամենը	121	1491,7	2449,8	12,6	14,6	7220	8020

Աղյուսակ 2

Չկատարված պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ

Մասնավորեցման ձևը	Պայմանագրերի քանակը			Մտանձնած պարտավորություններ								
				Մյն դրամ			Մյն ԱՄՆ դոլար			Աշխատատեղ		
	Ընդ.	Պարտավ. չեն կատարել	%	Ընդ.	Չեն Կատարել	%	Ընդ.	Չեն Կատարել	%	Ընդ.	Չեն Ապահովվել	%
Մրցույթ	80	8	10,0	1545,5	697,0	45,1	8,2	1,7	20,3	3800	1100	28,9
Ուղղակի վաճառք	62	13	21,0	863,0	219,7	25,5	8,7	2,6	30,4	6970	2430	34,9
Ընդամենը	142	21	14,8	2408,5	916,7	38,1	16,9	4,3	25,5	10770	3530	32,8

Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պայմանագրային պարտավորությունները չկատարած գնորդների նկատմամբ Վարչության կողմից դատարաններ է ներկայացվել 15 հայցադիմում:

Դատարանների կողմից երեք գնորդներ ճանաչվել են անվճարունակ («ՀՀ ԳԱԱ-ի Սևանի հիդրոէկոլոգիայի և ձկնաբուծական ինիստիտուտ» ԱՇՕ-ի գնորդ «Ալկոն» ընկերությունը, «Երևանի ճանապարհների շինարարական» ՓԲԸ-ն և «Գյումրի ապակի» ՓԲԸ-ն): Վեց գնորդների նկատմամբ կայացվել են դատարանի վճիռներ և հարուցվել է կատարողական վարույթ: «Աստրա» ՀՁ ՓԲԸ-ի գնորդի նկատմամբ ներկայացված հայցը ՀՀ տնտեսական դատարանի որոշմամբ թողնվել է առանց քննության, մեկ այլ՝ «Եղվարդի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ-ի գնորդի նկատմամբ առկա է դատարանի որոշում՝ գործի վարույթը կասեցնելու և գնորդի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ, իսկ չորս գնորդների նկատմամբ դատարաններ ներկայացված գործերը ընթացքի մեջ են:

Դեռ 2002 թվականին Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով ներդրումային քաղաքականությունն արդյունավետ իրականացնելու համար կարևորվել էր ներդրումների (օտարերկրյա ներդրումների) մասին նոր օրենքի ընդունման հրատապությունը, ինչպես նաև առաջարկվել էր՝

- կանոնակարգել ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը.
- մասնավորեցման պայմանագրերում նախատեսել ներդրումների կառուցվածքի և ներդրվող միջոցների սահմանումը.
- մշակել ներդրումային պարտավորությունների կատարման վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների կարգը:

Առ այսօր ներդրումների մասին օրենք չի ընդունվել, իսկ «Պետական գույքի մասնավորեցման պայմանագրերում պարտավորությունների ամրագրման և դրանց կատարման վերահսկման գործընթացը կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարություն ներկայացված որոշման նախագիծը (Վարչության կողմից ներկայացվել է 2004թ. 2-րդ եռամսյակում) դեռևս ուժի մեջ չի մտել:

Հաշվետվությունը հաստատվել է ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 26.11.04թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ կառավարություն և ՀՀ տրանսպորտի
և կապի նախարարություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության համակարգում պետական մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման մասին

Վերահսկողության հիմքը - վերահսկողությունն իրականացվել է՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004թ. գործունեության ծրագրի 8-րդ կետի և Վերահսկիչ պալատի նախագահի 25.08.04թ. թիվ 104 հրամանի համաձայն:

Վերահսկողության նպատակը - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության համակարգում պետական մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից 2003թ. շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման գործընթացի ուսումնասիրություն:

Վերահսկողության օբյեկտը - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

Վերահսկողությունն իրականացնելիս ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը.

- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը,
- «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության 05.12.01թ. թիվ 1194 որոշումը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ներկայացված տեղեկատվությունը, հրամանները, առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունները:

Համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 03.05.04թ. թիվ 123-Ա հրամանի, Տրանսպորտի և կապի նախարարության (հետայսու՝ Նախարարություն) համակարգում առկա էին թվով 31 ընկերություններ, որոնց կողմից ներկայացվել էին տարեկան հաշվետվությունները: Ըստ Նախարարության ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության կողմից ներկայացված առևտրային կազմակերպությունների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության, 2003 թվականի տարեվերջին ընկերությունների թվաքանակը կազմել է 36: 5 ընկերություն գտնվում են լուծարային գործընթացում և Նախարարություն հաշվետվություններ չեն ներկայացրել:

Համակարգի թվով 31 ընկերություններից.

- ա) շահույթով աշխատած ընկերությունների թիվը՝ 12,
- բ) վնասով աշխատած ընկերությունների թիվը՝ 12,
- գ) դատարանի վճռով անվճարունակ ճանաչված ընկերությունների թիվը՝ 4,
- դ) շահույթ կամ վնաս չձևավորած ընկերությունների թիվը՝ 3:

ՀՀ կառավարության 05.12.01թ.՝ «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» թիվ 1194 որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ 50 տոկոսից ավելի պետության սեփականություն հանդիսացող ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե որպես շահութաբաժին վճարվում է պետության մասնակցության դիմաց ստացված զուտ շահույթի 20 տոկոսը:

Նախարարության համակարգի առևտրային կազմակերպությունների պարտքը շահութաբաժնի գծով 01.01.03թ. դրությամբ կազմել է 339,424.4 հազ. դրամ /հավելված/:

2002 և 2003թթ. գործունեության արդյունքներով շահութաբաժին է հաշվարկվել ևս 422,582.7 հազ. դրամ: 2003թ. ընթացքում համակարգի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարվել է 176,830.6 հազ. դրամ շահութաբաժին:

«Հայկական երկաթուղի» ՓԲ ընկերության 2002թ. արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով 172,641.8 հազ. դրամ պարտքի վերաբերյալ ընդունվել է ՀՀ կառավարության 09.09.04թ. թիվ 1407-Ա որոշումը, ըստ որի նշված շահութաբաժնի հաշվին մարվել է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 1999թ. օգոստոսի 19-ին կնքված համաձայնագրով ՌԴ- սահմանապահ զորքերի համար սպառազինության և գույքի փոխադրման գծով ընկերության հաշվեկշռում առկա 99,443.0 հազ. դրամ դեբիտորական պարտքը, իսկ մնացած 73,198.8 հազ. դրամի հաշվին՝ մինչև 2004թ. տարեվերջը ընկերության կողմից իրականացվելու է մինչև 20.0 հազ. տոննա բեռի փոխադրում՝ ՀՀ պաշտպանության նախարարության համար: Ընկերության 2003թ. արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով 44,966.4 հազ. դրամ պարտքը 04.11.04թ. դրությամբ մարվել է:

«Ռ-ադիո» և «Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲ ընկերությունների համապատասխանաբար՝ 57,075.0 և 127,583.9 հազ. դրամը 1998-2001թթ. արդյունքներով հաշվարկված շահութաբաժինների գծով պարտքերն են, որոնց զոյացման պատճառ է հանդիսացել հիմնականում պետական պատվերով կատարված աշխատանքների և մատուցած ծառայությունների դիմաց պետական բյուջեից համապատասխանաբար՝ 375,000.0 և 107,960.0 հազ. դրամ գումարի չափով թերֆինանսավորումը: Նշված ընկերությունները դիմել են դատարան, որի միջնորդությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ կնքվել են հաշտության պայմանագրեր, ըստ որոնց հաշվանցմամբ մարվել է «Ռ-ադիո» ՓԲԸ 57,075.0 հազ. դրամ պարտքն ամբողջությամբ, իսկ «Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲԸ պարտքից՝ 107,960.0 հազ. դրամը: Արդյունքում՝ «Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲԸ պարտքը շահութաբաժնի գծով 9,624.1 հազ. դրամ է:

«Կոնտակտ-մամուլ» ՓԲ ընկերությունը ՀՀ կառավարության 03.06.04թ.՝ «Հայաստանի Հանրապետության պետական գույքը մասնավորեցնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 16-ի N827 և 2003 թվականի հոկտեմբերի 23-ի N1491-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1288-Ն որոշմամբ բաժնետոմսերի ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է աշխատավորական կոլեկտիվի կողմից: Ընդ որում, ՀՀ կառավարության որոշման մեջ արտացոլված է շահութաբաժնի գծով պետական բյուջեի նկատմամբ ընկերության պարտքը՝ 5,449.2 հազ. դրամ գումարի չափով:

2004թ. ընթացքում համակարգի ընկերությունների կողմից շահութաբաժնի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվել է 94,533.1 հազ. դրամ, այդ թվում սույն ուսումնասիրությունն ընդգրկող ժամանակահատվածում՝ 55,739.0, և աճողական պարտքը 04.11.04թ. դրությամբ կազմել է 147,517.4 հազ. դրամ, որից.

- ա) «Հայփոստ» ՓԲԸ՝ 127,945.2 հազ. դրամ (86.8%),
- բ) «Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲԸ՝ 9,624.1 հազ. դրամ (6.5%),
- գ) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ՝ 5,502.8 հազ. դրամ (3.7%),
- դ) «Նամակահիշ» ՓԲԸ՝ 4,445.3 հազ. դրամ (3.0%):

Ինչպես երևում է ներկայացրած տվյալներից, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ շահութաբաժնի գծով պարտքի գերակշիռ մասը «Հայփոստ» ՓԲ ընկերությանն է՝ 127,945.2 հազ. դրամ, որն առաջացել է 1999 թվականից: Նշված պարտքի առաջացման պատճառ է հանդիսացել ընկերության մշտական ֆինանսական ճեղքվածքի առկայությունը, որը պայմանավորված է միջազգային փոստափոխանակության կանոնների և ՀՀ գործող օրենսդրության միջև առկա հակասությամբ:

Այսպես՝

Հայաստանի Հանրապետության Փոստային տնօրինության և Համաշխարհային Փոստային Միության անդամ երկրների միջև միջազգային փոստափոխանակման հաշվարկները կատարվում են Համաշխարհային Փոստային Միության Կոնվենցիային համապատասխան, համաձայն որի «Կրեդիտոր» երկրի տնօրենությունը կազմում է տարեկան հաշիվներ և ներկայացնում «Գեբիտոր» երկրին: Նշված ժամանակահատվածին հաջորդող 12 ամիսների ընթացքում ներկայացված հաշիվները համարվում են հաստատված, եթե հաշիվն ուղարկելուց հետո, 3 ամսվա ընթացքում «Գեբիտոր» երկրից պատասխան չի ստացվել, վճարումները կատարվում են՝ համաձայն երկկողմ տարեկան հաշիվների հաստատման օրվանից՝ վեց շաբաթվա ընթացքում: Միջազգային ծանրոցների փոխհաշվարկը կատարվում է Համաշխարհային Փոստային Միության Ծանրոցների մասին Գործադիր Կանոնակարգի՝ վերը նշված Նամակագրական թղթակցության փոխհաշվարկի կատարման համանմանությամբ, կամ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից միջազգային փոստային փոխադրումների (նամակագրական և ծանրոցների) համար մատուցված ծառայությունների դիմաց վճարումները (ինչպես նաև կատարված ծախսերի փոխհատուցումը) կատարվում են մոտ 16 ամիս հետո (1 տարի +3 ամիս + 6 շաբաթ), սակայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջների համաձայն, «Հայփոստ» ՓԲ ընկերությունն անցել է շահույթի

հաշվառման հաշվեգրման եղանակի, որի արդյունքում որպես եկամուտ է ձևակերպվել միջազգային փոխհաշվարկի՝ նախորդ տարիների համար հաստատված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի տարբերությունը:

Նման կարգով «Հայփոստ» ՓԲԸ-ի միջազգային փոխհաշվարկի գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքերի տարբերությունը 2002թվականի հունվարի 1-ի դրությամբ համապատասխանաբար կազմել է՝ 227,791.0 հազ. դրամ, 2003թվականի հունվարի 1-ի՝ 110,235.0 հազ. դրամ և 2004 թվականի հունվարի 1-ի՝ 61,667.0 հազ. դրամ, որի հետևանքով «Հայփոստ» ՓԲ ընկերությունում մշտապես առկա է եղել դրամական միջոցների պակաս:

Առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ներքին վերահսկողության արդյունավետությունը պարզելու նպատակով ուսումնասիրվել է բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների կողմից ընկերությունների տարեկան ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 91) արդյունքում կազմվող եզրակացություններում զետեղված տեղեկատվությունը: Նախարարության համակարգի թվով 31 ընկերություններից միայն 6-ը (շուրջ 20%) ներկայացրեցին վերստուգող հանձնաժողովների 2003թ. տարեկան եզրակացությունները: Եզրակացություններն ուսումնասիրելիս պարզվել է, որ ստուգումները մակերեսային բնույթ են կրել և հիմնականում վերաբերել են Նախարարության կողմից հաստատված բաժնետիրական ընկերությունների 2003թ. տարեկան նախահաշիվների կատարողականների վերլուծությանը:

Նախարարության ղեկավարությունը ս/թ նոյեմբերի 22-ին ծանոթացել է վերահսկողության արդյունքներին և առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարության կողմից բավարար աշխատանքներ չեն իրականացվել համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, չի ստեղծվել առանձնացված ստորաբաժանում՝ ՀՀ վարչապետի 17.05.2001թ.՝ «Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն կազմակերպելու մասին» թիվ 373 որոշման կատարումն ապահովելու նպատակով:
2. Նախարարության ընկերությունների կողմից չեն ապահովվել ՀՀ պետական բյուջե 147.5 մլն դրամ շահութաբաժնի գծով պարտավորությունների ժամանակին և լրիվ չափով վճարումները:
3. Ոչ բոլոր ընկերություններն են ապահովել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածով սահմանված պահանջը, որի համաձայն ընկերությունների

վերստուգող հանձնաժողովների կողմից յուրաքանչյուր տարի պետք է իրականացվի ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը՝

1. ՀՀ կառավարության 05.12.2001թ.՝ «Պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքները կազմակերպելու մասին» թիվ 1194 որոշման մեջ կատարել փոփոխություն, այն է՝ շահութաբաժնի գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների ժամանակին և լրիվ չափով չկատարման դեպքում ընկերությունների նկատմամբ կիրառել տույժ՝ յուրաքանչյուր ուշացած օրվա դիմաց, որը կնպաստի ինչպես ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, այնպես էլ՝ ընկերությունների կողմից պատասխանատվության բարձրացմանը:

2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝

- Նախարարության կողմից իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ պետական մասնակցությամբ ընկերություններում պետական բաժնեմասի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

- Ապահովվել ՀՀ Վարչապետի 17.05.2001թ. թիվ 373 որոշման կատարումը և ապառքների ժամանակին մարումը:

3. Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

**ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության համակարգի առևտրային կազմակերպությունների
շահութաբաժինների գծով պարտավորությունների վերաբերյալ**

Հ/Հ	Ընկերության անվանումը	Աճողական պարտքը առ 01.01.03թ	Հաշվարկվել է շահութաբաժին		Վճարվել է ՀՀ պետական բյուջե 2003թ. ընթացքում		Վճարվել է ՀՀ պետական բյուջե 2004թ. ընթացքում		Աճողական պարտքը առ 04.11.04թ ¹
			2002թ.	2003թ.	գումարը	փոխանցման ամսաթիվը	գումարը	փոխանցման ամսաթիվը	
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	«Հայկական երկաթուղի» ՓԲԸ	-	222,641.8	44,966.4	50,000.0	30.12.03թ.	966.4 20,000.0 24,000.0	04.11.04թ. 02.11.04թ. 03.11.04թ.	00 (172,641.8 հազ.դրամը ՀՀ կառ. 09.09.04թ. թիվ 1407-Ա որոշմամբ զիջվել է)
2.	«Հայփոստ» ՓԲԸ	114,935.7	-	13,009.5	-	-	-	-	127,945.2
3.	«Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲԸ	127,583.9	26,423.2	1,224.8	10,000.0 10,000.0 16,423.0	08.01.03թ. 08.12.03թ. 30.12.03թ.	1,224.8	28.04.04թ.	9,624.1 107,960.0 հազ. դրամի պարտքը հաշվանցվել է (հիմք` ՀՀ ֆին. և էկ. նախ. 29.10.04թ. թիվ 7 /4-12-12955 գրությունը)
4.	«Ռ-ադիո» ՓԲԸ	57,075.0	30,428.6	20,535.4	30,428.6	02.12.03թ.	10,000.0 10,535.4	17.08.04թ. 09.09.04թ.	00 57,075.0 հազ. դրամի պարտքը հաշվանցվել է (հիմք` ՀՀ ֆին. և էկ. նախ. 29.10.04թ. թիվ 7 /4-12-12955 գրությունը)
5.	«Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ	26,228.8	43,558.4	9,502.2	15,000.0 5,000.0 726.0 10,000.0 10,000.0 10,000.0	18.02.03թ. 27.02.03թ. 17.04.03թ. 12.09.03թ. 21.11.03թ. 25.12.03թ.	5,500.0 8,058.0 6,000.0 3,502.6	08.01.04թ. 27.01.04թ. 05.10.04թ. 25.10.04թ.	5,502.8

1	2	3	4	5	6	7	8	9	10
6.	«Նամականիշ» ՓԲԸ	3,748.1	3,841.0	1,388.8	500.0 1,000.0 482.6 1,000.0 500.0	13.01.03թ. 17.01.03թ. 30.01.03թ. 23.10.03թ. 19.11.03թ.	350.0 500.0 200.0	16.09.04թ. 21.09.04թ. 13.10.04թ.	4,445.3
7.	«Կոնտակտ-մամուլ» ՓԲԸ	5,449.2	-	-	-	-	-	-	ՀՀ կառ. 03.06.04թ. թիվ 1288-Ն որոշմամբ սեփականաշնորհվել է
8.	«Հատուկ կապ» ՓԲԸ	242.9	1,609.6	1,583.6	300.0 1,309.6	12.08.03թ. 03.09.03թ.	503.6 70.0 1,000.0 100.0 152.9	08.09.04թ. 11.10.04թ. 21.10.04թ. 27.10.98թ. 17.12.99թ.	00
9.	«Հայավտոճան» ՓԲԸ	-	-	613.4	-	-	613.4	08.07.04թ.	00
10.	«Հայավտոկայարան» ՓԲԸ	3,258.0	-	1,256.0	258.0 500.0 500.0 500.0 500.0 500.0	12.08.03թ. 30.08.03թ. 10.09.03թ. 11.09.03թ. 12.09.03թ. 18.09.03թ. 19.09.03թ.	300.0 200.0 200.0 300.0 256.0	31.08.04թ. 03.09.04թ. 14.09.04թ. 06.09.04թ. 07.09.04թ.	00
11.	«Հայճանմեքենայացում» ՓԲԸ	902.8	-	-	902.8	30.06.03թ.	-	-	00
Ընդամենը		339,424.4	328,502.6	94,080.1	176,830. 6		94,533.1		147,517.4

1 «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2003թ. արդյունքներով շահութաբաժինների վճարման վերջնաժամկետ է սահմանված 2004թ. սեպտեմբերի 30-ը

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 16.06.04թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ կառավարություն և ՀՀ առևտրի և
տնտեսական զարգացման նախարարություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգում պետական մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման մասին

Վերահսկողության հիմքը՝ վերահսկողությունն իրականացվել է՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004թ. գործունեության ծրագրի 8-րդ կետի և Վերահսկիչ պալատի նախագահի 02.04.04թ. թիվ 76 հրամանի համաձայն:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգում պետական մասնակցությամբ գործող կազմակերպությունների կողմից 2001-2003թթ. շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման գործընթացի ուսումնասիրություն:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն:

Վերահսկողությունն իրականացնելիս ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը.

- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը,
- «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության 05.12.01թ. թիվ 1194 որոշումը,
- «Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն կազմակերպելու մասին» ՀՀ Վարչապետի 17.05.01թ. թիվ 373 որոշումը,
- ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից ներկայացված փաստաթղթեր, հրամաններ:

2001-2003թթ. ընթացքում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համակարգի 50%-ից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից շահութաբաժինների հաշվարկման և ՀՀ պետական բյուջե վճարման գործընթացը կազմակերպվել է 2001թ. սեպտեմբերի 25-ին ընդունված՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 05.12.2001թ.՝ «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» թիվ 1194 որոշման հիման վրա:

20.02.01թ. դրությամբ Նախարարության համակարգում առկա են եղել պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող թվով 239 ընկերություններ: 13.06.02թ. դրությամբ Նախարարության համակարգում ավելացել են ևս 26 ընկերություններ: Նույն ժամանակահատվածում մասնավորեցվել, լուծարվել կամ այլ համակարգի տնօրինությանն են հանձնվել թվով 43 ընկերություններ (հավելված 1):

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 20.02.01թ. թիվ 53 հրամանով Ընկերությունների կողմից 2001թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ժամկետ է սահմանվել 2002 թվականի առաջին եռամսյակը: 221 ընկերություններից 2001թ. տարեկան ֆինանսական հաշվետվություններ են ներկայացրել 139 ընկերություններ (62.9%), որոնցից 131-ը՝ 50%-ից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններ (այսուհետ՝ ընկերություններ):

ՀՀ կառավարության 05.12.2001թ. N1194 որոշմամբ՝ 50%-ից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում բաժնետերերի ընդհանուր ժողովների քվեարկմանն ու հաստատմանն է դրվել պետական մասնակցության դիմաց ստացված գուտ շահույթի 20%-ը, որպես տարեկան շահութաբաժին ՀՀ պետական բյուջե վճարելու հարցը :

Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, շահութաբաժին վճարող են հանդիսացել 4 ընկերություններ՝ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ՝ 702.8 հազ. դրամ, «Երևանի ավտոմատ կառավարման համակարգեր Գ-ՀԻ» ՓԲԸ՝ 632.6 հազ. դրամ, «Երևանի կապի միջոցներ Գ-ՀԻ» ՓԲԸ՝ 5,166.4 հազ. դրամ և «Քիմտեխ» Քիմտեխնոլոգիական Գ-ՀԻ ՓԲԸ՝ 2,190.2 հազ. դրամ: Ընդամենը՝ 8,692.0 հազ. դրամ գումարով:

ՀՀ կառավարության՝ «ՀՀ 2002թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 25.02.02թ. թիվ 172 որոշման 19.1 կետի բ/ ենթակետով, 2001թվականի գործունեության արդյունքներով ընկերությունների կողմից շահութաբաժինների վճարման վերջնաժամկետ էր սահմանվել 2002թ. սեպտեմբերի 20-ը:

Ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ համակարգի ընկերությունների կողմից 2002թ. պետական բյուջե շահութաբաժնի գծով պետք է վճարվեր 8,692.0 հազ. դրամ, սակայն փաստացի վճարվել է 1,335.4 հազ. դրամ կամ 15.4%: Ապառքը կազմել է 7,356.6 հազ. դրամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կառավարմանը վերապահված ընկերությունների կողմից 2002թ. (2001թ. արդյունքներով) ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների հաշվարկման և փաստացի փոխանցման վերաբերյալ

Հ/Հ	Ընկերության անվանումը	Շահութա բաժնի հաշվարկը	Փաստացի փոխանցումը		Ապառքը 31.12.02թ. դրությամբ
			գումար	ամսաթիվ	
1.	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	702.8	702.8	04.04.02թ.	-

հազ. դրամ

2.	«Քիմտեխ» քիմտեխնոլոգիական ԳՀԻ ՓԲԸ	2,190.2	-	-	2,190.2
3.	«Երևանի ավտոմատ կառավարման համ-րի ԳՀԻ» ՓԲԸ	632.6	632.6	24.09.02	-
4.	«Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ	5,166.4	-	-	5,166.4
Ընդամենը		8,692.0	1,335.4	-	7,356.6

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 13.06.02թ. թիվ 69 հրամանով՝ Նախարարության համակարգում գործել է պետական մասնակցությամբ թվով 221 ընկերություն: 12.02.03թ. դրությամբ համակարգում ավելացել է 8 ընկերություն, մասնավորեցվել կամ այլ համակարգի տնօրինությանն է հանձնվել 96 ընկերություն, վերակազմավորվել է (երկուսի միաձուլմամբ) 1 ընկերություն, լուծարվել է 7-ը: Տարեկան ֆինանսական հաշվետվություններ պետք է ներկայացնեին 125 ընկերություններ, որոնցից ներկայացրել են 84-ը կամ 67,2%-ը:

Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, շահութաբաժին վճարող են հանդիսացել 8 ընկերություն՝ «Ռ-ազմականացված լեռնափրկարար զորամասերի շտաբ» ՓԲԸ՝ 4,181.2 հազ. դրամ, «Երևանի ավտոմատ կառավարման համակարգեր ԳՀԻ» ՓԲԸ՝ 478.9 հազ. դրամ, «Երևանի մաքնմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ՝ 1,694.2 հազ. դրամ, «Անի-էլեկտրոնիկա» ԲԲԸ՝ 845.0 հազ. դրամ, «Երևան-թեսթ» ՓԲԸ՝ 659.2 հազ. դրամ, «Օկտան-թեսթ» ՓԲԸ՝ 2,346.6 հազ. դրամ, «Կապան-թեսթ» ՓԲԸ՝ 1,079.0 հազ. դրամ, «Չափագետ» ՓԲԸ՝ 8,04.0 հազ. դրամ: Շահութաբաժին մասով ընդամենը ենթակա էր փոխանցել պետ. բյուջե 12,088.1 հազ. դրամ: Սակայն կառավարության 07.03.03թ. թիվ 344-Ա որոշմամբ «Երևանի ավտոմատ կառավարման համակարգեր ԳՀԻ» ՓԲ ընկերության բաժնեմասերի կառավարումը սեփականության իրավունքով անցել է Ռուսաստանի Դաշնությանը (վճարման ենթակա շահութաբաժինը՝ 478.9 հազ. դրամ), իսկ ՀՀ կառավարության 15.05.03թ. թիվ 615-Ն որոշմամբ «Անի-էլեկտրոնիկա» ԲԲ ընկերությունը անցել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը (շահութաբաժինը՝ 845.0 հազ. դրամ): 2002թ. տարեկան արդյունքներով պետական բյուջե վճարման ենթակա էր 10,764.2 հազ. դրամ: Փաստացի վճարվել է 6,538.8 հազ. դրամ, կամ 60.7%-ը: Բացի այդ, Ընկերությունների նախորդ տարվա գործունեության արդյունքում առաջացած 7,356.6 հազ. դրամ ապառքից մարվել է 5,166.4 հազ. դրամը: Ընդամենը ապառքը 2002 թվականի տարեվերջին կազմել է 6,415.6 հազ. դրամ (աղյուսակ 2):

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կառավարմանը վերապահված ընկերությունների կողմից 2003թ. (2002թ. արդյունքներով) ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների հաշվարկման և փաստացի փոխանցման վերաբերյալ

Հ/Հ	Ընկերության անվանումը	Ապառքը 01.01.03թ դրությամբ	Շահութա բաժնի հաշվարկը	Փաստացի փոխանցումը		Ապառքը 31.12.02թ. դրությամբ
				գումար	ամսաթիվ	
1.	«Քիմտեխ» քիմտեխնոլոգիական զ-ՀԻ» ՓԲԸ	2,190.2	-	-	-	2,190.2
2.	«Երևանի կապի միջոցներ զ-ՀԻ» ՓԲԸ	5,166.4	-	5,166.4	24.01.03թ.	-
3.	«Ռ-ազմականացված լեռնափրկարար զորամասերի շտաբ» ՓԲԸ	-	4,181.2	1,650.0	03.12.03թ.	2531.2
4.	«Երևանի ավտոմատ կառավարման համակարգեր զ-ՀԻ» ՓԲԸ	-	478.9 ¹	-	-	-
5.	«Երևանի մաթեմաթիկական մեքենաների գ-ն» ՓԲԸ	-	1,694.2	-	-	1,694.2
6.	«Անի-Էլեկտրոնիկա» ԲԲԸ	-	845.0 ²	-	-	-
7.	«Երևան-Թեստ» ՓԲԸ	-	659.2	659.2	24.11.03թ.	-
8.	«Օկտան-Թեստ» ՓԲԸ	-	2,346.6	2,346.6	29.05.03թ.	-
9.	«Կասպան-Թեստ» ՓԲԸ	-	1,079.0	1,079.0	11.06.03թ.	-
10.	« Չափագետ» ՓԲԸ	-	804.0	804.0	25.09.03թ.	-
Ընդամենը		7,356.6	10,764.2	11705.2		6,415.6

¹ Կառավարության 07.03.03թ. թիվ 344-Ա որոշմամբ անցել է Ռ-Գ կառավարմանը

² Կառավարության 15.05.03թ. թիվ 615-Ն որոշմամբ անցել է ԿԱ ՊԳ-Կ վարչությանը

Նախարարության որոշ ընկերությունների կողմից չի ապահովվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջը, այն է .

« 3. Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը»: Այսպես՝ օրենքի պահանջը կատարելու դեպքում.

ա) «Գավիթ առևտրի տուն» ՓԲ ընկերության (պետական բաժնեմասը՝ 57%) կողմից 2002 թվականին շահութաբաժնի գծով կհաշվարկվեր և պետական բյուջե կմուտքագրվեր 15,140.0 հազ. դրամ:

բ) «Գյուղմեքենայացման և էլեկտրաֆիկացման զ-ՀԻ» ՓԲ ընկերության կողմից՝ 994.6 հազ. դրամ (աղյուսակ 3):

«Գավիթ առևտրի տուն» և «Գյուղմեքենայացման և էլեկտրիֆիկացման Գ-ՀԻ» ՓԲ
ընկերությունների 2000-2002թթ. կանոնադրական կապիտալի, զուտ ակտիվների և զուտ շահույթի
ցուցանիշները

	Կազմակերպության անվանումը	2000թ.			2001թ.			2002թ.			2002թ. կանոնադրական կապիտալի հաշվարկային մեծությունը (նախորդ տարվա զուտ ակտիվներ)	2002թ. տարեկան արդյունքներով պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի հաշվարկային մեծությունը (սյուն 10x20% <=> սյուն 9- սյուն 11) *
		Կանոնադրական կապիտալ	Չուտ ակտիվներ	Չուտ շահույթ	Կանոնադրական կապիտալ	Չուտ ակտիվներ	Չուտ շահույթ	Կանոնադրական կապիտալ	Չուտ ակտիվներ	Չուտ շահույթ		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	« Գավիթ առևտրի տուն» ՓԲԸ	1,050.0	- 782,947.0	- 255,775.0	1,050.0	- 761,272.0	21,675.0	1,050.0	15,240.0	776,512.0	100.0	15,140.0
2	«Գյուղմեքենայացման և էլեկտրիֆիկացման Գ-ՀԻ» ՓԲԸ	11,349.0	6,742.0	-1,805.0	11,349.0	5,262.0	-1,480.0	11,349.0	10,235.0	4,973.0	5,262.0	994.6
Ընդամենը												16,134.6

* «Բաժնետիրական ընկերությունների մասին » ՀՀ օրենքի 50 հոդվածի 1 կետով սահմանվում է, որ շահութաբաժնի հաշվարկումը և վճարումը չպետք է հանգեցնի զուտ ակտիվների նվազեցմանը՝ կանոնադրական կապիտալից, նույն օրենքի 30 հոդվածի 3 կետով ՓԲ ընկերությունների համար նվազագույն կանոնադրական կապիտալը=100.0 հազ. դրամ:

Բացի այդ, 2002 թվականին 24 ընկերություններ չեն ապահովել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի տվյալ դրույթը, որը չի հանգեցրել շահութաբաժնի գծով պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների առաջացմանը (հավելված 2), քանի որ դրանք աշխատել են վնասով կամ տարեկան շահույթը կազմել է մինչև 3 մլն դրամ:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.02.03թ. թիվ 22 հրամանով, Նախարարության համակարգում գործել է թվով 125 ընկերություն: Տարվա ընթացքում մասնավորեցվել կամ այլ համակարգի տնօրինությանն է հանձնվել 24 ընկերություն, լուծարվել է 2-ը, վերակազմավորվել է 1-ը (երկուսի միաձուլմամբ): Տարեվերջի դրությամբ Նախարարության համակարգում մնացել էր 98 ընկերություն, որոնցից տարեկան հաշվետվություններ ներկայացրել են 52-ը կամ 53.1%-ը: Հաշվետվություններ չեն ներկայացրել 46 ընկերություններ, որոնցից 40-ը գտնվել են լուծարման և սնանկացման գործընթացում: Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, շահութաբաժին վճարող են հանդիսացել 6 ընկերություն՝ 10,353.1 հազ. դրամ գումարի չափով: 25.05.04թ. դրությամբ պետական բյուջե վճարվել է 5,027.1 հազ. դրամ: «Ուսումնականացված լեռնափրկարար գործառնատերի շտաբ» ՓԲ ընկերության կողմից մարվել է նաև նախորդ տարվա գործունեության արդյունքում առաջացած պարտքը՝ 2,531.2 հազ. դրամ գումարի չափով (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կառավարմանը վերապահված ընկերությունների կողմից 2004թ. (2003թ. արդյունքներով) ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների հաշվարկման և փաստացի փոխանցման վերաբերյալ (25.05.04թ. դրությամբ)

հազ. դրամ

Հ/Հ	Ընկերության անվանումը	Ապառքը 01.01.04թ. դրությամբ	Շահութա բաժնի հաշվարկը	Փաստացի փոխանցումը		Ապառքը 31.12.02թ. դրությամբ
				գումար	ամսաթիվ	
1.	«Ուսումնականացված լեռնափրկարար գործառնատերի շտաբ» ՓԲԸ	2,531.2	1,390.6	3,921.8	17.05.04թ.	-
2.	«Դավիթ առևտրի տուն» ՓԲԸ	-	475.9	475.9	13.04.04թ.	-
3.	«Օկտան-թեսթ» ՓԲԸ	-	3,567.6	1,567.6	13.04.04թ.	2,000.0
4.	«Կապան-թեսթ» ՓԲԸ	-	1,083.0	1,083.0	23.03.04թ.	-
5.	«Չափագետ» ՓԲԸ	-	2,626.6	-	-	2,626.6
6.	«Ստանդարտների և որակի ազգային ինստիտուտ» ՓԲԸ	-	1,209.4	510.0	24.05.04թ.	699.4
7.	«Բիմտեխ» քիմտեխնոլոգիական ԳՀԻ» ՓԲԸ	2,190.2	-	-	-	2,190.2
8.	«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ	1,694.2	-	-	-	1,694.2
Ընդամենը		6,415.6	10,353.1	7,558.3		9,210.4

Ընդամենը համակարգի Ընկերությունների շահութաբաժնի պարտքը 25.05.04թ. դրությամբ կազմել է 10,812.9 հազ. դրամ, որից՝ 1,602.5 հազ. դրամը՝ 1999թ. տարեկան արդյունքներով:

2003թ. արդյունքներով (վճարումը՝ 2004 թվականին) «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ կողմից պետական բյուջե կարող էր վճարվել շահութաբաժնի գծով 1,001,755.4 հազ. դրամ, սակայն ՀՀ կառավարության 11.12.2003թ. թիվ 1641-Ն որոշմամբ ընկերությունը ազատվել է 2003թ. զուտ շահույթից պետական բաժնեմասի դիմաց շահութաբաժնի վճարումից և սահմանվել են զուտ շահույթի օգտագործման այլ ուղղություններ:

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը տեղեկատվություն է տրամադրել 2001-2003թթ. Նախարարության համակարգի ընկերությունների կողմից ներկայացված տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների վերաբերյալ: Սակայն 2001թ. տեղեկատվությունը ամբողջովին չի տրամադրվել, պատճառաբանելով, որ տեղեկատվական բազայում բացակայում են տվյալները, իսկ 2002 և 2003թթ. տեղեկատվությունը թերի է:

ՀՀ արդարադատության նախարարությունը 19.04.04թ. թիվ 3-2/0550 գրությամբ տրամադրել է 15.04.2004թ. դրությամբ պետական միասնական գրամատյանում առկա պետական բաժնեմաս ունեցող բաց և փակ բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ տեղեկատվություն, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Նախարարության հաշվառումից դուրս է մնացել 4 ընկերություն (աղյուսակ 5):

Աղյուսակ 5
հազ. դրամ

Հ/Հ	Ընկերության անվանումը	Պետոեզիստրի գրանցման N-ը	%	Կապիտալ
1.	«Ինֆոֆայլ» ԲԲԸ	286 140 00336851	100%	350.0
2.	«Ռադիոէլեկտրոնիկա-սերվիս» ՓԲԸ	264 120 01239	80%	16.4
3.	«Սյունիք -1» ՓԲԸ	278 120 01162	80%	73.1
4.	«Հատուկ շինտեղակայում» ՓԲԸ	38 120 00536	80%	1,354.0

Նախարարության կողմից բավարար աշխատանքներ չեն իրականացվել պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների պետական բաժնեմասի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Մասնավորապես, չի ապահովվել ՀՀ վարչապետի՝ «Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն կազմակերպելու մասին» 17.05.01թ. թիվ 373 որոշման կատարումը: Համաձայն այդ որոշման 2-րդ կետի, նախարարության կողմից 2001 թվականի մայիսի 1-ից պետական մասնակցությամբ բոլոր առևտրային կազմակերպություններում պետք է իրականացվեին ֆինանսատնտեսական վիճակի պարբերական դիտարկումներ և վերլուծություն՝ եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ ՀՀ

ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված ձևերին համապատասխան, ինչը, սակայն, չի կատարվել: Նախարարության կողմից իրականացվել են միայն ֆինանսական ելակետային տվյալների հավաքագրում (այն էլ՝ ոչ բոլոր ընկերությունների մասով) և կազմակերպվել են ընկերությունների գործունեության քննարկումներ՝ հաշվեկշռային լումաներ:

Վերահսկողության ընթացքում 2004թ. ապրիլ-մայիս ամիսներին շահութաբաժնի գծով ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 7,500.0 հազ. դրամ, որից 2,531.2 հազ. դրամը՝ նախորդ տարիների գործունեության արդյունքում շահութաբաժնի գծով առաջացած ապառքն է:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ղեկավարությունը ա/թ հունիսի 8-ին ծանոթացել է վերահսկողության արդյունքներին և առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Համակարգի որոշ ընկերությունների կողմից չի ապահովվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջը, այն է.

« Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը»:

2. Նախարարության կողմից չի ապահովվել ՀՀ վարչապետի 17.05.2001թ.՝ «Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն կազմակերպելու մասին» թիվ 373 որոշման 2-րդ կետով սահմանված պահանջը:

3. Համակարգի ընկերությունների կողմից 2001-2002թթ. չեն ապահովվել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի համապատասխան հրամանները՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններ չեն ներկայացրել ընկերությունների շուրջ 1/3-ը:

4. Ըստ պետական ռեգիստրի միասնական գրամատյանի տվյալների՝ համակարգի թվով 4 ընկերություններ դուրս են մնացել հաշվառումից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ կառավարությանը՝

ՀՀ կառավարության 05.12.2001թ.՝ «Պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքները

կազմակերպելու մասին» թիվ 1194 որոշման ա և բ կետերում՝ կատարել փոփոխություններ, այն է. սահմանել պետության մասնակցության դիմաց ստացված զուտ շահույթի նկատմամբ «լողացող» տոկոսադրույք և բաժնետերերի ընդհանուր ժողովներում քվեարկության դնել նաև տնտեսական գործունեության արդյունքներով մինչև 3 մլն դրամ զուտ շահույթից ՀՀ պետական բյուջե շահութաբաժին վճարելու հարցը, որը կնպաստի ինչպես ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, այնպես էլ՝ ընկերությունների նկատմամբ համահարթեցման սկզբունքի արդյունավետ կիրառմանը:

2. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը

Նախարարության կողմից աշխատանքներ ծավալել և ձեռնարկել միջոցառումներ պետական մասնակցությամբ ընկերություններում պետական բաժնեմասի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Այսպես ՀՀ Վարչապետի 17.05.2001թ.՝ «Հայաստանի Հանրապետության նախարարությունների ու գերատեսչությունների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն կազմակերպելու մասին» թիվ 373 որոշման կատարումը:

Հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ
պալատի խորհրդի 30.06.2004թ. նիստում:
Ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ կառավարություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման գործընթացի մասին

Վերահսկողության հիմքը՝ Վերահսկողությունն իրականացվել է՝ «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, ՀՀ Ազգային ժողովի 2003 թվականի դեկտեմբերի 3-ի Ն-062-3 որոշմամբ հաստատված՝ ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրին և ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի 12.03.2004թ. N63 հրամանին համապատասխան: Ուսումնասիրությունն ընդգրկել է 01.01.2001-01.01.2003թթ. ժամանակաշրջանը (այսուհետ՝ Հաշվետու ժամանակաշրջան):

Վերահսկողության նպատակը՝ Անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման գործընթացի ուսումնասիրությունը:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Վերահսկողությունն իրականացվել է՝ «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» (այսուհետ՝ Մասնավորեցման օրենք), «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000թթ. ծրագրի կատարման հաշվետվության մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» (այսուհետ՝ Ծրագիր) ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, նորմատիվ ակտերի և ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության՝ հետազայում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից ներկայացված փաստաթղթերի վերլուծության հիման վրա:

Համաձայն պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման 1995թ. և 1996-1997թթ. ծրագրերի առաջադրանքների, սեփականաշնորհման ենթակա անավարտ շինարարության օբյեկտների (այսուհետ՝ ԱՇՕ) թիվը 1995թ. ծրագրով կազմել էր 695, իսկ 1996-1997թթ.՝ 395 անավարտ բնակելի շինարարություններ, ինչպես նաև ծրագրի 2-րդ հոդվածով սահմանվել էր, որ բոլոր ԱՇՕ-ներն ընդգրկված են ծրագրում: Հետագայում ՀՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000թթ. ծրագրով ևս սահմանվել էր, որ «Անավարտ շինարարության բոլոր օբյեկտները ... համարվում են ծրագրում ընդգրկված», իսկ 2001-2003թթ. ծրագրով ԱՇՕ-ները համարվում են ծրագրի մաս և ենթակա են մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին » ՀՀ օրենքով սահմանված ձևերով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հանրապետությունում ԱՇՕ-ների մասնավորեցումն իրականացվել է բավական դանդաղ, մինչդեռ համաձայն 1998-2000թթ. և 2001-2003թթ. ծրագրերի մասնավորեցվող պետական գույքի ընտրության սկզբունքներով սահմանվել էր. «... արտադրական և սոցիալական բնույթի անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումն ավարտելը»: Հիմք ընդունելով ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված տվյալները և ՀՀ քաղաքաշինության նախարարության մասնագիտական խմբերի կողմից կատարված ուսումնասիրությունները պետական սեփականություն հանդիսացող ԱՇՕ-ների հետ կապված հիմնախնդիրները կանոնակարգելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են որոշումներ, որոնցով հաստատվել են պետական սեփականություն հանդիսացող անավարտ շինարարության բնակելի և հասարակական նշանակության օբյեկտների հետագա օգտագործման միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ ԱՇՕ-ների Ծրագիր) և ժամանակացույցը: Մասնավորապես ՀՀ կառավարության 28.11.02թ. N 2051-Ն որոշմամբ սահմանվել է, որ՝ «...պետական սեփականություն հանդիսացող անավարտ շինարարության բնակելի և հասարակական նշանակության օբյեկտները մասնավորեցվում (օտարվում) են օրենքով սահմանված կարգով՝ սահմանելով դրանց հետագա նպատակային նշանակության պահպանման և օգտագործման վերաբերյալ պայմանները», ինչպես նաև այդ օբյեկտների գնորդները պարտավոր են սահմանված պայմաններով և ժամկետներում մշակել (վերամշակել) նշված օբյեկտի նախագծահաշվային փաստաթղթերը և իրականացնել շինարարական աշխատանքները, իսկ այն դեպքում, երբ մասնավորեցվող (օտարվող) ԱՇՕ-ների հետագա օգտագործումը նախագծային նպատակային նշանակությամբ հեռանկարաձային չէ, մասնավորեցման (օտարման) ժամանակ ՀՀ կառավարության որոշմամբ, ըստ անհրաժեշտության, կարող է փոփոխվել օբյեկտի նպատակային նշանակությունը՝ տվյալ բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան:

Ըստ ԱՇՕ-ների Ծրագրի՝ ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են, որ ԱՇՕ-ների գերակշիռ մասը շինարարության դադարեցումից հետո սահմանված կարգով չեն կոնսերվացվել, մեծ մասամբ կորցրել են նախագծային ամրությունն ու հուսալիությունը, և այդ պայմաններում դրանց հետագա օգտագործման խնդիրների լուծումը պահանջում է առաջնահերթ և առանձնակի ուշադրություն: ԱՇՕ-ների Ծրագրի հիմնական խնդիրներն են՝ ԱՇՕ-ների հաշվառումը, դրանց առկա վիճակի արձանագրումը, հետագա օգտագործման դասակարգումը և ԱՇՕ-ների Ծրագրի իրականացումից ակնկալվում է արագացնել դրանց մասնավորեցման (օտարման) գործընթացը: Կատարված ուսումնասիրությունների արդյունքներով ԱՇՕ-ների Ծրագրում ընդգրկվել է 2038 անավարտ օբյեկտ, այդ թվում՝ 335-ը առաջարկվել է մասնավորեցնել կամ օտարել: Անավարտ շինարարության օբյեկտների վերաբերյալ ամփոփ տվյալներն արտացոլված են հավելված 1-ում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ կառավարության ինչպես վերոհիշյալ, այնպես էլ հետագայում ընդունված անավարտ շինարարության օբյեկտների մասին 17.09.03թ. N1382-Ա որոշմամբ սահմանված միջոցառումները համապատասխան պետական կառավարման

մարմինների, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից չեն իրականացվել նախատեսված ժամանակացույցով: Մասնավորապես որոշմամբ սահմանվել էր, որ այդ պետական կառավարման մարմինների կողմից պետք է գույքագրվեին և հաշվառվեին իրենց տնօրինության ԱՇՕ-ները, որից հետո դրանք դասակարգվեին և մասնավորեցման ենթակա օբյեկտները հանձնվեին Վարչության տնօրինությանը: Վարչությունն իր հերթին այդ օբյեկտների հանձնման-ընդունման աշխատանքների կատարման ընթացքում պարբերաբար պետք է տրամադրեր տեղեկություններ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին (այսուհետ՝ Կադաստր) ԱՇՕ-ների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ չափագրումների մասին տեղեկությունների կազմման համար: Կադաստրի կողմից պետք է ապահովվեր այդ աշխատանքների կատարումը և տեղեկանքների տրամադրումը Վարչությանը, իսկ Երևանի քաղաքապետի և մարզպետների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասերի տրամադրման վերաբերյալ փաստաթղթեր չունեցող ԱՇՕ-ների համար պետք է իրականացվեին հողատարածքների սահմանների ճշտման աշխատանքներ և ընդունվեին հողամասերի տրամադրման մասին որոշումներ: Վերոհիշյալ որոշմամբ նախատեսված պահանջները բավարարելու, ինչպես նաև ԱՇՕ-ները համակարգված հաշվառելու, դասակարգելու և Վարչության տնօրինությանն ընդունելու նպատակով Վարչության պետի հրամանով ստեղծվել է հանձնաժողով: Ուսումնասիրությունների իրականացման ընթացքում այդ աշխատանքները դեռ ավարտված ու ամփոփված չէին, իսկ տվյալների հավաքագրումը ընթանում էր բավական դանդաղ և դժվարությամբ: Համաձայն Վարչության տվյալների 10.06.2004թ. դրությամբ պետական կառավարման մարմինների կողմից Վարչության տնօրինությանն էին հանձնվել ընդամենը 16 ԱՇՕ-ներ:

Համաձայն ՀՀ կառավարության 08.10.2003թ. N1359-Ն որոշման՝ պետական գույքը մասնավորեցնելիս կամ օտարելիս հողամասերի մասնավորեցման (օտարման) սկզբունքներով սահմանվել է, որ պետական գույքի մասնավորեցման (օտարման) ժամանակ արժեքի մեջ հաշվարկվում և ներառվում է նաև հողամասերի կադաստրային գինը: Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մասնավորեցվող ԱՇՕ-ների գինը սահմանելիս հողի կադաստրային արժեքի տեսակարար կշիռը գնահատված մեծության մեջ կազմում է բավականին մեծ տոկոս (60-ից բարձր), ինչը ԱՇՕ-ների պարագայում կարող է էլ ավելի դանդաղեցնել դրանց մասնավորեցման (օտարման) գործընթացը: Միաժամանակ, հարկ է նշել, որ որոշմամբ սահմանված չէ, թե Կենտրոնական բանկի որ հաշվին պետք է փոխանցվեն հողամասերի վաճառքի գումարները, քանի որ մասնավորեցումից ստացված միջոցները կուտակվում են Կենտրոնական բանկում գործող «Մուտքեր ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից» հաշվում, իսկ օտարումից՝ մուտքագրվում են «Պետական սեփականություն համարվող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» զանձապետական հաշվին:

Ըստ ՀՀ կառավարության մասնավորեցման ծրագրերի կատարման վերաբերյալ հաշվետվությունների և Վարչության կողմից ներկայացված տվյալների, 01.01.04թ. դրությամբ մասնավորեցվել են 82 ԱՇՕ-ներ, որից 27-ը առ 01.01.1998թ. 7-ը՝ 1998թ., 7-ը՝ 1999թ., 5-ը՝ 2000թ., 1-ը՝ 2001թ., 9-ը՝ 2002թ. և 26-ը՝ 2003թ.: Գրանցից 33-ը (40.3%) մասնավորեցվել են մրցույթով, 23-ը՝ (28.0%) աճուրդով և 26-ը՝ (31.7%) ուղղակի վաճառքի ձևով: ԱՇՕ-ների գնահատումն իրականացվում է Մասնավորեցման օրենքի 12-րդ և 25-րդ հոդվածներով նախատեսված և ՀՀ կառավարության կողմից ընդունված՝ «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային մեթոդով գնահատման կարգի մասին» 27.03.1998թ. N209 որոշումով սահմանված կարգով: Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված ԱՇՕ-ների մասնավորեցման ենթակա պետական բաժնեմասի գնահատված արժեքը կազմել է 476,888.6 հազ. դրամ, վաճառքի գինը՝ 490,444.9 հազ. դրամ կամ գնահատվածի 102.9%-ը: ԱՇՕ-ների վաճառքի գնի բարձր տոկոսը գնահատված արժեքի նկատմամբ հիմնականում պայմանավորված է մրցույթով մասնավորեցման ներկայացված որոշ ԱՇՕ-ների գնորդների կողմից մասնավորեցման նպատակով առաջարկված, ինչպես նաև առանձին դեպքերում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշումներով սահմանված վաճառքի բարձր գներով: Հաշվետու ժամանակաշրջանում գնահատված արժեքից բարձր գներով մասնավորեցվել են 9-ը ԱՇՕ-ներ կամ մասնավորեցվածների 25%-ը, որոնց գնահատված արժեքը կազմում է 185.7 մլն դրամ, վաճառքի գինը՝ 390.8 մլն դրամ կամ գնահատվածի 210.5%-ը: Մասնավորապես մասնավորեցված ԱՇՕ-ների վաճառքի ընդհանուր գնի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում 101 մլն դրամով (մեկնարկային գնի՝ 505%-ը) մրցույթով մասնավորեցված Երևանի Լենինգրադյան 35 հասցեում գտնվող ԱՇՕ-ի և 147 մլն դրամով (գնահատված արժեքի՝ 170%-ը) ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված Երևանի պատմության թանգարանի շենքի ԱՇՕ-ի վաճառքի գումարները:

Գնահատման ներկայացված ԱՇՕ-ների ելակետային տվյալներում շատ դեպքերում առանձին չեն ներկայացվել նախագծանախահաշվային աշխատանքների գումարները: Վերլուծությունները ցույց են տալիս, որ ներկայումս գործող գնահատման կարգը, ըստ էության, չի արտացոլում ԱՇՕ-ների իրական արժեքը և դրանց գները ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման ժամանակ սահմանվում են ՀՀ կառավարության որոշումներով, իսկ առանձին դեպքերում մրցույթների ժամանակ ձևավորված վաճառքի գները մի քանի անգամ կարող են գերազանցել դրանց գնահատված արժեքը: Մյուս կողմից, վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնավորեցման (օտարման) գործընթացում պետք է կարևորվի մասնավորեցվող ԱՇՕ-ների զբաղեցրած տարածքների մակերեսների և հողամասերի վերաբերյալ չափագրված, ճշգրտված և դրանց նպատակային օգտագործման համար հիմնավորված տվյալների տրամադրումը:

ԱՇՕ-ների վերաբերյալ գումարային և քանակային ցուցանիշները, ըստ մասնավորեցման ձևերի, ներկայացված են հավելված 2-ում:

Ըստ Վարչության տվյալների, հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված 36 ԱՇՕ-ների գնորդներ ստանձնել են պայմանագրային պարտավորություններ, որոնցով մասնավորապես նախատեսվել էր համապատասխան ժամանակահատվածում սկսել և ավարտել շինարարական

աշխատանքները, ինչպես նաև կատարել ներդրումներ: Ըստ պայմանագրերի, 25 ԱՇՕ-ների գնորդների ստանձնած ներդրումային պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 232,850.0 հազ. դրամ և 8,850.0 հազ. ԱՄՆ դոլար (դոլարով ներդրումների մեջ գերակշիռ մասը՝ մոտ 50%-ը (4մլն ԱՄՆ դոլար) նույնպես վերաբերում է Երևանի Լենինգրադյան 35 հասցեում գտնվող ԱՇՕ-ին): Գնորդներից 6-ի պարտավորություններով նախատեսվել էր միայն սկսել և ավարտել շինարարական աշխատանքները, իսկ 5-ի դեպքում մնացած պարտավորություններ ընդհանրապես չեն սահմանվել: Ըստ Վարչության ներկայացրած տվյալների, հաշվետու ժամանակաշրջանում ԱՇՕ-ների գնորդների կողմից կատարված ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 162 մլն դրամ (գերակատարված՝ 73 մլն դրամ), 26-ի կատարման ժամկետները դեռ չեն լրացել, որոնց կատարման ենթակա գումարը կազմում է 143 մլն դրամ և 8,850.0 հազ. ԱՄՆ դոլար:

ԱՇՕ-ների մասնավորեցման գործընթացի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններով արձանագրվել են մի շարք տարաբնույթ թերություններ: Մասնավորապես մասնավորեցված որոշ ԱՇՕ-ների գնահատման ներկայացված ելակետային (այդ թվում՝ Կադաստրի կողմից տրամադրված) և մասնավորեցումից հետո սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ սեփականության վկայական) տվյալներով ԱՇՕ-ների զբաղեցրած տարածքների միջև առկա են տարբերություններ, այսպես՝

Համաձայն ՀՀ կառավարության 16.10.2003թ. N1397-Ա որոշման Երևանի քաղաքապետարանի «Մանկապարտեզ» Հ/Ա Գ-3 թաղամասի ԱՇՕ-ն ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է նախօրոք հայտնի գնորդին՝ վաճառքի գինը սահմանելով 2,050.0 հազ. դրամ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշումը և մասնավորեցման պայմանագիրը Երևանի քաղաքապետի կողմից ընդունվել է 22.01.2004թ. N 60-Ա որոշումը, ըստ որի ԱՇՕ-ի փաստացի զբաղեցրած տարածքի հողամասի մակերեսը կազմում է 2750 քմ, 15 տարի ժամկետով տրամադրվել է վարձակալության և նախագաղաղացվել է ԱՇՕ-ի գնորդին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով օբյեկտը գրանցել Կադաստրի լիազորված մարմնում: Մյուս կողմից, ըստ Երևանի քաղաքապետի որոշման, ԱՇՕ-ի հողային տարածքը կազմում է 2750 քմ, իսկ մասնավորեցման նպատակով Կադաստրին տրված տվյալներով՝ 1,026.5 քմ կամ տարբերությունը կազմում է 1724 քմ:

Համաձայն ՀՀ կառավարության 26.12.2002թ. N2150-Ն որոշման «Շինարարություն և բարեկարգում» ՊՓԲԸ կազմում գտնվող Հյուսիս-Արևմտյան զանգվածի Գ-3 թաղամասում զինկոմիսարիատի համար նախատեսված ԱՇՕ-ն, որի մակերեսը կազմում է 440 քմ, իսկ հողամասի չափը՝ 0.3 հա ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է նախօրոք հայտնի գնորդին, վաճառքի գինը սահմանելով 1,200.0 հազ. դրամ: Գնորդի հետ 26.12.2002թ. կնքվել է թիվ 493-Մ մասնավորեցման պայմանագիրը, որի հիման վրա Գ-ավիթաշենի Կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից իրականացվել է ԱՇՕ-ի նկատմամբ գույքային իրավունքի պետական գրանցումը: Սեփականության վկայականի տվյալներում հողամասի օգտագործման նպատակը նշվել է որպես զինկոմիսարիատի սպասարկման համար, իսկ շենքի

օգտագործման նպատակը՝ զինկոմիսարիատ: Սակայն ակնհայտ է, որ արդեն մասնավորեցված ԱՇՕ-ի հողամասի և շենքի օգտագործման նպատակը չի կարող լինել զինկոմիսարիատի համար: Մյուս կողմից, համաձայն ՀՀ կառավարության 28.11.2002թ. N2051 որոշման սահմանված է, որ երբ մասնավորեցվող (օտարվող) ԱՇՕ-ների հետագա օգտագործումը նախագծային նպատակային նշանակությամբ հեռանկարային չէ, մասնավորեցման (օտարման) ժամանակ ՀՀ կառավարության որոշմամբ կարող է փոխվել օբյեկտի նպատակային նշանակությունը, ինչը չի արվել:

Համաձայն ՀՀ կառավարության 19.02.1999թ. N78 որոշման Երևանի Բաղրամյան 59 գ հասցեում (Բաղրամյան և Այգեձոր փողոցների միջանկյալ տարածք) գտնվող ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչության «Կիսակառույց շենք» ԱՇՕ-ը առաջարկվել էր մասնավորեցման մրցույթով: Օբյեկտը 3 հարկանի, նկուղի հետ միասին 1800 քմ ընդհանուր մակերեսով բազալտե հիմքի վրա քարե շինություն է, արտաքին հարդարումն ամբողջովին կատարված սրբատաշ տուֆի շարվածքով, իսկ շինարարության համար նախատեսված հողային տարածքը կազմել է 0,05 հա.: Մրցույթն անցկացվել է 1999թ. ապրիլի 19-ին, որին մասնակցելու համար ներկայացվել էր 4 մրցութային առաջարկ և համաձայն մրցութային հանձնաժողովի արձանագրության, առաջարկներում ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են մրցույթի պահանջներին: ԱՇՕ-ի մրցույթի համար նախօրոք սահմանված պայմաններին առավելագույն չափով բավարարող առաջարկ ներկայացրել էին 2 մասնակից, որոնց կողմից օբյեկտի գնման համար առաջարկված գինը կազմել էր 27 մլն դրամ (մոտ 50 հազ. ԱՄՆ դոլար), դրանցից մեկի կողմից շինարարության ավարտը նախատեսվել էր 2000 թվականին, մյուսի կողմից՝ 2002 թվականին: Մասնակիցների կողմից առաջարկվել էր կատարել համապատասխանաբար՝ 125 մլն դրամի և 410 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ: Հաշվի առնելով, որ ԱՇՕ-ն գտնվում է Այգեձոր թաղամասում, ներկայացնում է ճարտարապետական հաջող լուծումներով օբյեկտ, համարելով, որ օբյեկտի գինն ավելի բարձր է, քան առաջարկվել է, մրցութային հանձնաժողովը, համաձայն ՀՀ կառավարության՝ «Մրցույթով (այդ թվում՝ միջազգային մրցույթով) պետական գույքի մասնավորեցման կարգը հաստատելու մասին» 29.10.98թ. N 669 որոշման 14-րդ կետի «գ» ենթակետի, որոշվել էր մրցույթը դադարեցնել՝ առանց հաղթողին որոշելու, և մասնավորեցման մրցույթը համարվել էր չկայացած: Հետագայում, համաձայն ՀՀ կառավարության 05.10.1999թ. N623 և 13.09.2000թ. N562 որոշումների, ԱՇՕ-ն առաջարկվել է մասնավորեցման՝ մրցույթով առաջին որոշմամբ նվազագույն գինը սահմանելով 40 մլն դրամ, իսկ հաջորդ որոշմամբ՝ 45 մլն դրամ: Մրցույթները համարվել են չկայացած՝ հայտերի բացակայության պատճառով:

Այնուհետև, ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 17.10.2001թ. N996 որոշումը, որով ԱՇՕ-ն ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման է առաջարկվել «Գալիք» համալսարան արտադրական կոդաբատիվին, վաճառքի գինը սահմանելով 32 մլն դրամ, սակայն գնորդի կողմից վճարումները ժամանակին չկատարելու պատճառով մասնավորեցումը չի կայացել: Համաձայն ՀՀ կառավարության 06.03.2002թ. N213 որոշման, ՀՀ կառավարությանն առընթեր

արխիվային գործի վարչության «Կիսակառույց շենք» ԱՇՕ-ն ուղղակի վաճառքի ձևով, որպես հավանական գնորդի, մասնավորեցվել է այլ ընկերության՝ վաճառքի գինը սահմանելով 25 մլն դրամ (մոտ 43 հազ ԱՄՆ դոլար): Ընդ որում, հարկ է նշել, որ օբյեկտի շինարարության ավարտման կամ կատարվելիք ներդրումների վերաբերյալ որևէ պայման չի նախատեսվել պայմանագրով:

Արդյունքում՝ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առավել բարձր գումարով ԱՇՕ-ն վաճառելու նպատակ հետապնդելով, այնումենայնիվ, դրա վաճառքն իրականացվել է ավելի ցածր գնով (առանց պայմանագրային պարտավորությունների), քան առաջարկվել էր դեռ 1999 թվականին անցկացված առաջին մրցույթի մասնակիցների կողմից, չհաշված այն հանգամանքը, որ այդ ընթացքում ԱՇՕ-ի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների և վաճառքի իրականացման համար կատարվել են համապատասխան ծախսեր:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ղեկավարությունը ծանոթացել է վերահսկողության արդյունքներին, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Չի կատարվել մասնավորեցման 1998-2000թթ. և 2001-2003թթ. ծրագրերի մասնավորեցվող պետական գույքի ընտրության սկզբունքներով սահմանված այն պահանջը, որով պետք է ավարտվեր արտադրական և սոցիալական բնույթի անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումը:
2. Պետական կառավարման մարմինների, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից չեն իրականացվել ՀՀ կառավարության 28.11.02թ. N2051-Ն և 17.09.03թ. N1382-Ա որոշումներով նախատեսված ժամանակացույցով սահմանված միջոցառումները:
3. Մասնավորեցման նպատակով գնահատման ներկայացված անավարտ շինարարության օբյեկտների ելակետային տվյալներում, շատ դեպքերում, առանձին չեն ներկայացվել նախագծանախահաշվային աշխատանքների գումարները:
4. Ըստ պայմանագրերի, հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված 25 անավարտ շինարարության օբյեկտների գնորդների կողմից ստանձնած ներդրումային պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 232,850.0 հազ. դրամ և 8,850.0 հազ. ԱՄՆ դոլար, 6 գնորդների պարտավորություններով նախատեսված է միայն սկսել և ավարտել շինարարական աշխատանքները, իսկ 5 դեպքում նման պարտավորություններ ընդհանրապես չեն սահմանվել:
5. Տարբերություններ են արձանագրվել մասնավորեցված որոշ անավարտ շինարարության օբյեկտների զբաղեցրած տարածքների վերաբերյալ գնահատման

ներկայացված ելակետային և մասնավորեցումից հետո սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների տվյալներում:

6. Ըստ ՀՀ կառավարության 08.10.2003թ. N1359-Ն որոշման պահանջի, մասնավորեցման ենթակա անավարտ շինարարության օբյեկտների գինը սահմանելիս հողի կադաստրային արժեքի տեսակարար կշիռը գնահատված մեծության մեջ կարող է կազմել 60-ից բարձր տոկոս և դրանով պայմանավորված՝ դանդաղեցնել անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման գործընթացը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ պետական կառավարման մարմիններին և Վարչությանը՝

1. Սեղմ ժամկետներում ապահովել ՀՀ կառավարության որոշումներով սահմանված անավարտ շինարարության օբյեկտների հաշվառման, դասակարգման և դրանց հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:
2. Հստակեցնել մասնավորեցման ենթակա անավարտ շինարարության օբյեկտների զբաղեցրած տարածքների մակերեսների և հողամասերի վերաբերյալ տվյալները, որից հետո դրանք ներկայացնել մասնավորեցման:
3. Անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումն իրականացնել գնորդների կողմից ներկայացված իրատեսական և հիմնավորված ներդրումային գործարար ծրագրերի հիման վրա:
4. ՀՀ կառավարության 08.10.2003թ. N1359-Ն որոշմամբ սահմանված պահանջով մասնավորեցվող ԱՇՕ-ների գնորդներին նպատակահարմար է հնարավորություն ընձեռել վճարումները իրականացնել տարաժամկետ, համաձայն նախօրոք մշակված սանդղակի և միաժամանակ հստակեցնել պետբյուջեի հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի մասնավորեցված (օտարված) հողամասերի համար վճարված գումարները:

Անավարտ շինարարության օբյեկտների վերաբերյալ ամփոփ տվյալներ՝ ըստ տարածաշրջանների

Հ	Տարածաշրջան	Անավարտ շինարարության օբյեկտներ										
		Ընդամենը	ըստ նշանակության		պատրաստվածության աստիճանը			սեփականության իրավունքի պատկանելիությամբ յունը		վերաբերյալ առաջարկություններ		
			քնակելի տներ	հասարակական օբյեկտներ	մինչև 30%	30-50%	50%-ից բարձր	պետական	համայնքային	մասնավորեցնել	օտարել	դուրս գրել
1	Գեղարքունիք	28	20	8	18	7	3	7	21	3	6	19
2	Արագածոտն	44	33	11	32	5	6	2	42	4	5	35
3	Արարատ	25	18	7	14	2	2	8	17	5	1	19
4	Արմավիր	76	74	2	57	12	7	2	74	10	9	57
5	Լոռի	731	691	40	691	1	0	674	57	53	85	593
6	Սյունիք	47	35	12	40	1	5	1	46	5	1	41
7	Տավուշ	45	30	15	35	3	7	1	44	6	3	36
8	Վայոց ձոր	22	8	14	18	2	2	7	15		2	20
9	Կոտայք	67	55	12	61	3	3	5	62	4	3	60
10	Շիրակ	847	819	28	721	74	52	830	17	53	71	723
11	Երևան	106	90	16	98	2	6	51	55	4	2	100
Ընդամենը		2038	1873	165	1785	112	93	1588	450	147	188	1703
Ընդամենը			2038	1990¹			2038		2038			

¹ տարբերությունը (48) առաջացել է ՀՀ կառավարության 28.11.2002թ. թիվ 2051 որոշմանը կից ցուցանիշների անհամապատասխանության պատճառով:

Անավարտ շինարարության օբյեկտների վերաբերյալ գումարային և քանակային ցուցանիշները՝ ըստ մասնավորեցման ձևերի

Մասնավորեցման ձևը	Մասնավորեցված անավարտ շինարարության օբյեկտներ											
	2001թ.			2002թ.			2003թ.			ընդամենը		
	քանակ	գնահատված մեծություն /հազ. դրամ/	վաճառքի գին /հազ. դրամ/	քանակ	գնահատված մեծություն /հազ. դրամ/	վաճառքի գին /հազ. դրամ/	քանակ	գնահատված մեծություն /հազ. դրամ/	վաճառքի գին /հազ. դրամ/	քանակ	գնահատված մեծություն /հազ. դրամ/	վաճառքի գին /հազ. դրամ/
մրցույթ	1	596.0	600.0	3	3,036.0	2,030.0	4	81,871.0	129,215.0	8	85,503.0	131,845.0
աճուրդ	-	-	-	-	-	-	2	646.0	646.0	2	646.0	646.0
ուղղակի վաճառք	-	-	-	6	204,576.0	165,054.0	20	186,163.6	192,907.0	26	390,739.0	357,961.0
ընդամենը	1	596.0	600.0	9	207,612.0	167,084.0	26	268,680.6	322,761.0	36	476,889.0	490,445.0

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 26.11.2004թ.
նիստով և ուղարկվել է ՀՀ Ազգային Ժողով,
ՀՀ կառավարություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռ-ազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների մասնավորեցման գործընթացի մասին

Վերահսկողության հիմքը - Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 21.2 կետը և ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի 20.07.2004թ. N92 հրամանը:

Վերահսկողության նպատակը - Ռ-ազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների մասնավորեցման գործընթացի ուսումնասիրությունը:

Վերահսկողության օբյեկտը - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն:

Վերահսկողությունն իրականացվել է՝ «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» (այսուհետ՝ Մասնավորեցման օրենք), «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000թթ. ծրագրի կատարման հաշվետվության մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» (այսուհետ՝ Մասնավորեցման Ծրագիր), «Անվճարունակության (սնանկացման) մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, նորմատիվ ակտերի, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության՝ հետագայում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա:

Ռ-ազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների մասնավորեցման գործընթացը կանոնակարգելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են 13.12.99թ. N 747, 16.12.99թ. N 760, 30.09.2000թ. N 613, 27.08.2001թ. N 775 որոշումները: Ըստ այդ որոշումների, հաստատվել է մասնավորեցման ենթակա ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների ցանկը, դրանց առաջնահերթ մասնավորեցման կամ մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկությունների և առաջարկությունների ներկայացման ժամանակացույցը, ինչպես նաև մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների արդյունավետությունը և ռազմավարական ներդրողների կողմից դրանց նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումների իրականացման գործառույթները: Մինույն ժամանակ, այդ աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: Ընդհանուր առմամբ, ըստ

Վարչության տեղեկատվության, այդ որոշումներով, որպես ռազմավարական նշանակություն ունեցող ընկերություններ են հաստատվել 81-ը: Դրանցից 59-ը՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, 15-ը՝ տրանսպորտի և կապի, 5-ը՝ էներգետիկայի նախարարությունների, 2-ը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ենթակայության ընկերություններ են: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ընկերություններից 3-ը հանդիսանում են ակնագործության և ոսկերչության, 3-ը՝ քիմիայի, 7-ը՝ լեռնամետալուրգիայի, 10-ը՝ մեքենաշինության, 11-ը՝ ռադիոէլեկտրոնիկայի և սարքաշինության, 13-ը՝ թեթև արդյունաբերության, 3-ը՝ առևտրի և սպասարկման, 8-ը՝ ոչ մետաղական ռետորսների և շինանյութերի, 1-ը՝ հատուկ ծրագրերի ոլորտների ընկերություններ են: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 15 ընկերություններն էլ ավտոտրանսպորտային ընկերություններ են, ՀՀ էներգետիկայի նախարարության 5 ընկերություններից 1-ը նախագծային ինստիտուտ է, 4-ը՝ էլեկտրաէներգիա արտադրող ընկերություններ են (էլեկտրակայաններ), իսկ Վարչության 2 ընկերություններն են՝ ՀՀ մամուլի տարածման գործակալությունը և «Արթիկ-տուֆ» ՓԲԸ-ն:

Ռազմավարական նշանակություն ունեցող ընկերություններից մասնավորեցվել են ընդամենը 34-ը (42%): Թվով 8 (9.9%) ընկերություններ գտնվում են լուծարման գործընթացում, իսկ 2-ը (2.5%) լուծարվել են, 25 (30.8%) ընկերությունների վերաբերյալ դատարանների կողմից ընդունվել են սնանկացման մասին վճիռներ, այդ թվում՝ 11-ի մասին նախկինում եղել են նաև ՀՀ կառավարության որոշումներ՝ դրանց լուծարման վերաբերյալ, 7-ը (8.6%) համաձայն Մասնավորեցման Ծրագրի ու ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների մասին ՀՀ կառավարության որոշման ենթակա են մասնավորեցման, 3-ը (3.7%) հանվել են Մասնավորեցման Ծրագրից, իսկ 2-ը (2.5%) «Սևան-Հրազդանյան կասկադ» և «Մարս» ՓԲԸ-ները, ինչպես նաև Ծրագրից հանված «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ-ն փոխանցվել են Ռուսաստանի Դաշնությանը՝ միջպետական համաձայնագրի («Գույք պարտքի դիմաց») պահանջներից համապատասխան:

Ռազմավարական նշանակություն ունեցող ընկերություններից 28-ը մասնավորեցվել են ուղղակի վաճառքի ձևով (այդ թվում՝ Վաղարշապատի «Էլեկտրոն» և Աբովյանի «Կիլիկիա» ԲԲԸ-ների 34% պետական բաժնեմասերը), 3-ը՝ մրցույթով, 2-ը՝ բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ, իսկ 1-ի բաժնետոմսերը՝ աճուրդով: Հարկ է նշել, որ ուղղակի վաճառքի ձևով նախօրոք հայտնի գնորդին մասնավորեցվել է «Հրազդանցեմենտ» ՍՊԸ-ին հավատարմագրային կառավարման տրված «Հրազդանցեմենտ» ՊԶ-ի պետական գույքը, որն ընդգրկված չէր Մասնավորեցման Ծրագրում, իսկ ՀՀ կառավարության N 613 որոշման հավելվածում, որպես ծածկագիր նշված է Մասնավորեցման Ծրագրում գոյություն չունեցող ծածկագիրը:

Ըստ ուսումնասիրության տվյալների, 3 ընկերությունների մասնավորեցման նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից, որից մասնավորեցվել են (մասնավորեցման պայմանագրերը կնքվել են նախարարության կողմից) 2-ը՝ «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ և «Կապանի

ԼՀԿ» ՓԲԸ, իսկ «Ձանգեգործի ՊՄԿ» ՓԲԸ մասնավորեցման վերաբերյալ բանակցություններն ընթացքի մեջ են: Ռազմավարական նշանակություն ունեցող մասնավորեցված ընկերությունների գնահատված ակտիվների ընդհանուր գումարը կազմել է 49,048.9 մլն դրամ¹, մասնավորեցման ենթակա պետական բաժնեմասի գնահատված արժեքը՝ 24,602.0 մլն դրամ¹, վաճառքի գինը՝ 6.741,6 մլն դրամ¹ կամ գնահատված արժեքի 27.4%-ը: Ռազմավարական նշանակություն ունեցող մասնավորեցված որոշ ընկերությունների մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների արդյունքում իրականացվել են մասնավորեցված ընկերությունների, իսկ առանձին դեպքերում՝ Մասնավորեցման Ծրագրով և ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների մասին ՀՀ կառավարության որոշմամբ մասնավորեցման ենթակա, բայց դեռ չմասնավորեցված ընկերությունների կազմում գտնվող առանձին դուստր ընկերությունների և պետական գույքի մի շարք առանձնացումներ, որոնց մի մասը մասնավորեցվել կամ օտարվել են առանձին:

Ռազմավարական նշանակություն ունեցող մասնավորեցված ընկերությունների գնորդներից ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պայմանագրային պարտավորություններ են ստանձնել 25-ը, որոնց կողմից կատարվելիք ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 859,7 մլն դրամ և 44,0 մլն ԱՄՆ դոլար, ինչպես նաև պետք է ստեղծվեն մոտ 7800 աշխատատեղ: Ըստ Վարչության տվյալների, այդ ընկերությունների գնորդների կողմից պարտավորություններն ամբողջությամբ կատարել են 9-ը (36%), որոնց կողմից ներդրված ընդհանուր գումարը կազմում է 32,9 մլն դրամ և 8,5 մլն ԱՄՆ դոլար, ստեղծվել է մոտ 2230 աշխատատեղ: Թվով 12 (48%) ընկերությունների պարտավորությունների կատարման ժամկետները դեռևս չեն լրացել, որոնց կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարված ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 14,3 մլն դրամ և 6,5 մլն ԱՄՆ դոլար ու ստեղծվել է մոտ 1225 աշխատատեղ (դեռ պետք է ներդրվի 40,7 մլն դրամ և 21,2 մլն ԱՄՆ դոլար ու ստեղծվի 1845 աշխատատեղ), իսկ 4 (16%) ընկերությունների գնորդներ ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարել, որոնց կողմից պետք է ներդրվեր 773,7 մլն դրամ և 10,7 մլն ԱՄՆ դոլար ու ստեղծվեր մոտ 2800 աշխատատեղ:

Պայմանագրային պարտավորությունները չկատարելու պատճառով Վարչությունը 3 գնորդների վերաբերյալ համապատասխան հայցադիմումներ է ներկայացրել դատարաններ: Մասնավորապես, ՀՀ տնտեսական դատարանը բավարարել է ընդդեմ «Գյումրի ապակի» ՓԲԸ-ի գնորդի («Թ.Ի.Մ.Ջ.Ի.» ՍՊԸ) Վարչության հայցը: Հայցադիմումի հետ մեկտեղ, Վարչությունը Գյումրու նստավայրի ՀՀ տնտեսական դատարան ներկայացրել էր միջոնորություն՝ 476,214.9 հազ. դրամ հայցագնի չափով, որպես հայցի ապահովման միջոց արգելանք դնել գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, որը դատարանի կողմից բավարարվել էր և ներկայացվել կատարման դատական ակտերի հարկադիր կատարման (Գ-ԱՀԿ) ծառայություն, որի կողմից հարուցվել էր կատարողական վարույթ: Հետագայում ՀՀ

¹ Հաշվարկներում ներառված չեն նախկինում մասնավորեցված 34% պետական բաժնեմաս ունեցող Վաղարշապատի «Էլեկտրոն» և Աբովյանի «Կիլիկիա» ԲԲԸ-ների և «Արմենմոտոր» ՓԲԸ-ի ցուցանիշները:

տնտեսական դատարանը վարույթ է ընդունել «Թ.Ի.Մ.Ձ.Ի.» ՍՊԸ-ին անվճարունակ ճանաչելու պահանջով հարկադիր կատարողի հայցադիմումը, համաձայն որի կասեցվել է ընկերության վերաբերյալ հարուցված բոլոր կատարողական վարույթները՝ մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը:

Ընդդեմ «Կոչիկի «Արաքս» ֆաբրիկա» ԲԲԸ-ի գնորդի, Վարչության կողմից ներկայացվել է հայցադիմում՝ 1,800.0 հազ. դրամ բռնագանձելու և բաժնետոմսերի վրա բռնագանձում տարածելու միջոցով դրանք առգրավելու մասին: Գործը գտնվում է ՀՀ տնտեսական դատարանի վարույթում:

Ընդդեմ «Հայապակի» ՓԲԸ-ի գնորդի, Վարչության կողմից ներկայացվել է հայցադիմում՝ գումարի բռնագանձման, ներդրումներ կատարելուն և սոցիալական երաշխիքներ ապահովելուն պարտավորեցնելու պահանջով: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ և կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությամբ ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, կատարողական թերթը ներկայացվել է ԴԱՀԿ ծառայություն և հարուցվել է կատարողական վարույթ:

2001-2003թթ. Ծրագրի 9-րդ հոդվածով և Մասնավորեցման Օրենքի համապատասխան հոդվածներով նախատեսված է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքում ծրագիրն ուժի մեջ մտնելուց հետո դրանում ընդգրկված պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների, ինչպես նաև մասնավորեցման ներկայացված, սակայն չմասնավորեցված ընկերությունների վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից կարող է ընդունվել որոշում՝ դրանց լուծարման մասին: Լուծարման որոշումներ են ընդունվել մասնավորեցման ներկայացված, սակայն չմասնավորեցված ռազմավարական նշանակություն ունեցող 18 ընկերությունների վերաբերյալ, իսկ 3 ընկերությունների լուծարման որոշումները ՀՀ կառավարության կողմից ընդունվել են՝ առանց դրանք մասնավորեցման ներկայացնելը: Այդ ընկերություններից 18-ի լուծարման գործընթացն իրականացվել է Վարչության կողմից ստեղծված լուծարային հանձնաժողովների միջոցով, որոնցից 2-ի (Վանաձորի «Ղարս» կարի ՓԲԸ և «Վարդենիսի ԲՈՒԱՏ» ՓԲԸ) լուծարման գործընթացն ավարտվել է: Մասնավորապես, Վանաձորի «Ղարս» կարի ՓԲԸ գույքն օտարվել է մրցույթով՝ 6,888.0 հազ. դրամ գումարով: Գնորդը պարտավորվել է կատարել 1.0 մլն դրամի ներդրում: Մրցույթից գոյացած միջոցների հաշվին մարվել է 6,784.0 հազ. դրամ կրեդիտորական պարտավորություն, որից ՀՀ պետական բյուջե՝ 1,878.0 հազ. դրամ, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ՝ 1,680.0 հազ. դրամ, աշխատավարձ՝ 2,510.0 հազ. դրամ, այլ կրեդիտորական պարտք՝ 716.0 հազ. դրամ և 104.0 հազ. դրամ փոխանցվել է ՀՀ պետական բյուջեի «Լուծարվող պետական փակ բաժնետիրական ընկերությունների հաշվարկային հաշվներում մնացած դրամական միջոցների հավաքագրում» եկամտային հաշվին: «Վարդենիսի ԲՈՒԱՏ» ՓԲԸ-ի գույքի աճուրդներից ստացվել է 11,196.0 հազ. դրամ, այդ թվում՝ վերջին աճուրդի ժամանակ, որպես մեկ ամբողջական միավոր, 5,000.0 հազ. դրամ գումարով վաճառքի էր ներկայացվել նախորդ աճուրդներում չվաճառված գույքը: Լուծարման գործընթացում մարվել են հետևյալ կրեդիտորական պարտավորությունները՝ ՀՀ պետական

բյուջե՝ 3,559.0 հազ. դրամ, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ՝ 2,741.0 հազ. դրամ, աշխատավարձ՝ 4,089.0 հազ. դրամ և այլ կրեդիտորական պարտք՝ 807.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության որոշումներով լուծարման ներկայացված 11 ընկերությունների դատարանների կողմից ճանաչվել են սնանկ: Ընդ որում, դրանցից մի մասի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից լուծարման որոշումներ են ընդունվել, այն դեպքում, երբ դրանք դատարանների կողմից արդեն ճանաչվել էին սնանկ: Վարչության լուծարային հանձնաժողովները որոշումներ են ընդունել 2 ընկերությունների վերաբերյալ սնանկ ճանաչելու հայցադիմում ներկայացնել դատարան, իսկ 3 ընկերություններ գտնվում են լուծարման գործընթացում, ընդ որում, «Ապարանի ԲՈՒՏ» ՓԲԸ-ի և «Գյումրու թիվ 3 ԲՈՒՏ» ՓԲԸ-ի ամբողջ գույքը գտնվում է բռնագանձման տակ:

Ռազմավարական նշանակություն ունեցող 25 ընկերությունների վերաբերյալ ՀՀ դատարանների կողմից ընդունվել են դրանց սնանկացման մասին վճիռներ, որոնցից 4-ի վերաբերյալ, համաձայն ՀՀ քաղօրենսգրքի 67 հոդվածի պահանջի, սնանկ ճանաչելու համար դատարան հայցադիմումներ են ներկայացրել Վարչության կողմից ստեղծված լուծարային հանձնաժողովները, իսկ մնացած ընկերությունները սնանկ են ճանաչվել՝ այլ գերատեսչությունների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա:

Համաձայն «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի, սահմանվել է, որ Մասնավորեցման Ծրագրերում ընդգրկված և դեռ չսեփականաշնորհված «...պարտապահին անվճարունակ ճանաչելու մասին պարտատիրոջ (պարտատերերի) հայցադիմումը սույն օրենքով սահմանված կարգով գրանցում է դատարանը և այդ մասին մեկ օրվա ընթացքում ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ կցելով հայցադիմումի պատճեն»: Նույն օրենքով սահմանվել է, որ դատարանը սնանկ ճանաչելու վերաբերյալ գործն իր վարույթն է ընդունում, եթե դատարանի ծանուցումը ստանալուց 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությունը սեփականաշնորհման մասին որոշում չի ընդունում կամ որոշում ընդունելու պահից անցել է 150 օր: Նույն դրույթը մասնակի խմբագրմամբ պահպանվել է նաև հետագայում ընդունված՝ «Անվճարունակության (սնանկացման) մասին» ՀՀ օրենքի (վավերացվել է ՀՀ Նախագահի կողմից 14.01.2004թ.) 98-րդ հոդվածում: Սակայն սնանկացման մասին դատարանների վճիռների առկայության պարագայում ընկերությունների վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են նաև դրանց լուծարման կամ մասնավորեցման մասին որոշումներ: Արդյունքում՝ նույն ընկերությունների վերաբերյալ միաժամանակ առկա են եղել և՛ ՀՀ կառավարության որոշումները լուծարման կամ մասնավորեցման մասին, և դատարանների վճիռները՝ դրանց սնանկացման վերաբերյալ: Մասնավորապես, «Ճամբարակի ԲՈՒՏ» ՓԲԸ-ի լուծարման մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է 2002թ. մարտի 2-ին, իսկ սնանկ ճանաչվել է 2002թ. փետրվարի 25-ին, «Ստեփանավանի ԲՈՒՏ» ՓԲԸ-ի լուծարման մասին որոշումն ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 4-ին, իսկ սնանկ ճանաչվել է 2003թ. հոկտեմբերի 13-ին: Գյումրիի «Էդգար»

կարի թիվ 1 ՓԲԸ-ի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունվել էր մրցույթով մասնավորեցման մասին 23.01.03 N 241-Ն որոշումը, սակայն դատարանի 30.08.2002թ. վճռով ընկերությունն արդեն ճանաչվել էր սնանկ, Գյումրիի «Դարբնոցամամլիչ սարքեր» ՓԲԸ-ի մրցույթով մասնավորեցման մասին ՀՀ կառավարության N 810-Ն որոշումն ընդունվել էր 29.04.2004թ., իսկ ընկերությանը սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռը կայացվել էր 12.04.2004թ.:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ըստ ՀՀ կառավարության որոշումների, որոնցով նախատեսված էր մասնավորեցման ենթակա ռազմավարական նշանակության օբյեկտներ համարվող ընկերությունների մասնավորեցման գործընթացն իրականացնել առանձին մոտեցմամբ և մասնավորեցման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծվել էր միջգերատեսչական հանձնաժողով, սակայն դրանց նկատմամբ իրականացված գործառույթներով պարզ չեն այն սկզբունքներն ու չափանիշները, որոնցով կատարվել է այդ ընկերությունների ընտրությունը և հաստատվել դրանց ցանկը: Մասնավորապես, նույն ոլորտին պատկանող մի շարք ընկերություններ, որոնք իրենց հզորություններով, կառուցվածքով և այլ չափանիշներով չեն զիջում ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների ցանկում ընդգրկվածներին, սակայն մասնավորեցվել են («Կոննեկտ» ԲԲԸ) կամ ենթակա են մասնավորեցման (Երևանի «Էլեկտրոն» ԲԲԸ) առանց ցանկում ընդգրկվելու: Մյուս կողմից, ցանկում ընդգրկվել են մի շարք ընկերություններ, որոնց որպես ռազմավարական նշանակության օբյեկտ համարելը պարզ չէ, թե ինչով է պայմանավորված, քանի որ դրանց մեծ մասը հետագայում լուծարվել են, գտնվում են լուծարման գործընթացում կամ սնանկ են ճանաչվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Մասնավորեցման ենթակա ռազմավարական նշանակություն ունեցող 81 ընկերությունների մասնավորեցման գործընթացը կանոնակարգելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներով նախատեսվել էր այդ ընկերությունների մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման գործառույթները, սակայն հաշվետու ժամանակաշրջանում այդ ընկերություններից մասնավորեցվել են ընդամենը 34-ը կամ 42%-ը:
2. Լուծարման գործընթացում են գտնվում, լուծարվել կամ դատարանների կողմից կայացված վճիռներով սնանկ են ճանաչվել ՀՀ կառավարության որոշումներով հաստատված մասնավորեցման ենթակա ռազմավարական նշանակություն ունեցող 35 ընկերություններ կամ շուրջ 43.2%-ը:
3. Սնանկացման մասին դատարանների վճիռների առկայության պարագայում որոշ ընկերությունների վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են նաև դրանց լուծարման կամ մասնավորեցման մասին որոշումներ: Արդյունքում՝ նույն ընկերությունների

վերաբերյալ միաժամանակ առկա էին և՛ ՀՀ կառավարության որոշումները՝ լուծարման կամ մասնավորեցման մասին, և դատարանների վճիռները սնանկացման վերաբերյալ:

4. Ռազմավարական նշանակություն ունեցող մասնավորեցված 31 ընկերությունների¹ գնահատված ակտիվների ընդհանուր գումարը կազմել է 49,048.9 մլն դրամ¹, մասնավորեցման ենթակա պետական բաժնեմասի գնահատված արժեքը՝ 24,602.0 մլն դրամ¹, վաճառքի գինը՝ ընդամենը 6,741.6 մլն դրամ¹ կամ գնահատված արժեքի 27.4%-ը:
5. Ռազմավարական նշանակություն ունեցող մասնավորեցված ընկերությունների 4 գնորդներ չեն կատարել ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որոնց ստանձնած ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 774.0 մլն դրամ և 10.7 մլն ԱՄՆ դոլար, ինչպես նաև պետք է ստեղծվեր մոտ 2500 աշխատատեղ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հստակեցնել մասնավորեցման ենթակա, որպես ռազմավարական նշանակություն համարվող ընկերությունների ընտրության սկզբունքները և չափանիշները:
2. Ապահովել ընկերությունների մասնավորեցման կամ լուծարման վերաբերյալ ՀՀ կառավարության ընդունած որոշումների և դատարանների կողմից կայացված սնանկացման վճիռների փոխկապակցվածությունը «Անվճարունակության (սնանկացման) մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածով սահմանված պահանջներին:
3. Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

¹ Հաշվարկներում ներառված չեն նախկինում մասնավորեցված 34% պետական բաժնեմաս ունեցող Վաղարշապատի «Էլեկտրոն» և Արսիլանի «Կիլիկիա» ԲԲԸ-ների և «Արմենմոտոր» ՓԲԸ-ի ցուցանիշները:

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի խորհրդի 14.07.2004թ. նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն և մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունում իրականացված վերահսկողության վերաբերյալ

Վերահսկողության հիմքը - ՀՀ ԱԺ 2003թ. դեկտեմբերի 3-ի ն-062-3 որոշմամբ հաստատված՝ «ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2004թ. գործունեության ծրագրի» 7.2 կետի պահանջը և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի 2004թ. մարտի 19-ի թիվ 67 հրամանը:

Վերահսկողության նպատակը - 2002թ. երկրորդ կիսամյակի և 2003թ. ընթացքում պետական պատվերի և ծրագրերի կատարման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև առանձին հոդվածներով նախատեսված և փաստացի կատարման միջև համապատասխանությունը:

Վերահսկողության օբյեկտը - ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի նախարարություն, ենթակա կառուցվածքային ստորաբաժանումներ:

2002թ. երկրորդ կիսամյակի համար ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությանը պլանավորվել էր հատկացնել 1,115,514.0 հազ. դրամ:

Համաձայն «ՀՀ 2003թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության հաստատված բյուջեն 2003 թվականի համար կազմել է 4,392,370.1 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 17-ի թիվ 731-ն որոշմամբ ստեղծվել է ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե, որի արդյունքում 2003 թվականին պետական բյուջեի «ՍՊՈՐՏ» մասի անջատումից հետո ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) բյուջեն կազմել է 2,922,623.5 հազ. դրամ:

ՀՀ կառավարության մի շարք որոշումների համաձայն, հաստատված բյուջեի ծրագրերում կատարվել են փոփոխություններ և վերաբաշխումներ: ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 387-ն և 381-ն որոշումներով «Երևան ստուդիա» և «Եթեր» ստեղծագործական տուն ՓԲԸ-ների բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին, որի արդյունքում Նախարարության 2003թ. ճշտված բյուջեն կազմել է 2,913,968.5 հազ. դրամ:

2002 թվականի երկրորդ կիսամյակի և 2003թ. ծրագրերի կատարողականը ներկայացված է 1-ին և 2-րդ հավելվածներում:

Նախարարության ապարատի պահպանման համար 2003 թվականի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 140,792.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 140,584.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 133,483.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 94.8%:

Ընտրանքային ուսումնասիրություններ են իրականացվել Նախարարության ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների կողմից պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման արդյունավետության և նպատակայնության վերաբերյալ:

- «Հայֆիլմ» կինոստուդիային, համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի 546-Ն որոշման, նախատեսվել էր 117,750.0 հազ. դրամ արժողությամբ երեք մուլտիպլիկացիոն կինոնկարների, 256,750.0 հազ. դրամ արժողությամբ 9-ը խաղարկային ֆիլմերի, ինչպես նաև 8,550.0 հազ. դրամ կինո-ֆոտո-ֆոնո պահպանության և կինոշուկաների մասնակցության գծով պետական պատվերի կատարում:

ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի թիվ 576-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1736-Ն որոշման համաձայն, խաղարկային և մուլտիպլիկացիոն կինոնկարների պետական պատվերի շրջանակներում 2003 թվականի ընթացքում ֆիլմերի ստեղծման նպատակով հատկացված բյուջետային միջոցների օգտագործման տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Աղյուսակ 1

ՀՀ	Ծրագրի անվանումը	Կինոնկարի անվանում	Ֆինանսավորում	Փաստացի ծախս	Կինոնկարի ավարտման ժամկետ	Ծանոթություն
1	Խաղարկային կինոնկարների ստեղծման գծով պետական պատվեր	«Նա և Նե»	59.000.0	73.192.3	2004	Գերաձախսը կապված է նախորդ տարվա չօգտագործված ֆինանսավորման հետ
		«Ջիվանի »	70.000.0	70.000.0	2003	
		«Մարիամ »	21.000.0	19.950.8	2004	
		«Սամանտա »	35.750.0	35.750.0	2003	
		«Սիբիլյա »	10.000.0	10.000.0	2004	
		«Իսկ պատերազմը շարունակվում է»	1.000.0	1.000.0	2004	
		«Դրախտ որոնելիս »	44.000.0	44.000.0	2003	
		«Սկիզբը»(Սև-Սպիտակ ծիածան)	8.000.0	8.000.0	2003	
		«Օրորոցային» (Ա.խաչատրյան)	8.000.0	8.000.0	2003	
2	Մուլտիպլիկացիոն կինոնկարների ստեղծման գծով պետական պատվեր	Ընդամենը	256.750.0	269.893.1		Գերաձախսը կապված է նախորդ տարվա չօգտագործված ֆինանսավորման հետ
		«Սասունցի-Դավիթ»	54.950.0	54.950.0	2004թ	
		«Երեք զանգակ »	17.800.0	26.826.8	2003թ	
		«Հեքիաթ »	45.000.0	45.000.0	2003թ	
		Ընդամենը	117.750.0	126,778.6		

Կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման գծով պետական պատվերի համար 2003թվականին փաստացի հատկացվել և ծախսվել է 4,275.0 հազ. դրամ:

Կինոշուկաների մասնակցության համար 2003 թվականին ֆինանսավորումը կազմել է 4,275.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 4,219.8 հազ. դրամ:

- 2003 թվականի ընթացքում թատերահանդեսային 16 կազմակերպությունների չձ պետական բյուջեից հատկացվել է 441,565.6 հազ. դրամ: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2003թվականի ընթացքում թատերական ներկայացումների մասնակցել է 239997 հանդիսատես, տոմսերի վաճառքից հասույթը կազմել է 113,942.9 հազ. դրամ, որից չի հաշվարկվել և վճարվել պետական բյուջե ավելացված արժեքի հարկ՝ 18,994.2 հազ. դրամի չափով:

Ուսումնասիրություններով պարզվել է նաև, որ թատերական կազմակերպություններում չի գործում տոմսային տնտեսության վարման հստակ կարգ: Նախարարության կողմից չի վերահսկվում տոմսերի վաճառքի, այդ թվում՝ հետ վերադարձման, հաշվառման և չվաճառված տոմսերի ոչնչացման գործընթացը:

Չձ պետական պատվերի շրջանակներում տեղադրված, նոր ներկայացումների բեմադրության իրականացման ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է՝

«Չ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ ՊՈԱԿ) Նախարարության 23.03.98թ. թիվ 144 հրամանով հանձնարարվել է բեմադրել Վ. Շեքսպիրի «12-րդ գիշեր» պիեսը: Կնքված պատվեր-պայմանագրում պիեսի բեմադրման ավարտի ժամկետ չի նշվել: Պիեսի բեմադրության համար թատրոնին պետական բյուջեից հատկացվել է 6,000.0 հազ. դրամ: Ներկայացման նախապատրաստման համար (դեկորացիա, հագուստ և այլն) ծախսվել է 3,035.4 հազ. դրամ: Սակայն բեմադրությունը չի ավարտվել, որն, ըստ ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից տրված պարզաբանման, կապված է գլխավոր դերակատարի մահվան հետ: ՊՈԱԿ-ի տնօրենի թիվ 01-24/63 19.08.03թ. գրությամբ, թատրոնը պարտավորվել է բեմականացումն ավարտել 2003 թվականի տարեվերջին, սակայն նշված ժամկետում բեմականացումը չի ավարտվել: Ավելին. ըստ տնօրենի գրության, բյուջետային միջոցների մնացած գումարը ծախսվել է թվով 4 այլ (ոչ պետական պատվերով) ներկայացում բեմադրելու նպատակով, որը, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» չձ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ պարբերության, որակվում է որպես օրենսդրական խախտում:

- Երևանի պետական կրկես ՊՈԱԿ-ի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2002 թվականի 2-րդ կիսամյակում պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 6,606.7 հազ. դրամ, որը ծախսվել է հետևյալ նպատակներով՝ աշխատավարձ՝ 3,815.0 հազ. դրամ, կենսաթոշակային ֆոնդ՝ 1,523.7 հազ. դրամ, էլեկտրաէներգիա՝ 1,268.0 հազ. դրամ: 2002 թվականի 2-րդ կիսամյակում իրականացվել է 40 ներկայացում, որին մասնակցել են 39.6 հազար հանդիսատես: Տոմսերի վաճառքից ստացված գումարը կազմել է 26,416.2 հազ.

դրամ, որից չի հաշվարկվել և վճարվել ավելացված արժեքի հարկ՝ 4,403.6 հազ. դրամի չափով:

2003 թվականի պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 14,060.7 հազ. դրամ, որից սուբսիդավորում՝ 11,300.0 հազ. դրամ, նախորդ տարիների պարտքի մարում՝ 1,993.8 հազ. դրամ և նպատակային ֆինանսավորում՝ 766.9 հազ. դրամ: Գումարները ծախսվել են հետևյալ նպատակներով՝ աշխատավարձ՝ 8,516.0 հազ. դրամ, կենսաթոշակային ֆոնդ՝ 3,017.8 հազ. դրամ և գործուղման ծախս՝ 766.9 հազ. դրամ:

2003 թվականի ընթացքում իրականացվել է 82 ներկայացում, որին մասնակցել են 91.6 հազար հանդիսատես: Տոմսերի վաճառքից ստացված գումարը կազմել է 62,884.6 հազ. դրամ, որից չի հաշվարկվել և վճարվել բյուջե ավելացված արժեքի հարկ՝ 10,482.9 հազ. դրամ:

- Գրահրատարակչության ոլորտում պետական պատվերի շրջանակներում հրատարակված գրականության ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2002 թվականին գրահրատարակչական ոլորտի պետական պատվերի կատարման համար բյուջեից հատկացվել է 90,600.0 հազար դրամ՝ 68 անուն գրքի հրատարակման համար: Այս մասով բյուջետային ֆինանսավորումը բացվել է 2002 թվականի դեկտեմբերի 27-ին, ինչի պատճառով պետական պատվերի կատարումը տեղափոխվել է 2003թ. բյուջետային տարի: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2002 թվականին պետական պատվերի գծով չի հրատարակվել 8 անուն գիրք: Համաձայն ՀՀ կառավարության 15.05.03թ. թիվ 655-Ն որոշման պահանջների, 2003 թվականին պետական պատվերի կատարման համար պետական բյուջեից հատկացվել է 100,600.0 հազար դրամ՝ 121 անուն գիրք հրատարակելու համար, որից լույս է տեսել ընդամենը 82-ը: Մնացած գրքերը հրատարակման պրոցեսում են:

ՀՀ կառավարությանն առընթեր «Տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն» կոլեգիայի 2001թվականի հունիսի 8-ի որոշմամբ «Գրադարանային կոլեկտոր» ՊՓԲ ընկերությանը հանձնարարվել է իրականացնել պետական պատվերով տպագրված գրքերի վաճառքը, և ստացված հասույթը՝ գրքերի իրացման հետ կապված ծախսերի նվազեցմամբ փոխանցել ՀՀ պետական բյուջե:

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 22-ի թիվ 51 որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչությունը վերակազմակերպվել է Նախարարության կազմում՝ հրատարակչական գործի գործակալության:

Ելնելով վերոնշյալ վերակազմակերպումից, պետք է փոփոխվեր նաև «Գրադարանային կոլեկտոր» ՊՓԲ ընկերության կողմից իրականացվող գործառնությունները, որը, սակայն, չի կատարվել: Ավելին. հրատարակչական գործի գործակալության կողմից 2003 թվականի ապրիլի 4-ին հաստատվել է «Գրադարանային կոլեկտոր» ՊՓԲ ընկերության 2003թ. ծախսերի նախահաշիվը, սակայն նման լիազորություններ գործակալությանը վերապահված չէ:

«Գրադարանային կոլեկտոր» ՊՓԲ ընկերությունը 2003թվականին ստացել է 94457 հատ գիրք՝ 38337,9 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ, որից վաճառվել է 21900 հատ՝ 8,957.5 հազ.

դրամի: Նշված գումարից պետական բյուջե փոխանցվել է 2,272.4 հազ. դրամ՝ այդ թվում ավելացված արժեքի հարկ՝ 1,052.4 հազ. դրամ, իսկ մնացած գումարը ծախսվել է ընկերության կարիքների համար:

Հրատարակված գրքերի վաճառքն իրականացվել է նախկին՝ Տեղեկատվության և գրահրատարակչության վարչությանը կից գործող գնագոյացման հանձնաժողովի առաջարկած մանրածախ գներով:

«Գրադարանային կոլեկտոր» ՓԲ ընկերությանը կամ պետք է հատկացվեր միջոցներ՝ պետական լիազոր մարմնի կողմից իր գործունեության իրականացման համար, կամ տրամադրվեր զեղչ, կամ էլ թույլատրվեր կիրառել վերադիր՝ հանձնաժողովի հաստատած գների նկատմամբ, որպեսզի ծածկեր գրքերի իրացման հետ կապված ծախսերը:

- Նախարարության աշխատակազմի և «Նաիրի» ՓԲԸ հրատարակչության միջև 2003 թվականի օգոստոսի 25-ին կնքվել է հրատարակման ծառայության մատուցման երկու պայմանագիր, համաձայն դրա 2003թ. պետական պատվերի շրջանակներում պետք է հրատարակվեր 14 անուն գիրք՝ 11,700.0 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ:

2004 թվականի հունվարի 1-ի դրությամբ հրատարակչությունը ստացել է նախատեսված ամբողջ գումարը: Պայմանագրի 4.3-րդ կետի համաձայն, գումարը պետք է փոխանցվեր հանձնման-ընդունման ակտի և արձանագրության առկայության դեպքում, սակայն 2003թվականին հրատարակվել է երկու անուն գիրք՝ 1,100.0 հազ. դրամ արժողությամբ:

- Հայաստանի Հանրապետությունում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատված՝ պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգով և կանոնակարգվում է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարի 1999 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 492 հրամանով ստեղծված երիտասարդության հարցերով փորձաքննական հանձնաժողովի կոմից:

Նախարարի 2003թվականի մայիսի 2-ի թիվ 170 հրամանով վերահաստատվել է երիտասարդական քաղաքականությանն ուղղված ծրագրերի փորձաքննական հանձնաժողովի կազմը: Պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է հասարակական կազմակերպությունների միջոցով: Երիտասարդական ծրագրերի իրականացման գծով 2002թ. 2-րդ կիսամյակում ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 29-ի թիվ 627 որոշման համաձայն նախատեսվել է հատկացնել 80,504.8 հազ. դրամ: Նշված ժամանակահատվածում ֆինանսավորվել է 63 ծրագիր, որից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել թվով 49 կազմակերպություն, մասամբ՝ 10-ը, իսկ 4 կազմակերպություն ընդհանրապես չեն ներկայացրել, դրանք են՝

1. «Ծնողագուրկ և զոհված ազատամարտիկների երեխաների աջակցություն» ծրագիրը՝ 158.0 հազ. դրամ, որը պետք է իրականացվեր Հայ կանանց դաշինք բարեգործական հասարակական կազմակերպության միջոցով:

2. «Սխրանքի ուղիներով» ծրագիրը՝ 769.8 հազ. դրամ, որը պետք է իրականացվեր «Թաթուլ Կրայեյան» միություն հասարակական կազմակերպության միջոցով:
3. «Ռուսաստանը մեր աչքերով» ծրագիրը՝ 561.0 հազ. դրամ, որը պետք է իրականացվեր «Հայ - ռուսական երիտասարդության միություն հասարակական կազմակերպության» միջոցով:
4. «Տեղեկատվական աջակցություն իրավագիտության բարձրացման ուղղությամբ» ծրագիրը, 1,461.0 հազ. դրամ, որը պետք է իրականացվեր «Ելք հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության» միջոցով:

ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի թիվ 541-Ն որոշմամբ, 2003 թվականին երիտասարդական թվով 55 ծրագրերի իրականացման համար պետական պատվերով հատկացվել է 147,875.0 հազ. դրամ, «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ապահովման համար՝ 50,000.0 հազ. դրամ, ընդհամենը՝ 197.875.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 5-ի թիվ 752-Ն որոշմամբ կատարվել է պետական պատվերի նվազեցում՝ 29,601.0 հազ. դրամի չափով, փոխարենը տրամադրվել է նույն գումարի սուբսիդավորում: ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 492-Ա որոշման համաձայն, «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի անցկացման նպատակով պահուստային ֆոնդից լրացուցիչ հատկացվել է 15,000.0 հազ. դրամ:

2003թ. Երիտասարդական ծրագրերի իրականացումն ապահովվել է «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) միջոցով, որը, ըստ պետական ռեզիստրի, գրանցված է Խանջյան 13ա հասցեում: Սակայն ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված հասցեում (և՛ ընդհանրապես) Կենտրոնին տարածք չի տրամադրվել: Ըստ հաստատված հաստիքացուցակի, Կենտրոնը պետք է ունենար 14 աշխատակից, փաստացի 13-ն են: Ըստ հաստատված նախահաշվի, Կենտրոնին, որպես պահպանության ծախս, նախատեսված է հատկացնել 14,700.0 հազար դրամ, փաստացի այն կազմել է 13,413.2 հազար դրամ, որը, համաձայն գործող կարգի, գոյացել է իրականացված միջոցառումների համար նախատեսված գումարներից՝ 10% մասհանումների հաշվին: Փաստացի ծախսը կազմել է 9,618.2 հազար դրամ, որից աշխատավարձը՝ 6,220.5 հազար դրամ: Գոյացած միջոցների և փաստացի ծախսերի տարբերությունը, Նախարարության համաձայնությամբ, թողնվել է Կենտրոնին՝ 2004 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նախահաշվի հոդվածներով չկատարված ծախսերը հոգալու համար: Գրասենյակային պայմանների բացակայությունը հանգեցրել է կանոնադրական խնդիրների և պարտավորությունների ոչ լիարժեք կատարմանը, մասնավորապես՝

- Կենտրոնի կողմից չի իրականացվել ընթացիկ վերահսկողություն՝ ծրագրերի կատարման նկատմամբ,
- չի տրվել իրականացված միջոցառումների արդյունավետության գնահատական,
- միջոցներ չեն ձեռնարկվել պայմանագրային պարտավորությունները չկատարած կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Կենտրոնի կնքած պայմանագրերով ֆինանսավորվել են թվով 54 ծրագրեր, որից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն են ներկայացրել թվով 39 կազմակերպություն, մասամբ՝ 2-ը, չեն ներկայացրել 8-ը:

Թվով 5 ծրագրերի գծով աշխատանքները ընթացքի մեջ են, որը պայմանավորված է ուշ ֆինանսավորմամբ (2003 թվականի դեկտեմբեր ամսին): Այդ ծրագրերով աշխատանքները նախատեսվել են ավարտել 2004 թվականին:

Հաշվետվություն չներկայացրած ծրագրերի գծով, ընդհանուր առմամբ, հատկացվել է 12,340.6 հազար դրամ:

Կենտրոնի գործառույթները սահմանափակվել են ընդամենը նախարարությունից գումարներ ստանալու և դրանք կատարող կազմակերպություններին փոխանցելու շրջանակներում՝ առանց հետևողական լինելու նշված ծրագրերի իրականացման հետագա ընթացքի նկատմամբ: Նախարարության կողմից, որպես լիազոր մարմնի, վերահսկողություն չի իրականացվել Կենտրոնի գործունեության նկատմամբ, որը նախատեսված է ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:

Ըստ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի, պետական կազմակերպության գործադիր մարմնի գործառույթներն իրականացնող անձի հետ (տնօրեն) կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը (տվյալ դեպքում՝ նախարարը): Պայմանագրով սահմանվում են կատարողի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, մասնավորապես պայմանավորված աշխատանքի վարձատրմամբ և այլ դրույթներով: Նախարարության ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հետ նման պայմանագրեր չեն կնքվել:

Մշակութային արժեքների պահպանության գործակալությունում իրականացված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ.

Համաձայն «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 1994թ. հոկտեմբերի 22-ի թիվ 501 որոշման, Նախարարության համակարգում ստեղծվել է մշակութային արժեքների պահպանության վարչություն՝ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Համաձայն օրենքի 16-րդ հոդվածի, վարչությունը վերապահվել էր պետական փորձագիտական հանձնաժողով ունենալու իրավունք և մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման ներկայացված, ինչպես նաև ժամանակավոր արտահանումից վերադարձված մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնելու լիազորություն:

ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 6-ի թիվ 202 որոշման 3-րդ կետի համաձայն, Նախարարության մշակութային արժեքների պահպանության վարչությունը վերակազմավորվել է մշակութային արժեքների պահպանության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն), որպես Նախարարության կազմում գործող պետական կառավարչական հիմնարկ:

2003 թվականի փետրվարի 15-ին լրացել է փորձագիտական հանձնաժողովի կազմի ժամկետը, սակայն դրանից հետո փորձագիտական հանձնաժողովը ընդունել է որոշումներ, որոնք չէին կարող իրավական ուժ ունենալ:

Գործակալության տնօրենը 2003 թվականի մայիսի 15-ի թիվ 01-2/51 գրությամբ դիմել է Նախարարություն՝ էլեկտրաէներգիայի գումարի, հեռախոսների աբոնեմտային վարձի և պահակային ծառայության վարձավճարների համար մշակութային արժեքների փարձաքննության և այլ ծառայությունների գումարներից վճարումներ կատարելու նպատակով: Սակայն, չունենալով Նախարարության թույլտվությունը, Գործակալությունը ծառայությունների դիմաց գանձված վճարներից սեփական կարիքների համար ծախսել է 3,315.1 հազար դրամ:

Փաստաթղթային ուսումնասիրություններով պարզվել է, որ փորձաքննությունների և այլ ծառայությունների դիմաց գանձվող վճարների հաշվառումն իրականացվել է հարկային տեսչության կողմից չհաստատված դրամարկղի գրքով: Դրամարկղի մուտքի օրդերները կնքվել են մշակութային արժեքների պահպանության վարչության վարչատնտեսական բաժնի կնիքով, երբ նման կազմակերպություն գոյություն չունի: Նույնը կատարվել է նաև Գործակալության կողմից Արաբկիրի հարկային տեսչություն ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի փաստաթղթում, որի հաշվետվությունը ներկայացնող կազմակերպության տողում դրված է մշակութային արժեքների պահպանության վարչության դրոշմը, այն դեպքում, երբ այն հաստատվել է Գործակալության կնիքով:

Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարի 2003 թվականի մարտի 3-ի թիվ 21-Ա հրամանի համաձայն, ՀՀ կառավարության կողմից մինչև օրենքով սահմանված կարգով համապատասխան իրավական ակտերի ընդունումը՝ մշակութային արժեքների փորձաքննության և մշակութային արժեքների հետ կապված այլ ծառայությունների վճարների գանձման, ինչպես նաև պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Հ. Մուրադյանը 2003 թվականի մարտի 3-ից համարվել է Հայաստանի Հանրապետության տարածքից մշակութային արժեքների արտահանման և ներմուծման, ինչպես նաև մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դեպքերում մշակութային և արվեստաբանական փորձաքննության և ծառայությունների վճարների գանձման, ինչպես նաև պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման պատասխանատու:

Ի լրումն 21-Ա հրամանի, 2003 թվականի մայիսի 19-ի 29-Ա հրամանով Հ. Մուրադյանին վերապահվել է նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ օրենքով նախատեսված կարգով ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքների վերադարձման նպատակով կնքված գրավի պայմանագրի համաձայն դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման պարտականությունները:

2003 թվականի ընթացքում մշակութային արժեքների փորձաքննության և այլ ծառայությունների դիմաց գանձված վճարների ընդհանուր չափը կազմել է 24,217.9 հազար դրամ, որից 8,000.0 հազար դրամը, համաձայն ժամկետային ավանդի 2 պայմանագրերի, մուտքագրվել է

Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում Հ. Մուրադյանի անունով բացված ավանդային հաշվին: Հարկ է նշել, որ Գործակալության կողմից գրավի պայմանագրեր չեն կնքվել: Գործակալության կնիքով նախկին վարչության անունից կնքվել են պետության հանդեպ տուրքային պարտավորությունների կատարման պայմանագրեր: Մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագրի դիմաց գանձվել է մշակութային արժեքի գնի 15%-ի չափով գումար՝ օրենսդրությամբ սահմանված 0.5%-ի փոխարեն: Գումարներ են գանձվել նաև ժամանակավոր արտահանվող երաժշտական գործիքների և նվագարանների համար, որով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, տուրքի գանձում չի նախատեսվում:

- Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 15-ի թիվ 736-Ն «Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման և պահպանման գծով 2003թ. պետական պատվերի մասին» որոշման, նախատեսվել է հուշարձանների պահպանման գոտիների նախագծում և թողարկում Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում, ինչպես նաև հուշարձանների հաշվառում, վկայագրում և ցուցակագրում՝ Վայոց ձորի, Կոտայքի և Լոռու մարզերում:

Նշված աշխատանքները կատարելու համար հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: 2003 թվականի նոյեմբերի 4-ի «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի, որպես պատվիրատուի և «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ որպես կատարողի միջև կնքվել է ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման և պահպանման ծառայությունների մատուցման գնման թիվ ԳԾԶԲ-03/14 պայմանագիրը՝ 34,622.0 հազ. դրամ ընդհանուր գումարով: Սույն պայմանագրին կից 1-ին և 2-րդ հավելվածները ներառում են տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջները և ծառայության մատուցման ժամկետները: Համաձայն հավելվածների, ծառայությունների կատարման ժամկետ է սահմանվել 2003թ. դեկտեմբերի 17-ը:

Վերոնշված աշխատանքների կատարման համար կազմվել է 3 նախահաշիվ: Համաձայն ընդունման-հանձման ակտի, որն ընդունվել է Նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից, կատարվել է միայն Վայոց ձորի, Կոտայքի և Լոռու մարզերի հուշարձանների հաշվառման, վկայագրման և պետական ցուցակների կազմման աշխատանքները՝ 13,030.7 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Պայմանագրով նախատեսված մնացած աշխատանքները (21,591.3 հազ. դրամի) վերահսկողությունն իրականացնելու պահի դրությամբ ավարտված չէին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Օրենսդրորեն կանոնակարգված չէ մշակույթի և երիտասարդության ոլորտի գործունեությունը:

1. Թատերահանդեսային կազմակերպությունների գծով չի ապահովվել պետպատվերով նախատեսված ներկայացումների ժամանակին բեմականացումը, համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել բյուջետային միջոցների ոչ նպատակային օգտագործման ուղղությամբ: Չեն ապահովվել հարկային մուտքերը մասնավորապես՝ տոմսերի վաճառքից առաջացած ավելացված արժեքի հարկի գծով: Նախարարության կողմից կանոնակարգված չէ տոմսային տնտեսության վարման կարգը:
2. Գրահրատարակչական ոլորտում ժամանակին չի ապահովվում պետպատվերի շրջանակներում նախատեսված գրականության հրատարակումը, կարգավորված չեն հրատարակված գրականության գնագոյացման և իրացման հարցերը, մշակութային արժեքների պահպանության գործակալության գործառույթները:
3. Անհրաժեշտ վերահսկողություն չի իրականացվում երիտասարդական ծրագրերի նկատմամբ: Հասարակական կազմակերպությունների կողմից հաճախ խախտվում են պայմանագրային պարտավորությունները: Լուրջ թերություններ կան «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ գործունեությունում:
4. Չեն կատարվել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները. նախարարության կողմից, որպես պետական լիազորված մարմին, պայմանագրեր չեն կնքվել ՊՈԱԿ-ների տնօրենների հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Ազգային ժողովին և կառավարությանը

Մշակույթի և երիտասարդության ոլորտի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել բնագավառի գործունեությունը:

ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը

1. Իրականացնել միջոցառումներ՝ պետական պատվերով նախատեսված ներկայացումները ժամանակին բեմականացնելու ուղղությամբ, վերականգնել ոչ նպատակային օգտագործված բյուջետային միջոցները, ապահովել հարկային մուտքերի հաշվարկումն ու ժամանակին պետական բյուջե փոխանցումը, կանոնակարգել տոմսային տնտեսության վարման կարգը:

2. Գրահրատարակչական ոլորտում ֆինանսավորումը կատարել, համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված ժամանակացույցի, կարգավորել պետական պատվերի շրջանակներում հրատարակվող գրականության գնագոյացման և իրացման հարցերը: Կանոնակարգել մշակութային արժեքների պահպանության գործակալության գործառույթները:
3. Ուժեղացնել վերահսկողությունը երիտասարդական ծրագրերի իրականացման նկատմամբ. բարձրացնել «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ պատասխանատվությունը՝ իրականացված միջոցառումների արդյունավետության գնահատման, հասարակական կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ուղղությամբ:

Հավելված 1

01,07,2002թ,-31,12,2002թ,ընթացքում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներ օգտագործման վերաբերյալ

հազար դրամ

Խումբ	Ենթախումբ	Ծրագիր	Նախատեսված	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախսը	Ֆինանսավորման կատարողականը (%)	Դրամարկղային ծախսի կատարողականը (%)	Շեղումներ	
								Ֆինանսավորումը պլանի նկատմամբ	Դրամարկղային ծախսը պլանի նկատմամբ
01	07	07.Արխիվ	603.6	525.2	524.4	87.0	86.9	(78.4)	(79.2)
04	03	05.Չայկովսկու անվ.երաժու.դպ.	32,087.7	32,089.5	32,056.0	100.0	99.9	1.8	(31.7)
07	02	01.Գրադարաններ	128,655.9	130,095.9	129,328.5	101.1	100.5	1,440.0	672.6
	03	01.Թանգարաններ	162,228.7	164,190.6	162,225.0	101.2	100.0	1,961.9	(3.7)
	04	01.Մշակույթի տներ	5,060.6	4,548.8	4,275.0	89.9	84.5	(511.8)	(785.6)
	05	01.Մշակույթի արժեքների պահպ.վարչություն	7,241.6	7,247.0	7,247.0	100.1	100.1	5.4	5.4
	05	03.Տեսեկ	2,668.4	2,683.1	2,683.1	100.6	100.6	14.7	14.7
	05	05.Ժող.ստեղծ.ևարհեստ.	4,002.4	3,911.1	3,850.5	97.7	96.2	(91.3)	(151.9)
	06	02.Օպերա	83,417.4	85,784.8	85,784.8	102.8	102.8	2,367.4	2,367.4
	06	03.Սունդուկյան	34,053.8	35,019.9	35,019.9	102.8	102.8	966.1	966.1
	06	04.Այլ քատերական կազմ.	228,158.3	234,286.5	233,885.6	102.7	102.5	6,128.2	5,727.3
	06	06.Միջոցառումներ	94,321.4	94,321.4	94,321.4	100.0	100.0	0.0	0.0
	07	01.Մուլտիպլիկացիա	82,508.7	82,508.7	82,448.5	100.0	99.9	0.0	(60.2)
	07	02.Խաղարկային կինո	136,761.7	136,761.6	136,761.6	100.0	100.0	(0.1)	(0.1)
	07	03.Վավերագրական կինո	24,689.0	24,689.0	24,689.0	100.0	100.0	0.0	0.0
	07	04.Կինո-Ֆոտո-Ֆոնո մասնաշենք	4,275.0	4,275.0	4,275.0	100.0	100.0	0.0	0.0
	07	05.Կինոշուկաներ	4,275.0	4,275.0	4,275.0	100.0	100.0	0.0	0.0
	14	01.Երիտասարդական ծրագրեր	80,504.8	80,504.7	80,504.7	100.0	100.0	(0.1)	90.1)
		Ընդամենը	1,115,514.0	1,127,717.8	1,124,155.0	101.1	100.8	12,203.8	8,641.0

Ծանոթություն-Նման բարձր տոկոսը պայմանավորված է նախորդ ամիսների թեր ֆինանսավորման հետ,ինչը լրացվել է երկրորդ կիսամյակում

Հավելված 2

2003թ.ընթացքում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ հազար դրամ

Խումբ	Ենթախումբ	Ծրագիր	Նախատեսված	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Ֆինանսավորման կատարողականը (%)	Դրամարկղային ծախսի կատարողականը (%)	Շեղումներ	
								Ֆինանսավորումը պլանի նկատմամբ	Դրամարկղային ծախսը պլանի նկատմամբ
01	03	05.Պաշտոնական գործուղում	0,0	6,601.4	6,601.4			6,601.4	6,601.4
	07	07.Արխիվ	111,723.1	111,723.1	116,223.7	100.0	104.0	0.0	4,500.6
04	03	05.Չայկովսկու անվ.եր.դպ.	62,193.6	62,193.6	62,193.6	100.0	100.0	0.0	0.0
	10	09.Պատմամշակ.ժառ.գիտահետազ.	14,080.9	14,080.9	14,080.9	100.0	100.0	0.0	0.0
04	05	01.Արտադպրոցական ուս.գծով պ/պ	11,290.0	11,290.0	11,290.0	100.0	100.0	0.0	0.0
	07	01.Միջին մասնագիտ.ուս.հաստ.պ/պ	63,357.0	63,356.1	63,356.1	100.0	100.0	-0.9	-0.9
07	01	01.Կենտրոնական ապարատ	140,792.6	140,584.8	133,483.2	99.9	94.9	-207.8	-7,309.4
	02	01.Գրադարաններ	253,646.7	253,646.7	242,998.5	100.0	95.8	0.0	-10,648.2
	02	02.ՀՀ ազգային գրապալատ	21,849.8	21,849.8	21,849.8	100.0	100.0	0.0	0.0
	03	01.Թանգարաններ	357,093.3	357,085.4	357,085.4	100.0	100.0	-7.9	-7.9
	04	01.Մշակույթի տներ	7,516.8	7,516.8	7,454.9	100.0	99.2	0.0	-61.9
	05	01.Տեկ	5,547.6	5,495.1	5,495.1	99.1	100.0	-52.5	-52.5
	05	03.Տեղեկատվ.պահպ.և արխիվաց.	1,425.0	1,425.0	1,425.0	100.0	100.0	0.0	0.0
	05	05.Ժող.ստեղծ.և արհեստ.կ-ն	7,964.9	7,964.9	7,787.7	100.0	97.8	0.0	-177.2
	06	01.Ա.Խաչատրյան 100 տուբսիդիա	14,333.0	14,333.0	14,332.4	100.0	100.0	0.0	-0.6
	06	02.Օպերա	154,412.2	154,412.2	154,412.2	100.0	100.0	0.0	0.0
	06	03.Սունդուկյան	63,033.4	63,033.4	63,033.4	100.0	100.0	0.0	0.0
	06	04.Այլ թատերական կազմ	422,319.8	422,319.8	422,319.8	100.0	100.0	0.0	0.0
	06	06.Միջոցառումներ	17,484.0	17,484.0	17,484.0	100.0	100.0	0.0	0.0
	07	01.Մուլտիպլիկացիա պլ.	117,750.0	117,750.0	117,750.0	100.0	100.0	0.0	0.0

Ծանոթություն - Ֆինանսավորման ավելացումը կատարված է 2003 թվականի համար նախատեսված լրացուցիչ հատկացումներից.

Պահուստային ֆոնդից՝ 43,656.3 հազ. դրամ

Նախորդ տարիների պարտքերի մարման համար՝ 276,320.7 հազ. դրամ

Պաշտոնական գործուղման համար՝ 6,601.4 հազ. դրամ:

Հաշվետվությունը հաստատվել է
ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի խորհրդի
30.09.2004թ. նիստում և ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն
և առողջապահության նախարարություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեով տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով առողջապահական պետական նպատակային ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ

Վերահսկողության հիմքը - Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 19-րդ կետի պահանջը և Վերահսկիչ պալատի նախագահի 2004 թվականի ապրիլի 1-ի թիվ 72 հրամանը:

Վերահսկողության նպատակը - Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից «Տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով նախատեսված, հատկացված և օգտագործված միջոցների արդյունավետությունը և նպատակայնությունը:

Վերահսկողության օբյեկտը - ՀՀ առողջապահության նախարարություն, պետական առողջապահական գործակալություն, պետական պատվերն իրականացրած բուժհաստատություններ:

Ուսումնասիրություններն իրականացվել են՝ ՀՀ առողջապահության նախարարության, պետական առողջապահական գործակալության և պետպատվերի շրջանակներում բուժօգնություն և սպասարկում տրամադրած բուժհաստատությունների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի վերաբերյալ

Վերջին 10 տարվա ընթացքում, ըստ վիճակագրական տվյալների, Հայաստանում տուբերկուլյոզի հիվանդությունն աճել է 2,5 անգամ, 40%-ով բարձրացել է մահացության ցուցանիշը: Մանրէազատումով հիվանդության ցուցանիշն աճել է գրեթե 2 անգամ, հաճախացել են մահացու ելքով հիվանդության սրընթաց և տարածուն ձևերը, աճել են «ընտանեկան տուբերկուլյոզի» դեպքերը: Ըստ մասնագիտական պարզաբանումների, ստեղծված իրավիճակի հիմնական պատճառներն են՝ բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացումը, միգրացիոն պրոցեսների ավելացումը, հակատուբերկուլյոզային հիմնական պրեպարատների նկատմամբ հիվանդության հարուցիչի դեղորայքային կայուն ձևերի ավելացումը, հակատուբերկուլյոզային իմունիտետը ճնշող որոշ հիվանդությունների՝ հատկապես ՉԻԱՀ-ի աճը,

սոցիալական «ռիսկի» խմբերի՝ աղքատների, անօթևան մարդկանց և թափառող երեխաների ավելացումը:

Ելնելով ստեղծված իրավիճակի վտանգավորությունից, ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1286 որոշմամբ տուբերկուլյոզն ընդգրկվել է շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը, իսկ 2003 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1680-Ն որոշմամբ հաստատվել է տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը: Ծրագրի նպատակն է՝ հանրապետության բնակչությանը պաշտպանել տուբերկուլյոզի տարածման վտանգից, ապահովել տուբերկուլյոզի կանխարգելման, հայտնաբերման և բուժման անընդմեջ համակարգված միջոցառումներ, բնակչությանը մատուցել անվճար հակատուբերկուլյոզային օգնություն, կասեցնել հիվանդության հետագա զարգացումը, նվազեցնել հասարակության հիվանդացության հավանականությունը, մահացությունը, հաշմանդամությունը: Ծրագրի իրականացման ժամկետ է սահմանվել 2003-2006 թվականները, որի ընթացքում նախանշվել է բացիլազատող հիվանդների 70 տոկոսի հայտնաբերում, 85 տոկոսի բացիլազրկում, 80 տոկոսի առողջացում՝ հետագայում նշված ցուցանիշներն առավելագույնին հասցնելու ակնկալիքով:

Ծրագրի հիմքում դրված է դեռևս 1995 թվականից Հայաստանում ներդրված և կիրառվող՝ Առողջապահության Համաշխարհային կազմակերպության կողմից մշակված DOTS հակատուբերկուլյոզային պայքարի ռազմավարությունը, որն, ըստ մասնագետների գնահատման, արդյունավետ է մատչելիության առումով և հնարավորություն է ընձեռում նվազագույն ծախսերով հասնել հիվանդների բուժման բարձր արդյունքների:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են՝

- ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից առողջապահության նպատակային ծրագրերով հատկացվող միջոցները,
- բ) Միջազգային կազմակերպությունների, դոնոր երկրների նպատակային ֆինանսավորումն ու տեխնիկական օժանդակությունը:

ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ

«ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 05 «Առողջապահություն» խմբի 02 «Հիվանդանոցային բուժօգնություն» ենթախմբի 01՝ «Տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսվել է տուբերկուլյոզի 2200 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 468,9 մլն դրամ գումարով, 150 հետազոտում հիվանդանոցային պայմաններում ախտորոշման նպատակով՝ 6,4 մլն դրամ գումարով և 400 դեպք՝ տուբերկուլյոզով հիվանդների առողջարանային բուժում՝ 73.0 մլն դրամ գումարով, ընդամենը՝ 548,3 մլն դրամ (հավելված 1):

2003 թվականի ընթացքում կատարվել է վերաբաշխում, որի արդյունքում տարեկան նախատեսված հատկացումները նվազել են 56,5 մլն դրամով՝ կազմելով 491,8 մլն դրամ (ճշտված

պլան), որի դիմաց փաստացի կատարողականը և ֆինանսավորումը կազմել է 490,3 մլն դրամ, կամ նախատեսվածի 99,7%-ը :

Փոփոխությունները (նվազեցումը) կատարվել են ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1663-Ն որոշմամբ ու ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2003 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 4/3-4/99-11086 ծանուցագրի հիման վրա, համապատասխանաբար՝ 15,0 և 41,5 մլն դրամի չափով: Նվազեցումը ծրագրի շրջանակներում տարեվերջին տնտեսման արդյունք է: Կրճատված միջոցներն ուղղվել են առողջապահության համակարգի մի շարք ընկերությունների նախորդ տարիների պարտքերի մարմանը:

Քացի նշված ծրագրից, տուբերկուլյոզի բուժօգնության և սպասարկման նպատակով ֆինանսական հատկացումներ են կատարվել նաև.

ա) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 05 խմբի 02 ենթախմբի 11՝ «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով, որի ընդհանուր չափը կազմել է 90,3 մլն դրամ,

բ) 2003 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ բյուջետային տարիների պարտքերը մարելու նպատակով՝ հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսերին՝ 39,9 մլն դրամ, Դիլիջանի մանկական առողջարանին՝ 1,6 մլն դրամ, ընդամենը՝ 41,5 մլն դրամ:

Տուբերկուլյոզի հիվանդանոցային բժշկական օգնության գծով պետական պատվերն իրականացվել է 10 բուժօգնություն, դրանցից վեցը հակատուբերկուլյոզային դիսպանսեր են, մեկը՝ առողջարան, երեքը՝ հիվանդանոց:

2003 թվականին պետության կողմից անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման կարգի համաձայն, բուժօգնության ծառայության գծով բուժված յուրաքանչյուր դեպքի դիմաց վճարումները կատարվել են՝ ելնելով ՀՀ առողջապահության նախարարության և պետական առողջապահական գործակալության հետ կնքած պայմանագրերին կից հաշվարկներով հաստատված գներից:

Պետպատվերի շրջանակներում մեկ հիվանդի մեկ օրվա բուժման ծախսը՝ ըստ 2003 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծի բացատրագրի, ներառում է՝ աշխատավարձ և աշխատավարձի վրաեկ 34.2%, տնտեսական ծախսեր՝ 17.8%, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծախսեր՝ 11.0%, դեղորայքի և բժշկական պարագաների ծախսեր՝ 24.0%, սննդի ծախս՝ 13%:

Ընտրանքային կարգով թվով հինգ բուժօգնություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ պետպատվերի կատարման դիմաց 2003 թվականի ընթացքում պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցներն ըստ ուղղությունների օգտագործվել են.

- աշխատավարձ և աշխատավարձի վրաեկ՝ 39.5%
- տնտեսական և այլ բնույթի ծախսեր՝ 34.4%
- դեղորայքի, բժշկական պարագաների և

լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծախսեր՝ 13.0%

- սննդի ծախսեր՝ 13.1%

Վերոնշյալ ծախսային հոդվածների նախանշված և փաստացի համամասնությունների համադրումից պարզորոշ երևում է, որ պետպատվեր իրականացնող բուժհաստատությունները չեն ապահովել պետության կողմից նախանշված ծախսերի լիարժեք կատարումը: Ստացված ֆինանսական միջոցների 73.9%-ը օգտագործվել է աշխատանքի վարձատրության և տնտեսական ծախսերը հոգալու նպատակով, որը 21.9%-ով գերազանցում է նախանշված ցուցանիշը: Փոխարենը պլանավորվածից 22.0%-ով պակաս են կատարվել դեղորայքի, բժշկական պարագաների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծախսերը: Նշվածը վկայում է այն մասին, որ պետական բյուջեից հատկացված միջոցների մի մասը օգտագործվել է ոչ նպատակային, որը, ըստ ներկայացված պարզաբանման, կապված է միջազգային կազմակերպությունների կողմից կյանքում առաջին անգամ տուբերկուլյոզով հաստատված ախտորոշմամբ բուժվող հիվանդների անհատույց դեղորայք տրամադրելու հետ:

2003 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կատարված աշխատանքների ծավալների վերաբերյալ

Ըստ միջազգայնորեն ընդունված չափորոշիչների, տուբերկուլյոզի հիմնական համաճարակաբանական քանակական ցուցանիշներն են՝

1. հիվանդացությունը՝ տվյալ տարվա ընթացքում նոր հայտնաբերված հիվանդների թիվը 100 հազար բնակչի հաշվով,
2. մահացությունը՝ տվյալ տարվա ընթացքում մահացածների թիվը 100 հազար բնակչի հաշվով,
3. հիվանդացության տարածվածությունը՝ հաշվառված բոլոր հիվանդների թիվը 100 հազար բնակչի հաշվով, որն ընդգրկում է նոր հայտնաբերված և քրոնիկ հիվանդներին, ինչպես նաև հիվանդության կրկնության և անբարենպաստ ելքերով դեպքերը:

ՀՀ առողջապահության նախարարության, պետական առողջապահական գործակալության և տուբերկուլյոզի բուժօգնությանն առնչվող բուժհաստատությունների կողմից ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության համաձայն, 2003 թվականի տարեսկզբին հանրապետությունում բուժկանխարգելիչ հիմնարկների հսկողության տակ գտնվող (հաշվառված) անձանց ընդհանուր թիվը կազմել է 9040, իսկ տարեվերջին՝ 8852 մարդ, այդ թվում՝

ա) տուբերկուլյոզի ակտիվ ձևով հիվանդներ՝ 6068 մարդ (68.5%), որից երեխաներ (0- 14 տարեկան)՝ 246, դեռահասներ (15-17 տարեկան)՝ 100,

բ) տուբերկուլյոզի ոչ ակտիվ ձևով հիվանդներ՝ 2784 մարդ, որից երեխաներ՝ 385, դեռահասներ՝ 63:

Հաշվառված հիվանդների ընդհանուր թվից 2397-ը գյուղական բնակչությունն է, 51-ը՝ փախստականներ: Երեխաների և դեռահասների տեսակարար կշիռը հաշվառված անձանց ընդհանուր թվում կազմել է 9% կամ 794 մարդ:

Հիվանդության ակտիվ և ոչ ակտիվ ձևերից տարածվածությունը 2003 թվականի տարեվերջին կազմել է 295 մարդ (բնակչության հաշվարկային մեծությունը, ըստ 2003 թվականի պետական բյուջեի հիմքում դրված ցուցանիշի, մեր կողմից ընտրվել է 3.000,0 հազար, որից մեծահասակներ՝ 2.240,0 հազար, երեխաներ՝ 760,0 հազար):

2003 թվականին հիվանդացության մակարդակը հանրապետությունում կազմել է 52,3 մարդ, որից ակտիվ ձևով հիվանդացությունը՝ 47,9 մարդ:

Կյանքում առաջին անգամ տուբերկուլյոզի հաստատված ախտորոշումով հիվանդների ընդհանուր թիվը կազմել է 1569 մարդ, այդ թվում՝ 1437-ը ակտիվ ձևով հիվանդներն են, որից՝ 1174-ը՝ տղամարդիկ, 263-ը՝ կանայք: Նշված հիվանդների թվում առավել բարձր տեսակարար կշիռ են կազմել 20-39 տարեկան անձինք՝ 636 հիվանդ (44,3%) և 40-59 տարեկան անձինք՝ 384 հիվանդ (26,7%), որը վկայում է բնակչության աշխատունակ տարիքի մարդկանց շրջանում հիվանդության տարածման վտանգավոր բարձր տեմպերի մասին:

Տուբերկուլյոզի հիվանդության զարգացման դինամիկան, ըստ հիվանդության ակտիվ և ոչ ակտիվ ձևերի, 2003 թվականի ընթացքում բնորոշվել է հետևյալ ցուցանիշներով.

ա) տարեսկզբին ակտիվ հիվանդների թիվը կազմել է 6050 մարդ: Տարվա ընթացքում այդ թիվն ավելացել է 1535-ով, այդ թվում՝ 1437 նոր հայտնաբերված ակտիվ հիվանդներ, և 39-ը՝ ոչ ակտիվ ձևով հաշվառված (վաղ ռեցիդիվ) և 44-ը՝ այլ երկրներից վերադարձած: Տարվա ընթացքում տուբերկուլյոզի ակտիվ խմբերից հաշվառումից հանվել են 1273 մարդ, այդ թվում՝ առողջացել և ակտիվ խմբից ոչ ակտիվ են տեղափոխվել 934-ը, մեկնել են հանրապետությունից այլ երկրներ՝ 333-ը, չի հաստատվել տուբերկուլյոզ և դուրս են հանվել հաշվառումից՝ 6-ը: Մահացածների ընդհանուր թիվը կազմել է 244 մարդ, որից 169-ը մահացել են տուբերկուլյոզի ակտիվ ձևից, 75-ը՝ այլ պատճառներից: Տուբերկուլյոզի ակտիվ ձևի մահացության ցուցանիշը կազմել է 5,6 մարդ: 2003 թվականի տարեվերջին ակտիվ ձևով հիվանդների թիվը կազմել է 6068 մարդ,

բ) տուբերկուլյոզի հիվանդության ոչ ակտիվ ձևով հիվանդների թիվը տարեսկզբին կազմել է 2990 մարդ: Տարվա ընթացքում այս խմբին դասվող հիվանդների թիվն ավելացել է 1066-ով, որից 934-ը տեղափոխվել են ակտիվ խմբից, իսկ 132-ը՝ նոր հայտնաբերված: Տարվա ընթացքում առողջացել և դուրս են գրվել դիսպանսեր հսկողությունից 1239 հիվանդներ, 18-ը մահացել են, իսկ 15-ը տեղափոխվել են ակտիվ խումբ, ընդամենը՝ 1272 մարդ: Ոչ ակտիվ ձևից մահացության ցուցանիշը կազմել է 0,6 մարդ: 2003 թվականի տարեվերջին ոչ ակտիվ ձևով հիվանդների թիվը կազմել է 2784 մարդ:

Տուբերկուլյոզի տարածվածության գնահատման գործում առանձնակի կարևոր նշանակություն ունի հիվանդության մանրէազատմամբ ուղեկցվող դեպքերի հայտնաբերումն ու բուժումը: Ըստ ստացված տվյալների, 2003 թվականի տարեսկզբին տուբերկուլյոզի բոլոր

տեսակներից մանրէագատողների (բացիլակիրների) ընդհանուր թիվը կազմել է 1612 մարդ կամ ակտիվ ձևով հաշվառվածների 26,6%-ը: Տարվա ընթացքում հայտնաբերվել են 585 նոր մանրէագատողներ, ևս 16-ը ավելացել են ակտիվ խմբից, 27-ը՝ ոչ ակտիվ խմբից, 24-ը՝ այլ երկրներից վերադարձած, ընդամենը՝ 652 մարդ: Մանրէագատողների տեսակարար կշիռը տարվա ընթացքում հայտնաբերված ակտիվ ձևով հիվանդների ընդհանուր թվում կազմել է 45,4%, որը վկայում է տուբերկուլյոզի վտանգավոր ձևի տարածման բարձր տեմպերի մասին:

Տարվա ընթացքում մահացել են 124 մանրէագատողներ, որից 106-ը՝ տուբերկուլյոզից, 18-ը՝ այլ պատճառներից: Այս տիպի հիվանդների մահացությունը տուբերկուլյոզի ակտիվ ձևից մահացածների թվի մեջ կազմել է 62,7 %: Մեկնել են Հայաստանից՝ 124 բացիլակիր, բուժվել և դադարել են բացիլակիր լինել՝ 431 հիվանդ, որը կազմել է նոր հայտնաբերված մանրէագատողների 73.7%-ը (Ազգային ծրագրով սահմանված 85.0%-ի դիմաց):

2003 թվականի տարեվերջին մանրէագատողների թիվը կազմել է 1585 մարդ:

Տուբերկուլյոզի վաղ հայտնաբերման հնարավորությունները նվազել են հատկապես երեխաների և անչափահասների շրջանում, որը արտաթոքային տուբերկուլյոզի ախտորոշման համար անհրաժեշտ «Տուբերկուլին» փորձանյութ չունենալու հետևանք է: Հարկ է նշել, որ փորձանյութը, որպես արդյունավետ ախտորոշման միջոց, լայնորեն կիրառվում է Ռուսաստանի Դաշնությունում, իսկ Հայաստանի Հանրապետությունում դրա բացակայությունը կապված է ՀՀ առողջապահության նախարարության կողմից այն չգրանցելու հետ:

Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի, տուբերկուլյոզի համաճարակի հակազդման ազգային ռազմավարության 1.3 կետի «Ե» ենթակետով նախատեսված է մասնավորապես՝ երեխաների շրջանում հիվանդների հայտնաբերման նպատակով տուբերկուլինոդիագնոստիկ միջոցառումների կատարումը:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համապատասխան ծառայությունների կողմից, հանրապետության տարածքում կենդանիների տուբերկուլյոզի հայտնաբերման նպատակով, 4 տարի անընդմեջ կիրառվում է վերոնշված ախտորոշման մեթոդը, որը կատարվում է չգրանցված «Տուբերկուլին» փորձանյութով (ի դեպ՝ այն ձեռք է բերվել պետական գնումների գործակալության միջոցով): Այս պարագայում դրական արդյունքներն ակնհայտ են՝ 2000 թվականի համեմատությամբ 50 %-ով կրճատվել է տուբերկուլյոզով ախտահարված կենդանիների քանակը, 34-ից՝ նվազելով 17- ի: 2003 թվականին փորձանյութը կիրառվել է 626508 գլուխ կենդանիների վրա, որի ձեռքբերման համար պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետական բյուջեից նախատեսվել և հատկացվել է 15,1 մլն դրամ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում բուժհաստատությունների կողմից իրականացվել են տուբերկուլյոզի հիվանդանոցային բուժօգնության հետևյալ տեսակները՝

- Տուբերկուլյոզի բուժում հիվանդանոցային պայմաններում,
- Տուբերկուլյոզի հետազոտում հիվանդանոցային պայմաններում՝ ախտորոշման նպատակով,

- Ջորակոչիկների փորձաքննություն հիվանդանոցային և ցերեկային (ստացիոնար) պայմաններում,
- Առողջարանային բուժում:

Ըստ վերոնշված բուժօգնության տեսակների, 2003 թվականի պատկերը հետևյալն է՝

ա) տուբերկուլյոզի բուժօգնություն տրամադրած թվով 11 բուժհաստատությունների հիվանդանոցային գործունեության մահճակալային ֆոնդը (մահճակալների քանակը) կազմել է 550 միավոր, որից մանկական՝ 35 միավոր:

2003 թվականի ընթացքում ստացիոնար բուժհաստատություններ ընդունված հիվանդների ընդհանուր թիվը կազմել է 1728 մարդ, մահճակալ - օրը՝ 118541: Տարեվերջին դեռևս դուրս չգրված հիվանդների թիվը կազմել է 242 մարդ:

Տուբերկուլյոզի հիվանդանոցային բուժման 2003 թվականի փաստացի կատարողականը կազմել է 533,3 մլն դրամ, ֆինանսավորումը՝ 515,7 մլն դրամ: Կատարողականի դիմաց 17,6 մլն դրամի չափով պակաս ֆինանսավորումը կապված է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին հիվանդանոցներում բուժվող զինծառայողներին տրամադրված սննդի արժեքի չափով նվազեցման հետ:

2003 թվականին տուբերկուլյոզի հիվանդանոցային բուժօգնություն ստացած հիվանդների թիվը կազմել է 2194 մարդ, այդ թվում բուժօգնություն ստացած զինծառայողները՝ 304, իսկ գումարը՝ 81,5 մլն դրամ: Հիվանդանոցային բուժում ստացած բոլոր հիվանդներից գյուղական բնակչությունը կազմել է 804 մարդ (36.6%):

2003 թվականի ընթացքում հիվանդանոցներում տուբերկուլյոզի բոլոր ձևերից մահացածների ընդհանուր թիվը կազմել է 57 մարդ, այդ թվում՝ չորս երեխա:

2003 թվականի ընթացքում կատարվել է 137 վիրահատություն, այդ թվում մեկը՝ մանկական:

բ) 2003 թվականին, ինչպես նախորդ 10 տարիներին, տուբերկուլյոզը հիմնականում հայտնաբերվել է պասսիվ եղանակով՝ առաջնային բուժկանխարգելիչ բուժհիմնարկների կողմից, որոնք ախտորոշումը ճշտելու նպատակով տուբերկուլյոզի կասկածով հիվանդներին ուղարկել են հակատուբերկուլյոզային դիսպանսեր կամ՝ ստացիոնար: Հիվանդանոցային պայմաններում ախտորոշման նպատակով հետազոտված հիվանդների ընդհանուր թիվը կազմել է 348 մարդ, որոնցից 150-ի մոտ հաստատվել է տուբերկուլյոզ, որը կազմում է բոլոր հայտնաբերված հիվանդների 10,4%-ը: Բուժծառայության այս տեսակի գծով փաստացի կատարողականը և ֆինանսավորումը կազմել է 14,1 մլն դրամ՝ պետական բյուջեով նախատեսված 6,4 մլն դրամի դիմաց: Մեկ հետազոտման միջին արժեքը կազմել է 40,6 հազ. դրամ, բյուջեով նախատեսված 42,6 հազ. դրամի դիմաց: Մեկ հիվանդի միջին օրական ծախսը կազմել է 5,0 հազ. դրամ: Հակատուբերկուլյոզային դիսպանսերում և պոլիկլինիկաներին կից կաբինետներում հիվանդների հետ շփման մեջ գտնվողների կանխարգելիչ հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է 34 հիվանդ կամ 2003 թվականի ընթացքում հայտնաբերվածների 2,4 %-ը:

- զ) 2003 թվականի ընթացքում կատարվել է գորակոչային տարիքի 286 անձանց փորձաքննություն՝ հիվանդանոցային և ստացիոնար պայմաններում: Բուժժառայության այս տեսակի գծով փաստացի կատարողականը և ֆինանսավորումը կազմել է 5,96 մլն դրամ: Մեկ գորակոչիկի փորձաքննության միջին արժեքը կազմել է 20,8 հազար դրամ:
- դ) տուբերկուլյոզի առողջարանային բուժում ստացած հիվանդների ընդհանուր թիվը կազմել է 226 մարդ, այդ թվում երեխաներ (միջև 14 տարեկանը ներառյալ)՝ 216: 2003 թվականի փաստացի կատարողականը կազմել է 44,8 մլն դրամ, ֆինանսավորումը՝ 45,6 մլն դրամ: Բուժժառայության այս տեսակով նախկինում զբաղվել են երկու հաստատություն՝ Դիլիջանի մանկական առողջարանը և Դիլիջանի Գյանջեցյանի անվան հակատուբերկուլյոզային առողջարանը: Վերջինս ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի թիվ 693-Ն որոշմամբ օտարվել է, չի գործում և քանդված է, որն իր բացասական ազդեցությունն է ունեցել տուբերկուլյոզով հիվանդների լիարժեք, արդյունավետ բուժման գործում (ի դեպ՝ 2003 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր այդ առողջարանին «Հիվանդանոցային բուժօգնության գծով պետական պատվեր» ծրագրով հատկացնել 23,8 մլն դրամ): Նշված որոշմամբ օտարման ձևով փաստորեն կատարվել է սեփականաշնորհման ծրագրում չընդգրկված պետական գույքի մասնավորեցում, որը հակասում է ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 27-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետությունում առողջապահական հաստատությունների մասնավորեցման ռազմավարության հայեցակարգի» երրորդ կետի պահանջին, ըստ որի մասնավորեցման ենթակա չեն մասնավորապես՝ առողջապահական այն հաստատությունները, որոնց գործունեությունն ունի համապետական նշանակություն:

Նշվածը բավարար հիմք է տալիս եզրակացնելու, որ բնակչության առողջության պահպանման գործում կարևոր նշանակություն ունեցող բուժհաստատության օտարման պատճառով 2003 թվականին չի ապահովվել պետական ծրագրի լիարժեք կատարումը:

Առողջարանային բուժօգնության ամբողջ ծավալն ապահովվել է մանկական առողջարանի կողմից, որի մահճակալային ֆոնդը կազմել է ընդամենը 120 միավոր, իսկ մահճակալ-օրը՝ 10704:

Հիշեցնենք, որ 2003 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր տուբերկուլյոզով հիվանդների առողջարանային բուժման 400 դեպք՝ փաստացի ապահովված 226-ի դիմաց (56.5%):

Տուբերկուլյոզի դեմ պայքարի միջտարածաշրջանային ծրագրի իրականացման վերաբերյալ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ֆինանսավորմամբ և տեխնիկական օժանդակությամբ 2003 թվականին Երևան քաղաքում «Դատապարտյալների հիվանդանոց» հիմնարկին կից ստեղծվել է 200 մահճակալանոց բաժանմունք՝ տուբերկուլյոզով հիվանդ

կալանավորների համար: 2003 թվականի ընթացքում հիվանդանոցային բուժում է ստացել 303 մարդ, բուժվել են (դուս են գրվել)՝ 166-ը:

Նույն կազմակերպության միջոցներով Աբովյանի հանրապետական դիսպանսերի տարածքում կառուցվել է «Կենտրոնական ազգային ռեֆերենսային լաբորատորիա», որը սպասարկում է հանրապետության ողջ տարածքը, այդ թվում նաև՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկները:

2003 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև կնքվել է ֆինանսական համագործակցության համաձայնագիր, ըստ որի Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը հնարավորություն է ընձեռում ՀՀ կառավարությանը Մայնի Ֆրանկֆուրտի վերականգնման վարկերի բանկից (հակիրճ՝ KfW) ստանալ 2,0 մլն եվրո գումարի դրամաշնորհ՝ «Տուբերկուլյոզի դեմ պայքարի միջտարածաշրջանային ծրագիր» նախագծի իրականացման համար և մինչև 250,0 հազ. եվրո գումարի դրամաշնորհ՝ «Աջակցություն տուբերկուլյոզով հիվանդներին՝ բանտային հիվանդանոցի վերակառուցման» ծրագրի իրականացման համար: Նշված ծրագրերի նպատակն է՝ «Առողջապահության համաշխարհային կազմակերպության» կողմից առաջարկված՝ DOTS (բուժման կարճատև կուրս՝ անմիջական հսկողության ներքո) ռազմավարությանը համապատասխան, տուբերկուլյոզի տարբեր ձևերի ախտորոշման և բուժման բարելավման, ինչպես նաև տուբերկուլյոզով հիվանդ կալանավորների բժշկական սպասարկմանն օժանդակելու միջոցով նպաստել տարածաշրջանում տուբերկուլյոզի վարակի տարածման շղթայի ընդհատմանը:

Նախատեսվել է ծրագրի հաշվին ֆինանսավորվող ապրանքների մատակարարումը, ներմուծումը և ծառայությունների մատուցումը ծրագիրն իրականացնող կազմակերպություններին, ինչպես նաև վերջիններիս հետ պայմանագիր կնքած կապալառուներին ազատել բոլոր տեսակի հարկերից, տուրքերից և պարտադիր այլ վճարներից:

Գումարների օգտագործումը, տրամադրման պայմանները և կարգը սահմանվում են KfW բանկի և վարկառուների միջև կնքվող պայմանագրերով, որոնք կնքվում են դրամաշնորհի տրամադրման տարվանից սկսած՝ ութ տարվա ընթացքում: Գումարների տրամադրման վերջնաժամկետ է սահմանվել 2010 թվականի դեկտեմբերի 31-ը:

2003 թվականի սեպտեմբերի 3-ին ՀՀ առողջապահության նախարարության և KfW բանկի կողմից ընտրված GOPA խորհրդատվական կազմակերպության միջև ստորագրվել և հաստատվել է BMZ թիվ 2002-65-470՝ տուբերկուլյոզի դեմ պայքարի միջտարածաշրջանային ծրագիրը, որը բաղկացած է հետևյալ գլխավոր բաղադրամասերից՝

Հ/Հ	ԲՆՉԱԳՐԱՄԱՍ	KfW բյուջեի տեղաբաշխումը (եվրո)
1.	Հինգ տարով ՏԲ-ի դեղերի մատակարարում ԴՌՏՍ-ի համազգային ծրագրի իրականացման համար, ներառյալ ազատագրվման վայրերը	800,000.0

2.	Հինգ տարով լաբորատոր սարքավորումների և բժշկական սպառողական ապրանքների մատակարարում՝ ՏԲ-ի ախտորոշման համար	300,000.0
3.	Ավտոմեքենաներ՝ ՏԲ-ի Դ-ՈՏՍ ծրագրի վերահսկողության և մոնիտորինգի համար	50,000.0
4.	Աջակցություն ռեֆերենս լաբորատորիայի ախտորոշաբանական կարողության և բազմակի դեղակայունության ուսումնասիրությունների կատարման համար, ինչպես նաև՝ բազմակի դեղակայուն հիվանդների բուժման համար նախատեսված շենքերի վերանորոգմանը	150,000.0
5.	Տուբերկուլոզի Ազգային Կենտրոնի վերանորոգում և տեխնիկապես հագեցում	400,000.0
6.	Խորհրդատվական ծառայությունների ծախսեր	240,000.0
7.	Չնախատեսված ծախսեր	310,000.0
	Ընդամենը	2,250,000

2003 թվականի ընթացքում նշված դրամաշնորհի հաշվին ծախսեր չեն կատարվել:

Հաշվետվությանը ծանոթացել է ՀՀ առողջապահության նախարարության պատասխանատու անձը: Առարկություններ և դիտողություններ չեն ներկայացվել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- «Տուբերկուլոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր» ծրագրով 2003 թվականի պետական բյուջեից հատկացված միջոցների մի մասն օգտագործվել է ոչ նպատակային, մասնավորապես՝ ստացված ֆինանսական միջոցների 73,5%-ը օգտագործվել է աշխատանքի վարձատրության, տնտեսական և այլ բնույթի ծախսերը հոգալու նպատակով, որը 21,9%-ով գերազանցում է պետական բյուջեով նախանշված ցուցանիշը: Փոխարենը պլանավորվածից 22% -ով պակաս են կատարվել դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծախսերը:
- Վերջին տարիներին տուբերկուլոզի դեմ պայքարի համակարգված ծրագրի բացակայության, նախկինում գործող համակարգի փլուզման և ախտորոշման ձևերի ժխտման, ինչպես նաև առաջնային ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում վճարովի սպասարկման ներդրման պատճառով հանրապետությունում առկա է տուբերկուլոզի հիվանդության, հատկապես դրա վտանգավոր՝ մանրէազատող և դեղակայուն ձևերի տարածման բարձր տեմպեր: Վերջին տասը տարիների ընթացքում տուբերկուլոզի

հիվանդությունը աճել է 2,5 անգամ, 40 %-ով բարձրացել է մահացության ցուցանիշը, իսկ մանրէազատումով մահացության ցուցանիշը՝ 2 անգամ: 2003 թվականին հայտնաբերված՝ կյանքում առաջին անգամ տուբերկուլյոզի ակտիվ ձևով հաստատված ախտորոշումով հիվանդների շրջանում բարձր տեսակարար կշիռ են կազմել 20-39 տարեկան անձինք՝ 636 հիվանդ (44,3%) և 40-59 տարեկան անձինք՝ 384 հիվանդ (26,7 %): Աճել են նաև «ընտանեկան տուբերկուլյոզի» դեպքերը:

3. Բնակչության առողջության պահպանման գործում համապետական նշանակություն ունեցող բուժհաստատության՝ Դիլիջանի Գյանջեցյանի անվան հակատուբերկուլյոզային առողջարանի օտարման պատճառով, չի ապահովվել 2003 թվականի պետական բյուջեով նախատեսված առողջարանային բուժօգնության պետական ծրագրի լիարժեք, ամբողջական կատարումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տուբերկուլյոզի կանխարգելման, վաղաժամ հայտնաբերման և բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է.

ՀՀ կառավարությանը

1. Հակատուբերկուլյոզային պայքարի մեջ ներգրավել բժշկական ցանցի առաջնային՝ ամբուլատոր-պոլիկլինիկական օղակը, հիվանդության հայտնաբերման նպատակով ամբողջ բնակչության համար ապահովելով անվճար լաբորատոր- ախտորոշիչ ծառայությունների տրամադրումը:
2. Վերականգնել ամենամյա անվճար ֆլյուորոգրաֆիկ հետազոտությունները մանկական տարիքի անձանց, հասարակական սննդի և կոմունալ սպասարկման հիմնարկների աշխատողների շրջանում, ինչպես նաև «ռիսկի» խմբերում ընդգրկված անձանց համար:
3. Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող ֆինանսական և տեխնիկական միջոցներն առավելապես ուղղել բուն՝ հակատուբերկուլյոզային ծառայությունների ուժեղացմանը:
4. Ելնելով հիվանդության վտանգավորությունից և դրա կանխարգելման կարևորությունից՝ ձեռնամուխ լինել «Տուբերկուլյոզի մասին» ՀՀ օրենքի ընդունմանը:
5. «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և Վերահսկիչ պալատ ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների մասին:

ՀՀ առողջապահության նախարարությանը

1. Ուժեղացնել հսկողությունը հատկացված միջոցների, ըստ պետական բյուջեի նախագծում նախանշված ցուցանիշների օգտագործման նկատմամբ՝ ապահովելով համապատասխան հաշվետվական ձևերի կիրառումը:
2. Լրատվական և տեղեկատվական այլ միջոցների օգնությամբ ակտիվացնել բնակչության շրջանում տուբերկուլյոզի կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև առողջ ապրելակերպի քարոզչությունը:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՀՀ 2003թ. պետական բյուջեից 05.02.01. ծրագրով իրականացված աշխատանքների և ֆինանսավորման վերաբերյալ

(հազար դրամ)

<i>Խումբ, ենթախումբ, ծրագիր</i>	<i>Բուժօգնության անվանումը</i>	<i>2003 թ. պետական բյուջե</i>	<i>2003 թ. տարեկան ծշտված բյուջե</i>	<i>Կատարողա- կան</i>	<i>Ֆինանսա- վորում</i>
05.02.01	Տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր, այդ թվում	505 038,94	491812,10	490 278,16	490 278,16
1	«Հանր. հակատուբ. դիսպ.»	258 746,54	258 746,54	258 746,46	258 746,46
2	«Դիլիջ. մանկակ. առողջ.»	45 551,50	45 551,50	45 551,50	45 551,50
3	Ք. հակատուբ. դիսպանսեր	63 029,20	63 029,20	63 029,20	63 029,20
4	Կապանի հակատուբ. դիսպանսեր	12 605,70	12 605,70	11 917,70	11 917,70
5	Գորիսի հիվանդանոց	12 175,10	12 175,10	12 175,10	12 175,10
6	Ապարանի հիվանդանոց	14 800,10	6770,90	6 450,00	6 450,00
7	Արտաշատի հակատուբ.	34 339,30	34 339,30	34 339,30	34 339,30
8	Գյումրիի հակատուբ. դիսպանսեր	42 196,10	42 196,10	42 196,10	42 196,10
9	Վանաձորի հակատուբ. դիսպանսեր	14 480,00	14 480,00	13 955,00	13 955,00
10	Արմավիրի հիվանդանոց	14420,50	1917,80	1 917,80	1 917,80
11	Դիլիջանի հակատուբ.առողջարան	23783,20	--	--	--
12	Սևանի հիվանդանոց	12175,10	--	--	--

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Կրթության բնագավառում համագործակցության մասին միջկառավարական
համաձայնագրի շրջանակներում ստեղծված Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի (ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն) ֆինանսատնտեսական
գործունեության համատեղ ստուգման վերաբերյալ**

Վերահսկողության հիմքերը՝ Ռուսաստանի Գաշնության հաշվիչ պալատի 2004 թվականի աշխատանքի ծրագիրը (կետ 3.17) և ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2004թ. գործունեության ծրագրի 5-րդ կետը:

Վերահսկողության նպատակը՝ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում գտնվող Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի (այսուհետ՝ Ռ-ՀՀ) ֆինանսատնտեսական գործունեությունը 2002-2003 թվականների ժամանակահատվածում:

Ուսումնասիրության առարկան՝ Ֆինանսական, տնտեսական և ուսումնական գործունեություն կազմակերպելու Ռուսաստանի Գաշնության օրենսդրության պահպանումը, միջկառավարական համաձայնագրի շրջանակներում Ռ-ՀՀ համալսարանին դաշնային բյուջեից հատկացված միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը հավաստող փաստաթղթերը:

Ուսումնասիրության օբյեկտը՝ Ռուս - Հայկական (Սլավոնական) համալսարան:

Ուսումնասիրության անցկացնելու ժամկետը՝ 2004 թվականի մարտ ամիսը:

Ուսումնասիրությունը անցկացվել է՝ Ռուսաստանի Գաշնության հաշվիչ պալատից՝ տեսչության պետի տեղակալ Ե.Ն. Բերեժնոյի (ղեկավար), առաջատար տեսուչ Ս. Ի. Պետրովայի մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատից՝ տեսչության պետ Գ.Գ. Սարոյանի, տեսչության պետ Ս.Ս. Մարգարյանի մասնակցությամբ:

Վերահսկողության արդյունքները

1. Ընդհանուր մաս

1997 թվականի օգոստոսի 29-ին երկու պետությունների ժողովուրդների կրթության և մշակույթի զարգացման ուղղությամբ հետագա փոխգործակցության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, Ռուսաստանի Գաշնության կառավարության և Հայաստանի

Հանրապետության կառավարության միջև ստորագրվեց համաձայնագիր՝ Երևան քաղաքում Ռ-ՀՀ հիմնելու և գործունեության պայմանների մասին (այսուհետ՝ Համաձայնագիր):

Համաձայնագրով սահմանվել էր, որ Ռ-ՀՀ-ն՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից համատեղ ղեկավարվող պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է և օգտվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համալսարանների կարգավիճակից: Ռ-ՀՀ-ի կրթական գործունեությունն իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթության ռուսաստանյան պետական կրթական չափանիշի և հայկական կողմի հաստատած ազգային տարածաշրջանային քաղաղրիչների (հայոց լեզվի ուսուցում) հիման վրա:

Հիմնադիրների լիազորություններն իրականացնում են Ռուսաստանի Դաշնության կրթության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունները (հետագայում՝ Կողմեր):

Ռ-ՀՀ-ի կազմակերպական և ֆինանսատնտեսական գործունեությունը կարգավորող փաստաթուղթ է հանդիսանում 2000 թվականի մարտի 24-ին Ռուսաստանի Դաշնության կրթության և Հայաստանի հանրապետության կրթության և գիտության նախարարությունների կողմից հաստատված կանոնադրությունը:

Կանոնադրության համաձայն համալսարանն ինքնուրույն սուբյեկտ է, իրավաբանական անձի իրավունքներով, ինքնուրույն է իրականացնում ֆինանսատնտեսական գործունեությունը, ունի ինքնուրույն հաշվեկշիռ և հաշվարկային հաշիվ, այդ թվում՝ արտարժույթային, բանկային և այլ վարկային հիմնարկներում, ինքնուրույն է լուծում Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու համալսարանի կանոնադրությանը չհակասող պայմանագրերի կնքման, պարտավորությունների որոշման հետ կապված հարցերը:

Համաձայնագրով Ռ-ՀՀ-ի գործունեության նյութատեխնիկական, ֆինանսական և ուսումնամեթոդական ապահովման հարցերը լուծելու համար նախատեսվել էր ստեղծել Կողմեր-պետությունների համատեղ մարմին՝ ռուս-հայկական աշխատանքային խումբ: Ռ-ՀՀ-ի նյութական հիմքի ձևավորումը, համաձայնագրին համապատասխան, նույնպես պետք է իրականացվի, համաձայն նշված համատեղ աշխատանքային խմբի հանձնարարականների, հաշվի առնելով տրամադրվող օբյեկտների համապատասխանությունը Կողմեր-պետությունների օրենսդրությանը և բարձրագույն դպրոցի չափորոշիչներին:

Համաձայնագրի համաձայն (հոդված 10), Ռուսաստանի Դաշնության «Կրթության մասին» օրենքի (հոդված 35.4 կետ 2) և Ռ-ՀՀ-ի կանոնադրությանը համապատասխան նախատեսվել էր Հոգաբարձուների Խորհրդի ստեղծումը, որը կոչված է օգնել Ռ-ՀՀ-ին՝ խնդիրների լուծման ուղղությամբ: Հոգաբարձուների Խորհրդի անհատական կազմը, որտեղ ընդգրկված են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների, գործարարների, ֆինանսական, գիտական և ստեղծագործ շրջանակների, զանգվածային լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների

ներկայացուցիչները, հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի և Ռուսաստանի Դաշնության կրթության նախարարի համատեղ հրամանով:

Ստուգման ընթացքում պարզվել է, որ Հոգաբարձուների Խորհուրդը 2001 -2002 թվականներին անցկացրել է մեկական նիստ, իսկ 2003 թվականին՝ նիստեր չեն հրավիրվել:

2. Համալսարանի ֆինանսավորումը

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնագրով որոշվել էր, որ ՌՀՀ-ի գործունեության ֆինանսական ապահովումն իրականացնում են Կողմեր-պետությունները՝ հավասարության սկզբունքով, այդ թվում՝ սուբսիդիաների տեսքով, ՀՀ պետական բյուջեով ու ՌԴ դաշնային բյուջեով կրթության համար նախատեսված միջոցների հաշվին: ՌՀՀ-ի ֆինանսական ապահովման աղբյուր կարող է հանդիսանալ նաև ձեռնարկատիրական ու եկամուտ բերող այլ գործունեությունը:

ՌՀՀ-ի ֆինանսավորումն իրականացվում է ՌԴ կրթության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների միջոցով:

2002 թվականին ՌՀՀ-ն ֆինանսավորվել է ՌԴ-ի կողմից ամբողջությամբ՝ 5511.4 հազար ռուբլի գումարի չափով ըստ՝ «Կրթության» 14-րդ բաժնի, «Բարձրագույն մասնագիտական կրթության» 06 ենթաբաժնի, «Բարձրագույն մասնագիտական կրթությանն ուղղված գերատեսչական ծախսեր» նպատակային 400-րդ հոդվածի, «Բարձրագույն ուսումնական հաստատություններ» 271 ծախսերի տեսակի:

Ծախսերն իրականացվել են հաստատված նախահաշվին համապատասխան և դրա ծավալներով:

110110 «Զաղաքացիական ծառայողների աշխատանքի վարձատրություն»՝ 2743.5 հազար ռուբլի,

110200 «Աշխատանքի վարձատրության ֆոնդի հավելագրում»՝ 982.2 հազար ռուբլի,

130320 «Կրթաթոշակներ»՝ 1785.7 հազար ռուբլի:

2003 թվականին ՌԴ-ի կողմից ՌՀՀ-ի ֆինանսավորումն իրականացվել է սուբսիդիայով, համաձայն ՌԴ-ի կրթության նախարարության՝ ի դեմս կրթության նախարար Վ. Մ. Ֆիլիպովի և Ռուս - Հայկական համալսարանի՝ ի դեմս ռեկտոր Ա. Ռ. Դարբինյանի միջև 2003 թվականի հունիսի 10-ին կնքված՝ թիվ 1398 «Սուբսիդիա տրամադրելու մասին» պայմանագրի, 51212.6 հազար ռուբլի գումարի չափով:

ՌՀՀ-ի գիտական խորհրդի կողմից ստացված միջոցների շրջանակներում հաստատվել է նախահաշիվ ծախսերի հետևյալ ուղղություններով.

- աշխատանքի վարձատրության ֆոնդ՝ 6224.0 հազար ռուբլի
- աշխատանքի վարձատրության ֆոնդի հավելագրում՝ 1742.6 հազար ռուբլի
- կրթաթոշակ՝ 3246.0 հազար ռուբլի
- ուսումնական մասնաշենքի վերակառուցում և
- ամրացմանն ուղղված աշխատանքներ՝ 40000.0 հազար ռուբլի

- 2003 թվականի արդյունքներով ֆինանսավորումը կատարվել է լրիվ ծավալով:
- Ռ-Հ-ի ֆինանսավորման ծավալը բոլոր աղբյուրների հաշվին ներկայացված է (աղյուսակ 1):

Աղյուսակ 1
(հազար ռուբլի)

Ֆինանսավորում	2002թ.			2003թ.		
	գումար	կողմերի բյուջետային գումարներից %	բոլոր աղբյուրներից դրամական մուտքերի %	գումար	կողմերի բյուջետային գումարներից %	բոլոր աղբյուրներից դրամական մուտքերի %
Միջոցների ընդհանուր մուտքեր (բոլոր աղբյուրներից)	15323.1		100	77576.2		100
այդ թվում՝ Ռ-Ղ-ն դաշնային բյուջեի և ՀՀ պետ. բյուջեի միջոցներ	5831.2	100	38.1	60069.0	100	77.7
դրանցից՝ Ռ-Ղ-ի դաշնային բյուջե	5511.4	94.5	36.0	51212.6	85.3	66.2
ՀՀ պետբյուջե	319.8	5.5	3.0	8865.4	14.7	11.4
Արտաբյուջետային միջոցներ	9491.9		61.9	17507.2		22.3

Աղյուսակից երևում է, որ Ռ-Ղ-ի և ՀՀ-ի կողմից հատկացվող միջոցների հարաբերությունը 2002 թվականին կազմել է համապատասխանաբար՝ 94.5 ու 5.5 %, 2003 թվականին՝ 85.3 և 14.7%: Դա վկայում է այն մասին, որ միջկառավարական համաձայնագրով և «2003 թվականին դաշնային բյուջեի մասին» Ռ-Ղ-ի օրենքով նախատեսված Կողմեր-պետությունների կողմից Ռ-Հ-ի ֆինանսավորման հավասարաչափությունը ստուգվող ժամանակահատվածում չի պահպանվել:

Ստուգման ընթացքում պարզվել է, որ ֆինանսական բոլոր աղբյուրներից ստացված միջոցներով ֆինանսական գործառնությունները Ռ-Հ-ի կողմից իրականացվում են Հայաստանի գանձապետական համակարգից դուրս, «Առէքսիմբանկ» ՓԲԸ-ի միջոցով: Համապատասխան հաշվին հաշվեգրվում են ոչ միայն Ռ-Ղ-ի դաշնային բյուջեի միջոցները, այլև՝ դրամական միջոցներ այլ աղբյուրներից:

Ռ-Ղ-ի դաշնային բյուջեի միջոցները հաշվեգրելու համար համալսարանն առանձին հաշիվ չունի: Համալսարանի արտաբյուջետային միջոցները նույնպես գտնվում են գանձապետական համակարգից դուրս:

Եկամուտները և ծախսերը համալսարանի կողմից կատարվում են ընդհանուր ֆինանսական մուտքերի ու ծախսերի հիման վրա, չնշելով աղբյուրները՝ Ռ-Ղ-ի դաշնային բյուջեն, ՀՀ պետական բյուջեն կամ արտաբյուջետային միջոցները:

Նման դրությունը հետևանք է այն բանի, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները ՀՀ-ում չունեն բյուջետային հիմնարկի կարգավիճակ: Դրանց

ֆինանսատնտեսական գործունեությունը կարգավորվում է՝ «Պետական, ոչ առևտրային կազմակերպության մասին» ՀՀ օրենքով:

ՌԴ դաշնային բյուջեի միջոցների առանձնացված հաշվառում և վերահսկողություն իրականացնելու մեխանիզմները համաձայնագրով նախատեսված չեն:

Արդյունքում բացահայտվել է, որ բանկում, համալսարանի հաշվին, ֆինանսական տարվա ավարտին առկա են չօգտագործված միջոցներ: ՌՀՀ-ում առանձնացված հաշվապահական հաշվառման բացակայության պատճառով ստուգման ընթացքում դժվար էր պարզել դաշնային բյուջեի չվերադարձված միջոցների մնացորդները: Ռուսաստանի կրթության նախարարությանը ներկայացված հաշվետվությունների տվյալներում միջոցների մնացորդները հաշվված չէին:

Ստուգման ընթացքում ՌԴ դաշնային բյուջեի միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքեր չեն հայտնաբերվել:

Արտաբյուջետային գործունեություն

Արտաբյուջետային միջոցները ՌՀՀ-ի բյուջեի մասն են կազմում և կարգավորվում են համալսարանի բյուջեի ձևավորման ու կատարման կարգի մասին ներքին կանոնակարգով, որը հաստատվում է գիտական Խորհրդի կողմից:

ՌՀՀ-ի արտաբյուջետային գործունեությունը, բացի վճարովի կրթական ծառայություններից, ներառում է շենքային տարածքների վարձակալության հանձնելը, հրատարակչական գործունեությունը և այլն:

ՌՀՀ-ի բոլոր աղբյուրների հաշվին ֆինանսական մուտքերի ծավալը ներկայացված է աղյուսակ 2-ում:

(հազար դրամ)

<i>Արտաբյուջետային միջոցների մուտքերի աղբյուրներ</i>	<i>2002թ.</i>	<i>2003թ.</i>
Ընդամենը եկամուտներ արտաբյուջետային գործունեությունից	6491.9	17507.0
այդ թվում՝ ուսանողների ուսման վարձը	7196.9	11674.8
ասպիրանտների ուսման վարձը		12.5
ունկնդիրների ուսման վարձը	1275.9	2038.4
Ընդամենը եկամուտ՝ կրթական ծառայությունների դիմաց	8472.8	13725.7
այլ եկամուտ	382.2	255.0
նպատակային կրթաթոշակներ	58.8	60.0
անհատույց օգնություն	476.3	2748.9
ընդամենը եկամուտ՝ հովանավորությունից	535.1	2808.9
ընդամենը եկամուտ՝ վարձակալությունից	16.3	27.6
դրամաշնորհներ	85.5	689.9

Ինչպես երևում է աղյուսակից, Ռ-Հ-ի արտաբյուջետային միջոցների ծավալը ստուգվող ժամանակահատվածում աճել է 2 անգամ:

Ռ-Հ-ի կանոնադրությամբ ամրագրված է, որ կրթական վճարովի ծառայությունների մատուցումը կարգավորվում է միայն ՀՀ օրենքով ու նորմատիվային ակտերով, այն դեպքում, երբ միջկառավարական համաձայնագրով նախատեսված է, որ արտաբյուջետային գործունեությունը կարգավորվում է Ռ-Գ-ի կրթության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից (Ռ-Հ-ի նախահաշիվների հաստատման մասով), սակայն ստուգման պահին այդ հարցով նորմատիվային փաստաթուղթը բացակայում էր:

Ռուսաստանի կրթության նախարարությունը ձեռնարկատիրական և եկամտաբեր այլ գործունեությունից ստացված եկամուտների ու ծախսերի նախահաշիվը Ռ-Հ-ին ի գիտություն չի հայտնել:

Համաձայնագրին համապատասխան Ռ-Հ-ի եկամուտների ու ծախսերի նախահաշիվների հաստատման հարցերը պետք է կարգավորվեն ռուս-հայկական համատեղ աշխատանքային խմբի կողմից: Քանի որ այդ խումբը մինչև հիմա ձևավորված չէ, Ռ-Հ-ի արտաբյուջետային գործունեության հաշվառման ու վերահսկողության հարցերը տնօրինում է Ռ-Հ-ն:

2. Ուսումնական գործունեություն: Գաշնային բյուջեի միջոցների օգտագործման արդյունավետությունը

Ռ-Հ-ի կառավարումն իրականացվում է կոլեգիալության ու միանձնյա ղեկավարության գույակցման սկզբունքով: Կանոնադրությունը, դրանում կատարվելիք փոփոխությունները և լրացումներն ընդունվում են մանկավարժական ու գիտական աշխատողների համաժողովի կողմից և ռեկտորի ներկայացմամբ հաստատվում Ռ-Գ-ի կրթության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից: Ռ-Հ-ի ընդհանուր ղեկավարությունն իրականացնում է լիազորությունների հնգամյա ժամկետ ունեցող գիտական խորհուրդը, իսկ անմիջական ղեկավարությունը՝ ռեկտորը:

Ռ-Հ-ում գործում են 20 ամբիոն, վարչակառավարչական 20 ստորաբաժանում, նախապատրաստական դասընթացներ, 16 գիտական ստորաբաժանում, այդ թվում՝ կարիերայի (առաջընթացի) կենտրոնը, մինչքուհական կրթության կենտրոնը, գիտական քաղաքականության, նորարարության և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը, գրադարանը, ասպիրանտուրայի բաժինը, ռուսական բանահյուսության ինստիտուտը, Հարավային Կովկասի անվտանգության և ինտեգրման գիտական պրոբլեմային խումբը, «Նանո և օպտոէլեկտրոնային ֆիզիկական հիմունքների» գիտական պրոբլեմային խումբը, «Ռ-Հ-ի բանբեր» պարբերական գիտական հրատարակումը, Լ. Սկրտչյանի անվան ռուս-հայկական մշակութային ու գրական նախաձեռնությունների կենտրոնը, «Մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսություն» գիտական պրոբլեմային խումբը:

Համաձայնագրի 12-րդ հոդվածին համապատասխան Ռ-Հ-ի ուսանողների ընդունելության ստուգիչ թվերը սահմանվում են կրթության բնագավառի Ռ-ի և ՀՀ գործադիր իշխանության պետական մարմինների համատեղ որոշմամբ:

Ստուգումից պարզվել է, որ ընդունելության կանոնները համապատասխանում են «Ռ-ի բարձրագույն մասնագիտական կրթության (բարձրագույն ուսումնական հաստատություններ) պետական կրթական հաստատությունների ընդունելության կարգին» և «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոններին»:

Դաշնային բյուջեի միջոցների հաշվին ուսուցանող ուսանողների ընդունելության ստուգիչ թվերը, սկսած 1999 թվականի հունվարի 1-ից, յուրաքանչյուր տարի, հաստատվում և Ռ-Հ-ին ի գիտություն է հայտնվում Ռ-ուսաստանի նորմատիվային փաստաթղթերի միջոցով:

Ուսանողների ընդունելության շարժը 1999-2003 թվականների ժամանակահատվածում ներկայացված է աղյուսակում՝

1999թ. (հունվ.)		1999թ. (սեպտեմբ.)		2000թ.		2001թ.		2002թ.		2003թ.	
պլան	փաստ	պլան	փաստ	պլան	փաստ	պլան	փաստ	պլան	փաստ	պլան	փաստ
150	53	200	196	172	172	200	200	240	240	240	240

2004 - 2005 ուստարում Ռ-Հ-ն պլանավորում է Ռ-ի պետական պատվերով ուսանողների ընդունելությունն ավելացնել մինչև 250-ի:

Ըստ Ռ-Հ-ի կանոնադրությամբ կարգավորվող ընդունելության պայմանների, ընդունվելու իրավունքից օգտվում են ՀՀ-ի, Ռ-ի և ԱՊՀ այլ երկրների քաղաքացիները:

Բոլոր մասնագիտությունների դասավանդումն իրականացվում է ռուսերենով՝ հայոց լեզվի պարտադիր ուսուցմամբ: Ուսուցումը՝ ցերեկային:

ԱՊՀ այլ պետությունների քաղաքացիները Ռ-Հ են ընդունվում միջազգային համաձայնագրերին համապատասխան Ռ-ի կրթության նախարարության ուղեգրերով՝ ընդունելության ստուգիչ թվերի շրջանակներում:

Ռ-Հ-ի բոլոր ուսանողներն օգտվում են «Ձինապարտության մասին» ՀՀ և Ռ-ի համապատասխան օրենքներով նախատեսված արտոնություններից:

2002 թվականին Ռ-Հ բոլոր ֆակուլտետների առաջին կուրս Ռ-ի դաշնային բյուջեի միջոցների հաշվին փաստացի ընդունվել է 240 մարդ:

Ուսանողների շրջանում ըստ քաղաքացիության առկա է հետևյալ հարաբերակցությունը՝ 197 մարդ կամ 80.8%-ը՝ ՀՀ քաղաքացիներ. 40-ը կամ 16.6%-ը՝ Ռ-ի քաղաքացիներ: ԱՊՀ այլ երկրներից՝ Վրաստանի 3 քաղաքացի: Վճարովի հիմունքներով ԱՊՀ երկրներից ուսուցանում է 148 մարդ:

2003 թվականին Ռ-ՀՀ բոլոր ֆակուլտետների առաջին կուրս Ռ-Գ դաշնային բյուջեի միջոցների հաշվին փաստացի ընդունվել է 240 մարդ, որոնցից ՀՀ քաղաքացիներ՝ 202, Ռ-Գ քաղաքացիներ՝ 38-ը կամ 15.8% - ը:

Ստուգման պահին Ռ-ՀՀ-ում Ռ-Գ-ի պետական պատվերով ուսուցանում էր 1007 մարդ: Նրանցից՝ 831-ը ՀՀ-ից, 166-ը կամ 17.3%-ը՝ Ռ-Գ-ից, 6-ը՝ Վրաստանից, 4-ը՝ Թուրքմենիայից:

Ռ-ՀՀ-ում դաշնային բյուջեի միջոցների հաշվին ուսուցանող Ռ-ուսաստանի քաղաքացիներից մեծամասնությունը կազմում են ազգությամբ հայերը, ինչպես նաև ՀՀ-ում գտնվող Ռ-ուսաստանի սահմանապահ զորքերի և զինծառայողների երեխաները:

ՀՀ պետական բյուջեի հաշվին 2002 թվականին ընդունվել է 3, 2003 թվականին՝ 4 դիմորդ:

Համալսարանում կրթության բոլոր մակարդակներով ուսուցանողների առավելագույն թիվը որոշվում է Ռ-Գ-ի կրթության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից տրված կրթական գործունեություն վարելու իրավունքի արտոնագրով և կազմում է 1316 մարդ (վճարովի և անվճար): Ստուգման պահին ուսանողների ընդհանուր թիվը, ըստ Ռ-ՀՀ-ի ներակայացրած տեղեկատվության, կազմում էր 1584 մարդ: Մինչև նոր մասնաշենքերը շահագործման հանձնելը (շինարարության ավարտը) առաջանում է երկհերթ ուսումնական գործընթացի անհրաժեշտություն: Առավելագույն թվի ավելացման համար թույլտվություն է տրվել Ռ-Գ-ի կրթության նախարարի տեղակալ Ա. Ֆ. Կիսելևի կողմից:

2004 թվականին Ռ-ՀՀ-ի կողմից Ռ-ուսաստանի Դաշնության կրթության նախարարության քննարկմանն է ներկայացվել 2004-2005 ուստարում ուսանողների առավելագույն թիվը 1316-ից մինչև 1900-ը հիմնավորված ավելացնելու մասին փաստաթղթերի փաթեթը:

2004 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 1584, այդ թվում՝ բյուջեով 1007, պայմանագրային՝ 577:

Ռ-ՀՀ-ում մեկ դասախոսին հաշվում է 10 ուսանող, որը համապատասխանում է Ռ-ուսաստանի կրթության նախարարության կողմից հաստատված թվին:

Ստուգման պահին համալսարանը չուներ Ռ-Գ-ի կրթության նախարարության պետական հավատարմագրում, այնինչ 2003 թվականից Ռ-ՀՀ-ն մասնակցում է բարձրագույն կրթության մասնագետների պատրաստման համար պետական պատվերի տեղաբաշխման բաց մրցույթին՝ Ռ-Գ արտոնագրած կրթական հաստատությունների շարքում: Ընթացիկ տարում համալսարանում Ռ-ուսաստանի կրթության նախարարության մասնագետները կանցկացնեն ատեստավորում՝ պետական հավատարմագրման վկայագիր ստանալու համար:

2002 թվականից համալսարանում գործում է հրատարակչություն, որի հիմնական խնդիրն է՝ պետական չափորոշիչի ուսումնական գրականության հրատարակումը, ինչպես նաև՝ գիտական, հրապարակախոսական և զեղարվեստական գրականության հրատարակումը: Այսպես, ուսանողների կողմից ռուսական դասական գրականության լավագույն ստեղծագործություններն ուսումնասիրելու նպատակով հրատարակվել են Ֆ. Գոստոնսկու վեպերը, Ա. Տյուտչևի բանաստեղծությունների ժողովածուն:

Մասնագիտությունների նորացումը, ասպիրանտուրայի կազմակերպումը, ուսանողների թվի ավելացումը հնարավորություն ընձեռեց ներգրավել Ռ-Գ և ՀՀ բազմաթիվ առաջատար մասնագետների՝ Ռ-ՀՀ-ի գիտական դպրոցների ձևավորման և կայացման համար: Ռ-ՀՀ ընդունվել ցանկացող դիմորդների թվի ավելացումը վկայում է վերջինիս համբավը Հայաստանի այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների շարքում, չնայած որ, Երևանում գործում են հետբուհական կրթություն տրամադրող Ամերիկյան համալսարանը և բարձրագույն կրթություն տրամադրող Ֆրանսիական համալսարանը. այդ ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը իրականացվում է հիմնադիր պետությունների կողմից:

Համաձայնագրին համապատասխան Ռ-ՀՀ-ի արտոնագրման և ատեստավորման հարցերը լուծվում են Ռ-Գ-ի կրթության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից համատեղ:

Համատեղ գործունեության արդյունքում ընդունվեց որոշում՝ ավարտողներին Ռ-Գ և ՀՀ պետական նմուշի Ռ-ՀՀ-ի ավարտական երկու դիպլոմ հանձնելու մասին, որը տրվեց 2004 թվականի անդրանիկ շրջանավարտներին:

Ռուսաստանի կրթության նախարարության կողմից տրված մասնագիտական կրթության ոլորտում կրթական գործունեություն վարելու իրավունքի 24 1083 համարով արտոնագիրը համալսարանը ստացել է 2000 թվականի հուլիսի 27-ին:

Ռ-Գ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների համաձայն, Ռ-ՀՀ-ում գործում է կրթական գործընթացի կազմակերպման բազմաստիճան համակարգ՝

- բարձրագույն մասնագիտական կրթություն, որը հաստատվում է հանրագումարային ատեստավորումը հաջողությամբ անցած անձին «բակալավր» որակավորում (աստիճան) շնորհելով (կրթական ծրագրի յուրացման ժամկետները՝ չորս տարուց ոչ պակաս).
- բարձրագույն մասնագիտական կրթություն, որը հաստատվում է հանրագումարային ատեստավորումը հաջողությամբ անցած անձին «դիպլոմավոր մասնագետ» որակավորում շնորհելով (կրթական ծրագրի յուրացման ժամկետները՝ հինգ տարուց ոչ պակաս, բացառությամբ՝ համապատասխան պետական կրթական չափորոշիչներով նախատեսված դեպքերի):

2001-2003 թվականներին ձևավորվեցին Ռ-ՀՀ-ի բազմաթիվ ամբիոններ ու ֆակուլտետներ: Ուսումնասիրվում էր ուսումնամեթոդական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ ռուսաստանյան բուհերի կուտակած փաստական նյութերը: Արդյունքում՝ արտոնագրված բոլոր մասնագիտությունների գծով Ռ-ՀՀ-ն ներկայումս ունի ժամանակակից ուսումնական ծրագրեր:

Ռուսաստանի կրթության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների հրամաններին համապատասխան Ռ-ՀՀ-ն արտոնագիր է ստացել 9 մասնագիտություններով՝ կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա, քաղաքագիտություն, լրագրություն, համաշխարհային տնտեսագիտություն, պետական և համայնքային կառավարում, սոցիալ-

մշակութային սերվիս և տուրիզմ, իրավագիտություն, միջազգային հարաբերություններ, էլեկտրոնիկա և միկրոէլեկտրոնիկա: Բացի դրանից, Ռ-Հ-ն արտոնագիր է ստացել բժշկական բիրոքինիա մասնագիտության գծով, որը դեռևս չի ուսուցանվում:

Ռ-Հ-ում գործում է 7 ֆակուլտետ՝ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, քաղաքագիտության, իրավաբանական, լրագրության, տնտեսագիտական, սոցիալ-մշակութային սերվիսի և տուրիզմի, ֆիզիկատեխնիկական:

Առավել լիարժեք և համակողմանի ուսուցման նպատակով Ռ-Հ-ն համագործակցության պայմանագրեր է կնքել ռուսաստանյան 25 բուհերի հետ, համաձայն դրանց, ապահովվում է դասախոսների ժամանումը կապված այն առարկաների ու թեմաների հետ, որոնք հետաքրքրում են Ռ-Հ-ին:

2003 թվականին, նախորդ տարիների համեմատությամբ 2 անգամ աճել է դիմորդների թիվը մրցութային մեկ տեղի համար:

Ասպիրանտուրան և գիտական գործունեությունը

2003 թվականին գիտական գործունեությունը Ռ-ուսաստանի դաշնային բյուջեից չի ֆինանսավորվել:

Համաձայնագրերի հիման վրա և գիտական ու գիտամանկավարժական կադրեր պատրաստելու նպատակով Ռ-Հ-ում բացվել է ասպիրանտուրա: Առաջին ընդունելությունը կատարվել է 2003 թվականին՝ լիցենզավորված մասնագիտությունների գծով, որոնք առանձնացվել էր Ռ-Գ-ն կրթության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից: Ռ-ուսաստանի կրթության նախարարության արտոնած գիտությունների ճյուղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների 5-ն է, Հայաստանի կրթության և գիտության նախարարությանը՝ 2: Ասպիրանտուրա է ընդունվել 15 մարդ: Այդպիսով, յուրաքանչյուր 100 ուսանողին հաշվում է մեկ ասպիրանտ:

Ռ-Հ-ում առայժմ ստեղծված չէ ասպիրանտուրայի լիցենզավորված մասնագիտությունների գծով դիսերտացիոն խորհուրդ:

Ստուգվող ժամանակահատվածում Ռ-Հ-ն Ռ-Գ դաշնային բյուջեից 06՝ «Հիմնարար հետազոտություններ և օժանդակություն գիտատեխնիկական առաջընթացին» հոդվածով չէր ֆինանսավորվել:

2002-2003 թվականներին Ռ-Հ-ի գիտական գործունեությունը ֆինանսավորվում էր սեփական միջոցների հաշվին՝ 210.8 հազար ռուբլի, ինչպես նաև Սորոսի հիմնադրամի միջոցների հաշվին՝ 786.1 հազար ռուբլի գումարով:

Գիտաուսումնական գործունեությունը ֆինանսավորող զանազան ծրագրերին մասնակցությունը հնարավոր դարձավ 2003 թվականի երկրորդ կիսամյակից, համաձայնագրում համապատասխան լրացումներ կատարելուց հետո: Դրանց համապատասխան. «Կողմերը պետք է օժանդակեն Ռ-Հ-ի մասնակցությունը գիտության և կրթության բնագավառում

համագործակցության միջազգային ծրագրերի, ինչպես նաև գիտության, կրթության և մշակույթի գծով Հայաստանի և Ռուսաստանի նպատակային համալիր ծրագրերի իրականացմանը»:

Ուսանողների սոցիալական պաշտպանությունը

Սոցիալական օժանդակությունն ուսանողներին ցուցաբերվում է դաշնային բյուջեի միջոցների և արտաբյուջետային մուտքերի հաշվին:

Դաշնային բյուջեի միջոցների հաշվին ուսանողները ստանում են կրթաթոշակ, որի չափը սահմանվում է Ռուսաստանի կրթության նախարարության և ռեկտորի որոշումների հիման վրա: Ստուգվող ժամանակահատվածում կրթաթոշակները վճարվում էին սահմանված ժամկետներում և ամբողջությամբ: 2002 թվականին ՌԴ-ն դաշնային բյուջեի միջոցների հաշվին վճարվել է 1785.7 հազար ռուբլու, 2003 թվականին՝ 2731.9 հազար ռուբլու կրթաթոշակ:

Արտաբյուջետային միջոցների հաշվին համալսարանը տրամադրում է ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում՝ վճարովի հիմունքներով սովորող գերազանցիկ ուսանողներին (15-ից մինչև 35%), որը ուսանողներին՝ 50-ից՝ 90%: Այն ուսանողներին, որոնց ծնողներից մեկը երեք տարուց ոչ պակաս համալսարանի հիմնական աշխատող է, տրամադրվում է հատուցում՝ 50%-ի չափով:

Ուսանողների բժշկական սպասարկումը և ամառային հանգիստը նույնպես իրականացվում է համալսարանի արտաբյուջետային միջոցների հաշվին: 2002 թվականին բժշկական սպասարկմանը փոխանցվել է 27.5 հազար ռուբլի, 2003 թվականին՝ 35.5 հազար ռուբլի: Բացի ուսանողական պոլիկլինիկայի ծառայություններից, ուսանողներին տրամադրվում է անվճար բժշկական զննում ու բժշկական օգնություն՝ «Շտապ օգնություն» գիտաբժշկական կենտրոնում: 2001 թվականի սեպտեմբերից ՌՀՀ-ում գործում է բուժկետ, պարբերաբար գնվել է անհրաժեշտ դեղորայք: 2003 թվականին համալսարանի կողմից հատկացվել է 161.9 հազար ռուբլի՝ Ծաղկաձորի գրողների տան առողջարանում ուսանողների և դասախոսական կազմի հանգիստը կազմակերպելու համար:

Ստուգումից պարզվել է, որ համալսարանի կողմից յուրաքանչյուր տարի ֆինանսավորվում են ուսանողական սպորտային և կուլտ-մասսայական միջոցառումները: Այսպես, ջրավազանի և մարզահրապարակի վարձակալման, Ծաղկաձորում «Բազե» համահայկական սպորտային երիտասարդական խաղերին և սպորտային ուսանողական այլ միջոցառումներին մասնակցելու համար 2002 թվականին հատկացվել է 156, 2003 թվականին՝ 346 հազար ռուբլի:

Ուսանողների սնունդը կազմակերպվել է 50 նստատեղի համար նախատեսված բուֆետում: Ստուգման պահին մշակվել էր սննդի կառուցահատվածի նախագիծ՝ 300 և 600 նստատեղով, որը լիովին կապահովի նստատեղերով ուսանողներին և պրոֆեսորադասախոսական ողջ թվակազմին:

3. Համալսարանի նյութատեխնիկական բազան

Ռ-ՀՀ-ի գույքի հարցը որոշվել էր Երևան քաղաքում Ռուս-Հայկական համալսարանի հիմնման և գործունեության պայմանների մասին համաձայնագրով՝ կնքված Ռ-Դ-ի և ՀՀ-ի կառավարությունների միջև:

Ըստ 2000 թվականի մայիսի 3-ի ընդունման-հանձման ակտի ՀՀ կրթության և գիտության նախարարության հաշվեկշիռից Ռուս-Հայկական համալսարանի հաշվեկշիռ է հանձնվել 28604.4 հազար ռուբլի ընդհանուր արժեքով շենքեր, առանց նշելու հանձնվող մակերեսների չափը, այդ թվում՝ ուսումնական մասնաշենքը, կաթսայատունը և հանդիսադահլիճի կիսակառույցը: Նույն ակտով Ռ-ՀՀ-ին հատկացվել էր հիմնական մասնաշենքին հարող 2.7 հա ընդհանուր մակերեսով հողամասը, այդ տարածքում գտնվող շինություններով:

2003 թվականի ապրիլին միջկառավարական համաձայնագրում կատարված փոփոխություններով և լրացումներով սահմանվել էր, որ՝ «Հայկական կողմը օպերատիվ կառավարման իրավունքով Ռ-ՀՀ-ին է փոխանցում շենքեր, շինություններ, ուսանողական հանրակացարաններ, հողամասեր և պատրաստի օբյեկտներ՝ ուսումնական մասնաշենքը, ինչպես նաև՝ սպորտային, բուժարոժիլակտիկ, մշակութային և այլ հիմնարկները տեղավորելու համար»:

Ստուգմամբ պարզվել է, որ 2003 թվականի ապրիլին համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելիս հաշվի չի առնվել, որ դեռ 2002 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից համալսարանին տրվել է ուսումնական մասնաշենքի և հանձնման-ընդունման ակտով փոխանցված մնացած շինությունների նկատմամբ սեփականության գրանցման վկայական: Վկայականում նշված փոխանցված շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 14959.2 քմ: Կադաստրային արժեքը նշված չէ: Երևանի քաղաքապետի 2002 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ 2.7 հա մակերեսով տարածքը փոխանցվել է համալսարանին՝ անժամկետ և անհատույց:

Համաձայնագրով սահմանվել է, որ «կողմերից յուրաքանչյուրը հավասար մասնաբաժին ունի համալսարանի գույքում»: Սակայն Ռ-Դ-ի մասնաբաժինը հիմնական միջոցների արժեքում, այդ թվում՝ անշարժ գույքում, մինչև հիմա որոշված չէ: Չեն պահպանվել համաձայնագրի պայմանները նաև համալսարանի գույքի գնահատման մասով, որը պետք է կատարվի երկկողմ և արտացոլվի համալսարանի հաշվեկշռում:

Ռ-ՀՀ-ի կողմից Ռուսաստանի կրթության նախարարություն ներկայացվող ֆինանսական հաշվետվություն ներառված չէին հիմնական միջոցները, այդ թվում՝ Ռ-ՀՀ-ի սեփականություն անշարժ գույքը:

Ստուգումը պարզել է, որ տարվա ընթացքում հիմնական միջոցների գինն աճել է 8.5 տոկոսով:

Ներկայումս Ռ-ՀՀ-ն ավարտում է ուսումնական մասնաշենքի և հանդիսադահլիճի վերակառուցումը: Շինարարական աշխատանքների համար միջոցները՝ 40 միլիոն ռուբլի գումարի չափով, հատկացվել է Ռ-Գ-ի դաշնային բյուջեից:

Ռ-ՀՀ-ի հիմնական միջոցների արժեքը ներակայացված է աղյուսակում:

(հազար ռուբլի)

	<i>2003 թ. հունվարի 1-ի դրությամբ</i>	<i>2004թ. հունվարի 1-ի դրությամբ</i>
Շենքերը	30187.2	30508.1
Մեքենաներ և սարքավորումներ	4798.1	6074.5
Գրադարանային ֆոնդ	261.2	639.6
Այլ հիմնական միջոցներ	3386.0	152.6
Ընդամենը	38632.5	42215.4

4. Հաշվապահական հաշվառման վիճակը

Կանոնադրությամբ սահմանվել է, որ Ռ-ՀՀ-ն օպերատիվ հաշվապահական հաշվառում է իրականացնում՝ ղեկավարվելով Ռ-Գ՝ «Հաշվապահական հաշվառման մասին» դաշնային օրենքով և ՀՀ համապատասխան օրենքներով: Հաշվապահական հաշվառման վարման ձևերն ու կարգը սահմանվում են Ռ-Գ ֆինանսների և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարությունների կողմից: Վիճակագրական ձևերը սահմանվում են Ռ-ուսաստանի և Հայաստանի պետական վիճակագրական մարմինների կողմից:

Ռ-ՀՀ-ի ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառումը իրականացվում է հուշա-օրդերային ձևով: Գործառնությունների հաշվառումը կատարվում է Ռ-ուսաստանի ֆինանսների նախարարության 1999 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 107H հրամանով հաստատված հաշիվների պլանով:

Սակայն Ռ-ՀՀ-ի հաշվապահական հաշվառման վարման ուղղությամբ ստուգումը քացահայտեց մի շարք թերություններ:

Այսպես, աշխատանքներում կիրառվում են ոչ թե Ռ-ուսաստանի ֆինանսների նախարարության թիվ 107H հրամանին համապատասխան միասնականացված սկզբնական հաշվառման փաստաթղթերի ձևերը, այլ Ռ-ՀՀ-ի հաշվապահության կողմից ինքնուրույն մշակված ձևերը: Աշխատավարձի հաշվարկման համար օգտագործվում է համակարգչային ծրագիր, որտեղ նախատեսված չէ ֆինանսավորման սահմանազատումը՝ ըստ աղբյուրների տեսակների:

Հաշվապահական հաշվառման համար հիմք հանդիսացող սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմված են հայերեն լեզվով: Թարգմանությունը ռուսերենով չի կատարվում, իսկ

Ռ-ՀՀ-ի կանոնադրության մեջ արձանագրված է, որ գործավարությունը Ռ-ՀՀ-ում պետք է իրականացվի ռուսերեն լեզվով:

Ի խախտումն «Հաշվապահական հաշվառման մասին» դաշնային օրենքի և Ռ-Գ-ի ֆինանսների նախարարության 1999 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 107H հրամանի, չի տարվում բաժանված հաշվառում՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների: Այսպես, «Առէքսիմբանկ» ՓԲԸ-ում ընթացիկ հաշվում դրամական միջոցների շարժի գծով գործառնությունների հաշվառման ժամանակ հաշվապահության կողմից չի տարվել դաշնային բյուջեի միջոցների՝ դրանց փոխարկումից հետո, ՀՀ պետական բյուջեի միջոցների և արտաբյուջետային միջոցների առանձնացված հաշվառում:

Համապատասխանաբար, դրամարկղային գիրքը վարվում է՝ առանց Ռ-Գ-ի դաշնային բյուջեից, ՀՀ պետական բյուջեից և արտաբյուջետային աղբյուրներից մուտք եղած միջոցների բաժանման: Դա բարդացնում է դաշնային բյուջեի միջոցների նպատակային օգտագործման ստուգումը:

Չեն տարվում բյուջետային միջոցներ ստացողի՝ 294 և 309 ձևերով վերլուծական հաշվառման ամփոփագրերը:

Համալսարանի կողմից պահպանվում են Ռ-ուսաստանի կրթության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից սահմանված՝ եռամսյակային և տարեկան հաշվապահական հաշվետվության ներկայացման ժամկետները:

Մակայն, ստուգումից պարզվեց, որ Ռ-ՀՀ-ն չի ապահովում գործունեության մասին լրիվ և հավաստի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է Ռ-Գ-ի դաշնային բյուջեի միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Բացահայտվել է, որ Ռ-ՀՀ-ն ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում Ռ-ուսաստանի կրթության նախարարություն ոչ լրիվ ծավալով: «Եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարման հաշվեկշիռ» 1-ին ձևը ներկայացված է՝ առանց ժամանակահատվածի սկզբի և ավարտի՝ ըստ բոլոր բաժինների, ցուցանիշների, որի հետևանքով բացակայում են հիմնական միջոցների, հաշիվներում առկա մնացորդների գծով տվյալները:

Ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ հաշվետվություն Ռ-ուսաստանի կրթության նախարարություն Ռ-ՀՀ-ի կողմից չի ներկայացվել:

2004 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեբիտորական պարտքը կազմում էր 1200.8 հազար ռուբլի, վարկային պարտքը՝ 3757.5 հազար ռուբլի, դրանցից՝ դաշնային բյուջեի գծով՝ 3262.1 հազար ռուբլի:

Ռ-ՀՀ-ի գործունեության ժամանակահատվածում Ռ-ուսաստանի կրթության նախարարության կողմից Ռ-ՀՀ-ի ֆինանսատնտեսական գործունեության և հաշվապահական հաշվառման ստուգում չի անցկացվել:

Ձևակերպված ակտերի ցանկ

Ստուգման ակտը ստորագրվել է առանց դիտողությունների և գրանցվել 2004 թվականի մարտի 24-ին (KM-304/12-4): Ռ-Հ-ի կողմից ակտին ծանոթացել են ռեկտորը, գլխավոր հաշվապահը և ֆինանսական ծառայության ղեկավարը:

ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի կողմից ծանոթացել են տեսչությունների պետեր՝ Գ. Գ. Մարոյանը և Ս. Ս. Մարգարյանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ռ-Հ-ի գործունեությունը նպաստում է գիտելիքների, մշակութային և գիտական արժեքների տարածմանը: Ներկայացնելով Ռուսաստանի և Հայաստանի լավագույն դասախոսական փորձին հիմնված բարձրագույն մասնագիտական կրթությունը, համալսարանը առավել բարենպաստ պայմաններ է ստեղծում երկու պետությունների ժողովուրդների կրթության և մշակույթի զարգացման գործում հետագա փոխգործակցության համար:

Համալսարանի կրթական և գիտական գործունեության կատարելագործումը հնարավորություն է ընձեռում ներդնել ուսումնական առարկաների դասավանդման արդի մեթոդիկան:

2. Ռ-Հ-ի ֆինանսավորումը 2002-2003 թվականներին Ռ-Գ-ի դաշնային բյուջեի միջոցներից իրականացվել է լրիվ ծավալով: Ձեռնարկատիրական և եկամտեր ալ գործունեությունից ստացված միջոցները ստուգվող ժամանակահատվածում աճել են երկու անգամ: Միջոցների ոչ նպատակային օգտագործում ստուգման ընթացքում չի բացահայտվել:

3. Ռ-Գ-ի կրթության նախարարության կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ սահմանված կարգով համաձայնեցված չեն Ռ-Հ-ի բյուջետային և արտաբյուջետային միջոցների գծով հաշվառման և հաշվետվության մեխանիզմները, լուծված չէ կրկնակի ենթակայության բարձրագույն ուսումնական հաստատություն հանդիսացող համալսարանի հիմնադիրների լիազորությունների սահմանազատման հարցը, պատշաճ վերահսկողություն չի տարվում հաշվապահական հաշվառման և հաշվետվության նկատմամբ:

4. Կողմերը չեն կարգավորել համալսարանի գործունեության այն հարցերը, որոնք վերաբերում են միջկառավարական համաձայնագրի դրույթների պահպանմանը՝ գույքի գնահատման և դրանում հիմնադիր պետությունների մասնաբաժինը որոշելու մասով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստուգման ընթացքում բացահայտված խախտումների և թերությունների վերացման նպատակով նպատակահարմար է համարվում.

1. Ռ-ի Հաշվիչ պալատին տեղեկատվական մամակներ հղել՝
 - Ռ-ի կառավարությանը
 - Ռ-ի ֆինանսների նախարարությանը (կցելով հաշվետվությունը),
 - Ռ-ի կրթության և գիտության նախարար՝ Ա. Ա. Ֆուսենկոյին (կցելով հաշվետվությունը),
 - ՌՀՀ-ի ռեկտոր՝ Ա. Ռ. Դարբինյանին (կցելով հաշվետվությունը),
 - ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահ՝ Գ. Շ. Ոսկանյանին (կցելով հաշվետվությունը):
2. Ստուգման արդյունքների մասին հաշվետվությունն ուղարկել Ռ-ի դաշնային ժողովի դաշնային խորհուրդ և Պետական Դումա:

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ վերահսկիչ
պալատի խորհրդի 09.02.2005թ. նիստում և
ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով, կառավարություն,
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից սոցիալական ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ

Վերահսկողության հիմքը՝ Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 16-րդ կետի պահանջը և Վերահսկիչ պալատի նախագահի 2004 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 110 հրամանը:

Վերահսկողության նպատակը՝ Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից սոցիալական ծրագրերով նախատեսված և հատկացված միջոցների օգտագործման գնահատականը:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, պետական պատվեր իրականացրած կազմակերպություններ:

Վերահսկողության ժամանակահատվածը՝ 2003 թվականի բյուջետային տարի:

Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և պետական պատվեր իրականացրած կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

2003 թվականի պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ

2003 թվականին ՀՀ պետական բյուջեից սոցիալական ոլորտի ֆինանսավորումն իրականացվել է օրենքով սահմանված պետական ծրագրերին համապատասխան: Հատկացումները կատարվել են «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 06՝ «Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն» խմբի 01-ից 05 ենթախմբերի ծրագրերով նախատեսված միջոցների շրջանակներում (հավելված 1): Նախատեսված հատկացումների ընդհանուր չափը կազմել է 30,822.9 մլն դրամ կամ բյուջետային ընդհանուր ծախսերի 9.2 %-ը:

2003 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ծանուցագրերի հիման վրա կատարվել է վերաբաշխում, որի արդյունքում տարեկան նախատեսված հատկացումներն ավելացել են 161.7 մլն դրամով՝ կազմելով 30,984.6 մլն դրամ (ճշտված պլան), որի դիմաց փաստացի կատարողականը (դրամարկղային ծախսը) կազմել է 29,255.1 մլն դրամ (94.4%), որը պայմանավորված է՝ կենսաթոշակների, աղքատության ընտանեկան նպաստների, Համաշխարհային Բանկի

աջակցությամբ իրականացվող ծրագրերի և հատկապես այլ սոցիալական ծրագրերի թերակատարմամբ:

2003 թվականի բյուջետային ծախսերի ֆինանսավորումն ըստ սոցիալական ծրագրերն իրականացնող մարմինների բերված է Հավելված 2-ում:

Հատկացված միջոցների 83.2%-ը, ուղղվել է բնակչության պետական նպաստներին և կենսաթոշակային ապահովմանը: 2003 թվականին արձանագրվել է նպաստների տեսակարար կշռի անկում. այսպես՝ եթե 2002 թվականին այդ նպատակին ուղղվել է սոցիալական հատկացումների 53.9%-ը, ապա 2003 թվականին՝ 44.9%-ը կամ 9%-ով պակաս: Միևնույն ժամանակ արձանագրվել է կենսաթոշակային հատկացումների գծով աճ, այն է՝ 2002 թվականի 33.1%-ի դիմաց 2003 թվականին այն կազմել է 38.2%, կամ 5.1%-ով ավելի:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բերված են ստորև:

Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառում պետական կառավարում

Այս ենթախմբի ծրագրով բյուջետային հատկացումների փաստացի կատարողականը կազմել է 447.1 մլն դրամ, կամ տարեկան ճշտված նախահաշվի 97.8 %-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսագիտական դասակարգման մի շարք հոդվածների գծով առկա տնտեսումով:

2002 թվականի համեմատությամբ կառավարման ծախսերն աճել են 53.7 %- ով, ինչը, ըստ ներկայացված պարզաբանումների, պայմանավորված է Նախարարության համակարգում գործող բժշկա-աշխատանքային սոցիալական փորձաքննության հանձնաժողովների վերակազմակերպման արդյունքում ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության ստեղծմամբ, ինչպես նաև 2003 թվականի հուլիսի 1-ից համակարգի քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բարձրացմամբ:

Կենսաթոշակային ապահովում

Այս ենթախմբի թվով 5 ծրագրերով բյուջետային հատկացումների ընդհանուր չափը կազմել է 11,186.5 մլն դրամ կամ նախատեսվածի 97%-ը: Բյուջետային ծախսերի ծրագրից շեղումը պայմանավորված է սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության գծով առաջացած տնտեսմամբ, որի ընդհանուր չափը կազմել է 342.3 մլն դրամ՝ նախատեսվածից 5.1%-ով պակաս: Մյուս բոլոր ծրագրերը կատարվել են ամբողջությամբ:

2003 թվականին, նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է կենսաթոշակային հատկացումների աճ՝ 41.8 % -ի չափով, ինչը հիմնականում կապված է աշխատանքային

կենսաթոշակների չափերի բարձրացման և այդ գծով ծախսերը 2003 թվականից սկսած ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորելու հետ: 2003 թվականին պետական բյուջեից տրամադրված սոցիալական կենսաթոշակների գումարը կազմել է 2,051.0 մլն դրամ:

Վերահսկվող ժամանակահատվածում 1.2 մլրդ դրամով ավելացել են նաև սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովման ծախսերը:

Որոշակի աճ է գրանցվել նաև շարքային զինծառայողներին և նրանց ընտանիքներին հատկացված գումարների գծով:

Պետական նպաստներ բնակչությանը

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման այս ենթախմբով ֆինանսավորվել է թվով 4 ծրագիր: Բյուջետային հատկացումների ընդհանուր չափը կազմել է 13,140.4 մլն դրամ՝ նախատեսված 13,629.1 մլն դրամի դիմաց կամ 96.4%-ը: Միջոցների հիմնական մասը հատկացվել է աղքատության ընտանեկան նպաստներին՝ 12,350.3 մլն դրամ, որը կազմել է այդ ծրագրով նախատեսված հատկացումների 96.9%-ը: 2002 թվականի համեմատ ընտանեկան նպաստներն աճել են 2.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է 2003 թվականի հուլիսի 1-ից երեխաներին տրվող նպաստների հավելումով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, աղքատության ընտանեկան նպաստ է ստացել շուրջ 140 հազար ընտանիք: Հարկ է նշել, որ չնայած ծրագրի 394.9 մլն դրամի թերակատարմանը, ընտանեկան նպաստների գծով 2003 թվականին պարտքեր չեն գոյացել:

Բյուջետային ծախսերի տնտեսում է արձանագրվել նաև մինչև 2 տարեկան երեխաների և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց նպաստների գծով՝ 48.6 մլն դրամի և նպաստների տրամադրման հետ կապված փոստային ծառայությունների գծով՝ 1.1 մլն դրամի չափով:

2003 թվականին «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրով նախատեսված 500.0 մլն դրամի դիմաց փաստացի հատկացվել է 462.9 մլն դրամ կամ նախատեսվածից 7.4% -ով պակաս: Թերակատարման ընդհանուր գումարը կազմել է 37.1 մլն դրամ: Ըստ 2003 թվականի պետական բյուջեի բացատրագրի նախատեսվել էր հատկացվող միջոցների հաշվին աշխատանքում ընդգրկել 30625 անձանց:

Ներկայացված տեղեկատվության համաձայն, հանրապետության շուրջ 206 համայնքներում իրականացվել է 428 ծրագիր՝ 455244 մարդ/օր ծավալով, որոնցում ընդգրկվել է 9458 աշխատանք փնտրող քաղաքացի: Ծրագրերի միջին տևողությունը կազմել է 2-ից՝ 2.3 ամիս, մեկ մասնակցի նպաստի միջին չափը՝ 48.1 հազար դրամ: Իրականացված աշխատանքների դիմաց փաստացի վճարված նպաստների ընդհանուր գումարը կազմել է 455.2 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելի է 50.8 մլն դրամով: Այս ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել և կատարվել են նաև ծրագրի ուղեկցման և փոստային ծառայությունների գծով ծախսեր, որոնց ընդհանուր չափը կազմել է 7.7 մլն դրամ, նախատեսված 10.0 մլն դրամի դիմաց:

Ինչ վերաբերում է իրականացված աշխատանքների բնույթին, ապա դրանց մեծ մասը ճանապարհների, տարածքների մաքրման, բարեկարգման, կանաչապատման, ոռոգման ցանցերի և հեղեղատարների մաքրման, ինչպես նաև՝ շինարարական օժանդակ աշխատանքներ են:

Համաձայն ՀՀ կառավարության 29.04.2002թ-ի թիվ 473 որոշման, ծրագրի իրականացման պատասխանատուներն են՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության ծառայության գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն), զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովները, տեղական ինքնակառավարման մարմինները: Գործակալության գործունեության ֆինանսավորումը կատարվել է 2003 թվականի պետական բյուջեի պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի հաշվին:

Գործակալության կողմից գործազրկության կրճատման և զբաղվածության հարցերի լուծման նպատակով կատարված աշխատանքների արդյունավետության գնահատման վերլուծության արդյունքներով պարզվել է, որ 2003 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ըստ գործակալության կողմից ներկայացված տվյալների, Հայաստանի Հանրապետությունում աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը կազմել է 148379, իսկ գործազուրկների թիվը՝ 118646 մարդ: Բնակչության թվաքանակի համեմատ առավել բարձր ցուցանիշներ են արձանագրվել Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում: 2003 թվականի ընթացքում աշխատանքի են տեղավորվել թվով 7889 գործազուրկներ կամ հաշվառված ընդհանուր թվաքանակի 6.6%-ը, իսկ աշխատանք փնտրող քաղաքացիների ընդհանուր թվաքանակից (վերոնշված ծրագրերով) ժամանակավոր աշխատանքով (2-ից 2.3 ամիս տևողությամբ) ապահովվել է ընդամենը 8874 քաղաքացի կամ հաշվառվածների ընդհանուր թվի 6.0 %-ը:

Բացի նշված ծրագրից, Գործակալությունը պատասխանատվություն է կրել նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի 2003 թվականի բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող զբաղվածության պետական ծրագրերի իրականացման համար, որի կատարման նպատակով նախատեսված 809.0 մլն դրամի դիմաց փաստացի հատկացվել և ծախսվել է 443.8 մլն դրամ կամ ծրագիրը կատարվել է ընդամենը 53.6 %-ով (հավելված 3): Նախատեսված թվով 9-ը ենթածրագրերից 4-ի մասով ընդհանրապես աշխատանքներ չեն կատարվել, իսկ մնացած 5-ի մասով թերակատարումը կազմել է 38.3 %, կամ 269.0 մլն դրամ: Ստացված միջոցների հիմնական մասն ուղղվել է գործազրկության նպաստների և դրամական օգնությունների վճարմանը՝ 393.4 մլն դրամ:

2003 թվականի պետական բյուջեով նախատեսված ծրագրերի գծով վերոնշված թերակատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Գործակալության կողմից ձեռնարկված միջոցառումները դեռևս բավարար չեն եղել զբաղվածության հարցերի արդյունավետ ու լիարժեք լուծման համար: Բացի վերը նշվածից, ծրագրերի ոչ լիարժեք իրականացման պատճառ է հանդիսացել նաև այն, որ զբաղվածության ծրագրերի ֆինանսավորման համար պատասխանատու մարմինը՝ ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամը, տարբեր պատճառաբանություններով պարբերաբար ուշացրել է կամ հրաժարվել է

իրականացնել զբաղվածության պետական ծրագրերի ֆինանսավորումը: Այսպես, 2000թ.-ի ապրիլ-դեկտեմբեր ամիսներին գործազրկության նպաստի և դրամական օգնության գումարները վճարվել են միայն 2003թ.-ի օգոստոսին, այսինքն՝ սահմանված ժամկետից 3 տարի ուշացումով:

ՀՀ բնակչության համար կարևոր նշանակություն ունեցող այդ խնդիրների իրականացման նպատակով 2003 թվականի պետական բյուջեից Գործակալության պահպանման ծախսերը հոգալու նպատակով հատկացվել է 243.5 մլն դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 240.6 մլն դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 238.8 մլն դրամ: Հանրապետության տարածքում գործել են թվով 51 զբաղվածության տարածքային կենտրոններ, որոնց հետ միասին Գործակալության աշխատակիցների միջին ցուցակային թիվը 2003 թվականին կազմել է 456 մարդ:

Սոցիալական ապահովության միջոցառումներ

Սոցիալական ապահովության միջոցառումների գծով պետական բյուջեով նախատեսված 2,178.5 մլն դրամի դիմաց, փաստացի ծախսվել է 2,051.0 մլն դրամ կամ նախատեսվածի 94.2 %-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տուն-ինտերնատներում խնամվող երեխաների և ծերերի նախատեսվածից փաստացի ցածր թվով: Հատկացված միջոցներն ուղղվել են թվով 12 սոցիալական ծրագրերի ֆինանսավորմանը:

Նախորդ տարվա համեմատ, այս ենթախմբի ծախսերն աճել են 31.8 %-ով կամ 495.3 մլն դրամով, որը բացատրվում է պետական բյուջեից ֆինանսավորված թվով 3 նոր ծրագրերի, ինչպես նաև տուն-ինտերնատների պահպանման համար հատկացումների ավելացմամբ:

Հատկացված միջոցների հիմնական մասն ուղղվել է տուն-ինտերնատների պահպանմանը: Նախատեսված 1,293.0 մլն դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1,198.9 մլն դրամ, կամ ծրագիրը կատարվել է 92.7 %-ով՝ 94.1 մլն դրամով պակաս: Թերակատարումը պայմանավորված է՝ թվով 8 մանկատների միջոցով իրականացվող՝ երեխաների շուրջօրյա խնամքի ծավալային ցուցանիշների՝ նախատեսվածից ցածր պահանջարկով (նախատեսված 999-ի փոխարեն խնամվող երեխաների փաստացի թիվը կազմել է 931) և ծերանոցներում խնամվողների նախատեսվածից ցածր թվաքանակով (նախատեսված 550-ի փոխարեն՝ 453 խնամվող ծերերի), ինչպես նաև 100 խնամառուի համար 2003 թվականին նախատեսված նոր ծերանոց չբացելու պատճառով բյուջեով նախատեսված 52.1 մլն դրամի չափով ծախսերի չկատարմամբ:

Այս ծրագրի շրջանակներում 39.5 մլն դրամ է հատկացվել տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման համար: Ծրագիրն իրականացվել է նախարարության «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով: Կենտրոնի աշխատողների ցուցակային թիվը կազմել է 100 մարդ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում կենտրոնը սպասարկել է Երևան քաղաքի 1200 միայնակ տարեցների և հաշմանդամների՝ հաշվառված 1300-ի դիմաց: Խնամվածների մարդ/օրվա ընդհանուր թիվը կազմել է 438000, իսկ մեկ մարդ/օրվա խնամքի գինը՝ 90.22 դրամ:

Կենտրոնն իրականացրել է կենցաղային սպասարկման աշխատանքներ, իրավաբանական, սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն և բժշկական օգնության կազմակերպում: Ծրագիրը կատարվել է ամբողջությամբ: Բացի պետական բյուջեի միջոցներից, տարվա ընթացքում հումանիտար կարգով անհատույց ստացվել և բաշխվել է 24.0 մլն դրամի արժեքներ, որից դեղորայք և վիրակապային նյութեր՝ 22.8 մլն դրամի:

Ընդհանուր առմամբ, 2002 թվականի համեմատ տուն-ինտերնատների պահպանման գծով ծախսերն ավելացել են 55.8 %-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության «Հատուկ տիպի» և «Ձատիկ», ինչպես նաև Գյումրիի համայնքային ենթակայության «Հույս» մանկատները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնելու հետ: Նախորդ տարվա համեմատ ավելացել է ինչպես խնամվողների թիվը, այնպես էլ մեկ խնամվողի միջին օրական պահպանման ծախսը (1,702.3 դրամ՝ նախորդ տարվա 1,600.8 դրամի դիմաց):

2003 թվականին պետական բյուջեից առաջին անգամ միջոցներ են հատկացվել՝

ա) անհատական ծածկագրերի համակարգի ներդրման, տեղեկատվական բազայի ստեղծման և շահագործման նպատակով: Ծրագիրը կատարվել է ամբողջությամբ, պատրաստված քարտերի թիվը կազմել է 318126 միավոր, հատկացված գումարի չափը՝ 98.0 մլն դրամ:

բ) մարդասիրական օգնության կարգով ստացվող սննդի բաշխման հետ կապված ծախսերը կատարելու նպատակով: Ծրագիրը թերակատարվել է 21.9 մլն դրամով՝ կապված Համաշխարհային պարենի ծրագրով նախատեսված օգնության՝ սննդի բաշխման 6 փուլերի փոխարեն ընդամենը 4-ի իրականացման հետ: Ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքում, Սյունիքի, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի մարզերում և ընդգրկել է 26700 ընտանիք:

գ) «Համաճանաչմանը անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրով 2003 թվականի ճշտված բյուջեով ծախս էր նախատեսվել 393.3 մլն դրամի չափով: Գումարը հատկացվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ, փաստացի ծախսերն ավելացել են 5.1 %-ով: Բյուջեով (բացատրագրով) նախատեսված պրոթեզաօրթոպեդիկ և հաշմանդամների կյանքը թեթևացնող այլ պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման 12082 պայմանական միավորի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 7908, որից գերմանական տեխնոլոգիայով՝ 847: Պայմանական մեկ միավորի միջին գինը կազմել է 42.4 հազ. դրամ՝ բյուջեով նախատեսված 21.2 հազ. դրամի դիմաց:

Լսողական ապարատների մասով նախատեսված 1000 –ի դիմաց փաստացի բաշխվել է 1008 հատ: Պլանավորված 28.0 հազ. դրամի փոխարեն մեկ միավորի փաստացի ձեռքբերման արժեքը կազմել է 25.0 հազ. դրամ:

2003 թվականին ձեռք են բերվել և բաշխվել հաշմանդամների 543 հատ սայլակներ՝ նախատեսված 800-ի դիմաց: Մեկ միավորի շուկայական միջին գինը կազմել է 129.2 հազ. դրամ՝ պլանավորված 140.0 հազ. դրամի դիմաց:

Բժշկա-սոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության հիվանդանոցային ծառայությունների ձեռքբերման գծով պետպատվերը կատարվել է 100%-ով, ավելին՝ բյուջեով նախատեսված ծավալային ցուցանիշները գերակատարվել են, այսպես՝ պլանավորված 260 դեպքի դիմաց թվով 8 հիվանդությունների գծով փաստացի անվճար բուժօգնություն է ստացել 388 մարդ: Ըստ ներկայացված պարզաբանման, լրացուցիչ սպասարկումն իրականացվել է ՀՀ կառավարության կողմից լրացուցիչ միջոցների հատկացման հաշվին: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի փաստացի ծախսերն ավելացել են 78.6%-ով:

Ամբողջությամբ իրականացվել է «Կենսաթոշակառուների օգնության տրամադրում» ծրագիրը: Հատկացված 7.3 մլն դրամի հաշվին 3-5 հազ. դրամի չափով միանվագ դրամական օգնություն է տրամադրվել շուրջ 2 հազար սոցիալապես անապահով թոշակառուների:

Այս ենթախմբով ընդհանրապես չի իրականացվել միայն «Հաշմանդամներին բենզինի արժեքի փոխհատուցում» ծրագիրը, որի համար նախատեսվել էր հատկացնել 1.5 մլն դրամ: Տարեկան ճշտված պլանով այն ամբողջությամբ հանվել է:

Այլ սոցիալական ծրագրեր

Այս ենթախմբով բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են 2,430.1 մլն դրամ՝ տարեկան ճշտված նախահաշվով նախատեսված 3,191.0 մլն դրամի դիմաց կամ թերակատարումը կազմել է 23.8 %:

Ենթախմբում ներառվել են 14 ծրագրեր, որոնցից 3-ի մասով հատկացումներ ընդհանրապես չեն կատարվել: Թերակատարումը հիմնականում պայմանավորված է՝ Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի թերֆինանսավորմամբ, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին օրենքով տրամադրված արտոնությունների դիմաց ձեռնարկություններին տրվող փոխհատուցման գումարների չֆինանսավորմամբ՝ կապված ֆինանսավորման հայտերի բացակայության հետ: Նույն պատճառով չեն հատկացվել նաև գոհված ազատամարտիկների երեխաներին բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցման համար փոխհատուցումներն ու փախստականի կարգավիճակ հայցողների միանվագ նպաստները:

Ենթախմբի ծախսերի գերակայող մասն ուղղվել է Նոյեմբերյանի երկրաշարժի հետևանքով տուժած ընտանիքներին տրվող փոխհատուցմանը (1,053.0 մլն դրամ) և վետերանների պատվովճարներին (610.0 մլն դրամ):

Նախորդ տարվա համեմատ «Այլ սոցիալական ծրագրերի» ծախսերը կրկնապատկվել են:

Նոյեմբերյանի երկրաշարժից վնասված բնակելի անհատական տների վերանորոգման նպատակով 2003 թվականի պետական բյուջեից նախատեսվել էր հատկացնել 1,105.0 մլն դրամ՝

որպես անհատույց պետական ֆինանսական աջակցություն: Տրված գումարների չափը, ըստ վնասվածության կարգի, սահմանվել է ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1274-Ն որոշմամբ:

Թվով 1592 բնակելի տան տերերից 121-ը գրկվել են աջակցությունից՝ ընտանիքով Հայաստանի Հանրապետությունից բացակայելու, այլ երկրի քաղաքացիություն ձեռքբերելու և ՀՀ կառավարության վերոնշված որոշման 7-րդ կետի պահանջները չբավարարելու պատճառով, ինչով էլ բացատրվում է ծրագրի գումարային թերակատարումը:

2003 թվականին 134.8 մլն դրամ է հատկացվել հանրապետության սահմանամերձ շրջաններում ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին՝ վնասի փոխհատուցման, նրանց բնակարանային խնդիրների առաջնահերթ լուծման նպատակով: Ծրագիրը կատարվել է 94.9 %-ով:

2003 թվականին սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառի ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում փաստացի կազմել է 9.4 % կամ նախատեսված հատկացումներից 0.2 կետով ավելի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. 2003 թվականին ՀՀ պետական բյուջեից սոցիալական ոլորտի ֆինանսավորումն իրականացվել է օրենքով սահմանված պետական ծրագրերին համապատասխան: Նախատեսված հատկացումների ընդհանուր չափը կազմել է 30,822.9 մլն դրամ կամ բյուջետային ընդհանուր ծախսերի 9.2 %-ը: 2003 թվականի ընթացքում կատարվել են վերաբաշխումներ, որոնց արդյունքում տարեկան նախատեսված հատկացումներն աճել են 161.7 մլն դրամով՝ կազմելով 30,984.6 մլն դրամ (ճշտված պլան), որի դիմաց փաստացի կատարողականը (դրամարկղային ծախսը) կազմել է 29,255.1 մլն դրամ (94.4%): Շեղումները հիմնականում պայմանավորված են կենսաթոշակների, աղքատության ընտանեկան նպաստների, Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի և հատկապես այլ սոցիալական ծրագրերի թերակատարմամբ:
2. «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրի պատասխանատուների կողմից ձեռնարկված միջոցառումները բավարար չեն եղել գործազրկության կրճատման և զբաղվածության հարցերի արդյունավետ ու լիարժեք լուծման ուղղությամբ: Այսպես, 2003 թվականի պետական բյուջեով (բացատրագրով) նախատեսվել էր «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում հատկացվող միջոցների հաշվին աշխատանքում ընդգրկել 30625 անձանց, փաստացի այդ ցուցանիշը կազմել է 9458 (30.9%), այն դեպքում, երբ գումարային առումով ծրագիրը կատարվել է 92.6%-ով:

2003 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը կազմել է 148379 մարդ, իսկ հաշվառված

գործագործակների թիվը՝ 118646 մարդ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում աշխատանքի է տեղավորվել ընդամենը 7889 գործագործակ, կամ հաշվառվածների ընդհանուր թվի 6.6 %-ը, իսկ աշխատանք փնտրող քաղաքացիների ընդհանուր թվից ժամանակավոր (2-ից՝ 2.3 ամիս տևողությամբ) աշխատանքով ապահովվել է ընդամենը 8874 քաղաքացի, կամ հաշվառվածների ընդհանուր թվի 6.0 %-ը:

3. Չի ապահովվել նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի 2003 թվականի բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող զբաղվածության պետական ծրագրի կատարումը: Այս գծով նախատեսված 809.0 մլն դրամի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 443.8 մլն դրամ, կամ ծրագիրը կատարվել է ընդամենը 53.6%-ով: Հատկացված միջոցների հիմնական մասն ուղղվել է գործագործակության նպաստների և դրամական օգնությունների վճարմանը: 269.0 մլն դրամով թերակատարվել են «Մասնագիտական ուսուցման կազմակերպում» և «Գործատուների մոտ հաշմանդամների համար մասնագիտացված ձեռնարկությունների հիմնում և հաշմանդամների մասնագիտական ուսուցման կազմակերպում» ենթածրագրերը, իսկ թվով 4 ենթածրագրեր՝ 106.2 մլն դրամի, ընդհանրապես չեն կատարվել:
4. 2003 թվականի պետական բյուջեով (բացատրագրով) նախատեսված պրոթեզաօրթոպեդիկ և հաշմանդամների կյանքը թեթևացնող այլ պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման 12082 պայմանական միավորի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 7908 միավոր (65.5%), այն դեպքում, երբ գումարային առումով ծրագիրը կատարվել է ամբողջությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

«ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և Վերահսկիչ պալատ ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Հավելված 1

Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության գծով ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից կատարված ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

(մլն դրամ)

Խումբ	Ենթախումբ	Բովանդակություն	Տարեկան նախահաշիվ	Տարեկան ճշտված նախահաշիվ	Տարեկան կատարողական	Կատարման %-ը ճշտված նախահաշվի նկատմամբ
06	01	Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառում պետական կառավարում	358.0	457.2	447.1	97.8
06	02	Կենսաթոշակային ապահովում	11,528.8	11,528.8	11,186.5	97.0
06	03	Պետական նպաստներ բնակչությանը	13,629.1	13,629.1	13,140.4	96.4
06	04	Սոցիալական ապահովության միջոցառումներ	2,173.0	2,178.5	2,051.0	94.1
06	05	Այլ սոցիալական ծրագրեր	3,134.0	3,191.0	2,430.1	76.2
Ընդամենը			30,822.9	30,984.6	29,255.1	94.4

Հավելված 2

2003 թվականի բյուջետային ծախսերի ֆինանսավորումը՝ ըստ սոցիալական ծրագրերի
իրականացնող մարմինների

(մլն դրամ)

h/h	Պետական մարմնի անվանումը	Տարեկան նախահաշիվ	Տարեկան ճշտված նախահաշիվ	Կատարողականը	Կատարման %-ը ճշտված նախահաշվի նկատմամբ
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2085.6	2,180.9	2,055.7	94.3
2.	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	14,574.8	14,574.8	13,515.7	92.7
3.	ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	11,528.8	11,528.8	11,796.6	102.3
4.	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	75.3	84.7	72.0	85.0
5.	Գեղարքունիքի մարզպետարան	289.2	289.2	288.8	99.9
6.	Տավուշի մարզպետարան	1,175.0	1,175.0	1,123.0	95.6
7.	Վայոց ձորի մարզպետարան	3.0	3.0	3.0	100.0
8.	Կոտայքի մարզպետարան	140.0	140.0	140.0	100.0
9.	Սյունիքի մարզպետարան	59.0	59.0	52.2	88.5
10.	Շիրակի մարզպետարան	91.1	91.1	91.1	100.0
11.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	25.0	25.0	-	-
12.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	30.0	117.0	117.0	100.0
13.	ՀՀ կառավարություն	746.1	716.1	-	-
Ընդամենը		30,822.9	30,984.6	29,255.1	94.4

Հավելված 3

Զբաղվածության պետական ծրագրերի իրականացման համար ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի 2003 թ. բյուջեից տրամադրված միջոցների օգտագործման վերաբերյալ

h/h	Ծրագրով նախատեսված ենթածրագրերի բովանդակությունը	Միջոցառման մեջ ընդգրկված անձանց թիվը	Հաստատված ֆինանսական միջոցները (մլն դրամ)	Ֆինանսավորված միջոցները (մլն դրամ)	%
1.	Գործազրկության նպաստի վճարում	8000	306.1	223.78	73.1 %
2.	Դրամական օգնության վճարում	10000	188.8	169.66	89.9 %
3.	Մասնագիտական ուսուցման կազմակերպում	2000	150.0	32.93	21.95 %
4.	Աջակցություն գործազուրկներին ձեռնարկատիրական գործունեության իրականացման և գործատուների մոտ լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում	300	80.0	-	-
5.	Գործազուրկներին այլ վայր աշխատանքի գործուղում	40	0.6	-	-
6.	Գործատուների վնասների փոխհատուցումը զբաղվածության պետական ծառայության կողմից աշխատողներին զանգվածային ազատումների վերաբերյալ ընդունված որոշումների կասեցման դեպքում	100	0.6	-	-
7.	Գործատուների մոտ հաշմանդամների համար մասնագիտացված ձեռնարկությունների հիմնում և հաշմանդամների մասնագիտական ուսուցման կազմակերպում	400	53.0	3.51	6.6 %
8.	Գործազրկության նպաստների և դրամական օգնության վճարման ծառայությունների վարձավճար (1 %)	-	4.9	3.94	80.4 %
9.	Զբաղվածության բնագավառում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով մրցույթի կազմակերպում և գիտահետազոտական աշխատանքների կատարում	-	25.0	-	-
Ընդամենը			809.0	433.82	53.6 %

Հաշվետվությունը հաստատվել է
ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի խորհրդի
03.10.2004թ. նիստում և ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն,
ՀՀ առողջապահության նախարարություն:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից առողջապահական պետական նպատակային ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ

Վերահսկողության հիմքը՝ Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 18-րդ կետի պահանջը և Վերահսկիչ պալատի նախագահի 2004 թվականի ապրիլի 1-ի թիվ 72 հրամանը:

Վերահսկողության նպատակը՝ Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից առողջապահական պետական նպատակային ծրագրերով նախատեսված, հատկացված և օգտագործված միջոցների արդյունավետությունը և նպատակայնությունը:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ առողջապահության նախարարություն, պետական առողջապահական գործակալություն, պետական պատվեր իրականացրած բուժհաստատություններ:

Վերահսկողության ժամանակահատվածը՝ 2003 թվականի բյուջետային տարի:

Ուսումնասիրություններն իրականացվել են՝ ՀՀ առողջապահության նախարարության, պետական առողջապահական գործակալության և պետական պատվերի շրջանակներում բուժօգնություն և սպասարկում տրամադրած բուժհաստատությունների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

2003 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատվել են 2003 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերը (այսուհետ՝ Ծրագիր), որտեղ ընդգրկվել են բնակչությանը տրամադրվող՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը:

Այդ Ծրագրերն են՝

1. Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում:
2. Բնակչության առողջության առաջնային պահպանում:
3. Մոր և մանկան առողջության պահպանում:

4. Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բուժօգնություն:

5. Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի:

Նշված Ծրագրերի ֆինանսավորումն իրականացվել է 2003 թվականի պետական բյուջեից: Դրանք ամենամյա են և նպատակաուղղված՝ բնակչության առողջության պահպանմանը:

Նշված Ծրագրերի նպատակները, ուղղվածությունը և պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա միջոցառումները մանրակրկիտ գետեղված են «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 11 հավելվածում, իսկ ծավալային ցուցանիշները՝ նշված օրենքի նախագծի բացատրագրում:

2003 թվականի պետական բյուջեով առողջապահության ծախսերի ձևավորումն ունեցել է երկու հիմնական մոտեցում.

1. առողջապահական գերակայությունների պահպանում,

2. սոցիալական ուղղվածության ապահովում:

ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից հատկացումները նախատեսվել է ուղղել՝

- առողջապահության բնագավառում պետական կառավարմանը՝ 233.2 մլն դրամ,
- հիվանդանոցային բուժօգնությանը՝ 11.625.4 մլն դրամ,
- առաջնային՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնությանը՝ 7.021.3 մլն դրամ,
- հիգիենիկ և համաճարակային ծառայությանը՝ 584.6 մլն դրամ,
- առողջապահական այլ ծառայություններին և Ծրագրերին (այդ թվում՝ Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող միջոցներով իրականացվող)՝ 1549.5 մլն դրամ:

Նախատեսվող հատկացումների ընդհանուր չափը կազմել է 21.014.0 մլն դրամ կամ բյուջետային ընդհանուր ծախսերի 6.3%-ը:

2003 թվականի պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ

2003 թվականին ՀՀ պետական բյուջեից առողջապահության ոլորտի ֆինանսավորումն իրականացվել է 2003 թվականի առողջապահական պետական նպատակային Ծրագրերին համապատասխան: Հատկացումները կատարվել են «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 05 «Առողջապահություն» խմբի 01-ից 05 ենթախմբերի Ծրագրերով նախատեսված միջոցների շրջանակներում (Հավելված 1):

2003 թվականի ընթացքում կատարվել են վերաբաշխումներ, որոնց արդյունքում տարեկան նախատեսված հատկացումները նվազել են 1122.6 մլն դրամով՝ կազմելով 19.891.4 մլն դրամ (ճշտված պլան), որի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 19.749.3 մլն դրամ (99.3%), իսկ դրամարկղային ծախսը (կատարողականը)՝ 19.598.6 մլն դրամ (98.5%): Շեղումները հիմնականում առաջացել են հիվանդանոցային և ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության

Ծրագրերի, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առողջապահության ֆինանսավորման համակարգ» ենթաժրագրի թերակատարումից:

Վերաբաշխումները կատարվել են ՀՀ կառավարության որոշումներով և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ծանուցագրերի, ինչպես նաև Համաշխարհային բանկի կողմից ընդունված որոշումների հիման վրա: Նվազեցումների ընդհանուր գումարը կազմել է 1.907.3 մլն դրամ, իսկ ավելացումներինը՝ 784.7 մլն դրամ (Հավելված 1):

2003 թվականի բյուջետային ծախսերի ֆինանսավորումն ըստ առողջապահական Ծրագրերն իրականացնող մարմինների ունի հետևյալ տեսքը.

(մլն դրամ)

h/h	Պետական մարմնի անվանումը	նախատեսված նախահաշիվ	ճշտված նախահաշիվ	ֆինանսավորում	Դրամարկրդային ծախս	Կատարման %-ով ճշտված նախահաշվի նկատմամբ
1.	ՀՀ առողջապահության նախարարություն	20.245.5	18.897.4	18.755.6	18.718.3	99.1
2.	ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական Ծրագրերի իրականացման գրասենյակ (ԱԾԻԳ)	588.2	823.9	823.9	710.5	86.2
3.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	50.0	50.0	49.9	49.9	99.8
4.	Լոռու մարզպետարան	90.0	90.0	89.8	89.8	99.8
5.	ՀՀ սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության նախարարություն	40.3	30.1	30.1	30.1	100
	Ընդամենը	21.014.0	19.891.4	19.749.3	19.598.6	98.5

Հատկացված միջոցների զգալի մասն ուղղվել է հիվանդանոցային և առաջնային բուժօգնությանը, այսպես՝ հիվանդանոցային բուժօգնության Ծրագրերի ֆինանսավորման նպատակով հատկացվել է 10.5 մլրդ դրամ, ինչը կազմել է առողջապահական ծախսերի 53.5%-ը, իսկ առողջության առաջնային պահպանման ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության Ծրագրերով՝ 6.5 մլրդ դրամ, կամ առողջապահական ծախսերի 33.2 %-ը, ընդամենը՝ 17.0 մլրդ դրամ կամ՝ 86.7%-ը:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման, բերված են ստորև:

Առողջապահության բնագավառում պետական կառավարում

Այս Ծրագրով բյուջետային հատկացումների փաստացի կատարողականը կազմել է 333.5 մլն դրամ (տարեկան ճշտված նախահաշվի 94.6%-ը): 2002 թվականի համեմատությամբ հատկացումներն աճել են 4.5 անգամ, ինչը, ըստ ներկայացված պարզաբանումների, պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության համակարգի բարեփոխումների, մասնավորապես՝ նախարարության կազմում Պետական հիգիենիկ և համաճարակային տեսչության ստեղծմամբ, ինչպես նաև 2003 թվականի հուլիսի 1-ից համակարգի քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բարձրացմամբ: Վերջինիս իրականացման համար պետական բյուջեից լրացուցիչ հատկացվել է 119.4 մլն դրամ: 2003 թվականին կատարված բյուջետային ծախսերի փաստացի չափը կազմել է 322.8 մլն դրամ (տարեկան ճշտված նախահաշվի 91.6%-ը):

Հիվանդանոցային բուժօգնություն

Հիվանդանոցային բուժօգնության թվով 15 Ծրագրերի ֆինանսավորմանը ուղղվել է 10.466.7 մլն դրամ, տարեկան ճշտված նախահաշվի՝ 10.548.1 մլն դրամի դիմաց (99.2%): Փաստացի կատարողականը (դրամարկղային ծախսը) կազմել է 10.466.2 մլն դրամ: Ըստ հիվանդանոցային բուժօգնության տեսակների պատկերը հետևյալն է՝

1. «Տուբերկուլոզի բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրով հատկացված բյուջետային միջոցների կատարողականը կազմել է 490.3 մլն դրամ, տարեկան ճշտված նախահաշվի՝ 491.8 մլն դրամի դիմաց (99.7%):

Այս Ծրագրի կատարման վերաբերյալ Վերահսկիչ պալատի կողմից ներկայացվել է առանձին հաշվետվություն:

2. «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրի տարեկան ճշտված նախահաշվով ծրագրավորված 367.9 մլն դրամի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 367.8 մլն դրամ:

2003 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 6000 հիվանդանոցային դեպքի բուժում՝ նախորդ տարվա 5200-ի դիմաց: Ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը ներառել է աղիքային, վիրուսային և միջատներով տարածվող՝ ինֆեկցիաներով ախտահարվածների բուժումը, որն ունի սոցիալական կարևոր նշանակություն: Ծրագրի շրջանակներում բուժօգնության ֆինանսավորումն իրականացվել է փաստացի անցկացրած մահճակալ-օրերի դիմաց:

Այս Ծրագրի կատարումն ապահովվել է ամբողջությամբ, ավելին՝ առանց ֆինանսական միջոցների ավելացման բուժօգնություն և սպասարկում են ստացել ընդհանուր առմամբ 6950 հիվանդներ, ինչը պայմանավորված է բուժման միջին տևողության կրճատմամբ:

3. «Մեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսվել է 680 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 45.2 մլն դրամ գումարով և 100 դեպքի հետազոտում հիվանդանոցային պայմաններում

- ախտորոշման նպատակով՝ 2.9 մլն դրամ գումարով, ընդամենը՝ 48.1 մլն դրամ, ինչի դիմաց փաստացի ապահովվել է 2057 հիվանդի բուժօգնություն և սպասարկում՝ 48.0 մլն դրամ գումարով: Շեղումը կապված է գորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության դեպքերը, որպես մասնագիտական ծավալ, այս տեսակի հիվանդների կազմում հաշվառելու հետ: Նշված դեպքերի ֆինանսավորումն իրականացվել է «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրի միջոցներից:
4. Հիվանդանոցային բուժօգնության համար «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերման գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսվել է կենտրոնացված միջոցներով դեղորայքի, շիճուկների, պատվաստանյութերի, բժշկական պարագաների ձեռքբերման ծախսեր՝ 840.4 մլն դրամ գումարով: ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1390-Ն որոշմամբ կատարված փոփոխությամբ այս Ծրագրի գծով բյուջետային հատկացումները նվազել են 364.0 մլն դրամով և կազմել 476.4 մլն դրամ:
 5. «Հոգեկան հիվանդների բժշկական օգնության և խնամքի գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսվել է սուր դեպքերի բուժման 3335 դեպք՝ 338.9 մլն դրամ գումարով, դատա-հոգեբուժական փորձաքննության 150 դեպք՝ 15.9 մլն դրամ գումարով, հարկադիր բուժման 140 դեպք՝ 128.7 մլն դրամ գումարով և քրոնիկ հոգեկան հիվանդների խնամքի 600 դեպք՝ 551.9 մլն դրամ գումարով, ընդամենը՝ 1.035.4 մլն դրամ: 2003 թվականի հուլիսին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ կատարված վերաբաշխման արդյունքում բյուջետային հատկացումները նվազել են 21.7 մլն դրամով՝ կազմելով 1013.7 մլն դրամ, ինչի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 1.013.3 մլն դրամ: Այս դեպքում էլ առանց ֆինանսական միջոցների ավելացման բուժօգնություն և սպասարկում է տրամադրվել 6514 հիվանդների, կամ 2289 դեպքով ավելի, ինչը պայմանավորված է հաշվառված հիվանդների թվում գորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության շուրջ 2353 դեպքերի ընդգրկմամբ:
 6. «Շտապ բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրով 960.0 մլն դրամի չափով բյուջետային հատկացումները ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 1289-Ն որոշմամբ նվազել են 130.0 մլն դրամով՝ կազմելով 830.0 մլն դրամ, ինչը 30.0 մլն դրամով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: 2003 թվականին ընդհանուր առմամբ նախատեսվել է 316.560 շտապ օգնության կանչ, որից 175000-ը՝ գծային, 49000-ը՝ նեղ մասնագիտացված, 92360-ը՝ ֆելդշերական և 200-ը՝ սանիտարական ավիացիայի կանչ: Փաստացի, ընդհանուր առմամբ, սպասարկվել է 303.257 շտապ օգնության կանչ, իսկ կատարողականը կազմել է 829.7 մլն դրամ:
 7. «Նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսված 55.4 մլն դրամի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 54.3 մլն դրամ (98.0%): Այս Ծրագրի շրջանակներում նախատեսվել է 410 դեպք

նարկոլոգիական հիվանդների բուժում՝ 48.1 մլն դրամ գումարով և հիվանդանոցային պայմաններում ախտորոշման նպատակով 240 դեպքի հետազոտում՝ 7.3 մլն դրամ գումարով: Փաստացի, ընդհանուր առմամբ, բուժօգնություն և սպասարկում են ստացել 744 նարկոլոգիական հիվանդներ: Ծրագրի շրջանակներում բուժօգնության ֆինանսավորումն իրականացվել է փաստացի անցկացրած մահճակալ-օրերի դիմաց, և բուժման միջին տևողության կրճատման հաշվին հնարավորություն է ընձեռվել լրացուցիչ բուժօգնություն տրամադրել 94 հիվանդի:

8. «Հենդիկալիզի անցկացման գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսված 432.7 մլն դրամի ծախսերը կատարվել են ամբողջությամբ: Տարվա ընթացքում փաստացի անցկացվել է 28214 սեանս: Մեկ սեանսի միջին արժեքը կազմել է 15.3 հազ. դրամ՝ նախատեսված 18.3 հազ. դրամի դիմաց:
9. «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագիրը գերակատարվել է 11.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ծնունդների թվի ավելացմամբ: Ծրագիրն ընդգրկել է ծննդաբերության հետ կապված բուժօգնությունը՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների, ինչպես նաև անհետաձգելի վիճակներում գինեկոլոգիական բուժօգնությունը: 2003 թվականին նախատեսվել է 33500 դեպքի մանկաբարձագինեկոլոգիական օգնություն՝ 1.217.9 մլն դրամ գումարով և 2500 դեպքի հղիության ախտաբանության հետ կապված բուժօգնություն՝ 91.2 մլն դրամ գումարով, ընդամենը 1.309.1 մլն դրամ, ինչի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 1.459.8 մլն դրամ, իսկ սպասարկված հիվանդների ընդհանուր թվաքանակը՝ 42799 մարդ, կամ նախատեսված դեպքերի քանակից՝ 6799- ով ավելի: ՀՀ կառավարության թիվ 1289-Ն և թիվ 1663-Ն որոշումներով այս Ծրագրի ֆինանսավորումն ավելացել է 150.8 մլն դրամով:
10. «Անհետաձգելի բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսված 2.383.0 մլն դրամի դիմաց՝ փաստացի կատարողականը կազմել է 2.129.5 մլն դրամ: Տարվա ընթացքում ՀՀ կառավարության թիվ 1009-Ն և թիվ 1070-Ն որոշումներով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության թիվ 4/3-4/99-11086 ծանուցագրով բյուջետային հատկացումների նախատեսված չափը կրճատվել է 244.8 մլն դրամով: Ծրագիրը ներառել է սուր, անհետաձգելի, վերակենդանացման վիճակների և կյանքի համար վտանգ ներկայացնող միջոցառումների իրականացում հիվանդանոցային պայմաններում՝ անկախ սոցիալական վիճակից: 2003 թվականին նախատեսվել է 37096 հիվանդանոցային դեպքի բուժում, փաստացի բուժօգնություն և սպասարկում են ստացել 41504 հիվանդներ, կամ, չնայած ֆինանսավորման կրճատմանը, Ծրագիրը ծավալային առումով գերակատարվել է 11.9%-ով՝ 4408 դեպքով ավելի: Նշվածը հիմնականում պայմանավորված է նրանով, որ բյուջեում անհետաձգելի դեպքերի բուժումը նախատեսվել է լրիվ արժեքով՝ միջինը 64.1 հազ. դրամ, սակայն

մինչև երեք օր բուժօգնություն ստացած հիվանդների փաստացի ֆինանսավորումն իրականացվել է անցկացրած մահճակալ-օրերի հաշվով:

11. «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրով 2290.7 մլն դրամի չափով նախատեսված բյուջետային հատկացումները նվազեցվել են 272.4 մլն դրամով, կազմելով 2018.3 մլն դրամ, ինչի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 1962.5 մլն դրամ: Այս Ծրագրի շրջանակներում նախատեսվել է 34369 հիվանդանոցային դեպքի բուժում, փաստացի այն կազմել է 48015 (139.7%): Ծրագրով նախանշվել է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկում ընդգրկված անձանց բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների մատուցում, բացառությամբ՝ կոսմետոլոգիական, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման և ստոմատոլոգիական քանկարժեք ծառայությունների: Ծրագրի ծավալային ցուցանիշների գերակատարումը հիմնականում կապված է գորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց բուժման և փորձաքննության դեպքերի տեսակարար կշռի զգալի աճի հետ, որի փոխհատուցումն իրականացվել է 14.0 հազ. դրամով, բյուջեով նախանշված բուժման միջին արժեքի՝ 64.1 հազ. դրամի դիմաց:
12. «Մինչև 7 տարեկան երեխաներին բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսվել է 17800 հիվանդանոցային դեպքի բուժում 1143.5 մլն դրամ գումարով: Կատարված փոփոխությունների արդյունքում (ՀՀ կառավարության թիվ 1070-Ն որոշում և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության թիվ 4/3-4/99-1186 ծանուցագիր) բյուջետային հատկացումները կրճատվել են 130.0 մլն դրամով: Փաստացի ապահովված 1002.1 մլն դրամ կատարողականի դիմաց բուժօգնություն է տրամադրվել 17350 հիվանդների: Մեկ հիվանդի բուժման միջին ծախսը կազմել է 57.8 հազար դրամ, նախատեսված 64.1 հազ. դրամի դիմաց: Այս դեպքում էլ բուժման գնի տարբերությունը պայմանավորված է մինչև երեք օր բուժօգնություն ստացած հիվանդների բուժումը մահճակալ-օրերով փոխհատուցելու հանգամանքով: Հարկ է նշել, որ 2003 թվականին, տարիքային խմբերի ավելացմամբ պայմանավորված (2002 թվականի պետական բյուջեով բուժօգնություն է տրամադրվել մինչև 3 տարեկան երեխաներին), նախորդ տարվա համեմատ 42.4%-ով աճել են բյուջետային հատկացումները:
13. «Բժշկա-սոցիալական վերականգնման և աշխատունակության փորձաքննության ծառայությունների գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսվել է 421 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 30.6 մլն դրամ գումարով, որի դիմաց փաստացի ապահովվել է 531 դեպքի բուժում՝ 30.1 մլն դրամ կատարողականով:
14. «Հոգեբանական առողջության վերականգնման ծառայությունների ձեռքբերման գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսված 40.3 մլն դրամի դիմաց՝ փաստացի

կատարողականը կազմել է 30.1 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կողմից:

15. «Առողջապահական օբյեկտների շինարարություն» Ծրագրով նախատեսվել է 140.0 մլն դրամի հատկացումներ, որից Տավուշի մարզի Գիլիջան քաղաքի հիվանդանոցի հրդեհված շենքի վերականգնման համար՝ 50.0 մլն դրամ, Լոռու մարզի ինֆեկցիոն հիվանդանոցի շենքի ամրացման համար՝ 80.0 մլն դրամ և Վանաձորի թիվ 2 հիվանդանոցի սրտաբանական բաժանմունքի վերանորոգման համար՝ 10.0 մլն դրամ: Այս Ծրագրի փաստացի կատարողականը կազմել է 139.7 մլն դրամ, այն իրականացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության և Լոռու մարզպետարանի կողմից:

Վերոնշյալ Ծրագրերի շրջանակներում հիվանդանոցային բուժօգնության ծառայության գծով բուժված յուրաքանչյուր դեպքի դիմաց վճարումը կատարվել է՝ ելնելով անվճար բուժօգնության համար հաստատված գներից, որոնք հաշվարկվել են հիվանդի մեկ օրվա բազային գնի, բուժման միջին տևողության և ծառայության բարդության գործակցի արտադրյալով, ընդ որում՝ ֆինանսավորումն իրականացվել է ոչ թե առանձին վերցրած յուրաքանչյուր դեպքի փոխհատուցմամբ, այլ՝ սահմանափակված բյուջեի սկզբունքով: Հաշվարկների հիմքում դրվել են նախորդ ժամանակաշրջանի վիճակագրական տվյալները (դիմելու հաճախականությունը, բնակչության թվաքանակը և այլն):

2003 թվականի պետական բյուջեով հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող բուժհաստատությունների համար մեկ հիվանդի մեկ օրվա ծախսը սահմանվել է 7.3 հազ. դրամ, նախորդ տարվա 6.0 հազ. դրամի դիմաց, որը, ըստ 2003 թվականի պետական բյուջեի մասին օրենքի բացատրագրի, ներառել է՝

- աշխատավարձ և աշխատավարձի վրա եկ՝ 34.2%,
- տնտեսական ծախսեր՝ 17.8%
- լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծախսեր՝ 11.0%
- դեղորայքի և բժշկական պարագաների ծախսեր՝ 24%
- սննդի ծախսեր՝ 13%:

Ըստ ներակայացված տեղեկատվության, 2003 թվականին պետպատվերի շրջանակներում հիվանդանոցային բուժօգնություն են ստացել 169527 հիվանդներ, նախորդ տարվա 148404-ի դիմաց, կամ աճը կազմել է 14.2%:

2003 թվականի ընթացքում պետության կողմից երաշխավորված՝ հիվանդանոցային անվճար բուժօգնություն տրամադրած բուժհաստատություններում իրականացված ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ՝

1. Չեն պահպանվել 2003 թվականի պետական բյուջեով սահմանված՝ հիվանդանոցային բուժօգնության ծախսերի համաձայնությունները, այսպես՝ բացառությամբ հիվանդանոցային հատուկ խնամք պահանջող բուժհաստատությունների (մասնավորապես՝ տուբերկուլյոզի և հոգեկան հիվանդների բուժօգնության գծով), մյուս բոլոր դեպքերում սննդի ծախսեր ընդհանրապես չեն կատարվել: Ըստ ՀՀ

կառավարության 2003 թվականի փետրվարի 6-ի թիվ 246-Ն որոշմամբ հաստատված՝ 2003 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման կարգի 34-րդ կետի «գ» ենթակետի, սննդի ծախսերը կատարվում են հիվանդի պահանջով, ընդ որում, այդ ծախսերից առաջացած տնտեսումը (թերաձախս) կարող է ուղղվել բուժհաստատության մյուս ծախսերին: Պետպատվերով նախատեսված այս ծախսային հոդվածով 2003 թվականին համատարած տնտեսում է ապահովվել, որոնց ընդհանուր չափը (առանց հատուկ խնամք պահանջող բուժհաստատությունների, շտապ բուժօգնության, հեմոդիալիզի անցկացման գծով ծախսերի և բժշկա-սոցիալական վերականգնման ու աշխատունակության փորձաքննության ծառայությունների գումարի) կազմել է 913.1 մլն դրամ: Այդ միջոցները հիմնականում օգտագործվել են աշխատանքի վարձատրության և տնտեսական ծախսերը հոգալու նպատակով, փոխարենը նախանշված չափերից պակաս են կատարվել դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր-ախտորոշիչ ծախսերը:

2. Թույլ են տրվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ, կապված առողջապահական պետական նպատակային Ծրագրերի շրջանակներում իրականացված անվճար բուժօգնության և սպասարկման դիմաց անձնական վճարների գանձումների հետ:

Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային Ծրագրերի շրջանակներում, իսկ այդ շրջանակներից դուրս՝ բժշկական ապահովագրական հատկացումների, անձնական վճարումների և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

Ուսումնասիրված բուժհաստատությունների կողմից 2003 թվականի ընթացքում պետպատվերի շրջանակներում տրամադրված անվճար բուժօգնության և սպասարկման դիմաց հիվանդներից (նրանց մերձավորներից) գանձված լրացուցիչ գումարները, պահանջված և ստացված դեղորայքը և բուժպարագաները ձևակերպվել են որպես օգնության կարգով կամավոր տրամադրված՝ անհատույց ստացված ակտիվներ և միացվել հարկվող շահույթին, մինչդեռ օրենքի 25-րդ հոդվածի վերջին պարբերությամբ մասնավորապես սահմանված է, որ մարդկանց կողմից անմիջական վճարումներ կատարվում են, եթե մատուցվող բուժօգնության և սպասարկման տեսակների և ծավալների ֆինանսավորումն ամբողջությամբ կամ մասամբ չի իրականացվում պետական բյուջեի միջոցների հաշվին: Ուսումնասիրված բոլոր դեպքերում լրացուցիչ գանձումների և այլ ակտիվների անհատույց տրամադրման անհրաժեշտությունը, բուժօգնության կազմակերպման նպատակով, չի հիմնավորվել համապատասխան հաշվարկներով:

Ուսումնասիրված բոլոր բուժհաստատությունները 2003 թվականին աշխատել են օգուտով (շահույթով):

Օրենքի 19-րդ հոդվածով բուժօգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են յուրաքանչյուրին տեղյակ պահել նրանց տրամադրվելիք բուժօգնության և սպասարկման տեսակի, մեթոդների, տրամադրման կարգի և պայմանների մասին, իսկ ինչ վերաբերում է անհետաձգելի բուժօգնության դեպքերին, ապա դրանք պետք է ցուցաբերվեն՝ անկախ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների: Օրենքով սահմանված է նաև՝ յուրաքանչյուր մարդու տրամադրել անհրաժեշտ տվյալներ հիվանդին ցուցաբերած բուժօգնության և սպասարկման քանակական և որակական բնութագրիչների և այդ նպատակով կատարված ծախսերի վերաբերյալ:

Ուսումնասիրված բոլոր դեպքերում օրենքի նշված պահանջները չեն կատարվել:

Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն

Այս բուժօգնության գծով պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 7021.3 մլն դրամ: ՀՀ կառավարության որոշումներով կատարված փոփոխությունների արդյունքում բյուջետային հատկացումները նվազել են 446.0 մլն դրամով՝ կազմելով 6575.3 մլն դրամ, ինչի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 6.503.9 մլն դրամ (98.9%): Նախորդ տարվա ցուցանիշի համեմատ բյուջետային հատկացումների աճը կազմել է 192.4%, որը հիմնականում պայմանավորված է կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերման ծախսերը բյուջետային հատկացումների այս ենթախմբում ներառելու հետ, ինչպես նաև առաջնային օղակի բուժհաստատությունների պահպանման և տնտեսական ծախսերի, ամբուլատոր-պոլիկլինիկական մեկ հաճախման և լաբորատոր-ախտորոշիչ մեկ հետազոտության գնի ավելացմամբ:

Հատկացված բյուջետային միջոցներով ֆինանսավորվել են թվով հինգ Ծրագրեր: Ֆինանսավորումն իրականացվել է բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սկզբունքով: Հաշվարկի համար բնակչության հաշվարկային մեծությունը, ըստ 2003 թվականի պետական բյուջեի բացատրագրի, ընդունվել է 3000.0 հազար, որից մեծահասակներ՝ 2240 հազար, երեխաներ՝ 760.0 հազար:

Ըստ Ծրագրերի պատկերը հետևյալն է.

1. «15 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր» Ծրագրի իրականացման համար նախատեսված 1955.6 մլն դրամի դիմաց ճշտված նախահաշիվը կազմել է 2135.6 մլն դրամ (109.2%), իսկ փաստացի կատարողականը՝ 2094.1 մլն դրամ (98.06%): Տարվա ընթացքում մեկ բնակչի հաշվով տեղամասային թերապևտի (մանկաբույժի) և ընտանեկան բժշկի կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների բուժօգնության և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում հիվանդանոցային բուժօգնության՝ հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների

իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացված գումարը քաղաքային և տարածաշրջանային պոլիկլինիկաներում կազմել է 803.8 դրամ, իսկ գյուղական ամբուլատորիաներում՝ 717.3 դրամ:

Նեղ մասնագետների կողմից բուժօգնության իրականացման դիմաց մեկ շնչի ֆինանսավորման չափը կազմել է՝ համապատասխանաբար. վիրաբուժականի համար՝ 19.8 դրամ, նյարդաբանականի, սրտաբանականի և էնդոկրինոլոգիականի համար՝ 13.3 դրամ, ակնաբուժականի, օթոլարինգոլոգիականի և ստոմատոլոգիականի համար՝ 8.9 դրամ:

Լաբորատոր-ախտորոշիչ հետազոտության ծախսերը, ըստ մեկ շնչի ֆինանսավորման, կազմել է 108.2 դրամ, դեղորայքային ծախսերը՝ 96.7 դրամ:

2. «Մինչև 15 տարեկան երեխաների առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր» Ծրագրով տարվա կտրվածքով մեկ բնակչի հաշվով հատկացված գումարը քաղաքային և տարածաշրջանային պոլիկլինիկաներում կազմել է 1775.0 դրամ, իսկ գյուղական ամբուլատորիաներում՝ 1606.4 դրամ, ըստ նեղ մասնագետի բուժօգնության իրականացման՝ մեկ շնչի ֆինանսավորման գումարը կազմել է 168.6 դրամ: Լաբորատոր ախտորոշիչ հետազոտության ծախսերը մեկ շնչի հաշվով ֆինանսավորվել է 206.2, իսկ դեղորայքային ծախսերը՝ 195.7 դրամի չափով:

3. «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերման գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսվել է կենտրոնացված միջոցներով դեղորայքի, շիճուկների, պատվաստանյութերի, բժշկական պարագաների ձեռքբերման ծախսեր՝ 3020.0 մլն դրամի չափով: ՀՀ կառավարության երկու որոշումներով կատարված փոփոխությունների արդյունքում նախանշված հատկացումները նվազել են 622.0 մլն դրամով, կազմելով 2398.0 մլն դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 2397.7 մլն դրամ: Բնակչությանը դեղերով ապահովումը կատարվել է ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 8-ի՝ «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռքբերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» թիվ 396 որոշման համաձայն:

4. «Գիսպանսերային բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրի ճշտված նախահաշվով նախատեսված 386.5 մլն դրամի դիմաց բյուջետային հատկացումների փաստացի կատարողականը կազմել է 386.1 մլն դրամ: Գիսպանսերային առաջնային բուժօգնության նշված Ծրագրով 2003 թվականի պետական բյուջեից մեկ շնչի ֆինանսավորման չափը, ըստ պոլիկլինիկաների նեղ մասնագետների կողմից իրականացրած դիսպանսերային բուժօգնության տեսակների, կազմել է համապատասխանաբար՝ հակատուբերկուլյոզային բուժօգնության դեպքում՝ 26 դրամ, ուռուցքաբանական, հոգենյարդաբանական և մաշկավեներական բուժօգնության դեպքում՝ 23 դրամ, ինֆեկցիոն բուժօգնության դեպքում՝ 18 դրամ:

5. «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր» Ծրագրով նախատեսված 283.2 մլն դրամի բյուջետային հատկացումները ՀՀ

կառավարության երկու որոշումներով նվազել է 49.0 մլն դրամով և կազմել 234.1 մլն դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 222.1 մլն դրամ (94.9%): Առաջնային բուժօգնության այս տեսակի գծով տարվա կտրվածքով մեկ բնակչի հաշվով հատկացված գումարը կազմել է 126.4 դրամ: 2003 թվականին բուժօգնություն է ցուցաբերվել 40319 մարդու, մեկ հիվանդի ամբուլատոր-պոլիկլինիկական սպասարկման միջին արժեքը կազմել է 5.5 հազ. դրամ:

2003 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար առաջնային բուժօգնություն տրամադրած բուժհաստատություններում իրականացված ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ ինչպես հիվանդանոցային, այնպես էլ առաջնային բուժօգնության դեպքում չեն պահպանվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 19-րդ և 25-րդ հոդվածների պահանջները, կապված բնակչության առաջնային բուժօգնության և սպասարկման դիմաց անձնական վճարներ գանձելու, ինչպես նաև պետական պատվերի վերաբերյալ բուժօգնություն ստացողներին համապատասխան տեղեկատվություն չտրամադրելու հետ, ինչը հակասում է 2003 թվականի առողջապահական պետական նպատակային Ծրագրերի դրույթներին (ՀՕ-492-Ն, հավելված 11), որով, մասնավորապես, սահմանված է, որ բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների ախտորոշման, բուժման և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը տեղամասային թերապևտների և մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից կատարվում է ամբողջ բնակչության համար՝ առանց հաճախումների սահմանափակման, իսկ ֆինանսավորումն իրականացվում է 2003 թվականի պետական բյուջեից: Ուսումնասիրված բուժհաստատություններում հիմնականում բացակայել են բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար առաջնային՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության և սպասարկման տրամադրման վերաբերյալ տեղեկատվական ցուցանակները:

Հիգիենիկ – հակահամաճարակային ծառայություններ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման այս ենթախմբի թվով երկու Ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից նախատեսվել և հատկացվել է 584.6 մլն դրամ: Հատկացված միջոցներն ուղղվել են բնագավառի պետական ոչ առևտրային կազմակերպությունների սուբսիդավորմանը՝ հիգիենիկ- համաճարակային ծառայության գծով պետական պատվերի շրջանակներում «Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման 2003 թվականի պետական նպատակային Ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացմանը, որոնք ներառել են մասնավորապես՝ փորձագիտական, լաբորատոր և գործիքային մանրէաբանական, սանիտարա-քիմիական հետազոտություններ, հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների,

կազմակերպությունների, հիմնարկների (անկախ սեփականության ձևից) կողմից սանիտարա-համաճարակաբանական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ, բնակչության առողջության վրա արտաքին աշխարհի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելում, վարակային հիվանդությունների օջախներում ազգաբնակչության իմունիզացիայի կատարման նկատմամբ հսկողություն և այլն:

Նախորդ տարվա համեմատ այս ծառայության գծով հատկացումները նվազել են 26.8% -ով, ինչը պայմանավորված է պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության ստեղծման և դրա պահպանման ծախսերը պետական կառավարման ապարատի ծախսերում ընդգրկելու հետ:

Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր

Բուժօգնության այլ ծառայությունների և ծրագրերի ֆինանսավորմանը 2003 թվականի պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 1.549.4 մլն դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 1832.8 մլն դրամ, իսկ կատարողականը՝ 1.710.4 մլն դրամ (93.3%): Ճշտված նախահաշվի նկատմամբ շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի թերակատարմամբ (78.1%): Ենթախմբում ներառվել են թվով 9 Ծրագրեր, որից 4-ը ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Ծրագրերն են:

Մյուս հինգ Ծրագրերով պետական միջոցների հաշվին ֆինանսավորվել են՝

- Կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման ծախսերը՝ 506.96 մլն դրամ գումարով: Բոլոր ձեռքբերումները կատարվել են Պետական գնումների գործակալության միջոցով, իսկ բաշխումն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով:
- Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման ծախսերը՝ 37.8 մլն դրամ գումարով:
- Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսը՝ 13.0 մլն դրամ գումարով:
- Այլ պետական ոչ առևտրային կազմակերպությունների սուբսիդավորման ծախսերը՝ 241.6 մլն դրամ գումարով: Այս Ծրագրի միջոցներով իրականացվել են մասնավորապես՝ դատա-բժշկական փորձաքննություններ, գենի ճշտման աշխատանքներ, ՁԻԱՀ/ՄԻԱՎ կանխարգելման կազմ-լուսավորչական աշխատանքներ, մանկական դիակների դիախերձման և մահվան պատճառների ճշտման աշխատանքներ և այլն:
- Առողջապահության այլ ծառայությունների ծախսերը՝ 200.5 մլն դրամ գումարով: Այս Ծրագրի շրջանակներում իրականացվել է մասնավորապես՝ արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժհիմնարկներին արյունով և դրա բաղադրիչներով ապահովումը, հակառեզուս-իմունոգլոբինի տրամադրումը ծննդատներին, դիսպանսեր հսկողության

տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, բնակչության ռադիոլոգիական անվտանգության աշխատանքները և այլն:

Հաշվետվության նախագծին ծանոթացել է ՀՀ առողջապահության նախարարության իրավասու անձը: Առարկություններ և դիտողություններ չեն ներկայացվել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Չեն պահպանվել 2003 թվականի պետական բյուջեով սահմանված՝ հիվանդանոցային բուժօգնության ծախսերի համամասնությունները, այսպես՝ բացառությամբ հիվանդանոցային հատուկ խնամք պահանջող բուժաստատությունների (մասնավորապես՝ տուբերկուլյոզի և հոգեկան հիվանդների բուժօգնության գծով), մյուս բոլոր դեպքերում սննդի ծախսեր ընդհանրապես չեն կատարվել: Այդ գումարները հիմնականում օգտագործվել են աշխատանքի վարձատրության և տնտեսական ծախսերը հոգալու նպատակով, փոխարենը նախանշված չափերից պակաս են կատարվել դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր-ախտորոշիչ ծախսերը:
2. Հիվանդանոցային և առաջնային բուժօգնություն և սպասարկում տրամադրած բուժաստատությունների կողմից թույլ են տրվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 19-րդ և 25-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտումներ, կապված առողջապահական պետական նպատակային Ծրագրերի շրջանակներում իրականացված անվճար բուժօգնության և սպասարկման դիմաց լրացուցիչ անձնական վճարների գանձումներ կատարելու և բուժօգնություն ստացողներին համապատասխան տեղեկատվություն չտրամադրելու հետ, մասնավորապես՝
 - Ուսումնասիրված բուժաստատությունների կողմից 2003 թվականի ընթացքում պետպատվերի շրջանակներում տրամադրված անվճար բուժօգնության և սպասարկման դիմաց հիվանդներից (նրանց մերձավորներից) գանձված լրացուցիչ գումարները, պահանջված և ստացված դեղորայքը և բուժպարագաները ձևակերպվել են որպես օգնության կարգով կամավոր տրամադրված՝ անհատույց ստացված ակտիվներ և միացվել են հարկվող շահույթին: Մինչդեռ օրենքի 25-րդ հոդվածի վերջին պարբերությամբ մասնավորապես սահմանված է, որ մարդկանց կողմից անմիջական վճարումներ կատարվում են, եթե մատուցվող բուժօգնության և սպասարկման տեսակների և ծավալների ֆինանսավորումն ամբողջությամբ կամ մասամբ չի իրականացվում պետական բյուջեի միջոցների հաշվին: Ուսումնասիրված բոլոր դեպքերում լրացուցիչ գանձումների և այլ ակտիվների անհատույց տրամադրման անհրաժեշտությունը բուժօգնություն կազմակերպելու նպատակով չի հիմնավորվել համապատասխան հաշվարկներով:

- Օրենքի 19-րդ հոդվածով բուժօգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են յուրաքանչյուրին տեղյակ պահել նրանց տրամադրվելիք բուժօգնության և սպասարկման տեսակի, մեթոդների, տրամադրման կարգի և պայմանների մասին, իսկ ինչ վերաբերում է անհետաձգելի բուժօգնության դեպքերին, ապա դրանք պետք է ցուցաբերվեն՝ անկախ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների: Օրենքով սահմանված է նաև՝ յուրաքանչյուր մարդու տրամադրել անհրաժեշտ տվյալներ հիվանդին ցուցաբերած բուժօգնության և սպասարկման քանակական և որակական բնութագրիչների և այդ նպատակով կատարված ծախսերի վերաբերյալ:

Ուսումնասիրված բոլոր դեպքերում օրենքի նշված պահանջները չեն կատարվել:

Ա Ռ Ա Ջ Ա Բ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ առողջապահության նախարարությանը

1. Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել պետական պատվերի շրջանակներում բուժհաստատություններին հատկացվող բյուջետային միջոցների (ըստ օրենսդրությամբ նախանշված ցուցանիշների) օգտագործման նկատմամբ՝ ապահովելով համապատասխան հաշվետվական ձևերի կիրառումը:
2. Ձեռնարկել միջոցներ պետական պատվերի շրջանակներում անվճար բուժօգնություն և սպասարկում տրամադրելու պարագայում անձնական վճարների գանձումներ թույլ չտալու ուղղությամբ, մասնավորապես՝ բուժհաստատությունների հետ կնքվող պայամանագրերում սահմանելով համապատասխան պատժամիջոցներ:
3. Լրատվական և տեղեկատվական այլ միջոցներով ակտիվացնել բնակչությանը տրամադրվող անվճար բուժօգնության տեսակների, ձևերի և ծավալների վերաբերյալ իրազեկումը, այդ նպատակով պետական բյուջեից հատկացնելով համապատասխան ֆինանսական միջոցներ:
4. «ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում ՀՀ Ազգային ժողով և վերահսկիչ պալատ ներակայացնել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Առողջապահության ոլորտին ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից հատկացված միջոցների վերաբերյալ

(մլն դրամ)

ԽՈՒՄԲ ԵՆԹԱԽՈՒՄԲ ԾՐԱԳԻՐ	ՊԵՏՊԱՏՎԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարեկգրի նախահաշվով	Կատարված փոփոխություն ներ	Փոփոխությունների իրավական հիմքերը	Փոփո- խու- թյան տոկոսը	Տարեկան ճշտված նախահաշվով	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս
05 01 01	Կառավարման մարմինների պահպանում	233165.2	119385.1	ՀՀ կառավարության որոշում 10.07.03թ. N834-Ն	51.2%	352550.3	340494.4	333476.1
05 02 01	Տուբերկուլյոզի բժշկական օգնություն	548303.0	-56490.9		-10.3%	491812.1	490278.0	490278.0
			-41490.9	ՀՀ ֆինանս. և էկոնոմ. նախ ճանուցագիր 12.11.03ժթ. N4/-3-4/99-11086				
			-15000.0	ՀՀ կառավարության որոշում 18.12.03թ. N1663				
05 02 02	Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բուժօգնություն	367920.0				367920.0	367836.9	367832.8
05 02 03	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություն ների բուժօգնություն	48092.4				48092.4	47993.1	47992.1
05 02 04	Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում	840400.0	-364000.0	ՀՀ կառավարության որոշում 06.11.03թ. N1390	-43.3%	476400.0	476400.0	476400.0
05 02 05	Հոգեկան հիվանդների բուժօգնություն և խնամք	1035418.9	-21693.0	ՀՀ ԱՆ 17.07.03թ. N12/5-06- 3643 ՀՀ ֆին. և էկոնոմ. նախ. 23.07.03թ. 3/1-1899	-2.1%	1013725.9	1013332.0	1013331.9
05 02 06	Շտապ բժշկական օգնություն	959968.8	-130000.0	ՀՀ կառավարության որոշում 16.10.03թ. N1289-Ն	-13.5%	829968.8	829967.6	829654.2
05 02 07	Նարկոլոգիկան հիվանդների բուժօգնություն	55398.2				55398.2	54306.4	54304.4
05 02 08	Հեմոդիալիզի անցկացում	432744.0				432744.0	432734.3	432733.9
05 02 09	Մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնություն	1309109.0	150800.0		11.5%	1459909.0	1459908.4	1459755.0
			100800.0	ՀՀ կառավարության որոշում 16.10.03թ. N1289-Ն				
			50000.0	ՀՀ կառավարության որոշում 18.12.03թ. N1663-Ն				

05 02 10	Անհետաձգելի բժշկական օգնություն	2383047.0	-244793.0		-10.3%	2138254.0	2129489.8	2129488.0
			-44793.0	ՀՀ կառավարության որոշում 14.08.03թ. N1009-Ն				
			-150000.0	ՀՀ կառավարության որոշում 28.08.03թ. N1070-Ն				
			-50000.0	ՀՀ ֆինանս. և էկոնոմ. նախ Ծանուցագիր 12.11.032թ. N4/-3-4/99-11086				
05 02 11	Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բուժօգնություն	2290659.5	-272370.0		-11.9%	2018289.5	1962509.9	1962453.3
			-37370.0	ՀՀ կառավարության որոշում 14.08.03թ. N1009-Ն				
			-150000.0	ՀՀ կառավարության որոշում 28.08.03թ. N1070-Ն				
			-35000.0	ՀՀ կառավարության որոշում 18.12.03թ. N1663-Ն				
			-50000.0	ՀՀ ֆինանս. և էկոնոմ. նախ Ծանուցագիր 12.11.032թ. N4/-3-4/99-11086				
05 02 12	Մինչև 7 տարեկան երեխաների բուժօգնություն	1143472.0	-130023.3		-11.4%	1013448.7	1002144.1	1002143.0
			-100000.0	ՀՀ կառավարության որոշում 28.08.03թ. N1070-Ն				
			-30023.3	ՀՀ ֆինանս. և էկոնոմ. նախ. Ծանուցագիր 12.11.032թ. N4/-3-4/99-1186				
05 02 13	Բժշկա-սոցիալական վերականգնման և աշխատունակության փորձաքննություն	30610.1	-512.0	ՀՀ կառավարության որոշում 04.12.03թ. N1568-Ն	-1.7%	30098.1	30098.0	30097.3
05 02 14	Հոգեբանական առողջության վերականգնման ծառայություններ	40296.0	-10238.2			30057.8	30057.8	30057.8
05 02 15	Առողջապահական օբյեկտների շինարարություն	140000.0				140000.0	139679.9	139679.9
05 03 01	15 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց առողջության առաջնային պահպանում	1955593.2	180000.0		9.2%	2135593.2	2113040.2	2094139.9

			110000.0	ՀՀ կառավարության որոշում 28.08.03թ. N1070-Ն				
			70000.0	ՀՀ կառավարության որոշում 18.12.03թ. N1663-Ն				
05 03 02	Մինչև 15 տարեկան երեխաների առողջության առաջնային պահպանում	1391008.6	30000.0		2.2%	1421008.6	1407994.1	1403841.1
			75000.0	ՀՀ կառավարության որոշում 28.08.03թ. N1070-Ն				
			-45000.0	ՀՀ կառավարության որոշում 18.12.03թ. N1663-Ն				
05 03 03	Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում	3020000.0	-622000.0		-20.6%	2398000.0	2398000.0	2397731.9
			200000.0	ՀՀ կառավարության որոշում 28.08.03թ. N1070-Ն				
			-822000.0	ՀՀ կառավարության որոշում 06.11.03թ. N1390				
05 03 04	Գիսպանսերային բուժօգնություն	371547.0	15000.0	ՀՀ կառավարության որոշում 18.12.03թ. N1663-Ն	4.0%	386547.0	386096.7	386085.6
05 03 05	Մանկաբարձագինեկոլոգիա կան բուժօգնություն	283150.0	-49007.5		-17.3%	234142.5	222155.0	222124.8
			-40000.0	ՀՀ կառավարության որոշում 18.12.03թ. N1663-Ն				
			-9007.0	ՀՀ ֆինանս. և էկոնոմ. նախ ճանուցագիր 12.11.032թ. N4/-3-4/99-11086				
05 04 01	Հիգիենիկ հակահամաճարա կային ծառայության պետական ոչ առևտրային կազմակերպու թյունների սուբսիդավորում	520044.5				520044.5	520044.5	520044.5

05 04 02	Հիգիենիկ հակահամաճարակային ծառայություն	64568.9				64568.9	64568.9	64568.9
05 05 01	Այլ պետական ոչ առևտրային կազմակերպությունների սուբսիդավորում	204962.8	36600.0	ՀՀ կառավարության որոշում 14.08.03թ. N1009-Ն	17.9%	241562.8	241562.8	241562.8
05 05 02	Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախս	15000.0				15000.0	13000.0	13000.0
05 05 03	Կենտրոնացված կարգով նորագույն բուժաբարավորումների և գործիքների ձեռքբերում	500000.0	11000.0	ՀՀ կառավարության որոշում 14.08.03թ. N1009-Ն	2.2%	511000.0	511000.0	506960.0
05 05 04	Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացում	40000.0				40000.0	39300.0	37815.0
05 05 05	Առողջապահական այլ ծառայություններ	201325.4				201325.4	201325.4	200495.7
05 05 06	«Առողջության առաջնային պահպանման համակարգ» ենթաձրագիր	177210.1	157155.2			334365.3	334365.3	293396.2
05 05 07	«Առողջապահության ֆինանսավորման համակարգ» ենթաձրագիր	253676.6	-6157.2			247519.4	247519.4	181841.7
05 05 08	Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման ծրագրի իրականացման գործակալական վարձատրություն	114934.4	84793.4			199727.8	199727.8	135424.5
05 05 09	«Սոցիալական և տնտեսական փոքրամասշտաբ ենթակառուցվածքի վերականգնում առողջապահական ոլորտում» ենթաձրագիր	42338.1				42338.1	42338.1	99873.0
<i>Ընդամենը</i>		21013963.7	-1122551.4			19891412.3	19749268.8	19598583.3

Տեղեկանքը հաստատվել է ՀՀ ԱԺ վերահսկիչ
պալատի խորհրդի 28.04.2004թ. նիստում և
ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ Սահմանադրական դատարան

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանին 2002 և 2003 թվականներին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին

Ուսումնասիրության հիմքը - Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի
14-րդ կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 16.03.2004թ. N 65 հրամանը:

Ուսումնասիրության օբյեկտը - ՀՀ Սահմանադրական դատարան:

Ուսումնասիրության նպատակը - ՀՀ Սահմանադրական դատարանին 2002 և 2003
թվականներին հատկացված միջոցների օգտագործման ուսումնասիրություն:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- ՀՀ 2002 և 2003 թվականների պետական բյուջե,
- ՀՀ կառավարության որոշումներ,
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներքին հոդվածային
վերաբաշխման ծանուցագրեր,
- ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի կարգադրություններ,
- ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հրամաններ,
- ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարություն, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառնական
դասակարգման, ներկայացված հաշվետվություններ, դրանք հիմնավորող և ուղեկցող
այլ փաստաթղթեր, նախահաշիվներ, տեղեկանքներ,
- հաշվապահական փաստաթղթեր:

2002 թվականին ՀՀ Սահմանադրական դատարանին (այսուհետ՝ ՍԴ) պետական բյուջեով
նախատեսվել է հատկացնել 158,697.0 հազ. դրամ՝ 03.03.01.¹ «Դատական իշխանության
պահպանում, ՀՀ Սահմանադրական դատարան» և 2,000.0 հազ. դրամ՝ 03.03.02. «Դատական
իշխանության մարմինների վարչական շենքերի հիմնանորոգում»:

2002 թվականի ընթացքում ՀՀ կառավարության 08.10.2002 թ. N580-Ա որոշումով ՍԴ-ին
լրացուցիչ հատկացվել է 3,900.0 հազ. դրամ 01.03.05.՝ «Արտասահմանյան
պատվիրակությունների ընդունելություն» ծրագրով: Ընդամենը 2002 թվականին ՍԴ-ին
նախատեսվել է հատկացնել 164,597.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորումը կազմել է
164,534.8 հազ.դրամ, թերակատարումը՝ 62.2 հազ. դրամ:

¹ 00.00.00 – բյուջետային ծախսերի դասակարգման կոդը՝ համապատասխանաբար խումբ, ենթախումբ, ծրագիր:

ՀՀ 2003 թվականի պետական բյուջեով ՄԳ-ի պահպանման ծախսերի համար նախատեսվել է 163,712.7 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2.05.2003թ. № 475-Ն որոշումով ՄԳ-ին պահուստային ֆոնդից հատկացվել է 1,828.1 հազ. դրամ՝ 14.06.01. ծրագրով, ՀՀ կառավարության 10.07.2003թ. № 834-Ն որոշումով հատկացվել է 23,158.0 հազ. դրամ («Աշխատավարձ» և «Պարտադիր սոց. ապահովագրության վճարներ» հոդվածներին) և 10.11.2003թ. № 1357-Ա որոշումով կառավարության պահուստային ֆոնդից 9,750.0 հազ. դրամ («Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր» հոդվածին):

Ընդամենը 2003 թվականին ՀՀ սահմանադրական դատարանի պահպանման համար նախատեսվել է 198,448.8 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորումը կազմել է 198,277.9 հազ. դրամ, թերակատարումը՝ 170.9 հազ. դրամ:

2002-2003թթ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ իրականացվել են ներքին վերաբաշխումներ, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ հավելված 1:

2002 և 2003թթ. ՄԳ-ի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցների և փաստացի ֆինանսավորման համեմատությունը, ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների (հավելված 2), ցույց է տվել, որ **«աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ»** հոդվածին 2002 թվականի համար ՄԳ -ի կողմից բյուջետային հայտ ներկայացնելիս 2001 թվականի համեմատ նախատեսվել է աշխատավարձի ֆոնդի ան՝ 10,637.3 հազ. դրամի կամ 15.3%-ի չափով (համապատասխանաբար՝ 69,675.2 հազ. դրամ և 80,312.5 հազ. դրամ), որը հետագայում ամրագրվել է «ՀՀ 2002թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով:

ՄԳ-ի աշխատակազմի ղեկավարը 20.05.2001թ. թիվ ՄԳ-Ֆ 30/05 գրությամբ՝ հղված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, մեկնաբանելով «ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը, հիմնավորել է աշխատավարձի ֆոնդի անը 15-րդ հոդվածի պահանջով՝ «ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմերի աշխատողների պաշտոնային դրույքաչափերը սահմանում են համապատասխանաբար ՀՀ Նախագահը, ՀՀ Ազգային ժողովի նախագահը, ՀՀ վարչապետը և ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը՝ ապահովելով նույնանման պաշտոնների միջև դրույքաչափերի համապատասխանությունը»:

2003 թվականին «ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի համաձայն (ուժի մեջ է մտել 2003 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել են նոր պաշտոնային դրույքաչափեր՝ ՄԳ-ի նախագահի և դատավորների համար: Ավելացել է նաև ՄԳ-ի աշխատակազմի աշխատակիցների

աշխատավարձի ֆոնդը՝ 6 ամսվա համար՝ 9,105.0 հազ. դրամով (ամսական 1,517.5 հազ. դրամ): 2003 թվականի ՄԳ-ի դատավորների և աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի ֆոնդի աճը ամրագրվել է ՀՀ կառավարության 10.07.2003թ. № 834-Ն որոշումով, լրացուցիչ հատկացումով՝ ընդամենը 20,866.4 հազ. դրամ:

Աշխատավարձի տարեկան ֆոնդը 2002 թվականի համար հաշվարկվել և հաստատվել է ՄԳ-ի դատավորների և աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակով նախատեսված ամսական աշխատավարձի ֆոնդից՝ կիրառելով 13.5 գործակից, իսկ 2003 թվականի համար՝ 14 գործակից: Արդյունքում, 2002 և 2003 թվականների ընթացքում կատարվել է աշխատավարձի ֆոնդի տնտեսում, որի հաշվին աշխատակազմի ղեկավարի հրամաններով պարգևատրումներ և հավելավճարներ են տրվել աշխատակազմի աշխատակիցներին, ինչպես նաև՝ ՄԳ-ի դատավորներին, որոնց աշխատավարձը կանոնակարգված է օրենքով: Բացի այդ, «Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ» հոդվածից, ուսումնական հաստատություններում սովորող աշխատակազմի աշխատակիցների ուսման վարձը վճարելու համար, վերջիններիս տրամադրվել է նյութական օգնություն, դրամական օգնություն է տրամադրվել նաև սոցիալական ծանր վիճակում գտնվող քաղաքացիներին:

Աշխատավարձի բարձրացմանը զուգընթաց ՄԳ-ին **պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների** համար 2002 և 2003 թվականներին նախատեսվել է համապատասխանաբար՝ 12,442.4 հազ. դրամ և 15,997.6 հազ. դրամ: 2003 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 28.4 %:

Ուսումնասիրվել են ՄԳ-ի և ֆիզիկական անձերի միջև կնքված աշխատանքային պայմանագրերը՝ վերջիններիս կողմից ծառայություններ մատուցելու համար: Առանձին պայմանագրերով նախատեսված գումարները վճարելիս չեն հաշվարկվել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները (աշխատանքային պայմանագրեր՝ 24.01.2002թ., 17.02.2002թ., 19.03.2002թ., 26.08.2002թ., 19.06.2003թ.):

Ապրանքների ձեռքբերման համար 2002թ. ՀՀ պետական բյուջեով ՄԳ-ին նախատեսվել է 9,435.5 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, ի պատասխան ՄԳ-ի 17.07.2002թ. թիվ ՄԳ-Ֆ 17/07 գրության, իր 29.07.2002թ. № 3/1-1/02-1052-7223 գրությամբ կատարել է ներքին հողվածային վերաբաշխում, ավելացնելով «Ապրանքների ձեռքբերում» հոդվածին 800.0 հազ. դրամ, այն պակասեցնելով «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածից: Ծճգրված բյուջեով ապրանքների ձեռքբերման համար 2002թ. ՄԳ-ին հատկացվել է 10,235.5 հազ. դրամ, իսկ 2003թ.՝ 8,749.0 հազ. դրամ:

Կատարվել է ընտրանքային ուսումնասիրություն՝ 2002-2003թթ ՄԳ-ի կողմից ապրանքների ձեռքբերման ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ: Արձանագրվել է՝

- 30.05.2002թ. թիվ 136 հաշիվ-ապրանքագրով ՄԳ-ը փոխանցել է «Կոնտակտ-Մամուլ» ՓԲԸ-ին 1,473.2 հազ. դրամ թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար:

Գործարքը չի իրականացվել պետական գնումների գործակալության միջոցով, խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը:

- 27.06.2002թ., 09.09.2002թ., 12.11.2002թ., 30.04.2003թ. և 10.12.2003թ. գնման ակտերով ձեռք են բերվել ապրանքներ, հուշանվերներ, գրքեր՝ 915.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Գործարքները կատարվել են՝ անտեսելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ չի հաշվարկվել եկամտահարկը՝ 10% դրույքաչափով:

Տրանսպորտի պահպանման ծախսեր: ՄԳ-ի հաշվեկշռում առկա ավտոմեքենաների շահագործումն իրականացնում է աշխատակազմի կառուցվածքում գործող ավտոտնտեսություն ստորաբաժանումը, ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի 11.03.1998թ. թիվ 2 և 27.04.2001թ. Հ. ՄԳ-Ն-42 կարգադրություններով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ծառայողական ավտոմեքենաների համար չեն լրացվում երթուղային թերթիկներ: Այդ պատճառով վառելիքի դուրսգրման համար հիմք է հանդիսանում ոչ թե ավտոմեքենայի կատարած փաստացի վազքը, այլ՝ տվյալ ավտոմեքենայի համար հատկացված բենզինի ամսական չափաբաժինը, իսկ ավտոմեքենաների շահագործման ընթացքում օգտագործման ոչ պիտանի անվադողերի դուրսգրման և նորերի ձեռքբերման անհրաժեշտությունը որոշվում է ավտոտնտեսության մասնագետների կողմից:

2002 թվականին ՄԳ-ին պետական բյուջեից հատկացված տրանսպորտի պահպանման ծախսերի ճշգրտված գումարը կազմել է 16,930.2 հազ. դրամ: ՄԳ-ի հաշվեկշռում առկա է 18 ավտոմեքենա, որոնցից 4-ը չեն շահագործվում: Փաստորեն, ՄԳ-ին յուրաքանչյուր ավտոմեքենայի պահպանման համար հատկացվել է 1,209.3 հազ. դրամ: Արդյունքում, գոյացել է ավտոմեքենաների պահպանման համար նախատեսված գումարի և վառելիքի ավելցուկ, որից 2002 թվականին տրանսպորտի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցներից 713.0 հազ. դրամ հատկացվել է տրանսպորտային միջոցների ձեռքբերմանը: Հատկացված վառելիքի քանակը լրիվ բավարարել է ՄԳ-ի կարիքները, ավելին՝ 840 լ բենզին օգնության կարգով տրամադրվել է այլ կազմակերպությունների:

2002 թվականի «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով հատկացված գումարի՝ 8,196.0 հազ. դրամի դիմաց, 2003 թվականին նախատեսվել է 11,750.0 հազ. դրամ կամ 43.4% աճ, որը պայմանավորված է 2002 թվականին ՄԳ-ի կողմից արտասահմանյան պատվիրակության ընդունելությամբ: Ընդունելության ծախսերը հոգալու նպատակով, ՀՀ Կառավարության 08.10.2002թ. N 580-Ա որոշումով լրացուցիչ հատկացվել է 3,900.0 հազ. դրամ՝ «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն» հոդվածով: 2003 թվականի բյուջետային նախահաշիվը կազմելիս, ՄԳ-ը նախատեսել է նույնպիսի ծախս 2003 թվականի համար՝ «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով: ՀՀ 2003թ. պետական բյուջեով ՄԳ-ին «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով հատկացվել է 13,000.0 հազ. դրամ: Գումարն ամբողջությամբ չի իրացվել, և ՄԳ-ը դիմել

է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ 1,250.0 հազ. դրամ այլ ծախսային հոդվածներին փոխանցելու:

Տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար ՄԳ-ին ՀՀ 2002 թվականի պետական բյուջեից հատկացվել է 9,000.0 հազ. դրամ: Այդ գումարը, համաձայն պետական կարիքների համար իրականացվող գնումների անվանացանկի («ՀՀ 2002թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելված 10), նախատեսվել է ՄԳ-ին՝ «Գազել» մակնիշի ավտոմեքենա գնելու նպատակով: Փաստացի գնվել է 3 հատ «Գազ-3110» մակնիշի ավտոմեքենաներ: Գործարքն իրականացնելու համար ՄԳ-ը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ, կատարել է ներքին հոդվածային վերաբաշխում՝ փոխանցելով 920.0 հազ. դրամ «տրանսպորտի պահպանման ծախսեր» հոդվածից՝ «տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր» հոդված:

ՀՀ ՄԳ-ին 2003թ. պետական բյուջեից տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար հատկացվել է 9,750.0 հազ. դրամ, ևս 9,750.0 հազ. դրամ հատկացվել է ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից՝ 10.11.2003թ. N 1357-Ա որոշումով, կամ ընդամենը ավտոմեքենաներ գնելու համար նախատեսվել է 19,500.0 հազ. դրամ:

Համաձայն ՄԳ-ի և «Կարկոմավտո» ՍՊԸ-ի միջև կնքված 22.07.2003թ. պայմանագրի, ՄԳ-ն գնել է «Mercedes-Benz-230» մակնիշի ավտոմեքենա՝ 3,440.4 հազ. դրամ արժեքով: Նշված ավտոմեքենայի ձեռքբերումն իրականացվել է, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ, մեկ աղբյուրից գնում կատարելու ձևով:

Համաձայն պետական գնումների գործակալության և ֆիզիկական անձի միջև կնքված պետական կարիքների համար ավտոմեքենայի մատակարարման 16.12.2003թ. Գ ԱՊԶԲ-03/12-1 գնման պայմանագրի, ֆիզիկական անձից գնվել է «Mercedes-140» մակնիշի ավտոմեքենա՝ 12,170.0 հազ. դրամով:

Կնքվել է պետական կարիքների համար ավտոմեքենայի մատակարարման 16.12.2003թ. NԳ ԱՊԶԲ-03/12-2 գնման պայմանագիր պետական գնումների գործակալության և «Կարկոմավտո» ՍՊԸ -ի միջև, ՄԳ -ին 3,845.0 հազ. դրամ արժեքով «Գազ-3110» մակնիշի ավտոմեքենա վաճառելու մասին: ՄԳ-ը, համաձայն 10/69 26.12.2003թ վճարման հանձնարարագրի, գումարը վճարել է «Կարկոմավտո» ՍՊԸ-ին, սակայն առ 25.03.2004թ. ավտոմեքենան չէր ստացել:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները 2002-2003թթ, հիմնականում պայմանավորված են ավտոմեքենաների օտարումով և ձեռքբերումով (հավելված 3): 2002-2003 թթ. օտարվել է 9 ավտոմեքենա՝ 7 «Գազ-31029» մակնիշի, 1 «Վազ-21065» և 1 «Honda Sonata», որոնց ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմել է 32,188.3 հազ. դրամ:

Համաձայն 20.12.2002թ. փոխանակման պայմանագրի, ՄԳ-ի աշխատակազմը՝ վճարելով 713.0 հազ. դրամ ավտոմեքենաների գների տարբերությունը, փոխանակել է «Վազ-21065» մակնիշի ավտոմեքենան «Կարկոմավտո» ՍՊԸ-ին պատկանող «Վազ-2121» ավտոմեքենայով: Գործարքը կատարվել է, անտեսելով ՀՀ Կառավարության 25.02.94թ. N 92 որոշումով

հաստատված՝ «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների օտարման կարգի» 3-րդ կետի պահանջը, ըստ որի՝ «պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցները վաճառվում են միայն աճուրդային եղանակով»:

Ի կատարումն ՄԳ-ի աշխատակազմի ղեկավարի 17.01.2003թ. թիվ 7 հրամանի ՄԳ -ը դիմել է ՀՀ Պետական գույքի կառավարման նախարարության «Աճուրդի կենտրոն»՝ ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով վաճառելու ՄԳ -ին պատկանող 1996թ. արտադրության 7 «Գազ-31029» մակնիշի և 1 «Honda Sonata» ավտոմեքենաները: Աճուրդը կայացել է երկու փուլով: Առաջին փուլով ավտոմեքենաները չեն վաճառվել: Երկրորդ՝ հոլանդական աճուրդով վաճառվել են 6 հատ «Գազ-31029» և «Honda Sonata» ավտոմեքենաներ 3,064.1 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Աճուրդների ընթացքում չվաճառված «Գազ-31029» ավտոմեքենան ՄԳ-ի աշխատակազմի ղեկավարի 13.03.2003թ. թիվ 20 հրամանի համաձայն, 210.0 հազ. դրամով վաճառվել է ֆիզիկական անձի, ինչը «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների օտարման կարգի» 3-րդ կետի խախտում է: Ավտոմեքենաների օտարումից առաջացած հասույթը՝ 3,274.1 հազ. դրամ փոխանցվել է պետական բյուջե:

2002թ. ՄԳ-ը չի կատարել հիմնական միջոցների և այլ նյութական արժեքների գույքագրում, իսկ 2003 թվականին աշխատակազմի ղեկավարի 10.11.2003թ. թիվ 152 հրամանով ստեղծվել է գույքագրման հանձնաժողով, սակայն գույքագրումն առ ուսումնասիրության պահը չէր ամփոփվել, ինչը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ. N 102 հրամանի պահանջի խախտում է:

հավելված 1
հազ.դրամ

<i>Տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները</i>	2002թ. Բյուջե	<i>Փոփոխություններ ՀՀ Կառավարության որոշումներով(+ -)</i>	<i>Ներքին հոդվածային փոփոխություններ(+ -)</i>	<i>Ծշտված բյուջե</i>
1	2	3	4	5
Աշխատավարձ	80,312.5	-	-	80,312.5
Պարտադիր սոց. ապահովագրության վճարներ	12,442.4	-	-	12,442.4
Ապրանքների ձեռքբերման ծախսեր	9,435.5	-	+800.0	10,235.5
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	6,840.0	-	-	6,840.0
Տրանսպորտի պահպանման ծախսեր	17,850.2	-	-920.0	16,930.2
Կապի ծառայությունների վճարներ	6,445.6	-	-500.0	5,945.6
Կոմունալ ծառայությունների վճարներ	7,374.8	-	+500.0	7,874.8
Ներկայացուցչական ծախսեր	8,996.0	-	-800.0	8,196.0
Այլ ծախսեր	-	+3,900.0	-	3,900.0
Տրանսպորտային միջոցների ձեռքբերում	9,000.0	-	+920.0	9,920.0
Կապիտալ նորոգում	2,000.0	-	-	2,000.0
Ընդամենը	160,697.0	+3,900.0	-	164,597.0

հազ. դրամ

<i>Տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները</i>	2003 թ. Բյուջե	<i>Փոփոխություններ ՀՀ Կառավարության որոշումներով(+ -)</i>	<i>Ներքին հոդվածային փոփոխություններ(+ -)</i>	<i>Ծշտված բյուջե</i>
1	2	3	4	5
Աշխատավարձ	80,312.5	+21,343.1	-	101,655.6
Պարտադիր սոց. ապահովագրության վճարներ	12,490.5	+3,487.1	-	15,977.6
Ապրանքների ձեռքբերման ծախսեր	8,749.0	-	-	8,749.0
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	7,840.0	-	-	7,840.0
Տրանսպորտի պահպանման ծախսեր	17,850.2	+156.4	+350.0	18,356.6

Կապի ծառայությունների վճարներ	6,120.0	-	+900.0	7,020.0
Կոմունալ ծառայությունների վճարներ	7,600.0	-	-	7,600.0
Ներկայացուցչական ծախսեր	13,000.0	-	-1,250.0	11,750.0
Տրանսպորտային միջոցների ձեռքբերում	9,750.0	+9,750.0	-	19,500.0
Ընդամենը	163,712.2	+34,736.6	-	198,448.8

հավելված 2
հազ. դրամ

<i>Տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները</i>	<i>Ճշտված բյուջե</i>			<i>Փաստացի ֆինանսավորում</i>		
	<i>2002 թ.</i>	<i>2003 թ.</i>	<i>2003 թ. հանած 2002 (%)</i>	<i>2002 թ.</i>	<i>2003 թ.</i>	<i>2003 թ. հանած 2002 (%)</i>
1	2	3	4	5	6	7
Աշխատավարձ	80,312.5	101,655.6	126.6	80,310.0	101,654.7	126.6
Պարտադիր սոց. ապահովագրության վճարներ	12,442.4	15,977.6	128.4	12,440.0	15,977.5	128.4
Ապրանքների ձեռքբերման ծախսեր	10,235.5	8,749.0	85.5	10,230.0	8,749.0	85.5
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	6,840.0	7,840.0	114.6	6,840.0	7,840.0	114.6
Տրանսպորտի պահպանման ծախսեր	16,930.2	18,356.6	108.4	16,920.0	18,356.3	108.5
Կապի ծառայությունների վճարներ	5,945.6	7,020.0	118.1	5,940.0	6,850.4	115.3
Կոմունալ ծառայությունների վճարներ	7,874.8	7,600.0	96.5	7,874.8	7,600.0	96.5
Ներկայացուցչական ծախսեր	8,196.0	11,750.0	143.4	8,190.0	11,750.0	143.5
Այլ ծախսեր	3,900.0	-	-	3,900.0	-	-
Տրանսպորտային միջոցների ձեռքբերում	9,920.0	19,500.0	196.6	9,920.0	19,500.0	196.6
Կապիտալ նորոգում	2,000.0	-	-	1,970.0	-	-
Ընդամենը	164,597.0	198,448.8	120.6	164,534.8	198,277.9	120.5

<i>Ցուցանիշներ</i>	<i>2002թ.</i>			<i>2003թ.</i>		
	<i>տարեսկիզբ</i>	<i>տարեվերջ</i>	<i>փոփոխություն (+;-)</i>	<i>տարեսկիզբ</i>	<i>տարեվերջ</i>	<i>փոփոխություն (+;-)</i>
1	2	3	4	5	6	7
Շենքեր	58,454.8	58,454.8	-	58,454.8	58,454.8	-
Մեքենաներ և սարքավորումներ	53,812.6	54,712.6	+900.0	54,712.6	55,492.5	+779.9
Տրանսպորտային միջոցներ	58,745.6	76,408.2	+17,662.6	76,408.2	64,315.3	-12,092.9
Գործիքներ, արտադրական և տնտեսական գույք	56,661.8	58,072.9	+1,411.1	58,072.9	58,101.4	+28.5
Գրադարանային ֆոնդ	826.5	851.5	+25.0	851.5	911.5	+60.0
Ընդամենը	228,501.3	248,500.0	+19,998.7	248,500.0	237,275.5	-11,224.5

Հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի
խորհրդի 16.06.2004թ. նիստում և ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն
և Ավանի թաղապետարան:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ավան թաղային համայնքի բյուջեի ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման մասին

Վերահսկողության հիմքը – Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 19.1-րդ կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 6.04.2004թ N 77 հրամանը:

Վերահսկողության նպատակը – Ավան թաղային համայնքի 2003 թվականի բյուջեի ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման ուսումնասիրություն:

Վերահսկողության օբյեկտը - Ավան թաղապետարան:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- Ավան թաղային համայնքի ավագանու նիստերի արձանագրություններ, բյուջեի կատարման հաշվետվություն և այլ փաստաթղթեր,
- Ավան թաղային համայնքի բյուջեն սպասարկող N3 գանձապետական բաժանմունքի 2003 թվականի համայնքի բյուջեի կատարման հաշվետվություն,
- Խորհրդային տարածքային հարկային տեսչության տեղեկանքներ և այլ փաստաթղթեր:

Ավան թաղային համայնքի 2003 թվականի բյուջեն հաստատվել է ավագանու հունվարի 24-ի թիվ 1 որոշմամբ, իսկ «Ավան համայնքի 2003-2005 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը» հաստատվել է ապրիլի 25-ի ավագանու թիվ 13 որոշմամբ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ և 54-րդ հոդվածների, ինչպես նաև «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի՝ համայնքի բյուջեն կազմվում է համայնքի եռամյա զարգացման ծրագրի հիման վրա և նպատակաուղղվում է այդ ծրագրի իրականացմանը: Սակայն, համայնքի ավագանին, անտեսելով վերը նշված օրենքների պահանջները, 2003-2005 թվականների եռամյա զարգացման ծրագիրը հաստատել է 2003 թվականի բյուջեի ընդունումից երեք ամիս հետո:

Վարչական բյուջեի եկամուտները և ծախսերը նախատեսվել են 283,312.5 հազ. դրամ, ֆոնդային բյուջեն՝ 21,500.0 հազ. դրամ:

Ավագանու ղեկավարների 12-ի թիվ 68 որոշումով՝ կատարած վերջին փոփոխության արդյունքում, վարչական բյուջեի ճշտված եկամուտները և ծախսերը հաստատվել են 332,043.5 հազ. դրամ, ֆոնդային բյուջեն՝ 42,800.0 հազ. դրամ, որից հատկացումներ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից՝ 30,800.0 դրամ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, համայնքին պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվել է 140,731.3 հազ. դրամ դոտացիա, որը հատկացվել է ամբողջությամբ և կազմել վարչական բյուջեի նախատեսված եկամուտների 49.7%-ը:

Վարչական բյուջեի 23,4%-ը կամ 66,252.5 հազ. դրամը կազմել են հարկային եկամուտները, այդ թվում՝ գույքահարկ՝ 60,252.5 հազ. դրամ, հողի հարկ՝ 6,000.0 հազ. դրամ: Տեղական տուրքերը նախատեսվել են 17,450.0 հազ. դրամ, ոչ հարկային եկամուտները՝ 58,220.0 հազ. դրամ: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 658.7 հազ. դրամ:

Ավագանու 03.12.2002թ. թիվ 50 որոշմամբ սահմանվել են 2003 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը, որոնք չեն համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթներին: Այսպես, ավագանու որոշման համաձայն՝ «համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների, շենքերի, շինությունների (ներառյալ՝ ժամանակավոր) շինարարության (շինարարական մոնտաժային աշխատանքներ) սկսելու թույլտվության համար» տեղական տուրք սահմանվել է հիմնական օբյեկտների համար՝

- մինչև 20 քառ.մ՝ 50.0 հազ. դրամ

- 20 քառ. մ և ավելի՝ 100.0 հազ. դրամ», խախտելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը: Համաձայն օրենքի՝ հիմնական օբյեկտների համար պետք է սահմանվեր մեկ միասնական դրույքաչափ:

Խախտելով օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետը ավագանին համայնքի տարածքում գտնվող «օբյեկտները վերակառուցելու, ամրացնելու, արդիականացնելու, վերականգնելու, օբյեկտների արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ կատարելու թույլտվության համար» տեղական տուրքի դրույքաչափը սահմանել է՝ տարանջատելով այն մինչև 20 քառ. մ և 20 քառ. մ-ից ավելի օբյեկտների համար: Ավելին՝ ավագանին սահմանել է տեղական տուրք՝ «հողային աշխատանքներ կատարելու համար թույլտվություն»՝ 20.0 հազար դրամ դրույքաչափով, որը նախատեսված չէ օրենքով:

Խախտվել է օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, որտեղ համայնքի տարածքում «ոգելից խմիչքի և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար» սահմանված դրույքաչափը տարանջատված է ծխախոտի և խմիչքի վաճառքի համար: Բացի այդ, տուրքը բաժանված է մինչև 50 քառ. մ և 50 քառ.մ-ից ավելի տարածք ունեցող օբյեկտների համար, որը նախատեսված չէ օրենքով:

Տարանջատվել են օրենքով սահմանված դրույքաչափերը, խախտվել է օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերի պահանջները և օրենքով սահմանված միևնույն տեսակի գործունեություն իրականացնող վճարողների համար սահմանվել են տարբեր դրույքաչափեր, մինչդեռ համաձայն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր»:

Համայնքի բյուջեի ձևավորման ընթացքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին վերը նշված անհամապատասխանությունները կարող էին տեղի չունենալ, եթե

կատարվեր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերության պահանջը՝ «Տեղական իննակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, դրանք ընդունելուց հետո սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն», սակայն 2003 թվականին համայնքի ավագանու ընդունած տեղական տուրքերի և վճարների տեսակների և դրույքաչափերի վերաբերյալ որոշումը ՀՀ արդարադատության նախարարությունում փորձաքննություն չի անցել:

Համաձայն «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, պետական բյուջեից համայնքի բյուջե «ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման հիմքում դրվում են «Հողի հարկի մասին» և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով հաշվարկված համայնքի բյուջե 2001 թվականի վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան ցուցանիշները (առանց հողի հարկի և գույքահարկի գծով 2001 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև 2001 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների):

Համաձայն ՀՀ պետական եկամուտների նախարարության 04.09.02թ. N 3538/2-3 գրության, ուղղված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, համայնքի 2001 թվականի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 12,193.2 հազ. դրամ և 79,811.0 հազ. դրամ:

Ի լրումն վերը նշված գրության, 09.12.2002թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության N 4971/2-3 գրությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել համայնքի իրավաբանական անձանց 2001 թվականի գույքահարկի հաշվարկային ցուցանիշներում տեղի ունեցած փոփոխությունը, համաձայն որի ներկայացված 20,039.9 հազ. դրամը վերահաշվարկվել և կազմել է 7,039.8 հազ. դրամ, որը հիմնականում պայմանավորված է «Արմենիան տելեֆոն կոմպանի» Հ/Չ ՓԲԸ-ի 2001 թվականի համար հաշվարկված գույքահարկի տարեկան գումարը՝ 13,000.0 հազ. դրամը, Քանաքեռ-Զեյթուն համայնքի փոխարեն Ավան համայնքին վերագրելուն: Փոփոխության արդյունքում համայնքի 2001 թվականի գույքահարկի հաշվարկային ցուցանիշը նվազել և կազմել է 66,810.9 հազ. դրամ: Սակայն, թաղապետարանի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն, համայնքի բյուջեի հարկային եկամուտները պլանավորվել են խորհրդային տարածքային հարկային տեսչությունից (այսուհետ՝ ՏՀՏ) ստացված տեղեկատվության հիման վրա, ըստ որի 2001 թվականի համար հողի հարկի և գույքահարկի ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 6,104.6 հազ. դրամ և 51,513.5 հազ. դրամ, կամ շեղումը հողի հարկից՝ 6,088.6 հազ. դրամ, գույքահարկից՝ 15,297.4 հազ. դրամ:

Հետագայում համայնքի 2002 թվականի նախատեսված հողի հարկը կազմել է 6,104.6 հազ. դրամ, գույքահարկը՝ 51,513.5 հազ. դրամ, իսկ 2003 թվականին հողի հարկը նախատեսվել է 6,000.0 հազ. դրամ, գույքահարկը՝ 60,252.5 հազ. դրամ: Ընդ որում, 2003 թվականի գույքահարկի պլանային

ցուցանիշը կազմվել է հաշվարկային ցուցանիշին ավելացնելով նախորդ տարիների ապառքների միայն 20%-ը՝ գումարային 8,800.0 հազ. դրամ, խախտելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետը՝ «համայնքի բյուջեի նախագիծը պետք է ներառի նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային և կանխատեսվող տարվա համապատասխան ցուցանիշները»:

Համայնքի հողի հարկի բազայում չի ներառվել «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ա) կետով սահմանված հողի հարկը՝ «արդյունաբերության (ներառյալ՝ հանքավայրերը և արտադրական գործունեությունից խախտված տարածքները), տրանսպորտի, կապի, ռադիո-հեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակներով օգտագործվող, գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանցման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ հետևյալ չափերով՝

- բնակավայրի ներսում՝ 1 տոկոս.
- բնակավայրից դուրս՝ 0.5 տոկոս.»:

Փաստորեն, հողի հարկի և գույքահարկի բազաներում տեղ գտած անճշտությունները, բացթողումները և ոչ հավաստի տվյալներն ազդել են ՀՀ պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի հաշվարկային չափին:

Վարչական բյուջեի ճշտված ծախսերը թերակատարվել են 39,345.5 հազ. դրամով կամ 11.8%-ով, կազմելով 292,698.0 հազ. դրամ: Ծախսերի 48.1%-ը պետական բյուջեից հատկացված դոտացիան է:

Վարչական բյուջեի ծախսերն ուղղվել են՝

ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ՝ 64,798.4 հազ. դրամ կամ 22.1%, կրթություն՝ 71,224.8 հազ. դրամ կամ 24.3%, սոցիալական ապահովագրության վճարներ՝ 8,209.7 հազ. դրամ կամ 2.8%, մշակույթ, սպորտ և կրոն՝ 14,631.2 հազ. դրամ կամ 5.0%, բնակկոմունալ տնտեսություն՝ 63,507.0 հազ. դրամ կամ 21.7%, համայնքի բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններին չդասվող ծախսեր՝ 66,138.3 հազ. դրամ կամ 22.6% (այդ թվում՝ նախորդ տարվա ընթացքում գոյացած պարտքի մարում՝ 31,308.3 հազ. դրամ, պահուստային ֆոնդ՝ 34,048.5 հազ. դրամ և այլ ծախսեր՝ 781.5 հազ. դրամ), պաշտպանությանը, հասարակական կարգի պահպանությանը՝ 800.0 հազ. դրամ կամ 0.3%, տնտեսական այլ ծախսեր՝ 3,388.6 հազ. դրամ կամ 1.2%:

Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարները կազմել են 72,778.7 հազ. դրամ կամ նախատեսվածի 95.1%-ը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումները կազմել են 24,023.2 հազ. դրամ կամ 97.2%-ը:

Համայնքի ճշտված ֆոնդային բյուջեից նախատեսված 42,800.0 հազ. դրամի ծախսերը փաստացի կազմել են 38,335.6 հազ. դրամ, որից 25,541.4 հազ. դրամը հատկացվել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից:

Երևանի քաղաքապետարանի 11.09.2003թ. N 01/31-1018 գրության հիման վրա, խախտելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջը՝ «Պահուստային ֆոնդերը կարող են օգտագործվել միայն համայնքի ավագանու որոշմամբ», թաղապետի կարգադրությամբ, 1,500.0 հազ. դրամ պահուստային ֆոնդից փոխանցվել է քաղաքապետարանի «Երևան հիմնադրամին»՝ «Էրեբունի-Երևան» տոնակատարության անցկացման համար:

Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման ծախսերը կազմել են 163,753.5 հազ. դրամ: Թերակատարունը կազմել է 15.2% կամ 29,292.1 հազ. դրամ, որը հիմնականում պայմանավորված է «կոմունալ ծառայությունների վճարման» (վառելիք և ջեռուցում, էլեկտրաէներգիա, ջրմուղ-կոյուղու օգտագործման վարձի ծախսեր) հոդվածի պարտքերով և համայնքի պահուստի ձևավորման ծախսերի (կապիտալ շինարարություն, կապիտալ վերանորոգում) թերակատարումով:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության «Գնումների պաշտոնական տեղեկագրում» հրապարակվել է թաղապետարանի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման 11 մրցույթ, ընդամենը՝ 74,900.0 հազ. դրամի, որը կազմել է նախատեսված ծախսերի՝ 193,045.6 հազ. դրամի, 37.8%-ը: Կայացած հինգ մրցույթների (ծածկագրեր՝ ԱՊՁԲ-1, ԱՊՁԲ-3, ԱՊՁԲ-4, ԱՇՁԲ-1 և ԱՇՁԲ-3) արդյունքում թաղապետարանի ստանձնած վճարման ենթակա պարտավորությունները կազմել են 31,200.0 հազ. դրամ, փաստացի վճարվել է 31,000.0 հազ. դրամ:

Ասֆալտապատում մրցույթի ԱՇՁԲ-1 ծածկագրով հաղթող մասնակցի գնային առաջարկը կազմել է 8,995.0 հազ. դրամ՝ «Գնումների պաշտոնական տեղեկագրում» հրապարակված պայմանագրային նախահաշվային 9,000.0 հազ. դրամի դիմաց: Ներկայացված հայտերում պահպանված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները՝ գնումներին մասնակցելու իրավունքի փաստաթղթային հիմնավորումը և մասնակիցների որակավորման չափանիշները: Տեխնիկական բնութագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի խախտումով՝ ամբողջությամբ չի նկարագրում գնվող աշխատանքը: Լրացուցիչ 2,873.8 հազ. դրամի աշխատանքները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումով՝ գերազանցվել է լրացուցիչ գնում կատարելու 20%-ի սահմանային չափը:

«Գույքի և կահույքի մատակարարման» ԱՊՁԲ-1 ծածկագրով մրցույթի նախահաշվային զինը կազմել է 2,000.0 հազ. դրամ: Ներկայացված հայտերում չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները: Պայմանագիրը կնքվել է նախահաշվային գնով, որը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջին՝ «պետության և համայնքների կարիքների համար տնտեսապես շահավետ պայմաններով գնումների կատարումը»:

Ավագանու 05.05.2003թ. թիվ 24 որոշմամբ բյուջեում կատարվել է փոփոխություն և 6,000.0 հազ. դրամ հատկացվել է ֆոնդային բյուջե՝ «Բնակֆոնդի նորոգում» հողվածին, տանիքների ընթացիկ վերանորոգման համար: Ավագանին կայացրել է մեկ աղբյուրից գնում կատարելու մասին որոշում, մեկնաբանելով՝ «աշխատանքների հրատապության պատճառով հնարավոր չէր կիրառել աշխատանքի գնման մրցութային եղանակը»: Կնքվել է 2 պայմանագիր՝ 07.05.2003թ.՝ 3825 ք.մ. մակերեսով, ընդամենը՝ 1,800.0 հազ. դրամի և 01.10.2003թ. 6520 ք.մ. մակերեսով, ընդամենը՝ 3,064.4 հազ. դրամի: Ըստ 07.05.2003 թվականի կնքված պայմանագրի, աշխատանքներն ավարտվել են 31.08.2003 թվականի կատարված աշխատանքների ընդունման ակտով, խախտելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 17.01.2001թ. N 17 հրամանը՝ «Մեկ աղբյուրից գումարներ կատարելու ձևով ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռքբերելու պատվիրատուի որոշումը լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու կարգի՝ մեկ աղբյուրից գումարներն իրականացնելու համար կնքվելիք պայմանագրով նախատեսվելիք ապրանքները, աշխատանքները կամ ծառայությունները պետք է ողջ ծավալով ձեռքբերվեն սույն կարգի իմաստով սահմանված՝ գումարներ կատարելու պահանջի ծագման օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում»:

Ավագանու 25.04.2003թ. թիվ 22 որոշմամբ թույլատրվել է՝ մրցույթը չկայանալու պատճառով, մտուր-մանկապարտեզների կաթնամթերքի, սանմաքրման, հեղեղումների դեմ պաշտպանական միջոցառումների, կոշտ աղբի տեղափոխման, կանաչապատման և բենզինի գնումները (ընդամենը 40,800.0 հազ. դրամի) կատարել մեկ աղբյուրից: Մեկ աղբյուրից գնման ձևի ընտրությամբ ձեռքբերված աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գնման պայմանագրերը կնքվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջների խախտումով:

Ուսումնասիրության վերջնական արդյունքներին Ավանի թաղապետարանի ղեկավարությունը ծանոթացել է 2004 թվականի հունիսի 14-ին, առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2003 թվականի ճշտված վարչական բյուջեի եկամուտները և ծախսերը կազմել են 332,043.5 հազ. դրամ, ֆոնդային բյուջեն՝ 42,800.0 հազ. դրամ:
2. 2003 թվականին համայնքի ավագանու սահմանած տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը չեն համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին:
3. Համայնքի բյուջեի հողի հարկի և գույքահարկի բազաներում առկա անճշտությունները, բացթողումները և ոչ հավաստի տվյալները ազդել են համայնքի բյուջեի ձևավորման, ինչպես նաև համայնքին պետական բյուջեից տրամադրվող դոտացիայի հաշվարկային ցուցանիշներին:

4. Վարչական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 292,698.0 հազ. դրամ, թերակատարումը՝ 11.8% կամ 39,345.5 հազ. դրամ:
5. Առանձին դեպքերում կատարված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների ու ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 17.01.2001թ. N 17 հրամանի խախտումներով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավանի քաղաքատարանին՝

- տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը համապատասխանեցնել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին,
- ճշտել բյուջեի ձևավորման և համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հիմք հանդիսացող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշները,
- համայնքի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումներն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքին և գնումները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
- մեկամսյա ժամկետում վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

Հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի
խորհրդի 28.04.2004թ. նիստում և ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն
և Շենգավիթի թաղապետարան:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի Շենգավիթ թաղային համայնքի բյուջեի ձևավորման ՀՀ օրենքների համապատասխանության և բյուջետային միջոցների օգտագործման մասին

Վերահսկողության հիմքը – Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 19.1-րդ կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 18.02.2004թ. N 60 հրամանը:

Վերահսկողության նպատակը – Շենգավիթ թաղային համայնքի 2003 թվականի բյուջեի ձևավորման ՀՀ օրենքներին համապատասխանության և բյուջետային միջոցների օգտագործման ուսումնասիրություն:

Վերահսկողության օբյեկտը - Շենգավիթի թաղապետարան:

Ուսումնասիրությունը կատարվել է՝

- Շենգավիթ թաղային համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների, բյուջեի կատարման հաշվետվության և այլ փաստաթղթերի հիման վրա:
- Շենգավիթ թաղային համայնքի բյուջեն սպասարկող Էրեբունու գանձապետական N4 բաժանմունքի 2003 թվականի համայնքի բյուջեի կատարման հաշվետվության հիման վրա:
- Շահումյան և Շենգավիթ տարածքային հարկային տեսչությունների տեղեկանքների և այլ փաստաթղթերի հիման վրա:

Շենգավիթ թաղային համայնքի (այսուհետ՝ համայնք) 2003 թվականի բյուջեն հաստատվել է ավագանու փետրվարի 5-ի N 2 որոշումով: Վարչական բյուջեի եկամուտները և ծախսերը նախատեսվել են 841,250.8 հազ. դրամ, ֆոնդային բյուջեն՝ 60,500.0 հազ. դրամ, որից հատկացումները պահուստային ֆոնդից՝ 44,920.2 հազ. դրամ: Ավագանու 2003թ. հոկտեմբերի 30-ի N 105 որոշումով կատարած փոփոխության արդյունքում վարչական բյուջեի եկամուտները և ծախսերը հաստատվել են 832,599.3 հազ. դրամ, ֆոնդային բյուջեն՝ 90,500.0 հազ. դրամ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, համայնքին պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվել է 256,142.8 հազ. դրամ դոտացիա, որը կազմել է վարչական բյուջեի 30.8%-ը: Վարչական բյուջեի 59.6%-ը կամ 496,453.2 հազ. դրամը կազմել են հարկային եկամուտները, այդ թվում՝ գույքահարկ՝ 354,040.0 հազ. դրամ, հողի հարկ՝ 142,413.2 հազ. դրամ: Տեղական տուրքերից մուտքերը նախատեսվել են 20,460.0 հազ. դրամ, ոչ հարկային եկամուտները՝ 59,543.3 հազ. դրամ:

Պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրված համահարթեցման դոտացիան հատկացվել է ամբողջությամբ: Գույքահարկից մուտքերը փաստացի կատարվել են 166,646.5 հազ. դրամով, թերակատարումը՝ 52.9%, հողի հարկից՝ 36,001.3 հազ. դրամով, թերակատարումը՝ 74.7%, տեղական տուրքերից՝ 13,807.0 հազ. դրամով, թերակատարումը՝ 32.5%, ոչ հարկային եկամուտներից՝ 58,663.9 հազ. դրամով, թերակատարումը՝ 1.5%: Համաձայն գանձապետական հաշվետվության, ոչ հարկային եկամուտներում առկա է «տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա ձեռնարկությունների տրամադրության տակ մնացած շահույթներից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումներ»՝ 651.0 հազ. դրամի փաստացի և 771.0 հազ. դրամի նախատեսված, որի վերաբերյալ ավագանին որոշում չի կայացրել:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով համայնքի բյուջեին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիայի հաշվարկներում օգտագործվել են «Հողի հարկի մասին» և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով հաշվարկված՝ համայնքի բյուջե 2001 թվականին վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան ցուցանիշները (առանց հողի հարկի և գույքահարկի գծով 2001 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև՝ 2001 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների):

Համաձայն ՀՀ պետական եկամուտների նախարարության ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը հղված 04.09.02թ. N 3538/2-3 գրության, Շենգավիթ թաղային համայնքի 2001 թվականի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 109,451.1 հազ. դրամ և 291,440.0 հազ. դրամ: Սակայն համայնքը սպասարկող Շենգավիթի և Շահումյանի տարածքային հարկային տեսչությունների կողմից Երևանի քաղաքապետարանին ներկայացված գույքահարկի նույն ցուցանիշը կազմել է 272,388.4 հազ. դրամ: Շեղումը (19,051.6 հազ. դրամ) առաջացել է իրավաբանական անձանց գույքահարկի հաշվարկային ցուցանիշներում առկա տարբերությունից: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2003 թվականի N 192-Ն որոշմամբ Շենգավիթ թաղային համայնքին հանձնված ֆիզիկական անձանց շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի բազայի ընտրանքային ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են բազմաթիվ անճշտություններ և անհամապատասխանություններ, որոնք անդրադարձել են գույքահարկի, հետևաբար՝ համահարթեցման դոտացիայի հաշվարկային ցուցանիշներին:

- Հարկման բազայում առկա են սեփականատերեր համարվող 474 ֆիզիկական անձինք (գույքահարկի վճարման ենթակա գումարը՝ 32,939,1 հազ. դրամ), որոնց գույքահարկով հարկվող օբյեկտները՝ համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի, գտնվում է համայնքի վարչական սահմանից դուրս, հետևաբար, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետի բ) ենթակետի, չեն հանդիսանում տվյալ համայնքի հարկատուներ:

- Փոխադրամիջոցների գույքահարկի բազայից ընտրված 20 և ավելի տարիների վաղեմության ժամկետ ունեցող բեռնատար 8 ավտոմեքենաներից մեկի համար, համապատասխան «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի, գույքահարկը չի հաշվարկվել, իսկ 7 ավտոմեքենաների համար 2001 թվականին գույքահարկի վճարման գումարը կազմել է 216.6 հազ. դրամ: Ընդ որում, վճարման ենթակա գույքահարկի հաշվարկը շարունակվել է հետագա տարիներին, կազմելով 2003 թվականի դրությամբ 1,803.5 հազ. դրամ, աճելով 8,3 անգամ:
- Բազայում առկա են գույքահարկ վճարողների 1165 կրկնություններ: Մասնավորապես՝ 41 հարկ վճարողների հաշվի համարների կրկնության հետևանքով գույքահարկի հաշվարկային գումարը աճել է 1,256.4 հազ. դրամով:
- Բազայում առկա են 1,210.5 հազ. դրամի գույքահարկի վճարման ենթակա 46 փոխադրամիջոցներ, որոնք 2003 թվականին խոտանվել են ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ՊԱՏ ծառայության կողմից:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, «հարկային և տեղական ինքնակառավարման մարմինները գույքահարկի գծով պարտավորությունների հաշվարկման, գույքահարկի գումարների գանձման և վճարումների հաշվառման նպատակով միմյանց ներկայացնում են անհրաժեշտ տեղեկություններ»: Համապատասխան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության «Համայնքների 2003 թվականի բյուջեների կազմման «Ուղեցույցի», համայնքի 2003 թվականի բյուջեի նախագծի կազմման, ձևավորման և ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի հաշվարկման համար թաղապետարանի 18.01.2002թ. N 42, 19.11.2002թ. N 1870 և 1871, 27.11.2002թ. N 1909 գրությունները՝ Շենգավիթի և Շահումյանի տարածքային հարկային տեսչություններից գույքահարկի և հողի հարկի հաշվարկային ցուցանիշները ստանալու նպատակով մնացել են անպատասխան: Արդյունքում 2003 թվականի հարկային եկամուտների ցուցանիշը նախատեսվել է՝ հիմք ընդունելով 2001 թվականի հարկային տեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Թաղապետարանն ամբողջությամբ չի տիրապետում համայնքի վարչական սահմանում գտնվող իրավաբանական անձանց գույքահարկի հաշվարկային բազան, որը 2001 թվականին կազմել է 129,968.8 հազ. դրամ, 2002 թվականին՝ 107,985.3 հազ. դրամ, իսկ 2003 թվականին միայն 15 խոշոր հարկատուների գույքահարկի հաշվարկային ցուցանիշը՝ 120,736.7 հազ. դրամ: Փաստորեն ավագանին չի իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ կետը՝ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից համայնքի խնդիրներին վերաբերող և օրենքով սահմանված գաղտնի տեղեկություններ չպարունակող փաստաթղթեր ստանալու վերաբերյալ իր իրավասությունը:

Հողի հարկի բազան ամբողջական չէ: Չի հաշվարկվել և չի ներառվել համայնքների վարչական տարածքների հողամասերով անցկացված կապի (այդ թվում՝ հեռախոսագծերի), գազատար խողովակաշարերի, բարձր լարման էլեկտրական, ռադիոհեռարձակման և

հեռուստատեսության, ջրօգտագործման և այլ գծերի, այդ նպատակների իրականացման համար նշված հողամասերով անցնող կառույցների հողի սեփականատերերի, մշտական հողօգտագործողների հողի հարկը, հակասելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 5-րդ հոդվածներին:

Համայնքի վարչական բյուջեի եկամուտների կատարումը 63.8%-ով հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների փաստացի մուտքերի թերակատարումով (եկամուտների թերակատարման պատճառ է հանդիսացել նաև տեղական տուրքերից մուտքերի ցածր կատարողականը): Այսպես, համայնքի վարչական բյուջեն թերակատարվել է 301,337.8 հազ. դրամով, որից՝ 293,804.5 հազ. դրամը հարկային եկամուտների փաստացի մուտքերից թերակատարումն է: «ՁԷԿ» ՓԲԸ-ի ընդհանուր պարտքը առ 01.01.2004թ. կազմել է 92,926.8 հազ. դրամ: Համաձայն ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003-2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրերի ու 2003-2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 06.11.2003թ. N 1694-Ն որոշման 6-րդ կետի՝ շահագրգիռ նախարարություններին հանձնարարված է մեկամսյա ժամկետում համապատասխան համայնքների ղեկավարների հետ քննարկել ընկերությունների (այդ թվում՝ Շենգավիթում՝ Երևանի ջերմային էլեկտրակայան ՓԲԸ-ի) համայնքի բյուջեի նկատմամբ գույքահարկի և հողի հարկի գծով մինչև 2003 թվականի հոկտեմբերի 1-ը հաշվարկված և չվճարված պարտավորությունների՝ մայր գումարների վճարման ժամկետը՝ սկսած 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը վերաձևակերպելու և տույժերից ու տուգանքներից ազատելու հարցը: ՀՀ կառավարության որոշումը չի հստակեցնում գույքահարկի և հողի հարկի ցուցանիշների ներառումը համայնքի բյուջե, ինչպես նաև դրանց առկայությունը համայնքին տրամադրվող համահարթեցման դոտացիայի հաշվարկման բանաձևում:

Համայնքի վարչական բյուջեի փաստացի ծախսերը թերակատարվել են 36.4%-ով, կազմելով 529,747.4 հազ. դրամ, ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 44,347.2 հազ. դրամ: Կապիտալի գործառնություններից փաստացի մուտքերը կազմել են 45,744.5 հազ. դրամ (առանց ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի՝ 579.8 հազ. դրամ): Ֆոնդային բյուջեում 46,324.3 հազ. դրամի առկայության պայմաններում՝ լրացուցիչ 1,500.0 հազ. դրամ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ավագանու որոշումով հատկացվել է ֆոնդային բյուջե: Փաստորեն համայնքի վարչական բյուջեի ծախսերի 48.5%-ը կազմել է պետական բյուջեից հատկացված դոտացիան:

Վարչական բյուջեից ծախսերը իրականացվել են հետևյալ ուղղություններով՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ՝ 14.4% կամ 76,479.0 հազ. դրամ, կրթություն և գիտություն՝ 38.4% կամ 203,649.0 հազ. դրամ, մշակույթ, սպորտ և կրոն՝ 12.3% կամ 65,298.5 հազ. դրամ, բնակարանային կոմունալ տնտեսություն՝ 13.2% կամ 70,095.1 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 21.7% կամ 114,225.8 հազ. դրամ՝ (այդ թվում՝ նախորդ տարիների ընդացքում գոյացած պարտքի

մարում՝ 16,207.5 հազ. դրամ, պահուստային ֆոնդ՝ 41,098.1 հազ. դրամ, պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսեր՝ 6,824.8 հազ. դրամ, այլ՝ 50,095.4 հազ. դրամ):

Տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները տարեկան բյուջեով նախատեսվել են 239,374.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 175,274.7 հազ. դրամ: Համապատասխանաբար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումները՝ 115,956.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 90,628.3 հազ. դրամ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, ավագանու որոշմամբ բարձրացվել է համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատավարձը, սակայն եկամուտների թերակատարման պատճառով բարձրացված դրույքաչափերով աշխատավարձ չի հաշվարկվել և չի վճարվել: Նախատեսված և չվճարված աշխատավարձի, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության ժամկետանց պարտավորություններ չի արձանագրվել, սակայն չվճարված աշխատավարձի չափով ավագանու կողմից բյուջեում ճշտում չի կատարվել, խախտելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի ա) կետը:

Համայնքի կարիքների համար՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան հայտարարված և կայացած 26 մրցույթների և 35 մեկ աղբյուրից գնումների արդյունքում, թաղապետարանը ընթացիկ ֆինանսական տարում ստանձնել է վճարման ենթակա համապատասխանաբար 206,245.9 հազ. դրամի և 57,146.2 հազ. դրամի պարտավորություններ:

Ընդհանուր 61 գնումներից 30-ը իրականացվել է ամբողջությամբ: Ստանձնած պայմանագրային պարտավորությունների դիմաց փաստացի ծախսերը կազմել են 161,563.2 հազ. դրամ, կրեդիտորական պարտքերը (առ 01.01.2004թ.)՝ 2,905.7 հազ. դրամ: Կնքված պայմանագրերի դիմաց գնումներ չի կատարվել 98,923.3 հազ. դրամի, այդ թվում՝ ԱՇՁԲ-5 (ռոռզման և խորքային պոմպերի վերանորոգում), ԱՇՁԲ-8 (ապօրինի շինությունների ապամոնտաժում, քանդում), ԱՇՁԲ-4/1 (ապօրինի շինությունների քանդում), ԾՁԲ-19/1 (դեռատիզացիոն ծառայություններ) ծրագրերով ստանձնած պարտավորությունների դիմաց գնումներ ընդհանրապես չեն եղել: Բյուջեի եկամուտների թերակատարման պատճառով առանձին աշխատանքներ կատարվել են մասնակի: Օրինակ, արտաքին լուսավորության համակարգի վերանորոգման ԱՇՁԲ-6 ծրագրով թաղապետարանը ստանձնել է վճարման ենթակա 3,900.0 հազ. դրամ պայմագրային պարտավորություն, փաստացի կատարողականը կազմել է 800.5 հազ. դրամ, ռոռզման խողովակաշարի կառուցում ԱՇՁԲ-7 ծրագրով՝ 7,812.0 հազ. դրամ, փաստացի իրականացվել է 1,186.2 հազ. դրամի աշխատանքներ, ամանորյա տոնաձառի տեղադրում ԱՇՁԲ-10 ծրագրով՝ 1,450.0 հազ. դրամ, փաստացին՝ 875.2 հազ. դրամ, ճանապարհների ընթացիկ նորոգում ԱՇՁԲ-7 ծրագրով՝ 25,321.0 հազ. դրամ, փաստացին՝ 12,616.3 հազ. դրամ, նախադպրոցական հիմնարկների կոյուղազծերի կառուցում ԱՇՁԲ-11 ծրագրով՝ 8,302.0 հազ. դրամ, փաստացին՝ 3,200.0 հազ. դրամ, նախադպրոցական հիմնարկների տանիքների նորոգում ԱՇՁԲ-12 ծրագրով՝ 9,376.9 հազ. դրամ, փաստացին՝ 3,467.9 հազ. դրամ,

բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում ԱՇՁԲ-16 ծրագրով՝ 65,694.8 հազ. դրամ, փաստացին՝ 21,862.2 հազ. դրամ:

Թաղապետարանի աշխատակազմի և նրան ենթակա հիմնարկների աշխատողների ներքաղաքային ուղևորությունների վճարումները՝ 1,439.9 հազ. դրամ ձևակերպվել են բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ 2650-գործուղումներ և ծառայողական ուղևորություններ հանրապետության ներսում հողվածով, չունենալով համապատասխան փաստաթղթային հիմնավորումներ: Փաստաթղթերով չեն հիմնավորվել նաև համայնքի բյուջեից 26,746.6 հազ. դրամի փաստացի ծախսը և համապատասխանաբար՝ Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի (բացառությամբ՝ գյուղատնտեսական նշանակության և ժամանակավոր օբյեկտների տակ եղած հողերի) վարձակալությունից ստացվող վարձավճարներից եկամուտները, որոնք ավագանու 05.02.2003թ. N 2 որոշումով (հիմք՝ Երևանի խորհրդի 20.01.2003թ. N 1/1 և 15.12.2003թ. N 15/1 որոշումները) ամրագրվել են Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը, անտեսելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետը: Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի 2-րդ ենթակետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի՝ համայնքի բյուջեն ձևավորվում է համայնքի սեփականություն հանդիսացող, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներից: Հողի վարձակալական վճարների գանձումն իրականացրել է քաղաքապետարանը, որի վերաբերյալ (համաձայն Երևանի խորհրդի 05.02.2003թ. N 4/1 որոշման 7-րդ կետի) թաղապետարանին տրվել է տեղեկատվություն: Փաստորեն անտեսվել է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների, պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարների մուտքագրումը համայնքի բյուջե ինքնուրույն ապահովում են համայնքների համապատասխան ստորաբաժանումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության վերջնական արդյունքներին Շենգավիթ թաղապետարանի ղեկավարությունը ծանոթացել է 2004 թվականի ապրիլի 22-ին, առարկություններ և դիտողություններ չունեն, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

1. Համայնքի 2003 թվականի վարչական բյուջեի փաստացի եկամուտներից մուտքերը կատարվել են 531,261.5 հազ. դրամով, թերակատարումը 301,337.8 հազ. դրամով կամ 36.2%-ով:
2. Գույքահարկից մուտքերը կատարվել են 166,646.5 հազ. դրամով, թերակատարումը՝ 52.9%, հողի հարկից՝ 36,001.3 հազ. դրամով, թերակատարումը՝ 74.7%, տեղական

տուրքերից՝ 13,807.0 հազ. դրամով, թերակատարումը՝ 32.5%, ոչ հարկային եկամուտներից՝ 58,663.9 հազ. դրամով, թերակատարումը՝ 1.5%:

3. Համայնքի բյուջեի հարկային եկամուտների բազայում արձանագրվել են անճշտություններ և անհամապատասխանություններ, որոնք անդրադարձել են գույքահարկի և համապատասխանաբար՝ համահարթեցման դոտացիայի, հաշվարկային ցուցանիշների վրա:
4. Վարչական բյուջեի փաստացի ծախսերը թերակատարվել են 302,851.9 հազ. դրամով կամ 65.4%-ով, կազմելով 529,747.4 հազ. դրամ, որի 48.5%-ը՝ պետական բյուջեից հատկացված դոտացիան է: Ծախսերի թերակատարումն առանձին ծրագրերով պայմանավորված է բյուջեի եկամուտների չհիմնավորված կանխատեսումներով, նախատեսված և փաստացի ծախսերի անհամապատասխանություններով:
5. Համայնքի կարիքների համար հայտարարած և կայացած 26 մրցույթների և 35 մեկ աղբյուրից գնումների արդյունքում թաղապետարանը ընթացիկ ֆինանսական տարում ստանձնել է վճարման ենթակա 263,392.1 հազ. դրամի պարտավորություններ:
6. Առանձին դեպքերում չեն պահպանվել կատարված գնումների տեխնիկական բնութագրերը:
7. Չեն հիմնավորվել «Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով համայնքի բյուջեի եկամուտ հանդիսացող հողի վարձակալական վճարներից նախատեսված 30,000.0 հազ. դրամի մուտքերը և փաստացի 26,746.6 հազ. դրամի ծախսերը, որոնք ամրագրվել են Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանը.

Հաշվի առնելով պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի չափի հաշվարկման բանաձևում օգտագործվող հարկային եկամուտների հաշվարկային ցուցանիշներում առկա անճշտությունները և անհամապատասխանությունները՝

- կանոնակարգել տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնած ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքահարկի բազայում հաշվառողի (տեղական ինքնակառավարման մարմին) կողմից ճշտումներ, ուղղումներ կատարելու իրավասությունը,
- համահարթեցման դոտացիայի հաշվարկման բանաձևում հիմք ընդունել տեղական ինքնակառավարման և հարկային մարմինների կողմից փոխհամաձայնեցված գույքահարկի հաշվարկային ցուցանիշները:

2. Շենգավիթի թաղապետարանին.

- պատասխանատու ստորաբաժանումների միջոցով ճշտել հարկային եկամուտների բազան և արդյունքները համաձայնեցնել անշարժ գույքի կադաստրի, հարկային և ոստիկանության պետական ավտոտեսչության համապատասխան տարածքային մարմինների հետ,
 - համայնքի բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի կատարման համար ապահովել անհրաժեշտ գումարների և առաջարկվող հատկացումների համապատասխանությունը,
 - հիմնավորել համայնքի վարչական սահմանում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալական վճարներից համայնքի բյուջեի եկամուտները և ծախսերը, համապատասխանեցնելով «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ, 57-րդ, 67-րդ հոդվածներին:
3. «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածին համապատասխան՝ մեկամսյա ժամկետում, Վերահսկիչ պալատ ներկայացնել պաշտոնական տեղեկատվություն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում վերահսկողության ընթացքում բացահայտված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչպալատի խորհրդի 28.07.2004թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ կառավարություն և Քանաքեռ-Զեյթունի
քաղապետարան:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քանաքեռ-Զեյթուն քաղային համայնքի բյուջեի ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման մասին

Վերահսկողության հիմքը - Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 19.1-րդ կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 17.06.2004թ. N 90 հրամանը:

Վերահսկողության նպատակը - Քանաքեռ-Զեյթուն քաղային համայնքի բյուջեի ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման ուսումնասիրություն:

Վերահսկողության օբյեկտը - Քանաքեռ-Զեյթուն քաղապետարան:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- Քանաքեռ-Զեյթուն քաղային համայնքի ավագանու նիստերի արձանագրություններ, բյուջեի կատարման հաշվետվություն և այլ փաստաթղթեր,
- Քանաքեռ-Զեյթուն քաղային համայնքի բյուջեն սպասարկող N3 գանձապետական բաժանմունքի 2003 թվականի համայնքի բյուջեի կատարման հաշվետվություն,
- Քանաքեռ-Զեյթուն տարածքային հարկային տեսչության տեղեկանքներ և այլ փաստաթղթեր:

Քանաքեռ-Զեյթուն քաղային համայնքի 2003թվականի բյուջեն հաստատվել է ավագանու հունվարի 15-ի թիվ 32 որոշումով: Վարչական բյուջեի եկամուտները և ծախսերը նախատեսվել են 557,899.5 հազ. դրամ, ֆոնդային բյուջեն՝ 69,387.8 հազ. դրամ, որից հատկացումները պահուստային ֆոնդից՝ 52,387.8 հազ. դրամ:

Ավագանու 16.04.2003թ. թիվ 61 և 13.06.2003թ. թիվ 81 որոշումներով համայնքի բյուջեում կատարվել են փոփոխություններ: Ավագանու 30.10.2003թ. թիվ 210 որոշումով՝ վերջին կատարած փոփոխության արդյունքում վարչական բյուջեի ճշտված եկամուտները և ծախսերը հաստատվել են 573,057.6 հազ. դրամ, ֆոնդային բյուջեն՝ 56,514.3 հազ. դրամ, որից հատկացումներ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից՝ 39,514.3 հազ. դրամ:

Համայնքի բյուջեի 2003 թվականի ձևավորման ՀՀ օրենքներին համապատասխանության ուսումնասիրությունից պարզվել է, որ ավագանու 15.01.03թ. N 32 որոշմամբ սահմանվել են տեղական տուրքեր և վճարներ, որոնց առանձին տեսակներ չեն համապատասխանում

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին: Այսպես, ավագանու որոշմամբ հաստատված՝ «Համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների՝ շենքերի, շինությունների (ներառյալ՝ ժամանակավոր) շինարարության (շինարարական մոնտաժային աշխատանքներ) սկսելու թույլտվության համար» սահմանվել է տեղական տուրք՝ տարանջատելով թույլտվությունները՝ ըստ շինարարության չափերի, խախտելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը, համաձայն որի՝ համայնքի տարածքում նոր կառուցվող հիմնական օբյեկտների շինարարության համար, անկախ զբաղեցրած մակերեսից, սահմանվում է մեկ դրույքաչափ:

Տեղական տուրքերի տեսակների անհամապատասխանությունը «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին անդրադարձել է համայնքի բյուջեի ձևավորմանը՝ խախտվել է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ «Համայնքների բյուջեների ձևավորման սկզբունքների» գ) կետը՝ «հավաստիությունը և հստակությունը, որը հնարավորություն է ընձեռում ապահովել բյուջեի կատարման և բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հոդվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով»:

Անտեսվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը, այն է՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը դրանց ընդունելուց հետո սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, պետական իրավական փորձաքննության համար ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն»: 2003 թվականին համայնքի ավագանու ընդունած տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ որոշումը ՀՀ արդարադատության նախարարություն փորձաքննության չի ուղարկվել:

Համայնքի ավագանու 18.03.2003թ. թիվ 50 և 16.04.2003թ. թիվ 72 որոշումներով, համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքի արտոնություն է տրվել 5 տնտեսավարող սուբյեկտի՝ 240.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Ավագանու 22.12.2003թ. N 286 որոշումով առաջին աստիճանի դատարանի նոր շենքի շինարարության թույլտվության համար սահմանվել է տեղական տուրքի արտոնություն՝ 80.0 հազ. դրամի: Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ «տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի արտոնություններ համայնքի ղեկավարի ներկայացմամբ կարող է սահմանել համայնքի ավագանին՝ տեղական տուրք կամ վճար վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարելով տեղական տուրքը կամ տեղական վճարը»:

Օրենքի 13-րդ հոդվածի նորմի կիրարկումը անորոշ է համայնքի բյուջեից վճարման և համայնքի բյուջե գանձման գործառույթի, ինչպես նաև արտոնության սահմանային չափի բացակայության պատճառով:

«Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համայնքին ֆինանսական համահարթեցման

սկզբունքով տրամադրվող դոտացիայի տարեկան չափը 303,291.1 հազ. դրամ է, որը հատկացվել է ամբողջությամբ և կազմել վարչական բյուջեի նախատեսված եկամուտների 54,4%-ը:

Վարչական բյուջեի 29,9%-ը կամ 166,592.2 հազ. դրամը կազմել են հարկային եկամուտները, այդ թվում՝ գույքահարկ՝ 136,583.9 հազ. դրամ, հողի հարկ՝ 30,008.3 հազ. դրամ: Տեղական տուրքերից մուտքերը նախատեսվել են 10,300.0 հազ. դրամ, ոչ հարկային եկամուտները՝ 51,865.2 հազ. դրամ, վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 7,489.7 հազ. դրամ:

Համաձայն «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, պետական բյուջեից համայնքի բյուջե «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման հիմքում դրվում են «Հողի հարկի մասին» և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով հաշվարկված համայնքի բյուջե 2001 թվականի վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան ցուցանիշները (առանց հողի հարկի և գույքահարկի գծով 2001 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև՝ 2001 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների):

Համաձայն Քանաքեռ-Զեյթուն տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ ՏՀՏ) 21.11.2002թ. N 01-07-1434 և ՀՀ պետական եկամուտների նախարարության 04.09.2002թ. N 3538/2-3 գրությունների, համայնքի 2001 թվականի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 22,596.6 հազ. դրամ և 100,071.0 հազ. դրամ:

Ի լրումն ՀՀ պետական եկամուտների նախարարության 04.09.2002թ. N 3538/2-3 գրության, 09.12.2002թ. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության N 4971/2-3 գրությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել համայնքի իրավաբանական անձանց գծով 2001 թվականի ելակետային ցուցանիշներում տեղի ունեցած փոփոխությունները, համաձայն որի ներկայացված գույքահարկի գծով 18,009.0 հազ. դրամը վերահաշվարկվել և կազմել է 33,587.2 հազ. դրամ, իսկ հողի հարկի գծով ներկայացված 6,687.0 հազ. դրամը՝ 10,721.0 հազ. դրամ: Փոփոխության արդյունքում համայնքի 2001 թվականի ընդամենը ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքահարկի և հողի հարկի հաշվարկային ցուցանիշները աճել են, կազմելով համապատասխանաբար՝ 115,649.2 հազ. դրամ և 26,630.6 հազ. դրամ: Սակայն 2003 թվականի բյուջեի կազմման հիմք հանդիսացող 2001 թվականի գույքահարկի և հողի հարկի հաշվարկային ցուցանիշները նախատեսվել են համապատասխանաբար՝ 91,910.0 հազ. դրամ և 22,272.0 հազ. դրամ կամ շեղումը գույքահարկից՝ 23,739.2 հազ. դրամ, հողի հարկից՝ 4,358.6 հազ. դրամ: Փաստորեն, 2003 թվականի համայնքի բյուջեի նախագիծը կազմելիս վերը նշված անհամապատասխանությունները ազդել են բյուջեի եկամուտների ձևավորմանը:

Հիմք ընդունելով Խորհրդայինի և Արաբկիրի ՏՀՏ-ների կողմից հարցման արդյունքում ստացված պատասխան գրությունները, 2002 թվականին գույքահարկը հաշվարկվել է 115,413.0 հազ. դրամ, իսկ հողի հարկը՝ 24,906.3 հազ. դրամ:

2003 թվականի բյուջեի գույքահարկի և հողի հարկի պլանավորման հիմք է հանդիսացել ՏՀՏ-ի 21.11.2002թ. N 01-07-1434 գրությամբ տրված տեղեկատվությունը, որի համաձայն

գույքահարկի հաշվարկային ցուցանիշը կազմել է 100,071.0 հազ. դրամ, հողի հարկինը՝ 22,596.6 հազ. դրամ: Թաղապետարանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն, վերը նշված ցուցանիշներում ամբողջությամբ ներառված չեն նախորդ տարիների ապառքները, հարկային եկամուտների ցուցանիշները նախատեսվել են որոշակի աճով, իսկ 2003 թվականի բյուջեում նախատեսվել են 2002 թվականի բյուջեի ճշտված ցուցանիշները, գույքահարկ՝ 136,583.9 հազ. դրամ, հողի հարկ՝ 30,008.3 հազ. դրամ: Սակայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի ա) ենթակետի պահանջն է՝ «համայնքի բյուջեի նախագիծն ըստ բաղկացուցիչ մասերի, ըստ եկամտատեսակների ու ծախսերի ուղղությունների՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգմանը համապատասխան՝ երեք տարվա կտրվածքով, այդ թվում՝ նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային և կանխատեսվող տարվա ցուցանիշով»: Օրենքի սույն կետը ուժը կորցրած է ճանաչվել 11.04.2003թ-ին ընդունված՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, և հետագա տարիներին այդ նորմի կարգավորիչ դերը կմնա բաց:

ՀՀ կառավարության 13.02.2003թ. N 192-Ն որոշման համաձայն, համայնքի ֆիզիկական անձանց գույքահարկի բազան 2003 թվականի հուլիսի 7-ին հանձնվել է թաղապետարանին և գանձումն իրականացվել է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից: Ընտրանքային ուսումնասիրության արդյունքում գույքահարկի բազայում արձանագրվել են բազմաթիվ անճշտություններ և անհամապատասխանություններ, որի մասին թաղապետարանի 28.11.2003թ. թիվ 31/01-Ել 620 գրությամբ տեղեկացվել է Երևանի քաղաքապետարան և ՏՀՏ:

Ֆիզիկական անձանց շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկների անճշտությունները հետևանք են՝

- այլ համայնքներում գտնվող, սակայն համայնքի գույքահարկի բազայում հաշվառված գույքի (168 շինության, ընդհանուր 406.4 հազ. դրամ ապառքով),
- գույքահարկի հաշվառման բազայում միևնույն փոխադրամիջոցը կրկնակի հաշվառման (31 ավտոմեքենա՝ 1,935.9 հազ. դրամ ընդհանուր ապառքով),
- այլ համայնքներում գրանցված, սակայն համայնքի գույքահարկի բազայում հաշվառված ավտոմեքենաների (160 փոխադրամիջոց՝ 4,407.7 հազ. դրամ գումարով),
- ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանության ՊԱՏ ծառայության կողմից մի շարք ավտոմեքենաներ նախորդ տարիներին հաշվառումից հանելու և այդ որոշման մասին թաղապետարանին չիրազեկելու (որի պատճառով այդ փոխադրամիջոցները մնացել են գույքահարկի հաշվառման բազայում):

1998 թվականին «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած օտարման հետևանքով 1476 ավտոմեքենաներ դուրս են եկել համայնքի բյուջեի հարկման դաշտից և դրանք հաշվառումից հանելու հետևանքով գույքահարկի բազայի գումարը առ 01.09.2003թ. պակասեցվել է 12,101.0 հազ. դրամով: Այդ ճշտումների արդյունքում 2001

թվականի փոխադրամիջոցներից գույքահարկի հաշվարկային ցուցանիշ նվազել է 8,473.8 հազ. դրամով:

Համայնքի բյուջեի հարկային եկամուտների բազայում առկա անճշտությունները և անհամապատասխանությունները ազդել են համայնքի բյուջեի ձևավորման, ինչպես նաև համայնքի պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի հաշվարկային ցուցանիշների վրա:

Վարչական բյուջեի տարեկան ճշտված պլանի՝ 550,057.6 հազ. դրամի ծախսերը թերակատարվել են 45,412.3 հազ. դրամով կամ 8,3 %-ով, կազմելով 504,645.3 հազ. դրամ:

Վարչական բյուջեի ծախսերի ուղղվածությունը և ըստ հոդվածների հարաբերակցությունը ներկայացված է աղյուսակում:

Վարչական բյուջեի ծախսերի ուղղվածությունը

Աղյուսակ

<i>Ծախսերն ըստ հոդվածների</i>	<i>Տարեկան ճշտված պլան</i>	<i>Փաստացի</i>	<i>Կատարման %</i>	<i>Կատարման %-ը վարչական բյուջեի փաստացի ծախսերի նկատմամբ</i>
Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ	139,257.30	133,550.90	95.9%	26.5%
Կրթություն	81,495.40	76,435.30	93.8%	15.1%
Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	9,671.50	9,595.30	99.2%	1.9%
Մշակույթ, սպորտ և կրոն	39,419.10	37,995.20	96.4%	7.5%
Բնակարանային կոմունալ տնտեսություն	105,631.40	97,801.40	92.6%	19.4%
Նախորդ տարիների ընթացքում գոյացած պարտքերի մարում	77,524.10	61,682.00	79.6%	12.2%
Պահուստային ֆոնդ	88,436.30	79,584.30	90.0%	15.8%
Այլ ծախսեր	7,622.50	7,500.90	98.4%	1.5%
Պաշտպանության բնագավառում օրենքով վերապահված լիազորությունների իրականացում	1,000.00	500.00	50.0%	0.1%

Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները կազմել են 130,681.1 հազ. դրամ կամ նախատեսվածի 98,6%, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները՝ 37,069.6 հազ. դրամ կամ նախատեսվածի 93,7%-ը:

Համայնքի ճշտված ֆոնդային բյուջեից նախատեսված 60,636.3 հազ. դրամի ծախսերը փաստացի կազմել են 56,618.0 հազ. դրամ, որից 35,992.6 հազ. դրամը հատկացվել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից:

Ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը կազմել են 287,769.3 հազ. դրամ: Թերակատարումը կազմել է 8,9% կամ 31,533.9 հազ. դրամ, որը հիմնականում պայամանավորված է 23,120.5 հազ. դրամ «կոմունալ ծառայությունների վճար», ինչպես նաև «ապրանքների ձեռք բերում» և «կապի ծառայությունների վճար» հոդվածների թերակատարումով:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է թաղապետարանի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման 11 մրցույթ, ընդամենը 116,691.0 հազ. դրամի, որը կազմել է նախատեսված ծախսերի՝ 567,057.6 հազ. դրամի, 20,6 %-ը և մեկ աղբյուրից գնման ութ պայմանագիր:

Կայացած ութ մրցույթների (ծածկագրեր՝ ԱՊՁԲ-1, ԱՊՁԲ-2, ԱՊՁԲ-3, ԱՊՁԲ-4, ԱՇՁԲ-1, ԱՇՁԲ-2, ԱՇՁԲ-3, ԱՇՁԲ-4) և մեկ աղբյուրից գնումների արդյունքում թաղապետարանի ստանձնած վճարման ենթակա պայմանագրային պարտավորությունները կազմել են՝ 123,220.3 հազ. դրամ, փաստացի կատարվել են 104,502.1 հազ. դրամի գնումներ, վճարվել է՝ 79,462.8 հազ. դրամ, կրեդիտորական պարտքերը (առ. 01.01.2004թ.)՝ 25,039.3 հազ. դրամ: Ստանձնած պարտավորություններից գնումներ չի կատարվել 18,718.3 հազ. դրամի, այդ թվում՝ թուղթ և գրենական պիտույքների մատակարարում՝ ԱՊՁԲ-3 ու գրասենյակային ապրանքների և նյութերի մատակարարման՝ ԱՊՁԲ-4 ծածկագրերով թաղապետարանը ստանձնել է վճարման ենթակա 6,714.0 հազ. դրամի պայմանագրային պարտավորություն, փաստացի կատարողականը կազմել է 2,526.3 հազ. դրամ: Համայնքի շենքերի հարթ տանիքների վերանորոգում ԱՇՁԲ-3 ծածկագրով՝ 16,940.0 հազ. դրամի և համայնքի շենքերի թեք տանիքների վերանորոգում ԱՇՁԲ-4 ծածկագրով՝ 3,864.4 հազ. դրամի թաղապետարանի ստանձնած պայմանագրային պարտավորությունների դիմաց, փաստացի կատարվել է համապատասխանաբար՝ 5,121.9 հազ. դրամի և 3,525.2 հազ. դրամի աշխատանք: Համայնքի բնակելի շենքերի մուտքերի մետաղական դռների բլոկների տեղադրում Մ/Ա ԱՇՁԲ-9 ծածկագրով՝ 2,367.0 հազ. դրամի ստանձնած պայմանագրային պարտավորությունների դիմաց գնումներ չի իրականացվել:

Առանձին դեպքերում իրականացված գնումների և կատարված ծախսերի հրատապությունը չի հիմնավորվել: Այսպես, համայնքի ավագանու 13.06.2003թ. թիվ 85 և 24.11.2003թ. թիվ 254 որոշումներով թաղապետարանին թույլատրվել է, որպես պատվիրատու, Քանաքեռի պոլիկլինիկայի հիմնանորոգման աշխատանքների և համայնքի բնակելի շենքերի մուտքերի երկաթյա դռների տեղադրման աշխատանքների գնումները կատարել մեկ աղբյուրից: 2003 թվականին վերը նշված աշխատանքները չեն իրականացվել, փաստորեն մեկ աղբյուրից գնման ձևի ընտրությունը հիմնավորված չէ:

Ապրանքների ձեռքբերման՝ 5,943.0 հազ. դրամի, տրանսպորտային ծախսերի՝ 2,482.1 հազ. դրամի, կոմունալ ծառայությունների գծով բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ՝ 25,183.2 հազ. դրամի, ծառայությունների ձեռքբերման ներկայացուցչական ծախսեր՝ 3,051.3 հազ.

դրամի և կապիտալ վերանորոգման ծախսեր՝ 4,439.5 հազ. դրամի գնումները կատարվել են ուղղակի պայմանագրերով՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

Ուսումնասիրության վերջնական արդյունքներին Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի ղեկավարությունը ծանոթացել է 2004 թվականի հուլիսի 21-ին, առարկություններ չունի, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Վարչական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 504,645.3 հազ. դրամ, թերակատարումը՝ 8,3%, կամ 45,412.3 հազ. դրամ: Ծախսերի 60,1%-ը պետական բյուջեից հատկացված դոտացիան է:
2. 2003 թվականին համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրքերի առանձին տեսակներ չեն համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին, խախտվել է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի գ) կետը:
3. Համայնքի բյուջեի հարկային եկամուտների բազայում առկա անճշտությունները և անհամապատասխանությունները ազդել են համայնքի բյուջեի ձևավորման, ինչպես նաև համայնքի պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի հաշվարկային ցուցանիշներին:
4. Առանձին դեպքերում իրականացված գնումների հրատապությունը չի հիմնավորվել:
5. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի նորմի կիրարկումը հնարավոր չէ և վերանայման կարիք ունի:
6. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի ա) ենթակետը ուժը կորցրած ճանաչելու արդյունքում, 2004 թվականից սկսած համայնքի բյուջեի նախագծում ամրագրված ցուցանիշները չեն հիմնավորվի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մտաջարկել ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանը՝

1. Վերանայել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:
2. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետում սահմանել համայնքի բյուջեի նախագծի կազմման կարգավորիչ նորմ:

Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանին՝

1. Տեղական տուրքերի տեսակները համապատասխանեցնել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

2. Համայնքի բյուջեի հարկային եկամուտների և համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի իրատեսական չափեր ապահովելու նպատակով, ճշտել գույքահարկի բազան և արդյունքները ՀՀ կառավարության 13.02.2003թ. թիվ 192-Ն որոշման համապատասխան համաձայնեցնել պետական կառավարման մարմինների հետ:
3. Համայնքի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումներն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
4. Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

Հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի
խորհրդի 28.04.2004թ. նիստում և ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն
և Նուբարաշենի թաղապետարան:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի Նուբարաշեն թաղային համայնքի բյուջեի ձևավորման ՀՀ օրենքներին համապատասխանության և բյուջետային միջոցների օգտագործման մասին

Վերահսկողության հիմքը – Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 19.1-րդ կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 13.02.2004թ N 58 հրամանը:

Վերահսկողության նպատակը – Նուբարաշեն թաղային համայնքի 2003 թվականի բյուջեի ձևավորման օրենքներին համապատասխանության և բյուջետային միջոցների օգտագործման ուսումնասիրություն:

Վերահսկողության օբյեկտը - Նուբարաշենի թաղապետարան:

Ուսումնասիրությունը կատարվել է՝

- Նուբարաշեն թաղային համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների, բյուջեի կատարման հաշվետվության և այլ փաստաթղթերի հիման վրա:
- Նուբարաշեն թաղային համայնքի բյուջեն սպասարկող Էրեբունու գանձապետական N4 բաժանմունքի 2003 թվականի համայնքի բյուջեի կատարման հաշվետվության հիման վրա:
- Շահումյանի և Էրեբունու տարածքային հարկային տեսչությունների տեղեկանքների և այլ փաստաթղթերի հիման վրա:

Նուբարաշեն թաղային համայնքի (այսուհետ՝ համայնք) 2003 թվականի բյուջեն հաստատվել է ավագանու հունվարի 25-ի N 17 որոշումով: Վարչական բյուջեի եկամուտները և ծախսերը նախատեսվել են 55,781.2 հազ. դրամ:

Ավագանու դեկտեմբերի 19-ի N 60 որոշումով կատարած փոփոխության արդյունքում վարչական բյուջեի եկամուտները և ծախսերը հաստատվել են 55,810.1 հազ. դրամ:

Պետական բյուջեից համայնքին հատկացվել է 28,818.8 հազ. դրամի պաշտոնական տրանսֆերտ, որից՝ 2,199.1 հազ. դրամը ՀՀ կառավարության 26.12.2002թ. N 2153-Ն որոշմամբ հատկացվել է Նուբարաշենի սոցիալական ծառայության տարածքային գործակալության աշխատակազմի պահպանման համար:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ համայնքին պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվել է 26,619.7 հազ. դրամ դոտացիա, որը կազմել է վարչական բյուջեի նախատեսված եկամուտների 47.7%-ը: Վարչական բյուջեի 24.6%-ը կամ 13,725.6 հազ. դրամը կազմել են հարկային եկամուտները, այդ թվում գույքահարկ՝ 11,602.4 հազ. դրամ, հողի հարկ՝ 2,132.2 հազ.

դրամ, տեղական տուրքերը՝ 1.2% կամ 665.0 հազ. դրամ, ոչ հարկային եկամուտները՝ 21.6% կամ 12,055.9 հազ. դրամ, այլ տրանսֆերտները՝ 3.9% կամ 2,199.1 հազ. դրամ: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 544.8 հազ. դրամ:

Պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրված համահարթեցման դոտացիան հատկացվել է ամբողջությամբ: Տեղական տուրքերից մուտքերը փաստացի կատարվել են 46.2%-ով՝ կազմելով 307.0 հազ. դրամ, ոչ հարկային եկամուտներից մուտքերը՝ 97.9%-ով, կազմելով 11,799.0 հազ. դրամ: Հողի հարկը գերակատարվել է 96.1%-ով՝ կազմելով 4,163.1 հազ. դրամ, այդ թվում՝ 660.9 հազ. դրամը նախորդ տարվա ապառքներից մուտքերն են, որը ներառված չի եղել 2003 թվականի բյուջեում, շրջանցելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի ա) ենթակետի պահանջը: Համաձայն Էրեբունու տարածքային հարկային տեսչության 24.01.03թ. N 06112-2254 գրության, համայնքի բյուջեի հողի հարկի ապառքը կազմել է 1,036.2 հազ. դրամ, գույքահարկինը՝ 15,083.4 հազ. դրամ: Ընդ որում, նախորդ տարվա արդյունքներով գույքահարկի կատարողականը՝ ըստ թաղապետարանի կազմել է 122.7%: Այս անհամապատասխանության պատճառ է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի անտեսումը՝ «հարկային և տեղական ինքնակառավարման մարմինները գույքահարկի գծով պարտավորությունների հաշվարկման, գույքահարկի գումարների գանձման և վճարումների հաշվառման նպատակով միմյանց ներկայացնում են անհրաժեշտ տեղեկություններ»: Ավելին, իրավաբանական անձանց գույքահարկը հաշվարկվել է 10,021.2 հազ. դրամ, սակայն Երևանի Էրեբունու թաղային համայնքի բյուջեի նկատմամբ «Հայռուսզագարդ» ՓԲԸ-ի պարտքը կազմել է 5,000.0 հազ. դրամ, որը Էրեբունու տարածքային հարկային տեսչության կողմից հաշվեգրվել է Նուբարաշեն համայնքի բյուջեին:

Համաձայն ՀՀ պետական եկամուտների նախարարության՝ ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությանը ուղղված 04.09.02թ. N 3538/2-3 գրության, Նուբարաշեն թաղային համայնքի 2001 թվականի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 3,133.4 հազ. դրամ և 10,707.2 հազ. դրամ: Սակայն համայնքը սպասարկող տարածքային հարկային տեսչությունների կողմից ներկայացված հողի հարկի և գույքահարկի նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 1,599.7 հազ. դրամ և 10,567.7 հազ. դրամ: Շեղումը՝ 1,533.7 հազ. դրամ և 139.5 հազ. դրամ: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2003 թվականի N 192-Ն որոշմամբ Նուբարաշեն թաղային համայնքին հանձնված ֆիզիկական անձանց գույքահարկի բազայի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են անճշտություններ, որոնք ազդել են համահարթեցման դոտացիայի չափին.

- Հարկման բազայում առկա են շինությունների գույքահարկ վճարողների կրկնություններ՝ նույն հասցեում գտնվող անհատական տան գույքահարկը նույն հարկատուի համար հաշվարկվել է երկու անգամ՝ կադաստրային գնահատման տարբեր արժեքներով:
- Բեռնատար 2 ավտոմեքենաների գույքահարկի հաշվարկը չի համապատասխանում «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ պարբերության

պահանջին՝ 3 տարուց ավելի վաղեմություն ունեցող ավտոմեքենաների գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարի չի պակասեցվել հարկի գումարի 10%-ի չափով: Ավելին, վճարման ենթակա գույքահարկի հաշվարկը շարունակվել է հետագա տարիներին, կազմելով 2003 թվականի դրությամբ 978.4 հազ. դրամ, աճելով 12.5 անգամ:

- Առանձին հասցեների ռեեստրի բացակայության հետևանքով հարկվող օբյեկտների հաշվառումն ամբողջական չէ:

Անճշտություններ կան նաև հողի հարկի բազայում: Այսպես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ը չի հանդիսանում հողի սեփականատեր, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական կամ ժամանակավոր օգտագործող և համայնքում վարձակալում է հողատարածք և չի հանդիսանում հարկատու: Սակայն, համաձայն Էրեբունու տարածքային հարկային տեսչության 28.12.2001թ. N 06/122402 գրության, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Նուբարաշենի մասնաճյուղը հայտնվել է հողի հարկի հարկատուների ցանկում՝ հաշվարկված 9.0 հազ. դրամ հողի հարկով:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ «ա) արդյունաբերության (ներառյալ՝ հանքավայրերը և արտադրական գործունեությունից խախտված տարածքները) տրանսպորտի, կապի, ռադիո-հեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակներով օգտագործվող, գազատար խողովակաշարերով զբաղեցրած հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանցման գոտիների՝ տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ հետևյալ չափերով՝ բնակավայրերի ներսում՝ 1 տոկոս, բնակավայրերից դուրս՝ 0.5 տոկոս»: Սակայն համայնքի տարածքով անցնող՝ բարձր ճնշման գազատարների, հեռախոսային մալուխների, բարձր լարման հոսանքազտերի, մագնիստրալ ջրատարների զբաղեցրած հողատարածքները պետական գրանցում չեն ստացել, որի արդյունքում հողի հարկ չի հաշվարկվել:

Փաստաթղթերով չեն հիմնավորվել համայնքի բյուջեից 4,583.0 հազ. դրամի փաստացի ծախսը և համապատասխանաբար՝ Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի (բացառությամբ՝ գյուղատնտեսական նշանակության և ժամանակավոր օբյեկտների տակ եղած հողերի) վարձակալությունից ստացվող վարձավճարներից եկամուտները, որոնք ավագանու 05.02.2003թ. N 2 որոշումով (հիմք՝ Երևանի խորհրդի 20.01.2003թ. N 1/1 և 15.12.2003թ. N 15/1 որոշումները) ամրագրվել են Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը, խախտելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետը: Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի 2-րդ ենթակետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի՝ համայնքի բյուջեն ձևավորվում է համայնքի սեփականություն հանդիսացող, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող

վարձավճարներից: Հողի վարձակալական վճարների գանձումն իրականացրել է քաղաքապետարանը, որի վերաբերյալ (համաձայն Երևանի խորհրդի 05.02.2003թ. N 4/1 որոշման 7-րդ կետի) թաղապետարանին տրվել է տեղեկատվություն: Փաստորեն անտեսվել է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների, պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարների մուտքագրումը համայնքի բյուջե ինքնուրույն ապահովում են համայնքների համապատասխան ստորաբաժանումները:

Համայնքի վարչական բյուջեի եկամուտները թերակատարվել են 315.3 հազ. դրամով: Տեղական տուրքերից մուտքերը թերակատարվել են 358.0 հազ. դրամով, ոչ հարկային եկամուտները՝ 256.9 հազ. դրամով, այդ թվում՝ համայնքի սեփականության գույքի վարձակալության վարձավճարներից մուտքերը՝ 240.0 հազ. դրամով:

Համայնքի վարչական բյուջեի փաստացի ծախսերը թերակատարվել են 667.6 հազ. դրամով, կազմելով 55,142.5 հազ. դրամ: Համայնքի վարչական բյուջեի ծախսերի 48.3%-ը կազմել է պետական բյուջեից հատկացված դոտացիան:

Վարչական բյուջեից ծախսերը իրականացվել են հետևյալ ուղղություններով՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ՝ 26.6% կամ 14,654.0 հազ. դրամ, կրթություն և գիտություն՝ 14.3% կամ 7,866.3 հազ. դրամ, մշակույթ, սպորտ և կրոն՝ 16.9% կամ 9,326.7 հազ. դրամ, բնակարանային կոմունալ տնտեսություն՝ 21.1% կամ 11,638.1 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 20.6% կամ 11,357.4 հազ. դրամ՝ (այդ թվում՝ նախորդ տարիների ընթացքում գոյացած պարտքի մարում՝ 812.8 հազ. դրամ, պահուստային ֆոնդ՝ 2,424.9 հազ. դրամ, պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսեր՝ 2,148.9 հազ. դրամ, այլ՝ 5,970.8 հազ. դրամ):

Տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները տարեկան բյուջեով նախատեսվել են 17,624.1 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 17,587.5 հազ. դրամ: Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումները՝ 5,243.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 5,238.5 հազ. դրամ: Վարչական եկամուտների թերակատարման պատճառով ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար նախատեսված ծախսերը՝ 32,942.5 հազ. դրամ, թերակատարվել է 626.0 հազ. դրամով՝ այդ թվում կոմունալ ծառայությունների դիմաց վճարումները:

Ընդ որում, ապրանքների, այդ թվում մանկապարտեզի սաների սննդամթերքի գնման նախատեսված ծախսերը՝ համապատասխանաբար 5,613.5 հազ. դրամ և 3,570.0 հազ. դրամ, ֆինանսավորվել են ամբողջությամբ:

Համայնքի կարիքների համար՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան հայտարարած և կայացած 3 մրցույթների արդյունքում, թաղապետարանը ընթացիկ ֆինանսական տարում ստանձնել է վճարման ենթակա 6,299.7 հազ. դրամի պարտավորություններ, որը պատվիրատուի կողմից ֆինանսավորվել է ամբողջությամբ: Սակայն կայացած մրցույթների և կնքված պայմանագրերի մասին թաղապետարանը ՀՀ ֆինանսների և

Էկոնոմիկայի նախարարությանը տեղեկատվություն չի ներկայացրել: Արդյունքում «Գնումների պաշտոնական տեղեկագրերում» տեղեկատվություն չի հրապարակվել, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գնումների հրապարակայնությունը: Ապրանքների գնման և ծառայությունների վճարման նախատեսված և փաստացի ծախսերի 19.5%-ը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան՝ մրցույթով: Մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով՝ հեռախոսային կապի, էլեկտրաէներգիայի և ջրնուղ-կոյուղու ծառայությունների գնումները իրականացվել են համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 08.01.2001թ. N 1 հրամանի: Սննդամթերքի, կանաչապատման, արտաքին լուսավորության, սեփական տրանսպորտի պահպանման, կոմունալ ծառայությունների գնումները կատարվել են ուղղակի պայմանագրերով՝ շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը: Էլեկտրաէներգիայի դրվածքային հզորությունների, կապի և սեփական տրանսպորտային ծախսերի հաշվարկները նորմատիվներով և գնահաշվարկներով չեն հիմնավորվել:

Խախտելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի պահանջները, համայնքի բյուջեում ֆոնդային մաս չի նախատեսվել, կապիտալ գործառույթներ չեն իրականացվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության վերջնական արդյունքներին Նուբարաշեն թաղապետարանի ղեկավարությունը ծանոթացել է 2004 թվականի մարտի 30-ին, առարկություններ և դիտողություններ չունեն, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

1. Համայնքի 2003 թվականի վարչական բյուջեի փաստացի եկամուտներից մուտքերը կատարվել են 55,494.8 հազ. դրամով, թերակատարումը 315.3 հազ. դրամով:
2. Գույքահարկից մուտքերը կատարվել են 9,882.1 հազ. դրամով, թերակատարումը՝ 14.8%, տեղական տուրքերից՝ 307.0 հազ. դրամով, թերակատարումը՝ 53.8%, ոչ հարկային եկամուտներից՝ 11,799.0 հազ. դրամով, թերակատարումը՝ 2.1%:
3. Համայնքի բյուջեում ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե) չի ձևավորվել, որի արդյունքում թաղապետարանի կողմից կապիտալ գործառույթների գծով ծախսեր չեն նախատեսվել և չեն իրականացվել:
4. Հողի հարկի և գույքահարկի բազաների անճշտությունները ազդել են համայնքի բյուջեի հարկային եկամուտների և համահարթեցման դոտացիայի հաշվարկային ցուցանիշների վրա:
5. Վարչական բյուջեի փաստացի ծախսերը կատարվել են 98.8%-ով, կազմելով 55,142.5 հազ. դրամ, որի 48.3%-ը՝ պետական բյուջեից հատկացված դոտացիան է:

6. Համայնքի կարիքների համար հայտարարված և կայացած 3 մրցույթների արդյունքում թաղապետարանը ընթացիկ ֆինանսական տարում ստանձնել է վճարման ենթակա 6,299.1 հազ. դրամի պարտավորություններ:
7. Չեն հիմնավորվել «Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով համայնքի բյուջեի եկամուտ հանդիսացող հողի վարձակալական վճարներից նախատեսված 5,000.0 հազ. դրամի մուտքերը և փաստացի 4,583.0 հազ. դրամի ծախսերը, որոնք ամրագրվել են 2003 թվականի Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանը.

- կանոնակարգել համայնքի վարչական տարածքով անցնող արտաքին ենթակառուցվածքների զբաղեցրած հողատարածքների պետական գրանցումը,
- համահարթեցման դոտացիայի հաշվարկման բանաձևում հիմք ընդունել տեղական ինքնակառավարման և հարկային մարմինների կողմից փոխհամաձայնեցված հարկային եկամուտների հաշվարկային ցուցանիշները:

2. Նուրբարաշենի թաղապետարանին.

- պատասխանատու ստորաբաժանումների միջոցով ճշտել հարկային եկամուտների բազան և արդյունքները համաձայնեցնել անշարժ գույքի կադաստի, հարկային և ոստիկանության պետական ավտոտեսչության համապատասխան տարածքային մարմինների հետ,
- համայնքի բյուջեի ձևավորումը համապատասխանեցնել «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ, 61-րդ հոդվածներին՝ ձևավորել ֆոնդային բյուջե,
- համայնքի բյուջեի ծախսային առանձին հոդվածների՝ էլեկտրաէներգիայի, կապի, սեփական տրանսպորտի պահպանման, հաշվարկները հիմնավորել նորմատիվներով և գնահաշվարկներով:

3. «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածին համապատասխան՝ մեկամսյա ժամկետում, Վերահսկիչ պալատ ներկայացնել պաշտոնական տեղեկատվություն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում վերահսկողության ընթացքում բացահայտված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Հաստատվել է ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի
խորհրդի 24.12.2004թ. նիստում և ուղարկվել է
ՀՀ Ազգային ժողով, ՀՀ կառավարություն
ու Վայոց ձորի մարզպետարան:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձոր մարզի համայնքների 2003 թվականի բյուջեների ձևավորման
համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման
վերաբերյալ

Վերահսկողության հիմքը – Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի
19.1 կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 12.10.2004 թվականի թիվ 117 հրամանը:

Վերահսկողության նպատակը – Վայոց ձոր մարզի համայնքների 2003 թվականի
բյուջեների ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին, տեղական
ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա և բյուջետային փոխհարաբերությունների
կողմ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների կողմից բյուջետային միջոցների օգտագործման
մասին:

Վերահսկողության օբյեկտը – Վայոց ձոր մարզի համայնքների բյուջեները:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- Մարզի համայնքների ավագանու նիստերի արձանագրություններ, բյուջեների
կատարման հաշվետվություններ և այլ փաստաթղթեր:
- Մարզի համայնքների բյուջեները սպասարկող գանձապետական բաժանմունքների
(այսուհետ՝ ՏԳԲ) 2003 թվականի համայնքների բյուջեների կատարման
հաշվետվություններ:
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական
ծառայության Վայքի և Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչությունների
(այսուհետ՝ ՏՀՏ), ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական
կոմիտեի Վայքի և Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանումների տեղեկանքներ,
այլ փաստաթղթեր:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է .

Համաձայն Վայոց ձոր մարզի (այսուհետ՝ մարզ) Վայքի, Եղեգնաձորի և Ջերմուկի ՏԳԲ-
ների կողմից ներկայացված քաղաքային երեք և գյուղական 41 համայնքների
հաշվետվությունների, 2003 թվականին մարզի համայնքների վարչական բյուջեների
եկամուտները և ծախսերը նախատեսվել են 478,917.0 հազ. դրամ, ֆոնդային բյուջեները՝ 93,687.5
հազ. դրամ, որից՝ 25,297.0 հազ. դրամը վարչական բյուջեների պահուստային ֆոնդից
հատկացումներն են: Բյուջեների ճշման արդյունքում վարչական և ֆոնդային բյուջեները կազմել

են համապատասխանաբար՝ 479,826. 9 և 100,150.3 հազ. դրամ, որից 30,959.8 հազ. դրամը՝ պահուստային ֆոնդից հատկացումներն են: Վարչական և ֆոնդային բյուջեների փաստացի ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 344,817.7 և 79,412.2 հազ. դրամ, կամ նախատվածի 72,0%-ը և 79,3%-ը:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, մարզի համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվել է 191,642.6 հազ. դրամ դոտացիա, որը հատկացվել է ամբողջությամբ:

ՀՀ կառավարության 10.04.2003թ. N374-Ա և 08.05.2003թ. N487-Ա որոշումներով մարզի Սերս և Ջերմուկ համայնքներին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին հատկացվել է համապատասխանաբար՝ 909.5 և 10,000.0 հազ. դրամ լրացուցիչ դոտացիա:

Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից մարզի համայնքների բյուջեներին հատկացվել է ընդամենը 202,552.1 հազ. դրամ դոտացիա, որը կազմել է վարչական բյուջեների փաստացի ծախսերի 58,7%-ը:

Համաձայն «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, պետական բյուջեից համայնքի բյուջե «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման հիմքում դրվել են «Հողի հարկի մասին» և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով հաշվարկված և համայնքի բյուջե 2001 թվականին վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան ցուցանիշները (առանց ապառքների, տույժերի և տուգանքների), ինչպես նաև համայնքների մշտական բնակչության թվաքանակը:

Համաձայն ՀՀ պետական եկամուտների նախարարության 04.09.2002.թ. N3538/2-3 գրության, ուղղված Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, մարզի համայնքների 2001 թվականի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 52,348.7 և 72,702.1 հազ. դրամ: Հետագայում ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը 16.12.2004թ. N5052/2-3 գրությամբ ներկայացրել է մարզի Բարձրունի, Խնձորուտ և Նոր-Ազնաբերդ համայնքների հողի հարկի վերահաշվարկված ցուցանիշները, հիմք ընդունելով «Հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ սահմանամերձ վերոնշյալ բնակավայրերի մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների մասով հողի հարկի արտոնությունները:

ՀՀ կառավարության՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին 13.02.2003թ. N192-Ն որոշմամբ մարզի համայնքներին տրամադրված ֆիզիկական անձանց գույքահարկի բազայի ընտրանքային ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են բազմաթիվ անճշտություններ, որոնք անդրադարձել են գույքահարկի, հետևաբար նաև՝ համահարթեցման դոտացիայի հաշվարկային ցուցանիշներին:

Եղեգնաձոր համայնքի հարկման բազայում առկա 319 փոխադրամիջոցներից 193-ը հանված են հաշվառումից, որից 147-ը հաշվառվել են այլ համայնքներում, սակայն համայնքի գույքահարկի բազայում մնացել է վճարման ենթակա 11,477.3 հազ. դրամ: Հաշվարկային

ցուցանիշներում առկա են մաս փոխադրամիջոցների գծով կրկնակի գույքահարկի 11 հարկատուներ՝ 483.8 հազ. դրամ գումարով:

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի ներկայացրած՝ 1997-2003 թվականներին 18-ից բարձր տարիքում մահացած գույքահարկի պարտավորություններ ունեցող անձանց ցուցակի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ձերմուկ համայնքի գույքահարկի բազայում վերջիններիս համար շարունակվում է հաշվարկվել 1,700.0 հազ. դրամ գույքահարկ:

Վայք համայնքի գույքահարկի բազայում առկա են 760.0 հազ. դրամի անճշտություններ, որից՝

- կրկնակի գրանցված 10 փոխադրամիջոց՝ գույքահարկը 100.0 հազ. դրամ,
- խոտանված 46 փոխադրամիջոց՝ գույքահարկը՝ 660.0 հազ. դրամ:

Ռինդ համայնքի ֆիզիկական անձանց գույքահարկի բազայում փոխադրամիջոցների գծով անճշտությունները կազմել են 165.7 հազ. դրամ: Բազայում առկա է մաս ալլ համայնքների բազայում հաշվառված 6 փոխադրամիջոց՝ 36.9 հազ. դրամ գույքահարկով, կրկնակի գրանցված 19 փոխադրամիջոց՝ գույքահարկը՝ 128.8 հազ. դրամ:

Ջառիթափ համայնքի գույքահարկի բազայում առկա է 15 փոխադրամիջոց՝ 105.4 հազ. դրամ գույքահարկով, որոնք գրանցված են այլ համայնքներում, սակայն բազայից չեն հանվել: Ընդ որում, երեք հարկատուների նույն փոխադրամիջոցները բազայում նշված են կրկնակի:

Համայնքների գույքահարկի բազաների անճշտությունների պատճառն այն է, որ նախքան ՀՀ կառավարության 13.02.2003թ. N192-Ն որոշումը և 26.12.2001թ. ՀՀ տարածքային կառավարման և ՀՀ պետական եկամուտների նախարարությունների՝ «ՀՀ պետական եկամուտների նախարարության տարածքային հարկային մարմինների կողմից ՀՀ համայնքներին գույքային հարկերի գծով տեղեկությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» հրամանը, որով սահմանվել էր գույքային հարկերի վերաբերյալ համայնքների կողմից հայտերի ներկայացման դեպքում յուրաքանչյուր համայնքի տարածքը սպասարկող տարածքային հարկային մարմինների կողմից տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները, ինչպես մաս, անհրաժեշտության դեպքում, հարկերի ապառքների կառուցվածքի համատեղ ուսումնասիրությունը, տեղական ինքնակառավարման մարմինները չեն առաջնորդվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ կետով և համայնքների բյուջեների ձևավորման ընթացքում չեն դիմել պետական մարմիններ՝ համայնքի խնդիրներին վերաբերող տեղեկություններ ստանալու համար:

Անհամապատասխանություններ են արձանագրվել համայնքների՝ հողի հարկի հաշվարկման հիմքում:

Համաձայն ՀՀ հողային օրենսգիրք 101-րդ հոդվածի՝

«2. Հողամասից կամովին հրաժարվելու դեպքում քաղաքացիները կամ իրավաբանական անձինք այդ մասին դիմում են ներկայացնում համայնքի վարչական սահմաններում համայնքի ղեկավարին (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին), համայնքի վարչական սահմաններից դուրս՝ մարզպետին:

3. Դիմումն ստանալուց հետո, 15-օրյա ժամկետում, համայնքի ղեկավարը կայացնում է որոշում՝ համապատասխան հողամասը համայնքային սեփականություն, իսկ Երևանի քաղաքապետը կամ մարզպետը՝ պետական սեփականություն ճանաչելու վերաբերյալ»: Առանձին դեպքերում հողամասերից հրաժարված սեփականատերերի դիմումները չեն ներկայացվել՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման պետական գրանցման կամ ներկայացվել են, սակայն գրանցում չեն ստացել:

Եղեգնաձոր համայնքում 43 հարկատու հրաժարվել են սեփականաշնորհված հողից, վճարման ենթակա հողի հարկը՝ 638.3 հազ. դրամ, Ջառիթափի գյուղապետը դեռ 28.09.2001թ. դիմել է Վայքի անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ դադարացնելու սեփականաշնորհված հողերից հրաժարված համայնքի 125 հարկատուների սեփականության իրավունքը, սակայն առ վերահսկողության ավարտը հարցը լուծում չի ստացել:

ՀՀ կառավարության 10.07.2003թ. N863-Ն որոշմամբ հաստատվել է մարզի Արին գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա, համաձայն որի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 1,75 հա վարելահողը փոխադրվել է հատուկ նշանակության հողերի կատեգորիա, սակայն այդ հողերից կամովին հրաժարված հարկատուների սեփականության իրավունքը հողամասերի նկատմամբ առ այսօր չի դադարեցվել և համայնքի բյուջեում վերջիններից՝ որպես հարկային պարտավորություն, հաշվարկվում է հողի հարկ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնագիտական եզրակացությամբ Արփի համայնքի 25 սեփականատերերի սեփականաշնորհված 7 հա հեղեղված ջրովի վարելահողը դասվել է անօգտագործելի հողերի շարքը, սակայն հողի հարկի դրույքաչափը մնացել է անփոփոխ:

2003 թվականի հունվարի 1-ի դրությամբ գույքային հարկերի ապառքները (գույքահարկից՝ 31,096.0 հազ. դրամ, հողի հարկից՝ 69,150.0 հազ. դրամ) կազմել են նախատեսված ընդամենը հարկային եկամուտների՝ 180,278.4 հազ. դրամի, 55,6%-ը: Փաստորեն այդ ապառքների կուտակման պատճառներից է նաև գույքահարկի և հողի հարկի հաշվարկման հիմքում առկա անճշտությունները և անհամապատասխանությունները:

Համայնքների վարչական բյուջեների ծախսերը՝ ըստ բյուջեի գործառնական դասակարգման հողվածների, ուղղվել են՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ՝ 189,822.5 հազ. դրամ կամ վարչական բյուջեի փաստացի ծախսերի 55,1%-ը, կրթություն և

գիտություն՝ 57,026.8 հազ. դրամ կամ 16,5%-ը, մշակույթ, սպորտ և կրոն՝ 47,353.3 հազ. դրամ կամ 13,7%-ը, բնակարանային կոմունալ տնտեսություն՝ 31,403.5 հազ. դրամ կամ 9,1%-ը, համայնքների բյուջեների ծախսերի հիմնական ուղղություններին չդասվող այլ ծախսեր (պահուստային ֆոնդ)՝ 17,604.1 հազ. դրամ կամ 5,1%-ը, տնտեսական այլ ծառայություններ՝ 1,607.5 հազ. դրամ կամ 0,5%-ը:

Ըստ տնտեսագիտական դասակարգման, մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերն ուղղվել են՝ տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողներին աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ՝ 164,415.2 հազ. դրամ, հատուկ նպատակային ֆոնդից տրվող պարգևատրումներ՝ 1,423.5 հազ. դրամ, ընթացիկ տրանսֆերտներ, այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ՝ 55,778.7 հազ. դրամ, ապրաքների գնման և ծառայությունների վճարման ծախսեր՝ 105,596.2 հազ. դրամ:

Մարզի համայնքների վարչական բյուջեներից 221,617.4 հազ. դրամ կամ 64,3%-ն ուղղվել է տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձին և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներին:

Մարզի 20 համայնքներում վարչական բյուջեների ծախսերի 90%-ից ավելին ուղղվել է տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձին ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներին, այդ թվում՝ Մալիի՝ 95,4%, Սարավան՝ 95,9%, Ազատեկ՝ 96,2%, Հորս՝ 96,5%, Հերմոն՝ 97,0%, Կարմրաշեն՝ 97,7%, Եղեգիս՝ 98,2% , Հերիեր՝ 100%:

Մարզի համայնքներում գործում է 18 նախադպրոցական հիմնարկ, որից 11-ը՝ գյուղական համայնքներում: Ձառիթափի համայնքի բյուջեում նախադպրոցական հիմնարկների երեխաների սննդամթերքի ձեռքբերման համար նախատեսվել է 250.0 հազ. դրամ, հատկացվել է 43.0 հազ. դրամ, կամ նախատեսվածի 17,2%-ը, Գնդեվազ և Եղեգիս համայնքներում այդ ուղղությամբ ֆինանսական միջոցներ ընդհանրապես չեն նախատեսվել:

Ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերից 19,643.7 հազ. դրամ ուղղվել է ապրանքների ձեռքբերմանը, 2,954.9 հազ. դրամը՝ գործուղման, 4,439.2 հազ. դրամը՝ տրանսպորտային, 4,406.9 հազ. դրամը՝ կապի, 54,158.4 հազ. դրամը՝ կոմունալ ծառայությունների վճարմանը, 19,931.1 հազ. դրամը՝ «այլ ծախսեր» հոդվածին:

Մարզի քաղաքային համայնքներին բաժին է ընկնում բնակարանային կոմունալ ծախսերի 100%-ը, ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերի՝ 55,6%-ը (58,676.7 հազ. դրամ):

Նոր - Ազնաբերդ, Ազատեկ, Սերս, Շատին և Վայք համայնքների ղեկավարների կողմից բյուջետային միջոցների հաշվին ստանձնած պարտավորությունների չկատարման պատճառով Վայոց ձոր մարզի դատական ակտերի հարկադիր կատարման (Գ-ԱՀԿ) ծառայության կողմից 2003 թվականին համայնքների բյուջեների գանձապետական հաշիվներին դրվել է արգելանք՝ ընդհանուր 20,930.0 հազ. դրամի: Այդ թվում՝ Վայքի քաղաքապետարանի միջոցների՝

«Հայրուսագազարդ» ՓԲԸ-ի Վայոց ձորի ԳԳՄ-ի պարտքի դիմաց՝ 16,344.1 հազ. դրամ, Սերս գյուղապետարանի՝ «Սերմեր ԱԱՖ» ՊՓԲԸ-ի պարտքի դիմաց՝ 1,254.0 հազ. դրամ, Ազատեկ, Նոր-Ազնաբերդ և Շատին գյուղապետարանների կողմից աշխատանքային պայմանագրերի պարտքերի դիմաց՝ համապատասխանաբար՝ 485.3, 646.1 և 2,202.5 հազ. դրամ:

Եղեգնաձոր համայնքի ավագանին, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը (10.04.2003 թ. որոշում N3/6), որոշում է կայացրել համայնքի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումներն իրականացնել մեկ աղբյուրից կամ գնանշման հարցման ձևի կիրառմամբ: Մինչ այդ, քաղաքապետարանը կնքել է պայմանագրեր (01.01.2003թ. N2, 01.04.2003թ. N4) «Եղեգնաձորի բնակկոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի հետ՝ սանմաքրման և կոշտ աղբի տեղափոխման համար՝ 816.5 հազ. դրամի, քաղաքային առուների մաքրման համար՝ 3,500.0 հազ. դրամի, կանաչապատման համար՝ 1,520.0 հազ. դրամի, ինչպես նաև համայնքի ավագանին (24.06.2003թ. N4/10) որոշում է կայացրել՝ «Կարկոմավտո» ՍՊԸ-ից 4,125.0 հազ. դրամով ձեռքբերել ԳԱՋ 31-10 մակնիշի ավտոմեքենա: Գետափի գյուղապետարանը նույն կազմակերպության հետ 13.01.2003թ. կնքած N 69 պայմանագրով 3,996.5 հազ. դրամով ձեռք է բերել ԳԱՋ 31-10 մակնիշի ավտոմեքենա: Համայնքի ավագանին մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման որոշումը կայացրել է 2002 թվականի դեկտեմբերի 25-ին (որոշում N5), առանց նշելու ձեռքբերվող ավտոմեքենայի մակնիշը և գինը, ընդ որում, ավտոմեքենայի գնի մի մասը՝ 2,000.0 հազ. դրամը, վճարվել է մատակարարին՝ նախքան պայմանագիր կնքելը (30.12.2002թ.):

Վայքի քաղաքապետարանի և «Վայքի սանմաքրում և բարեկարգում» ՓԲԸ-ի միջև 05.02.2003թ. թիվ 4 պայմանագրով վերջինս կատարել է համայնքի փողոցների սանմաքրման և կանաչապատման 3,165.0 հազ. դրամի աշխատանքներ: Կատարողի հետ քաղաքապետարանը առանց մրցույթի կնքել է պայմանագիր, որտեղ միավորվել են տարաբնույթ աշխատանքներ, նշված չէ սանմաքրման և կանաչապատման աշխատանքների մակերեսները և գինը, տարանջատված չեն սանմաքրման աշխատանքների սեզոնայնությունը, հիմնավորված չեն նախահաշիվները:

Վայք համայնքի ավագանին 14.07.2003թ. N5/3 որոշմամբ համաձայնություն է տվել քաղաքի Շահումյան փողոցի՝ 2,000.0 հազ. դրամի փոսային նորոգման աշխատանքները կատարել մեկ աղբյուրից, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի դրույթով և հիմնավորելով, որ Վայքի «ՃՇՇ» ՓԲԸ-ը համայնքի վարչական տարածքում միակ մասնագիտացված կազմակերպությունն է և չունի մրցակից: Խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթները:

Ջերմուկ համայնքի ավագանին, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը, 11.08.2003թ. որոշում է կայացրել՝ «հաշվի առնելով համայնքի բյուջեի եկամտային մասի սիստեմատիկ քերակատարումը, որը հնարավորություն չի տալիս համայնքին ժամանակին կատարելու իր պայմանագրային պարտավորությունները, ինչի հետևանքով առաջացել են ֆինանսական պարտավորություններ, սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ կատարելու համար գնումներ կատարել առանց մրցույթի՝ Ջերմուկի «Կոմունալ տնտեսություն»

ԲԲԸ-ի միջոցով»: Արդյունքում՝ բնակկոմունալ աշխատանքների դրամարկղային ծախսը հավասար է բնակկոմունալ հողվածով նախատեսված 12,203.0 հազ. դրամին և չի կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված օրենքի նպատակը՝

«1) պետության և համայնքների համար տնտեսապես շահավետ պայմաններով գնումների կատարումը»:

Եղեգնաձոր համայնքի բյուջեից «սեփական տրանսպորտի պահպանման ծախսեր» (2800) հողվածով նախատեսված բենզինը ձեռք է բերվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով 2003 թվականին հաղթող ճանաչված գլխավոր մատակարար «Ֆլեշ» ՍՊԸ-ից՝ մեկ լիտրը 250 դրամով: Առանձին տեղական ինքնակառավարման մարմիններ, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 15.02.2003թ. «Պաշարների (նյութերի, ապրանքների, արագամաշ առարկաների) սկզբնական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները հաստատելու մասին» N151 հրամանը, գնված դիզելային վառելիքը և բենզինը չեն հիմնավորել տեխնիկական և որակական բնութագրերով: Արդյունքում՝ Ելփինի գյուղապետարանը 20.01.2003թ. «Տեր-Չոր» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագրով գնել է 200.0 հազ. դրամի բենզին՝ մեկ լիտրը 310 դրամով, նույն ընկերության հետ Ռ-ինդի գյուղապետարանի 21.01.2003թ. կնքած պայմանագրում չի նշվել 350.0 հազ. դրամի ձեռքբերված բենզինի և դիզելային վառելիքի մեկ միավորի գինը և քանակը, Գլաձորի գյուղապետարանը 20.08.2003թ. առանց պայմանագրի «Ռոբերտ և Անի» ՍՊԸ-ից գնել է 240.0 հազ. դրամի դիզելային վառելիք:

Համայնքների բյուջետային միջոցների օգտագործման ընթացքում թույլ տրված խախտումները և թերությունները հետևանք են նաև համայնքների ավագանիների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով սահմանված վերահսկողության բացակայության: Այսպես՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի՝ «Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է համայնքի ավագանին, որն իրավագոր է ստուգել ցանկացած բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջել հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ: Բյուջեի կատարման վերահսկողությունը մշտապես և արդյունավետ իրականացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են սահմանված կարգով ներգրավել ամոլիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է համայնքային բյուջեից»: Ընդ որում, ներքին ամոլիտի նպատակը՝ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների կողմից իրականացվող ֆինանսատնտեսական բնույթի գործառնությունների ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանությունը, տեղեկատվության արժանահավատության ու ճշտության գնահատումը, հաշվապահական հաշվառումների մեջ տեղ գտած անհամապատասխանությունների բացահայտումը, սահմանված ՀՀ կառավարության՝ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող առաջնահերթ

միջոցառումների մասին» 05.11.2001թ. N1064 որոշման համապատասխան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 30.12.2002թ. N934-Ն հրամանով հաստատված՝ «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև վերջիններիս ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի անցկացման» կարգի 2-րդ կետով:

Ուսումնասիրության արդյունքներին Վայոց ձոր մարզի համայնքների ղեկավարությունը ծանոթացել է, որի վերաբերյալ կազմված արձանագրություններով առարկություններ չի ունեցել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Մարզի համայնքների վարչական և ֆոնդային բյուջեների փաստացի ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 344,817.7 և 79,412.2 հազ. դրամ, կամ նախատեսվածի 72,0%-ը և 79,3%-ը:
2. Մարզի համայնքների բյուջեներին «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության որոշումներով տրամադրվել և ամբողջությամբ հատկացվել է 202,552.1 հազ. դրամ դոտացիա, որը կազմել է վարչական բյուջեների փաստացի ծախսերի 58,7%-ը:
3. Գույքային հարկերի շեղումն անդրադարձել է ինչպես համայնքների բյուջեների ձևավորման, այնպես էլ, հանդես գալով հաշվարկային ցուցանիշ, համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի չափին:
4. Համայնքների բյուջեների գույքահարկի և հողի հարկի հաշվարկման հիմքում առկա անճշտությունները և անհամապատասխանությունները պատճառ են հանդիսացել գույքային հարկերի ապառքների ավելացման, որը կազմում է 2003 թվականի նախատեսված ընդամենը հարկային եկամուտների՝ 180,278.4 հազ. դրամի, 55,6%-ը:
5. Համայնքների բյուջեներում շարունակվում է հողամասերի սեփականության իրավունքից կամովին հրաժարված քաղաքացիների նկատմամբ հողի հարկի հաշվառումը և հաշվարկումը:
6. ՀՀ պետական բյուջեից համայնքներին հատկացված դոտացիային համարժեք՝ 221,617.4 հազ. դրամը կամ վարչական բյուջեների 64,3%-ը ուղղվել է տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձին և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներին:
7. Մարզի առանձին համայնքների բյուջեներից ապրանքների գնման, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով:

8. Մարզի համայնքների բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքներով արձանագրված խախտումները և թերությունները հետևանք են նաև համայնքների ավագանիների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածներով սահմանված վերահսկողության բացակայության:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը`

- առաջարկում ենք կանոնակարգել համայնքների վարչական սահմաններում հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքից կամովին հրաժարված քաղաքացիների հողի հարկի հաշվառումը, հաշվարկումը և վճարումը համապատասխան համայնքի բյուջե, մինչ այդ իրավունքները նոր սեփականատիրոջն անցնելը:

Վայոց ձորի մարզպետարանին`

1. Իրականացնել միջոցառումներ` տեղական ինքնակառավարման մարմիններում արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու ուղղությամբ, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ ապահովելու տեղական ինքնակառավարման մարմիններում համայնքների բյուջեների կատարման նկատմամբ վերահսկողություն, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների պահանջների:
2. Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել` «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի համայնքների բյուջեների ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ

Վերահսկողության հիմքը -Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 19.1 կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 23.07.2004 թվականի թիվ 95 հրամանը:

Վերահսկողության նպատակը – Տավուշի մարզի համայնքների բյուջեների ձևավորման համապատասխանությունը ՀՀ օրենքներին, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա և բյուջետային փոխհարաբերությունների կողմ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների կողմից բյուջետային միջոցների օգտագործման մասին:

Վերահսկողության օբյեկտը – Տավուշի մարզի համայնքների բյուջեները:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- Մարզի համայնքների ավագանու նիստերի արձանագրություններ, բյուջեների կատարման հաշվետվություններ և այլ փաստաթղթեր:
- Մարզի համայնքների բյուջեները սպասարկող գանձապետական բաժանմունքների 2003 թվականի համայնքների բյուջեների կատարման հաշվետվություններ:
- Տավուշի մարզային հարկային տեսչության տեղեկանքներ և այլ փաստաթղթեր:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է՝

Համաձայն Տավուշի մարզի (այսուհետ՝ մարզ) Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի տարածքային գանձապետական բաժանմունքների (այսուհետ՝ ՏԳԲ) կողմից ներկայացված 4 քաղաքային և 58 գյուղական համայնքների հաշվետվությունների, 2003 թվականին մարզի համայնքների գումարային վարչական բյուջեների եկամուտները և ծախսերը նախատեսվել են 893,886.1 հազարական դրամ, ֆոնդային բյուջեները՝ 10,350.5 հազ. դրամ: Տարվա ընթացքում բյուջեների ճշտման արդյունքում վարչական բյուջեների պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե նախատեսվել է 39,894.5 հազ. դրամ, փաստացի հատկացվել է 32,874.3 հազ. դրամ:

Մարզի 39 համայնքներ 2003 թվականին ֆոնդային բյուջե չեն նախատեսել և կապիտալ գործառույթներ չեն իրականացրել:

Վարչական բյուջեների ծախսերը փաստացի կազմել են՝ 726,561.1 հազ. դրամ, կամ նախատեսվածի 81.3%-ը:

ՀՀ պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով մարզի համայնքներին 2003 թվականին տրամադրվել է 434,395.4 հազ. դրամ դոտացիա, որը հատկացվել է ամբողջությամբ և կազմել վարչական բյուջեների փաստացի ծախսերի 59,8%-ը:

ՀՀ կառավարության 17.04.03թ. N401-Ա, 25.09.03թ. N1171-Ա և 10.04.03թ. N374-Ա որոշումներով մարզի Աչաջուր, Դեղձավան, Դովեղ, Կոթի, Ներքին Կարմիր աղբյուր, Չինարի, Չորաթան և Պառավաքար համայնքներին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ներքին տրանսֆերտներ» հոդվածով, հատկացվել է գումարային 19,940.7 հազ. դրամ, իսկ ՀՀ կառավարության 23.01.03թ. N48-Ն և 10.04.03թ. N408-Ն որոշումներով Նոյեմբեյան և Իծաքար համայնքներից յուրաքանչյուրին հատկացվել է 5,000.0 հազ. դրամ սուբվենցիա՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար: Այսպիսով, ՀՀ պետական բյուջեից մարզի համայնքներին ընդամենը հատկացվել է 464,336.1 հազ. դրամ գումար, որը մարզի կտրվածքով կազմում է վարչական բյուջեների փաստացի ծախսերի 63,9%-ը:

Համաձայն «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, պետական բյուջեից համայնքի բյուջե «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման հիմքում դրվել են «Հողի հարկի մասին» և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով հաշվարկված և համայնքի բյուջե 2001 թվականին վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան ցուցանիշները (առանց ապառքների, տույժերի և տուգանքների): Համաձայն ՀՀ պետական եկամուտների նախարարության 04.09.02թ. N3538/2-3 գրության՝ ուղղված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, մարզի համայնքների 2001 թվականի հարկային եկամուտների հաշվարկային ցուցանիշները կազմել են՝ հողի հարկ՝ 160,754.4 հազ. դրամ, գույքահարկ՝ 143,686.3 հազ. դրամ: Հետագայում, ի պատասխան մարզպետարանի 18.11.02թ. N138600/25 գրության, Տավուշի մարզային հարկային տեսչության և մարզի համայնքների ղեկավարների հետ համատեղ ուսումնասիրության արդյունքում, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը 16.12.02թ. N5053/2-3 գրությամբ հայտնել է, որ 2001 թվականի հողի հարկի հաշվարկային ցուցանիշներում շեղումներ չեն հայտնաբերվել և ներկայացված ցուցանիշները փոփոխության ենթակա չեն:

Առանձին համայնքներում խախտվել է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ «Համայնքների բյուջեների ձևավորման սկզբունքները» գ) ենթակետը՝ «հավաստիությունը և հստակությունը, որը հնարավորություն է ընձեռում ապահովել բյուջեի կատարման և բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հոդվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով», ինչպես նաև սույն օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետը:

Այսպես՝ մարզի Իջևան համայնքի 2003 թվականի բյուջեում հողի հարկի նախատեսված ցուցանիշը կազմել է 1,015.0 հազ. դրամ, գույքահարկինը՝ 11,400.0 հազ. դրամ: Միաժամանակ, համաձայն Տավուշի մարզային հարկային տեսչության 04.08.04թ. ներկայացրած N823/04-6

տեղեկանքի, 2003 թվականին հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 2,595.7 և 25,637.6 հազ. դրամ, կամ հողի հարկի և գույքահարկի նախատեսված ցուցանիշները պակաս են հաշվարկայինից համապատասխանաբար՝ 1,580.7 և 14,237.6 հազ. դրամով: Արդյունքում՝ գույքահարկի նախատեսված ցուցանիշը փաստացի գերակատարվել է 3,654.9 հազ. դրամով կամ 32,1%-ով, կազմելով 15,054.9 հազ. դրամ:

Դիվիզան համայնքի 2003 թվականի բյուջեում գույքահարկից մուտքեր նախատեսվել են 23,000.0 հազ. դրամ, միաժամանակ, ըստ Դիվիզանի տարածքային հարկային տեսչության կողմից ներկայացված 06.08.04թ. N 297 տեղեկանքի, համայնքի բյուջեի 2003 թվականի գույքահարկի հաշվարկային ցուցանիշը կազմել է 30,084.6 հազ. դրամ, կամ նախատեսված ցուցանիշը 7,084.6 հազ. դրամով պակաս է հաշվարկայինից: Ապառքների, տույժերի և տուգանքների բացակայության պարագայում հարկային եկամուտների նախատեսված ցուցանիշները կարող են հավասար լինել հաշվարկային ցուցանիշներին, սակայն նշված դեպքերում բյուջեում պլանավորվել են պակաս:

Համաձայն մարզային հարկային տեսչության Տավուշի բաժնի կողմից ներկայացված 08.09.04թ. N4 տեղեկանքի, Բերդ համայնքի բյուջեի 2003 թվականի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային ցուցանիշները, որոնք հետագայում հիմք են հանդիսանալու համահարթեցման դոտացիայի չափի հաշվարկի համար, կազմել են համապատասխանաբար՝ 3,629.9 և 9,735.4 հազ. դրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց հողի հարկի ապառքը կազմել է 2,508.0 հազ. դրամ, իսկ իրավաբանական անձանց գույքահարկինը՝ 2,607.4 հազ. դրամ: Համայնքի 2003 թվականի բյուջեում հողի հարկից մուտքեր նախատեսվել են 3,879.8 հազ. դրամ, գույքահարկից՝ 9,920.0 հազ. դրամ: Փաստորեն քաղաքապետարանը 2003 թվականի բյուջեի ձևավորման ժամանակ հարկային եկամուտների պլանային ցուցանիշներում ապառքներից ընդամենը ներառել է հողի հարկից՝ 249.9 հազ. դրամ, գույքահարկից՝ 184.6 հազ. դրամ:

Նոյեմբերյան համայնքի 2003 թվականի բյուջեում հողի հարկից մուտքեր նախատեսվել են՝ 3,100.0 հազ. դրամ, գույքահարկից՝ 8,333.9 հազ. դրամ: Հողի հարկի ցուցանիշը փաստացի գերակատարվել է 1,654.3 հազ. դրամով, կամ 53,4%-ով, կազմելով 4,754.2 հազ. դրամ, որը պայմանավորված է բյուջեում նախատեսված ցուցանիշի չհիմնավորված ձևավորմամբ:

ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի N192-Ն որոշմամբ ֆիզիկական անձանց գույքահարկի բազան հանձնվել է համայնքներին, որի ընտրանքային ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են տարիների ընթացքում առաջացած բազմաթիվ անճշտություններ և անհամապատասխանություններ, որոնք անդրադարձել են գույքահարկի, հետևաբար՝ մարզի համայնքներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների հաշվարկային չափին:

Այսպես՝ Իջևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետավտոտեսչության վարչության Իջևանի միջշրջանային գրանցման և քննչական

բաժանմունքի հետ համատեղ կատարվել է համայնքի տարածքում հաշվառված ֆիզիկական անձանց ավտոմեքենաների գույքահարկի բազայի ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ 2003 թվականին դուրսգրման ենթակա 625 ավտոմեքենա առկա են բազայում, հետևաբար, համայնքի բյուջեում նախատեսվում է 7,100.0 հազ. դրամ գույքահարկի անհուսալի եկամուտ:

Դիլիջանի քաղաքապետարանի կողմից կատարած ճշտման արդյունքում, մարզային պետավտոտեսչությունում հայտնաբերվել է 1997-2004 թվականներին դուրս գրված 677 փոխադրամիջոց, որը հաշվառված է համայնքի ֆիզիկական անձանց գույքահարկի բազայում:

Բերդի քաղաքապետարանի կողմից փոխադրամիջոցների գույքահարկի բազայում առկա անճշտությունների վերաբերյալ տեղեկանքում ներկայացված է 70 փոխադրամիջոց՝ 639.300 դրամ գույքահարկի գումարով:

Նոյեմբերյանի քաղաքապետարանի ֆիզիկական անձանց գույքահարկի բազայում ևս առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ: Այսպես՝

- գույքահարկի բազայում նույն ավտոմեքենան գրանցված է երկու անգամ, միևնույն՝ 7700 դրամ գույքահարկի գումարով,
- նույն ավտոմեքենան գրանցված է երկու տարբեր մարդկանց անունով՝ գույքահարկի 7.500 դրամ գումարով:

Նշված անճշտություններն ամբողջական չեն և համայնքների կողմից շարունակվում է ֆիզիկական անձանց գույքահարկի բազաների ճշտումը:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը՝ ըստ բյուջեի գործառնական դասակարգման հոդվածների ուղղվել են՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ՝ 315,845.5 հազ. դրամ, կամ վարչական բյուջեի ծախսերի 43,5%-ը, կրթություն և գիտություն՝ 89,930.1 հազ. դրամ կամ 12,4%-ը, մշակույթ, սպորտ և կրոն՝ 97,538.8 հազ. դրամ կամ 13,4%-ը, բնակարային կոմունալ տնտեսություն՝ 62,055.8 հազ. դրամ կամ 8,5%-ը, համայնքների բյուջեների ծախսերի հիմնական ուղղություններին չդասվող այլ ծախսեր՝ 161,190.9 հազ. դրամ կամ 22,2%-ը, այդ թվում նախորդ տարիներին գոյացած պարտքի մարում՝ 79,031.3 հազ. դրամ, պահուստային ֆոնդ՝ 38,480.6 հազ. դրամ և այլ ծախսեր՝ 43,679.0 հազ. դրամ:

Ըստ տնտեսագիտական դասակարգման, մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերն ուղղվել են՝ աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ՝ 269,828.6 հազ. դրամ կամ վարչական բյուջեի ծախսերի 37,9%-ը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ՝ 93,641.5 հազ. դրամ, կամ 12,9%-ը:

Համայնքների ճշտված ֆոնդային բյուջեներից նախատեսված 136,447.0 հազ. դրամի ծախսերը կատարվել են 80,5%, փաստացի կազմելով 109,883.6 հազ. դրամ, որից 64,844.7 հազ. դրամն ուղղվել է կապիտալ նորոգումների իրականացմանը, 45,038.9 հազ. դրամը՝ ապրանքանյութական արժեքների պահուստների ձևավորմանը և այլ ծախսերին:

Ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերի՝ 368,416.5 հազ. դրամի տարեկան ճշտված պլանի դիմաց փաստացին կազմել է 254,770.6 հազ. դրամ:

Ըստ տնտեսագիտական դասակարգման, մարզի համայնքների կողմից կատարված ծախսերի վերլուծությունից հետևում է, որ տեղական բյուջեների ծախսային հատվածն ուղղվել է ոչ այնքան «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված համայնքի ղեկավարի գործունեությանը՝ հասարակական կարգի պահպանության, քաղաքաշինության և հողօգտագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման, տրանսպորտի, առևտրի և սպասարկման բնագավառներում, որքան տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման ծախսերը հոգալուն, նախորդ բյուջետային տարիների ընթացքում կուտակված կրեդիտորական պարտքերի մարմանը, ինչպես նաև ոչ բավարար հիմնավորումներով գնումների իրականացմանը: Չի պահպանվել բյուջեի ձևավորման արդյունավետության սկզբունքը: Այսպես, եթե Դիլիջանի քաղաքային համայնքում աշխատավարձ ու աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները միասին կազմել են վարչական բյուջեների փաստացի ծախսերի՝ 142,280.9 հազ. դրամի 13%-ը, Իջևանի քաղաքային համայնքում վարչական բյուջեի փաստացի ծախսերի՝ 87,995.9 հազ. դրամի 22%-ը, ապա մարզի գյուղական համայնքներում, որտեղ առանձին համայնքների վարչական բյուջեների փաստացի ծախսերը հասնում է մինչև 25,000.0 հազ. դրամ, աշխատավարձ ու աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները կազմել է միջինը 69,9%, իսկ Նոյեմբերյան և Բերդ քաղաքային համայնքներում՝ համապատասխանաբար՝ 39,102.7 հազ. դրամի 56.7%-ը և 63,052.3 հազ. դրամի 42%-ը:

Մարզի համայնքների կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումներն առանձին դեպքերում կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների շրջանցմամբ: Մասնավորապես, խախտվել է սույն օրենքի 6-րդ հոդվածի՝ «Գնումների հրապարակայնությունը» և 18-րդ հոդվածի առաջին կետի՝ «Գնումները կատարվում են մրցույթով՝ կենտրոնացված և ապակենտրոնացված, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ գնանշումների հարցման կամ մեկ աղբյուրից գնումների կատարման ձևերով» պահանջները: Այսպես՝

- համաձայն 11.02.03 թ. Կողբի գյուղապետարանի և «Արմենիա-լադա» ՍՊԸ-ի միջև կնքած N 6 պայմանագրի, գյուղապետարանի կարիքների համար ձեռք է բերվել 2,500.0 հազ. դրամ արժողության ՎԱԶ-21214 մակնիշի ավտոմեքենա,
- 14.10.03թ. կնքած թիվ 08 պայմանագրով Դիլիջանի քաղաքապետարանի վարչական շենքի կապիտալ վերանորոգման համար կատարողի կողմից կատարվել է 5,445.5 հազ. դրամի աշխատանքներ (պատուհանների, մուտքերի դռների և շերտավարագույրների ձեռքբերում և տեղադրում) և համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկների համար, համաձայն 10.12.02թ. թիվ 1 պայմանագրի, ձեռք է բերվել սննդամթերք,

- Մովսեսի գյուղապետարանի 15.02.03թ. կնքած պայմանագրով, մսուր-մանկապարտեզի սննդի ձեռքբերման համար մատակարարին վճարվել է 1,000.0 հազ. դրամ,
- Արծվաբերդի գյուղապետարանի 01.06.03թ. կատարողի հետ կնքած պայմանագրով 4,000.0 հազ. դրամի պատվիրվել են ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ,
- Նոյեմբերյան համայնքի ավագանին 07.05.03 թիվ 6 որոշմամբ թույլատրել է քաղաքապետին մեկ աղբյուրից գնման եղանակով «Լևոն-2» ՍՊԸ-ի հետ կնքել 15,307.5 հազ. դրամի պայմանագիր՝ քաղաքային զբոսայգու վերակառուցման աշխատանքների համար:

Բերդի քաղաքապետարանը գրասենյակային ապրանքներ և նյութեր ձեռքբերելու համար 2003 թվականին, համաձայն պայմանագրի, վճարել է 1,766.6 հազ. դրամ: Գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջի խախտումով՝ «Պատվիրատուն իրավունք չունի գնումների առանձին ընթացակարգեր անցկացնելու միջոցով պայմանագրեր կնքելու նպատակով՝ ա) արհեստականորեն գնումները բաժանել առանձին չափաբաժինների»:

Մարզի առանձին համայնքներում անտեսվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ «Եթե գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի երեք քառորդը, ապա պատվիրատուն իրավունք ունի գնումները կատարել գնանշումների հարցման ձևի կիրառմամբ, առանց լիազոր մարմնի համաձայնության» և 43-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Գնանշումների հարցման ձևով գնումներ կատարելու դեպքում պատվիրատուն պարտավոր է նման հարցում ուղղել առնվազն երկու անձի: Գնանշման հարցումը պետք է ներառի պատվիրատուի կողմից կնքվելիք պայմանագրով առաջադրվող բոլոր պայմանները, ներառյալ՝ գնանշումը ներկայացնելու, գնահատելու և համեմատելու պայմանները» պահանջները: Այսպես, հեղուկ վառելիքային գները վերաբերյալ Ոսկեսպարի գյուղապետարանի կողմից 16.03.03թ. կնքած պայմանագրի գինը կազմել է 360,0 հազ. դրամ, իսկ Կոթի գյուղապետարանի կողմից 2003 թվականի թիվ 4 (առանց ամսաթվի) պայմանագրի գինը՝ 579,0 հազ. դրամ:

Այսպիսով, մարզի առանձին տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված գնումների ընթացքում չի ապահովվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով ամրագրված օրենքի նպատակը՝ «Սույն օրենքի նպատակն է ապահովել պետության և համայնքների կարիքների համար գնումների կատարման գործընթացի արդյունավետ կազմակերպումը, հրապարակայնությունը և թափանցիկությունը, ինչպես նաև՝

- 1) պետության և համայնքների համար տնտեսապես շահավետ պայմաններով գնումների կատարումը.
- 2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնումների ընթացակարգի կազմակերպման միասնական կանոնների կիրառումը»:

Առանձին գյուղական համայնքներ ապրանքների ձեռքբերման համար 2003 թվականին կնքել են պայմանագրեր ֆիզիկական անձանց հետ՝ առանց եկամտահարկի գումարի հաշվարկի: Անտեսվել է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ «Հարկային գործակալը ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամտոտներից եկամտահարկը հաշվարկում է 10% դրույքաչափով»: Այսպես՝ առանց եկամտահարկ հաշվարկելու, Սևքարի գյուղապետարանը 26.02.03թ., 03.05.03թ. և 20.11.03թ. կնքած պայմանագրերով ֆիզիկական անձանց վճարել է գումարային 300.0 հազ. դրամ, Խաչքառակի գյուղապետարանը 15.02.03թ. կնքած պայմանագրով ֆիզիկական անձին վճարել է 150.0 հազ. դրամ:

Առանձին գյուղական համայնքներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար կնքած պայմանագրերում պայմանագրի գինը և մեկ միավորի արժեքը նշված չէ: Անտեսվել է «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» 440-րդ հոդվածի պահանջը՝ «Պայմանագրի կատարումը վճարվում է կողմերի համաձայնությամբ սահմանված գնով»: Այսպես՝ Բերդի քաղաքապետարանը 2003 թվականի բյուջետային տարում կոմունալ բարեկարգման օբյեկտների սպասարկման և պահպանության, սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնելու, Խաչքառակի գյուղապետարանի կողմից համակարգիչ, տպիչ և սեղան գնելու (21.05.03թ.), Մովսեսի գյուղապետարանի կողմից վառելավիայտ (15.02.03թ.) և Ոսկեվանի գյուղապետարանի կողմից տարբեր ապրանքներ ձեռքբերելու համար (15.11.03թ.) կնքած պայմանագրերում նշված չէ պայմանագրային գինը: Նշված դեպքերում սահմանված գնի բացակայության պատճառով, հնարավոր չէ կատարել օրենքի պահանջը:

Նոյեմբերյանի քաղաքապետարանի և «Նոյեմբերյան» ՍՊԸ-ի միջև կնքած 20.03.03թ. թիվ 1 պայմանագրի համաձայն, քաղաքապետարանի կարիքների համար նախատեսվել է ձեռքբերել 1000 լիտր բենզին, վճարելով յուրաքանչյուր լիտրի համար 300 դրամ: Համաձայն 03.03.03թ. թիվ 10 վճարման հանձնարարագրի, նախատեսված 300.0 հազ. դրամ գումարը փոխանցվել է, սակայն փաստացի ձեռք է բերվել 968 լիտր բենզին, փաստորեն մեկ լիտրի արժեքը կազմել է 310 դրամ: Ստացված բենզինի քանակը և գինը չեն համապատասխանում կնքած պայմանագրի պահանջներին:

Ուսումնասիրության արդյունքներին Տավուշի մարզի համայնքների ղեկավարությունը ծանոթացել է, որի վերաբերյալ կազմված արձանագրություններով առարկություններ չի ունեցել:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Մարզի համայնքների վարչական բյուջեների 2003 թվականի փաստացի ծախսերը կազմել են 726,561.1 հազ. դրամ, կամ նախատեսված 893,886.1 հազ. դրամի 81.3%-ը:
2. ՀՀ պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով մարզի համայնքներին 2003 թվականին տրամադրվել է 434,395.4 հազ. դրամ դոտացիա, որը հատկացվել է

ամբողջությամբ և կազմել համայնքների վարչական բյուջեների փաստացի ծախսերի 59.8%-ը:

3. Համայնքների բյուջեները ձևավորվել են հիմնականում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների խախտումներով, առանձին դեպքերում՝ դրանց անտեսմամբ:
4. Մարզի գյուղական համայնքներում հատկացված դոտացիայի զգալի մասն ուղղվել է կառավարման ապարատի պահպանման ծախսերին և տարիների ընթացքում կուտակված պարտքերի մարմանը:
5. Մարզի համայնքների ֆիզիկական անձանց գույքահարկի բազաներում առկա են տարիների ընթացքում առաջացած անճշտություններ և անհամապատասխանություններ, որոնք անդրադարձել են գույքահարկի ցուցանիշներին, հետևաբար՝ համահարթեցման դոտացիաների հաշվարկային չափին:
6. Մարզի համայնքների կարիքների համար իրականացված գնումները հիմնականում կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տավուշի մարզպետարանին.

1. Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ուշադրությունը հրավիրել՝
 - համայնքների բյուջեների ձևավորումը և նախագծերի կազմումը համապատասխանեցնել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ և 31-րդ հոդվածների պահանջներին,
 - համայնքներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող համահարթեցման դոտացիաների հաշվարկման հիմքում դրվող ցուցանիշների հստակությունն ապահովելու նպատակով, ձեռնարկել միջոցառումներ արագացնելու ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի N192-Ն որոշմամբ համայնքներին հանձնված ֆիզիկական անձանց գույքահարկի բազաների ճշտումը և գործունեությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի N 750-Ն որոշմանը,
 - ձեռնարկել միջոցառումներ համայնքների կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների գործընթացը համապատասխանեցնելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
2. Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

Հաշվետվությունը հաստատվել է ՀՀ ԱԺ
Վերահսկիչ պալատի խորհրդի 16.06.04թ.
նիստում և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով,
ՀՀ կառավարություն, ՀՀ գլխավոր
դատախազություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը 2002 և 2003 թվականներին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին

Վերահսկողության հիմքը - Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 15-րդ կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 21.04.2004թ. N79 հրամանը:

Վերահսկողության օբյեկտը - ՀՀ գլխավոր դատախազություն:

Վերահսկողության նպատակը - ՀՀ գլխավոր դատախազությանը 2002 և 2003 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման ուսումնասիրություն:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- Հայաստանի Հանրապետության 2002 և 2003 թվականների ՀՀ պետական բյուջե,
- ՀՀ կառավարության որոշումներ,
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներքին հողվածային վերաբաշխման ծանուցագրեր,
- ՀՀ գլխավոր դատախազության կողմից ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման, ներկայացված հաշվետվություններ, դրանք հիմնավորող և ուղեկցող այլ փաստաթղթեր, նախահաշիվներ, տեղեկանքներ,
- հաշվապահական փաստաթղթեր:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է՝

2002 թվականին ՀՀ գլխավոր դատախազությանը (այսուհետ՝ դատախազություն) պետական բյուջեով նախատեսվել է հատկացնել 1,048,841.7 հազ. դրամ՝ 03.03.01¹ «Դատական իշխանության մարմինների պահպանում, ՀՀ դատախազություն» ծրագրով: 2002 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով լրացուցիչ հատկացվել է 81,918.3 հազ. դրամ: Ընդամենը 2002 թվականին դատախազությանը նախատեսվել է հատկացնել 1,130,760.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորումը իրականացվել է 100%-ով:

ՀՀ 2003 թվականի պետական բյուջեով դատախազության պահպանման ծախսերի համար նախատեսվել է 1,129,901.4 հազ. դրամ: 2003 թվականին ՀՀ կառավարության որոշումներով լրացուցիչ հատկացվել է 247,405.3 հազ. դրամ:

¹ 00.00.00- բյուջետային ծախսերի դասակարգման կոդը՝ համապատասխանաբար՝ խումբ, ենթախումբ, ծրագիր:

2003 թվականին դատախազության պահպանման ծախսերի համար նախատեսվել է ընդամենը 1,377,306.7 հազ. դրամ: 2003 թվականին փաստացի ֆինանսավորումն իրականացվել է 100%-ով: 2003 թվականին նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել պահպանման ծախսերի աճ՝ 246,546.7 հազ. դրամով կամ 21.8%-ով:

2002-2003 թթ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ իրականացվել են ներքին վերաբաշխումներ, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների (հավելված 1, 2):

Ուսումնասիրված ժամանակահատվածում՝ 2002-2003 թվականներին պահպանման ծախսերի համապատասխանաբար՝ 79.7%-ը և 85.4%-ը բաժին է ընկել «Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ», «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ» և «Այլ տրանսֆերտներ» հոդվածներին (հավելված 3):

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ» հոդվածով 2002 թվականի համար դատախազությանը նախատեսվել է 779,661.5 հազ. դրամ:

2003 թվականին, համաձայն «ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2003 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել են նոր պաշտոնային դրույքաչափեր դատախազության աշխատակիցների համար: Աշխատավարձի ֆոնդը ավելացել է 6 ամսվա համար՝ 198,286.2 հազ. դրամով, և ՀՀ կառավարության 03.07.2003 թ. N 809-Ա որոշմամբ հատկացվել է ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդից:

2003 թվականին դատախազությանը աշխատավարձի վճարման համար հատկացվել է 976,583.9 հազ. դրամ:

2002 և 2003 թվականներին աշխատավարձի տարեկան ֆոնդը հաշվարկվել է դատախազության աշխատակիցների հաստիքացուցակով նախատեսված ամսական աշխատավարձի ֆոնդից՝ կիրառելով 12.1 գործակից: Փաստորեն դատախազությանը չի ընձեռվել հնարավորություն իրականացնել պարզևստրումներ և հավելավճարներ աշխատակիցներին, ինչպես նաև՝ աշխատանքներում ընդգրկել պայմանագրային մասնագետների:

2002 և 2003 թվականներին, աշխատավարձի բարձացմանը զուգընթաց դատախազությանը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների համար նախատեսվել և հատկացվել է համապատասխանաբար՝ 105,368.2 հազ. դրամ և 117,471.9 հազ. դրամ:

«Այլ տրանսֆերտներ» հոդվածով 2002թ. ՀՀ պետական բյուջեով դատախազությանը նախատեսվել և հատկացվել է 3,600.0 հազ. դրամ: Ելնելով «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ ՀՀ կառավարությունը 27.06.2002թ. N 928-Ա որոշումով ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացրել է 18,120.0 հազ. դրամ՝ զինվորական դատախազության զինծառայողներին դրամական փոխհատուցում վճարելու նպատակով: Ընդամենը 2002 թվականին «Այլ տրանսֆերտներ» հոդվածով հատկացվել է 21,720.0 հազ. դրամ:

2003թ. ՀՀ պետական բյուջեով «Այլ տրանսֆերտներ» հոդվածով հատկացվել է 83,672.5 հազ. դրամ, որից՝ 18,120.0 հազ. դրամ զինծառայողների դրամական փոխհատուցման և 65,552.5 հազ. դրամ՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն դատախազության աշխատակիցներին կենսաթոշակի ուղարկելու դեպքում միանվագ նպաստ վճարելու համար:

2002 և 2003 թվականներին «Գրասենյակային ապրանքներ և նյութեր» հոդվածով դատախազությանը նախատեսվել էր տարեկան 25,000.0 հազ. դրամ: 2003 թվականի համար նախատեսված գումարն ամբողջությամբ չի իրացվել և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ կատարվել է ներքին հոդվածային վերաբաշխում և 4,201.2 հազ. դրամ կամ հոդվածով նախատեսված գումարի 16.8%-ը փոխանցվել է այլ ծախսային հոդվածների:

Ուսումնասիրվել է դատախազության կողմից գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռքբերման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Արձանագրվել է՝

- 16.10.2002թ. վճարման հանձնարարագրով դատախազությունը փոխանցել է «ՀայՄամուլ» ՓԲԸ-ին 982.6 հազ. դրամ՝ թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար և 22.10.02թ., 26.12.02թ. վճարման հանձնարագրերով «Ազաթագիր» ՍՊԸ-ին՝ 4,131.3 հազ. դրամ, գրասենյակային ապրանքներ ձեռքբերելու համար: Գնումները չեն իրականացվել պետական գնումների գործակալության միջոցով՝ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջը:
- 2003 թվականին «ՀայՄամուլ» ՓԲԸ-ին թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար՝ 20.10.2003թ. N 17, 20.10.2003թ. N 18, 20.10.2003թ. N 19, 20.10.2003թ. N 20 պայմանագրերով փոխանցվել է 819.7 հազ. դրամ: Փաստորեն գնումը արհեստականորեն բաժանվել է առանձին չափաբաժինների, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջը:

«Տրանսպորտի պահպանման ծախսեր» հոդվածով 2002 թ. դատախազությանը հատկացվել է 36,104.6 հազ. դրամ, որից պետական գնումների գործակալության 02.06.2002թ. ԱՊՁԲ-02/16 պայմանագրով գնվել է 17,512.6 հազ. դրամի բենզին, իսկ 18,592.0 հազ. դրամը նախատեսվել է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և ավտոպահեստամասեր, անվադողեր, մարտկոցներ, քսանյութեր գնելու համար, տոկոսային առումով համապատասխանաբար՝ 48.5% և 51.5%: Ծախսերի նման բաշխումը չի համապատասխանում «2002 թվականի ՀՀ կառավարության բյուջետային ուղերձում» սահմանված հաշվարկին, ըստ որի բենզինի ձեռքբերման համար նախատեսվում է տրանսպորտի պահպանման ծախսերի 63%-ը:

2003 թվականին տրանսպորտի պահպանման համար դատախազությանը հատկացվել է 38,994.0 հազ. դրամ, որից 613.2 հազ. դրամ վճարվել է 1999 թվականին առաջացած պարտքը մարելու համար:

2003 թվականի ընթացքում տեխնիկական սպասարկման և ավտոպահեստամասերի, անվադողերի, քսանյութերի ձեռքբերման համար նախատեսված գումարն ամբողջությամբ չի

իրացվել և տարվա վերջին տասնօրյակում մնացորդը փոխանցվել է մատակարար կազմակերպությանը: Արդյունքում գոյացել է 9,800.0 հազ. դրամի դեբիտորական պարտք:

Ընտրանքային եղանակով ուսումնասիրվել է ավտոպահեստամասերի, անվադողերի, քսանյութերի ձեռքբերման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Արձանագրվել է՝

- 03.01.2002թ. ավտոպահեստամասերի ձեռքբերման համար կնքված պայմանագրի համաձայն, դատախազությունը փոխանցել է 2,224.2 հազ. դրամ «Գուրիկ» ՍՊԸ-ին, 01.03.2002թ. «տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման» պայմանագրի համաձայն 2002 թվականի ընթացքում փոխանցել է 5,000.0 հազ. դրամ «Դավիթ երթուղային տաքսի» ՓԲԸ-ին՝ մատուցած ծառայությունների և ձեռքբերված ավտոպահեստամասերի համար, 08.01.2003թ. կնքվել է N 2 պայմանագիրը՝ «Դավիթ երթուղային տաքսի» ՓԲԸ-ի հետ, ընթացիկ տեխնիկական սպասարկման, ավտոպահեստամասերի և քսանյութերի մատակարարման համար՝ 9,000.0 հազ. դրամ արժեքով: Գործարքներն իրականացվել են առանց պետական գնումների գործակալության մասնակցության, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջը:
- Համաձայն 01.06.2002 թ. Սյունիքի մարզի դատախազության և «Համլետ և Արթուր» ՍՊԸ-ի, 01.06.2002 թ. Գյումրիի կայազորի զինդատախազության և «Կ. Մովսիսյան և ընկերներ» ՍՊԸ-ի միջև կնքված ավտոպահեստամասերի գնման պայմանագրերի՝ դատախազությունը փոխանցել է մատակարարներին համապատասխանաբար՝ 105.5 հազ. դրամ և 113.0 հազ. դրամ: Պայմանագրերը կնքվել են առանց դատախազության համապատասխան լիազորագրերի:

«Կապի ծառայությունների վճար» հոդվածով 2002 թվականի ՀՀ պետական բյուջեով դատախազությանը հատկացվել է 19,595.8 հազ. դրամ: ՀՀ կառավարության 28.12.2002 թ. N 2059-Ն որոշումով 52,111.0 հազ. դրամ լրացուցիչ հատկացվել է դատախազությանը՝ կապի ծառայությունների վճարման գծով նախորդ բյուջետային տարիների արդյունքներով առաջացած պարտքերը մարելու համար:

2003 թվականի բյուջետային հայտում կապի ծառայությունների վճարման համար դատախազությունը նախատեսել է 40,000.0 հազ. դրամ, ՀՀ պետական բյուջեով հաստատվել և հատկացվել է 24,595.8 հազ. դրամ: 2002 և 2003 թվականներին բյուջեով հատկացված գումարը բավարարել է միայն դատախազությանը պատկանող 475 հեռախոսահամարների բաժանորդային վարձը վճարելու համար, իսկ դատախազության աշխատանքի համար անհրաժեշտ կապի այլ ծառայությունների (միջազգային խոսակցություններ, բջջային կապ, բուպեավճար, փոստային ծառայություն, հատուկ կապ) վճարման համար գումար չի հատկացվել: Արդյունքում՝ առ ուսումնասիրության պահը գոյացել է կրեդիտորական պարտք «ԱրմենՏել» ՀՉ ՓԲԸ-ին՝ 187,131.8 հազ. դրամի չափով:

«Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախս» հոդվածով 2002 և 2003 թվականների ՀՀ պետական բյուջեով դատախազությանը հատկացվել է համապատասխանաբար՝ 24,716.0

հազ. դրամ և 29,716.0 հազ. դրամ: 2003 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 17,000.0 հազ. դրամ հատկացվել է դատախազությանը նախորդ բյուջետային տարիների արդյունքներով առաջացած պարտքը մարելու համար:

Ուսումնասիրվել են դատախազության կողմից ստորաբաժանումներին սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի չափաբաժինները և փաստացի ծախսերը: 2002 թվականին ստորաբաժանումներին էլեկտրաէներգիայի ծախսի սահմանված չափաբաժինների գումարը կազմել է 25,216.0 հազ. դրամ: Փաստացի ծախսվել է 24,732.6 հազ. դրամ: Տարվա ընթացքում 7 ստորաբաժանում թույլ են տվել էլեկտրաէներգիայի գերածախս: ՀՀ պետական բյուջեով հատկացված գումարը բավարարել է դատախազության էլեկտրաէներգիայի ընդհանուր վարձերը վճարելուն՝ Շիրակի, Լոռվա, Արարատի մարզերի և Էրեբունի-Նուբարաշեն համայնքի դատախազությունների էլեկտրաէներգիայի ծախսի բացակայության պատճառով:

2003 թվականին էլեկտրաէներգիայի ծախսի սահմանված չափաբաժինը կազմել է 29,716.0 հազ. դրամ, փաստացի ծախսվել է 29,636.2 հազ. դրամ:

«Սարքեր և սարքավորումներ» հոդվածով դատախազությանը 2003 թվականին հատկացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված 13,000.0 հազ. դրամ: Դատախազությունը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության թույլտվությամբ մեկ աղբյուրից գնում կատարելու ձևով (09.12.2003թ. N 40 պայմանագիր) «Դելավեր» ՍՊԸ- ին է փոխանցել 11,903.4 հազ. դրամ՝ քրեագիտական տեխնիկա ձեռքբերելու համար:

Համաձայն 19.09.2003թ. N 66, 22.09.2003թ. N 67, 26.09.2003թ. N 68, 01.10.2003թ. N 69, 06.10.2003թ. N 70, 10.10.2003թ. N 71 պայմանագրերի, դատախազությունը «Տետրա-ինֆո» ՍՊԸ- ից գնել է անվտանգության սարքավորումներ՝ 1,136.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Գնումներն արհեստականորեն բաժանվել են առանձին չափաբաժինների, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջը:

2002 թվականին «Փափուկ գույք և հանդերձանք» հոդվածով դատախազությանը նախատեսվել է 49,100.0 հազ. դրամ: Գումարը ծախսվել է դատախազության աշխատակիցների համար համազգեստ ձեռքբերելու նպատակով: Պետական գնումների գործակալության 15.11.2002թ. ԱՊԶԲ-02/31 պայմանագրի համաձայն, դատախազությունը ստացել է 706 համազգեստ՝ 50,565.0 հազ. դրամ արժեքով: Գումարի չվճարված մնացորդը փոխանցվել է մատակարարին՝ 2003 թվականի համար նույն հոդվածով նախատեսված 1,780.4 հազ. դրամից:

«Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր» հոդվածով 2003 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 10,000.0 հազ. դրամ: Ստանալով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության թույլտվությունը, դատախազությունը մեկ աղբյուրից գնում կատարելու ձևով ձեռք է բերել «Կարկունավտո» ՍՊԸ-ից 3 հատ «Գ-ազ-3110» ավտոմեքենա՝ 11,628.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Գործարքն իրականացնելու համար դատախազությունը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ, կատարել է ներքին հոդվածային վերաբաշխում՝ փոխանցելով 1,628.0 հազ. դրամ «Գրասենյակային ապրանքներ և նյութեր» հոդվածից՝ «Տրանսպորտային միջոցների

ձեռքբերման ծախսեր» հողվածին, որը 1.2%-ով գերազանցում է ներքին հողվածային վերաբաշխման թույլատրելի սահմանը:

2003 թվականին դատախազությանը «Կապիտալ նորոգումների ծախսեր» հողվածով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից լրացուցիչ հատկացվել է 16,162.0 հազ. դրամ, որից՝ 10,750.0 հազ. դրամ ՀՀ կառավարության 23.04.2003թ. N 454-Ա որոշումով Արագածոտնի մարզի դատախազության վարչական շենքի կապիտալ նորոգման գծով 1999 թվականին առաջացած «ՄԵՍ» ՍՊԸ պարտքը մարելու և 5,412.0 հազ. դրամ՝ 24.12.2003թ. N 1708-Ա որոշումով Շիրակի մարզի դատախազության շենքի տանիքը և կաթսայատունը վերանորոգելու համար:

2003 թվականի ընթացքում, համաձայն դատախազության և «ՄՏՊ» ՍՊԸ-ի միջև 15.12.2003թ. կնքված N 51 պայմանագրի, 3,312.0 հազ. դրամ՝ «Այլ ծառայությունների ձեռքբերում» հողվածից փոխանցվել է «ՄՏՊ» ՍՊԸ-ին՝ դատախազության վարչական շենքի սանհանգույցները վերանորոգելու համար: Գործարքն իրականացվել է առանց պետական գնումների գործակալության մասնակցության, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջը :

2003 թվականին դատախազությանը հատկացվել է 1,237.7 հազ. դրամ արտաբյուջետային գումար՝ «Պաշտոնական տրանսֆերտներ միջազգային կազմակերպություններից» հողվածով:

Դատախազության հաշվեկշռում առկա է 17 շենք և 2 շինություն՝ 310,524.0 հազ. դրամ ընդհանուր հաշվեկշռային արժեքով: Հաշվեկշռում առկա է նաև 67 ավտոմեքենա, որից 3-ը՝ գողացվել էին 1990-1992 թվականներին, 14-ը՝ 80-ական թվականների արտադրության են, մաշվածության պատճառով պիտանի չեն շահագործման և ենթակա են դուրսգրման:

Ուսումնասիրության վերջնական արդյունքներին ՀՀ գլխավոր դատախազության ֆինանսատնտեսագիտական վարչության պետը ծանոթացել է 2004 թվականի հունիսի 3-ին, առարկություններ չի ունեցել, որի վերաբերյալ կազմվել է ծանոթացման արձանագրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. 2002 և 2003 թվականներին ՀՀ պետական բյուջեից դատախազության պահպանման ծախսերի համար նախատեսված համապատասխանաբար՝ 1,130,760.0 հազ. դրամի և 1,377,306.7 հազ. դրամի փաստացի ֆինանսավորումն իրականացվել է 100%-ով: 2003 թվականին, նախորդ տարվա նկատմամբ, դատախազության պահպանման ծախսերն աճել են 246,546.7 հազ. դրամով կամ 21.8%-ով:
2. Աշխատավարձի տարեկան ֆոնդը հաշվարկվել է՝ կիրառելով 12.1 գործակից, որի հետևանքով դատախազությանը չի ընձեռվել հնարավորություն՝ խրախուսել աշխատակիցներին և, ըստ անհրաժեշտության, աշխատանքային պայմանագրերով ընդգրկել համապատասխան մասնագետների:

3. Առանձին դեպքերում ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 24-րդ հոդվածների պահանջների խախտումներով:
4. «Կապի ծառայություններ» հոդվածի ոչ բավարար պլանավորման արդյունքում գոյացել է կրեդիտորական պարտք՝ 187,131.8 հազ. դրամի չափով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ գլխավոր դատախազությանը՝

1. Համակարգի կարիքների համար ապրանքների, ծառայությունների գնումները իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
2. Ձեռնարկել միջոցառումներ՝ բացառելու կրեդիտորական և դեբիտորական պարտքերի գոյացման սուբյեկտիվ պատճառները:
3. Ծախսային հոդվածների հստակ պլանավորման նպատակով բյուջետային հայտերը հիմնավորել համապատասխան հաշվարկներով:
4. Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

2002 թվականին ՀՀ գլխավոր դատախազությանը նախատեսված միջոցները և ներքին հողվածային վերաբաշխումները

հազ. դրամ

<i>Տնտեսագիտական դասակարգման հողվածների անվանումը</i>	<i>2002թ. բյուջե</i>	<i>Փոփոխություններ ՀՀ կառավարության որոշումներով (+ -)</i>	<i>Ներքին հողվածային փոփոխություններ (+ -)</i>	<i>Ճշտված բյուջե</i>
1	2	3	4	5
Աշխատավարձ	778297.7	+1363.8	-	779,661.5
Պարտադիր սոց. ապահովագրության վճարներ	105,368.2	-	-	105,368.2
Այլ տրանսֆերտներ	3,600.0	+18,120.0	-	21,720.0
Գրասենյակային ապրանքներ և նյութեր	25,000.0	-	-800.0	24,200.0
Գույք և սարքավորումներ	-	-	+110.7	110.7
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	6491.3	+8,182.9	-	14,674.2
Տրանսպորտի պահպանման ծախսեր	33,994.0	+2,110.6	-	36,104.6
Կապի ծառայությունների վճարներ	19,595.8	+52,111.0	-	71,706.8
Էլ. էներգիայի, վառելիքի և ջեռուցման վճարներ	24,716.0	-	+200.0	24,916.0
Կոմունալ ծախսեր	1,451.2	-	-	1,451.2
Ներկայացուցչական ծախսեր	1,227.5	+30.0	-	1,257.5
Այլ ծառայությունների ձեռքբերում	-	-	+400.0	400.0
Փափուկ գույք և հանդերձանք	49,100.0	-	-310.7	48,789.3
Այլ ծախսեր	-	-	+400.0	400.0
Ընդամենը	1,048,841.7	+81,918.3	-	1,130,760.0

2003 թվականին ՀՀ գլխավոր դատախազությանը նախատեսված միջոցները
և ներքին հողվածային վերաբաշխումները

հազ. դրամ

<i>Տնտեսագիտական դասակարգման հողվածների անվանումը</i>	<i>2003թ. բյուջե</i>	<i>Փոփոխություններ ՀՀ կառավարության որոշումներով (+ -)</i>	<i>Ներքին հողվածային փոփոխություններ (+ -)</i>	<i>Ճշտված բյուջե</i>
1	2	3	4	5
Աշխատավարձ	778,297.7	+198,286.2	-	976,583.9
Պարտադիր սոց. ապահովագրության վճարներ	105,368.2	+12,103.7	-	117,471.9
Այլ տրանսֆերտներ	83,672.5	-	-	83,672.5
Գրասենյակային սպրանքներ և նյութեր	25,000.0	-	-4,201.0	20,798.8
Գույք և սարքավորումներ	2,000.0	-	-	2,000.0
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	6,491.3	+3,853.4	-	10,344.7
Տրանսպորտի պահպանման ծախսեր	38,994.0	-	-	38,994.0
Կապի ծառայությունների վճարներ	24,595.8	-	-	24,595.8
Էլ. էներգիայի, վառելիքի և ջեռուցման վճարներ	29,716.0	+17,000.0	-	46,716.0
Կոմունալ ծախսեր	1,538.4	-	-	1,538.4
Շենքերի վարձակալություն	-	-	+175.0	175.0
Ներկայացուցչական ծախսեր	2,227.5	-	-	2,227.5
Սարքեր և սարքավորումներ	13,000.0	-	-	13,000.0
Տրանսպորտային միջոցների ձեռքբերում	10,000.0	-	+1,628.0	11,628.0
Այլ ակտիվների ձեռքբերում	5,000.0	-	-	5,000.0
Սարքավորումների վարձակալություն	-	-	+92.8	92.8
Այլ ծառայությունների ձեռքբերում	4,000.0	-	-175.0	3,825.0
Փափուկ գույք և հանդերձանք	-	-	+1,780.4	1,780.4
Այլ ծախսեր	-	-	+700.0	700.0
Կապիտալ վերանորոգում	-	+16,162.0	-	16,162.0
Ընդամենը	1,129,901.4	+247,405.3	-	1,377,306.7

2002-2003 թվականների ՀՀ գլխավոր դատախազությանը
նախատեսված միջոցների՝ ըստ տնտեսագիտական դասակարգման
հոդվածների տեսակարար կշիռը

հազ. դրամ

Տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	2002թ.		2003թ.	
	Ճշտված բյուջե	Տեսակարար կշիռ (%)	Ճշտված բյուջե	Տեսակարար կշիռ (%)
1	2	3	4	5
Աշխատավարձ	779,661.5	68.9	976,583.9	70.8
Պարտադիր սոց. ապահովագրության վճարներ	105,368.2	9.4	117,471.9	8.5
Այլ տրանսֆերտներ	21,720.0	1.9	83,672.5	6.1
Գրասենյակային ապրանքներ և նյութեր	24,200.0	2.1	20,798.8	1.5
Գույք և սարքավորումներ	110.7	-	2,000.0	0.1
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	14,674.2	1.3	10,344.7	0.7
Տրանսպորտի պահպանման ծախսեր	36,104.6	3.2	38,994.0	2.8
Կապի ծառայությունների վճարներ	71,706.8	6.4	24,595.8	1.7
Էլ. էներգիայի, վառելիքի և ջեռուցման վճարներ	24,916.0	2.2	46,716.0	3.3
Կոմունալ ծախսեր	1,451.2	0.2	1,538.4	0.1
Շենքերի վարձակալություն	-	-	175.0	-
Ներկայացուցչական ծախսեր	1,257.5	0.1	2,227.5	0.2
Սարքեր և սարքավորումներ	-	-	13,000.0	0.9
Տրանսպորտային միջոցների ձեռքբերում	-	-	11,628.0	0.8
Այլ ակտիվների ձեռքբերում	-	-	5,000.0	0.4
Սարքավորումների վարձակալություն	-	-	92.8	-
Այլ ծառայությունների ձեռքբերում	400.0	-	3,825.0	0.3
Փափուկ գույք և հանդերձանք	48,789.3	4.3	1,780.4	0.1
Այլ ծախսեր	400.0	-	700.0	-
Կապիտալ վերանորոգում	-	-	16,162.0	1.7
Ընդամենը	1,130,760.0	100.0	1,377,306.7	100.0

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեից համայնքներից հատկացված միջոցների՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխանության մասին

Վերահսկողության հիմքը – Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության ծրագրի 19-րդ կետը և Վերահսկիչ պալատի նախագահի 12.01.2005 թվականի թիվ 3 հրամանը:

Վերահսկողության նպատակը – վերլուծել 2004 թվականի ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված ֆինանսական միջոցների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքներին:

Վերահսկողության օբյեկտը – ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրված միջոցները:

Վերահսկողությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

- ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների և այլ միջոցների տրամադրման վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղեկատվությունը, ուղեկցող այլ փաստաթղթեր,
- ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված միջոցների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումները,
- համայնքների բյուջեների կատարման վերաբերյալ գանձապետական հաշվետվությունները, ուղեկցող այլ փաստաթղթեր,
- ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ) հարկային եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը:

Համաձայն «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով հաստատված հատկացումների, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, տրանսֆերտային վճարումները ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներ կազմել են 10,696,131.4 հազ. դրամ, որից, համաձայն նույն օրենքի 8-րդ հոդվածի, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները՝ 10,696,000.0 հազ. դրամ, նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները՝ 131.4 հազ. դրամ: Համայնքների բյուջեներին հաշվարկված համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարը համապատասխանում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-

րդ հողվածով սահմանված չափին՝ նախորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի (267,400,000.0 հազ. դրամ) ոչ պակաս, քան 4 տոկոսին:

2004 թվականին համահարթեցման դոտացիաների ձևով տրամադրված հատկացումների ընդհանուր գումարը՝ ըստ առանձին համայնքների, հատկացվել է ամբողջությամբ և ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 12.02.2004թ. N216-Ն որոշման համապատասխան, ըստ եռամսյակների բաշխումը կազմել է համապատասխանաբար՝ 20,0%, 20,5%, 30,5% և 29,0%:

Համաձայն «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, «սույն օրենքով համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների ձևով տրամադրվող հատկացումների ընդհանուր գումարը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների 2002 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների փոխհատուցման համար Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեից հատկացվող գումարները»:

Համաձայն նույն օրենքի 10-րդ հոդվածի 2բ) մասի, «Հայաստանի Հանրապետության օրենքներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների 2002 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների փոխհատուցման ուղղման ենթակա տարեկան գումարը՝ 113,879.9 հազ. դրամ»:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված են դոտացիաների հաշվարկման հիմքում դրվող գործոնները՝ «Դոտացիաների գումարների չափը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների բյուջեների, վերջիններս տարանջատելով՝

1. 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների,
2. 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների:

Դոտացիաների գումարների չափն ըստ 300-ից ավելի բնակիչ ունեցող առանձին համայնքների, որոշվում է՝ հիմք ընդունելով վերջիններիս տնտեսական վիճակը բնութագրող հետևյալ գործոնները՝

- ա) համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակը (այսուհետ՝ «ա» գործոն),
- բ) համայնքի բնակչության թիվը (այսուհետ՝ «բ» գործոն)»:

Համաձայն նույն օրենքի 6-րդ հոդվածի «Դոտացիաների հաշվարկման կարգը» 3-րդ մասի՝ «Յուրաքանչյուր բյուջետային տարում դոտացիաների ընդհանուր գումարների չափերը՝ ըստ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող, ինչպես նաև «ա» և «բ» գործոններով դոտացիաներ ստացող համայնքների, սահմանվում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով:

300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիաները հաշվարկվում են հավասարաչափ»:

«ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2ա) մասով հաստատվել են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների ձևով տրամադրվող հատկացումների՝ «ըստ գործոնների բաշխման ենթակա հետևյալ գումարները՝

«ա» գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքներին տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ 4,300,000.0 հազ. դրամ, որից 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքին տրամադրվող դոտացիայի տարեկան գումարը՝ 1,500.0 հազ. դրամ,

«բ» գործոնով տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ 6,282,120.1 հազ. դրամ»: Փաստորեն, «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան հաշվարկված՝ 2004 թվականի պետական բյուջեից համայնքների բյուջեներին «ա» և «բ» գործոններով տրամադրված համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարը կազմել է 10,582,120.1 հազ. դրամ կամ նախորդ բյուջետային տարվա համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 3,96%-ը, որը չի ապահովում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի պահանջը «Ֆինանսական համահարթեցման մասին» և «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքների անհամապատասխանության պատճառով:

Ի տարբերություն 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների, գույքային հարկերի արտոնությունների փոխհատուցման գումարներ ունեցող 300-ից ոչ ավելի բնակչով բոլոր 26 համայնքներին հատկացումները գերազանցել են համահարթեցման դոտացիայի հաշվարկային չափը (1,500.0 հազարական դրամ) ընդամենը 1,435.1 հազ. դրամով: Մասնավորապես, Վահագնաձոր, Եղվարդ (Սյունիքի մարզ), Նոր Ազնաբերդ, Կիրանց համայնքներին հատկացումները կազմել են համապատասխանաբար՝ 1,579.8, 1,594.7, 1,612.1, 2,238.8 հազ. դրամ: Փաստորեն, գույքային հարկերի արտոնություններ ունեցող 300-ից ոչ ավելի բնակչով համայնքներին 1,435.1 հազ. դրամի արտոնությունների փոխհատուցման գումարները տրամադրվել են՝ ի հաշիվ համահարթեցման դոտացիայի ընդհանուր ծավալի:

Համաձայն «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 17-րդ մասի՝ «համայնքների բյուջեներին 2004 թվականին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկներում կիրառված՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված ցուցանիշները տարվա ընթացքում ճշգրտվելու դեպքում, մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը վերահահաշվարկել սույն օրենքի N 2 հավելվածով հատկացված դոտացիաների գումարները և դրանք հայտնել տեղական ինքնակառավարման մարմիններին: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների 2002 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների գումարների ճշգրտման արդյունքում դրանց ընդհանուր գումարը կտարբերվի սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով հաստատված սահմանաչափից, ապա այդ տարբերության չափով ենթակա է

ճշգրտման սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված «բ» գործոնով տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը»: Տարվա ընթացքում, ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաներ տրամադրելու համար «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի՝ ըստ առանձին համայնքների բաշխվող վերահաշվարկված գումարների մասին» 25.06.2004թ. N948-Ն որոշմամբ գույքային հարկերի գծով արտոնությունների փոխհատուցման գումարը դարձել է 66,908.6 հազ. դրամ և համապատասխանաբար փոփոխվել են օրենքի N2 հավելվածում նշված ցուցանիշները: Տրամադրված արտոնությունների ճշգրտված գումարի տարբերության՝ 46,971.3 հազ. դրամի չափով, ավելացել է «բ» գործոնով տրամադրվող դոտացիայի գումարը, և, փաստորեն, «ա» և «բ» գործոններով հատկացված համահարթեցման դոտացիայի ընդհանուր ծավալը կազմել է 10,629,091.4 հազ. դրամ կամ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների 3,97%-ը:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 21.05.2003թ. N 4/1-1-4206 գրության, ՀՀ ԿԱ ՀՊԾ 03.09.2003թ. N3743/2-3 գրությամբ ներկայացրել է «Գույքահարկի մասին», «Գյումրի քաղաքի վերականգնման մասին», «Հողի հարկի մասին» և «Հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքների համապատասխան՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների 2002 թվականի գույքահարկի և հողի հարկի բոլոր արտոնությունների գումարները (113,879.9 հազ. դրամ): Տարվա ընթացքում, ՀՀ ԿԱ ՀՊԾ 28.04.2004թ. N2095/2-3 գրությամբ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացվել է գույքային հարկերի արտոնությունների ճշգրտված գումարների (66,908.6 հազ. դրամ) վերաբերյալ տեղեկատվություն, նշելով, որ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության նախորդ գրությամբ ՀՀ ԿԱ ՀՊԾ չէր առաջադրվել առանձնացնել համայնքի ավագանու կողմից տրամադրված արտոնությունների գումարները և վերջիններս գերազանցապես ներառվել են համայնքների հողի հարկի և գույքահարկի արտոնությունների ցուցանիշներում: Փաստորեն, «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ընդունման ժամանակ հնարավոր չէր ամրագրել ՀՀ օրենքներով համայնքների հողի հարկի և գույքահարկի արտոնությունների ճշգրիտ ցուցանիշները, իսկ այդ գումարի ներառումը համահարթեցման դոտացիայի ընդհանուր ծավալի մեջ չի ապահովում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի ու «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի պահանջը, և հատկացումը 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներին պետք է իրականացվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ պարբերության համապատասխան՝ «Ազգային ժողովի ընդունած օրենքներով համայնքների եկամուտների նվազեցումը և ծախսերի ավելացումը պետք է փոխհատուցի պետությունը»:

«ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N2 հավելվածում կատարված փոփոխությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ համահարթեցման դոտացիաների չափի փոփոխությունը պայմանավորված է նաև հանրապետության առանձին համայնքների մշտական

բնակչության թվի փոփոխմամբ: Այսպես, համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 02.04.2004թ. N4/1-2-3635 գրությանը ներկայացված՝ ըստ առանձին համայնքների դոտացիաների գումարի բաշխման նպատակով իրականացված հաշվարկներում համայնքների բնակչության թիվը 2003 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 3251461 մարդ: Դոտացիաների վերահաշվարկման ժամանակ համայնքների բնակչության թիվը փոփոխվել է, կազմելով 3252651 մարդ, հիմք ընդունելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 23.12.2003թ. N25-7/104-1305, 20.04.2004թ. N25-7/23-439, 26.04.2004թ. N25-7/24-457 գրությունները՝ Արմավիրի մարզի Ոսկեհատ, Լոռու մարզի Արջուտ, Արագածոտնի մարզի Արա, Արարատի մարզի Ջորակ համայնքների մշտական բնակչության թվի ավելացման վերաբերյալ, համապատասխանաբար՝ 297, 557, 24 և 312 մարդով: Արդյունքում՝ այդ համայնքների համահարթեցման դոտացիայի չափն աճել է համապատասխանաբար՝ 1,508.1, 2,788.3, 52.4 և 1,638.2 հազ. դրամով, ընդամենը 5,987.0 հազ. դրամ: Փաստորեն, եթե տարվա ընթացքում գույքային հարկերի և արտոնությունների գումարների ճշգրտման իրավունքը վերապահված է «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, ապա բնակչության թվի փոփոխման արդյունքում համահարթեցման դոտացիայի չափի փոփոխությունը նախատեսված չէ վերոհիշյալ օրենքով:

2004 թվականին համահարթեցման դոտացիաների ձևով տրամադրված ընդհանուր գումարի բաշխումը «ա» և «բ» գործոնների համապատասխանում է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին՝ առաջինը գերազանցում է ՀՀ 2002 թվականի պետական բյուջեով փաստացի եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի մուտքերի հանրագումարի՝ 17,133,967.7 հազ. դրամի 25%-ը, երկրորդը՝ եկամտահարկի՝ 12,486,768.7 հազ. դրամի 10%-ը: Օրենքի այս պահանջների թույլատրելի սահմաններում առաջացել է ըստ գործոնների ընդհանուր ծավալների բաշխման հնարավոր՝ 5,049,951.3 հազ. դրամի միջակայք, որի սահմաններում «ա» և «բ» գործոնների թույլատրելի փոփոխությունն ավելի մեծ ազդեցություն ունի առանձին՝ 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների համահարթեցման դոտացիայի չափի փոփոխությանը, քան դոտացիայի հաշվարկի հիմք հանդիսացող գործոնները:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից թույլատրելի միջակայքում հաշվարկված յոթ տարբերակներից ընտրվել և «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2բ) մասով հաստատվել են «ա» և «բ» գործոններով տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարները, որոնց կիրառման դեպքում նվազագույնի է հասցվել նախորդ տարվա համեմատ ընդհանուր՝ 678,433.6 հազ. դրամ պակաս դոտացիա ստացող համայնքների թիվը՝ 107 (ավելի մեծ «ա» գործոնի ընտրության դեպքում պակաս ստացվող դոտացիայի հանրագումարը կնվազեր մինչև 648,037.0 հազ. դրամ): Վանաձոր, Գյումրի, Գիլիջան, Զանաքեռ-Չեյքուն, Չարենցավան, Արմավիր, Արտաշատ, Մեծամոր, Ստեփանավան, Աբովյան, Սպիտակ, Գավթաշեն համայնքներին պակաս է տրամադրվել համապատասխանաբար՝ 134,793.3, 98,689.7, 42,363.6, 41,705.6, 20,795.9, 19,201.3, 16,363.7, 15,630.1, 14,410.1, 14,268.0, 14,251.9, 14,173.2 հազ. դրամ համահարթեցման դոտացիա կամ ընդամենը միայն նշված 12 (այդ թվում՝ աղետի գոտու

հինգ քաղաքային) համայնքների բյուջեներին՝ 446,646.4 հազ. դրամ: Միաժամանակ, Կապան, Հրազդան, Վաղարշապատ, Իջևան, Արարատ, Վեդի, Սիսիան քաղաքային համայնքների դոտացիան ավելացել է համապատասխանաբար՝ 59,423.2, 35,578.6, 25,635.6, 21,116.0, 16,010.8, 13,602.4, 13,483.3 հազ. դրամով, Երևանի ինը թաղային համայնքներին՝ 823,845.6 հազ. դրամով կամ նշված 16 համայնքներինը ընդամենը՝ 1,008,695.5 հազ. դրամով: Փաստորեն, նախորդ տարվա համեմատ, 2004 թվականին համահարթեցման դոտացիայի՝ 1,544,000.0 հազ. դրամով աճի և 107 համայնքներին պակաս տրամադրված՝ 678,433.6 հազ. դրամ դոտացիայի (գումարային՝ 2,222,433.6 հազ. դրամ) 37,1%-ը բաժին է ընկել Երևանի ինը թաղային համայնքներին:

Վերլուծությունը ցույց է տալիս՝ հաշվի առնելով դոտացիաների գումարների չափի կախվածությունը առանձին համայնքների տնտեսական վիճակը բնութագրող՝ համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող գույքային հարկերի գործոնից, համահարթեցման դոտացիայի ընդհանուր ծավալի բաշխումը նպատակահարմար է իրագործել «ա» գործոնի մեծ արժեքի կիրառմամբ, որի արդյունքում ցածր տնտեսական վիճակ ունեցող համայնքներին (գույքային հարկերի ցուցանիշները ցածր են միջին հանրապետականից) կհաշվարկվի ավելի շատ դոտացիա, օժանդակելով համայնքներում ֆինանսական համահարթեցում հասկացության իրականացմանը:

2003 թվականի համեմատ, 2004 թվականին համայնքների բյուջեներին տրամադրված համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարն աճել է 16,9%-ով կամ 1,544,000.0 հազ. դրամով: «ՀՀ 2000 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով համայնքների բյուջեներին տրամադրվել էր ընդամենը 6,095,684.5 հազ. դրամ համահարթեցման դոտացիա կամ չորս տարվա ընթացքում ընդհանուր գումարի աճը կազմել է 4,600,315.5 հազ. դրամ (43,0%), սակայն 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների (2004 թվականին՝ 196 համայնք) բյուջեներին տրամադրվող դոտացիայի չափը յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով մնացել է անփոփոխ՝ 1,500.0 հազ. դրամ: Բացի այդ, վերլուծությունը ցույց է տալիս, որ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքին, տնտեսական գործոններով չկապակցված, 1,500.0 հազ. դրամ համահարթեցման դոտացիայի տրամադրումը չի հիմնավորվում և առանձին դեպքերում 300-ից մի քանի մարդ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին տրամադրվում է զգալի պակաս համահարթեցման դոտացիա: Այսպես, 2004 թվականին 1,500.0 հազ. դրամից պակաս համահարթեցման դոտացիա է տրամադրվել 300-ից ավելի բնակիչ ունեցող 117 համայնքների: Մասնավորապես, սահմանային թիվը 10%-ով գերազանցող մինչև 331 բնակիչ ունեցող Արևադաշտ, Շամուտ, Սալվարդ, Արա, Թթուջուր, Արփունք, Խաչարձան համայնքների բյուջեներին տրամադրված համահարթեցման դոտացիան չի գերազանցում 650 հազ. դրամը, կազմելով՝ 603.0, 610.1, 617.6, 625.5, 633.3, 641.1, 647.0 հազ. դրամ:

Այսպիսով, վերլուծությունը ցույց է տալիս, որ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված համահարթեցման դոտացիայի ընդհանուր ծավալի թերի կանոնակարգված բաշխումը՝ ըստ «ա» և «բ» գործոնների ու առանձին համայնքների դոտացիայի հաշվարկման կարգի անկատարությունը թույլ չի տալիս ապահովել

սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ ֆինանսական համահարթեցում հասկացությունը՝ «Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումն է»:

2004 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Արարատի մարզի Արտաշատ և Վայոց ձորի մարզի Աղավնաձոր համայնքների բնականոն գործունեությանն աջակցելու նպատակով ՀՀ կառավարության համապատասխանաբար 23.12.2004թ. N1785-Ա և 20.05.2004թ. N714-Ա որոշումներով հատկացվել է 10,000.0 և 9,573.0 հազ. դրամ այլ դոտացիա:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Շիրակի մարզի Հայկաձոր, Ամասիա և Գեղարքունիքի մարզի Սևան համայնքներին ՀՀ կառավարության 11.03.2004թ. N270-Ա և N272-Ա որոշումներով «Ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ» հոդվածով, առանց տրամադրման ձևով նշելու, հատկացվել է համապատասխանաբար՝ 1,800.0 հազ. դրամ՝ խմելու ջրի ծախսերը փոխհատուցելու, 3,400.0 հազ. դրամ՝ արվեստի դպրոցի աշխատողներին աշխատավարձ վճարելու, 20,000.0 հազ. դրամ՝ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և մատակարարված գազի դիմաց առաջացած պարտքերը մարելու համար:

Համաձայն «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները, կազմել են 131.4 հազ. դրամ, որն ուղղվել է Ալավերդու համայնքի բնապահպանական ծրագրերի իրականացմանը:

«ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ընդունված է 11.06.2004թ.) 5-րդ հոդվածով համայնքներին տրվել են 416,500.0 հազ. դրամ սուբվենցիաներ, որը, ըստ համապատասխան ծրագրերի բաշխվել է 16 համայնքների միջև: «ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի N216-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող լրացուցիչ միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 25.06.2004թ. N915-Ն որոշմամբ Արմավիր համայնքին հատկացվել է ևս 62,000.0 հազ. դրամ սուբվենցիա:

2004 թվականի ընթացքում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին N N 334-Ա, 400-Ա, 688-Ա, 716-Ա, 730-Ա, 731-Ա, 781-Ա, 783-Ա, 862-Ա, 920-Ա, 921-Ա, 923-Ա, 1030-Ա, 1205-Ա, 1242-Ա, 1268-Ն, 1307-Ն, 1534-Ն, 1535-Ն, 1575-Ն, 1798-Ա որոշումներով Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերի 79 համայնքների բյուջեներին ևս տրվել են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ, ընդամենը՝ 244,581.3 հազ. դրամի:

Այսպիսով, 2004 թվականի ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացվել է ընդամենը՝ 11,463,985.7 հազ. դրամ, այդ թվում՝

- համահարթեցման դոտացիա՝ 10,629,091.4 հազ. դրամ,

- գույքային հարկերի արտոնությունների փոխհատուցում՝ 66,908.6 հազ. դրամ,
- այլ դոտացիա՝ 19,573.0 հազ. դրամ,
- նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա՝ 723,212.7 հազ. դրամ,
- ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ (տրամադրման ձևը նշված չէ)՝ 25,200.0 հազ. դրամ:

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով պետական բյուջեի ծախսերում համայնքների բյուջեներին նախատեսվող հատկացումների՝ «բ» սուբվենցիաներ՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ: Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավասու է հետ պահանջել համայնքից պետական բյուջեից համայնքին հատկացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված գումարները: Սուբվենցիաների տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով»: Սակայն սուբվենցիաների տրամադրման միասնական կարգ ՀՀ կառավարության կողմից չի սահմանվել, իսկ 25.06.2004թ. N915-Ն որոշումը սահմանում է սույն որոշման N7 հավելվածով համայնքների բյուջեներին տրամադրված 478,500.0 հազ. դրամ սուբվենցիաների հատկացումը և օգտագործումը կանոնակարգող առանձին դրույթներ:

«ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի հիման վրա ՀՀ կառավարության 25.06.2004թ. N915-Ն որոշմամբ Լոռու մարզի Սարամեջ գյուղի գազիֆիկացման նպատակով համայնքին հատկացվել է 80,000.0 հազ. դրամի սուբվենցիա: Նախորդ տարվա վերջին, սուբվենցիաների տրամադրման կարգի բացակայության պայմաններում, ՀՀ կառավարության 11.12.2003թ. N1650-Ա որոշմամբ Սարամեջ գյուղի գազիֆիկացման աշխատանքներն ավարտելու համար համայնքին հատկացվել էր 20,000.0 հազ. դրամի սուբվենցիա: Հետագայում, մարզպետարանը գյուղի գազիֆիկացման ֆինանսավորման աջակցության վերաբերյալ ՀՀ կառավարությանը 12.04.2004թ. N006/685-01 գրությամբ հայտնել է՝ «Անհրաժեշտ է կառուցել 10 կմ խողովակաշար, որի համար անհրաժեշտ կլինի 80,0 մլն դրամ: Խնդրում են Ձեր միջնորդությունը «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ին՝ հատկացնելու մնացած 60,0 մլն դրամ գումարը»: Փաստորեն, գազիֆիկացման նպատակով Սարամեջ համայնքին պահանջված 80.0 մլն դրամի փոխարեն հատկացվել է 100,000.0 հազ. դրամ, որից՝ ըստ Սպիտակի տարածքային գանձապետական բաժանմունքում բացված համապատասխան հաշվի մնացորդը առ 10.02.2005թ. կազմել է 33,500.5 հազ. դրամ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված պաշտոնական տրանսֆերտների ձևով ստացվող հատկացումների՝

«բ» պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)»:

2004 թվականի պետական բյուջեից ՀՀ կառավարության որոշումներով պահուստային ֆոնդի հաշվին համայնքներին հատկացվել է 244,581.3 հազ. դրամ սուբվենցիա: ՀՀ կառավարության 20.05.2004թ. N N 716-Ա, 731-Ա, 25.06.2004թ. N N 920-Ա, 921-Ա, 923-Ա և

17.06.2004թ. N1798-Ա որոշումներով Եղեգիս, Վարդահովիտ, Կարմրաշեն, Հացաշեն, Արին և Վայք համայնքների բյուջեներին տեղական ինքնակառավարման մարմնի և նրա ենթակայության հիմնարկների աշխատողների աշխատավարձերի ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջացած պարտքերը մարելու նպատակով հատկացվել է ընդամենը 29,116.4 հազ. դրամի սուբվենցիա: Փաստորեն, առանձին համայնքների ղեկավարներ, խախտելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, չեն ապահովել համայնքի բյուջեի կատարումը, իսկ ՀՀ կառավարությունը սուբվենցիայի ձևով մարել է աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության պարտքերը: Ընդ որում, եթե Արին և Կարմրաշեն համայնքներին հատկացված համապատասխանաբար՝ 396.7 և 803.9 հազ. դրամ սուբվենցիան պակաս է համայնքի բյուջեի ճշտված պլանի և առ 01.01.2004թ. գանձապետական հաշվետվությունում ամրագրված մարվող ծախսատեսակի դրամարկղային ծախսի տարբերությունից՝ 1,530.4 և 2,020.5 հազ. դրամից, ապա Եղեգիս և Վարդահովիտ համայնքներին հատկացված համապատասխանաբար՝ 4,000.0 և 4,491.2 հազ. դրամ սուբվենցիան գերազանցում է վերջինս, որը կազմում է 1,383.9 և 2,669.6 հազ. դրամ:

Արտենիի գյուղապետարանի կոմունալ ծախսերի գծով նախորդ տարիներին առաջացած պարտքի մարման նպատակով ՀՀ կառավարության 29.10.2004թ. N1535-Ն որոշումով համայնքին հատկացվել է 2,500.0 հազ. դրամի սուբվենցիա:

ՀՀ կառավարության 17.06.2004թ N 862-Ա որոշմամբ Սյունիքի մարզի Մեղրի, Ագարակ, Ալղարա, Գուղեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն համայնքներին հատկացվել է 4,267.2 հազ. դրամ՝ այդ համայնքների բյուջեներ հողի հարկ վճարող հանդիսացող ֆիզիկական անձանց՝ 2004 թվականի հողի հարկը վճարելու համար: Փաստորեն, համայնքների ղեկավարները, խախտելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները, չեն ապահովել բյուջեի կատարումը և չեն իրականացրել պետության պատվիրակված լիազորությունը՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հողի հարկի գանձումը, իսկ այդ համայնքներին ֆիզիկական անձանցից չգանձված հողի հարկի գումարի չափով տրամադրվել է սուբվենցիա: ՀՀ կառավարության 17.09.2004թ. N1268-Ն որոշման 6-րդ մասով Գյումրի քաղաքում կառուցված Նորվեգական թաղամասի բարեկարգման աշխատանքներին խանգարող ավտոտնակների տերերին տրամադրվել է 5,639.6 հազ. դրամ հատուցում:

Փաստորեն, ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումներով պահուստային ֆոնդի հաշվին համայնքներին պարտքերի մարման, դրամական հատուցման և հարկերի վճարման նպատակով 35,883.6 հազ. դրամի սուբվենցիաների հատկացումները հակասում են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասի բ) ենթակետերին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածի 1.4-րդ մասերով ամրագրված պաշտոնական

տրանսֆերտների ձևով ստացվող հատկացումներում առկա է անհամապատասխանություն.
առաջինում բացակայում է «այլ դոտացիաներ» դրույթը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացվել է ընդամենը 11,463,985.7 հազ. դրամ, այդ թվում՝
 - համահարթեցման դոտացիա՝ 10,629,091.4 հազ. դրամ,
 - գույքային հարկերի արտոնությունների փոխհատուցում՝ 66,908.6 հազ. դրամ,
 - այլ դոտացիա՝ 19,573.0 հազ. դրամ,
 - նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա՝ 723,212.7 հազ. դրամ,
 - ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ (տրամադրման ձևը նշված չէ)՝ 25,200.0 հազ. դրամ:
2. «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով համայնքների բյուջեներին «ա» և «բ» գործոններով տրամադրված համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարը կազմել է 10,582,120.1 հազ. դրամ կամ նախորդ բյուջետային տարվա համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի՝ 267,400,000.0 հազ. դրամի 4 տոկոսից պակաս, որը չի ապահովում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի պահանջը:
3. Գույքային հարկերի արտոնություններ ունեցող 300-ից ոչ ավելի բնակիչներով բոլոր 26 համայնքներին 1,435.1 հազ. դրամի արտոնությունների փոխհատուցման գումարները տրամադրվել են՝ ի հաշիվ համահարթեցման դոտացիայի ընդհանուր ծավալի:
4. 2004 թվականին գույքային հարկերի արտոնությունների գումարների ներառումը համահարթեցման դոտացիայի մեջ նվազեցրել է համայնքների բյուջեներին հատկացված համահարթեցման դոտացիաների ընդհանուր ծավալը և այդ գումարների տրամադրումը 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներին պետք է իրականացվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ պարբերության համապատասխան՝ «Ազգային ժողովի ընդունած օրենքներով համայնքների եկամուտների նվազեցումը և ծախսերի ավելացումը պետք է փոխհատուցի պետությունը»:
5. Տարվա ընթացքում Ոսկեհատ, Արջուտ, Արա, Զորակ համայնքների բնակչության թվի փոփոխության արդյունքում հանրապետության համայնքներին տրամադրված համահարթեցման դոտացիաների չափի փոփոխությունը նախատեսված չէ «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով:

6. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված համահարթեցման դոտացիայի ընդհանուր ծավալի՝ ըստ «ա» և «բ» գործոնների թերի կանոնակարգված բաշխումն ու առանձին համայնքների դոտացիայի հաշվարկման կարգի անկատարությունը թույլ չի տալիս ապահովել նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ ֆինանսական համահարթեցում հասկացությունը:
7. Համայնքներին սուբվենցիաները տրամադրվել են՝ առանց «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի բ) կետով նախատեսված կարգի:
8. 2004 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ կառավարության առանձին որոշումներով պահուստային ֆոնդի հաշվին համայնքներին հատկացվել են սուբվենցիաներ՝ պարտքերի մարման, դրամական հատուցման, հարկերի վճարման նպատակով, որը հակասում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասի բ) ենթակետերին:
9. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածի 1.4-րդ մասերով ամրագրված պաշտոնական տրանսֆերտների ձևով ստացվող հատկացումներում առկա է անհամապատասխանություն՝ «այլ դոտացիաներ» դրույթի առնչությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

1. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի պահանջը կատարելու նպատակով յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով համայնքներին տրամադրվող համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի հաշվարկը իրականացնել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:
2. Անկատար է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը՝
 - կատարելագործման կարիք ունի դոտացիայի ընդհանուր ծավալի՝ ըստ «ա» և «բ» գործոնների բաշխումը,
 - բացակայում է սահմանային՝ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիայի գումարի չափի հաշվարկման կարգը,
 - նախատեսված չէ համայնքների բյուջեներին համահարթեցման դոտացիայի ընդհանուր ծավալի՝ ըստ բնագավառների կամ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացմանը տրամադրվող գումարի չափի հաշվարկման կարգը,

որի պատճառով ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի ծավալի տարեցտարի աճի պայմաններում համահարթեցում հասկացությունը չի ապահովվում:

Առաջարկում ենք մշակել ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման նոր հայեցակարգ:

3. Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի բ) կետի՝ սահմանել ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման միասնական կարգը:
4. Համապատասխանեցնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածի 1.4-րդ մասերով ամրագրված դրույթները:

Մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ ներկայացնել «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

2004 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների և սուբվենցիաների վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության գործունեության ծրագրի սուբսիդիաների քաղաքականությունը պետք է՝

- լինի թափանցիկ, որպեսզի հնարավոր լինի չափել նրա կշիռը տնտեսության մեջ.
- ապահովված լինի պետության իրական միջոցներով.
- նպատակաուղղված եւ հասցեգրված լինի և ոչ թե փոշիացվի ամբողջ հասարակության մեջ՝ որպես ընդհանուր սուբսիդիաներ.
- կրի ժամանակավոր բնույթ, որպեսզի չխրախուսի հավերժ կախվածությունը պետությունից և չստեղծի ճրիակերության վարքագիծ:

«Սուբսիդիաներ» հոդվածը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման երրորդ գլխի, ներառում է՝

- Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ **սուբվենցիաներ,**
- Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող **սուբսիդիաներ:**

«Սուբսիդիաներ» հոդվածի փաստացի ֆինանսավորում իրականացվել է, հիմք ընդունելով՝

- 1) Օրենքում համապատասխան հոդվածով նախատեսված հատկացումները (այդ թվում՝ Օրենքի փոփոխություններն ու լրացումները),
- 2) Չծրագրավորված ֆինանսավորումը,
- 3) ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումները:

«2004 թվականի պետական բյուջեի մասի» ՀՀ օրենքում «Սուբսիդիաներ»-ը նախատեսված են՝ 14,098,372.1 հազ. դրամ, որից՝

- 131.4 հազ. դրամը՝ «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ»-ի հատկացման համար,
- 14,098,240.7 հազ. դրամը՝ «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ»-ի հատկացման համար:

Տարվա ընթացքում Օրենքում «Սուբսիդիաներ» հոդվածում նախատեսված գումարների փոփոխությունների և լրացումների 50.4%-ը (1,516,500.0 հազ. դրամ) կատարվել է 2004 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին (ըստ Օրենքի 11.06.2004թ. փոփոխությանների և

լրացումների ընդունված որոշման), որի կատարումն ապահովելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 915-ն որոշումը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2004 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքում կատարված փոփոխությունները և դրա արդյունքում ընդունված կառավարության 915-ն որոշմամբ նախատեսված ծախսերի ուղղությունները


(մլն դրամ)

	<i>Ըստ Օրենքի 11.06 2004թ. փոփոխությանների և լրացումների</i>	<i>Ըստ ՀՀ կառավարության 25.06.2004թ. 915-Ն որոշման</i>	<i>Տարբերություն</i>
Ըստ Գերատեսչությունների հիմնանորոգում և այլն	10,190.8	10,128.8	-62.0
Ավտոճանապարհներ	255.3	255.3	0.0
Պետական բյուջեներից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ	416.5	478.5	62.0
Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ	1,100.0	1,100.0	0.0
Ընդամենը	11,962.6	11,962.6	0.0

Համաձայն ՀՀ կառավարության 25.06.2004թ. 915-Ն որոշման, ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների, սուբվենցիաներ են հատկացվել յոթ մարզերի համայնքներին՝ 478,500.0 հազ. դրամի չափով, որից՝ 31 %-ը հատկացվել է Վայոց ձորի մարզի համայնքներին (Գ-ծապատկեր 1), իսկ ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ ենթահոդվածով՝ 1,100,000.0 հազ. դրամ հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին:

Տարվա ընթացքում Օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում կատարվել է պլանի ճշտում և «Սուբսիդիաներ»-ը նախատեսվել է՝ 17,106,940.9 հազ. դրամ, որից՝

- 478,631.4 հազ. դրամը՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների հատկացման համար,
- 16,628,309.5 հազ. դրամը՝ ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների հատկացման համար (Աղյուսակ 2):



ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հաշվետու տարվա ընթացքում կատարվում է մի շարք հատկացումներ՝ «Սուբսիդիաներ» տնտեսագիտական հոդվածի ենթահոդվածներին համապատասխան: Սակայն ՀՀ կառավարության Պետական բյուջեի կատարման հաշվետվությունում (այսուհետ՝ Հաշվետվություն) ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, տրվող «Սուբսիդիաներ» հոդվածի ճշտված պլանը և փաստացի ֆինանսավորումը չի ներառում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումների գումարները:

Մեր կարծիքով, Պետական բյուջեից, ՀՀ կառավարության կողմից հատկացված «Սուբսիդիաներ» հոդվածով գումարների, որպես տնտեսագիտական դասակարգման հոդվածի վերլուծելու և իրական պատկերը ցույց տալու համար անհրաժեշտ է, որպեսզի և ճշտված պլանում, և փաստացի ֆինանսավորման տվյալներում ներառվեն նաև ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումների գումարները: Մեր կողմից կատարվող վերլուծության հիմք է ընդունվել այդ սկզբունքը, այսինքն՝ ֆինանսավորման կատարողականը հաշվարկելիս որպես պլան վերցվել է Հաշվետվությունում տրվող «Սուբսիդիաներ» հոդվածի ճշտված պլանի ցուցանիշի և այդ հոդվածին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 2004 թվականին կատարված հատկացումների գումարը, որը կազմում է 17,437,554.3 հազ. դրամ, որից՝

- 723,212.7 հազ. դրամը՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների հատկացման համար,

- 16,714,341.6 հազ. դրամը՝ ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների հատկացման համար:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

1. ՀՀ պետական բյուջեից «Սուբսիդիաներ» հոդվածով 2004թվականի ընթացքում հատկացվել է (առանց չծրագրավորվածի)՝ 2,574,228.3 հազ. դրամով ավելի, քան 2003 թվականին, իսկ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ 265,386.3 հազ. դրամով պակաս (Աղյուսակ 3) և բացի այդ, նույն հոդվածով, 2004 թվականի ՀՀ պետական բյուջեից կատարվել է 976,286.3 հազ. դրամի չծրագրավորված ֆինանսավորում, որը 2003 թվականին չի եղել:
2. 2004 թվականին «Սուբսիդիաներ» հոդվածի ֆինանսավորումը 2003թվականի նկատմամբ աճել է 3,285,128.3 հազ. դրամով, այդ թվում՝
 - պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները՝ 539,537.30 հազ. դրամով,
 - ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաները՝ 2,745,591.0 հազ. դրամով (Աղյուսակ 3):
3. 2004 թվականին «Սուբսիդիաներ» հոդվածի ֆինանսավորման աճի տեմպը կազմել է՝ 121.73 %, իսկ ենթահոդվածներինը՝
 - պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների սուբվենցիաներինը կազմել է 393.82%,
 - ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներինը կազմել է 118.38% (Աղյուսակ 3):
4. 2004 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից «Սուբսիդիաներ» հոդվածով ֆինանսավորվել է 18,404,439.3 հազ. դրամ (այսուհետ՝ Ընդամենը ֆինանսավորում), որից՝
 - Ճշտված պլանին (Հաշվետվությունում տրվող) համապատասխան՝ 17,097,539.6 հազ. դրամ,
 - Չծրագրավորված ֆինանսավորում՝ 976,286.30 հազ. դրամ,
 - ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումները՝ 330,613.40 հազ. դրամ (Աղյուսակ 3),
5. 2004 թվականին «Սուբսիդիաներ» հոդվածի Օրենքով նախատեսվածի ֆինանսավորման կատարողականը կազմել է՝ 105.65%, իսկ Ընդամենը ֆինանսավորման կատարողականը կազմել է՝ 105.54% (Աղյուսակ 4), գերակատարման պատճառը ֆինանսավորման գումարում չծրագրավորված ֆինանսավորման գումարի առկայությունն է, որը ֆինանսավորվել է «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ» ենթահոդվածով: Այդ իսկ պատճառով այդ ենթահոդվածի կատարողականը կազմել է 105.81%:

1. Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների վերլուծություն

Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների փաստացի ֆինանսավորումը, որպես տնտեսագիտական հողվածի իրականացվել է՝ հիմք ընդունելով.

- 1) Օրենքում համապատասխան հողվածով նախատեսված հատկացումները,
- 2) ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումները:

Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների հատկացման և ֆինանսավորման գործընթացի՝ ըստ մարզերի (համայնքների) վերլուծությունից պարզվում է, որ՝

- 1) Օրենքում Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների հատկացում նախատեսված էր միայն մեկ՝ Լոռու մարզին՝ 131.4 հազ. դրամի չափով,
- 2) Ըստ Օրենքի 11.06.2004թ. փոփոխությանների և լրացումների, Ազգային ժողովի կողմից ընդունված որոշման և որից հետո այդ որոշման կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության ընդունած 915-Ն որոշման համաձայն, նախատեսվել է ոչ միայն Լոռու, այլև վեց մարզերում կատարել Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝ 478,500.0 հազ. դրամի չափով (Աղյուսակ 5),

2004թ. ՀՀ պետական բյուջեից տրված «Մուքսիդիաներ» հողվածի կազմն ու կառուցվածքը

հազ. դրամ

Հողված	Օրենքով նախատեսված		Ծշտված պլան (Հաշվետվությունում տրվող)		Ծշտված պլանը (ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության)		Հողվածի ֆինանսավորում	
	գումար	կառուցվածք %	գումար	կառուցվածք %	գումար	կառուցվածք %	գումար	կառուցվածք %
1. Մուքսիդիաներ, այդ թվում՝	14,098,372.1	100.00%	17,106,940.9	100.00%	17,437,554.3	100.00%	18,404,439.3	100.00%
1.1 Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ	131.4	0.001%	478,631.4	2.80%	723,212.7	4.15%	723,162.9	3.93%
1.2 Չեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ	14,098,240.7	99.999%	16,628,309.5	97.20%	16,714,341.6	95.85%	17,681,276.4	96.07%

Աղյուսակ 3

2003 և 2004թթ. ՀՀ պետական բյուջեից տրված սուբսիդիաների և սուբվենցիաների վերաբերյալ

(հազ. դրամ)

Հոդված	2003 թվական				2004 թվական						2004թ-ին ֆինանսավորված սուբսիդիաների և սուբվենցիաների աճը 2003թ-ի նկատմամբ	2004թ-ին փաստացի ֆինանսավորված սուբսիդիաների և սուբվենցիաների աճի տեմպը
	Ճշտված պլան	Հոդվածի փաստացի ֆինանսավորում			Ճշտված պլան (Հաշվետվությունում տրվող)	Ճշտված պլան (Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն)	Հոդվածի փաստացի ֆինանսավորում					
		Ընդամենը	Այդ թվում՝				Ընդամենը	Այդ թվում՝				
			Ճշտված պլանի համապատասխան	Պահուստային ֆոնդից				Ճշտված պլան (Հաշվետվությունում տրվող)	Չծրագրավորված	Պահուստային ֆոնդից		
1	2=3+4	3	4	5	6=5+10	7=8+9+10	8	9	10	11=7-2	12=7/2	
1.Սուբսիդիաներ այդ թվում՝	14,398,529.0	15,119,311.0	14,523,311.3	595,999.7	17,106,940.9	17,437,554.3	18,404,439.3	17,097,539.6	976,286.3	330,613.4	3,285,128.3	121.73%
1.1 Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ սուբվենցիաներ	-	183,625.6	-	183,625.6	478,631.4	723,212.7	723,162.9	478,581.6	-	244,581.3	539,537.3	393.82%
1.2.Չեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ	14,398,529.0	14,935,685.4	14,523,311.3	412,374.1	16,628,309.5	16,714,341.6	17,681,276.4	16,618,958.0	976,286.3	86,032.1	2,745,591.0	118.38%

2004թ ՀՀ պետական բյուջեից տրված սուբսիդիաների և սուբվենցիաների վերաբերյալ

(հազ. դրամ)

Հոդված	Օրենքով նախատեսված	Օրենքում փոփոխություններ և լրացումներ	Ճշտված պլան		«Սուբսիդիաներ» հոդվածի ֆինանսավորում			Կատարողական %-ով	
			Հաշվետվությունում տրվող	Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տվյալներին համապատասխան	Ընդամենը	Այդ թվում՝		Օրենքով նախատեսված	Ընդհանուր ֆինանսավորման
						Օրենքով նախատեսված	Պահուստային ֆոնդից		
1	2	3	4	5	6=7+8	7	8	9=7/4*100	10=6/5*100
1. «Սուբսիդիաներ», այդ թվում՝	14,098,372.1	3,094,600.9	17,106,940.9	17,437,554.3	18,404,439.3	18,073,825.9	330,613.4	105.65	105.54
1.1 Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ	131.4	478,500.0	478,631.4	723,212.7	723,162.9	478,581.6	244,581.3	99.99	99.99
1.2. Չեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ	14,098,240.7	2,616,100.9	16,628,309.5	16,714,341.6	17,681,276.4	17,595,244.3	86,032.1	105.81	105.79

3) 2004 թվականի ընթացքում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները կազմել են 244,581.3 հազ. դրամ: Այդ գումարները բաշխվել են ինը մարզերում, բացառությամբ՝ Լոռու մարզի, այսինքն, ընդհանուր առմամբ, սուբվենցիաներ են տրամադրվել մինչ այդ չընդգրկված ևս երեք մարզերի (Աղյուսակ 6):

Դրանք են՝

- Արարատի մարզին՝ 8,305.194 հազ. դրամ,
- Շիրակի մարզին՝ 15,639.600 հազ. դրամ,
- Տավուշի մարզին՝ 68,400.000 հազ. դրամ:

Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների գումարը ճշտված պլանի (Հաշվետվությունում տրվող) ընդհանուրի մեջ կազմում է 2.78 4%, մինչդեռ Օրենքում այն կազմել է 0.001% կամ 131.4 հազ. դրամ (Աղյուսակ 2): Ինչ վերաբերում է ճշտված պլանին և պահուստային ֆոնդից կատարված հատկացումներին՝ միասին, ապա այս պարագայում պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող սուբվենցիաների գումարը ընդհանուրի մեջ կազմում է 4.13% կամ 723,212.7 հազ. դրամ, այսինքն՝ ավելացվել է Օրենքով նախատեսվածը՝ 723,081.3 հազ. դրամով (Աղյուսակ 2):

Պետք է նշել, որ աղյուսակ 2-ում պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների ճշտված պլանում և ֆինանսավորման գումարում ներառված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումների գումարը, որը կազմել է՝ 244,581.3 հազ. դրամ, և այն ներառելու դեպքում ֆինանսավորումը ընդհանուրի մեջ կազմում է՝ 3.91%:

Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները ֆինանսավորվել է՝ 99.99%-ով, այսինքն՝ 49.7 հազ. դրամով չի ֆինանսավորվել Կոտայքի մարզադպրոցների հիմնանորոգման համար նախատեսված գումարները՝ սուբվենցիան (Աղյուսակ 5):

2004 թվականին ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների ֆինանսավորման կառուցվածքը տասը մարզերի կտրվածքով տրված է գծապատկեր 2-ում:

2004թ. Օրենքով ՀՀ պետ. բյուջեից հատկացված և ֆինանսավորված սուբվենցիաների վերաբերյալ


(հազ. դրամ)

Խումբ	Ենթախումբ	Ծրագրերի անվանումը	Իրականացնող մարմնի անվանումը	Օրենքով նախատեսված	Օրենքում փոփոխություններ և լրացումներ	Ճշտված պլան	Փաստացի ֆինանսավորում	Շեղում	Փաստացի ֆինանսավորման կատարողական (%)	
1	2	3	4	5	6	7=5+6	8	9=8-7	10=8/7*100	
4	5	04.Սարգստյանների հիմնանորոգման համար համայնքներին սուբվենցիաների տրամադրում	Կոտայքի մարզպետարան		22,600.00	22,600.00	22,550.30	-49.7	99.78	
9	5	01. ՀՀ համայնքներում գազի ֆիկացման իրականացման նպատակով համայնքներին սուբվենցիաների տրամադրում	Արագածոտնի, Լոռու, Վայոց ձորի, Գեղարքունիքի մարզպետարաններ		103,900.00	103,900.00	103,900.00	0	100	
9	5	02. Վայոց ձորի մարզի Ազատեկ գյուղի գազատարի վերանորոգման նպատակով Ազատեկ համայնքին սուբվենցիայի տրամադրում	Վայոց ձորի մարզպետարան		10,000.00	10,000.00	10,000.00	0	100	
12	7	07. Համայնքային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման նպատակով համայնքներին սուբվենցիաների տրամադրում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն		130,000.00	130,000.00	130,000.00	0	100	
12	7	08. Համայնքային նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման նպատակով համայնքներին սուբվենցիաների տրամադրում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն		212,000.00	212,000.00	212,000.00	0	100	
		ԸՆԴԱՄԵՆԸ ըստ 915- Ն որոշման				478,500.00	478,500.00	478,450.30	-49.7	99.99
14	2	Օրենքով նախատեսված բնապահպանական ծրագրի իրականացման համար ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքին սուբվենցիայի տրամադրում	ՀՀ բնապահպանության նախարարություն	131.4		131.4	131.4	0	100	
		ԸՆԴԱՄԵՆԸ			131.4	478,500.00	478,631.40	478,581.70	-49.7	99.99

2004թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված և ֆինանսավորված սուբվենցիաների կառուցվածքն ըստ մարզերի

(հազ. դրամ)

Մարզեր		Հատկացված			Ֆինանսավորված			Շեղումները	Կատարողական (%)
		Օրենքով	Պահուստային ֆոնդից	Ընդամենը	Օրենքով	Պահուստային ֆոնդից	Ընդամենը		
1	2	3	4	5=3+4	6	7	8=6+7	9=8-5	10=8/5*100
I	Կոտայքի մարզ	47,600.000	2,730.000	50,330.000	47,550.300	2,730.000	50,280.300	(49.7)	99.90%
II	Արագածոտնի մարզ	11,400.000	8,490.600	19,890.600	11,400.000	8,490.600	19,890.600	0.0	100.00%
III	Լոռու մարզ	80,131.400	30,000.000	110,131.400	80,131.400	30,000.000	110,131.400	0.0	100.00%
IV	Վայոց ձորի մարզ	147,500.000	49,248.700	196,748.700	147,500.000	49,248.700	196,748.700	0.0	100.00%
V	Գեղարքունիքի մարզ	115,000.000	35,000.000	150,000.000	115,000.000	35,000.000	150,000.000	0.0	100.00%
VI	Արմավիրի մարզ	72,000.000	–	72,000.000	72,000.000	–	72,000.000	0.0	100.00%
VII	Սյունիքի մարզ	5,000.000	26,767.200	31,767.200	5,000.000	26,767.200	31,767.200	0.0	100.00%
VIII	Արարատի մարզ	–	8,305.194	8,305.194	–	8,305.194	8,305.194	0.0	100.00%
IX	Շիրակի մարզ	–	15,639.600	15,639.600	–	15,639.600	15,639.600	0.0	100.00%
X	Տավուշի մարզ	–	68,400.000	68,400.000	–	68,400.000	68,400.000	0.0	100.00%
XI	Ընդամենը	478,631.400	244,581.294	723,212.694	478,581.700	244,581.294	723,162.994	(49.7)	99.99%



2. Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների վերլուծություն

Պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ» ենթահոդվածի ֆինանսավորումը, որպես տնտեսագիտական հոդված, իրականացվել է՝ հիմք ընդունելով.

- Օրենքում այդ հոդվածով նախատեսված՝ 1) Ծրագրավորված հատկացումները, 2) Չծրագրավորված հատկացումները,
- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումները:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

1. 2004 թվականին պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» հատկացման համար Օրենքում նախատեսված է 14,098,240.7 հազ. դրամ կամ «Սուբսիդիաներ» հոդվածի 99.999%-ը: Սակայն ճշտված պլանով (ըստ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության) նախատեսվել է 16,714,341.6 հազ. դրամ կամ «Սուբսիդիաներ» հոդվածի՝ 95.85%-ը, այսինքն՝ 2,616,100.9 հազ. դրամով ավելացվել է Օրենքում նախատեսվածը, որից՝ 2,216,902.4

հազ. դրամը կամ 84.74%-ը, լրացուցիչ հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին (Աղյուսակ 2):

2. 2004 թվականի ընթացքում պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» ֆինանսավորումը կազմել է 17,681,276.4 հազ. դրամ կամ «Սուբսիդիաներ» հոդվածի՝ 96.07 %-ը (Աղյուսակ 2): Պետք է նշել, որ «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» ֆինանսավորման այդ գումարը ներառել է՝ 1) ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումների գումարները, որը կազմել է՝ 86,032.1 հազ. դրամ, 2) ենթահոդվածի չծրագրավորված ֆինանսավորումը՝ 976,286.3 հազ. դրամ (Աղյուսակ 3 և 7):
3. 2004 թվականի ընթացքում պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» ֆինանսավորումը 2003 թվականի նկատմամբ աճել է՝ 18.38%-ով, այսինքն՝ տեղի է ունենում սուբսիդիաների աճ, այլ ոչ թե աստիճանական կրճատում, ինչպես նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության 2005-2007 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում»:

Ըստ դրա, սուբսիդավորման քաղաքականությունն ուղղվելու է ընթացիկ գործառնական ճեղքվածքի ֆինանսավորման նպատակով տրամադրվող սուբսիդիաների աստիճանական կրճատմանը: Այսպես, 2004 թվականին համակարգի ընկերություններին տրամադրվող սուբսիդիաների ծավալը 2003 թվականի համեմատ պետք է նվազեր 25.71 տոկոսով, 2005 թվականին՝ 2004 թվականի համեմատ կնվազի 10.5 տոկոսով, 2006 թվականին՝ 2005 թվականի համեմատ՝ 40.50 տոկոսով, իսկ 2007 թվականին՝ 2006 թվականի համեմատ՝ 40.60 տոկոսով: Իրականացվելիք ներդրումային քաղաքականության նպատակն է լինելու համակարգի ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացումը: Ներդրումային ծրագրերը հիմնականում ուղղված կլինեն համակարգի ձեռնարկությունների շահագործման և պահպանման ծախսերի ու ջրի կորուստների նվազեցմանը և ձեռնարկությունների կառավարման համակարգի բարելավմանը:

2004 թվականի ՀՀ պետական բյուջեից »Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների« ֆինանսավորման մասին

(հազ. դրամ)

Խումբ	Ենթախումբ	Ցրագիր	Օրենքով նախատեսված	Փոփոխություններ և լրացումներ Օրենքում	Ճշտված պլան	Ֆինանսավորում			Շեղումները նախատեսվածից*	Ֆինանսավորման կատարողական	Տարեկան ճշտված պլանի համապատասխան փաստացի ֆինանսավորման կատարողականը %-ով
						Տարեկան ճշտված պլանի համապատասխան	Չծրագրավորված	Ընդամենը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11=9/6	12=7/6
		ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	14,098,240.7	2,616,100.9	16,714,341.6	16,704,990.1	976,286.3	17,681,276.4	966,934.8	105.8%	99.9%
01		ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	144,700.0		144,700.0	144,700.0		144,700.0	0.0	100.0%	100.0%
	01	Օրենսդիր մարմին և պետական կառավարում	144,700.0		144,700.0	144,700.0		144,700.0	0.0	100.0%	100.0%
		03. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	144,700.0		144,700.0	144,700.0		144,700.0	0.0	100.0%	100.0%
04		ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	469,952.7	8,242.9	478,195.6	478,073.4		478,073.4	-122.2	100.0%	100.0%
	10	Գիտություն	469,952.7	8,242.9	478,195.6	478,073.4		478,073.4	-122.2	100.0%	100.0%
		01. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ նախագահության սուբսիդավորում	131,228.5	8,242.9	139,471.4	139,471.4		139,471.4	0.0	100.0%	100.0%
		02 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ համակարգի տեղեկատվական ցանցի սուբսիդավորում	18,000.0		18,000.0	18,000.0		18,000.0	0.0	100.0%	100.0%
		03 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ դեմոկրոպարկի սուբսիդավորում	17,456.6		17,456.6	17,456.6		17,456.6	0.0	100.0%	100.0%

	04 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ մանրէների ավանդադրման հանրապետական կենտրոնի սուբսիդավորում	7,190.8		7,190.8	7,190.8		7,190.8	0.0	100.0%	100.0%
	05 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարանի սուբսիդավորում	14,469.8		14,469.8	14,469.8		14,469.8	0.0	100.0%	100.0%
	06 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի սուբսիդավորում	49,019.4		49,019.4	49,018.4		49,018.4	-1.0	100.0%	100.0%
	07 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում գիտական աստիճանաշնորհման համակարգի սուբսիդավորում	20,537.0		20,537.0	20,537.0		20,537.0	0.0	100.0%	100.0%
	08 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտի սուբսիդավորում	18,955.4		18,955.4	18,834.2		18,834.2	-121.2	99.4%	99.4%
	09 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորում	14,080.9		14,080.9	14,080.9		14,080.9	0.0	100.0%	100.0%
	10 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրման կենտրոնի սուբսիդավորում	7,994.7		7,994.7	7,994.7		7,994.7	0.0	100.0%	100.0%

	11 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և պահպանման ծրագրի շրջանակներում «Երֆի» պետական ոչ առևտրային կազմակերպության էլեկտրոնային օդակաձև արագացուցչի և տիեզերական ճառագայթների հետազոտման «Արագած» և «Նորհամբերո» կայանների սուբսիդավորում	60,000.0		60,000.0	60,000.0	60,000.0	0.0	100.0%	100.0%
	13 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում գիտատեխնիկական տեղեկատվության ցանցի սուբսիդավորում	12,496.0		12,496.0	12,496.0	12,496.0	0.0	100.0%	100.0%
	14 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի սուբսիդավորում	9,032.4		9,032.4	9,032.4	9,032.4	0.0	100.0%	100.0%
	15 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ բժշկական գենետիկայի կենտրոնի սուբսիդավորում	34,083.7		34,083.7	34,083.7	34,083.7	0.0	100.0%	100.0%
	16 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում «Ռադիոֆիզիկական չափումների ԳՀԻ» ՓԲԸ-ի Մեծ ռադիոսպտիկական աստղադիտակի և 11 ազգային էտալոնների սուբսիդավորում	34,870.0		34,870.0	34,870.0	34,870.0	0.0	100.0%	100.0%
	17 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի ջերմոցների սուբսիդավորում	2,255.0		2,255.0	2,255.0	2,255.0	0.0	100.0%	100.0%

		18 Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի սուբսիդավորում	3,850.1		3,850.1	3,850.1	3,850.1	0.0	100.0%	100.0%
		19 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում Գառնիի դիտարանի սուբսիդավորում	1,932.4		1,932.4	1,932.4	1,932.4	0.0	100.0%	100.0%
		20 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտ-թանգարանի սուբսիդավորում	2,500.0		2,500.0	2,500.0	2,500.0	0.0	100.0%	100.0%
		21 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում Երևանի պետական համալսարանի սուբսիդավորում	10,000.0		10,000.0	10,000.0	10,000.0	0.0	100.0%	100.0%
05		ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	1,300,000.0	(18,000.0)	1,282,000.0	1,282,000.0	1,282,000.0	0.0	100.0%	100.0%
	04	Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության պահպանում	900,000.0	(8,000.0)	892,000.0	892,000.0	892,000.0	0.0	100.0%	100.0%
		01. Հիգիենիկ հակահամաճարակային ծառայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների գծով սուբսիդավորում	900,000.0	(8,000.0)	892,000.0	892,000.0	892,000.0	0.0	100.0%	100.0%
	05	Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր	400,000.0	(10,000.0)	390,000.0	390,000.0	390,000.0	0.0	100.0%	100.0%
		01 Այլ պետական ոչ առևտրային կազմակերպության գծով սուբսիդավորում	400,000.0	(10,000.0)	390,000.0	390,000.0	390,000.0	0.0	100.0%	100.0%
06		ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊՈՐՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ	9,506.9		9,506.9	9,506.9	9,506.9	0.0	100.0%	100.0%
	04	Սոցիալական ապահովության միջոցառումներ	9,506.9		9,506.9	9,506.9	9,506.9	0.0	100.0%	100.0%
		10. Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվական ծառայությունների գնման գծով ծրագրի շրջանակներում «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորում	9,506.9		9,506.9	9,506.9	9,506.9	0.0	100.0%	100.0%

07		ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՄՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ	6,395,572.0	(16,501.0)	6,379,071.0	6,369,841.7		6,369,841.7	-9,229.3	99.9%	99.9%
	02	Գրադարաններ	429,595.9		429,595.9	429,595.9		429,595.9	0.0	100.0%	100.0%
		01 Գրադարանների սուբսիդավորում	406,940.3		406,940.3	406,940.3		406,940.3	0.0	100.0%	100.0%
		02 ՀՀ ազգային գրապլատի սուբսիդավորում	22,655.6		22,655.6	22,655.6		22,655.6	0.0	100.0%	100.0%
	03	Թանգարաններ և ցուցահանդեսներ	621,918.4		621,918.4	620,311.5		620,311.5	-1,606.9	99.7%	99.7%
		01 Թանգարանների սուբսիդավորում	621,918.4		621,918.4	620,311.5		620,311.5	-1,606.9	99.7%	99.7%
	04	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	10,496.2		10,496.2	10,420.6		10,420.6	-75.6	99.3%	99.3%
		01 Մշակույթի տների, ակումբների և կենտրոնների սուբսիդավորում	10,496.2		10,496.2	10,420.6		10,420.6	-75.6	99.3%	99.3%
	05	Այլ մշակութային հիմնարկներ	208,226.0		208,226.0	208,226.0		208,226.0	0.0	100.0%	100.0%
		01. «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	115,074.8		115,074.8	115,074.8		115,074.8	0.0	100.0%	100.0%
		02. «Տեղեկատվական - վերլուծական և հասարակայնության հետ կապերի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	6,505.4		6,505.4	6,505.4		6,505.4	0.0	100.0%	100.0%
		03. «Երևանի կենդանաբանական այգի» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	77,458.8		77,458.8	77,458.8		77,458.8	0.0	100.0%	100.0%
		05 «Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	9,187.0		9,187.0	9,187.0		9,187.0	0.0	100.0%	100.0%
	06	Արվեստ	1,196,423.9	13,000.0	1,209,423.9	1,201,882.8		1,201,882.8	-7,541.1	99.4%	99.4%
		01. «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	221,744.4		221,744.4	221,744.4		221,744.4	0.0	100.0%	100.0%
		02. «Գ. Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	100,408.3		100,408.3	100,408.3		100,408.3	0.0	100.0%	100.0%
		03. Այլ թատրոնների և համերգային կազմակերպությունների սուբսիդավորում	692,385.1		692,385.1	692,383.6		692,383.6	-1.5	100.0%	100.0%
		04. Մշակութային միջոցառումների իրականացման գծով սուբսիդավորում	176,886.1	13,000.0	189,886.1	182,346.5		182,346.5	-7,539.6	96.0%	96.0%

	05. Պ. Ադամյանի անվան թատրոնի սուբսիդավորում	5,000.0		5,000.0	5,000.0		5,000.0	0.0	100.0%	100.0%
07	Կինեմատոգրաֆիա	432,960.6		432,960.6	432,960.6		432,960.6	0.0	100.0%	100.0%
	01. Մուլտիպլիկացիոն կինոնկարների արտադրության սուբսիդավորում	121,282.5		121,282.5	121,282.5		121,282.5	0.0	100.0%	100.0%
	02. Խաղարկային կինոնկարների արտադրության սուբսիդավորում	264,452.5		264,452.5	264,452.5		264,452.5	0.0	100.0%	100.0%
	03. Վավերագրական կինոնկարների արտադրության սուբսիդավորում	38,419.0		38,419.0	38,419.0		38,419.0	0.0	100.0%	100.0%
	04. Կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման գծով սուբսիդավորում	4,403.3		4,403.3	4,403.3		4,403.3	0.0	100.0%	100.0%
	05 Կինոշուկաներին մասնակցության գծով սուբսիդավորում	4,403.3		4,403.3	4,403.3		4,403.3	0.0	100.0%	100.0%
08	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	36,213.3		36,213.3	36,213.3		36,213.3	0.0	100.0%	100.0%
	01. պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի սուբսիդավորում	36,213.3		36,213.3	36,213.3		36,213.3	0.0	100.0%	100.0%
10	Հեռուստատադիտադրումներ	3,004,426.8	(61,001.0)	2,943,425.8	2,943,425.8		2,943,425.8	0.0	100.0%	100.0%
	01. «Երևան ստուդիա» ՓԲԸ սուբսիդավորում	30,774.7		30,774.7	30,774.7		30,774.7	0.0	100.0%	100.0%
	02. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի սուբսիդավորում	2,258,610.3		2,258,610.3	2,258,610.3		2,258,610.3	0.0	100.0%	100.0%
	03. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի սուբսիդավորում	677,390.1	(70,000.0)	607,390.1	607,390.1		607,390.1	0.0	100.0%	100.0%
	04 «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի սուբսիդավորում	15,922.7		15,922.7	15,922.7		15,922.7	0.0	100.0%	100.0%
	05. «Եթեր ստեղծագործական տուն» ՓԲԸ սուբսիդավորում	5,739.0		5,739.0	5,739.0		5,739.0	0.0	100.0%	100.0%
	07 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորում	2,490.0		2,490.0	2,490.0		2,490.0	0.0	100.0%	100.0%
	08. «Չեռագիր» հեռուստահաղորդաչարի պատրաստման և ինտերնետային էջի սպասարկման գծով «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	13,500.0	8,999.0	22,499.0	22,499.0		22,499.0	0.0	100.0%	100.0%

11	Հրատարակչություններ, խմբագրություններ	271,499.6	1,500.0	272,999.6	272,999.6		272,999.6	0.0	100.0%	100.0%
	01 Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման սուբսիդավորում	19,085.4		19,085.4	19,085.4		19,085.4	0.0	100.0%	100.0%
	02 «Գլ-նիպրո-Սլավուտիչ» թերթի հրատարակման սուբսիդավորում	2,500.0		2,500.0	2,500.0		2,500.0	0.0	100.0%	100.0%
	03 մանկական գրականության հրատարակման գծով սուբսիդավորում	30,000.0		30,000.0	30,000.0		30,000.0	0.0	100.0%	100.0%
	04 Հանրագիտարանային գրականության հրատարակման գծով սուբսիդավորում	28,200.0	1,500.0	29,700.0	29,700.0		29,700.0	0.0	100.0%	100.0%
	05 Այլ գրականության հրատարակման գծով սուբսիդավորում	24,400.0		24,400.0	24,400.0		24,400.0	0.0	100.0%	100.0%
	06 «Հանրապետություն» ՓԲԸ-ի սուբսիդավորում	37,438.0		37,438.0	37,438.0		37,438.0	0.0	100.0%	100.0%
	07 «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արամենիա» ՓԲԸ-ի սուբսիդավորում	12,463.0		12,463.0	12,463.0		12,463.0	0.0	100.0%	100.0%
	08 Գիտահանրամատչելի գրականության հրատարակման գծով սուբսիդավորում	15,200.0		15,200.0	15,200.0		15,200.0	0.0	100.0%	100.0%
	09 «Էկոնոմիկա հանդես» ՓԲԸ-ի սուբսիդավորում	24,545.0		24,545.0	24,545.0		24,545.0	0.0	100.0%	100.0%
	10 Ոչ պետական մամուլի հրատարակման սուբսիդավորում	41,200.0		41,200.0	41,200.0		41,200.0	0.0	100.0%	100.0%
	11 Մանկական, մանկապատանեական թերթերի և ամսագրերի հրատարակման սուբսիդավորում	31,468.2		31,468.2	31,468.2		31,468.2	0.0	100.0%	100.0%
	13 «Վրաստան» թերթի հրատարակման սուբսիդավորում	5,000.0		5,000.0	5,000.0		5,000.0	0.0	100.0%	100.0%
14	Երիտասարդական ծրագրեր	183,811.3	30,000.0	213,811.3	213,805.6		213,805.6	-5.7	100.0%	100.0%
	01 Երիտասարդական ծրագրերի իրականացման սուբսիդավորում	183,811.3	30,000.0	213,811.3	213,805.6		213,805.6	-5.7	100.0%	100.0%
08	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	1,363,744.5	571,722.0	1,935,466.5	1,935,466.5		1,935,466.5	0.0	100.0%	100.0%
03	Աղբահանություն, թափոնների վերամշակում և փողոցների մաքրում	15,744.5		15,744.5	15,744.5		15,744.5	0.0	100.0%	100.0%
	01 «Ռադիոակտիվ թափոնների վնասագերծում» ՓԲԸ-ի սուբսիդավորում	15,744.5		15,744.5	15,744.5		15,744.5	0.0	100.0%	100.0%


04	Ջրամատակարարում և կոյուղու համակարգերի շահագործում	1,348,000.0	571,722.0	1,919,722.0	1,919,722.0		1,919,722.0	0.0	100.0%	100.0%
	03. «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ սուբսիդավորում	592,000.0	360,000.0	952,000.0	952,000.0		952,000.0	0.0	100.0%	100.0%
	04 Երևան «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ սուբսիդավորում	756,000.0		756,000.0	756,000.0		756,000.0	0.0	100.0%	100.0%
	05 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր	0.0	211,722.0	211,722.0	211,722.0		211,722.0	0.0	100.0%	100.0%
10	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՉԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ,	3,303,000.0	1,851,902.4	5,154,902.4	5,154,902.4		5,154,902.4	0.0	100.0%	100.0%
07	Տնհմաբուծություն, սերմանաբուծություն և այլ ծրագրեր	3,303,000.0	1,851,902.4	5,154,902.4	5,154,902.4		5,154,902.4	0.0	100.0%	100.0%
	07 Ոռոգման համակարգերի սուբսիդավորում	3,303,000.0	1,851,902.4	5,154,902.4	5,154,902.4		5,154,902.4	0.0	100.0%	100.0%
11	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԱԾՈՆԵՐ (բացառությամբ վառելիքի), ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	4,000.0		4,000.0	4,000.0		4,000.0	0.0	100.0%	100.0%
02	Լեռնահանքային արդյուն. և երկրաբանահետախուզություն	4,000.0		4,000.0	4,000.0		4,000.0	0.0	100.0%	100.0%
	02. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	4,000.0		4,000.0	4,000.0		4,000.0	0.0	100.0%	100.0%
12	ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԾԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ	622,200.0		622,200.0	622,200.0		622,200.0	0.0	100.0%	100.0%
02	Ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտ	622,200.0		622,200.0	622,200.0		622,200.0	0.0	100.0%	100.0%
	01. «Երևանի մետրոպոլիտեն» ՊԲԸ-ի սուբսիդավորում	622,200.0		622,200.0	622,200.0		622,200.0	0.0	100.0%	100.0%
13	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	485,564.6		485,564.6	485,564.6		485,564.6	0.0	100.0%	100.0%

01	Առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և ընդհանուր բնույթի տնտեսական ծառայությունների բնագավառում պետական կառավարում	241,466.9		241,466.9	241,466.9		241,466.9	0.0	100.0%	100.0%
	01 «ՀՀ պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	109,009.7		109,009.7	109,009.7		109,009.7	0.0	100.0%	100.0%
	02. «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	132,457.2		132,457.2	132,457.2		132,457.2	0.0	100.0%	100.0%
05	Ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայություններ	244,097.7		244,097.7	244,097.7		244,097.7	0.0	100.0%	100.0%
	01. «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության» պետական ոչ առևտրային կազմակերպության սուբսիդավորում	244,097.7		244,097.7	244,097.7		244,097.7	0.0	100.0%	100.0%
14	ՀԻՄՆԱԿԱՆ ԽՍՐԻՆ ԶԳԱՎՈՂ ԾԱՆՄԵՐ	0.0	218,734.6	218,734.6	218,734.6		218,734.6	0.0	100.0%	100.0%
06	Այլ ծրագրեր	0.0	218,734.6	218,734.6	218,734.6		218,734.6	0.0	100.0%	100.0%
	01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	0.0	86,032.1	86,032.1	86,032.1		86,032.1	0.0	100.0%	100.0%
	02. «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցում» ծրագրի գծով պետական պատվեր	0.0	132,702.5	132,702.5	132,702.5		132,702.5	0.0	100.0%	100.0%
	«ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11 հոդված 3-րդ կետի ե) ենթակետի պահանջներին համապատասխան տրված սուբսիդիաներ					196,224.1	196,224.1	196,224.1		
	Երևանի քաղաքապետարան									
	«ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11 հոդված 15-րդ կետի պահանջներին համապատասխան տրված սուբսիդիաներ					780,062.2	780,062.2	780,062.2		
	ՀՀ կառ. առընթեր ջրային տնտ. պետկոմիտե									


* Շեղումների մեջ ներառված է Օրենքով չծրագրավորված ծախսեր

4. 2004 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» ենթահոդվածի, ըստ ծրագրերի, հատկացման, ֆինանսավորման կազմն ու կառուցվածքը փոփոխության է ենթարկվել Օրենքով նախատեսվածի համեմատ, մասնավորապես՝
- ավելացվել են ծախսերի ըստ գործառնական դասակարգման «Հիմնական խմբին չդասվող ծախսերը» կամ 14 խումբը: Այսպես, ավելացվել է՝ ճշտված պլանում՝ 218,734.6 հազ. դրամով (ընդհանուրի՝ 1.3%-ը), բացի այդ ֆինանսավորման ընթացքում ավելացվել է՝ 976,286.3 հազ. դրամ, որպես՝ ենթահոդվածի չծրագրավորված ֆինանսավորում, որի արդյունքում 14 խումբը կազմել է ընդհանուրի 6.8%-ը: Պետք է նշել, որ ենթահոդվածի չծրագրավորված ֆինանսավորում «Հիմնական խմբին չդասվող ծախսեր» խմբում տրված է՝ համապատասխան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության (Աղյուսակ 7, Գ-ծապատկեր 4):
 - Օրենքով ՀՀ պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» ենթահոդվածի 45%-ը կամ 6,395,572.0 հազ. դրամ էր նախատեսվել՝ «Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն» 07 խմբին (այսուհետ՝ 07 խումբ): 2004 թվականի ընթացքում 07 խմբին հատկացվող սուբսիդիայի գումարի պլանի ճշտման արդյունքում այն կազմել է ենթահոդվածով հատկացվածի՝ 38.2%-ը կամ 6,379,071.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 36,0%-ը կամ 6,369,841.7 հազ. դրամ: Պետք է նշել, որ ՀՀ պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» ենթահոդվածում «Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն» 07 խմբի ֆինանսավորման շեղումը հաստատվածից կազմել է 9,229.3 հազ. դրամ, իսկ կատարողականը կազմել է 99.9% (Աղյուսակ 7):
5. Օրենքով ՀՀ պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» ենթահոդվածի ֆինանսավորման կառուցվածքը հիմնականում փոփոխվել է՝ պլանի ճշտման և չծրագրավորված ֆինանսավորման արդյունքում (Գ-ծապատկեր 3 և 4):
6. Օրենքում ՀՀ պետական բյուջեից ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների ամենամեծ հատկացումն ու ֆինանսավորումը կատարվել է ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին, որը կազմել է ընդհանուրի 33%-ը, իսկ պլանի ճշտումից հետո՝ 42.3%-ը և ֆինանսավորումը՝ 44.45% (ներառյալ՝ չծրագրավորված ֆինանսավորման՝ 780,062.2 հազ. դրամ գումարը և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված 5,000.0 հազ. դրամը) (Աղյուսակ 8):

Գծապատկեր 3



Գծապատկեր 4



Ըստ «Արդատության հարթահարման ռազմավարական ծրագրի» Ջրային տնտեսության համակարգին անհրաժեշտ է՝

- Սակագների ծախսաձածկման աստիճանի և վճարի հավաքագրման մակարդակի բարձրացման ճանապարհով աստիճանաբար հրաժարվել խմելու ջրի և ոռոգման համակարգի ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունից, որն, ըստ էության, պարունակում է սուբսիդիայի երկու տեսակ. ընդհանուր սակագնային սուբսիդիա եւ «պարտքեր կուտակելու» սուբսիդիա,
- ՀՀ կառավարության կողմից ջրային տնտեսությանը, մասնավորապես խմելու ջրի համակարգին սուբսիդիաների տրամադրումը նախատեսվում է դադարեցնել 2006 թվականին (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Ջրային տնտեսության ֆինանսավորումը 2004-2015թթ.

	մլրդ դրամ						
<i>Ցուցանիշներ</i>	<i>2004</i>	<i>2005</i>	<i>2006</i>	<i>2009</i>	<i>2012</i>	<i>2015</i>	<i>2004-2015</i>
Ընթացիկ ծախսեր (սուբսիդիա), այդ թվում՝	4.4	4.0	2.6	0.0	0.0	0.0	11.8
Ոռոգում	3.6	3.4	2.4	0.0	0.0	0.0	10.4
Խմելու ջուր	0.8	0.6	0.0	0.0	0.0	0.0	1.4

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

- 1) 2004 թվականի ընթացքում **Ընթացիկ ծախսեր (սուբսիդիա) ցուցանիշը**, ֆինանսավորվել է 7,647,964.6հազ. դրամի չափով, այսինքն՝ մոտ 3.2 մլրդ դրամով ավելի, քան ծրագրվել էր «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով»:
- 2) «2005թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է Ջրային տնտեսության համակարգին հատկացնել 6,514,805.0հազ. դրամ, այսինքն՝ մոտ 2.5 մլրդ դրամով ավելի, քան ծրագրվել էր «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով»:

Վերոհիշյալ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս կարծիք արտահայտել, որ անհրաժեշտ է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» այդ կետերը վերանայել, քանի որ ծրագրում նշված և փաստացի արձանագրված թվերի շեղումը բավականին մեծ է, և ՀՀ կառավարությունը կունենա դժվարություններ՝ խմելու ջրի և ոռոգման համակարգի ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունից հրաժարվելու առումով:

ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին 2003թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված և ֆինանսավորված սուբսիդավորման վերաբերյալ 2003-2004թթ. ընթացքում

(հազ. դրամ)

Ծրագիր	2003 թվական		2004 թվական				2004թ-ին ֆինանսավորված սուբսիդիաների անը 2003թ-ի նկատմամբ	2004թ-ին ֆինասավորված սուբսիդիաների անի տեմպը
	Ճշտված պլան	Փաստացի ֆինանսավորված	Ճշտված պլան	Հոդվածի ֆինանսավորում				
				Ընդամենը	Այդ թվում՝			
					Ճշտված պլանի համապատասխան	Չծրագրավորված		
Սուբսիդիաներ, այդ թվում՝	7,470,744.8	7,470,725.9	6,867,902.4	7,647,964.6	6,867,902.4	780,062.2	177,238.7	102.37%
08 04.03 «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ սուբսիդավորում	810,000.0	810,000.0	952,000.0	952,000.0	952,000.0	–	142,000.0	117.53%
08 04.04 Երեվանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ սուբսիդավորում	1,935,000.0	1,935,000.0	756,000.0	756,000.0	756,000.0	–	(1,179,000.0)	39.07%
10 07.07 Ոռոգման համակարգերի սուբսիդավորում	4,485,000.0	4,485,000.0	5,154,902.4	5,154,902.4	5,154,902.4	–	669,902.4	114.94%
Պահուստային ֆոնդ	240,744.8	240,725.9	5,000.0	5,000.0	5,000.0	–	(235,725.9)	2.08%
այդ թվում՝								
Մեղրու ջրօգտագործող ընկերության սուբսիդավորում	–	–	5,000.0	–	5,000.0	–	–	–
Չծրագրավորված ֆինանսավորում				780,062.2		780,062.2	780,062.2	